Universitäts- und Landesbibliothek Bonn

# Ŝnorhali ew Paragayiir

Ališan, Ġewond

Venetik, 1873

urn:nbn:de:hbz:5:1-56719

Visual Library

Göttingen 2957

# ՇՆՈՐՀԱԼԻ

## ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

Ա 2957

# ՇՆՈՐՀԱԼԻ

ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

ԳՐԵԱՅ

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

1873

2957



G. Bernazzoni inv. dise. inc.

ՍԲ. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տարի մ՚առաջ (1872) այս գիրքս սկսեալով հրատարակել ՚ի Բազմավէպ Օրագրի՝ Ծանուցում մ՚ալ ըրեր էինք. հիմայ ամբողջ առանձնակ տպագրելով կրկին ծանուցանեմք մեր դիտումը:

Առաքինի և կենցաղօգուտ հանգուցեալ անձանց արժէքն, և զայն գիտնալէն ներկայ անձանց վըրայ եղած օգտակար ազդեցութիւնն, ամեն առեն Ճանչցուեր է. վասն որոյ և ՚ի հին դարուց հետէ այնպիսեաց Յիշատակն կատարուեր՝ թէ քաղաքական և թէ կրօնական հանդիսիւք. ինչպէս որ Ճըշմարիտ կրօնքն և սուրբ Եկեղեցին ալ կատարէ իր գերագոյն առաքինեաց յիշատակը՝ Տէն կոչելով, որ և սովորաբար կ՚ընէյ տարուէ տարի որոշեալ օր մը, անոր համար և կ՚ըսուի Տարեգարձ: Այլ մեծանշան անձանց յիշատակը կամ՝ ոմնը՝ աւելի մեծ և համազգային կամ աշխարհահանդէս կերպով կատարելն՝ գիրերին ջըլլալով, զանազան առաւելութեամբք, որպէս յայտ է, աւելի ընդարձակ ժամանակի ջըլան մ՚ալ հատատաւել հարկ եղած է.

որ երբեմն չորս տարի էր, դուցէ նահանջ տարի-
ներուն յարմարելով, երբեմն աւելի երկար, և՛ի
Հրէից սովորութենէ առեալ՝ մինչև հիմայ շատ
տեղ՝ 50 տարուան շրջան մը, որ կ՛ըսուի Յոբե-
լեան: Բայց որչափ ժամանակին անհատահոս ըն-
թացքն մեզմէ առաջ անցեալները անդադար հե-
ռացընելով՛ի ներկայից՝ անոնց և մեր միջոցը եր-
թալով կ՛երկարէ, և տարիներու փոխան գարեր
կ՛ըլլան օղք մարդկութեան և ժամանակի շարայար
շրթային, յիշատակաց մեծահանդէս կատարման
դարձք ալ կըլնան յերկարիլ կամ մեծնալ. և
զի շատոնց՛ի վեր Դոքն համարի ժամանակի գըլ-
խաւոր չափ կամ շրջան մը, այժմու սովորութիւնն
ալ է այնպիսի յիշատակները վերածել՛ի Դարա-
դոյց, որպէս կ՛ախորժիմ կոչել, և ըստ Եւրոպա-
ցւոց Հարիւրեակ կամ Հարիւրամ:

Մեր դարուս՝ մանաւանդ վերջի տասնեակաց
մէջ՝ աւելի կը յաճախէ այս սովորութիւնս, մա-
նաւանդ թէ կը զօրանայ. ըսել է որ պարզ սովո-
րութենէ վեր՝ զգացում կամ պէտք մ՛ալ կ՛ըլլայ:
Առանց յերկար խմաստասիրելու և հետաքննելու
այս պիտոյից պատճառը, բաւական համարինք
յիշել մեր ժամանակիս քաղաքական կենաց ըզ-
գացմունքը, արուեստից և գիւտից զարգաց-
մունքը, չարժման երագութեան հնարքները. ա-
սոնք, ըստ իս, երկու ներհակ տարացոյց և ի-
մաստ կ՛ընծայեն ներկայ մարդկան: Մէկ մը՝ ա-
րուեստական առաւելութեան մը քան զառա-
ջինն. որով՝ առ՛ի հաւասարել ժամանակիս ա-
ճապարանօք իւն յառաջադիմութեանը՝ հարկ
կ՛ըլլայ իւրաքանչիւր անհատից ալ մեծագոյն ձիգ

կամ երագուԹիւն մը, այժ մը. — մէկ մ'ալ՝ նուազուԹեան մը յիւրս իրս՝ քան զառաջինն. և եԹէ ոչ ի բազում իրս, սակայն ի չքնաղ և աքանչելի իրս, այսինքն ի գեղեցիկ գալրուԹիւնս. և եԹէ ընԹերցողս խոհեմաբար լսէ՝ կըրնայի ըսել Թէ և յընդհանուր բարոյականի: Չքնաղ և չքնաղագոյն իրք, զորս ոչ անուոց ոչ չոգեաց և ոչ ելեկարիկ Թելոց երագուԹիւնք, և ոչ երագահոլով քան զնոսա սահակի ոսկւոյ շրջագարձուԹիւնք՝ կըրնան բերել կամ փոխանակել: Մեր ժամանակս, այսինքն ներկայ մարդիկս՝ Հիմայ գեղեցիկ գալրուԹեանց առեն չէ, կամ Հոմերոսի, Պղատոնի, ԴիմոսԹենի և համահաւասար հեռևողաց գալրեըն անցան և բանի չեն՝ի գալ, ըսելով՝ գոհ կ'ըլլան, կը վազեն մեքենային և անոր վերջի անուէն Թափած ոսկւոյն: — Սակայն որչափ ալ այս կերպով հեռանան կամ նուազին՝ի յիշեալ գեղահանճար նախնեաց, այնչափ ալ զանոնք աւելի պատուելու հարկն և պարտքը կ'իմանան: Միւս կողմանէ ալ՝ հիմակուան ապրուսաի դժարուԹեանց համար մեծագոյն ոյժի պէտքն, զոր յիշեցինք, գոնէ զօրաւոր ներշնչուԹիւն մը, քաջալեր մը, ձայնարկուԹիւն մը կը պահանջէ: Եւ ահա այս երկու բանէն, կարծեմ, կը դրդի մեր գարս առջիններուն մէջ երևեալ քաջանշան անձանց յիշատակները նորոգել Գարագարձիւք, և նոր առեն հանդիպած երևելի կամ յաջող բաներն ալ՝ առըեգարձիւք: Աղբերնուս մէջ հիմայ յաճախեալ լրագիրք մեր ըսածին օրինակներն ալ չեն լռեր. և անշուշտ յիշեն շատ ընԹերցողք այս եաքի առբինեըս Եւրոպիոյ զանազան աշխարհաց մէջ համ-

աշխարհական կամ ազգային Դարադարձ յիշատակները և ծնները, սկսեալ 'ի Ս. Պետրոսի նահատակութեան ԺԸ դարադարձէն (1866), Տանդէի՝ Իտալացւոց և նոր դարուց Քերդողահօր Ծննդեան 600ամեակէն (1265–1865), մինչև այս տարուան մէջ հռչակեալ՝ երկնից աստեղաց գրութիւնը հաւաստող Կոպեռնիկի Ծննդեան (1473) Դ դարադարձը, և Թատերաց հանճարեղ զուարթարարին Մոլիէրի մահուան (1673) 200ամեակը: Ասոնց յիշատակաց գծին վրայ շատ անուններ ալ կան, որ քանի մ'ամիս և տարի ետև պիտի հանդիսանան և ծնուելին Եւրոպիոյ գրականաց աշխարհաց և տէրութեանց մէջ. որք իրենց յառաջադիմութեան նոր մղումմ մ'ալ այսպիսի ծնեւրով կ'առնուն. և այն անդադար յիշեալ և իրրև առակ եղեալ՝ իմանալի կամ անիմանալի Ազգային ոգին կամ հայրենական հառաչն՝ անոնցմով կը հանգչեցընեն, գէթ ինչուան նոր յիշատակի դարձ մը:

Իսկ մենք գառնանք 'ի հայրենիս մեր, 'ի Հայս: Տարեցոյցներնուս վրայ սկսաւ նշանակուիլ մեր հին ազգային Թուականն, Հայկայ ծօմարն, ուսկից մինչև յայս՝ 4365 տարի է. գրեթէ 44 դար! Որչափ ալ անստոյգ և մթին ըլլան հին ժամանակք ընդհանուր ազգաց, որով և մերս, տակաւին կըրնամք ըսել թէ բաց 'ի Հրէից և Եգիպտացւոց՝ յոյժ սակաւք 'ի հնոց և ոչ ոք 'ի նորոց ազգաց՝ կըրնան հաւասար հաւատալիութեան չափով ցուցնել այսպիսի հնութիւն մը, այսպիսի ծօմարական հաշուով ժամանակ մը, այսպիսի ազգային կեանք մը: Թէ որպէս քաջութեամբ և փառօք

ծագէր է հայկական կեանքին, նաև լոկ աւանդու-
թիւն համարելով Հայկազանց պատմութիւնը, և
թէ մրքան յեղափոխութեանց ենթակայ ըլլալով
այնքան գարուց և տարեաց երկարութեան մէջ,
որպիսի վիճակի մէջ է հիմայ, — արժանի քննու-
թեան նիւթ, — այլ այս չէ մեր նպատակն: Միայն
՝ի հարկէ աւելն ընթերցողն ալ մտաց երկու բան կը
ծագէ. մէկ մը, թէ այսքան շղթաշար երկար ազ-
գային կեանքն իր շատ օրհակաց վրայ պիտի ունե-
նայ այնպիսի անցք և անձինք՝ որոց դարադարձք
նորոգութեւրս արժանի ըլլան. — և կան կան շատ
անցք և անձինք գէթ այն 44 գարուց կիսէն վար,
սկսեալ Մեծին Աղեքսանդրի օրերէն, որ առեն
պատմութիւնն մեր ազգին նկատմամբ ալ աւելի
հատատութիւն կ'առնու. և հօս ալ կը սահ-
պուխք մեր բազմերախտ Պատմահօր Խորենա-
ցւոյ անմոռանալի խնդատն՝ անդամ մ'ալ կրկնել
յուսկն և՝ի սկզբ հայասիրաց և հայատեցից, ե-
թէ գտուին. « Զի թէպէտ և եմք ածու փոքր, և
« թուով չոյժ ընդ փոքունս սահմանեալ, և զօ-
« րութեամբ տկար, և ընդ այլոց չոլով անգամ
« նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բա-
« զում գործք արութեան գտանին գործեալ և՝ի
« մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատա-
« կի »: — չատաչ տանիմք և աւելցընենք չա-
ջորդն ալ, թէ « զոր և ոչ մի ոք՝ի նոցանէ (չատաչ
« նոցն մերոց և թագաւորաց) պէտ չանձին կա-
« լաւ մատենագրել »:

Երկրորդ մտաբերութիւնն ալ այս է անշուշտ,
որ եթէ մեզմէ շատ բարեբաղդ և կիրթ ազգք և
պետութիւնք իրենց ազգային յիշատակները կը

*

նորոգեն այնպէս, որչափ կը վայելէ և մեզ՝ այսպիսի յիշատակաց ոչ միայն մեր նախնեաց արժէքը հռչակել, այլ և անկէ խրախուսելով՝ նոր ոյժ կամ միջոց մ՝առնուլ՝ մեր նեւրկային լաւութեան և ապագային աւելի լաւութեան: Եթէ անցեալ գնացեալ են մեր Արամայ, Տիգրանանց, Տրդատաց, Վարդանանց դարերն, Գրիգորեանց, Սահակաց, Ներսիսեանց և Մովսիսեանց օրերն՝ աւելի դիւրաւ կըրնան նորոգուիլ. և եթէ առջիններըը միայն ածխիւք և հանդիսիւք և հեռաւոր հեռևուԹեամբ պէտք է յիշատակենք, եաքիններս՝ մերձագոյն նըմանողուԹեան և հաւասարուԹեան նպատակ պիտի առնուլ: Անոր համար Եկեղեցին՝ ամենէն սուրբ և ստոյգ աւանդապահ՝ մեր մէջ ալ տարուէ տարի կը նորոգէ հեզօրէն այսպիսեաց յիշատակը, Թողլով քաղաքական խոհեմուԹեան՝ չափաւորապէս ընդարձակել աշխարհօրէն ալ՝ Թէ անոնց և Թէ առջիններուն յիշատակը և Դարադարձը:

Այս երկրորդ դասէ յիշելեաց շատ արժանաւոր և նշանաւոր անձանց զուգի մը մահուան կամ յերկրէ յերկինս փոխման՝ դարադարձ է այս տարի, և որ և է զարմանալի նախախնամական կամ դիպուածական կերպով 73 տարիԹուին պատահեր են Ներսիսեանց յիշատակք: Ա. Ներսէս Հայրապետն մեր կնքէ երկրաւոր կեանքը ՚ի (25 յունիսի 373) տարւոյ. յետ ամբողջ 900 տարւոյ կը յայտնին իր վեհակերպ կմախքն կծկեալ այլ գեռ նաեւալ այն գահուն վրայ՝ ուսկից միայն Պապայ պէս պինդ պատանի մը կը յանդգնէր գլորել զինա, և մեկէն կը սկսի նշխարաց գիւտն ածուիլ յամին 1273: Ի Ներսէս Հայրապետէ, առաջնոյն

պէս միայն ՚ի համանուանս և ՚ի յետագայս գա-
սեալ ընդ սուրբս, կը վերանայ առնոսա յ՚8 օգոս-
տոսի 1173 տարւոյ: Եթէ սոսկ արժանապատիւ
Ներսէս մ՚ալ ինդրենք, ՚ի հարկէ Լամբրոնացին
պիտի ըլլայ, մերձաւոր և հաւասար արդեամբ և
արբունութեամբ. այլ ըստ տարեթուի միայն իր ցե-
ղին ծագման կամ նախահօր յայտնութիւնն կը
պատչաճի 73 թուոյ. վասն զի 1073 թուին է որ
Օշին նախահայրն Լամբրոնեանց յերևան կ՚ելնէ ՚ի
պատմութեան, Հայոց ամենէն արևելեան սահ-
մանաց՝ յԱրցախոյ՝ ՚ի Մայրեաց-ջրոց եզեալ, պա-
տել յարևմտագոյն սահմանս Կիւրիկիոյ: Անշուշտ
երկու հայրապետացս մեծահանդէս յիշատակն է
զոր կը պահանջէ տարին, բերելով մեկուն փոխ-
ման պանծալի 1500ամեակ մը կամ ԺԵ դարատարր-
ձը, և նշնարաց յայտնութեան 600ամեակ կամ Ջ
դարատարձը, միւսոյն փոխման 700ամեակը կամ
Է դարատարձը:

Երկու հայրապետք Հայոց, ըստ դիպաց կամ
ըստ տեսչութեան համանուանք, այլ գործովք՝
միշտ ըստ վերին տեսչութեան վարեալք և փայ-
լեալք. երկու հայրապետք, որք ՚ի և է եկեղե-
ցեաց աշխոյժ պարծանք կըրնան համարուիլ, և
Հայաստանեայց եկեղեցւոյ աշխուն ալ բարձրա-
ցընել քան զբարձրագոյնս: Երկու անձինք հրա-
շալիք և հրաշակերտք, ոչ այնքան՝ գերբնական
նշանագործութեամբք, որքան գերագոյն ևս օրի-
նակօք վարուց և գործոց. երկու մեծ անձինք ՚ի
մեծս իսկ արդեամբք գործոց. այն երկու անձինք,
որոց՝ Աղգն համօրէն իբրև մի մարդ, մանաւանդ
թէ արդարակիր սատուածամարդ մը՝ ընծայեր

կինքեր է ամենէն սուրբ և սիրալի մականուն, և ընդ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ իւր երրեակ մը կազմեր է, զոմն կոչելով ՇՆՈՐՀԱԼԻ, և զոմն ՄԵԾ· վասն զի այս եռքի կոչումն՝ որ շատ հեղ չատոց ընծայուած է, նաև 'ի պատմուԹեան մերում, ամենէն աւելի սեփականուած է մեր մէջ Ա. Ներսիսի, որ յատկօրէն իմն կոչի և ՊարԹև, որպէս և իւր հրաշալի որդին Ս. Սահակ, որ նոյնպէս և Մեծ, այլ քան զամենայն Թագաւորս, զօրաւորս և հայրապետս՝ Ա. Ներսէս յատկապէս ժառանգած է ազգէն այգ Մեծ նշանակը:

Մեծ կոչեցաւ և էր Ներսէս Ա, կըրնամք ըսել, ըստ ամենայն առման բառին: Մեծ էր զարմիւ իր մեծ և պանծալի ցեղին մէջ անգամ. վասն զի ոչ միայն 'ի ՊարԹևաց էր և 'ի Ս. Գրիգորէ Լուսաւորչէ, որպէս և այլ որդիք և Թոռունք նախահայրապետին մերոյ, այլ միայն Ներսէս Թագաւորի մը Թոռ ալ եղաւ 'ի մօրէ, որպէս և փեսայ մեծազգի հարսին, Հայոց կամ Յունի: Արտաքին կերպարանօք և կազմուածով ալ՝ ըստ վկայուԹեան ականատեսից՝ « էր սա մեծ և բարձր, ցան« կալի հասակաւ և վայելուչ գեղով», և մազեբով, և կրած զգեստներով, նշաններով և զէնքեբով· վասն զի նախ զինակիր եղաւ, և Թագաւորի զինակիր և Թիկնապահ· և զինուորական ու իշխանական մեծագոյն ասպարէզը բացեր և մտեր էր, երբ Եկեղեցին յափշտակեց զնա յաշխարհէ և մտուց իրեն սրբազան դասը, և բարձրացոյց յաԹոռ Լուսաւորչին: Ներսէս Եկեղեցական սըրբուԹեան և հոգւոյն մեծուԹեան հետ միացուց իր նախկի աշխարհական կամ տոհմական մեծու-

թիւնն ալ. և՝ ի սակաւաւոր ուխտաւոր գահակալութեանն երևի արքայակերպ քահանայապետ մը, կամ քահանայակերպ արքայ մը. և մեկ թագով երկու իշխանութիւնն ալ կրել կարծուի: Քահանայապետութեամբ հրաշազարդ հաւասարորդ Մեծ մը կ'ըլլայ՝ ի Հայս՝ իր ժամանակակից նախակարգեան մեծ հայրապետաց հետ, Դամասոսի՝ Հռովմայ, Աթանասի՝ Աղեքսանդրիոյ, և Բարսղի՝ Կեսարիոյ. անոնց ամենէն ալ աւելի հեղինակութիւն ունենալով իր սեփական ազգին և աշխարհին վրայ, որպէս և աւելի քաղաքական օգուտ և բարիք. վասն զի ոչ յեկեղեցւոջ միայն՝ այլ և արտաքոյ կըրնայ ըսուիլ Ներսէս՝ Հայր ազգին Հայոց. յանկալի և մեծ կոչումմ մը՝ զոր չէին կըրնար յայսմ մասին ունենալ իր ժամանակակիցքն, որպէս և շատք յայլ ժամանակս: Մեծ էր հայրն Հայոց, այլ ոչ հաւասար որդիքն, մանաւանդ անուանեալ մեծամեծքն, Թագաւորքն և մերձաւորք նոցին: Եթէ հնար էր՝ անթափանց վարագոյր մը ձգել կ'արժէր ի Արշակայ, ինչպէս իր հօր և աւելի իր որդւոյն Պապայ պատմութեան վրայ. որոց փոխան եթէ Տրդատ կամ Վռամշապուհ, գէթ խոսրով մ'ըլլար առեներն Հայ Թագաւորն, Ներսէս գուցէ Մեծէ աւելի մականուն մ'ալ ժառանգէր: Այլ այն անկարգ և աղտեղի Թագաւորաց մոլութեանց և բռնութեանց դէմ ալ կուռելով, Պարսից զինուց ահեղ զօրութեան դէմ ալ կենալով զինու աղօթից, Յունաց քաղաքավարութեան հետ ալ յարմարելով եօթն կամ ութ տարուան կարճ հայրապետութեանը միջոց, կըրցաւ արժանապէս ըսուիլ և ըլլալ կանգնող

հայրապետական և թագաւորական գաւազանաց։ Իր պապուն՝ Ս. Յուսկան նահատակօրէն մահուընէն եաև միայն քանի մը տարի անցեր էր. բայց այն քիչ միջոցին օտար ցեղէ քահանայապետք կամ աթոռակալք չկարնալով Լուսաւորչի պայազատաց հեղինակութիւնն ունենալ, եկեղեցւոյ մէջ ալ անկարգութիւնք մուած էին. Ներսէս ուղղեց զանոնք, ժողովօք և կանոնօք պատսպարեց. եպիսկոպոսաց կարգն և աթոռները առջինին պէս հաստատեց. բարուց զեղծման դէմ կռուեցաւ. աւելորդ ծախքերը, մանաւանդ յուղարկաւորութեանց մէջ, և ալ աւելի աւելորդ սուգերը՝ դադրեցուց. ամենայն տեսակ կարօտեալոց և տկարաց, թէ մարմնով և թէ մտօք կամ հոգւով՝ պէսպէս ապաստաններ պատրաստեց, այսինքն, վանքեր, հիւրանոցներ, ուրկանոցներ, փուտկաններ, 2000էն աւելի. այնպէս որ իր օրերը ոչ աղքատ ոչ հիւանդ ոչ պանդուխտ կ'երևէր դուրս աեղ: Իր հայրապետանոցը միշտ 12 եպիսկոպոս կը պահէր, բոլոր եկեղեցւոյն հոգն իրեն հետ հոգալու, իր հեռացած աաեն ալ տեղապահելով. վասն զի ոչ միայն իր սեփականը, այլև ընդհանուր եկեղեցւոյ պիտոյից հոգացող էր, այն աաեն գեռ Արիանոսաց և նմանեաց աղմուկն դադրած չըլլալով. որով հարկ եղաւ իրեն երթալ'ի Կեսարիա յօգնութիւն իր երբեմն ընկերակցին 'ի ձեռնադրութեան, և ըստ աւանդութեան՝ մկիտեղ զՀոգին սուրբ աղաւնակերպ ընդունելին, Ս. Բարսղի, և աստուածգրեց Թղթոյն՝ զոր միաբան ժողովեալքն ընդ Բարսղի՝ ուղղեցին առ Արևմուտեայս: — Իսկ քաղաքական խնամօք՝ դրեթէ երկու անգամ Հայոց

Թագաւոր դրաւ, զԱրշակ և զՊապ. անոնց հետ
պժռեալ նախարարները հաշտեցուց, իւրաքան-
չիւրի ասպիճանը և գահը տալ տուաւ, և Թագա-
ւորին քով համազգային հանդիսից օրերը 400 կամ
ըստ ումանց 900 ամուսով կը բազմեցընէր Հայոց
իշխանները և ազնուազունքը: Ոչ միայն անոնց
պատկները և պատուոյ զարդերը կ'օրհնէր, այլ և
զէնքերը և զրահները, և Զիրաւոյ դաշտերուն
մէջ Պարսից յաղթող կ'ընէր զՄուշեղ և զՄամա
և զտոհմատեացս Յունաց. և մինչ ազգին ամե-
նէն կարճ հասակը և գունդը կը հոգար՝ չէր ալ
մոռնար ամենէն ակար և ձղճիմ հասակն իսկ. և
մոլի Թագաւորի ու մոլեալ իշխանազանց ումանց
հակառակութեամբ կոտորեալ մարդկան մանրիկ
մնացորդները՝ կողոպտերով ժողովելով դայեկաց
և դաստիարակաց կը յանձնէր, կը մեծցընէր, ի-
րենց ծնողաց ժառանգութեան կը հասցընէր:...

Բայց մեր նպատակն Մեծին Ներսեհի վարքը
պատմել չէ. այլ յիշել և յիշեցընել որ արժանի
էր այս գարագարձ առթիւ՝ մեծապէս հռչակման.
և ոչ զմտին ալ կ'ուզեմք յիշել, որ այնքան անարդ
եղաւ անոր անարդագոյն պատճառող Պապին.
այլ գործեալ այնքան մեծ՝ ընդունողին. վասն զի
իր անգիտութեամբ խմած մահադեղին շատ աւելի
զօրաւոր դեղթափ ունիմ, կ'ըսէր, հաւատքս առ
Աստուած, որով կըրնամ թոյնը թափել, սակայն
ցանկալի է ինձ մահը, երբ բնական գուռ մը կը
բացուի ասոր: Աքքունական խարդախ սեղանէն
եղնելով՝ մտաւ առաջի սեղանոյ անմահ Թագաւո-
րին. հալորդեցաւ կենաց հացին, և այնպիսի վը-
սեմ ու խորհրդաւոր բանիւք՝ աղօթիւք և օրհնու-

թեամբք հրաժարեցաւ յաշակերտաց, և յիշխանաց, եկեղեցւոյ և ի կենաց, որ միայն այսօրինակ մահուամբն կամ փոխմամբ ի կենաց ի կեանս՝ արժանի էր Մեծ կոչուելու: Մեծապատիւ մահուն՝ մեծահանդէս յուղարկաւորութիւն մ'ալ եղաւ. մեծապոյն սուգ և յիշատակ մը տարածեցաւ ի Հայս և ի Յոյնս: Իսկ իրեն ժառանգ և ժառանգութիւն Հայոց՝ Մեծն այն Թողուց Մեծ զաւակ մը, իր արեան և արդեան արժանաւոր պայազատ՝ Ս. Սահակ Պարթևը: Երախտապէտ սիրտերնիք իրենց Մեծ հայրապետին համեմատ յիրաւի Մեծ և հոյակապ եկեղեցի մը կանգնեցին իր հանգստարանին վրայ ի Թիլն աւան, մօտ Երզնկայ. որոյ շքեղ մեծութիւնն փուշ ըլլալով Հայաստանի նախ սիրող անհրահանգ Ախալցոց՝ անոր նման ուրիշ երկու մեծ եկեղեցեաց հետ քակեցին փլուցին, և չթողին վերականգնելու: Եւ ահա տասը փլատակաց տակէն՝ յեա 900 տարիներու գտուեցաւ, ինչպէս նախ յիշեցինք, իր պատուական մարմինն, յամին 1272. և կըրնամք ըսել թէ և արժանապէս պատուեցաւ յաջգէն և յեկեղեցւոյն. ժողովուրդ, իշխանք, քահանայապետք և թագաւոր իսկ Հայոց, Լևոն Գ, պէսպէս նուիրօք և չինուածեամբք նշխարները հանդուցին յեկեղեցիս և ի վանորայս. և խանդավառեալ բանաստեղծք և բանաստեղծք՝ ներբողենիւք շարականօք և պատմութեամբք արձանացուցին այս առաուածաշնորհ այցելութիւնը: Փափաքելի էր նոր այցելութիւն մը համարիլ՝ և այս 600ամեան տարեդարձը, և բուն հանդիսաւոր 1500ամեակը կամ ԺԵ Դարադարձը:

Ա. Ներսիսի նշխարաց գիւտէն դար մը յառաջ հանդիսաւ (1173) Դ. Ներսէս, ամենարժեայ Շնորհալին. որոյ վարքն և արդիւնքը չանացինք յիշեցընել այս գրքուկով. վասն որոյ աւելորդ է հօս կանխաբանելն: Այլ ըսենք զայս, որ եթէ երկուց բազմերախտ Ներսիսից մէջ՝ զսա ընտրեց գրողս՝ իր կողմանէ նուէր և յիշատակ պանծալի դարադարձից, ժամանակի մերձաւորութեամբ, գրաւոր արդեամբք և կրօնական յարաբերութեամբք, միանգամայն և անուշակ և հեզափայլ բանիւք և վարուքն, և առաւել ինն արտաքայլեալ ամենազարդ շնորհօքն՝ զսա պատշաճագոյն համարեցաւ յօրինակ, 'ի յոյս և 'ի խրախոյս պիտոյից ապաշուք ժամանակիս. յորում այսքան եկեղեցական և եկեղեցականաց խնդիրք և չարժմունք են, և ոչ դիտեմ՝ ո՞րքան չփոթքն և ո՞րքան շնորհքն:

Շնորհալւոյ ոչ միայն լուսաւոր անձը լաւ ճանչցընելու, այլ և իբր թէ ձառագայթից սփիւռն ալ ցուցընելու համար, սովորական կենսագրական ոճէն աւելի ընդարձակեցինք այս գործս. ընթերցողաց ալ աւելի հաճոյ և դիւրին դառնալի ենթադրելով ընտրեալ անձին ժամանակակից անձանց և դիպաց ծանօթանալ. բայց և չատ չընդարձակուելու համար՝ չուզեցինք ընել և անուանել մեր գործը՝ Շնորհալի և ժամանակ իւր, այլ Պատգայ Ի-ը. որով կ'ուզեմք իմանալ և բովանդակել անոր մօտ չափաւոր միջոց մը տեղւոյ և ժամանակի. մանաւանդ իրեն վարուց և գործոց վերաբերեալ իրաց: Որովք՝ մեր պատմութիւնն թէ քաղաքական թէ եկեղեցական և թէ գրաւորական հայեցուածք ունի. և ժամանակն ալ՝ եթէ Ներսիսի կենօք կ'աւարտ-

ան, այլ անոր կեանքէն գէթ կէս դար մ՚ալ կը յառաջէ. զոր և իբրև համառօտ պատկերաւ մը ցուցընելու համար՝ գործոյս վերջը կարգեցաւ ժամանակագրութիւն մը, յորում նշանակեալ գէպքն հեռաւոր կամ մերձաւոր յարաբերութիւն մ՚ունին Պարագայի Շնորհալւոյն:

Այս Պարագայիս կամ մեր պատմութեան ընկկիզբն ըրինք Պահլաւունեաց ցեղաբանութեամբ, ուսկից ծագեցաւ Ներսէս, որոյ համար և ցեղացոյց պատկերաւ կամ ծառով մ՚ալ ուզեցինք ներկայացընել այն ի Պահլաւունի առհմէ, որ ընծայեց յաջորդաբար այնքան կաթողիկոսներ և իշխաններ ԺԱ-ԺԳ դարուց միջոց. որոց՝ յառաջքան զՇնորհալին՝ ամենէն նշանաւորքն են Գր. Մագիստրոս և աւագ որդին Գր. Վկայասէր. ապա հարկաւ ասոնց վրայ քիչ մ՚երկարօրէն հարկ էր խօսիլ, մանաւանդ երկրորդին վրայ: Աւագ պատմութիւնն, ինչպէս որ՚ի կարգին ալ յիշած եմք, շատ տեղ մուտ և պակասաւոր մնացած է, ժամանակակից պատմիչ չգտնուելուն պատճառաւ. քննելեաց մէկն ալ իր տարիքն էր, որոյ համար տարակոյսիս և կարծիքնիս կը տեսնուի յերես 28 գրոցս, և յետոյ ալ, ըստ հասարակաց համարման ալեւորեալ ծերութեան հասած ըսելով զինա. բայց յետ տպագրութեան գրոցս այն մասին՝ հասաւ ձեռնիս «Վարդանայ Հայկազնի տաղ «գերեզմանական, վասն փոխման երանեալ և «սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի». Շնորհալւոյ Վիպասանութեան և Եգեսիոյ Ողբոց ոճով գրեալ ուշադրաւ տաղիւք և նմանապէս վերջաւորութեամբք, և գուցէ ալ մօտ

աշխարհաբառի, յորում կ'խոստովանէ թէ Վկայասէրն չէր հասած խոր ծերութեան, այսպէս ըսելով.

« Այս ժամանակ գարձի դեռ չէր,
Թէ ծերութեամբըն թախանձէր,
Կամ բազմամեայ աւուրս ունէր
Թէ՛ ի վախճանըն հասանէր.
Բայց մեզ խրատ էր պատահէր,
Երեկ ցաւումն որ առանէր »:

Աստուածէ սէրն և ջանքն որով զայս ծանուցանեմք, և զոր յամենայնի ունեցանք գրուածոյս մէջ, կը յուսամք թէ ներողամիտ ընեն զընթերցողս՝ մեր ո և է թերութեանց կամ սխալանաց. ուրոց կամաց և քմաց Թողութիւք մեր առանձին կարծիքները կամ համարմունքը. միայն կրօնական խնդիրները, եթէ գտուին, Թողուի՛ ի գատաստան բարձրագոյն կրօնական ատենի, որում եմք և կ'ուզեմք միշտ ըլլալ հպատակ. Թէ և ուզած ալ եմք այսպիսի խնդրոց վրայ չերկարիլ մեր պատմութեան մէջ, նոյն իսկ ժամանակիս գիպուածներուն ալ նոր փորձ ունենալով անոնց օգտին և վնասուն համեմատութեան: Մեր գլխաւոր գիտածն՝ ի Ընդհակառակն՝ իր այս կամ այն յատկութիւնն չէր, այլ հաւատար ամեն տեսակ չնորհքն. իր գերագոյն ատենին կրօնական անձ ըլլալն իսկ՝ չի նուաճեցներ մեր առջև իր գրաւորական և քաղաքավարական գերակատար ձիրքերն ալ, և ամենէն աւելի իր ազնիւ, անոյշ, անհամեմատ բարքը. որովք՝ ամեն վիճակի հասակի և ամեն մարդկան

ալ, մանաւանդ իրեն և իմ համազգեացս, փափագեցի և փափագեմ ընծայել զնա օրինակ, պաշտպան և միջնորդ, միանգամայն և պարծանք և սփոփանք:

Ցետ իմ կենդանի նժդեհակցացս՝ կ'ընծայեմ զայս որպիսի և է վաստակ, Քեզ՝ Հոգի ✠. — որ ոչ միայն քան զամենայն ոք յաշխարհիս երախտաւոր եղած ես ինձ, կենացս պատճառաւ, այլ և մանաւոր իմն խնամով զվարկ Շնորհալւոյ տպաւորեցեր՝ ի նորաբոյս ոգիս. — այն կանուխ ծնողական և աշնուական ձայնիդ՝ իբրև կիսադարեան դանդաղ և նուաղ արձագանգ:

---

# ԳԼՈՒԽՔ ԲԱՆԻՑ

Ա. Շնորհալի կոչուածն Ներսէսի Դ: . . 1
Բ. Ազգատոհմն Շնորհալւոյ. Պահլաւունիք. – Քահանայական տոհմք՝ Լուսաւորչի, Ալբիանոս, Մանազկերտացւոց. – Կաթողիկոսք: . . . 8
Գ. Նոր Պահլաւունիք. – Գրիգոր Մամիկոնեան. – Վահրամ Գրիգոր Բ Վկայասէր. – Տօնական Գիրք. – Կիրակոս Թարգմանն. – Թղթակցութիւնն և յարաբերութիւն Գրիգորի Վկայասիրի ընդ Գրիգորի Էջ Հռոմայ Քահանայապետի. – Հակաթոռ կաթողիկոսք: . . . 22
Դ. Ապիրատ և որդիքն. – Ներսէսի Ծնունդ և Մնունդ. – Վանորայք Սեաւ Լերին. – Սաեփանոս Կարմիր վանեցի Գիտնական Վարդապետ. – Բարեպաշտ կաթողիկոս: . . . 44

Ե. Գրիգորիս կաթողիկոս. – Աղեքսան-
դոս աթոռոյն ապստամբութիւն. –
Ժողով Սեաւ լերին. – Երկրա-
շարժ. – Քահանայութիւն Շնոր-
հալւոյ և ձգնութիւնք. – Ուսմունք
և գիտութիւնք Ներսիսի. – Շը-
նորհքն կամ օծումն. – Շարժա-
գրութիւն. – Զարմանալի կերպ
Շարագրութեան. – Յատակաբա-
նութիւն: . . . . . 54
Զ. Տաղաչափութիւն հայկական. – Շնոր-
հալւոյ քերդողական ճարտարու-
թիւնն. – Վիպասանութիւն, ա-
ռաջին գրուած նորա. – Զանա-
զանութի ոճոյ, նիւթոց, և այլն.
– Բանաստեղծական հանճար: . 70
Է. Շնորհալի երգեցող. – Երաժշտու-
թիւն Հայոց: . . . . . 85
Ը. Փոխադրութի կաթողիկոսական ա-
թոռոյ 'ի Մովք Դղեակ. – Քաղա-
քական վիճակ ժամանակին 'ի
սահմանս բնակութեան Շնորհա-
լւոյ և 'ի Մեծ Հայս: . . . 94
Թ. Եպիսկոպոսութի Շնորհալւոյ. – Օգ-
նականութիւն կաթողիկոս եղ-
բօրն. – Գրիգորիսի յորդորանօք
եղած մատենագրութիւնք. – Իգ-
նատիոս Վ. – Սարգիս Վ. – Շնոր-
հալւոյ Մեկն. Մատթէի: . . 108
Ժ. Գիտական անձինք և տեղիք ժամա-
նակին 'ի Մեծ Հայս. – Անի և Ա-

նեցիք՝ Սամուէլ, Մխիթար, Վարդան. առը Երզեվիկն. – Գանձակ և գիանական վարդապետքն. – Մխիթար Գոշ. – Հաղբատ և Սանահին. – Յակոբ Բարաթինեցի. – Յովհ. Սարկաւագ Սմբատեան : . . . . 121

ԺԱ. Հայոց և Ասորւոց ընդդիմաբանութիւն կրօնական. – Թուղթ Շնորհալւոյ առ մելրեալ Համազգիս 'ի մէջ Ասորւոց : . . . . . 136

ԺԲ. Գերութիւն Ալէոնի. – Հրաւէր Գրիգորիսի 'ի Լատինաց 'ի ժողովս Անտիոքայ և Երուսաղեմի : . . . 148

ԺԳ. Նորոգութիւն Աղուանից կաթողիկոսութեան. – Վահրամ և Վասակ հօրեղբարք Շնորհալւոյ՝ իշխանք Յեգիպատոս. – Այցելութիւն Գրիգորիսի. – Հայ վզրուկք Յեգիպտոս : . . . . . 159

ԺԴ. Կրօնական բանակռնացութիւն ընդ Հռոմայեցւոյն. – Ոճոն Ֆրիզինկայ Ժամանակագիր. – Ս. Բեռնարդոս. նմանութիւն ընդ Շնորհալւոյ. – Հայկական զուգադիպութիւնք. – Վանք Հայոց 'ի Սալուեան Ջուրա Հռոմայ. – Խնդիրք Հայոց : 171

ԺԵ. Եգեսիոյ առումն 'ի Թուրքաց. – Վրէժխնդրութիւն Ճոսլինի և Պալտինի. – Մահ սորա և Գերեզմանական ոչխ Բարսղի վարդապետի. – Բ. Խաչակիրք քարոզութիւն Ս. Բեռ-

նարդոսի. – Ողբ Շնորհալւոյ յԵ-
դեսիա: . . . . . 187
ԻԶ. Թուղթք սիրեն Մարաշայ, Ֆեռնոյ,
և այլն. – Գրիգոր Իմաստասէր Մա-
րաշացի, և գիրք նր վայից. – Նա- ԻԲ.
հատակութիւն Գոհարինեանց. – Փո-
խադրութիւն կաթողիկոսական ա-
թոռոյ 'ի Հռոմկլայ: . . . . 216
ԻԷ. Դասընակիր գրուածք Շնորհալւոյ. –
Բան Հաւատոյ. – Թուղթ առ Գրի- ԻԳ.
գոր Ապիրատ. – Յիսուս Որդի. –
Հաւատով Խոստովանիմ: . . . 232
ԻԸ. Առ և այլ երկրորդական գրուածք.
– Յաղագս Երկնից զարդուց. – Մը-
խիթար Հերացի. – Մեկնութիւն և
Հափսս յարատութիւն Ներբողի խա- ԻԴ.
չին՝ Դաւթի Անյաղթի. – Վարդան
Վդ. Հաղբատացի. – Մեկնութիւք
խնամատարական բանից. – Առա-
ջանք Ազգականութեան. – Քանի մի
Թարգմանութիւնք. – Վկայաբա- ԻԵ.
նութիւն Ս. Սարգսի: . . . . 254
ԻԹ. Հիւանդութիւն Շնորհալւոյ. – Մահ
Ս. Բեռնարդոսի. – Ծնունդ և անունդ
Ներսխի Լամբրոնացւոյ: . . . 278 ԻԶ.
Ի. Թորոս Բ և եղբարքն Սահմանէ և
Մլեհ. գործք նոցա ընդ Յոյնս, Լա-
տինս և Թուրքս. – Շնորհալի միջ-
նորդ հաշտութեան Թորոսի և Օշնի ԻԷ.
Լամբրոնացւոյ . . . . . 286
ԻԸ. Ձեռնադրութիւն Շնորհալւոյ 'ի կա-

Թողիկոս. – Ատենաբանութիւն Նո-
ւա. – Մահ Գրիգորիսի : . . . 328
ԻԲ. Տեսչութիւն Շնորհալւոյ ի վերայ Ե-
կեղեցւոյն Հայոց. – Ընդհանրական
Թուղթն. – Բաղդատութիւն ընդ
կանոնական Թղթոյ Յովհաննու Օձ-
նեցւոյ : . . . . . 340
ԻԳ. Եկեղեցական բարեկարգութիւնք Շը-
նորհալւոյ. – Հոգ Եպիսկոպոսաց.
Թիւ և կարգ սոցա. – Կանոնք. – Խը-
նամք ի վերայ կրօնաւորաց, Տը-
ղայոց, Աղքատաց, Ծառայից. –
Երգ վան գիշերապահից. – Հանե-
լուկք : . . . . . 362
ԻԴ. Մխիթարականք Հիւանդաց, Սգաւո-
րաց, Տարակուսելոց. – Ուրուկք
Եգեսիոյ. – Իշխանն արևելեան. –
Յովսէփ Նոր վկայ : . . . . . 381
ԻԵ. Հաւատոյ խնդիրք. – Արևորդիք. –
Թուղթ առ Յակոբ Ասորի, վան
Անապականութեանէ մարմնոյն Քրիս-
տոսի : . . . . . 398
ԻԶ. Խնդիր Միաբանութեան Եկեղեցեաց
Յունաց և Հայոց. – Մանուէլ կայսր.
– Թէորիանէ. – Ս. Կիւրեղ Կար-
մեղական : . . . . . 408
ԻԷ. Բարեզարդութիւնք պաշտամանց Ե-
կեղեցւոյ. – Ժամասացութեանէ երգք.
– Շարականք. – Պատարագի երգք.
– Մանրուամունք. – Գանձք. – Մաշ-
տոց. – Կարգք Ձեռնադրութեան. –

Սպասք եկեղեցեաց. – Շնորհալւոյ
օրհնած միւռոն նոր գտուած: . . 440
ԻԸ. Ներանձնական կրթուԹիւնք Ներսի-
սի և գերազանց առաքինուԹիւնք. –
Գաղտնիք Շնորհացն: . . . . . 457
ԻԹ. Մահ Շնորհալւոյ. – Գերեզման. –
Համբաւ: . . . . . 480
Լ. Վերջաբան: . . . . . 493

# ՇՆՈՐՀԱԼԻ

## ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

---

### Ա.

*Շնորհալի կոչումն Ներսիսի Դ:*

Զարմանալի բարոյական բերում մը յորդորիչ է ամեն ազգի մարդիկ՝ իրենց մէջ կարգէ դուրս և մեծ հանճարով ու գործով յայտնուած անձանց՝ ոյսչիչ մականուն մը յարմարցընել. զարմանալի է՝ ոչ այնքան մարդկանց գիտողութիւնն, որքան պատշաճ գտողութիւնն և անուանագրութիւնն: Ա՛լ աւելի զարմանալի է՝ այդպիսի յայտարար անուանց՝ անյայտ կերպով մը ծագիլն և դրուիլն. ամենքն գիտեն և կրկնեն այն սեփականեալ կոչումնքը, և ոչ ոք գիտէ թէ ով հնարեր և տուեր է անոնց. մինչև կըրնայ համարձակապէս ձայն Աստուծոյ ըսուիլ և այդպիսի ժողովրդական անուանագրութիւն մը: Քան զբազումս յազգաց և ժողովրդոց գերազանց երևի ազգս Հայոց այսպիսի անուանց պատշաճագրութեան մէջ. և շատ հնուց սկսեր է գտանել և կնքել իրենները. այսպէս տևողական փոխարէն մ՝ընծայելով անոնց արժանեաց:

Մեր բնիկ նախնեաց՝ Հայկազանց՝ շատին անուանքն նշանականք են, և Թուին յետոյ յար-

մարեալ ըստ իբրաքանչիւր գործոց կամ հանգամանաց. ինչպէս Շարա, Անուշաւան, որ և Սօս, և յայտնապէս՝ Գեղեցիկն Արայ, որոյ հակառակ և Անգեղեայն Տօրք. և նոյն ինքն նահապետն աղգիս Հայկ՝ իր ճարտար նետաձգութեանն համար՝ Աղեղնաւոր: Արշակունեաց առեն ալ Թագաւորք և զօրավարք նշանակուած են մականուամբք. Տըրդատ՝ Սէգ, իր որդին Խոսրով պզտիկ ըլլալով մարմնով Կոպակ. Սմբատ Սպարապետն Բ Աբասգնեայ՝ Այրափալ. Մուշեղ Մամիկոնեան՝ 'ի վերջ Դարոն՝ Քաջակորով, որ և Սպիտակաչէ՝ ըստ Շապհոյ արքայի Պարսից. իր ցեղէն սրբազանեան վարդան՝ Քաջ և Կարմիր: Եւ յետ սոցա այլք պէսպէս յարմար կոչմամբք. ոմն Գայլ՝ Վահան, ոմն Մասիէր՝ Աշոտ, ոմն Երկաթ (Աշոտ Բ), ոմն Ողորմած (Աշոտ Գ), ոմն Տիեզերակալ (Սմբատ Բ), և այլն:

Բայց աւելի որոշ և բացայայտիչ են մեռեալ զօրութեանց յայտարար կոչմունքն. ինչպէս, Անգաղաղ՝ Թաւիթ, Քերդողահայր՝ Մովսէս Խորենացի, Վէրջանող՝ Մամբրէ, Ճարպասան՝ Ղազար, Իմաստասէր՝ Յովհան Դ, Հռետոր՝ Խոսրովիկ, Համարող՝ Անանիա, Սոփեսպէս՝ Սարկաւագ Վ., Մեղրիկ՝ Գէորգ, Վիպասէր Գրիգորիսեանք. և միանգամայն վարժապետքն և հարք դպրութեան լեզուիս՝ Թարգմանիչ, և յատկապէս 'ի նոսա՝ Ս. Սահակ և Մեսրովբ. եռքինս կոչուի և Մաղթող, յատուկ կամ ծիսական նշանակութեամբ՝ քան բնիկ անուամբ: Թողունք ըստ գործոց և բարուց անուանեալքը, որպէս Շինօղ՝ Ներսէս Գ, Մէծաբարոյ՝ Յովհաննէս Է, և ըստ դիպաց՝ որպէս, Գերապարիսպ, Քարավէժ, Մաշկեաւոր, Ոսպնակիր, Զագայարոյց, և այլն, և այլն:

Այլ առաւել ևս քաջայայտ և վեհմականք են կրօնական կամ իսուն հոգևոր և մեռեալ առեսութեամբ ընծայեալ անուանք աղգայնոցս առ ազգայինս. որոց անտարակոյս առաջին և վեհագոյն

է աշխարհածանօթին Լուսաւորիչ՝ Գրիգոր. այնքան պեղեցկայարմար՝ մինչև իր արժանաւոր հետևողաց ալ՝ չկարցան յեռինք ուրիշ անուն տալ քան Երէորդ Լուսաւորիչ[1], սկսեալ՝ի Մեծացն Ներսիսէ և Սահակայ: Այս վեհապոյն և յանկագոյն կոչմանն հաւասար, և թերևս քան զայն համապատշաճ ընծայելոյն՝ գանեմ Շնորհալի կոչումը Ներսիսի Դ կաթողիկոսի մերոյ: Լուսաւորիչ և Շնորհալի. սր և է քաղակշիռ քննադատ ոչ սոսկայմ պեղեցկայարմար անուն կըրնար գտնել ընծայելու, և ոչ արժանաւորագոյն անձինք՝ ժառանգելու: Փափագէի այս երկուքին մէջ գնել զայն՝ որ թէ և բաղում իրօք և բազմագոյն ևս սիրով մերն է, այլ և արեամբ և լեզուաւ ըլլար յատկապէս, Ոսկիբերանը: Այլ թէ հարկ է մեզի սեփականագոյն այսպիսի երկորդութիւն մը կազմել, ամենայն համարձակութեամբ կըրնամք միջադասել զՊարթևն Ս. Սահակ, իրեն սեփականագոյն եղած գրաւոր կոչմանին անուանելով Թարգմանիչ. և եթէ Մ. Խորենացի պատմահայրը մեր սիրէր մեր հիներէն երրեակ մը կազմել և «կոչել այսպէս՝ ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիգրան, քանզի՝ Քաջաց ազգ քաջքն». աւելի ևս մեք՝ կըրնամք ըստ արբութեան, իմաստութեան և գիտութեան՝ կոչել, Լուսաւորիչ, Թարգմանիչ և Շնորհալի: Այս եռաբի կոչումն՝ Ներսիսի աւելի յայտանիշ և պանծալի եղաւ՝ քան իր երկու ուրիշ կոչումներն ալ, Կայսեցի և Երգողն: Փոխանակ առաջնոյն կ'ըսուի ևս Շնորհաց Տէր Ներսէս[2]:

1 Խղճալի է որ յոմանց շռայլութեամբ այսպէս կոչուած են երբեմն այնպիսի անձինք ալ՝ որոց ոչ միայն լուսաւորիչ ըլլալն այլ և լուսաւորեալ ըլլալն՝ տարակուսական է:

2 Ոմանք սխալմամբ կարծեր են այս կոչումն արուած Ներսիսի Ամբրոնացւոյ. թէ և սա ալ արժանի նման կոչման մը, մինչ ինքնին ստիպուած է իմացընելու, որ Լաւինք զինքը երկրորդ կամ Նոր Պօղոս Առաքեալ կոչելին:

Բայց ինչ են Շնորհք՝ որովք լի համարուի մեր Ներսէս. և ուսկից, և ինչ նախ այդպէս անուա-ներ է: — Ըստ սովորական նշանակութեան՝ շնորհք կ'իմանամք տուրք մը, և՛ի մանաւորի՝ երկ-նապարգև տուրք մ'աս բանականս, զարդարիչ և զարգացուցիչ միտց և հոգւոյ. և ալ աւելի յատուկ քրիստոնէական միօք՝ աստուածային ձիրք և զօրութիւն մը, որով մարդ կըրնայ հաճո-յանալ Աստուծոյ, անոր օգնականութեամբը և յայտնեալ կրօնից խորհրդովք: Նաև մարդկան արտաքին և կենսական առաւելութիւնքն ալ շնորհք կ'ըսուին. ինչպէս, քաջողջութիւն, այժ, ճարտարութիւն, չարժուածք, և այլն, և մանա-ւանդ բարեկազմութիւն մարմնոյն կամ իրերա-պատշաճութենէ մասանց, որ է և գեղեցկութիւն: Սակայն գեղեցկութեան իսկ կատարելութիւնն է շնորհք. քանզի կըրնայ ըլլալ արտաքին ձևով և չափով գեղեցիկ մը, այլ ներքին վայելուչ յատ-կութիւններէ զուրկ՝ անշնորհք մնայ, և գեղեց-կութիւնն իսկ ոչ լցուցիչ և հանգուցիչ. ընդհա-կառակն նուազագոյն գեղեցկութիւն մ'ալ կըրնայ արտադրաբար շնորհք ունենալ. վասն զի շնորհքն ալ մարդուս ներքին և էական բնութեան (հոգւոյն) զօրութեանց յարմարակցութիւնն է. որ եթէ և ընդ արտաքնոյն միանայ՝ կատարեալ գեղեցիկ և շնորհալի կ'ընէ զանձը: Այնչափ է ազդեցութիւն յարմարակցութեան մասանց և յատկութեանց մարդս, մինչև նիւթական չինուածք անգամ՝ երբ պատշաճապէս չափակազմեալ ըլլան՝ շնորհա-ւոր կ'ըսուին: Գուցէ մեր լեզուին Շնորհք բառն ալ այս չինքի յարմարակազմութեան գաղափա-րէն առնուած է, և ասոր համար ոսկերչին կ'ը-սուի շինէ շնորհք կայ, չկայ, շինուի շնորհով վարիլ, և այլն: — Սակայն բառին անաւոր և նորանշան վերջաւորութիւնն ալ ոչ մանրակամբ՝ կըրնայ կարծեցնել հին և դիցաբանական ծագում մը,

ոգւոյ իգական աստուածութեան իմաստով, նման յունական և լատինական դիցաբանութեանց Խո-
րէո և Կրէոյիէ անձնաւորը շնորհաց: Արդ շնորհալի անձ մը՝ կ'իմացուի հարուստ հոգեկան ձիրք, որ միանգամայն և պատշաճապէս յարմարակցեալ են՝ թէ իրենց մէջ և թէ արտաքին մարմնական ձիրցը: Ա.յսպիսի ոմն էր ուրեմն մերս Ներսէս, առաւելեալ քան զբազումս՝ ի մարդկանէ, և քան զամենն՝ իր առեն մերձաւոր սահմաններ, և նաև քան զհամակարգն՝ իրմէ շատ առեն առաջ և վերջը:

Եթէ մեծ և ամենամեծ բաղդ է այսպէս ըլլալն, ոչ փոքր բաղդ սեպելու է և զայնպիսին լաւ ճանչնալը. և ոչ փոքր գովութեան արժանաւոր նա՝ որ նախ պատշաճեցուց և ընծայեց իրեն այդ կոչումը: Զեմք գիտեր թէ երկնաւոր եթէ երկրաւոր ոք էր այս գովելին. վասն զի աւանդութիւն է՝ թէ հրեշտակ մը պատուիրած ըլլայ Շնորհալւոյ կոչել զՆերսէս. այլ ինձ հաւանագոյն երևի թէ մարդ կամ մարդիկ՝ գերազանցեալ կամ յառաջեալ քան զհրեշտակս՝ աստուածայնապէս պատշաճեցուցին մեր կաթողիկոսին զայս կոչում: Եւ էէին ալ կըրնար չընել այնպէս՝ եթէ տեսողք և լսողք էին անոր մաքուր վարուց, քաղցր կենակցութեան, վայելուչ խօսից և շարժուածոց, բազմազան գիտութեանց, ամենապատիկ լաւութեց և գերագոյն առաքինութեանց, և եզական յատկութեանց. երբ իր շատ նախորդները և յաջորդները ալ շարակարգելով՝ ինքնին արտափայլեր ասոր գերազանցութիւնն. երբ հանգէս ընելով ասոր և անոնց վաստակոց՝ գտուէր սա աղգին ամենէն մեծ կամ մեծաց հաւասար աստուածաբան, վայելչաբան, չափաբան, բանաստեղծ և երգիչ. երբ տեսնուէր մեր եկեղեցական պաշտամանց վերջին վայելչութիւն և հարստութիւն տուող-

Երբ Յանէյուէր Աչմարիա քահանայ և հովիւ մը ըսա հոգւոյ նախատիպ քահանայապետին Քրիս-տոսի. երբ հրաշափառապէս փայլէր 'ի դէմն, 'ի շրթունս և 'ի գիրս՝ յիսուսականն հանդարտ և հանգուցիչ հեզութիւն. երբ երևէր 'ի ծնէ մինչև 'ի յետին հասակը՝ 70 տարի անդադար աշխատող միայն յօգուտ եկեղեցւոյ, դպրութեան և չինու-թեան ազգին, և 'ի բարեզարդութիւն իր ներքին մարդոյն. երբ նկատուի որ եօթն երկար դարուց բարդեալ և բրդեալ յունական և հայկական ա-տեղութիւնք՝ ատոր բերնով և գրչով կը թուլնան կը քայքային, և երկու ազգի ապառաժ սիրտք՝ իբրև երկու հրահալ մետաղք՝ կը դրդին կը սրո-վիան յիրար ձուլուելու. երբ այս ամեն բաներով ճոխացեալ անձ մը՝ իբրև ամենայն հոգեկան, մը-տաւոր և մարմնաւոր ձրիւք ներդաշնակեալ գոր-ծիք մը՝ հնչէ զմայլեցընելով զՀայ և զՅոյն, զԱ-սիան և զԱսորի, զմերձաւոր և զհեռաւոր. — ան-նախանձ նկատողին խիղճն ալ չի կրնար չհան-չել բարձրաձայն, թէ այդպիսի նախախնամեալ առաւելածատարգև անձ մը՝ հարկ էր որ ըլլայ Շնորհալի:

Եթէ այս բազմափայլ ձիւքերն առանձնաբար առնուին՝ գուցէ գանուին, և յիրաւի ալ գտուին թէ յօտարս և թէ 'ի մերայինս՝ ոչ սակաւ շնոր-հաւորք, թերևս աւելի իսկ քան զՆերսէս՝ յայտ-կամ յայնմ մասին. այլ ոչ ոք հաւասար իրեն ամենուն մէկտեղ՝ շնորհալի: Շատ պայծառ կ'ե-րևի իր այս առաւելութիւնն, եթէ Թողլով մեր ազգին որ և է ընկերական գասերը, քննենք միայն ամենէն բարձրագոյնը, Ներսիսի կարգակիցները, այսինքն զԿաթողիկոսս: Թարգմանչաց օրերէն մինչև 'ի Շնորհալի 700 տարի էր, իրմէ ալ մինչև 'ի մեզ՝ 700 տարի. այս 14 դարուց մէջ թէ և ոչ սակաւ արժանաւոր և հանճարաւոր կաթողի-

կոպք կացին 'ի Հայս, սակայն մեր եկեղեցին որ ա-
ռատապէս պատուէ զսուրբս, այլ արդարապէս
ալ մեծս պահանջէ 'ի մեծաց, հիմայ այն երկա-
բաշար 150 կամ 160 հայրապետաց մէջ՝ մեկ սուրբ
մը միայն կը ծանէ յատկապէս. և այս մեկս է Ներ-
սես Դ, Շնորհալին մեր: Իր մերձաւոր և ազգա-
կից նախորդաց և յաջորդաց մէջ ալ կային շնոր-
հաւոր և առաքինի կաթողիկոսունք, այլ միայն
իրեն շնորհեցաւ ծանօթութեան պատիւն ալ,
թէ և յայտնապէս մեկ անուամբ ալ յիշեն զԳրի-
գորեանս և Ներսիսեանս. գուցէ եթէ անունք ա-
ռանձին ժամանակ երևցած ըլլային՝ աւելի պայ-
ծառ և պաշտելի ալ ըլլային. բայց Ներսիսի մե-
ծագոյն լուսափայլութեան քով նուազ լոյս մնա-
յին, մինչև իր հարազատն իսկ Գրիգորիս, որ վա-
րուք ալ սրբագոյն էր քան զայլսն: Բայց այս ալ
յայտնի է որ Ներսիսի առաւելութիւնն չէր միայն
'ի սրբութեանն. քանզի հայրապետէ միայն վա-
րուց սրբութիւն պահանջել՝ կատարեալ պահանջ
չէ. այնպիսի առաջնորդի մը՝ ուրիշ կարևոր ձիրք
ալ պէտք են, զոր և պիտի ցուցընէ մեզի Ներսիսի
վարուց քննութիւնն, և յայտնէ իր շնորհալիու-
թեան պատճառները: Աս այժմ բաւական ըլլայ
այս կարճ յիշատակս ալ՝ գոնէ փափագել տալու
ճանչնալ այս զարմանալի անձը, որ այնքան հա-
րիւրաւոր կարգակցաց մէջ՝ մեկհատիկ եղեր է
բազմապատիկ շնորհափայլութեամբք, և աւելի
փափագել՝ ունենալու երկրորդ Շնորհալիներ,
ինչպէս երկրորդ Լուսաւորիչներ. և եթէ չեն ե-
րևիր երկրորդքն՝ զարմանալ և գոհանալ առաջ-
նոց վրայ, երախտագէտ և երախտապիւտ ըլլալ
անոնցմով: Զի ոչ հարևանցի ծանօթութեան կամ
պարծանաց համար տրուած են մեզի, ոմն Հայազ-
գիք, Լուսաւորիչ մը, Թարգմանիչ մը և Շնորհա-
լի մը, այլ 'ի մշանջենաւոր յիշատակ և յօրինակ,
յօգուտ և 'ի խրատ:

## Բ.

### Ազգատոհմն Շևորհալւոյ. Պահլաւուհիք. — Քահանայական տոհմք՝ Լոռւսաւորչի, Սրբոյ Գրիգորի, Մանազկերտւոյց. — Կաթողիկոսք։

Հայոց ազգին մեծամեծ երախտաւործաց շատն՝ նշանաւոր ծագում ալ ունեցեր են, ըսա երկրաւոր յարգի, այսինքն ազնուական ցեղ մը. Շնորհալւոյ ազգատոհմն ալ ամենազնիւ է. այլ գուցէ պատմական հաւաստեաց սահմանէն կ՚անցնինք պատմիչք՝ երբ Պահլաւունեաց ցեղը մինչ յԱբրահամ նահապետ կը հանեն, սկսեալ՝ ի Խորենացւոյ (Բ. կը.) մինչև՝ ի Սիմէոն Ապարանեցի. որպէս թէ սիւնեբահաշակ Պարթևաց կամ Արշակունեաց (որք գրեթէ 700 տարի՝ արևմտեան Ասիոյ մեծ մասին տիրեցին, և Ասիոյ առաջին տէրութիւն և ազգ եղան), նախահայրն է Աբրահամ՝ ի Քեռւբայ հարձէն ծնեալ վեց որդւոց անդրանիկն Զեմրան [1]. զորս՝ երբ չափահաս եղան՝ Աբրահամ խրատեց գէպ յարևելս, զատելով յԻսահակայ իր պայազատ զաւակէն։ Արևելից երկիրն՝ հաւանական կարծեօք է Արաբիա և սահմանքն. բայց Հայ պատմիչք կարծեն մինչև զԹուրքաստան աշխարհ. գոնէ Եմրանայ (Զեմրանայ) համար կ՚ըսեն, թէ հօն քաշուեցաւ՝ իր եղբայրներէն մեկ

1 Մեր պատմիչք Եմրան կ՚անուանեն զայս, անուանք Զ գիրը նախդիր կարծելով և ոչ բնական։ — Խորենացին չըսեր թէ Պարթևք ասոր որդիքն էին, այլ անորոշաբար Քեռւբայի որդւոց համար կ՚ըսէ. «Յորոց սերեալ ազգ Պարթևաց», և այլն։

երկուքը սպանելուն համար. և հօն ծնաւ իր անդրանիկը Բահլ. այս կամ ասոր նման (Պահլ, Պալխ, Պահալ, և այլն,) անուամբ շինուեցաւ քաղաք մ'ալ, որ Պարթևաց Թագաւորութեան մայրաքաղաքն եղաւ, երբ Աւրշակ Քաջն ապստամբեցաւ 'ի յայնորդաց մեծին Ալէքսանդրի, ասոր մահուանէն 60 տարի ետև, և կանգնեց իր անուամբ ծանօթ Թագաւորութիւնը, որ և Պարթևաց տէրութիւն կոչի. և 60 տարի մ'ալ վերջը ասոր Թոռն՝ Մեծն Աւրշակ՝ իր Վասպուրական եղբայրը դրաւ Թագաւոր Հայոց, 149 տարի նախ քան զՔրիստոս: Աւրդ ըստ պատմչաց մերոց այս մեծ և հզօր ազգն տէրունդ է Աբրահամու 'ի Զեմրանայ: Գուցէ լաւ ևս էր զանազանել Պարթևաց և Աւրշակունեաց ծագումը՝ 'ի բնիկ Բահլի տերընդոց, զորս կոչեն Պահլաւիկ կամ Պահլաւունիք. բայց ինքն իսկ Խորենացին ալ առանց զանազանելու նոյն կը համարի զՊարթև, զՊահլաւ և զԱւրշակունի. և կը պատմէ որ Քրիստոսի անօրէնութեան սկիզբնելը, ծանօթ Աբգար Թագաւորին առեն, Պարթևաց կամ Պահլաւաց Թագաւորազանց մէջ շփոթ և կռիւ ընկաւ ժառանգութեան համար, յետ մահուան անոնց Աւրշաւիր Թագաւորին. Աբգար՝ իբրև իննամի նոցա և խաղաղարար Թագաւոր՝ գնաց անոնց երկիրը, և ուխտիւ և գաշամբ հաստատել տուաւ, որ երեք եղբարց մէջէն անդրանիկն (Աւտաշէս) Թագաւորէ, իսկ մէկալ եղբարքն յետ Թագաւորին ամեն իշխանութիւն նախապատիւ ըլլան, և իրենց անուամբ նոր գեղատեսութիւնք անուանին. ուստի գեղ երկրորդ եղբօրը՝ որ կոչուէր Կարն կամ Կարէն՝ անուանեցաւ Կաբէնի–Պահլաւ, երրորդին՝ որ էր Սուրէն՝ Սուրէնի–Պահլաւ. քոյր մ'ալ ունէին Կոչ կամ Կոմշ անուամբ, զոր կին տուին Պարթևաց տէրութեան մեծ ապարապետին, որ անուանի 'ի Պարսից Սի-

ֆէհպէտ կամ Լոֆէհպէտ, և ըստ Հայոց Ասպահապետ. ասոնց սերունդն ալ ըսուեցաւ Ասպահապէտ–Պահլաւ: Եթէ անդրանիկ բուն Թագաւորական ցեղն (Արտաշիսի) ժառանգ չունենար՝ կարգաւ ասոնց ցեղէն պիտի ըլլար Պարթևաց Թագաւորն:

Քրիստոսի Գ դարուն սկիզբները՝ երբ Արտաշիր Սասանեան հին Պարսից ազգէն՝ ապստամբեցաւ ի Պարթևաց և Թագաւորին դէմ եկաւ, իրեն հետ միաբանեցան նաև Սուրենի–Պահլաւք և Ասպահապետի–Պահլաւք. միայն Կարենեան Պահլաւք հաւատարիմ մնացին իրենց բնիկ Թագաւորական ցեղին. որուն՝ չկարցաւ առնին օգնութեան հասնիլ մեր Խոսրով Թագաւորն ալ (հայր Մեծին Տրդատայ), այլ իմանալով Կարենեան ցեղին հաւատարմութիւնը՝ հրաւիրեց որպէս ի Հայս և ապրին ազատօրէն: Սակայն առ ժամն բոլորովին հակառակն եղաւ իր փափաքանաց. վասն զի Թէպէտ Կարենեան Պահլաւկաց ցեղապետն Վեհսաճան՝ չկամաց երթալ ի Հայաստան, բայց Արտաշիր վայ հասնելով՝ սպաննեց և ցեղը չարգեց. միայն Պերոզամատ անուամբ մէկ փոքրիկ որդին ազատեցաւ իր դայեկայ ձեռօք, Թուղքասատանի խորերը փախչելով: Ընդ հակառակն Սուրենեան Պահլաւկաց առհմապետն՝ Անակ՝ հաւանեցաւ Արտաշրի, և խաբէութեամբ ասոր Թշնամի ձևանալով՝ եկաւ ի Հայս, և դաւով սպաննեց զԽոսրով, Թէ և ինքն ալ բոլոր իրեն հետ եկողներով կոտորուեցաւ. և միայն ի Հայաստան ծնած մէկ երախայ տղայն ապրեցաւ իր դայեկայ ձեռքով, փախչելով Հռոմայեցւոց ինքնակալութեան տակ եղած Փոքր Հայոց աշխարհը: Քիչ առենէն այս երկու փախստեայ շառաւիղք Կարնան և Սուրենի Պահլաւաց՝ եղան նահապետք Հայոց Պահլաւունեաց, և վերադա-

սեցան քան զբազում նախապատիւ ցեղս Հա-
յոց: Նախ Անակայ որդին Սուրէն՝ քրիստոնէից
մէջ մեծնալով՝ անուանեցաւ Գրիգոր, և յետոյ
եղաւ Հայոց Լուսաւորիչ. իր ցեղն հայրենական
կոչմամբ ըսուեցաւ Պահլաւունիք նաև Պարթևք.
և արական գծով վեց ազգ յաջորդեցին՝ ի հայրա-
պետութեան Հայոց՝ ինչուան Ս. Սահակ, որ ա-
րու զաւակ չունենալով դատերը փեսայացուց Մա-
միկոնէից պայազատը, ուակից էր իր մայրն ալ: Իսկ
Կարենեանն Պերոզամատ՝ Թշնամութեամբ ապրե-
լով Արտաշրի և Շապհոյ հետ՝ դաւաճանութեամբ
մեռաւ. իր որդին որ իրեն հետ պատերազմի մը մէջ
զարնուելով գլխուն մէկ մասն ալ կորուսեր էր,
և անոր համար Կաղաղ կ'ըսուէր ըստ Պարսից
(Քէմահէր, պակասագլուխ), շատ տարիներէ վերջը
Թուրքաց Թագաւորին հետ ալ խռովելով, անով
սեղով եկաւ ի Հայաստան, առ Տրդատ Թա-
գաւոր, և մեծ պատուով ընդունելութենէն դատ
Թէ ի Թագաւորէն Թէ իր խնամի Ս. Գրիգորէն,
որ և յաջողեցաւ՝ յետ ժողովոյն Նիկիոյ, հոգևո-
րապէս ալ խնամեցընել զինա, հաւանեցընելով
քրիստոնէութեան և մկրտելով. մեծն Տրդատ ալ
եղաւ անոր կնքահայր. Կամաց քանի մ'օրէն վախ-
ճանեցաւ. Տրդատ՝ անոր անդրանիկ Արշաւիրը՝
ոչ միայն ժառանգ կարգեց, այլ և տոհմապետ
նախարարութենէ մը, Կաղաղական անուանելով, ո-
րու ընծայեց ալբունական կալուածներ Այրա-
րատայ մէջ Երասխայ ձորոյն վրայ. զոր Արշաւիր
իր անուամբն կոչեց Արշարունիք, որ առվորաբար
կ'ըսուի Արշարունիք. ինչպէս իր ցեղն ալ, Թէ Ար-
շարունիք և Թէ Կամսարականք, և երբեմն իրենց
հին ծագմամբ՝ Պահլաւունիք: Այս ցեղս պայա-
զատութեամբ կը յիշուի ինչուան Ը դարուն ըս-
կիզբը, անկէ ետև Շիրակայ իշխանաց ցեղին հետ
խառնուած՝ առանձին չի յիշուիր: Իսկ Սուրե-

նեան Պահլաւք, այսինքն Ս. Լուսաւորչի ցեղն Ս. Սահակա կը զրաւի, և կը խառնի Մամիկո նէից ճենական ցեղին:

Բայց շատ հաւանական է որ մեկէն կամ մեկա-
լէն ձիւղ մը, ըլլայ նաև կողմնական ձիւղ, սե-
լուած ըլլայ և յաջորդաբար հասած, ինչպէս
'ի ժ. դար. յորում՝ գարձեալ յերևան կու գան
Պահլաւունիք, յետ երկու դար Թաքնուելեան և
լռութեան, եթէ 'ի Կամսարականաց ցեղէն են.
և ջրոս կամ հինգ դար՝ եթէ 'ի Սուրենեան ցեղէն
են: Մեր պատմչաց խօսից նայելով՝ աւելի այս
եաքի ցեղին կ'ընծայուին, այսինքն Լուսաւորչի.
բայց ինչ ձիւղով կամ շարքով յառաջ գալն դեռ
չենք գտած. միայն հասարակաց վկայութիւնն և
Գրիգորի Մագիստրոսի ստեպ յիշելն՝ անտարա-
կոյս կ'ընէ ազգակցութիւնը: Ինքնին իսկ Շնորհա-
լին ալ Թուի թէ չէր կըրցած տառապել այս ցեղա-
գրութիւնը, այլ իր նախնիքն գիտէին, կ'ըսէ, որ
այն ցեղէն սերեալ էն.


« Սակայն բնութիւն ազգին պահեալ
Որ Պահլաւիկըն կոչեցեալ.
Թէ և Թագուն իմն ամիսիմեալ
Յառամիկ ազանց միջի ծածկեալ.
Միայն ինքեանց ներհուն եղեալ
Որ յայնմ ազգէ գոլով սերեալ.
Որդի ըզհայր փոխանակեալ
Մինչեւ առ մեզըս հասուցեալ »:

Գր. Մագիստրոս և արձանագիրք հին եկեղեցւոց և վանորէից Այրարատայ և Շիրակայ կը յուցը-
նեն այս նոր Պահլաւունեաց նախահայր՝ Աբբակ
իշխան մը, իբրև 'ի սկիզբն ժ. դարու. վասն զի իր
Թուն Գրիգոր-Համլէ կը վկայուի ծնած յամի
941, և մեռած յ'982. ասոր որդիքն, մանաւանդ

Վասակն և Վահրամ, կը պայծառանան 'ի պատմութեան՝ բագրատունեաց Թագաւորութեե վերջի ժամանակը և վերչանալէն ալ ետև: Առանց ժամանակակից յիշուի Հասան իշխան մը նոյն ցեղէն, բայց չէ յայտ իրեն հայրն. իսկ որդիքն յայտնի են, որ և մեկայլ ձիւղին հետ խնամեցան. այսինքն Հասանայ Թոռն Վասակ՝ Գրիգոր Մագիստրոսի դուստրը կին առած է. և այս երկու մեծ խնամի իշխանք. Գրիգոր Մագիստրոս և Վասակ, կ'ըլլան հարք և նախահարք Պահլաւունի նոթոգեալ կաթողիկոսաց, յորոց մի է և մեր Շնորհալին: Ամբողջ երեք դարու միջոց (Ժ-ԺԲ) և մանաւանդ ԺԱ և ԺԲին, անընդհատ մեծագործ և մեծաբարոյ պայազատաներ ընծայեց այս Պահլաւունի ցեղս, թէ աշխարհական և թէ եկեղեցական իշխանութեամբ, և յԱրտակայ մինչև 'ի Գրիգոր Քարավէժ՝ 10 ազգ կամ պորտ են. որք և կըրնան երևնալ այս ճիւղագրութեան պատկերին մէջ[1]. յորում գլխաւոր դիտելիքն, նկատմամբ պատ-

1 Առանձին պատկերաւ ցուցուած ցեղագրութեան մէջ կը տեսնուին 10 ազգ կամ պորտ, յԱրտակայ մինչ 'ի Գր. Քարավէժ և 'ի ներսես Լամբրոնացի. առաջին վեցն ուղիղ գծաւ. վերջորդէն կը սկսի երկու գծից խառնուրդ. այսինքն Գր. Մագիստրոսի դուստրն և դստրայրն՝ նոյն Պահլաւունի ցեղէն են, այլ տարբեր ճիւղերէ. նոյնպես Վասլի (Շնորհալւոյ եղբօր) փեսային ալ (Քարավէժի հայրն) Պահլաւունի է, այլ որոյ որդի ըլլալն մեզ անյայտ. նոյնպես Պահլաւունի է Մագիստրոսի միւս դստրայրն Վասակ որդի Ապիրատայ որդւոյ Հասանայ, այլ այս եռաքինիս հայրն անծանօթ է: Նոյն Արտակեան Պահլաւունի արմատէն շառաւիղեալ Թոռն և Գէորգ իշխան մը, որոյ որդին Աշոտ իշխանաց իշխան † է յամի 1002. ասոր որդին է Վահրամ այրն Սեդայ՝ քրոջ Գ. Մագիստրոսի: Առանցմէ վերջ յիշուի Հասան Մաքսիմոսոս մ'ալ, հայր Ապիրատայ (1176), որոյ որդիք են Գրիգոր (1179) և Բարսեղ Եպիսկոպոս Անոյ, † 1205, և այլն: Մեր պատկերին ժամանակէն վերջ յիշուի՝ Գրիգոր Եպիսկոպոս Անոյ (1213) որդի Ապուղամրէի: Գարձեալ յիշուին

Ժուլթեան Շնորհալեցոյ՝ են հոգևոր անձինքն, այսինքն Կաթողիկոսունք, որք սկսեալ ՚ի Վահրամայ–Գրիգորէ Բ, որգեղոյ Գրիգ. Մագիստրոսի, ՚ի 1065 ամէ, մինչև ՚ի Գրիգ. Զ Ապիրատ՝ ցամին 1203, զերար յաջորդեցին, եօթն Կաթողիկոսք 138 տարի. լինչպէս որ զարմանալի հանդիպուածեամբ իրենց նախորդք և նախահարքն ալ ՚ի Դ և Ե դարս, սկսեալ ՚ի Ս. Լուսաւորչէն՝ յամի 302, մինչև ՚ի Ս. Սահակ՝ ցամին 439, ընծայեցին եօթն կաթողիկոս [1] և յաջորդեցին ՚ի միջոցի նոյնչափ 138 տարիներու: Այսպէս կերպով մը յետ 626




Թերևս այլք կարենան տունց մերձաւոր ազգակցութիւնն ալ գտնել:

Երկու կարևոր սերունդ ալ պէտք էր աւելցընել պատկերիս. որք են կինն Թոռնիկայ Մամիկոնեան՝ Սանոյ տիրոջ, և կինն Մլեհի Ռուբինեան. վասն զի Թոռնիկ փեսայ կոչուի Գր. Վկայասիրի, Մլեհ՝ Գր. Տղայոյ, այլ չկարենալով ստուգել թէ կանայքն դուստր են թէ քոյր յիշեալ կաթողիկոսաց՝ չկարցանք զետեղել: — Շնորհալեցոյ եղբօր Շահանայ դուստրն ալ ազգածնաց կարգը դրինք, վասն ցուցընելու Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ ծագումը: Իր աւագ եղբօր Վասլի մէկ դուստրն ալ՝ վերոյիշեալ Թոռնիկայ Թոռնորդւոյն՝ ձորտուանելի կին եղած՝ և մայր է երկու իշխանաց, որք ատիպուելով Թոզլուճ իրենց երկիրը (Սասունք) եկան ՚ի Կիւլիկիա, իննամեցան ընդ Ռուբինեանց և իրենց քեռւոյ Գր. Տղայոյ հետ մէկ ամուսան մէջ մնան, ումանց կատաղած տալով անբնական մահուան:

1 Համարելով նաև զՍ. Գրիգորիս, որ եղաւ Աղուանից կաթողիկոս, բայց ումանք՝ նաև հին գաւազանագիրք՝ զնա ալ կ՚անցընեն ՚ի շար կաթողիկոսաց Հայոց. ընդ հակառակն Լուսաւորչի ցեղէն չեղող աթոռակալները դուրս կը հանեն, անունդ տարիները աւելցընելով Ս. Ներսիսէ վրայ, և ասոր ութամեայ հայրապետութիւնը 34 տարի կը հաշուեն:

տարիներու կատարուեցաւ մարդարէութիւնն, կամ խոստումն Աստուծոյ առ Ս. Սահակ, Թէ իր ցեղէն նորէն քահանայապետք պիտի ըլլան Հայոց. Թէ և իր տեսլեան մեկնիչն կամ մեկնութիւնն ուրիշ բան ալ կրնայ ցուցընել:

Յայտնի է ամենուն որ եկեղեցւոյ մէջ, ամենայն պաշտամունք՝ ընդհանօք Աստուծոյ և ընտրութեամբ մարդկան կը տրուին, և ոչ ընտանութեամբ, կամ աշխարհօրէն ժառանգութեամբ: Եւ այս է արժանաւոր և իրաւացի. Թէպէտև հակառակն եղեալ է շատ հեղ մեր ազգին մէջ, ոչ միայն Պահլաւունեաց առեն, այլ և յառաջ և յետոյ, ինչպէս որ ինչուան մեր դարուս՝ Սսոյ և Աղուանից (կամ Գանձասարայ) կաթողիկոսաց վրայ: Եւ ոչ միայն կաթողիկոսաց՝ այլ երբեմն և եպիսկոպոսաց այսպիսի ժառանգութիւնք կ'երևին 'ի պատմութեան. ինչպէս նախայիշեալ Ձիւղագրութեան մէջ կ'երևի Անոյ Պահլաւունի եպիսկոպոսաց պայազատութիւն մը դար և կէս ժամանակի միջոց. իսկ աշխարհիկ քահանայից նմանապէս ցեղով յաջորդութիւնն 'ի սկզբանէ մինչև հիմայ շարունակուի: Եւ միայն Հայոց մէջ չէ, այլ և ուրիշ արևելեայ ազգք, որոց Թոյլ տրուած է ամուսնութիւն երեց ունենալ, Թէ այս սովորութիւնս ունին, և Թէ պատրիարքաց ազգովին ժառանգութիւն, եղբօրորդեաց կամ մերձաւորաց միջոցաւ: Ամեն խիղճ կրնայ վկայել, որ այսպիսի ժառանգութեամբ՝ երբեմն և անարժանք և անյարմարք՝ 'ի սրբազան աթոռս եկած ըլլան, որոց և ոչ պատուանդանին մօտենալու բաւական էին. այլ նոյն իսկ խղճի վկայութիւնն կը հաստատէ, որ եթէ ժառանգքն կամ յաջորդք յիրաւի արժանաւոր և ընտիր անձինք էին, ոչ միայն 'ի մարդկանէ այլ և յԱստուծոյ կոչուած ըլլան 'ի նոյն. ինչպէս յայտնի կ'երևի մեր Պահլաւունի կաթո-

ղնիկոսաց վրայ, որոց նման արժանաւոր հայրապետ չէ ունեցած Հայոց աթոռն: Երբեմն Յոհնէ և երբեմն ևս այլք մեղադրած են զՀայս, թէ հրէական օրինաց նմանութեամբ՝ ազգաւ կը քահանայանան, և ոչ ըստ Քրիստոսի շնորհընակեր օրինաց. սակայն քանի մը բան ալ պէտք էր դիտէին: Նախ, որ ոչ ամեն տեղ հաւասար այսպէս կ'ըլլար ի Հայս, այլ աւելի մանաւանդ տեղւանք կամ աթոռք, մանաւանդ պատճառաւ. և երկրորդ, որ եկեղեցւոյ սկիզբներն ալ այսպիսի սովորութիւն կ'երևի: Նոյն ինքն մշանջենաւոր Քահանայապետն մեր Քրիստոս՝ իր ընտրեալ առաքելոց 12 թուոյն մէջ մտուց իր երկուսեղբայրները (ինչպէս որ կ'անուանէին մօրաքեռորդիքն) Յակոբ Ալփեան և Յուդա Յակովբեան (որ և Թադէոս կամ Ղեբէոս), երկու ալ նոյնպէս ազգականքը, Յակովբոս և Յովհաննէս Զեբեդեան. Թո՛ղ իր 70 աշակերտաց մէջ գտուածները: Առաքեալք ալ յետ համբարձման Քրիստոսի՝ ամենէն առաջ նոյն Տեառն Եղբայր անուանեալ Յակովբը պատուեցին, դնելով յաթոռ Երուսաղէմի. և ասոր նահատակութենէն վերջը՝ 80ամեայ ծեր եղբայրն Սիմոն յաջորդեց: Պետրոս՝ գլուխն առաքելոցի՝ որ հարազատ եղբայր մ'ունէր առաքեալ կից՝ իր Մարկոս որդին կամ որդեգիրը կարգեց յաթոռն Աղեքսանդրիոյ. Պօղոսի և քարոզութեան ընկերակցին մէջ չիմնութիւն մ'ընկաւ քեռորդւոյ մը պատճառաւ, և այլն: Առանց նման ուրիշ օրինակներ ալ կրնայինք բերել եկեղեցւոյ այլ և այլ կողմերէն և այլ և այլ դարերէ:

Գանք մեր ազգին. որոյ մէջ հին ժամանակը, դոնէ Արշակունեաց առնէն, պայազատական օրէնքն հաստատուած էր ամեն տեղ և ամեն պաշտամանց մէջ, և շատ ալ հաստատ. հեթանոս Հայք ալ ունէին իրենց պայազատ քահանայու-

թեան գլուխը, Քրմապետը, և քուրմերը, ՚ի ցեղէ Վահեւունեաց. ուրիշ քուրմերն ալ նոյնպէս ժառանգութեամբ կը յաջորդէին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ մեր նոր առաքեալն և նոր քահանայապետն, որ յամենայնի հեթանոսութեան խոտելի հետքերը վերուց, անմեղադրելին Թողուց, (և չէր ալ կըրնար ուրիշ կերպ ընել այնպիսի հնապաշտ և աւանդապահ ազգի մը մէջ), քահանայական կարգի մէջ ալ նոյն սովորութիւնը սըրբեց Թողուց. նախ քուրմերու որդիքները ժողովեց ՚ի կրթութիւն քրիստոնէական ուսմանց, և անոնցմէ ձեռնադրեց 12 նախապատիւ եպիսկոպոս, յայտնի է որ բազմաթիւ ալ քահանայ. որոց երկամուտ ալ կապել տուաւ՝ կէս մը Թագաւորական ստացուածքէ, կէս մ՚ալ իրենց հին կրօնից օրէնքով ժողովուրդէն մատն և նուէրք հանելով: Կարգն եկաւ Քահանայապետին, որ էր ինքն իսկ. և Թէ կամաւ Թէ ակամայ, ինչպէս որ յանձն առած էր քահանայապետութիւնը, այսպէս ալ իրեն փոխանորդ և յաջորդ դրաւ իր կուսակրօն կրտսեր որդին, Արիստակէսը. միեւ նոյնց ատոր կըրնար Տրդատայ ձեռքէն ազատիլ, և երթալ Սեպուհ լերանց քարայրից մէջ ծածկուիլ. կամ կարելի՞ էր որ Հայք Թողուին իր որդիքը և ուրիշ անձ ընտրէին անոնց տեղ: Նոյն ատեն Աղուանք ալ հաւատացին ՚ի Քրիստոս, քարոզութեամբ Լուսաւորչին. ասոնց ալ քահանայապետ դրուեցաւ իր Թոռը, Գրիգորիս, անդրանիկն Ս. Վրթանիսի, Թէպետև դեռ պատանի էր: Նոյն ինքն Վրթանէս սակեցաւ յաջորդել իր նահատակեալ եղբօրը. և այսպէս իրեն ալ յաջորդեց իր կրտսեր որդին Ս. Յուսիկ. իսկ ասոր որդիքն՝ Թագաւորին Թուռունք ՚ի մօրէ՝ անարժան ըլլալով սուրբ աԹոռոյն՝ իրաւապէս մերժուեցան, և յետոյ ասոնց մէկուն որդին՝ Ս. Ներսէս՝ յաջորդեց. ասոր

ոչ իր որդին Ս. Սահակ. այսպէս ՚ի Լուսաւորչէն մինչև ՚ի սա՝ հինգ կամ վեց ազգ սերընդեամբ: Եւ երբ սոսկ յաջորդ՝ (կամ հասակին անլիուԹեան պատճառաւ, կամ իրենց ներկայ չգտուելուն և կամ առ ժամի յանձն չառնելուն պատճառաւ՝) ուրիշ անձ ընտրել հարկ կ՚ըլլար, այս անձինքն ալ պայազատուԹեամբ կ՚ընտրէին Լուսաւորչի աԹոռակալին ցեղէն, որ էր Ալբիանոս եպիսկոպոսն, դլխաւորն քրմօրդւոց և եպիսկոպոսաց. բուն իսկ քրմապետին հայրենիքէն, որ էր Յաշխիշաո, որ յետոյ կաԹողիկոսաց ժառանգուԹիւն և մայր եկեղեցեաց եղաւ, սակայն հին սեպրքն հօն պայպատէին. և ահա անոնցմէ ելան Փառներսեհ և Շահակ, նախ քան զՍ. Ներսէս, յետ նորա մինչև ՚ի Ս. Սահակ՝ նոյնպէս նոյն ցեղէն Յուսիկ կամ Շահակ, Զաւէն և Ասպուրակէս երեք եղբարք:

Յետ մահուան Ս. Սահակայ հարկ էր նոր օրէնք և կարգ մը հաստատել քահանայապետուԹեան: Ս. Սահակ իրեն առաժամանակեայ փոխանորդ Թողեր էր զՍ. Մեսրովպ՝ Հայոց վարդապետը. որ ատկէն լի հասակաւ՝ հազիւ վեց ամիս իբրև սեղապահ կալով, ինքն ալ մահուան առեն փոխանորդ կամ սեղակալ ըրցուց զՅովսէփ եպիսկ: Այս միջոցիս ոչ միայն Լուսաւորչի ցեղն պակսեր էր յօրինաւոր ժառանգէ, այլ և Հայոց ԹագաւորուԹիւնն և ինքնիշխանուԹիւնն վերցուած. հանդիսապէս կաԹողիկոս ընտրելու դըժուարուԹիւն մը կար՝ նկատմամբ Պարսից Թագաւորաց, որ առենօք Ս. Սահակայ ընտրուելն ալ յանցանք մը սեպեցին մեր Խոսրով Գ Թագաւորին և նոյն ինքն Սահակայ. իսկ հիմայ որ արդէն սիրած և Թշնամացած էին Հայոց և կ՚ուզէին ՚ի մոգուԹիւն դարձընել, անկարելի էր վայելուչ կերպով մը հայրապետ դնել. ուստի Ս. Յովսէփ իբրև սեղապահ կաԹողիկոս կեցաւ 12

կամ 14 տարի, առանց ձեռնադրուելու եպիսկոպոս, նահատակութեամբ պսակուելով, և մեծագոյն արդեամբք: Իրմէ վերջը՝ գարձեալ քանի մը սակաւածանօթ կաթողիկոսք՝ (Մովսէս, Մելիտէ) հին օրինօք, Լուսաւորչի ցեղին պայազատաց միջոց աթոռակալաց նման, նոյն ինքն Աղթամարայ քրմապետական ցեղէն ընտրեցան: Գուցէ և այն փառամոլ երէց Սուրմակ Արծկէացի, որ յանդգնեցաւ Ս. Սահակայ հակառակաթոռ կանգնիլ, Պարսից Թագաւորին և ոմանց նախարարաց հաւանութեամբ, այսպիսի ցեղական իրաւունք մ'ունեցած ըլլայ. վասն զի հայրենիքն ալ գրեթէ սահմանակից է վերոյիշեալ քահանայապետաց ցեղական երկրին. և նոյն ինքն յետոյ Բզնունեաց աթոռոյն եպիսկոպոս ըլլալով ազգաւ գնոյն իր ցեղին ժառանգեցուց, Պարսից Թագաւորին հաստատութեամբ: Հաւանելի է որ իր ցեղէն ըլլայ նաև Սամուէլ կաթողիկոս՝ յետ Բաբգենի Զ դարուն սկիզբները. իսկ Բաբգէն՝ յաջորդն Յովհ. Մանդակունւոյ և ասոր նախորդն Գիւտ՝ յաջորդ Աղբիանոսեան կաթողիկոսաց՝ երկուքն ալ Վանանդացի էին Յոթմանու գիւղէն, և անշուշտ ազգակից իրարու: Այս գեղէն էին նաև Իսրայէլ կաթողիկոս 'ի թուին 667, Տրգատ Ա, 'ի թուին 741:

Մինչև առնոյ օրը՝ Հայոց մէջ գեռ ինքնիշխանութեան կամ քաղաքական պայազատութեան երևոյթ մը կար. վասն զի յետ բարձման Արշակունեաց՝ Ս. Վարդան մամիկոնեան սպարապետեան՝ Հայոց գլուխ եղաւ ընդդիմանալով Պարսից. նոյն ընդդիմութիւնը շարունակեց եղբօրորդին Վահան, և յաջողեցաւ Հայոց մարզպան ըլլալու. նոյնպէս իրեն ալ յաջորդեց կրտսեր եղբայրն Վարդ: Ասկէ ետև պայազատական իշխանապետութիւնն վերցաւ 'ի Հայոց, և Պարսից Թագաւորին ընտրու-

Թեամբ Հայոց մարզպան կը դրուէր, երբեմն Հայ երբեմն Պարսիկ: Մի և նոյն ժամանակ Հայոց քահանայապետութեե ցեղական ընտրութիւնն ալ կը դադրի. և անկէ եաև անխափ ընտրութեամբ կը յաջորդեն. Թէ և ընդհանրապէս շատք՝ Այրարատեան միջնաշխարհէն ընտրուած են քան յեղեբական աշխարհէս. մինչև որ նորէն Հայոց ինքնիշխան և պայազատական տէրութիւնն նորոգեցաւ Բագրատունեաց Թագաւորութեամբ, Թ դարուն վերջերը: Այնպէս մը կ'երևի Թէ քաղաքական ժառանգաւոր իշխանապետութիւնն՝ եկեղեցականին ալ Թոյլ կու տար 'ի Հայս, եԹէ աւելի բան չըսենք. այս յայտնի է որ ինքնագլուխ Հայ ազգապետն կը հաստատէր զկաԹողիկոս ազգին և կը ձգէր յաԹոռոյն, Թէ և ոչ առանց ժողովոյ. կաԹուղիկոսն ալ միշտ յետ Թագաւորին առաջնին պատուական անձն էր 'ի Հայս, և առանց նրբեն չէր դրուեր Թագաւոր:

Արդ Բագրատունեաց Թագաւորութեան սկիզբը յետ մահուան Գէորգայ Բ (որ օծեց առաջնին երկու Թագաւորները), անոնց բարեկամ մեծատունն և գիտնական Ձգնաւորն Մաշտոց դրուեցաւ կաԹուղիկոս, յայտ է որ արքունեաց կամաք. և երբ քանի մ'ամսէն վախճանեցաւ, յաջորդեց անոր ազգականն Յովհան Զ Պատմիչն, ինչպէս ինքնին կը վկայէ սա: Իր ցեղէն էր և Ստեփանոս Գ, որ կէս դար մը եաև գահակալեց: Իսկ Յովհաննու անմիջական երկու յաջորդաց ցեղն չի յիշուիր, բայց երկրորդին (որ է Թէոդորոս Ա, 926), յաջորդ դրուեցաւ անոր եղբայրն Եղիսէ. որ որչափ ընդունելի էր ոմանց, այնց անհաճոյ երևցաւ: Ասոնցմէ, և մանաւանդ ասոնց յաջորդ Անանիա Մոկացիէն՝ կը սկսի ցեղական պայազատութիւնը մը, որ երԹալով աւելի հաստատեցաւ. Անանիայեն յաջորդն և իր հակաԹոռն կրօնական չփո-

թուլթանց պատճառաւ՝ մերժուեցան և չուտով մեռան. զաթոռը բռնեց Անանիայի քուէրորդին Խաչիկ Ա. որուն, թէպէտ անմիջական յաջորդ ուրիշ մ'եղաւ, (Սարգիս Ա), այլ յետոյ Պետրոս՝ Խաչիկայ եղբայրն ժառանգեց աթոռը, և թագաւորական պերճութեամբ զարդարեց երկայն տարիներ. թէ և շատ դիպուածներ անցան գլխէն, և բագրատունեաց թագաւորութիւնն ալ վերցուեցաւ յօտար սահման, 'ի Փոքր Հայս փոխադրեցաւ կաթողիկոսական աթոռն, զոր Յոյնք բոլորովին ալ գրաւել կը ջանային, և կը սպասէին Պետրոսի մահուան: Իսկ խորագէտ և ազգանախանձ ծերունին յառաջ քան զվախճանիլն՝ իրեն յաջորդ ձեռնադրեց զքեռորդին Խաչիկ Բ (1058), և Հայք ամենայն յօժարութեամբ ընդունեցան, և իրենց օրինաւոր և անմերժելի կաթողիկոս կը ճանչնային՝ անոր տարագրութեան առեներն ալ 'ի Կ. Պօլիս: Կայսերք կամ Յոյն եկեղեցին՝ տեսնելով որ այս անգամ ալ չյաջողեցան իրենց փափագին, Հայոց աթոռը Յունաց պատրիարքութեան ներքև ձգելու, մնացին Խաչիկայ մահուան՝ առաջուց խմացընելով, որ պիտի չթողուն ուրիշ կաթողիկոս դնել տալ, առանց հաւանեցընելու զՀայս իրենց կամաց: Եւ այսպէս ալ ըրին երբ մեռաւ Խաչիկ. երկայն ամիսներ, և ըստ ամանց տարիներ, արգելելով զՀայս յընտրութենէ կաթողիկոսի: Եթէ ազատ ըլլային Հայք՝ հաւանօրէն Խաչիկայ պիտի յաջորդեր Սարգիս, որ կամ իր եղբայրն էր, կամ մօրքեռորդին, և որ յիրաւի յետոյ (1074–7) թոյլ տուութեամբ Գրիգորիսի Վկայասիրի կամ բռնութեամբ Փիլարտոսի՝ առանձին կաթողիկոս նստաւ 'ի Հռոմ: Սակայն այս արդեօք ոչ միայն չկարցաւ խափանել Հայոց ինքնագլուխ քահանայապետութիւնը, այլ և պատճառ եղաւ աւելի հաստատուն և ապահով ընելու զնոյն իրենց հին

և առաջին սրբազան քահանայական տոհմի մէջ, որ է Պահլաւունի ցեղին՝ Մեծացն Գրիգորի, Ներսեհի և Սահակայ. որոց ոչ սոսկ անունը այլ և արդիւնքը նորոգեցին, նորացուցին՝ արժանաւոր վարուք, գիտութեամբ և գործով. որով՝ բաց ՚ի սահաւ և կարճատես նախանձորդներէ, ոչ ոք կըրցաւ զանազ կրենց պատիւը, և դժարիւ այնպիսեաց ցեղական պայազատութեանը:

Գրիգոր Ապիրատի մահուամբ (1203) վերջացաւ երկրորդ Պահլաւունեաց քահանայապետութիւնն. անոնց յաջորդն Յովհաննէս՝ կամ ասոնց կամ Ռուբինեան իշխանապետաց ազգական կարծուի. իրմէ վերջ ալ առեն առեն կ՚երևի ժառանգական յաջորդութիւն. ինչպէս ԺԴ դարուն մէջ Յիշուի Գրիգորի է (Անաւարզեցոյ)՝ անոր քուերորդին Յակոբ Բ, յետ երկուց Կոստանդեանց. իսկ վերջին դարերուս Աչպահից յաջորդութիւնն ՚ի Սիս՝ ամենուն յայտնի է: Էջմիածնի կաթողիկոսաց մէջ այս ցեղական պայազատութիւնն չըկայ. այլ անոր տեղ ԺԶ և ԺԷ դարուց մէջ կամաւոր ընտրութիւն յաջորդի և սեթոռակցութիւն երկու և երբեմն երեք կաթողիկոսաց:

## Գ.

*Նոր Պահլաւունիք. — Գրիգոր Մագիստրոս. — Վահրամ Գրիգոր Բ վկայաբեր — Տօնահանակ Գիրք. — Կիրակոս բարգևանց. — Թղթակցութիւն և յարաբերութիւն Գր. վկայասիրի ընդ Գրիգորի Է Հռոմայ Քահանայապետի. — Հակիրճ կարողիկոսք:*

Ինչպէս տեսանք ազգագրական պատկերին մէջ, Պահլաւունեաց նախնական ցեղն յետ երբ

500 տարի ծածկուելու, իբրև կայծակ մը մխրճուի
նեըքևէ՝ ի գարուն մէջ Բագրատունեաց հարըս-
տութեան առեն՝ վերայայտնեցաւ, առնոյ օգնա-
կան ըլլալու. և՝ ի վարձ հաւատարմութեան պա-
տուելով՝ իշխանաց մէջ առաջնութեան տպաւիըը
առանալու: Գրիգոր Համղէի որդիքն, և մանա-
ւանդ Վասակ և Վահրամ՝ 60 տարի Հայոց ա-
զատութեան նեցուկ և միաբանութեան կապ եղան.
Վասակ Սկիւթացի Թուղքաց հետ պատերազմե-
լով և վըճռաբերով՝ երբոր յաղթութեան առպարի-
զին մէջ առանձնացեալ երկրպագութեամբ Աս-
տուծոյ գոհութի կը մատուցանէր, դարանակալ
Թշնամիէ մը զարնուելով (1021), նահատակաց
կարգը գասեցաւ յազգայնոց: Եղբայրն Վահրամ՝
՝ի Հայոց պատուեալ իբրև Իշխանաց իշխան, և՝ ի
Յունաց կայսերաց՝ Անթի-Հիւպատ պատրիկ, դեռ
25 տարի ալ առաջնորդեց Հայոց՝ ի քաղաքի և՝ ի
բանակի, և անոնց Թագաւորին և մայրաքաղաքին՝
Անոյ՝ մատնութեան առեն, ազգային ոգւոյ ներշըն-
չումն էր և պաշտպան, և յետ տարագրութեան
պատանի Թագաւորին Ե Գագկայ՝ առեն մը պա-
հեց և պաշտպանեց զԱնի Յունաց յափշտակու-
թենէն. մինչև որ նոյն իսկ Թագաւորին և Պե-
տրոսի կաթողիկոսի կիսակամ հաւանութեամբ
հարկ եղաւ Անոյ գռները բանալ առ Յոյնս. ա-
կայն Ծերունի սպարապետն և հայրախնամ ա-
ռաջնորդն չդադրեցաւ զազգը պաշտպանելէ, մին-
չեւ յետին Ծերութեան օրերուն՝ զինք՝ ի ձեռին՝
հայրենեաց և կրօնից համար կռուելով. և եղբօրը
պէս ընկաւ, և նահատակաց գասն անցաւ (1047):
Իրմէ վերջը Պահլաւունի բազմաթիւ իշխանաց
նախապատուութիւնն անցաւ Վասակայ անդրան-
կան՝ Գրիգորի. որ նոր նահապետ մ՝եղաւ տոհ-
մին, միանգամայն թէ քաղաքական և թէ եկեղե-
ցական առաջնորդաց: Իր հօր Վասակայ նահա-

տակուբեան դաշտին մէջ պատերազմակից էր, և անոր սեփական կալուածները ժառանգեց, որոց գլխաւորն էր Բջնի բերդաւանը, որու մօտ Կեչառուաց վանքը շինեցին և զարդարեցին: Գրիգոր Թէ և զհնաշարժ իր հարց նման, այլ աւելի գրիչ շարժելու վարժ եղաւ. պղտիկուց կայսերացպալատը երթալովն՝ սովրեցաւ յունարէն լեզու, յորմէ և շատ գրքեր թարգմանեց. հարցը նման ալ պատուեցաւ յինքնակալացն և Մագիստրոս կարգեցաւ. այս անունս իրեն սեփական որոշիչ մնաց: Ազգասիրութեան հետ յունասիրութիւնն ալ խառնեց. և այն ազգային մեծ խնդրոյն և վիճակին մէջ, որ է Աթոռ վաճառուելն, ինքն ալ աւելի կաթողիկոսին կողմը բռնեց՝ քան իր հօրեղբօրը Վահրամայ, որուն քաջութիւնը չունէր. այլ ազգին դիրքն և չափն ալ լաւ կը տեսնէր, և կը գուշակէր որ Աշոտոյ և Սմբատայ Շահնշահից օրերն անցեր են, և Գագիկ գեռահասակ՝ պիտի չկարենար կառավարել զազգը: Արդէն շատ տարի չանցած՝ նոր սիրապետք աշխարհին (Թուրքք) եկան, և զԱնի խլեցին 'ի Հայոց և 'ի Յունաց, մինչ անոր հին տէրն՝ Գագիկ՝ գեռ յօտարութեան կը գեգերէր: Իսկ երբ Յոյն կողմնակալք եկան 'ի Մեծ Հայս, և բագրատունիք ու Արծրունի թագաւորազունք անցան գացին 'ի Փոքր Հայս, իրենց երկիրները ծախելով Յունաց կամ փոխելով ուրիշ երկիրներու հետ 'ի Փոքր Ասիա, Գրիգոր Մագիստրոս ալ իր բնիկ հայրենի աթոռը՝ Բջնին՝ տուաւ Յունաց, և անոր տեղ առաւ Տարօնոյ և Միջագետաց կողմը երկիրներ. ուր և յետոյ 'ի կողմանէ կայսեր կողմնակալ պրուեցաւ, Արևելեան գուքս անուանելով. հոն իր որդիքն և թոռունք ալ իրմէ վերջը քիչ շատ իշխանութեամբ պայծառացան, մինչև 'ի ժամանակս Ա. Խաչակրաց, որք սիրեցին ասոնց իշխած երկիրներուն ալ:

Գրիգոր Մագիստրոս իր ընդարձակ իշխանութեամբ և հարստութեամբը՝ յարմար առիթ և դիւրութիւն ունեցաւ իր մտաւոր և հոգևոր ա-խորժակները բաւեցընելու. գրասիրութեան հետ՝ հոգեսիրութեան եռանդն ալ ունէր, և այն ալ երբև ժառանգութիւն մը 'ի հարց և 'ի նախնեաց, որով և իրենց վեհագոյն նահապետին՝ Ս. Գրիգ. Լուսաւորչի՝ համանման յաջորդաց արժանաւոր ցեղապետ եղաւ: Իշխանական զօրութեամբ խա-ղաղընելով իր սահմանները, չանաց թէ զինուց թէ բանից ուժով նուաճել նաև մտաւոր մեծութիւնները. մանաւանդ թէոդրակեցի Հայ ա-ղանդաւորաց դէմ վիճեցաւ, և ամենևին անհա-ւանները և պիղծերը բռնութեամբ ալ պատժեց և խոշտանգեց, ինչպէս Մեծն Սահակ իր առեն Բոլբորիտաններուը: Իսկ ուր որ հաւանութիւն և խաղաղութիւն կար՝ հօն ձեռք և ատակ ալ տա-լով կանգնեց բարեկարգեց վանքեր, և անոնց մէջ ուսումնարաններ. ուր որ նոր պիտանի գիրք մը գտնէր՝ բերել կամ օրինակել կու տար. ուր որ գիտնական մը կար՝ անոր հետ կը թղթակցէր, ոչ միայն ընդ ազգայինս, այլ և ընդ Յոյնս, Ասորիս, Արաբացիս և Պարսս, որոց լեզուաց ալ բաւա-կան հմտութիւն ունէր. ինչպէս վկայեն իր ինա-ցեալ գրուածքն, մանաւանդ Քերականութիւնն և Թուղթքն: Հին Յունաց հեղինակաց ալ զանա-զան գործերը թարգմաներ էր, ինչպէս ինքնին յի-շէ Թղթոցը մէջ, բայց քիչ բան հասած է մեզի. հասանօրէն իր թարգմանութիւնն է Պղատոնի քանի մը գրուածքը, Եւկլիդեայ երկրաչափու-թեան քանի մը հատուածք, և այլն: Այսպիսի խառն եռաեռսակ ջանից և վաստակոց մէջ, այս-ինքն՝ քաղաքական իշխանութեան, գրութեան և հոգևոր հոգոց՝ չէր մոռնար ընտանեկան պարա-քերն ալ. տանուտէր և հայր էր բազմաթիւ զա-

ւսակաց, յորոց մինչուն չորս ալուռ և չորս ապլիկ պաւակք. զորս և այնպէս հոգով կը սիրէր, որպէս թէ մէկ հատիկն ըլլային, կամ ուրիշ արտաքին զբաղանք չունենար և դպրութեան չպարապէր. իր մէկ վաղամեռիկ պաւակին հիւանդութեան և մահուան վրայ գրած թուղթերն՝ չքմայրիտ ծնողական և քրիստոնէական սրտի և հոգւոյ թափանցիկ թելադրութիւնք են. և կարդացողն հաւաստար մեծ կը գտնէ թէ անոր որդեսիրութիւնը թէ աստուածսիրութիւնը: Ուրիշ մէկ պաւակն ալ նոյնպէս ծաղիկ հասակի մէջ վախճանած է: Յիշեալ չորս գաւերքը՝ ըստ արժանւոյն աշխուական տուներու հարկացուց. երկուքն օտար տոհմերու, երկուքն ալ իր բնիկ ընդարձակ Պահլաւունի տոհմին պայազատաց: Իսկ մնացեալ երկու որդւոց մէկն, Վասակ, իրեն պէս իշխանութեամբ պայծառացաւ, Անտիոքայ դուքս եղաւ, և Խաչակրաց հօն գալէն քիչ տարի առաջ (1095) վախճանեցաւ. միւսն՝ որ էր կարգաւ երկրորդն՝ Վահրամ, որ իր հօրը անունն ալ առաւ (Գրիգոր), իրմէ վերջը մեր պատմութեան գլխաւոր անձն պիտի ըլլայ. ինչպէս որ կարդն գայ ասոր քեւորգեաց: Գրիգոր Մագիստրոս վախճանած կարծուի յամին 1058, իր կենակիցն յետ 1075 թուականին:

Տարակոյս չկայ որ Գրիգորի որդիքն բուն Հայոց աշխարհին մէջ ծնած են, գեռ Բագրատունեաց թագաւորութեան առեն, և առջինեկներն անոնց տրբունիքը մնած ելած. անշուշտ հայրերնին ալ անոնց պատշաճ վիճակ և պաշտօն կը պատրաստեր. սակայն ինչպէս որ ինքն աւելի ուսմանց և. գիտութեանց հակամէտ էր, որդիքն ալ իր արեանն հետ այս ախորժակին առած պիտի ըլլան. գոնէ Վահրամայ համար բնաւ տարակոյս չկայ. արդէն հայրն ասոր համար գրեր էր Փերա-

կանուխեան մեկնուխիւնը. և իր երկու ազնուա գոյն բերմունքն՝ հոգեսիրուխիւն և դիտուխիւնք՝ այնպէս խորագոյն տպաւորեալ էին 'ի վահրամ, որ թէ և աշխարհի կարգ մտաւ ամուսնուխեամբ, թուի թէ հարկաւորեալ 'ի ծնողացն, այլ ժուժկալուխեամբ կ'ապրէր [1]. և մեծապատիւ իշխանուխիւնն ալ Թողով ուրիշներու՝ աղօթից և ուսմանց տեղուանք կ'առանձնանար, վանքէ վանք, անապատէ անապատ, երկրէ երկիր պտըտելով, երբեմն ծածկուելով և երբեմն յայտնուելով: Գուցէ ակնատես իր պապուն, և անշուշտ ա նոր եղբօր նահատակուխեանց, մանաւոր սէր մ'ունեցաւ քրիստոնէուխեան վկայից, մարտիրոսաց, որոց վարքերն ալ հաւաքեց ինչ և ուր որ գտաւ, և հայերէն չգտածը՝ 'ի գրոց Յունաց և Ասորւոց Թարգմանելով և Թարգմանել տալով և ինքնին սրբագրելով և կոկելով շարադրուխիւնը, քովէն ալ աւելցընելով ինչ որ պատշաճ սեպէր. ասոր համար փոխանակ Մագիստրոս, Հիւպատոս, Պատրիկ և Դուքս կոչուելու՝ մականուանեցաւ Վկայասէր. և կրնայ ալ ըսուիլ թէ յետ Մեծին Սահակայ և Մեսրովբայ եղաւ Երկրորդ Թարգմանիչ և գլուխ երկրորդ Թարգմանչաց և Դպրուխեան Հայոց. կամ թէ ինչպէս որ սովորուխիւն է մեր գրագիտաց մէջ ըսել, մեր Դպրուխեան Արծաթի դարուն Պարապետն էր:

Այս բանիս փափագն և գործը կանուխ սկսած էր. իսկ կերպով մը երկրորդ Լուսաւորիչ մ'ալ ըսուելու՝ անշուշտ ոչ փափագ և ոչ կարծիք ունէր. և շատ զարմանք և ընդդիմուխիւն պատճառեց իրեն, երբ եօթն ամէն (կամ տարին) վեր

1 Թոռնիկ Տարօնոյ և Սամսոյ իշխանն Գր. Վկայասիրի վեհապ կոչուի, որ ըստ նախնեաց կըրնայ կարծեցընել թէ վահրամ զաւակ ալ ունեցած ըլլայ, և աղջիկը տուած 'ի կնուխիւն Թոռնկայ:

Հայոց հափանուած կաթողիկոսութեան աթոռը՝ իրեն ընծայուեցաւ, Չանիւք և աղաչանօք վաս-
րանդի Թադաւորաց Հայոց (երկուց Գագիկաց) և Թագուհեաց, և բոլոր եկեղեցւոյ ուխտին. որք և մեծ աշխատանօք, գանձեր և երկիրներ տալով հակառակող Յունաց կայսերաց՝ վերջապէս յաջողեր էին աղաւօրէն կաթողիկոս դնելու Հայոց ինքնագլուխ գահուն: Կարուց Թագաւորն Գագիկ և իր դշխոյն (կամ դուստրն) Մարիամ, որ այս բանիս առենէն առելի հետամուտքն էին, և ինչուան իրենց Թագաւորական քաղաքն Կարսն ալ ծախեցին, ըստ կարծեաց ոմանց՝ ի պատմչաց մերոց, դուցէ կանխիկ կայսեր խնացուցեր էին իրենց դիտաւորութիւնը՝ Վահրամայ համար, որ իր հօր և եղբարց երախտեաց շատ ծանօթ և սիրելի էր Յունաց. առելի դժար եղաւ համոզել ինքն Վահրամ. այլ վերջապէս յանձն առաւ, տեսնելով այնքան աւագ մարդկան և եպիսկոպոսաց Չանքն և աղաչանքը և հաստատակաց հաւանութիւնը. Թէպէտ զգալով և խղճի նեղութեան դրդում մը, աստուածային կամաց չհակառակելու. վասն զի կ'ըսէ մեր Ճարտասան պատմիչ մը, « զաս յայտնեաց Ս. Հոգին՝ նաւուցանել յաթոռ Ս. Լուսաւորչին Գրիգորի՝ նախնոյն իւրոյ ». զի և « յամենայն դիմաց կարող էր օգնել հօտին Քրիստոսի [1] »:

1 Մատթ. Ուռհայ: —Վահրամ ընտրութեանն առեն հարկ է որ գոնէ չափահաս երիտասարդ ըլլայ, թէ և Մատթ. Ուռհ. կ'ըսէ, « Գոհին մանուկ մի յազգէ Պահլաւունեաց ». յետ յիշելու որ կարգուած էր և առեն մը վերջը հրաժարած կընկէն և իշխանութենէ. 1075 թուէն վերջ ալ դեռ մօրն ողջ ըլլալն յիշուի: Մահուան առենն խոր ծերութեան և ալեւորութեան հասած ըլլալը կը յիշեն պատմիչք, որով ընտրութեանն առեն ալ երիտասարդութենէ վեր կ'երեւի: Հայոց—Լեռ վանքին մէջ արձանա-

Ընկիկ հայրենի աշխարհէն դուրս, փոքր Հայոց մէջ օծուեցաւ Վահրամ յամի 1065, հիմայ մեզի անծանօթ տեղ մը, Տաւրոսի և Անտիտաւրոսի լեռնաձորոց մէջ, ի Ծամնդաւ (Զամանտոս) բերդաքաղաքի, զոր Գագիկ իր կարուց երկրին փոխարէն առեր էր. բայց իր երկար 40ամեայ կաթողիկոսութեան տաեն երբեմն կամաւ և երբեմն ակամայ պանդխտօրէն շրջեցաւ. վասն զի Անիէն ելնելէն վերջը հատատուն կայան մը չունեցաւ Լուսաւորչի աթոռն՝ ինչուան որ դրուեցաւ ի Հռոմկլայ: — Ասյսպէս Ս. Սահակայ մահուընէն 626 տարի վերջը՝ իր պարթևական ցեղէն հայրապետ մը յաջորդեց Լուսաւորչի աթոռոյն, որոյ անունն ալ առաջին անգամ անեղկիւղ կրեց Վահրամ, կոչուելով Գրիգոր Բ, զոր ոչ ոք ի կաթողիկոսաց իրմէ առաջ համարձակեր էր առնուլ. իսկ իրմէ և իր տոհմակիցներէն ետև՝ շատերն ալ:

Ինքնին իր յիշատակարանաց մէջ կը յիշէ Պարթև, Պահլաւունի և Լուսաւորչի ցեղէն ըլլալն, և իր պապուն աթոռը նստիլը, որոյ արդարև մեծ փառք և զարդ եղաւ, և արժանաւոր առաջին դասու Պահլաւունի հայրապետաց: Եւ լիովին կատարեց իր հօրն երբեմն իբրև կտակաւ ատինքն գրածը և խնդրածը, իր հայրական իրաւանց և տուած դասախարակութեան փոխարէն: «Փոխարէն հայցեմ՝ ի քէն՝ զաւանդութիւն մեր ոչ «մոռանալ երբեք, և զխոյթ սիրոյն առ Քրիստոս «Աստուած մեր. և զլոյս Ճրագին նախնւոյն մերոյ «ոչ չիջուցանել, զպարթեւին ասեմ, քոյոյ հա«ւան»: Գրականութեամբ և լեզուագիտու-

գրութիւն մը կայ (յամին 1013), յանուն Գր. Մագիստրոսի և Գրիգոր Վահրամ պատանւոյ. այլ այս մեզի ծանօթ Գր. Մագիստրոսն և Գրիգոր—Վահրամն չեն:

թեամբ ալ թերևս գերազանցեց իրմէ առջի կաթողիկոսները. բայց աւելի մեծ արդիւնքն եղաւ Հայոց եկեղեցին զարդարելով և զարգացընելով. և այս բազմապատիկ կերպով:

Նախ, վերոյիշեալ սիրով վկայից Քրիստոսի՝ թարգմանութեամբ վարուց նոցա յայլևայլ լեզուաց, որով յօրինեց կատարեալ վկայաբանութեանց դիրք մը, կամ Տօնոմոկ մը. վասն զի մասնաւոր անուամբ չի յիշուիր կամ չի գտուիր իր գործն կամ հաւաքումն: Սրբոց վկայից Քրիստոսի և հայրապետաց վարքը և նահատակութիւնը գրել, թարգմանել և հաւաքել, և եկեղեցեաց մէջ կարգալ, մեր քրիստոնէութեան առաջին դարերն ալ կար. Ս. Թարգմանիչք ալ շատ սրբոց վարքեր թարգմանած են. բայց հեղհեղուկ աւելցընելով ամբողջ գործ մը ձևանալն՝ յետ ժամանակաց եղաւ, և զանազան անուամբք: Առաջին հաւաքումն հաւանօրէն կոչեցաւ յունական անուամբ՝ Մարթիրոլոգ, որ կը յիշուի Ս. Շուշանիկայ վարուց մէջ, և բառական թարգմանութեամբ Վկայաբանութիւն կ'ըսուի հայերէն, և այսպէս գրուին 'ի Ճառընտիրս և յայլ գիրս. ասոնց առաջինն հաւաքողն և գիրք մը ձևացընողն յայտնի չէ. այլ այս յայտնի է որ Ս. Սահակ եկեղեցական գրքերը թարգմանելու առեն սահմանեց որ յօտարաց և 'ի վաղուց ծանօթացեալ սուրբք և ոչնք՝ Հռովմայեցւոց ամսոց անուամբ և օրերով դասուին կամ գրուին, անոր համար անունք Հռոմայոդիր ըսուեցան. իսկ ազգային սրբոց և աւելի ծանօթից յիշատակք՝ հին Հայոց ամսոց անուամբ և օրերուն վրայ գրուեցան, վասն որոյ ըսուեցան Հայոդիր: Ը գարուն սկիզբներէն իմաստուն և սրբաբանէր վարդապետն Սողոմոն՝ Մաքենոցաց վանահայրն՝ հաւաքեց ամենայն ոճնից և սրբոց վերաբերեալ ներբողեան և վկայաբանութիւնները 'ի

մէկ գիրք, որ կոչեցաւ Տօնական. ասկէ համառօտած կամ քաղուած գիրքն՝ Տօնականի Զագ կոչուած է. նոյն Տօնականն կոչի ևս Տօնանոամակ, և աւելի յաճախ համառօտութեամբ Տօնամակ: — Ժ. դարուն վերջերը Ատոմ՝ վանահայրն Վարագայ՝ նոր հաւաքած մ'ըրաւ Սրբոց վարուց և դասաւորեց հռոմէական ամսոց օրերով. այս պատճառաւ յոմանց իր անուամբ Ատոմոպիւլ կոչուեցաւ, և յոմանց Հոռոմոպիւլ[1]. ոմանք ալ Տօնացոյց կամ Տօնացուցակ կ'անուանեն Ատոմայ գործը: — Իրեն գրեթէ ժամանակակից անուանի վարդապետ մ'ալ Սամուէլ վանահայր Կամրջաձորոյ՝ հրատարակեց զՏօնապատճառն, որ անուանէն կ'իմացուի ինչ ըլլալն. յետոյ ուրիշ վարդապետք ալ ԺԲ դարուն մէջ՝ շատ բան աւելցուցին 'ի Տօնապատճառս, կամ նոր 'ի նորոյ գրեցին և հաւաքեցին. անոր համար շատ հեղ իրարմէ կը տարբերին այս անուամբ գրեանք. ինչպէս նաև Ընդերցուածոյ մէկնութիւն ըսուած գիրքն, որոց առաջնին հեղինակ է Գրիգոր Արշարունի քորեպիսկոպոս է դարուս վերջերը, Գրիգոր Գանձակեցի[2] ԺԲ դարուն սկիզբը, և այլք:

Արդ մեր Պահլաւունի կաթողիկոսն իրմէ առջինները դրածներէն և դրածներէն հաւաքելով և նորանոր աւելցընելով՝ ուզեց մեծ Տօնական մը կարգել՝ և Տրէգրոյ այսինքն Ձաղոյ գիրքին մէջ անցընել, որ ամեն տօներու կարդացուելիք եկեղեցւոյ մէջ, ինչպէս կը պատուիրէ իր յիշատակարանին մէջ. և կ'իմացընէ ալ՝ որ ձանձրութիւնն կամ ծանրութիւնն ջնջելու համար՝ չափաւոր գրած և գրած է. և ասկէ կրնայ կարծուիլ որ

1 Մխիթ. Այրիվանեցի:
2 Սա յետոյ մեր պատմութեան մէջ պիտի յիշուի, ուրիշ առթով:

այն երկայն երկայն ճառից և վկայաբանութեանց համառօտութիւն մ՚ալ ըրած էր, զոր Յայտարարոյ նախօրինակ պէտք է սեպել: Թէպէտ և, ինչպէս առաջ յիշեցինք, դեռ Գրիգորի Վկայասիրի այնքան երկար տարիներ աշխատած գործոց և գրոց ամբողջ հաւաքումմը չէնք տեսած. իր յիշատակարանն գրուած է Տարեգրոց կամ Ճաշոցի մէջ, զոր ինքն կ՚անուանէ Տօնամակ, և շատ Տօնամակներէ հաւաքած և ըստ Հռոմի ամսոց դասաւորած կ՚ըսէ. այլ այն գրոց մէջ միայն արբոց յիշատակն և պատարագի առեն կարդալու սովրք գրոց ընթերցուածքն կան, և ոչ վկայաբանութիւնք ոչ ճառք. նոյնպէս Տօնամակ կ՚անուանէ այս գործը՝ նաև Կիրակոս վարդապետ իր գործակիցն, որու՝ իբրև կտակաւ յանձնեց Գրիգոր այս գործս աւարտել. ըսել է որ չէր շատանար իր այնչափ տարի հաւաքածովը, և կ՚ուզէր ամենակատարեալ ընել: Կիրակոս կ՚լմացընէ որ Վկայասէրն 46 Ս. Հայրապետաց ածն կարգեր էր, որոց վերայ ինքն յետոյ աւելցուց 30 ալ, և եղաւ 76. իսկ Ս. Վկայից Թիւը չի յիշեր, որ հարկաւ շատ աւելի պիտի ըլլայ. մեր ձեռք հասած վկայաբանութեանց մէջ իբրև 10 կամ 15 հատի նեըքև կը գտնենք Գրիգոր Վկայասիրի յիշատակարան, և կ՚իմանանք որ զանազան վանքերու և քաղաքաց մէջ երկասիրած է: Դարձեալ յայտ է որ ոչ միայն Վկայաբանութիւն կամ Սրբոց վարքեր Թարգմաներ և հաւաքեր է, այլ Թէ՛ աերուձանական և Թէ սրբոց ածնից պատշաճ նեըբողնեը և ճառեր. անոր համար ոմանք իր ըրած հաւաքոմը պարզապես Նեըբողէան կ՚անուանեն. բայց ոմանք ալ իր Թոռին՝ Փոքր Վկայասիրին՝ կ՚ընծայեն զնեըբողեանն: Այս է մեծ Վկայասիրին գլխաւոր գործն մեր գպրութեան և եկեղեցւոյ մէջ: Սակայն ասոր վրայ աւելցընելու է ուրիշ ե-

կեղեցական կարգաց և գրեանց լմնուն։ ինչպէս Մաշտոցի քանի մը կարգ (Ոանլուային)։ Ս. Գրոց Մեկնութիւն գրքեր, զոր օրինակ Յովհ. Ոսկիբերանի Յովհ. Աւետարանին մեկնութիւնը, զոր յամին 1076'ի Կ. Պոլիս եղած առեն Թարգմանել տուաւ քաջ յունագէտ Կիրակոսի մը, և յետոյ միւս Կիրակոս վարդապետին սրբագրել տուաւ և կոկել հայերէն լեզուն, Սեաւ լերանց վանքի մը մէջ։

Երկրորդ թէ գրաւոր և թէ հոգևոր մեծ գործն եղած է՝ կրօնաւորական կարգեր և վարքեր Թարգմանել և մտցընել 'ի Հայս, կամ նորոգել զվանական և միանձնական կեանս, որոյ այնչափ սիրող էր։ և որոյ համար յանձն առաւ գրեթէ հրաժարիլ 'ի կաթողիկոսութենէ, յամի 1069–70 և երթալ 'ի Պաղեստին, պարտիլ հին ճգնաւորաց միայնարանները, և հաւաքել անոնց վարքը։ որ թէ և իրմէ առաջ ալ անծանօթ չէր 'ի Հայս, այլ ինքն երկրորդ հաւաքող կամ Թարգմանող եղած է 'ի ձեռն քեռորդւոյն՝ Գրիգորի, զոր Եգիպտոսի արքեպիսկոպոս ձեռնադրեց։ և սա աւարտած կարծուի Թարգմանութիւնը յետ մահուան քեռւոյն, յամի 1110, ըստ Թուականի յիշատակարանին։ այլ հաւանական է ՇԾԹ թիւը կարդալ ՇԺԹ, և ըսել թէ ինքն Վկայասէրն գլխաւորեց կամ սկսաւ այդ գործը յամին 1070, յորում առաջին անգամ այն կողմերը գացած կը ցուցընէ ինք Ուռհայեցոյն պատմութիւնն։ որ և կը վկայէ, թէ «պայծառացոյց զկարգս կրօնաւորութեանն»։

Իր մեծ և լուսաւորչանման մէկ գործն ալ եղաւ՝ խոհեմաբար և ընտանեբար վարմունքն ընդ օտար եկեղեցեաց։ օտարութիւնը՝ ըստ ծխոց և լեզուի միայն իմանալով, իսկ ըստ կրօնից վարդապետութեան՝ հաւանելով և գնջանելով։ և ոչ միայն Յունաց հետ կըրցաւ խաղաղութեամբ ան-

ցընել, քանի մ'անգամ անոնց մայրաքաղաքն ալ երթալով, նաև 'ի պաշտպանութիւն ազգայնոց, քաց 'ի հոգոյ թարգմանութեան գրոց, այլ և յետ իր նախահաւուն՝ առաջինն կը յիշուի՝ Լատինաց մեծ եկեղեցւոյն հետ յայտնապէս հաղորդակցելն, և անձամբ իսկ 'ի Հռոմ երթալն, յամի իբր 1074, իր անուանակից և մեծանշան Գրիգոր Է Պապի առեն: Հարկաւ մեր եկեղեցական պատմութեան մէջ մեծ նշանակութիւն մը պէտք է ունենալ վկայասիրին այս գործը, թէ և անոր բուն շարժառիթն քաջայայտ ըլլայ: Արդեօք այն մեծ կրօնից և գիտութեանց աղբիւրէն ալ նոր և վաւերական գրքեր պիտի որոնէր, ինչպէս երկու դար և կէս առաջ՝ Սիւնեաց իմաստասէրն և քերդողն Սահակ Պարթեւ, և մեր հին քերդողահայրն Մովսէս Խորենացի՝ գաղակցօքն. թէ այն ատենուընական քաղաքին սրբութեանց ուխտաւոր գնաց. կամ թէ ինչուան Իտալիոյ կենդրոնը գտուած ազգայնոց ալ այցելութիւն եղաւ. թէ մանաւանդ եկեղեցւոյ վեհապոյն հովուապետին հետ խորհրդակցելիք ունէր, ըլլայ Յունաց եկեղեցւոյ պահանջմանց համար, ըլլայ ուրիշ բան: Դժբաղդաբար ոչ իր վարուց և գործոց մանրամասնաբար տեղեկութիւնն մեզի հասած է, թէ և գրուած ըլլալն հաւաստի է, և ոչ Լատին պատմիչք և յիշատակք ժամանակին կան. սակայն իր Հայաստանեայց աթոռոյն և Հռոմայ մեծ գահուն յարաբերութեան անժխտելի վկայ մնան Թուղթք Գրիգորի Է արքեպիսկոպոսին: Սա Թղթոց մէկուն մէջ՝ գրուած նոյն տարւոյն վերջը (7 դեկ. 1074) առ կայսրն Ենրիկոս Գ, կ'ըսէ որ Հայք և ուրիշ արևելեայք՝ իրենց կրօնական ինդրոց որոշումը կը սպասեն յաթոռոյ գլխաւոր Առաքելոյն: Ուրիշ Թուղթ մ'ալ ուղղած է յամին 1080 (6 յունիսի) առ Գրիգոր Հայոց արքեպիսկոպոս Սիւննացւոյ.

այս քաղաքս Փռիւգիոյ մէջ է, և այն կողմերն ալ Հայոց եպիսկոպոս ըլլալ՝ մեզ հաւանական չէ. րևիր. այլ կ'ուզեմք կարծել թէ Սիւննադա՝ Ծամընդան ըլլայ, ուր նստէր երբեմն Վկայասէրն. մանաւանդ որ գրուածն ուղղեալ է առ գլուխ եպիսկոպոսաց Հայոց. որ Յովհաննէս անուամբ քահանայ մը նուիրակ խաւրած էր առ Պապն՝ ծանուցանելով, որ մոլորեալ Մակար մը Իտալիա փախեր և Հայոց եկեղեցին կը զրպարտէր: Պապն խոստացաւ քննել տալ, և գրեց առ արքեպիսկոպոսն Պենեւենդի, որոյ վիճակին մէջ պահուըտեր էր Մակար, քննել, դատել, և թէ պէտք ըլլայ՝ հալածել. մեր Գրիգորին ալ կը յանձնէ իր եկեղեցւոյն քանի մը խնդրոց հոգ տանիլ, ինչպէս Դէոսկորոսի վարդապետութեանը, և պատարագի բաժակին վրայօք, մոխիկ ջրնելով Յունաց ըսածին: Ահկէ առաջ կամ վերջը, ուրիշ թուղթեր ալ գրածնին յայտնի չէ. և այս առաջին ճնացեալ թուղթն է մեր եկեղեցւոյ մէջ՝ի Հռովմայ քահանայապետաց եկած առ Հայս. և անկէ ետև ալ դարձեալ դար մը միջոց եղած թղթակցութեանց ճնացորդ չկայ կամ դեռ չէ յայտնուած, ինչուան Լուսիոսի Բ՝ի թուղթն առ Գրիգոր Տղայ (1182). իսկ ասկէ ետև հարիւրաւորք գտուին և պահուին: Թուի թէ այս առթիւ ժողով մը գումարած է Վկայասէրն, (ուր տեղ ըլլալն անյայտ), և մանաւորապէս ծննից կարգադրութիւնը սահմանած. հաւանօրէն Յունաց և Լատինաց խնդիրներն ալ առաջ բերած: Այսչափս կը գուշակենք մեր ժԴ դարու վերջերը գրող հետաքնին հեղինակէ մը, փափագելով աւելին գտնել այլուստ:

Գր. Վկայասէր նոր ծանօթութիւն ալ ունեցաւ Լատինաց և Փռանկաց հետ՝ իր վերջին տարիները, երբ Առաջին Խաչակրաց նշանաւոր գործն կատարեցաւ, առմամբ Երուսաղէմի. հոն էր այն

սաեն ալ մեր ծերունի հայրապետն. և ոչ սակաւ վախ ու վտանգ կրեց յայլազգեաց՝ քաղքին պաշարման առեն. բայց անոր հետ աղաւեալով՝ ներկայ եղաւ և տեսաւ այն քրիստոնէից ուրախութեան մեծ օրը. և անտարակոյս հանդիսակից եղաւ եկեղեցական դասու գլխաւորաց և կոտորիրէից և պալատինաց հետ. և կըրցաւ ըսել ընդ Սիմէոնի՝ «Տեսին աչք իմ զփրկութիւն քո, Տէր»: Վերջին ազատ բարեները տալով սուրբ և նորէն սրբեալ քաղաքին, ուր շատ անգամ այցելութեան եկեր էր, վերջին գրաւոր աւարներով, (որոց մեկին կըրնայ ըլլալ Ս. Յակովբայ ժամատեար ըսուած՝ Պատարագի և ժամակարգութեան գիրքն ալ, կամ հին Թարգմանչաց գործը չգտնելով, կամ անոնցմէ մնացած մասը թարգմանելով.) Թողլով Յորդանան՝ եկաւ Եփրատայ հեռաւոր հովիտներուն մէջ ծածկուելու, Մարաշայ և Սեաւ Լերանց վանորէից մէջ. ինչպէս կենայ վերջին տարիներն ալ աշխատելով իր Տօնամատին վրայ. որոյ յիշատակներէն յայտնուի որ յամին 1100 Թարգմաներ կամ Թարգմանել տուեր է շատ «Ներբողական և վկայական» ճառեր. յամին 1101–2, Սկիւթեացւոյ և Գր. Աստուածաբանի ընդարձակ վարքերը: Արդ կը մնար գինքն ալ այնպիսի հայրապետաց կարգը յուշարկել տալ, և երախտագիտաց՝ իր յիշատակն ալ անմահացընել այնպիսի կերպով: — Բայց մեզի հարկ է պահ մը Թողլով իր վարդապետութիւնն և սրբութիւնը՝ աչք մը տալ իր կաթողիկոսութեան արտաքին վարչութեանը կամ քաղաքական կենաց, յորմէ լոյս ծագէ իր յաջորդաց քաղաքավարութեան վրայ ալ, որ է բուն նպատակ մեր այս գրուածիս:

Վահրամ իր գքսութեան ոսկի գօտին արձակելու և Թողուս առեն՝ սիրական ոգին ալ Թողած կ'ելլէ. հօրը գրասիրութիւնը և հոգեսիրութիւ-

նը ժառանգեր էր և զարգացուց, այլ ոչ և նուա-
ճող կամ ահարկու՝ կերպը, ինչպէս ուներ Պե-
տրոս կաթողիկոս և անոր ցեղին նախաակիզբն
(Անանիա Մոկացի)։ Գրիգոր–Վահրամ՚ի ման-
կութենէ սիրող միանձնական կենաց, անոր հե-
ղութեամբն տոգորուած էր։ Ձեռքն՝ թերևս խիստ
առ ինքն, շատ կակուղ էր առ այլս՝ պետական
սանձ մը բռնելու և կառավարելու Հայոց, մանա-
ւանդ այնպիսի ժամանակի քաղաքական հանգա-
մանաց մէջ։ զուտ ոսկին պէտք էր քիչ մ՚ալ եր-
կաթախառն ըլլալ, եթէ ներելի է զայս ըսել։ Կա-
թողիկոսական աթոռն չփոխեց Վահրամայ բնու-
թիւնը և ախորժակը։ և գուցէ իրաւամբք ալ կը
հրաժարէր այն առաքինանէն։ Թէ և կարելի չանքն
և զգուշութիւնն ալ ըրաւ իր պաշտամանց մէջ։
Եթէ մէկ կողմէն իր բնաւորութիւնն, միւս կողմէ
ալ ազգային վիճակն կը գժարացընէր բացարձակ
կառավարութիւն մը։ վերցուեր էր այն ազգային
քաղաքական միապետութիւնը՝ զոր իր մանկութեան
առեն տեսեր էր ի Մեծ Հայս։ ոսկից տարտգը-
րեալ ալքայազունք և իշխանազունք՝ Փ. Հայոց
մէջ անառարգ և չինչևլափառ կեանք մը վարէին։ ի-
րար՚ի սկզբան դեռ հօս ալ Թագաւորական անուն-
ներ և նշաններ ուներին, այլ երթալով կը նուա-
զէին, և չկարցան աւանդել զայն իրենց որդւոց։
ոչ Գագիկն Շահնշահ Անեցի, ոչ Գագիկ Թագա-
ւորն Կարսեցի, և ոչ Վասպուրականի Սենեքե-
րիմ Թագաւորի որդիքն Աբուսահլ և Աբուսահլ։ ա-
սոնք ամենքն ալ մէկմէկ Թագաւորի պէս ժողովե-
ցան զինքն ընտրելու և օծելու, այլ իրարմէ ան-
կախ Թագակիրք, և ամենքն ալ Յունաց իշխանու-
թեան տակ։ ամենքն ալ քիչ շատ փոյլփըլեցան
Վահրամայ աչքին տակ և նոյնպէս իր աչաց տակ
մէկիկ մէկիկ մարեցան։ Սեբաստիայէ և Կեսարիոյ
սկսեալ մինչև՚ի Կիւլիկեան Մխէրկրականին ծովա-

փունքը՝ ընդ հարաւ, իսկ ընդ արեւելս մինչև յԵփրատ, սկսեալ՝ ի Խարբերդէ մինչև յԱնտիոք, և նաև մինչև՝ ի Տարօն և Սասունք, այս ընդարձակ երկիրը, որ Յունաց, Հայոց և Ասորւոց, և հին Արաբացոց ուխտերէկ Թուրքաց խառնարան մ՚էր, այս ԺԱ դարուն մէջ ցրուած էին շատ իշխանք և բռնակալք Հայոց. որոց՝ միացեալ ոյժն կըրնար բաւական մեծ և զօրաւոր տէրութիւն մը ձեւացընել. վասն զի դեռ ունէին ձիաւոր զօրք և բազմաթիւ հպատակներ. այլ առանձնակ տեարք ըլլալով՝ չկարցան երկար ատեն իրենց իշխանութիւնը պահել. Յունաց, Լատինաց և Թուրքաց իշխանութեան տակ ընկան հետզհետէ: Միայն մէկ իշխանութիւն մը Տօրոսի ժայռերուն մէջ՝ իբր արծուի բոյն մը կախուած՝ կըրցաւ դիմանալ, զօրանալ և վերջապէս յայտնի տիրապետութեան և թագաւորութեան ալ հասնիլ. այն է Ռուբինեանց հարստութիւնն. սակայն մեր վահրամայ օրերը՝ դեռ բունին մէջ կըրնար ըսուիլ. և Խաչակրաց գալըստեան ատեն՝ անոնց յարուցելով Կոստանդին՝ որդին Ռուբինի, անոնց մէ պատիւ առաւ և սկսաւ երևնալ իբրև պատուաւոր իշխան և սեբաստոս մը. բայց դեռ հարիւր տարի ալ պէտք եղաւ իր պայազատաց՝ կառուցելու Յունաց և շրջակայ ազգաց և բռնաւորացը հետ՝ մինչև որ աշխարհք ճանչցաւ Հայ Լեռնացոց տէրութիւնը և զԼևոն Թագաւոր:

Արդ մեր երկրորդ Պահլաւունի կաթողիկոսաց պարագլուխն այսպիսի անստոյգ և բռնաբարեալ ժամանակ մը՝ բնականապէս ստանձնեալ վիճակի մը մէջ էր. զոր քիչ մ՚ալ ինքն իր յատուկ բնաւորութեամբն աւելցուց, երբեմն հարկաւ և երբեմն կամաւ թափառելով այն իշխանաց նստած տեղմանները, և անոնցմէ շատ հեռու տեղմանները: Առաջ Հայոց կաթողիկոսն հոն գտուէր՝ ուր որ էր աթոռն, իսկ հիմայ աթոռն հոն գտուէր՝ ուր

էր կաթողիկոսն. յետ վերնալուն յԱնոյ՝ վահ-
րամայ նախորդքն նստան, մանաւանդ թէ տեղա-
փոխեցան յԱրծն Կարնոյ, ՚ի Ս. Նշան Սեբաստիոյ
(ուր Պետրոս), ՚ի Տարընպա և ՚ի Թաւբլոս, ուր
արգելուեցաւ Խաչիկ Բ. իսկ ինքն Գր. Վկայա-
սէր՝ նախ ՚ի Ծամընպաս նստաւ, կարսեցի Գագիկայ
երկիրը, յետոյ կամաւ յԵգիպտոս, ՚ի Պաղե-
ստին, ՚ի Կ. Պօլիս, շատ և մէջ ընդ մէջ տարիներ
պանդխտանալէն զատ, երբեմն նստաւ Սանոյ
կողմերը, երբեմն Անի գնաց [1], երբեմն Սեաւ լե-
րանց վանից մէջ: Իր ընտրուեցեալներէն չորս հինգ
տարի չանցած՝ յօժարեցաւ նորէն իր առջի միանձ-
նական կեանքը վարել, հաւանեցընելով իրեն սըր-
տակից և գործակից անուանի Գէորգ Լօռեցի վար-
դապետը, որ տարիքով իրմէ ալ մեծ էր և իրեն
Դպրապետ կարգեր էր. երբ իշխանք և եպիսկո-
պոսունք դէմ կեցան, պատճառելով որ չէր վայ-
լեր կաթողիկոսի մը իր աթոռէն հեռանալ այս-
պիսի պատճառաւ, ինքն դիտածէն ետ չկենալով՝
ընտրեցէք, ըսաւ, ձեզի ուրիշ կաթողիկոս մը:
Իշխանք և առաջնորդք գրեթէ իրենք իրենց հնար-
քէն բռնուելով՝ ամխաուեցան, և առաջարկեցին
իրեն փոխանորդ մը: Այլ ինչ զարմանք և գրեթէ
սոսկումն եղաւ բարեսիրտ Վկայասիրին՝ երբ տե-
սաւ այն ընծայեալը, որ իր մեկհատիկ ուղե-
կիցն և ձգնակիցն պիտի ըլլար. նոյն ինքն Գէորգ
Վ. Լօռեցի: Ահեկայ ալ ընտիր անձն, այլ աւելի
բարեմիտ կամ պարզամիտ գտուեցաւ՝ իշխանաց և
եպիսկոպոսաց գաղտ յորդորանքին հետևելու,
Թողլով իր հոգևոր սիրոյ խոստումը, իբրև թէ հա-
մարակաց օգուտը կը վերադասէր քան մեկ անձի

1 Չիմարսեղ իր ազգականը փոխանորդ և յաջորդ դնե-
լու համար. բայց ոմանք՝ միայն հրաման խաւրած է հօն
կ'ըսեն որ Բարսեղ ձեռնադրուի:

մը: Տրամեցաւ Վկայասէրն. այլ ինքն աւելի խօսքով պարտաւորեալ՝ կամայ ակամայ ձեռնադրեց ըզ-Գէորգ, անոր Թողուց զաթոռը, և ուրիշ ընկերօք գնաց իր ուխտերուն և Թարգմանուվեց, (1069–70): Ֆանի մը տարիէ դառնալով իր տեղը իբրև իրաւատէր կաթողիկոս՝ աթոռը պահանջեց, եբեակ ձգեց զԳէորգ, որ սրտակոտոր քաշուեցաւ 'ի Տարսն (1072) և հօն վախճանեցաւ: Բայց պրեթէ նոյն ժամանակը ուրիշ նոր կաթողիկոս մը դնելու հաւանեցաւ կամ ստիպեցաւ, տարօրինակ պատճառէ կամ պատճառողէ:

Ան տեսնելը Հայ, Յոյն և Թուրք իշխանաց մէջ՝ այլանդակ իշխող մ'ալ կար. ազգաւ Հայ, դաւանութեամբ երբեմն յոյն, յետոյ մալխման, ամենէն վերջն՝ անյայտ. յանգուգն և խարդախ, բռնակալ քան տէր. զանազան հնարքներով շատ քաղաքաց և գաւառաց տիրեց, 'ի Խարբերդէ և Մարաշայ մինչև յԱնտիոք և յՈւռհա, թէ և ոչ ամենուն մէկ տեսն, և ոչ մէկն ալ մինչև ետքը կըրնալով պահել: Ան նորանշան մարդս ըստ դաւանութեանն ալ աւելի յոյն անուամբ Փիլարետ կամ Փիլարտոս կոչի, ծանօթ և Հայոց և Յունաց և Լատինաց և Թուրքաց, յիշեալ ամենուն պատմութեան և գործոց մէջ ալ, ամենէն ալ անարդուած: — Սակայն իշխանութեանն տեսն՝ հարկաւ տհարիւր և հնազանդեցուցիչ էր. շատերը նուաճելով՝ ուզեց Տարօնոյ և Սասնոյ կոմսերը տիրող Թոռնիկ իշխանն ալ նուաճել, որ և Վկայասիրեն փեսայն էր [1]. և յարմարագոյն միջոց սե-

1 Թոռնիկ Գ. Վկայասիրի փեսայ ըլլալու համար՝ կամ անոր քոյրը առած պիտի ըլլայ, կամ դուստրը. Վկայասիրեն ամուսնացեալ ըլլալը կը յիշուի, այլ զաւակ ունենալն ոչ. իր հօր Մագիստրոսի ալ այլեւայլ գաւառքն յիշուին, այլ ոչ իբրև Տարսն Թոռնկայ. տուգութեան կարօտ և արժանի է այս խնամութիւնս, ինչպէս վերն ալ յիշեցինք:

պեց զնոյն ինքն կաթողիկոսը զրկել առ նա ՚ի յորդոր և հաւանութիւն (1073)։ Թոռնիկ՝ քաջ միանգամայն և բարեպաշտ իշխան էր. զարմացաւ փիլարեայ լըբուրեանը, և արհամարհեց. և երբ կ՚ըսէին իրեն թէ փիլարետ պատերազմաւ կու գայ վրադ 20,000 զօրօք, Եա 1000 քրիստոսասէր ձիաւոր ունիմ, ըսաւ, որոնք բաւական են փիլարետայ բանակին դէմ։ Գործով ալ ցըցուց քաջութիւնը։ Սակայն Վկայասիրի դեսպանութիւնն էյաջողեցավ՝ փիլարետի առելի եղաւ, և չգնաց առնոր քով՝ որչափ ալ կանչէց. իսկ երբ սպառնացաւ նա ուրիշ կաթողիկոս դնել[1], դարձեալ հաւանեցաւ և առաջարկեց որ դնէ զԱարգիս՝ քեռորդի Պետրոսի Գետադարձի, և ասոր քոյն ու գաւազանը՝ որ իր քոյրն էր, զրկեց առ նա։ Սարգիս ալ հաստատեց աթոռը ՚ի Հռոմի Մարաշայ մօտերը, փիլարետայ իշխանութեան տակ. որ նաև յաջորդ ունեցաւ յետ մահուանը՝ զԹէոդորոս Ալախոսիկ մեծանուն երաժիշտ վարդապետը։

Վկայասէր սրտանց չհաւանելով ըրածին և ելլածին, և գուշակելով ալ աւելի անպատշաճ գործեր յապագայ, իր հօրքրոջ թոռը՝ Բարսեղ՝ եպիսկոպոս ձեռնադրեց Անոյ (1074), որ մեծ նշանակութիւն մ՚ունէր՝ Հայոց մայրաքաղաքն ըլլալով, և իբրև իրեն փոխանորդ թողուց։ Շատ տարիներ ալ անցած (1081) հաւանեցաւ որ նա ալ այն կողմերու կաթողիկոս անուանի, ապագայ յու-

1 Կաթողիկոս հաստատելը թագաւորաց իրաւունք էր. փիլարետ բռնաւոր՝ իրեն անփականեր էր այս իշխանութիւնս ալ. և ոչ միայն Հայոց՝ այլ և Ասորւոց կաթողիկոսներ հաստատեց, ինչպէս Աբտոն ըսուած մէկը, անկէ կաշառք առնելով. յետոյ զայն բռնի ձեռնադրող եպիսկոպոսք ալ կաշառքով հրաման առին ուրիշ կաթողիկոս մը ձեռնադրելու (1075), և այսպէս իրենք ալ մէկ տաեն չորս եպիսկոպոսապետ ունեցան։ (Ասող. Բ. 356—7)։

ատվ իրեն յաջորդելու: Բարսեղ գնաց 'ի Հաղբատ ու հօն օծեցաւ կաթողիկոս՝ի կաթողիկոսէն Աղուանից, ներկայութեամբ մնացեալ թագաւորազանց Հայոց: Քանի մը տարի ետև Վկայասիրի նոր պանդխտութենանց առեն՝ ինքնագլուխ իշխանք և եպիսկոպոսունք ոմանք ուզեցին նոր կաթողիկոս մ'ալ դնել, և հրաւիրեցին Վանայ երկրին եպիսկոպոսներէն. որոյմէ Վարագայ վանահայրն Պօղոս յանձն առաւ, եկաւ, ձեռնադրեցաւ կաթողիկոս, և աթոռը դրաւ 'ի Մարաշ. բայց քանի մ'ամսէ ետև զղջալով ըրածին՝ դարձաւ 'ի տեղը: Այս չփոթութիւնները տեսնելով Բարսեղ, միանգամայն և իր հայրապետը Վկայասիրին տկարութիւնը՝ գնաց 'ի Պարսկաստան առ Մէլիքշահ Թուղրքաց սիեզերակալ սուլտանն, և մեծ պատուով և հրովարտակաւ դարձաւ. եկաւ 'ի Փոքր Հայս (1090), մերժեց զԹէոդորոս Ալախօսկին, և հաստատելով Վկայասիրի իշխանութիւնը և իրեն փոխանորդութիւնը, յետ այցելութեան գլխաւոր քաղաքաց՝ դարձաւ իր աթոռը՝ յԱնի (1092): Ահա այս 20ամեայ շփոթ ժամանակն է (1070–90) յորում պատմիչք մեր միանգամայն 4 և ինչուան 6 կաթողիկոս կը համրեն, մէկ տեղ համրելով Աղթամարայ արքեպիսկոպոսն ալ. որք առանձինն եպիսկոպոս կ'օծէին և միւսն կ'օրհնէին:

Հիմայ Վկայասէրն վերջին անգամ երուսաղէմն Թախանձանօք հրաւիրուելով՝ յիշխանաց Հայոց, մանաւանդ 'ի Գող Վասիլ ըսուած Հայոց մեծ և բարեպաշտ իշխանէն, որ կը նստէր 'ի Քեսուն քաղաքի, Մարաշայ և Սեաւ լերանց միջոց, գնաց նստաւ այս տեղն Աբեղի և Կարմիր Վանայ մէջ (1101). ուր և վախճանեցաւ յետ այսպիսի 40ամեայ հայրապետութեան (1105) [1]: Սակայն

1 Վախճանած տարին ըստ ոմանց էր 1106. իսկ օրն Յունիս 10. ըստ Մատթ. Ուռհայեցի կ'ըսէ. « Ի տրէ

ինչպէս իր եռանդն և վկայասիրութիւնն չէր պակասած ինչուան վերջը, այսպէս մտաց կամ հոգւոյն սրատեսութիւնն ալ աւելի ևս լուսաւորեալ կ'երևի. իմանալով որ մօտեցեր է ժամանակն հանգուցեալ հայրապետաց կարգը գասուելոց, կանչել տուաւ զիմոխանօրդը Բարսեղ՝ յԱնիէ, և պատուիրեց որ նատի Շուղղի վանքերը, և երբ յետին հրաւէր մը հասնի՝ փութայ գալու իր վերջի կտակն ընդունելու: Քիչ աւելնէ հասաւ հրաւէրն. փութացաւ Բարսեղ հանգուցանելու ա. լևորեալ հայրապետը, և առաքացեալ հասկը շահմարանելու կարմիր վանաց եկեղեցւոյն մէջ, ուստից փոխադրեցաւ'ի Ծովք, և անկից'ի Հռոմկլայ:

Ի՞նչ էին Գր. Վկայասիրի կտակած աւանդները: — Երկու բան մեզի յայտնի է. մէկ մը նախայիշեալ Տօնամակին լուսմը, զոր յանձնեց Կիւրակոս վարդապետի, և նա կատարեց: Երկրորդն աւելի մեծ և թանկագին. չուխտակ ակունք կամ լուսածին մարգարիտք, զոր Քրիստոսի հարսին կ'ուզէր ընծայել. երկու եղբարք, գեռաբուսիկ զաւակք իր քեռորդւոյ՝ Ապիրատ իշխանին. մէկն Գրիգորիս, հազիւ 10 ամեայ, միւսն Նէրսէս իբրև քառամեայ: Ոչ այնքան արեան ժառանգութեան չանքով որքան աստուածային նախատեսութեամբ գուշակեց ներանձնացեալ ծերունի հայրապետն՝ իր Թոռանց ապագայն և գերազանցութիւնը. գրեթէ մարգարէաբար կը տեսնէր կամ գիտէր, կամ գուցէ իրեն եղած էր այն հրեշտակային յայտնութիւնն, թէ Ներսէս՝ Շնորհալի պիտի ըլլայ. գուցէ և ինքնին կանխեալ այնպէս անուանէր զկայ-

« ամիս, յառաջին շաբաթին ամռան աղուհացիցն, յաւուր « շաբաթու ». որ կ'ըլլայ է օր Հոդեգալստեան. իսկ Վար« դան Պատմիչ Երեմիայ մարգարէի ածնին շաբաթ օրը կ'ըսէ, որ հիմակու կարգով կ'ըլլայ օգոստ. 26:

տառ երախայն, և անտարակոյս ըլլալով անոր և երեց եղբօր՝ Հոգւոյն սրբոյ շնորհաց օծեան ըլլալն, զոր յայտնէր և իրենց շարժմունքն և բնաւորութիւնն և հասակէն վեր ցուցած զգաստութիւնն և հանճարն, անդարձ կասկի պէս պատուիրեց Բարսղի, որ սրբութեան դադարներուն մէջ անուշանէ այն երկու տատրակները, ինչպէս որ ինքնին զանոնք ծնողացմէ կորզելով՝ իր ծնկաց վրայ կը մեծցնէր, և յետ իրեն՝ ինքն ալ կասկէ և յաջորդեցնէ իր և իրենց նախնի Լուսաւորչի աթոռոյն: — Անշուշտ եթէ իր երկար և անհատատ ժամանակի կաթողիկոսութեան աւեն թերութիւն ունեցեր էր, ասկէ լաւ աւանդով չէր կրնար ընուլ զայն: Այս յուսով և սրտի հանդիստութեամբ վախճանեցաւ Գրիգոր Բ., թողլով մեր ազգին և եկեղեցւոյ մէջ անանկ մեծանուն և պայծառ լոյս մը, որ խաւար կ'աղօտացընէ իր աւերն անուանեալ օտարաթոռ կաթողիկոսները, և միակ օրինաւոր հայրապետ կը ճանչցուի, յաջորդ Խաչկայ Բի և նախորդ Բարսղի, և երկրորդ նահապետ Պահլաւունի հայրապետաց մերոց:

## Գ.

*Ապիրատ և որդիքն. — Ներսեհի Ծևռևդ և Սևռևդ. — Վաևորայք Սևաւ Լերին. — Ստեփաևոս Կաթիր—Վաևևցի Գիտևական վդ. — Բաբևդ Կաթողիկոս:*

Վկայասիրին քեռորդին Ապիրատ, իր առհմական իշխանաց նման տեղէ տեղ փոխադրելով իշխանութեամբ, Մարաշու կողմերէ Ծով կոչուած

ամուր բերդի մը մէջ հաստատեր էր իր բնակութիւնը. Թուրքաց զօրութեան և Յունաց ակա-
նատեսներուն էր. ամեն մանր իշխան՝ իրեն ա-
մուր տեղ մը կը փնտռէր. Ապիրատ աւելի ամ-
րացուց այս տեղս, պէտք եղած չէնքերը և վայելուչ
եկեղեցի մ՚ալ շինելով, որ յետոյ իր որդւոց հայ-
րապետական աթոռ պիտի ըլլար: Հօն՝ ի լոյս ընծայեցան Գրիգորիս (1096) և Ներսէս. եաքինա՝
յամի 1102, ի սկիզբն Թ դարամտին Լուսաւո-
րութեան ազգիս. այսինքն ամբողջ յետ 800 տա-
րի անցնելու այն տարիէն՝ (302) յորում առաջին
Պահլաւունի հայրապետեան եղաւ Լուսաւորիչ Հա-
յոց, և իբրև ութ դար վերջը նոյն տարեթուին
պարգևեցաւ Շնորհալին Հայոց: Լուսաւորչի հա-
մար պատմական աւանդութիւնն կ՚ըսէ, թէ Ս.
Թադէոսի հանգստարանին քով Արտաշատ գտաւ
յղացեալ ըլլայ. Շնորհալւոյ համար ալ՝ եթէ այս
անունս արդարև ի հրեշտակէ նախընծայեալ է,
կըրնայ ըսուիլ հրաշախառն սկիզբ մ՚ունեցած. և
մի յայն մանրակենցաղ և աստուածընկիր ան-
ձանց՝ որք գերազանցօրէն կ՚ըսուին յեկեղեցւոջ՝
յոտվայնէ ընթերաց. որոց սրբութիւնն և չնորհքն՝
կենաց հետ սկսած է, և ուրիշ պակսութիւն կամ
արատ մը չեն ցուցած, բայց մահկանացու ըլ-
լալն, եթէ այս աւելի պարծանք մը չէ այնպէս
սեաց, որք մարմին ունենալով անմարմնապէս կ՚ա-
պրին: Յիրաւի ի մէջ ընտրելոց և սրբոց ալ սա-
կաւաթիւ են այսպիսիք. չեմք տարակուսիր որ
մի է յայնցանէ և մերս Ներսէս, որչափ որ վերջն
վկայութեամբ ժամանակակից և մերձաւորաց, գա-
րական աւանդութիւն և իր թողած գործքն կը
նշանակեն մեզի. մի յայն անձանց՝ զոր նախա-
նամութիւնն գարէ գար կը խաւրէ յաշխարհ իր
տանը մէջ մեծ գործ մը կատարելու, բազմաց
փրկութեան պատճառ ըլլալու, և անանց յի-

չատակ և օգուտ Թողլու յատպագին, յաղգ և յեկեղեցի. — մի այն կարմիր և պայծառ հոգիներէն՝ որոց լոյսն և ջերմուԹիւնն գրեԹէ անհրաժեշտ կ'ազդէ մերձակայից, և կը տարածուի 'ի հեռաւոր ժամանակս. — մի այն կրակոտ միանգամայն և կակուղ սրտերէն՝ որք առատաձայնի սիրոյ յարմարագոյն ընդունարան մ'ըլլալով՝ յարմարապէս ալ զայն կը ծաւալեն ուրիշներու. — այնպիսի հոգիներ՝ որ առանձնական իմն հաղորդիչ և յեղափոխիչ կինք ունին և որոշուին նաև 'ի մէջ սրբոց և գովելեաց:

Ս. Ներսէս յաւազանէ ուրիշ անուն մ'ունէր առած, կ'ըսուի, բայց ոչ ոք յիշեր է զայն. այնքան Շնորհալի կոչումն ամեն անուան տեղ բաւական սեպուած է. իսկ Ներսէս անունն քահանայ ձեռնադրուԹեան առեն դրած է իրեն, կ'ըսեն, իր կաԹողիկոս եղբայրն Գրիգորիս, 'ի յիշատակ Մեծին Ներսիսի ՊարԹևի (որուն հետ ալ զարմանագեղ նմանուԹիւն ունեցաւ քահանայուԹեան ժամանակին Թուականներովը [1]): Հազիւ կաԹէ կատարած՝ Ներսէս իր երիցագոյն եղբօր՝ Գրիգորիսի հետ, Ծովուց դղեակէն տարուեցաւ իբրև բռնէ հանած ղոյզ ձագուց՝ առաջին իւրեանց Մեծ Վկայասէրն, որ այն առեն Գող Վասլի սահմանաց մէջ կը բնակէր. Թերևս պատերազմի վախ կար տղայոց ծննդեան առեղը, ինչպէս որ յիրաւի քանի մը տարի վերջ ալ այլ ազգիք յարձակեցան հօն, հայրերնին վռընտեց զանոնք, այլ իրենց նախնի Գրիգ. Մագիստրոսի հօր՝ Վասակայ պէս՝ պատերազմին եռև գարա-

1 Մեծն Ներսէս նստաւ կաԹողիկոս յամի 365, + 'ի 373: Շնորհալին նստաւ յամի 1166, + 1173. երկուքն ալ նոյն տարեԹուի. հետևաբար երկուքն ալ միայն իրրև ութ տարի ամուսնակալեցին:

նակալ Թէնամուց մը ձեռքով զարնուելով՝ մեռաւ (յամի 1111)։ Նոյն առեներն վախճաներ էր Գոզ Վասիլ մեծ իշխանն ալ, առանձնականն Վկայասիրին և անոր Թոռնեկաց։ Բայց սա լաւ ձեռաց յանձներ էր իր սաներըը. և անոնց մարմնաւոր անունդէն աւելի՝ մտաւորն և հոգևորը հոգալով, կրթել տուաւ պիտոյց և արբանեկաց. որով՝ մեր հարազատքն՝ տունէ և ընտանիքը աւելի՝ ճանչցան վանքեր և վանականներ, եկեղեցիներ և քահանայական դասեր. մարմնաւոր ծնողաց գգուանքէն աւելի՝ ընդունելով հոգևոր դաստիարակաց խնամքը. և կանուխկեկ յայտնուեցաւ՝ որ իրենք երկնից՝ քան երկրի համար են։ Իրաւամբք կ'ըսէ ուրեմն իր վարուց համառօտիչ մը, թէ « Սնուցանէին (զնա) և ուսուցանէին ամենայն բարեպաշտութեամբ 'ի խանձարրոյ՝ առ սուրբ Հայրապետին Գրիգորի Վկայասիրի »։ Եւ Լամբրոնացին.

« Ի սաղմնդիայ փոքր հասակէ
Ի միանձանց սրբոց կոչէ.
Դաստիարակ ուսման կարդէ »։

Բայց Թէպէտև փափուկ տղայութէ վեր միշտ այսպիսի խոշորակեաց անձանց մէջ մեծցաւ և կեցաւ Ներսէս, այլ իր ծննդեան և վիճակին յարմար անձանց հետ ալ անպակաս կ'ապրէր, այս ինքն իշխանազանց և եպիսկոպոսաց. արդէն իր անուծ տեղին համար կ'ըսէ Պատմիչ մը Թէ, « Տուն (Գոզ) « Վասլին էր յայնժամ հաւատքարան Թագաւո- « րաղանց և ազատաց Հայոց, և աթոռ հայրապե- « տաց ». որով իրեն աղնուականութեան կնիքն ոչ Թէ միայն ոչ ընկեցաւ կամ բրտացաւ, այլ աւելի նրբագոյն աղնուութիւն մ'ունեցաւ. և հայրենի աղնուականութեան հետ խառնուելով հոգևոր մ'ալ՝ արդարև շնորհալի կազմեցին զինքը ա-

մենայն կերպով. և ինչուան իր մեղն յիշատակ Թողած գրուածներէն ալ՝ կրնայ նշմարուիլ ազնուական հեղինակ մը: Ներսէս Գրիգորիսէ զատ երկու եղբայր ալ ունէր, Վասիլ անդրանիկն և Շահան կամ Զօրավար՝ կրսերն. զանոնք Թողլով իրենց ծնողաց և աշխարհի օրինաց՝ Վկայասէր երկու միջիններն ընտրեց նուիրել եկեղեցւոյ և իր աթոռոյն յաջորդութեան. և այս բանիս յորմարցընել ուզեց զանոնք՝ սրբութեամբ վարուց և գիտութեամբ գրոց: Արդէն իրենց բնակած տեղն այն ատեն կենդրոն կամ սահման էր բազմութեամբ միաբանակեաց սրբասիրաց և իմաստասիրաց:

Ասորւոց երկրին և Կիւլիկիոյ միջոց Տօրոս լերանց ընդարձակ Թև մը կը տարածի, ծանօթ՝ ի հին գարուց՝ Ամանոս լերանց անուամբ, որք այս տեղն Սեաւ Լերինք կոչուէին՝ քարոտ երկրին պոյնին պատճառաւ, ար յեղոյ և հիմայ կեավուրտապ. բնական ամրութեան համար հօս ժողոված էին գարերով առաջ Ասորի և Յոյն կրօնաւորք և ճգնաւորք, զանազան վանքեր շինելով քարանց խորշերը. վերջի տեղներ աւելցան հօն և Հայք. և իւրաքանչիւր իրենց լեզուաւ և ծիսիւ կը զբաղէին աղօթից և ուսմանց. անոր համար և Սուրբ Լեառն կոչեցաւ: Ինքնին Շնորհալին իր առաջին մեղի հասած գրուածոյն մէջ՝ կ'ըսէ տեղւոյս համար.

« Անդ՝ ուր սրբոցըն բնակք եղեալ
Եւ ի մարմնի հրեշտակացեալ,
Աշտամեռունչ փառաբանեալ
Զերկրորդութիւնն ամենօրհնեալ.
Ի վայելուչ յայն վայր եկեալ.
Ի Սեաւ մլեին լեառն անուանեալ.
Ուր են հոգիք լուսաւորեալ »:

Այնչափ բազմաթիւ էին վանքն և վանականք, որ երբեմն կայսերք Յունաց ազահութեամբ ուզեցին կոլոպտել զանոնք, կամ խաչերնին ալ վերնատուր դարձընել[1]. և երբ Ա. Խաչակիրք անոնց սահմաններէն կ'անցնէին սոված, վանականք շատ պաշար տուին անոնց: Պիտանի հետազօտութիւն մը պիտի ըլլայ այս բազմաթիւ վանորէից մնացորդքը և հետքը քննել, որչափ որ տեղին և տեղը բռնող Թիւրքմէնից կամ նմանեաց ժամանակ թոյլ կուտայ: Մեր պատմչաց քով հազիւ 10 կամ 12 անուն կը գտնենք Ասորւոց և Հայոց վանաց. մերայոց մէջ ամենէն անուանի էր Կարմիր վանքն մօտ 'ի Գեսուն, իշխանանիստ Գոլ Վասլին, և անոր մօտ Ուէգէ վանքն (եթէ ոչ նոյն). այս էր գլխաւոր կայարան Վկայասիրին, և յետոյ Բարսղի կաթողիկոսի. ուր հեռաւոր կողմերէ ալ կու գային բանասէրք՝ լսելու և սովրելու. և ինչուան ունէք 'ի վարդապետաց՝ իրենց կարգը և պատիւը ծածկելով՝ կ'աշակերտէին այս վանաց վարդապետաց. ինչպէս կ'աւանդեն անուանի Մըխիթար Գոշ վարդապետի համար:

Ասպէս ըրաւ և մեր պատմութեան կարևոր՝ Սահմանոս վարդապետ մը, որ շատ սրամիտ և սրբասէր ըլլալով պատանեկութեան մէջ քահա-

1 Այս արևելեան և յամաքային Ասիոս սրբազան լերին բարգաւաճանաց համար կ'ըսէ մեր ժամանակակից պատմչաց մէկն. « Տեսանէ (Ռոմանոս կայսր) անդ բազմութիւն « վանորէից և զմենաստանս միայնակեցաց, որք 'ի մարմնի « գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն, որք միով « այծեխւ կամ բաճկոնաւ շատանան . . . երկաթի բրիչ 'ի « ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին 'ի գարի սերմանեաց « պատրաստեալ զօրապահիկն կերակուր . . . 'ի գլուխ լե- « րինն բարձրացեալ՝ նախամարգարէին կաճառակից գո- « լով միշտ ընդ Աստուծոյ խօսին . . . : Թագաւորն ասէ. « Չէ ինձ պիտոյ աղօթք նոցա, այլ գերեցէք յամենայն « վանորէիցն աղեղնաւորս՝ 'ի ծառայութիւն խմում թա- « գաւորութեանս »: — Արիստ. Լաստիվ. Զ:

նայական աստիճան առեր էր և կը վարդապետէր իր երկրին՝ Մեծ Հայոց՝ մէջ, ուսկից այլազգեաց սպասաւորութեան պատճառաւ հեռացեր եկեր էր հոս. և դեռ 18 տարեկան ըլլալով՝ դիւրաւ կրցաւ աշակերտ ձեռնադրել և վարդետ փնտռտել: Բայց ոչ երկար տեն. խմաստութիւնն և չնորհքն՝ գինքը յայտնեցին. խմացուեցաւ իր աստիճանն, և իր երկրին մէջ քարոզ ալ տալն, առանց գաւազան կրելու: Վանքին բարեաեր ծերունի վարդապետք և հայք յորդորեցին որ իրենց դիմաց ալ քարոզ մը տայ. հնազանդելով՝ կատարեց անոնց խնդիրքը. ամենուն զարմանքը շարժեց գիտութեամբն և վայելչաբանութեամբ, ղոմանս սիրով և գովութեամբ, ղոմանս ալ նախանձով. մինչև սկսան մեղադրել զծերերը, թէ ինչու՞ թողուցին որ այդպիսի դեռահասակ քահանայ մը քարոզէ հանդիսապէս: Ինչուան Բարսեղ կաթողիկոսի ականջը հասաւ ամբաստանութիւնն, այլ անկէ աւելի համբաւն. որ և յօժարութեամբ օր մը գալով այս վանքը, իբրև այցելութիւն ընելու, հետն ալ պատուաւոր եպիսկոպոսներ և իշխաններ առած, երբ շաբաթ օրը երեկոյեան ժամերգութեանէն ետև քարոզ տալու կարգն եկաւ, ինչպէս որ այն տեն սովորութիւն էր, վանականք խնդրեցին կաթողիկոսէն՝ որ իրեն հետ եկող վարդապետներէն մէկն քարոզ տայ. իսկ նախանձոտներն կ'ըսէին Թող ձեր տղայ վարդապետան խօսի՝ որ լսենք: Փութալի ժամանակն հասած էր. հրամեց կաթողիկոսն ալ որ Սահմանոս քարոզէ. և սա խօսեցաւ առանց դժարութեան, և այնպէս վայելուչ և առատաբան, մինչև նախանձողքն անգամ սկսան վախնալ իրենց ցուցած արհամարհանաց համար: Իսկ կաթողիկոսն, երբ եկաւ Սահմանոս երկրպագութեամբ չնորհակալելու, ոտք ելլելով դրկեց իմաստութեամբ հասունացեալ վարդա-

պետը, իր ոսկեզարդ գաւազանը և մատնին դրաւ անոր ձեռքը. այն օր կատարեալ վարդապետաց դասը անցընելով վնա, իսկ երկրորդ օրը՝ եպիսկոպոս ձեռնադրելով, և Գոլ Վասլի իշխանութեան տակ եղած տէղերը՝ իրեն թեմ տուաւ բոլոր: Սահակիանոս երբեմն այն տեղուանք պարտեզով, երբեմն վանքերը նստելով՝ սկսաւ համարձակ վարդապետել և տօնդրընել. և քանի որ հասակն առաւ՝ աւելի տարածեցաւ համբաւն, և շատերն կը գիմէին իրեն աշակերտելու: Ազգընուս նշանաւոր վարդապետաց կարգն անցաւ՝ Սբեփանոս Կոչնեցի կամ Գիպնակեան մականուամբ. թէ և մեզի ծանօթ գրուած մը հասած չէ այս գիանական և վայելչաբան վարդապետէս. այլ ինչպէս գեղեցիկ կը խորհըրդածէ այս աւանդութեանս պատմողն, « Աստ ոմն յիմաստնոցն, եթէ ծածկեալ գիտութիւն « Թեան վարդապետի՝ բերան են աշակերտքն »: Եւ ահա շատ աշակերտներէն զատ (որոց անուանքն ալ ծածկուած են) կան չորս աշակերտք ծանօթք, չորս արծաթի բերանք, որք մեր ժի մեծանշան դարուն դպրութեան և գիանոց պարագլուխք են, և ամենէն ընտիր և յատակ հայկաբանութեամբ և վայելչաբանութեամբ գրօղք. Իգնապիոս եպիսկոպոս՝ Ղուկասու աւետարանի մեկնիչն, Սուգիա վարդապետ, Կաթուղիկեայց Թղթոց մեկնիչն, և երկոքին Պահլաւունի հարազատք՝ Գրիգորիս և Ներսէս. որոց նման մաքուր և շնորհազարդ գրութիւք կամ չեն եղած կամ շատ քիչ իրենցմէ առաջ և ետև. և յետ ե դարու Թարգմանչաց՝ անոնց հաւասար օրինակագիրք են հայերէն գրպրութեան:

Ահա այսպիսի մաքուր սրտով և մաքուր բերնով անձն մը և նմանեաց գաստիարակութեամբ՝ ձեռացաւ մեր Շնորհալին. և իբրև արծաթեղէն քուրայի մէջ Թափուելով՝ պայծառ ոսկի դուրս

ցոլացաւ։ Այսպիսի ձեռաց մէջ՝ էր տարակուսեր Բարսեղ՝ մեծ Վկայասիրին աւանդները լաւ տեղաւորած ըլլալու. որ և զԳրիգորիս՝ հազիւ 15 կամ 16 տարեկան՝ քահանայ ձեռնադրեց. և սկսաւ պատրաստել աւելի բարձրագոյն ասպարէզի մը, որոյ՝ իր անկարծելի մահուամբն՝ նա ժամանակէն առաջ ալ հասաւ. և հարկ եղաւ աշակերտութեան խոնարհ աթոռակը թողուլ, և վարդապետութեան բարձրագոյն գահը բազմելով՝ իր աստուածաշնորհ հանճարը բանեցընել, օգնութեամբ իր վարպետ Սահակայ եպիսկոպոսի և նմանեաց։ Բայց եղբայրն՝ Ներսէս՝ աւելի երկայն առեն աշակերտեցաւ, նոյն խակ խնամօք և հոգով իր եղբօրը, որ թէ և իրմէ 6 կամ 7 տարով միայն մեծ էր, այլ հիմայ հոգևոր աստիճանաւն ոչ միայն հայրացաւ այլ և հայրապետացաւ։ Յայտնի էր որ երկու եղբարքն ալ Հայոց սրբազան աթոռոյն համար կը պատրաստուէին, բայց չէր կարծուեր այսքան շուտով. Բարսեղ դեռ չէր հասած Վկայասիրին ծերութեան. և անոր պէս միաք ունէր Ներսէսեմ երթալու, յետ վարդապետի տօներէն կատարելու. և ձմեռան յանկարծ օրէն, և ցաւալի կերպով մը, փոխեցաւ յանդարձ ձմեռայ։ Կամ տօնական հանդէսը կատարելէն վերջը՝ տանեաց մը վրայ հանդչելու առեն իր փոքրաւորք, տանիքն վար փլաւ. և կամ չէնք մը շինել տալով և գիտելով զայն՝ սիւն մը սըրծաւ կանգնողներուն ձեռքէն, և վրան ընկաւ. կամ մէկ կամ մէկալ կերպով վինքը վտանգեց ի մահ. երէք օր միայն ապրեցաւ. բայց այն օրերուն՝ միակ կարևոր գործ համարեցաւ շուտով երեն բերել տալ զԳրիգորիս, և մօտ գտուած եպիսկոպոսաց և իշխանաց առջև՝ ձեռնադրելով եպիսկոպոս, կամ (ըստ ոմանց) միայն տալով անոր կաթողիկոսական գօրն ու գաւազանը, ինչ-

պէս որ ութ տարի առաջ կտակեր էր Մեծ Վկայասէրն, և ամենուն հաւանութիւնն առնելով վախճանեցաւ։

Յամին 1113 ամառուան մէջ, Գրիգորիս՝ այսուհետև Գրիգոր Գ, նստաւ յաթոռ Մեծի Վկայասիրին, ինքն ալ Վկայասէր Փոքր, և յաթոռ նախահաւուն իբրեանց՝ Ս. Լուսաւորչին. ասոր ԹՈռան և էր անուանակից Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանիսի նման՝ պատանեկութեան մէջ այնպիսի գերազանց բարձրութեան հասած, դեռ հազիւ 18 տարեկան ըլլալով. որ որչափ ալ մերձաւորաց խորթ բան մը չէր երևեր, ընտրելոյն սրբութիւնը և իմաստութիւնը տեսնելով, հեռաւորաց կըրնար գայթակղութիւն կամ արհամարհանք ըլլալ։ սակայն բաց ՚ի Աղթամարայ կողմէն, ուր առաջուց ալ ինքնագլխութիւն մտեր էր, ուրիշ շատերու չհոթութիւն չբերաւ այս բանս. մէկ մը արդէն ծանօթ ըլլալով Վկայասիրին դիտաւորութէ, մէկ մ՚ալ՝ ոչ անտովոր Հայոց մէջ ազգաւ ժառանգութեան նաև սրբազան կարգաց, և Լուսաւորչի ցեղին օրինակն ոչ միայն յայտնի՝ այլ և պաշտելի էր, ինչպէս որ քիչ մ՚առաջ տեսանք։ Սակայն մեզի ժամանակաւ հեռաւորաց, և ընդհանուր անաչառ դատողաց՝ դարձեալ անբնական և անընդունակ գործ մը կ՚երևի, որչափ ալ անձինքն սիրելի են. և նոյն ինքն անոնց մերձաւորն արեամբ և արդեամբ և ժամանակաւ՝ Ն. Լամբրոնացին, կերպով մը մեղադրելով ազգաւ քահանայական պայազատութիւնը, կը յիշէ որ իր օրերն ալ կը խօսէին այս Գրիգորիսի դեռահասակ կաթողիկոսութեան, և Ներսէսի եղբայրական ընտրութեանն համար. թէ և ինքն ալ չկրնար լսել անոնց անհամեմատ արժանաւորութիւնը։ Այս բանիս համար էր որ հարկ համարեցանք քահանայական պայազատութեան վրայ խօսիլ։

## Ե.

*Գրիգորիս կաթողիկոս. — Աղթամարայ ա-
թոռոյն ապստամբութիւնն. — Յովսէփ Սեբաս-
ցւոյն. — Երկրաշարժ. — Քահանայութիւն
Շնորհալւոյ և ձգնութիւնք. — Ուսումնք և
գիտութիւնք Ներսիսի.—Շնորհքն կամ օծումն.
— Շարժագրութիւն. — Զարմանալի կերպ
Շարագրութեան. — Յատակագրութիւն:*

Շնորհալին 11 տարուան էր երբ եղբայրն Հայոց եկեղեցւոյն գլուխ բազմեցաւ: Մինչ ամեն կողմ՝ ի Հայս նորընծայ կաթողիկոսին կոնդակներն կ՚երթային և հպատակութեան թուղթեր կու գային, և գեռահասակ քահանայապետն հայրենական և հոգևորական պինդ ականութեամբ կը պատկառեցընէր զսեռսդս, — վասն զի և բնական վսեմ ձիրք և տեսիլք մ՚ունէր, — լսուեցաւ Աղթամարայ աթոռոյն ապստամբութիւնն: Սովրաբար կարծուի թէ այս առենէն սկսած է այս տեղւոյս առանձին կաթողիկոսութիւնն, որ շարունակելով հասաւ մինչև մեր օրերը. սակայն այն աթոռոյն հին դիւանքն կը ցուցընեն (եթէ անառարկութեամբ հնարուած չըսուին) որ ի դարու սկզբէն սկսած է Աղթամարայ՝ թէ ոչ ինքնագլխութիւնն գոնէ առանձնաշնորհութիւնն: Երբ Արծրունեաց և Վասպուրականի նախարարն խոստացան և փառասէր Գագիկ՝ թագաւոր եղաւ երկրին, ուզեց որ ինչպէս ինքնագլուխ քաղաքա-

կան աեր, այսպէս ալ եկեղեցական գլուխ մ'ու-
նենայ իր երկիրն. և հաւանութեամբ Բագրա-
տունի Թագաւորին Հայոց՝ Գէորգ կաթողիկոս
զեղբօրորդին Գագկայ Եղիակ՝ ձեռնադրեց (յամի
921) եպիսկոպոսապետ բոլոր Վանայ ծովուն
չորս բոլոր սահմանաց, հարաւային կողմէն ալ
ինչուան՝ ի Ճուլամերկ և՝ ի Մուսուլ ընդարձակե-
լով անոր Թեմերը: Եղիակէ ինչուան՝ ի Դաւիթ՝
որ մեր Գրիգորիսէն ապաստամբեցաւ՝ երկու դա-
րու միջոց 20 եպիսկոպոսապետք կը համրուին
յանուանէ: Շատ հաւանական է Գագկայ ու-
զածն. այլ եղածն՝ թուի թէ ոչ բոլորովին ինք-
նապլուխ և ազատ կաթողիկոս էր. վասն զի ան-
կարելի է որ Հայք և իրենց բնիկ կաթողիկոսն
հաւանէին այս բանիս. այլ այնպիսի մեծ պա-
տուով և ընդարձակ Թեմով եպիսկոպոս մը ըզ-
րուեցաւ Գագկայ Թագաւորութեան մէջ՝ յԱղ-
Թամար, ինչպէս երբեմն էր Սիւնեաց եպիսկո-
պոսն կամ Մարդպետականն: Չարկաւ այնպիսի
ընդարձակ երկիր քանի մ'եպիսկոպոս ալ ունէր,
որոց գլուխն էր Աղթամարայն՝ իբրև արքեպիսկո-
պոս կամ մետրապօլիտ. այլ Թէ ինքնին եպիսկո-
պոս ձեռնադրելու իշխանութիւն ունէր՝ տարա-
կուսելի է, մանաւանդ Թէ չէ ընդունելի: Ար-
ծրունեաց Թագաւորութիւնն դար մը քշեց. երբ
վերջին Թագաւորն Սենեքերիմ՝ ընտանեօք և ձիա-
ւորօք փոխադրեցաւ՝ ի Սեբաստիա, հարկաւ նը-
ւազեցաւ իր Թոլած երկրին եկեղեցական աԹոռն
ալ, Թէ և դեռ երբեմն իր արքունի ցեղէն եպիս-
կոպոսք ալ նստան Աղթամարայ աԹոռը, որ չա-
նաց միշտ իր մեծապատուութիւնը պահել. և ան-
շուշտ ատոր համար էր որ Փիլարետ բռնաւորն
այս կողմէս կաթողիկոս հրաւիրեց՝ փոխանակ
Վիրապեցւոյն, և գոնէ քիչ ժամանակ մը բերաւ
ուղղութեան իր սահմանները: Յայտնապէս այս մեծ

հայրապետին (Վկայասիրի) առեն կ'երևի Աղթամարայ կամ Վարագայ եպիսկոպոսին գլուխ շարժելն, որ առանց նախընթաց պատճառի կամ համարեալ իրաւանց՝ չէր կըրնար ըլլալ: Այսպիսի իրաւանց մէկին ալ կը սեպէին՝ Վահան կաթողիկոսի Անիէն փախչելով գալ և նստիլը այս կողմերս. և հօն մնացած ըլլալն շատ մը թանկ նըշխարաց Ս. Լուսաւորչի, և այնպիսի բաներ, (ինչպէս քօղ, գաւազան, և այլն,) և Հռիփսիմեայ նըշխարք, որ միշտ կաթողիկոսի քով կը պահուէին: Արդ այսպիսի նախընթաց պատճառաց վրայ աչելցընելով հիմիկու Ս. Խաչէ եպիսկոպոսն Դաւիթ, նորընծայ կաթողիկոսին անկատար հասակը, յայտնապէս գլուխ քաշեց, և քանի մ'ուրիշ եպիսկոպոսս ալ հաւանեցընելով՝ զինքն օծել տուաւ կաթողիկոս, ոչ թէ միայն իր տեղական աթոռոյն, այլ գուցէ և բոլոր Հայոց. թէպէտև Գագկայ իշխանութեան սահմաններէն անդին չանցաւ իր բռնաբարեալ իրաւունքն, մանաւանդ աւելի ամփոփ էր, և ևս աւելի ամփոփեցաւ յետոյ: Սակայն պատճառած շփոթութիւնն հարկադրեց՝ որ մեր Պահլաւունի կաթողիկոսին քով ազգային եկեղեցական ժողով մ'ըլլայ, և եղաւ յաջորդ տարին, 1114:

Շատ փափաքելի էր այս ժողովոյս գէպքն և կանոնները գիտնալ, ուստի զի շատ կարևոր բաներ սահմանուած կարծուին հօն. այլ ժամանակակից պատմիչ կամ պատմութիւն մը չէ հասած մեր ձեռքը. այսչափ միայն կ'ասանդեն, և նոյն ինքն Շնորհալին մեր, որ այն տարեն տղայ գիտող մ'էր, և յետ 50 տարւոյ իր մէկ գրուածին մէջ կը յիշեցընէ, որ 2500 անձէ աւելի էին ժողովականք (հաւանօրէն 'ի սահմանս Կարմիր վանաց), եպիսկոպոսունք, իշխանք, վարդապետք, վանահայրք և արժանաւոր վանականք Ս. Լերինն, որք

միաբան հաւանութեամբ՝ ապստամբ և անկանոն համարեցան զԴաւիթ և իր հետևողքը։ Եւ օրինաւոր կաթողիկոսի հաստատութեան համար՝ ըստ ոմանց այս ժողովքիս մէջ սահմանեցաւ, որ հարկաւորապէս ընտրութեանը ներկայ գտնուին կամ գրով հաւանութիւն տան ուրիշներէ զատ՝ այս չորս մեծաւոր եպիսկոպոսունք. ա, Բջնոյ, անշուշտ մեր Պահլաւունեաց հայրենի աթոռն ըլլալուն համար, ուր փոխադրած պէտք է սեպել Ա. յրարատայ եպիսկոպոսի աթոռն. բ, Հաղբատայ, զոր դեռ քիչ տարի առաջ Բարսեղ կաթողիկոս հաստատեր էր բարձր պատուով, ի շնորհս Հայ–Ապուհան Թագաւորաց տեղւոյն. գ, Արտազու կամ Թադէի վանքի եպիսկոպոսն, որ հին Մարդպետականի յաջորդն կըրնայ կարծուիլ, և սա էր երբեմն նախագահ եպիսկոպոսաց Հայոց. դ, Սիւնեացն, որուն անցեր էր նախագահութիւնն՝ վերցուելով ի Մարդպետականէն։ Ոմանք սոյնց մէկուն տեղ՝ Ուշտունեաց եպիսկոպոսը կը մըտցունեն, որ ըսել կ'ըլլայ նոյն իսկ Աղթամարայ աթոռակալն։ Շատերն կը յիշեն այս սահմանադրութիւնս. բայց ինչպէս անտարակոյս չէ այս ժողովիս մէջ կանոնուիլն, նոյնպէս ալ տարակուսելի է թէ յաջորդ կաթողիկոս ընտրութեանց մէջ պահուած է միշտ կանոնն թէ ոչ։ Սակայն Աղթամարայ կաթողիկոսութիւնն ինքնագլուխ մնաց անկէ ետև մինչև մեր օրերը, և յետ Դաւթի հետ գտեաք 92 կաթողիկոսք նստած են մինչև ի տարաբաղդն Պետրոս Պիւլպիւլ, որ յամի 1864 կնքեց կեանքը։

Սեաւ Լերին ժողովոյն տարին, նոյեմբեր ամսոյ 29ին, բնական և ահեղ դիպուած մ'ալ հանդիպեցաւ հօն և մեծաւոր սահմաններ. ծաստիկ երկրաշարժ մը, որ թէպ ի նիւթական չնուածոց՝ 40,000 մարդկան մահ պատճառեց. քանի մը

վանքեր և եկեղեցիներ ալ կործանեցան, որոց մէկուն մէջ 30 միաբանք և երկու վարդապետք ժամ. ասացութեան առեն՝ փլած շինքին տակ մնացին: Ա. յս սոսկալի պատահարին ականատես և ազատողներէն մէկն ալ մեր մանկահասակ Շնորհալին կըրնայ ըսուիլ, որոյ նրբազգած մտաց վրայ հարկաւ անանկ տպաւորութիւն մ'ըրած է, որուն անդրադարձութիւն կըրնանք տեսնել իբրև 40 տարի ետև ստորագրած աշխարհաբիս աւերածը, Յիսուս–Որդի քերդուածին վերջերը.

«Յորժամ տարերքըս դըղըրդին», եւ այլն:

Նորընծայ կաթողիկոսն՝ որ հայրաբար և եղբայրաբար կը խնամէր իր հարազատը, չուշացաւ իրեն պէս զայն ալ սրբազան աստիճանաց բարձրացընելու. և հօս ալ տարիքն տեղի տուաւ գիտութեան և սրբութեան: Շնորհալին դէթ իբրև 17–18 տարեկան քահանայ ձեռնադրուած պիտի ըլլայ. թէ և չի յիշուիր որոշ տարին. սակայն նոյն ինքն Ներսէս իր առաջին գրաւոր երկասիրութեանմէջ, որ է Վիպասանութիւնն, գրած յամի 1121, իր կենաց 20դ տարին, կը ծանուցանէ որ արդէն քահանայ էր. մանաւանդ թէ վկայէ դեռաբոյս հասակի մէջ քահանայանալն ալ՝ խնամօք և ձեռօք եղբօրը.

«Մինչեւ յարբունըս հասուցեալ,
Եւ քահանայ ձեռամբ օծեալ.
Երկնաւորին Հօր նըւիրեալ
Եւ Միածնին իւր ընծայեալ:

Եւ յետ քանի մը տող ալ խոնարհութեամբ զինքն անարժան գրելու այսպիսի սուրբ աստիճանի, կը յաւելու յուսով կանալը՝ համեմատ գտնուելու այն վիճակին.

Միայն ի յոյսն յուսացեալ,
Ի Բարձրելոյն աչ զօրացեալ.
Չի յայսցանեաց ի բաց առեալ՝
Չիս ի բարիսն փոփոխեալ »:

Ո՛րչափ սխրալի էր տեսնել 22–23 տարուան կաթոլիկոս մը ալէզարդ եպիսկոպոսաց և վարդապետաց գլուխ կեցած՝ Աստուծոյ սուրբ սեղանոյն պատարագ և պատարագիչ ընծայելիր հրեշտականման պատանեակ հարազատը, որ իր հոգւոյն կնիքը կ'ընդունէր Աստուծոյ և յեղբօրմէն: Աւելի ալ սխրալի և սրբալի էր տեսնել նորընծայ ամբիծ շնորհազարդ քահանայն՝ դեռ հասակին աճման չափը չլրցած, հրեշտակներէ բարձր խորհրդոց մէջ մտնել և կատարել, և կատարել արժանաւորապէս, որչափ որ հոգիէն մարմին կրնայ արժանաւորիլ, իր հոգւոցիւնը թէ ոչ խոպտա թօթափելով, գոնէ անոր երկրաքարշութենէն ազատելով, կամ կռուելով՝ ազատելու և թեթևնալու: Եւ յիրաւի քահանայութիւնն ընդունելով՝ Ներսէս՝ հարկ սեպեց 'ի յոյսն յուսացեալ և Բարձրելոյն աչով զօրացեալ՝ առաւել քան զառաւել « 'ի բարիսն փոփոխել». իր զգուշաւոր և առաքինի վարպետներէն և դաստիարակներէն աւելի ինքն իր վրայ զգուշանալով, խստանալով, ինք զինքն յորդորելով և կրթելով, ձգնութեամբք և աբստութեամբք. ինչպէս իր համանուն և համանմանն շատ մատամբ՝ Ներսէս Լամբրոնացի՝ կը գրէր անոր վրայօք. Թէ երբ քահանայութեան

« Յայս պատիւս նախ ելանէ,
Ձգնողական կիրըս կըրէ.
Պայծառ զմարմին իւր չարչարէ.
Ի յանդգնալ պահըս ձնշէ.

Նոյն աղօթիցըն պարապէ.
Զանձն 'ի Փրկչին խաչ հեղուսէ.
Պատարագել ոչ դադարէ,
Զյիսուս ընծայ Հօր նըւիրէ »:

Ճշմարիտ վկայութիւն 'ի փորձ անձնէ. որոյ նման և արձակաբան պատմիչ վարուց Սրբոյն՝ զնայլ մամբ կ'ըսէ. Թէ ինչպէս « Անմարձնաբար և աս-
« տուածայնապէս սպասաւորեալ մեղսաքաւիչ և
« կենարար սուրբ խորհրդոյն, օրինակ բարեաց
« տայր զանձն բազմաց, և նախանձելի լինէր ողջ
« Չախոհ մոլորացն 'ի բարիս: Քանզի վառեալ էր
« ամենևիմբ 'ի հուր սիրոյն Աստուծոյ. և ոչ ինչ
« էր 'ի մարմնական գիջուածեանց և 'ի մոլեկան
« ղբաղանաց՝ որ կարէր շինուցանել զայնպիսի
« բորբոքումն »:

Անշուշտ, ինչպէս որ տարեւոր եպիսկոպոսունք և առաջնորդք Գրիգորիսի վսեմական ծանրութեանն և զգաստութենէն պատկառելով՝ իրենց լսա-
կատար կաթողիկոս մը կը ձանչնային զնա, այս-
պէս՝ երիցպոյն քահանայք և միանձունք՝ իրենց պատկառելի օրինակ մը՝ զնեբսէս: Իակ ինքն նաև ուսիլի տարուօք յառաջելով ալ՝ դեռ աշակերտ և համբակ և ոգեպ կը ձանչնար զինքը, ինչպէս իր վիպասանութեան սկիզբը կ'ըսէ.

« Զի հրահանգից վարժարանի
Զեմ տակաւին ներկուսս բանի »:

և վերջն ալ կը կնքէ.

« Կատարեցաւ բանըս չափեալ
Ի համբակէ նըւաստացեալ »:

Թուի Թէ ոչ միայն վարուցը վրայ կը պանչանայ-
լին աեսողք, այլ և այնպիսի վարք առանալու

կերպը կ'ուզէին սովրիլ: Այլ չէ հաւաստի ինչ որ մեր պատմահայրն Զամչեան կարծէ (Գ, 86) թէ քահանայութեանն առեն գրած ըլլայ Շնորհալին Ձգնողական վարուց վրայօք դիրք մը [1]:

Աղօթից և ուսմանց ապաստանաց մէջ անեալ և գրեթէ ծնեալ, բնութիւն եղաւ իրեն առնչմով իր հոգին և միտքը կրթել, և այսպիսեաց ախորժիլ. այլ փափաքերը մաց թևերն ալ արձակել, անոր յարմար տեղեաց և իրաց վրայ դեգերիլ. և մեղուաբար քաղել իմաստութեան մեղր ու ծաղիկ: Կը համարձակի յայտնելու այսպիսի բերումը և նաև զրկումը.

« ՅԱՌԵՆԱԿԱՆԸՆ քաղաքի՝
Չանձն իմաստիւք ոչ կրթեցի ».

և կը յիշէ հին Յունաց գերագոյն հանճարները, և անոնց հետեւելու նախանձը.

« Ուր լըսարանըն Պլատոնիկ,
Եւ չայի ոսիւք Հոմերոնիկ.
Ուր սաորոգոըն Արիստոտէլ,
Տասըն բանիւ գըրօղն էի.
Ուր հոյլք ամեն հըռետորի,
Ժողովարան Ճարտասանի,
Ներհըմտութիւն քերականի [2] »:

1 Լամբրոնացւոյ բառը « Ձըգնոզական կիրըս կըրե », ուրիշ օրինակի մէջ կարդալով գիրըս գըրե:

2 Նաև 47 տարի ետև առ Մանուէլ կայսր գրելով ցաւօք կը յիշէ լաւ վարժարաններ և ձեռնտուներ չունենալն այն առեն՝ ի Հայս. « Ո՞ր մեր վարժարանք՝ ի թագաւորական պատրաստեալ հրամանացն. և կամ յոյս « փառաց և պարգեւաց՝ յառաջացեալոցն յիմաստս, որ մանաւանգ մանկաբարոյիկ՝ են առաւելագունի պատճառ « փութոյ կրթութեան »:

Սեաւ Լերանց վանորէից մէջ արդարև կայքին իրեն վարդապետք հմուտք և վայելչագիրք, ինչպէս գիտնականն Ստեփաննոս, և մեծ Վկայասիրին ատեն և վերջը յիշեալք Մեղրիկն, և Մատթէոս, և Կիրակոս Տօնամակաց աւարտողն, և այլք. սակայն հարկ է խոստովանիլ որ ոչ միայն այն ըղձացեալ նրբամիտ հելլենական Պլատոնք և Արիստոտէլք էկային, այլ և անոնց հասնելու ձամբան ալ շատ բանուկ չէր, այսինքն յունական դպրութիւն չկար. և նոյն իսկ յիշեալ գիտուն և գրագէտ վարդապետք ժի արծաթի դարուս, կամ քիչ կամ ոչ գիտէին յունարէն լեզու, յորում դեռ շատ տեսակ գիտութեանց գրքեր գտուէին. այլ անոնց Ս. Հարց գործերն մեծաւ մասամբ հայերէն թարգմանուած ըլլալով 700 տարուան միջոց, և այն վանորէից մէջ ալ ժողոված՝ թէ միանձանց և թէ մեր երկու Վկայասէր կաթողիկոսաց ջանքով, տեղւոյն բանասէրք և գրասէրք ալ այնպիսի թարգմանութեամբք, և անոնց հետևանօք մեր ընիկ Հայ վարդապետաց շարադրած գրքերով՝ իրենց ուսում և պարապմունք կ'ընէին. և եթէ շատ տեսակ գրոց և ուսմանց չէին կրնար զբաղիլ՝ այն քիչ տեսակները ատեպ կարդալով և քննելով լաւ կը թափանցէին անոնց մտաց, կը սեփականէին անոնց խօսքերը և ընտիր շարադրութիւնը. որով և իրենք ալ չափաւոր հմտութեամբ և յուստակ լեզուով՝ հատասար նախնեաց կամ քիչ պակաս՝ կը գրէին: Ասով մեզի գրեթէ 800 տարի հարազատ հայկաբանութեան պայծառ վտակ մը հոսեր և հասուցեր են. իսկ գիտութեան տաճձանն հատարակօրէն չէ բարձրացեր. այլ առանձնական անձինք յոյն և արաբացի կամ պարսիկ դպրութեան եռեւէ ըլլալով կըրցեր են աւելի զարգանալ մտօք և բանիւ, նոր գիտութեանց համառաել և ուրիշներու ալ համառես ընել: Ինչ-

պէս յետ մեր ոսկեղինիկ Թարգմանչաց և գարու, Պետրոս Քերդող Սիւնեաց (Զ դար), Անանիա Շիրակացի (է), Յովհաննէս Իմաստասէր (Ը),Ստեփաննոս Սիւնեցի (Ը), Յովհաննէս Բժիշկ (Թ), Գրիգոր Մագիստրոս (ԺԱ), Սարկաւագ Վիճակաւոր (ԺԱ–ԺԲ), Մխիթար Հերացի (ԺԲ), և այլն: Այսպիսիք սակաւաթիւ են մեր գպրութեան մէջ. գուցէ և շատ համարձակելի չէր անոնց՝ վարդապետել արտաքին գիտութիւններ վանորէից մէջ. ուսան և այս Սուրբ Լերանց բազմաթիւ վանից և վանականաց մէջ ալ հազուագիւտ պէտք է համարիլ յուշագիտները, մանաւանդ լաւ գիտցողները. որով և մեր կրսեր Վկայասէրն և Շնորհալին՝ իրենց նախնեաց՝ Գր. Մագիստրոսի և անոր որդւոյ մեծ Վկայասիրին՝ առաւելութիւնը չունեցան յայտ մասին. գուցէ քիչ մը գիտէին յունարէն, այլ ոչ կատարեալ հասկանալու և թարգմանելու չափ. ապա թէ իրենք ալ ի թարգմանիչք կ'ըսուին, երկրորդ ձեռքով են թարգմանիչք, այսինքն ուրիշ լաւ յունարէն գիտողաց ձեռօք թարգմանել կու տային, և իրենք զհայերէն շարադրութիւնը կը կոկէին և վայելչացընէին. ինչպէս վկայէ ինքնին Շնորհալին Ս. Սարգսի վկայաբանութեան և ուրիշ քանի մը թարգմանութեանց յիշատակարանաց մէջ. այսպէս կ'ընէր երբեմն կամ ընել կու տար Մեծ Վկայասէրն ալ:

Արդ հարկաւ մեր Շնորհալւոյն ուսմունքն և վարժքն եղան աւելի հոգեխառն գիտութիւնք քան արտաքինք, եկեղեցական քան քաղաքական. Աստուածաշունչ գրոց և Ս. Հարց վարդապետութիւն և մեկնութիւն, եկեղեցւոյ և սրբոց պատմութիւնք, կանոնաց և կարգաց հմտութիւն, չափ մը տօմարագիտութիւն և անոր նմանքն, և բժշկութիւն եկեղեցական, և վայելուչ շարադրութիւն արձակ և ոտանաւոր բանիւ: Ասոնց և

այսպիսեաց մէջ ալ լաւ հմտանալ՝ բաւական գիտուԹիւն և իմաստուԹիւն էր. և ահա մեր Շնորհալին ոչ միայն յառաջացեալ՝ այլ և գերազանցեալ կ'երևի ատենմով, ոչ միայն քան զժամանակակիցն, այլ և քան զբազում նախնիս. և յայսմ է իր մեծ ձիրքն և մեծ շնորհքն, կամ մեկ մեծ պատճառն Շնորհալի ըլլալու և ըսուելու:

Այսպիսի շնորհք՝ լոկ աշակերտուԹեամբ կամ երկայնմտուԹեամբ չէր վաստկուեր. Ներսէս ատենց վրայ ունէր բնական և կրԹական սրամտուԹիւն կամ խորամտուԹիւն և ջանք. և՝ ի վերոյ ամենայնի՝ մեծ ամփոփումն մտաց և վերաբերումն մը՝ առ Աստուած. «ամենայն տուրք բարիք և պարգեւք կատարեալք՝ ի վերուստ են իջեալ առ՝ ի Հօրէն Լուսոյ» ըսուածը՝ գործով ալ խնդրելով: Իր գրուածքը քննուԹեամբ կարդացողն չի կրնար չհամոզուիլ այս բանիս և չզգալ երկնային օծումն մը՝ Ներսիսի որ և է գրուածոց մէջ. որոց ամենէն նշանաւոր կերպարանքն և ոճն՝ այս իսկ օծեալ կամ շնորհազարդ ըլլալն է: — Իրեն հոգեւոր հաղորդն և Թարգմանիչ Լամբրոնացին՝ այսպէս կը վկայէ, յետ յիշելու անոր քահանայանալէն եաև ըրած կրԹուԹիւնը. Թէ Աստուծոյ

...« Փոխան պարգեւ հայցէ
ԶՍողոմոնին զմիտաւ ածէ.
ԻմաստուԹիւն և բան, ասէ,
Ի սուրբ Հոգւոյդ՝ լինէ ընձեռէ:
Հաշտ և համբոյրն (Աճ) ընդ այս հաճէր,
Զփափագ ըղձիցըն կատարէր.
Իմաստ բանի անչափ շնորհէր,
Խորոց քննող զնա յօրինէր »:

Ամենայն մտան կամ յատկուԹիւնք գիտուԹեան կամ վարժուԹեան զարգացեալ և վայե-

լուէ էին ՚ի Ներսէս. մաքրութիւն մտածմանն, աշխուժութիւն բացատրութեան, յստակութիւն լեզուի, վայելչութիւն խօսուածքի. որուն վկայեն իր վարքը գրողք: Նաև գեղեցկութիւն նիւթական ձևագրին. զի

« Որպէս հօրանս ուղղաց ցուցաւ
Գեղեցկագիր գիրըն կարգաւ »,

կ՚ըսէ Լամբրոնացին. այծից ձագերու նմանցընելով սևագիր տողերը. զոր աւելի պարզէ արձակաբանն. « Գրէր և ընդօգրութիւն գրոյ, հրաշա-
« տեսակ և վայելուչ ՚ի պանապան ՚ի երկո, որպէս աս-
« տուածային մատամբ շարժահիւսեալ. և գիծք
« ընորհակիր և աստուածաներկ մատանցն, և
« բանք հոգեշարժք լեզուին՝ արտաբերեալք ՚ի
« յոքնահանճար մտացն, օտար և գեր ՚ի վերոյ ե-
« րևելին մարմնականաց գիտութեանց և իրաց:
« Քանզի ոչ ուներ ՚ի մարդկանէ, և ոչ ՚ի ձեռն մար-
« դոյ, այլ ՚ի ձեռն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.
« որոյ մաքրեալ և յարդարեալ էր զհոգի և զմար-
« մին և զմիտս, տաճար և բնակարան համագոյ
« Երրորդութեան »: Տպագրութիւն չեղած ատեն ՚ի հարկէ պէտքն կը սահիպէր ձեռօք ընդօրինակել գրքերը. բայց Շնորհալին և իր նմանիքն՝ աւելի գրոց իմաստները գիւրաւ իրենց միտքը տպաւորելու համար՝ կ՚օրինակէին. և ահա սա ինքն իր յառաջացեալ կենաց առեն ալ կ՚օրինակէր նաև շատ հեղ կարգացած Ս. Գիրքերը. ինչպէս յամին 1149 Սողոմոնի գիրքերը օրինակելն յայտնի է՝ անոնց վերջաբան գրած ոտանաւոր յիշատակներէն: Մենք չենք արժանաւորած այն ընորհակիր և աստուածաներկ մատանց նիւթական շարժագրութիւնը տեսնելու և համեմատելու. այլ բանական վայելչագրութիւնը կամ շարագրութիւնը՝ ամենայն հայագէտ կըընայ այսօր ալ կարդալ և վկա-

յել, ինչ որ անոր վարքը գրող հին հեղինակն կ'ըսէր շատ յարմարապէս. « որպէս 'ի Ճախարակս « Ճարտարաց քերեալ՝ անգէզ և անգծական բա- « յիւք ». այսինքն այնպէս յստակ, կոկ, անխայթ, և անոյշ էին շարադրութիւնքն, որպէս թէ Ճախարակէ անցած յղկած կլորած: « Եւ զի « վայելուչք և ղորկագոյնք էին ասացեալքն առ « 'ի նմանէ, և Հոգւով սրբով լի, այնր աղագաւ « յօժարապէս 'ի միտ առնուին զնոսա. զի իբրև « աղիւ համեմեալք էին »:

Հարկ է մեզ իր Թողած գրուածոց հետ՝ ժամանակաւ մօտ եղողաց այսպիսի վկայութիւններն ալ լսել, որպէս զի լաւ Ճանչնանք մեր Ներսէսի շնորհաց Ճառագայթները կամ ալբիւրները. զոր եթէ ուզենք ամփոփաբար եզեմական չորս գեռերու նմանցընել, պէտք է չորս վտակ Ճանչնալ՝ իր հոգւոյն սրբութիւնը, մտաց նրբութիւնը, բարուց ազնուականութիւնը և արտաքին մարմնաւոր ձիրքերը. որք 'ի մի խառնեալ՝ յորդորեցին գետ մը, որոյ մեծագոյն մասն արդ յանմահութեան ծովը թափած կը վխտայ, փոքրիկ մաս մ'ալ երկրաւոր յիշատակաց մէջ անմահանայ: Ինչպէս որ հոգեսիրութեան հետ խառնած էր ուսումնասիրութիւնը, այսպէս անոր հետ ալ մշտատեւ եղաւ 'ի Ներսէս. կըրնայ ըսուիլ թէ խոսելու սկսած տաեղէն սկսաւ և կարդալ, քիչ ատենէն և գրել, և այս մինչև 'ի վերջ կենացը աւելի քան զ50 տարի լոկ գրելով. և այն նաև այնքան պաշտօնական հոգոց և ղեկավարութ մէջ. ուր եթէ քիչ մ'ոգի առնելու ժամանակ գտնէր՝ կարդալով, գրելով և քննելով կը սպառէր զայն. զի

« Յիմասաէից փորձ մլռեալ էր,
Մխա ընթերցմանըն պարապէր,
Եւ հայր խորին բանից լինէր »,

կ'ըսէ Լամբրոնացին: Իսկ եթէ քիչ մ'աւելի ընդարձակ աաեն գանէր, այսինքն նուազ հոգ և ըզբաղանք 'ի կաթողիկոսարանի, իր եղբօր օգնականութեան տարիներուն, կը խնդրէր որ առանձնանայ տեղ մը, և ազատօրէն պարապի գրելու և կոկելու գրուածը, այն վերոյիշեալ ձարտար ձախարակէն անցընելու, կամ ըստ Լամբրոնացւոյն՝ յունական ընտրաբանութեբ շարադրելու, վասն զի եթէ Յունաց լեզուն չէր գիտեր, անոնց վայելչաբանութեան շնորհքն ունէր. այսպէս կըրնայ իմացուիլ իր Թուխին ըսածը.

« Հռոմ զարուեան 'ի գործ ածէր,
Եւ զանազան բանս արտադրէր [1] »:

Եթէ կաթողիկոս եղբայրն զինքը կանուխկէկ չպարտաւորէր իրեն օգնական ըլլալու՝ հայրապետանոցին գործոց և հոգոց, Շնորհալին անշուշտ այդ հռոմ կամ ձռոմ արուեստով և հայ պերճաբանութեամբ՝ շատ աքանչելի և համեղ գրուածներ պիտի Թողուր 'ի գանձ ազգային գպրութեան և եկեղեցւոյն. որոց երաշխաւոր կըրնան ըլլալ մեզի հասածներն, զոր յետոյ պիտի Թուեմք, և որք ամենքն ալ վերոյիշեալ ձիրքերով կը փայլին, որքան ալ շատերն հարկաւ մը և կարճ ժամանակաւ շարագրուած ըլլան: Հարկ է որ բազմաթիւ ալ եղած ըլլան գրուածքն. որովհետև ինչպէս առաջ ալ տեսանք՝ շատ ազահ էր ժամանակին, և երբ ուրիշ կարևոր գործ չունենար, յետ աղօթից՝ կարդալ և գրելն էր զբաղմունքն. և ուր որ ըլլար՝ Թուղթ և կազամար պատրաստ կ'ունենար հետը, որ մօտք յղացած պայծառ խորհուրդնե-

1 Բայց ուրիշ օրինակք ձեռագրաց ալ ձռոմ արուեստ կ'ըսեն, իբր պերճաբան կամ ճարտասան:

բէն դոնէ մաս մը գրով ալ ծնանի. ըսել է որ միտքն անդադար հոգևոր և բանական մտածութեամբք զբաղեալ էր. կամ Ս. Գրոց խօսք մը քննելով և մեկնութիւնը փնտռտելով, կամ կրևոր խնդրոյ մը պատասխան պատրաստելով, կամ ոտանաւոր քերդուածոյ տողեր և չափեր կազմելով. որք մտաց կաղապարին մէջ ձևանալուն պէս՝ մէկէն կ'ուզէր գրել, որ չմոռնայ, և միտքն ուրիշ բան մը փնտռէ: Այսով կըրնայ ըսուիլ թէ որոշեալ ժամանակ մը չունէր բան չարտադրելու, այլ ինչպէս միշտ կը մտածէր, միշտ ալ կ'արտադրէր. աւելին ալ կըրնանք ըսել իրեն համար, որ և իր զարմանալի յատկութեանց մէկ շնորհքն է, թէ փիլիսոփայ չունէր, և հաւասար միտքն կը բանէր և կ'աշխատէր յարթնութեան և՛ի քուն: Այսինքն, այս զարմանալի և չնիկ ձիրքն ունէր, որ երբ երկայն աւուն գրոց վրայ աշխատելով կը յոգնէր, և ալ անկարելի էր աչքը բանեցընել, պիտանի մտածութեամբք ծանրացեալ գլուխը բազմոցին վրայ դրած՝ քիչ մը կը հանգչեցընէր, և կը մրափէր. բայց նոյն իսկ քունն հրաշալի արթնութիւն մը կ'ըլլար. մտաց մէջ ժողոված անուշահոտ նիւթերն՝ հաւաքուելով ձուլելով կը ձևանային. կարծես թէ բանաւոր մեղուն կ'աշխատէր այն թանկ ուզելին բջջեայց մէջ. և աշխատութեան նշանն անգամ կ'երևէր իր պարկեշտ ըրթանց վրայ, որք երբև մէկու մը հետ խօսելով կը շարժէին, ինչպէս շատ հեղ ատուգեցին ականատեսք. և կարճ մրափէ մը վերջը՝ մէկէն սթափելով կ'ելնէր, մտաւորական մեղրը մեքանախառն աւանդելու մագաղաթից վրայ: Դարձեալ միտքը կ'առնուր խնդիր մը, կամ այլևայլ Հարց ըսածը Ս. Գրոց մէկ խօսքին վրայ, և նորէն նոյնպէս կը հանգչէր, կը մրափէր, և շուտով ելնելով՝ մտաց մէջ ցրուած տարրերքը՝ միացեալ և ձևացեալ վա-

յելլապէս՝ կ'արտադրէր։ Արդեօք բնահանն վար-
ժուելիւն մ'էր այս, թէ գերբնական տուրք մը,
նման Ս. Ոսկիբերանի վրայ պատմուածին. իբր
զի Պօղոսի առաքելոց Թղթոց մեկնուելիւնը գրած
առեն՝ մօքն կը յափշտակուէր. արժանաւոր
անձ մ'ալ տեսաւ որ նոյն առեն Պօղոս առաքեալ
Ոսկիբերանի ակընկէն կ'աղդէր ինչ որ պէտք էր
գրել, և կը գրէր։ Թէ ոչ Առաքեալ մը՝ անշուշտ
Առաքօղն առաքելոց կը թելադրէր և մեր ալծաթ-
բերան հեղինակին, որոյ հետ խօսակցութիւնը
նշանակէ այն չրթանց շարժուն ալ. որ հեղական
ըսուած երկնաշնորհ գիտութեան կարծիք տուաւ
իրեն ժամանակին մօտ վարդապետաց. « Ուսան-
« և ընկալաւ զշնորհս գիտութեան և Հոգւոյն
« Սրբոյ, կ'ըսէ Պատմիչն, ոչ ինչ ընդհատ յառա-
« քելական գասուցն՝ որ զՀոգւոյն արբին զբա-
« ժակն 'ի տուրբ վերնատանն։ Մեկներ զնորա-
« գոյն միտս բանի տուրբ գրոց, որով հրաշանա-
« յին ընդ քաջակորով խմաստութիւնն և ընդ
« աքանչելի տուրբ և յատակ տեսութիւնն՝ գաղք
« ընտրելոց վարդապետացն՝ որ զայնու ժամա-
« նակաւն էին »։ — Այս զարմանալի և որոշո-
ղաբար իմն շարադրութեան մէկ առաւելութիւնն
ալ համարելու է անոր յատակութիւնը, այն ան-
գլէպ ևանգիտական ոգորկութիւնը, որով Շնորհալին
մեր ընտրելագոյն հայկաբանից առաջնին կարգին
կը տեղաւորի, և տասվ ալ իր գարուն պարագլուխ
կ'ըլլայ։

## Զ.

*Տաղաչափութիւն հայկական. — Շնորհալւոյ քերդողական ձարտարութիւնն. — Վիպասանութիւն, առաջին գրուած նորա. — Զանազանութիւն ոճոյ, ևիւթոց, և այլն. — Բանաստեղծական հանձար:*

Եթէ մեր լեզուին արձակաբանից մէջ առաջին կարգը կը գասուի Շնորհալին, տաղաչափից մէջ առանց տարակուսի՝ նոյն իսկ առաջին տեղին ունի. և միակ այս բանս կըրնար անմահական պարծանք ըլլալ. լեզուի մը և ազգի մը նախահաս հայրաբան, այսինքն ոտանաւոր բանիւ գրօղն ըլլալ: Իրմէ առեալ ճարտասան և բանաստեղծ հեղինակներ ունի մեր դպրութիւնն, բայց ոչ զոք իրեն հաւասար վայելչաբան՝ միանգամայն յարձակ և յոտանաւոր բանի, մանաւանդ այս եաքինիս մէջ. որոյ արուեստին զանազանութեանն և ճարտարութեանն հնարօղ և վարդապետ իսկ կըրնայ ըսուիլ. վասն զի ոչ ոք իրմէ առաջ այնչափ տեսակ չափերով և ոճով երգեր, տաղեր և քերդուածներ գրած է: Կըրնանք յիրաւի յայտ մանին ալ իր բազմարդիւն մեծ պապը Գր. Մագիստրոսը՝ համարիլ նոր ճամբայ մը փորձող, ինչպէս շատ բանի մեր դպրութեան մէջ և նորոգող դպրութեանց, սակայն այն ճամբան ստուգիւ հարթող, ընդարձակող և պէսպէս բաժնող՝ դարձեալ մեր Շնորհալին է: Մեր հին նախնեաց կամ Թարգմանչաց քերդուածները չունինք, կամ հազիւ նշխարքներ. միայն Ճարականաց մէջ գտուին ոտանաւոր գրուածք ալ, որոց եղանակին սղու-

թիւնն կամ երկարութիւնն երբեմն կ'անյայտացնեն չափական արուեստը. սակայն ինչ որ կը տառապի անոնցմէ, և Յոհ. Մանդակունւոյ ընծայուած ոդեական գլուածքէ մը, այս է, որ մեր հին տաղաչափութեան ձևն՝ նման էր հնագոյն և շատ լեզուաց մայր կարծեցեալ Հնդկաց սանսկրիտ հին լեզուին, որոց տողերուն նման մեր տաղին ալ 16 ոտք կամ վանկ ունի, և չորս անդամ կամ մասն կը բաժնի. փոխանակ բառից պատահական չեշտին (զոր չունի հայերէն լեզուն) առաջին և երկրորդ անդամոց վերջի վանկերուն վրայ այժ տալով, որպէս զի ներդաշնակութիւն առնու քերդուածն. զոր օրինակ.

« Ջրհատոտասէրք իմ սիրելիք, ինձ օգնեցէք վիրաւորիս,
Եւ գորովով մեծ ողորմիւ՝ աղաչեցէք ըզՏէր վասն իմ [1] »:

Եթէ այս ա և ձ անդամոց չեշտերն լաւ զգալի ըլլան՝ շատ հոմաձայն և անուրոշ կ'ըլլայ մեր տաղաչափութիւնն. և առաւել, եթէ ըստ ոմանց, ազատութեն կարծելով՝ անդամներն կարճատուին, փոխանակ չորս վանկի ըստ կամս երկու երեք և կամ մէկի ինչան, ամենևին անարուեստ, խառնակ և անհամ կ'ըլլայ չափաբանութիւնն, մանաւանդ թէ և ոչ չափաբանութիւն: Իսկ հաւասար չորս անդամոց կամ մասանց հոմաձայնութիւնն ալ այլայլելու համար՝ Նախնիք մեր միայն տողին առաջին անդամը կը կարճատեն մէկ երկու վանկով, որովհետև իւրաքին ակիզբն բնական կը սեպեն աւելի այժ մը տալը. զոր օրինակ.

1 Յովհան Մանդակ. երես 384 տպագրին:

« Ընդհանուր քարոզեցին զբանըդ կենաց ընդ ամենայն
զերս,
Թօթափեալք ըզքուն մահու՝ զուարթնոց երկնից հետեւեցան » :

Իսկ եթէ ուզեն աւելի ներդաշնակութիւն մը տալ՝ կանոնատէս անդամոց մէկին չորս մէկալն երեք վանկով կ'ընեն. ինչպէս մեր առաջին Քերդողահայր կոչուած Մովսէս Խորենացին կ'երգէ.

« Ուրախացիր, Սըրբուհի, Գաբրիէլի աւետեօք,
Որ քարոզեցաւ ըզքալուստ՝ արքային Տեառն
ի յերկինից :

Եթէ կարենան չեշտից ոյժը պատշաճեցընել աւելի կարճ բառերու՝ (մանաւանդ երգոց մէջ) այն ատեն լաւ գիտելով և միշտ տողերուն քառանդամութիւնը պահելով, պէսպէս կը զանազանեն զանոնք, ինչպէս կ'երևի Կոմիտասայ կաթողիկոսի Հռիփսիմեանց շարականին մէջ. յորում 4 վանկէն ինչուան միավանկ անդամ կայ, և 14 վանկով տող [1] ինչուան 8 վանկով [2]. բայց այսքան ազատութիւն՝ միայն տողն եղանակաւոր ըլլալուն համար է, որով երգողն կ'երկարէ կարճ մասերը, և փոխանակ չեշտի երկար կը բանեցընէ [3] : Սակայն 'ի վերայ այսր ամենայնի, մեր բնիկ հայկական տաղաչափութեան ձևն ամենէն առաջ բաժնելս է, 16 ոտանեայ և քառանդամ, միայն առաջին անդամն կարճեցընելով երբեմն մէկ վանկով և երբեմն աւելի. իսկ եթէ աւելի տարբերութիւն մը գտուի, անտուղտութիւն մ'է, թէ ոչ և գրչի

1 Քանզի Հասեալ 'ի Թիկունս աներեւոյթ օդոյն Թիւն :
2 Մայր Սիոնի դըստերօքն իւրովք :
Ծընանն կուսանք այգըս բազում » :
3 Մայր Սիոնի դստերօքն իւրովք :

սխալ. և այս կանոնով գրուած են մեծագոյն մասն ազգային քերդուածոց, սկսեալ վերոյիշեալ Մանդակունւոյն ոլբէն՝ մինչև ՚ի ԺԶ դարու քերդուածս ալ: Նոյն չափով ուզեր է գրել և ինքն Մագիստրոս իր հռչակեալ հազարտողեան քերդուածը՝ Մեծ են գործք Աստուծոյ. յորում ուզեր է բովանդակել հին և նոր կտակարանաց պատմութիւնը, երեք օրուան մէջ տաղաչափելու գրաւ դնելով՝ մահմետական Աբրեհիմ ամիրայի մը, զոր և զարմացընելով քրիստոնեայ ըրաւ. թէ և մեզի համար իր աճապարանքն շատ պանծալի չէ. ո. րովհետև անհարթ և անհամ տողեր և ձևեր ալ մտուցեր է, և բռնազբօս հոմաձայնութեամբն ալ տաղակալի կ՚ըլլայ:

Դառնալով առ Շնորհալին, սա գրեթէ այս նախնեաց տաղաչափութեան ձևը բոլորովին թողած է. որովհետև ինքն իր տաղից մեծ մասն եղանակաւ գրած է, ուստի եղանակին յարմարցուցեր է տողերը. իսկ վկպասանական գրուածոց, որք հաւանօրէն եղանակաւոր չէին, այնքան երկար տողեր (16ոտեան) յարմար չէ սեպեր, բարոյական սկզբամբ մը. որ է, տղայոց և համբակաց համար գրած ըլլալն, որոց աւելի դիւրին է կարճ տողերը միտք պահել: Իր հրատարակուած քերդուածոց մէջ, եթէ չեմ սխալիր, մէկ հատ մը միայն կայ այս հին հայկական չափով 16ոտնեայ քառանդամ, և է Աւագ ուրբաթու տաղն Յորդանան[1]. նոյնպէս Վարդանանց շարականը հին հայկական ոճով գրած է. գրեթէ միշտ առաջին անդամն եռավանկ ընելով:

1 « Շնորհօք արբոյ Հոգւոյն լցեալ եղեն սուրբ մարգարէքն,
Շարժեալ ի նմին ժամու մեծ գոհութիւն մատուցանեն ». և այլն:

Շնորհալւոյ տաղաչափութեան մէջ մուծած մեծ նորութիւն մ՚ալ է նոյնաձայնութիւն վանկից կամ վերջացանգ ըսուածն. այս ալ կըրնայ Գրիգ. Մափիսարոսի գիւտ ըսուիլ, Աբաբացւոց քերդուածեան հետեւելով, ինչպէս կ՚ըսէ ինքնին և կը պարծի, և այնպէս ալ գրած է իր հազարատողեանը. և ոչ միայն վերջ մը տողից կամ տուն մը համաձայն կամ նոյնայանգ լըծելով, այլ և բոլոր քերդուածը մէկ ձայնով վերջացընելով, ին, ին, ին. որուն Շնորհալին ալ հետեւած է և ուրիշներն ալ յետոյ. այս ձայնս (ին) աւելի քնական և գիւրին գտնելով, թէ բայից և թէ բառից հոլովմամբ և դիմորոշ ն տառի յաւելմամբ: Սակայն յայտ է որ շատ մը տողերու այսպիսի հոմաձայնութիւնն եթէ 'ի սկզբան ներդաշնակ ալ լսուի ականջի՝ կը թմրեցընէ զայն, և լեզուին շնորհքը և հարստութիւնը կը նուազեցընէ, մանաւանդ եթէ խմաստի և արուեստի կողմանէ ալ տկար ըլլայ քերդուածն, կամ թէ Շնորհալւոյ մը չըլլայ գրողն. որ թէ և նոյն ձայնով գրեթէ 4000 ուղղատեան տող գրած է Յիսուս որդի ըսուած գիրքը, բայց խմաստից ազնուութեամբը կը զմայլեցընէ. այլ՝ ըրքան ևս կըրնար յափշտակել վրէդ՝ եթէ ուղէր յանգերը ըստէպ փոփոխել, ինչպէս Բան հաւատոյ քերդուածին մէջ [1], կամ գէթ քիչ մը ուշ փոփոխել, ինչպէս Խաչին (Բարձրացուցէք) Նեբբողեանին մէջ, կամ Եգեսիոյ Ողբոց: Ի՜ն վերջաւորութեան մօտ է ան վերջայանգն ալ. և ասով կազմած է Յաղագս երկ-

1 Ինքնին Շնորհալին այս քերդուածին մէջ յանգաց փոփոխութիւն ընելը՝ որ ակընջի ձանձրալի չըլլայ՝ կը վկայէ յիշատակարանին մէջ.

Ոչ մի տառիւ վերջ յանգական,
Զի մի ծուլից լուր ծանրանան.
Այլ խորաբար փոփոխական,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան:

նից և զարդուց նորին գեղեցիկ 12ոտանեայ քերդուածն, թէ և սա երկար բան չէ, այլ 200 տողէ չափ: Անշուշտ աւելի հասարակ և անախորժ է եաւ յանգն, որով կազմած է Շնորհալւոյ բուն Վիպասանութիւն ըսածն, որ եթէ այսու մասամբ իր գրուածոց մէջ ամենէն հեռւակն է, յիշելու է որ իր գրուածոց մէջ ալ ամենէն առջինն է, և մանկութեան գործ, ինչպէս ինքնին կը վկայէ անմեղադրութիւն խնդրելով: Հօս գրուածոց քննութեան հետ նորէն մեր պատմութեան թեղն ալ խառնելու է:

Ինչպէս վերը յիշեցինք՝ Շնորհալին քահանայ էր՝ բայց դեռ անկոփար հոգւոյ, ըստ իր ըսածին, այս առաջին գրուածը հրատարակած տեն, յամի 1121, իր կենաց 19դ կամ 20դ տարին, կամ թէ աւելի ալ առաջ գրած: Նոր թեւերը պարզող քերդողին նպատակն կ'երեւի իր նախնեաց կամ Պահլաւունի ցեղին յիշատակը թողուլ. բայց թերեւս իբրեւ անձնական երեւոյթ մը չտալու համար՝ կը յարէ զայն բոլոր Հայ ազգին ցեղապետութեան յիշատակին վերջը, այսինքն Հայկազն և Արշակունի ազգապետաց շարքին, զոր ըստ Մովսէսի Խորենացւոյ պատմութեան կը համառօտէ, ազգին քրիստոնէութեան գործն ալ յիշելով 'ի ձեռն Ս. Լուսաւորչի. որոյ ցեղին վերայ ալ վիպելով՝ անկէ ետքն կը ցուցընէ զնոր Պահլաւունիս, և Մագիստրոսի վերայ երկար խօսելով՝ ապա անոր որդւոյ Գր. Վկայասիրին վերայ, և յետոյ իր եղբօր յաջորդութեանը և գինքը դասախրատելուն վերայ գրելով կ'աւարտէ, 1600 ութանեան տողէ աւելի: Իսկ վիպասանութեան սկիզբն ամենայն բանի սկիզբէն կ'առնու.

« Աստանօր սկըզբնաւորեալ
Բանիս ըզբանն ըսկիզբն եդեալ,
Այն որ ընդ Հօրն է հացեալ. և այլն »:

Անկէց առաջ ալ նախերգանք մ'ունի (44 տող), սկսելով,

« Պարտական է հօր՝ որդի,
Հատուցանել վարձըս ծնողի
Եւ անդրադարձ փոխարինի
Բազում երկանցըն պատշաճի » .

որով կ'իմացընէ թէ իւր պարտք երախտեաց կ'ընծայէ զայն՝ իր հարց, և հաւանօրէն իր հայրապետնամ կաթողիկոս եղբօր :

Որչափ ալ վերը հետևակ գրուած մ'ըսինք այս վիպասանութիւնս, Շնորհալւոյ արշալոյս մ'է, մանաւանդ երբ իր տարիքն ալ յիշենք, և անկէ առնլի՝ իր գիւտը. վասն զի ինչուան այն առեն դեռ այսպիսի գրուած մը չէր երևցած մեր գպրութեան մէջ, այլ ինքն քերդողական վիպասանութեան օրինակ ընծայեց : Բաց 'ի նոյնանգութենէն՝ (էալ, էալ) չարագրութեե խորհուրդ չունի, այլ ոտանաւոր է իր ուրիշ գրուածոց նման, և ազնիւ խնամոյ բոլոքոնները ցուցընէ. ևս առաւել իր աստուածաբանական միտումն և յատակ տեսութիւնը, Ս. Երրորդութեան վերայ կանխաբանութեանը մէջ : Կ'երևի նաև ազգային եռանգուն ոգին, զոր չեն մարած հոգևոր և աստուածաբանական կրթութիւնքն, այլ իրենց գերագոյն լուսովը աւելի պայծառ և մաքուր ցուցընեն : Ասոնց վերայ՝ բաւական ձարտարութիւն ալ կ'երևի համառօտելու ազգին պատմութեան կարևոր յիշատակները և անձինքը. որով աւելի ախորժելի երց կընայ ըլլալ, քան իրմե առաջ Խորենացին համառօտող արձակաբան պատմիչք : Մինչ բանիւ, նաև այս անկաթոռ հասակի և նուաստացեալ համբաւի գրուածն, իբրև կատարեալ և կատարելոյ գրուած մ'ընդունեցաւ ազգն, մանաւանդ մեր-

Ձաւորք ժամանակաւ. իր կենսագիրն պարզապէս կը յիշէ այս գործս. « Նա և զնախկին պատմա-
« գրեալն ի Մովսիսէ Խորենացւոյ՝ յաղագս նախ-
« նեացն Հայոց՝ վերստին չափաբերութեբ պատ-
« մէր, սկսեալ ի սիտանեանն Բելայ և ի նախ-
« նոյն մեր Հայկայ, և հասուցեալ մինչև ի հարս
« իբրեանց և յինքեանս »: Ուրիշներն աւելի գո-
վութեամբ ալ յիշեն, և նմանողութեան օրինակ
կ'առնուն. որոց գլխաւոր է Վահրամ րաբոն ըս-
տացած վարդապետան, 150 տարի ետև. որ յորդո-
րանօք Գ Լևոն Թագաւորի զուարճացողի և սիրո-
ղի Շնորհալւոյ Վիպասանութեան, շարունակեց
զնոյն, նոյն ոճով և ձևով, նոյնպէս վերջաւո-
րութեամբ, 1500 տողի չափ. յորում պատմէ
Ռուբինեանց ցեղապետութիւնը, սկսեալ ի յար-
ձակմանէ Թուրքաց, և բագրատունեաց վերջին
Գագիկ Թագաւորին պանդխտութենէն մինչև
իր ժամանակը, իբր յամին 1275. Թէպէտ յան-
դգնութիւն էր, կ'ըսէ, « ի հրաշագեղ Վիպասա-
նութիւն երանելւն առն՝... (Ներսէսի) յարել ըզ-
« բանս իմ հիւծեալ ». այլ մտածելով որ ոսկե-
գոյն գործուածոց մէջ ալ երբեմն սև կը խառ-
նուի՝ վերջապէս կը հաւանի գրելու:

Շնորհալւոյ քերդողութեան կամ չափաբա-
նութեան վրայօք խօսքերնիս գլխաւորելու հա-
մար, գոնէ գրուածքին արուեստական կերպին,
ըսենք՝ որ այս յիշեալ կերպով (ութոտեան և նը-
ման վերջյանգով) գրած է իր երկարատոյն քեր-
դուածները, Յիսուս որդի, Ողբք Եդեսիոյ, Բան
հաւատոյ, Վիպասանութիւն, Խաչն Ներսողին
կէսը, Ժամասացութեան երգերն, Զարչարանաց
և Ննջեցելոց և ուրիշ Շարականներ, և այլն: Իսկ
կարճ քերդուածներն՝ պէսպէս չափերով գրուած
են, և ոմանք անյանգ են, ոմանք նոյնպէս. ոմից
չափն ալ 13էն ինչուան 8 կը զանազանի. այս ևս

քի պզտիկ չափով են Աստուածա լուսոյ և Աչխարհ ամենայն՝ Աստուածեան ժամանակութեան մէջ մըտած ջերմեռանդն երգերն: Այս կարճ քերդուածոց կամ տաղից վրայ՝ ուր որ յանգերն կը փոփոխին ամեն զոյգ տողի, յիրաւի զանազանեալ ներդաշնակութիւն մը կու տան, և ճարտար գրչի մը փորձ կը ցուցընեն. ինչպէս օրինակի համար, Սողոմոնի Աստիկաց Յիշատակարանն, որ կը սկսի

« Աստուածեղէն հոգւովն ի մէն՝
Խաղաղութիւն անուն արքէն », և այլն:

Աստ մէջ թէ խմաստից ամփոփման, թէ շարադրութեան և թէ այս յանգերու յարմարութեան մեծ ճարտարութիւն կայ. և չափէն աւելի կըրնանք ըսել. վասն զի ասոնցմէ դուրս բնադատ հարկ մ'ալ դրեթ է իրեն հեղինակն, ոչ միայն այբուբենի կարգով տողերը սկսանիլ՝ այլ և նոյն գրեթով վերջացընել և յանգ կազմել. որ որչափ ալ աւելորդ կամ խոտելիկ մը երևի, այնչափ ճարտարութեամբ և բնական կերպով յօրինուած է, որ խաղն և հարկն չի նշմարուիր, այլ միայն վայելուչ զուգաւածն և ձայնն. և ինչ ալ որ ըլլայ՝ նաև յայտ մասին առաջին կ'երևի Շնորհալին, թէ իբրև հնարող և թէ իբրև գերազանցող: Սովորութիւն ըրած է կարճ քերդուածներէն շատն այս այբուբենի կարգով տողել. երբեմն ալ վերջագարձ կարգաւ շարելով, այսինքն Աբէն՝ ի Քէ երթալու տեղ, Քէէն յԱբէ գառնալով. ինչպէս է վերը յիշեալ Աստիկաց յիշատակարանին ուրիշ յիշատակ մը, նոյնպէս նոյնագիր վերջաբանդ.

« Քաղցրագունիս այս բաղձանօք
Լըցեալ հոգիս մեռեալ մեղօք », և այլն:

Շատ անգամ անապրշում կամ տոլապրշում առաջ
իր անունը կը կապեն, Նէրսէս, կամ Նէրսէսէ է
Բանս, կամ Նէրսէսէ նշապէ կամ Տէր Նէրսէսէ կո-
ղոլիսոէ Հայոց. վասն զի շատ տալերն իր կաթո-
ղիկոսութեանը տակեն գրած է. երբեմն ալ անունց
անունը՝ որոց համար գրած է. զոր օրինակ Աստե-
ւց և երկնից վարդօք քերդուածին անապրշուիք
կը կազմեն՝ Ա՛նիւթ էծնէլ ընկալ՛է Նէրսէսէ պայս բան:
Նոյնպէս իր եղբօրորդւոյ Ապիրատի համար գը-
րած Ա- Ասէրոպն՛է Տէր Նէրսէսէ բան լսէով. կամ
տալին նիւթը, Բան՛է Վիայան՛է Նէրսէսէ. — Ի
Ասէփաննոս. — Սրբոյն Գրիգորէ երգ՛է Նէրսէսէ. —
Նէրսէսէ երգ՛է Քառասուն Վիայան Աստուծոյ, որ՛է
Սէբաստիա կոպարէցան. — Ա- Հռիփսիմէ կոյան. և այլն:
Ա՛յս խաղերէն կամ կապերէն զատ՝ երբեմն (այլ
քիչ անգամ) այն կրկնաձայնութեան կերպն ալ
բանեցուցեր է, որ ամենահին է յարևելեան քեր-
դողութեան, կամ և սկզբնական արուեստ. և է
տոլին վերջին բառուէն սկսանիլ յաջորդ տողը:
Ա՛յս բանս կ՛երևի սուրբ գրոց հրէարէն բնագրոց
մէջ. նոյնն կը նշմարի մեր լեզուին ալ հնագոյն
ժնացեալ երդոյն մէջ, որ գուցէ քանի մը դար ա-
ռաջ երգուած է քան զՔրիստոսի Թուականն.
և է,

« Երկնէր երկին, երկնէր երկին ». և այլն.

ըստ այսմ օրինակի են Նարեկացւոյ քանի մը տա-
ղերն, ըստ այսմ և մեր Շնորհալւոյ տաղքն՝ ի Լու-
սաւորչէն՝ Սրուէբէոյ յայնէս, ի Քառասուն վկայն՝
Նոր ֆն է հնչէն, և յՈրդեան Ողոտման, և այլն.
ամեն երկրորդ տողի վերջի բառն՝ յաջորդին սը-
նագլուխ ընելով. ինչպէս.

« Որդեքն Ողոտման՝ որք՛ի վերուստ ոգոտացին,

Յամպոց հրեղինաց հողմով Հոգւոյն հընչեալ
յաշխարհս.
Յաշխարհ ծարաւուա՝ զանձրև կենաց հոսեալ
յերկինից ». և այլն:

Գալով քերդուածոց նիւթերուն կամ առարկային, յայտ է որ 'ի Շնորհալւոյ աշխարհային և պարզ նկարագրական բաներ պէտք չէ սպասել. ամեն գրուածն ալ հարկաւ բարոյական են, այլ ոչ զուտ իրատական կամ հոգևոր. այլ ասկէ սկսեալ, կամ թէ ըսենք յԱստուածոյ և 'ի հաւատոյ խորագոյն խորհուրդներէ՝ ինչուան յԱռակս և 'ի Հանելուկս կը զանազանի: Շնորհալին գիտած է զամենայն 'ի կրթուելիւն մարդկան գըրել և քերդել. և լաւ գիտէր որ բարուց կրթուելիւնն չէ միայն 'ի հոգի մարդուս, այլ և 'ի միտս և 'ի սիրտս. այս երեք զօրուելեանց համար ալ գրած է զանազան բաներ. ունինք պարզ Հոգեաւոր, հաւատոյ և Քրիստոսի անօրինուելեանց վերայօք, խորհրդազգած և աղօթախառն. ունինք 'ի պաշիւ և 'ի յիշատակ ածնից Քրիստոսի, Տիրամօրն, Սրբոց և հրեշտակաց, որք սովորաբար Տոպ կ'ըսուին. ունինք Խրատական և վարժողական, ինչպէս են աղայոց համար գրուածներն՝ այբուբենական կարգաւ և անուամբք անատեղով. զոր օրինակ.

« Այբն առաջին՝ ըզքեզ, որդեակ,
Հանէ յիմաստն գերակայ...
Գիմըն գանձէ քեզ բիւր բարի
Գրեալով զիմաստ 'ի տախտակի ». և այլն.

կէսքն ալ Բարոյական՝ զարդացեալոց համար. ինչպէս են Սողոմոնի գրոց վերայօք յարմարցուցած յիշատակարանքն: — Ունի և Վարդապետական քերդուածներ, ինչպէս Յաղագս երկնից և զարդուց նորին. — ունի Թուղթեր, այսինքն իբրև նամակ

գրած, միևնոյն կամ ընտանեկան. այսպէս է գրածն առ Ապիրատ.

« Արեգական լուսոյ ծագման
Սէր քո առ իս համանըման ». և այլն.

կամ « Առ ոմն իշխան արևելեան (Հայոց) վասն որդւոյն իւրոյ ատրաժամ մեռելոյ.

Անառես է յոյն ատտուածոյին »:

Ծանօթ են Վիպասանութիւնք. մեկն նախայիշեալն մատոյ երախայրիքն՝ Ազգաբանութիւն Հայոց. միւսն յետոյ յիշելի Ողբքն Եդեսիոյ: Ամենէն ընտանեկան կամ Ոտիկան քերդուած՝ է Հանելուիւ կամ Խոհանի ըսուածն, իբրու Ո-րսխականի, զըւարճութեան ժոզովոյ և կոչնոց առեն ըսուելու և լուծուելու համար: — Ահա ամենէն յետագաս տեսակս ալ պէտք է նշանակել ըստ բաղում գըլխոց. նախ իրենց հիւսուածքին անբաժանելի չըննորհքն. երկրորդ առաջնութիւն, վասն զի Ներսէսեան առաջ այս ձև գրութեան օրինակ չունինք. երրորդ լեզուն, որ ռասիկօրէն կամ աշխարհաբառ լեզուի եթէ հնագոյն գրուածն չէ՝ գոնէ ոտանաւորի մէջ հիներէն է. չորրորդ՝ և մանաւանդ առաջին՝ հեղինակին նպատակը այսպիսի գրուածոյ մէջ, որ է վերպինեալ բարոյական կրթութիւնն՝ հանդերձ զբօսանօք և սրութեամբ մատոյ:

Հիմայ եթէ քիչ մ՝ալ խոհասիրց արժէքն և քերդողական ու բանաստեղծական հանճարը քննել ուզենք, նախ պէտք է անհակառակ և անտարակոյս, որով և ոչ երկար քննութեամբ՝ խոստովանիլ, որ իբրև քերդող կամ չափաբան՝ Ներսէս Շնորհալի՝ մեր լեզուին մէջ կամ առաջինն է կամ առաջնոց հաւասար. որ և է պարզ քերականն մը կրնայ այս բանս դատել: Իբրև բանաստեղծ ալ՝ ընդ առաջին դասուելու է աներկբայապէս, մա-

նաւանդ եթէ գրուածոց կամ նիւթերուն զանազանութիւն ալ նկատուի: Զեմք իշխեր բանաստեղծի յանկարծական թռիչներով հաւասարել զինքը Գրիգորի Նարեկացւոյ և նմանեաց, կամ խոր վեմութեամբ՝ Սիւնեցի և Մոկացի Սահմանոսեանց, կամ այն առաջին Թարգմանչաց վեմութեան՝ որ հին դարերու սեփական կնիք է և գրեթէ անհնար է նորագոյն դարերէ պահանջել. 'ի վերայ այսր ամենայնի ունի Շնորհալին ալ զանազան քերդուածներ և քերդուածոց մասեր, (ինչպէս Ողբս Եդեսիոյ և 'ի վերջ Յիսուս որդւոյն), որ բանաստեղծութեամբ ալ վեմութեամբ ալ պարզութեամբ ալ՝ ընտիր և գնահատելի են: Թէ և այսպիսիները դատել և օրինակ ընծայել դժար է. վասն զի քննաբանից ախորժակք ալ դժար կը միաբանին յայսմ, սակայն կրնանք անոնց դատաստանին և մեր ընթերցողաց յիշեցընել Շնորհալւոյ քանի մը արտադրութիւնները. Մեծի ուրբաթու տաղն, Անեղ Որդին (Ձափաբեր. երես 381), Ծարաւեցաւ Տէրն 'ի խաչին (386). Խաչի տաղն Նոր դրախտին էիեղէցւոյ (412), և անոր Յորդորակն՝ « Կենաց փայտ արմկեալ ըզքեզ անկողին զԵդեմ ». (413). Քառատուն վկայից տաղին Յորդորակն, « Բանիւ աւետաւոր բարառնաբար բարբառես « ցուք », (եթէ հարազատ Շնորհալւոյ մտաց ծընունդք են ասոր խմաստքն, վասն զի Ս. Մարութայն Արեւելեան Վկայից Ողբին կը նմանին). Ս. Հռիփսիմեանց վրայ վայելուչ նկարագրական տաղն.

« Երջանիկ հոգիսհրաշ
Կոյսըն մնքուր սուրբ Հռիփսիմէ ». (471) և այլն:

Շարականաց մէջ ալ՝ Վարդանանցն՝ Աւետեալք սուրբ հակառակն, Կիրակի օրուան Նորատեսչեան վերջին տունն, և այլն, և այլն:

Եթէ մէկ ուրիշ զգացմունք մ'ալ փնտռենք, որ կ'ըսուի ֆոֆոն կամ գորովական, կամ սրտագին, յայտ Շնորհալին չունի իրեն հաւասարող. Յիսուս որդին, Ողբն Եգեսիոյ, շարականք Ննջեցելոց, շարականք Զարչարանաց կամ Խաչելութեան, զանազան տաղք և մանր երգք ժամասացութեան՝ անժխտելի օրինակներ կ'ընծայեն մեզ. ասոնց և նմանեաց մէջ Շնորհալին կըրնայ ըսել մինչ որ այն չարչարանաց երգոց վերջի տանն մէջ, « Սիրտ իմ առ քեզ աղաղակէ »: — Սիրտ, հոգի և միտք, և անոնց բացատրութիւնն բանիւ. Շնորհալեոյ անձին մէջ միացեալ ձիրք մ'է, իբրև'ի զանազան համեմոց և հոտոց խառնեալ՝ նիւթ մը, որ և'ի միակերպութեանն՝ ունի սքանչելի զանազանութիւն ճաշակաց: Այս գորովական զգացման կամ փափկաբանութեան հետ՝ նկատելով իր խմաստից միշտ աղնուութիւնը և օծումը, շատրութեան միշտ վայելչութիւնը, և ձևոց զանազանութիւնը, Շնորհալին ոչ միայն մեր նախակարգեան հեղինակաց կը հաւասարի արժէքիք, այլ և կը գերազանցէ զամենեսին առ հասարակ, թէ իրեն և թէ անոնց մեզի հասուցած գրուածներէն դատելով. և եթէ մէկ կամ միւս տաղանդոյ մասին մէջ առաջին չէ, բոլոր մնաւոր և գրաւոր յատկութիւններէն մէկ տեղ բերելով՝ գժար կ'ըլլայ իրմէ առաջին մը գտնել: Այսքան գեղեցիկ ձրից և յատկութեանց միութիւնն է որ մեր հեղինակը Շնորհալի կ'ընէ. իր գերագոյն յատկութիւնն՝ է անհաւասարելի հաւասարութիւն մը յամենայնի: Շնորհքն, եթէ չեմք սխալիր, այս կերպ գերազանցութիւն մը կը պահանջէ. շնորհքն ինքնին սքանչելի հաւասարաչափութիւն մ'է: Կարգէ դուրս հանճար մը՝ թուի թէ շնորհաց չափն կ'անցնի. սուր և բարձր բանաստեղծական թռիչք կամ խորին վեհմութիւնք՝ գժուարաւ չա-

վին և կանոնի մէջ կը մնան. պայծառ և անպին ա-
կանց կը նմանին, այլ առանձնակ բաներ են, շարք
մը, հիւսուածք մը, ամբողջ մը չեն ձևացըներ.
այնպիսի ամբողջ մը՝ որ հաւասարապէս աքանչելի
ըլլայ ամենայն տեսութեամբ, ամենայն յատկու-
թեամբ: Մեր հեղինակին շնորհքն այնչափ և այն-
պիսի է՝ որ իր քով անանկ սասակիկ և յանդուգն
թռիչք մտաց ալ՝ շնորհքէ պակաս կ'երևին. ինքն
այնպիսի ամբողջութիւն մ'ունի՝ որոյ պակասու-
թիւն չի բերեր աւելի բարձր կամ խոր թռիչք մը
չունենալն. թերևս և պակասութիւն բերէր ունե-
նալն: Միով բանիւ այնպիսի բարձր և խոր թռուց-
ցիկ հանճար ունենալէն վեր է՝ հանճարոյ թևերն
անգամ կառավարել, և այն օգտակարիկ հրապա-
րիկ երկնապարիկ երիվարն կամ արծուին անգամ
սանձել, և շնորհաց չիտակ շաւղէն վազցընել, ոչ
սասակազայր արևներու պարուհակաց մօտ, և ոչ
երկրաւոր ցրտութեանց, այլ միջին ճամբէ մը՝ որ
երկնից մէջ է, այլ երկրիս վրայէն: Ոչ այնքան
տարակուսիմ թէ կըրնար Ներսէս աւելի բարձր
խոյանալ՝ի քերդուածն և յիմաստս, որքան թէ
կըրնար այնպիսի գերագոյն խոյանաց մէջ ալ՝ այս-
պէս շնորհաբան և շնորհալի մնալ: Սակայն ոչ լոկ
գրաւորական արուեստ մ'էր Ներսէսի մտաց թե-
ւերը այսպէս նուաճելով՝ շնորհաց հարթ ու վարդ
ճամբուն մէջ շարժողն, այլ և հոգւոյն աքանչելի
և աւելի նուրբ և սուրբ յատկութիւն մը, որ չէր
թողուր իրեն ծայրայեղ երևնալ՝ նաև՝ի հան-
ճարս, գերազանցելովն հանդերձ. յատկութիւն
մը՝ որ իր բազմակայլ շնորհաց ալ շնորհքն կըր-
նայ ըսուիլ, կամ կենդրոն ճառագայթից նորին.
զոր և յետոյ աւելի յստակ պիտի նկատենք: Հի-
մայ լմընցընենք ինչ որ ընդհանուր գիտելիք կամ
դիտելիք կայ չափաբանական գրուածոց վրայ. ո-
րոցմէ մեզի ծանօթներն 15,000 տող կ'ըլլան:

# Ի.

## Շնորհալի երգեցող. — երաժշտութիւն Հայոց։

Յայտ է որ այս գրուածոց մէկ մասն, Տաղերն և Շարականք, ոչ միայն չափով են այլ և երգելու եղանակաւ։ Շնորհալին ինչպէս ճարտար և անուանի էր քերդողութեամբ, և այնպէս ընտրող ա- ռանձ և ախորժակ ունէր ներդաշնակութեան, հարկ էր որ երաժշտական ընտիր ճաշակ ալ ունենայ։ Ոչ մակամաճակական հետևանք մ'է ըսածնիս, այլ և վկայեալ աստուածութիւն. և այնքան առա- ւելութեամբ, որ իրեն գլխաւոր ձրից մէկն ճանչ- ցուեցաւ. մինչև իրեն երկրորդ մականուն և յայտ- արար մ'ալ եղաւ ԵՐԳԵՑՈՂՆ [1] կոչուիլ, ինչպէս կ'անուանենք և ծանենք մենք զՍ. Ռոմանոս Ե- ղեսացի սարկաւագն Յունաց, զոր իրենք իրենց լեզուով կոչեն ՍէմՓօնիոդէս։ Աւելորդ է յիշա- տակել, թէ ոչափ որ մարդկային սրտի քաղցր է երգն, այնքան ալ պանծալի է քաջ երգահանն, և այն մանաւանդ որ յատուկ մակադրութեամբ երգեցող կոչուի։ Սակայն պէտք չէ հարևանցի յիշատակաւ մը միայն նկատել զայս 'ի Շնորհալին՝ և թողուլ երթալ. այլ հարկ իսկ է ճանչնալ այս երևելիս առաքեալ կամ առաքը՝ երաժշտու- թիւնը, իր մէկ մեծ շնորհք կամ շնորհաց յար- դարիչ մը. և երբ ինչուան հիմայ նկատածնիս 'ի Ներսէս և յետոյ այլ աւելի նկատելիքն՝ գումա- րենք իրարև 'ի մի պատկեր և 'ի մի տեսութիւն,

[1] Այսպէս կոչէ Սամուէլ Անեցի, ժամանակակից Շնոր- հալւոյ։

չեմք կրնար ուրիշ կերպով տեսնել զնա՝ բայց իբրև բովանդակ բանական երաժշտութիւն մը, կենդանի ներդաշնակութիւն մը. աստուածային և բնական շնորհօք խառնեալ ամեն մէկ ձիլքն՝ մէկմէկ ձայնի նման, որոց բոլորն մէկ եղանակ կազմէ. ոչ երգեցող միայն, այլ և երգ ողջոյն, յարմարեալ շնորհազարդ շարժմամբք մարմնոյ, շրթանց, մատանց, մազց և հոգւոյն: Թէ արդեօք գեղեցիկ գրուածոց և եղանակաց նման գեղեցիկ և անոյշ ձայն ալ ունիքը. — հաւանական կրնանք ըսել. և եթէ չկարենանք հաստատել բնական գործարանաց կամ կազմուածքին տուրքը, չեմք տարակուսիր կրթութեամբ, արուեստով և շնորհօք քաղցրութեանը վրայ. գուցէ երգեցող ազնուն ալ՝ ոչ միայն երգահանութիւնը այլ և ձայնական կարողութիւնը նշանակէ:

Գիտնալու է որ երաժշտութիւնն կամ երգեցողութիւնն, գէթ ըստ եկեղեցական կարգի, մեծ պարապմունք և արուեստ մ'էր, և կրնանք ըսել եղած է ամեն ատեն՝ մեր վարդապետանոցաց և վանորէից մէջ. թերևս և միակ զարգացած արուեստ չափաբանականաց մէջ՝ յետ քերդողութեան: Նոյնպէս յայտնի է թէ մեր ազգն ինչ մեծ վարկ և սէր ունի իր հին օրըհաղան երգողաց կամ շարականաց հեղինակաց վրայ, որով շատ հեղ այս գրոց հաւաքման ձեռնարկը կը տպագրէ մեր երաժշտութեան վրայօք գրուած խօսք մը, կամ գովեստ մը երգահանաց վրայ, կամ ցանկ մ'անոնց անուանց, սկսեալ'ի Ս. Սահակայ և Մեսրովպայ և յաշակերտաց նոցին. որոց թարգմանութեան արուեստին հաւասար պարգև մը համարուի և երաժշտական գիտութիւնն. և յայտմ մասին ևս՝ որպէս 'ի քերդողութեան՝ գերազանցեալ պատուի Մ. Խորենացին. մինչև աւանդախառն պատմութեամբ գերագոյն յերկս նորա գրուի Ո-ցա-

խոյէր Աբդուլ-Հի սքանչելի շարականն, զոր և հրեշտակային ձայնով երգած է կ'ըսեն մանաւոր առթիւ մը մէջ։ Ազգային լեզուի յառաջդիմութեան սըրբազան աւանդին հետ՝ նախնիք այս սրբազան երգեցողութիւնն ալ աւանդեցին յաջորդաբար։ — այս երկուքս՝ առաւել քան զամենայն ցանկալի աւանդութիւնս։ — և ասոնցմով՝ աւելի քան թէ այլ ամենայն մասամբք բանական արուեստից՝ յաջողեալ են մերայինք՝ իբրև հազարամեայ դարու միջոց։ առնուլ մեր շարականաց հաւաքմունքն՝ որ 800 տարուան գործ է, այնքան զանազան դարուց և դիպաց միջոց ալ՝ ազնուութեան ընորհքը, արժէքն և ոյժը պահած է։ — Շնորհալւոյ Երկեցող կոչուին, իրմէ մնացած մեր եկեղեցւոյ բազմաթիւ երգերն և տաղերն՝ յայտ մասին ալ զինքն թէ ոչ ժամանակաւ առաջին՝ արդեամբք ընդ առաջինս կը դասեն, մանաւանդ թէ առաջին և վերջին։ որովհետև ինքն լրացուցած է ժամասացութեան երգերը, իրմէ վերջը՝ քիչ շարականք աւելցած են։ Այս իր շնորհքը լաւ ճանչնալու համար՝ կ'արժէ որ քիչ մ'ալ երկարաբանենք այս արուեստիս վրայօք։ ինքնին խակ երաժշտութեան ոգին ալ կարծեմք ներկ մեզի։

Ազգային քերդողութիւն կամ չափաբանութիւն և ազգային ոճ մը ձարտարապետութեան, կըրնային դուշակել տալ որ Հայք ազգային երաժշտութիւն ալ ունեցած պիտի ըլլան, գոնէ այնչափ որոշ և իսկատիպ՝ որչափ են այդ երկու չափական արուեստքն, և գոնէ բաւական ընտիր ճաշակ մ'ունեցած են յայտմ ալ։ և որչափ ալ Մ. Խորենացի մեղադրէ մեր հնագոյն նախնեաց անփոյթ ըլլալը երգարանաց բանաւորաց, աւելի դրաւորի քան եղանակաւորի համար խմանալու է ըսածը։ որովհետև ինքնին շատ անգամ կը յիշէ Հայկազանց վիպասանից հետ՝ Ցըցովք և Բամբ-

ռամիք երգիչներն ալ. իրմէ առաջ ալ՝ Բուզանդ, իրմէ վերջ ալ այլք՝ երգասէր ցուցընեն զՀայս: Իսկ մեր միջին և յետին դարուց գրողք՝ Ս. Թարգմանչաց կ'ընծայեն՝ ինչպէս շարականաց շարադրութիւնը՝ նոյնպէս և եղանակաց հնարումը: Յայտնութիւնքն Ս. Սահակայ համար կ'ըսէ, թէ 10 ձայն բաժնեց եղանակները, և աղուաբար կ'աւելցնէ, « Ըստ թուոյ տասն արարածոց (!) 'ի չո-
« րից ձայնից 10 բարդեցաւ. և չորս ձայնք 'ի չորս
« տարերցս ունին զգայութիւնքն. որպէս և ա ձայնն
« 'ի հողոյն, և բն 'ի ջրոյն, գն 'ի յօդոյն, դն 'ի
« հրոյն. և 'ի չորս ձայնիցն՝ բաժանեաց չորս կողմ.
« (և) վառ և վերջ երկու առեղին: Ունք ունին
« և այլ յատկութիւնս. զի ա ձայնն 'ի հիւանա-
« կանէն է. բն 'ի գարբնէն. գ 'ի գետոց. դ յաղո-
« րեաց. ե յերկաթոյ. զ 'ի ծովու ծփանաց. է
« յանասնոց, ը 'ի գազանաց. թ և ժ 'ի հաւուց »:
Ուրիշներն կ'ըսեն թէ հին Սահակեան երաժիշտ մը 26 եղանակ հնարեր է՝ բնական երաց և կենդանեաց ձայներէն առնելով: Հաւանականն այս է որ թէ հին ազգային եղանակաց և թէ Յունաց եկեղեցական երաժշտութեան յարմարցուցած են Թարգմանիչք՝ մեր եկեղեցւոյ երգերը: Շատ հեղ եղանակաց համար ըսուած և տաղից վրայ գըրուած է 'ի գլուխ մեր՝ Խաղովային եղանակ կամ ձայն, լաւ և ճարտար երաժշտական ըսելու մըտքով. այս անունն յայտնէ զԽաղով փերվիզ կամ Ապրուէզ անուանի Թագաւորն Սահմանեանց Պարսից, Զ դարուն վերջը և Է ին սկիզբը. որ կ'ըսուի թէ շատ երաժշտասէր ըլլալով՝ երկու ճարտար երաժշտաց ձեռքով այս արուեստը կանոնեց և զարգացուց. մէկն էր Սարգիս, զոր Հռոմ կ'անուանեն, միւսն Պարպուտ կամ Պէրպուտ Շիլրաղցի, որոյ անուամբ նուագարան մ'ալ յիշուի նաև Հայոց մէջ Բարբուտ կոչմամբ, որ փոխա-

նակեց ղՀին բամբիռն Հայկազանց: Այն առեն-
ները Հայք դեռ Պարսից իշխանութեան տակ և
անոնց արտաքին սովորութեամբք ալ վարուէին.
շատ հաւանական է որ Խոսրովայ երաժշտաց ա-
րուեստն՝ եթէ անծանօթ էր իրենց, անոնցմէ
ընդունեցան, և այնուհետեւ սովորութիւն եղաւ
մեր երաժշտաց ալ՝ խոսրովային անուանել անոյշ
և քաջարուեստ եղանակները. ինչպէս այն իակ
մեր Շնորհալւոյն համար կ'ըսէ Կիրակոս պատ-
միչ. « Կարգեաց... քաղցր եղանակաւ, Խոսրո-
« վային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտա-
նաւորս »:

Սահանեան Խոսրովայ ժամանակակից կաթողի-
կոսն մեր Կոմիտաս՝ բանաստեղծութեանը հետ
երաժըշտական ախորժակը կ'իմացընէ Հռիփսի-
մեանց շարականին մէջ: Զնոյն արուեստ պէտք է
ընծայել և մեր ամենէն հին համարողին՝ Անանիայ
Շիրակացւոյ, որ մօտ էր ժամանակաւ վերոյիշե-
ցոյն: Իակ յաջորդ ը դարուն սկիզբը Սահակ
Սիւնեցին իր գերազանց շարականօքն, և իր քոյրն
Սահակադուխտ՝ երգահանութեան շատ մեծ համ-
բաւ թողած են: Իբրև մուզայի մը՝ կու գային այս
տիկնոջ դաս դաս մարդկան՝ լսելու և վարժելու.
և ինքն՝ վարագուրի ետեւ կեցած, վանն պարկեշ-
տութեան, կը սովրեցընէր: Անշուշտ այնպիսի ե-
զանակաց վրայ զմայլեալ՝ դարուն պատմիչն (Ղե-
ւոնդ երեց) կ'ըսէր. « Հրեշտակական երգք՝ 'ի
« վերայ երկրի »: — Ժ դարուն մէջ երբ Բագրա-
տունիք ազատեցին զաշխարհս Հայոց յԱրաբա-
ցւոց բռնաբարութենէն, և վանորայք նորոգիլ սկը-
սան, սրբազան երաժշտութեան արուեստն ալ
նորէն զարգացաւ, և դարուն պատմիչն (Ստեփ.
Ասողնիկ) և այլք՝ մեծ գովութեամբ կը յիշեն կա-
մրջաձորոյ, Նարեկայ, Տաթեւու, Ղազարու
(Մշոյ) վանաց երաժիշտները. և յանուանէ՝ զՍա-

մուէլ Կամրջաձորոյ վանահայրն, որոյ ձայնը լսած էր Թեւրևս Թուռճեցի Գէորգ վարդապետան ալ, որ 100 տարուան վախճանեցաւ հօն՝ յամի 1094, «և էր երաժիշտ՝ի վերայ ձայնաւորս եղանակաց», ըստ Ուռհայեցի Պատմչին: Աւոր աւեն էր Պետրոս Գետադարձ պերճափայլ կաթողիկոսն, որ Կ. Պոլիս գացած աւեն՝ եպիսկոպոսաց և վարդապետաց հետ՝ դաս մ՚ալ ընտիր եկեղեցական երաժշտաց հետը տարաւ յարքունիս կայսերաց: Իր բարեկամն և մեր Պահլաւունեաց խնամատարը Նահապետն Գրիգ. Մագիստրոս՝ իր Թղթոց մէջ շատ հեղ և մեծ գովութեամբ յիշէ զԴանիէլ ոմն երաժիշտ, նոր Որփեւս կոչելով. ասոր Թուի անսովոր մնացած շարականն մը, Մեծացուսցէ, սկ. որոյ տնտեսութիւնք Դանիէլ կապեն, և սկսի. «Դասապետն հրեշտակաց և սպասաւոր երկնից «արքային». և այլն: Գուցէ այս ժամանակներս ապրած ըլլայ ուրիշ Ձարեաւր երգիչ մ՚ալ՝ Գոչէն Այրիվանեցի, հեղինակ Մեսեղի ըսուած երգոց: Շնորհալւոյ կրաեր ժամանակակից կըլնայ ըսուիլ Խալփուր Տարօնացին՝ եղանականիչ խազից Նարեկացոյն [1]: Թողլով ժ՚ր դարէն վերջը յիշեալ երաժիշտները, զի մեր պատմութիւն սահմանէն դուրս կ՚ելնեն, յիշենք բուն իր ժամանակի և քիչ եւս անուանի երաժշտութեան վարժարանքը, Սեաւ լերանց և Կիւլիկիոյ նորահաստատ վանքերը. յորս աւելի գովութեամբ կը նշանակուի Արքակաղնոյ վանքն, և ան՚լ յետոյ Սըսոյ երաժիշտ վարժապետքն, որոց արուեստն և դասաստանն իբրև պատգամ սեպուէր այն ժամանակ: Ասոնց վարպետներէն մէկը կըլնանք սեպել Թէոդորոս Ալեքսինը, զոր Մեծ Վկայասիրին աւեն տեսանք կաթողիկոս՝ի Հռոմ (42) [2]:

1 Սա յետոյ ալ պիտի յիշուի մեր պատմութեան մէջ:
2 Սըսոյ և Մեծ Հայոց երաժշտութեան կամ երգոց մէջ մեծ զանազանութիւն մ՚եղած կ՚երեւի, և անկէ շա-

Ա. յա յեան Տօրոսեան անապատաց և լերանց մէջ վարժեցաւ մեր Շնորհալի Երգեցողն ալ՝ առաւածատուր ձիրքը արուեստի հետ խառնել, և իմաստից ու առղից հետ ծնանիլ և եղանակները, և ըլլալ նուագաւոր փիլիսոփայ մը. վասն զի այս գեղեցիկ արուեստիս կամ գիտութեանս՝ իմաստասիրութեան լծորդ և լուսոն ըլլալը՝ պղատոնական մտօք Ճանչցեր էին մեր վարդապետք և վանականք, և պարզապես Փիլիսոփայ կ'անուանէին զերգեցողս եկեղեցւոյ. ինչպէս հին Տօնացոյց գրոց մէջ ալ անուանեն. « Ցգենուն միաբան քահանայքն և սարկաւագունք և փիլիսոփայք »: Նոյն ինքն Շնորհալին վկայէ այս բանիս՝ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն գրած Խաչն Ճառին մեկնութեանը մէջ. « Եւ զի ունիմք սովորաբար ասել « փիլիսոփայ որք յերաժշտական արուեստս կա« տարեալ են. այսպէս և Դաւիթ Անյաղթ, ոչ « միայն փիլիսոփայ այսպէս, այլ և յառաւածե« ղէն և յարտաքին հրահանգս անթերի »:

Իր առաւած մեկնութեանն համեմատ Շնորհալին ալ փիլիսոփայացաւ անթերի. և անդադար կ'երգէ Հայոց եկեղեցւոյն մէջ իր բազմապատիկ Տաղերովը, Շարականներովը, և Գանձերովը, թէ առաքը պատարագի և թէ ժամասացութեան ամեն ժամերուն պատշաճեցուցած երգերով. մանաւանդ արքայնագոյն օրերու՝ Մեծպահոց և Մեծ շաբաթուն. որոց խորին յիշատակները՝ աւելի զգալի և ախորժելի ընել կու տայ իր քրիստոսասէր ազգայնոց. և իբրև իր հոգւոյն մաքուր թեւերով կատարելով զանոնց ալ՝ չանայ քաշելու յերկինս. ուր կատարեալ առաւածերգակ մ'եղած՝ ընդ

բականաց զանազան կոչումն. մէկն Թափօրչի, մէկայլն Աբեղայ: Դարձեալ Շարականաց ընտիր օրինակները խըճիճ կ'անուանեն գրիչք ժԳ—ժԵ դարուց. այլ խուլ կամ խլիկ հեղինակի ով և երբ ըլլալը՝ չկարցանք ստուգել:

Դաւթեանց և Ստեփանոսեանց, մանաւանդ թէ ընդ հրեշտակաց, անապատ երգանայ աստուածծայինն սիրոյն մէջ. որոյ նբրև տակաւ, այլ դեռ բազմական արձագանգ մը կը լսեմք, և յուսամք որ եկեղեցիս Հայոց՝ անոր սրտէն բղխած և մանուկներով յարմարցուցած երգերն ու եղանակները՝ անընդհատ լսելով և նուագելով, հասնի և հասցընէ մինչև երկրաւոր ձայնից լռելու և միայն երկնաւոր ձայնից լսուելու օրը. յորում՝ հայածին սուրբ մայրն ալ իր քրիստոսականիք որդեկաց՝ « Սիոնի որդիք, զարթիք » կանչելով յեսուին անգամ, պըճնեալ զարդուքն ընդառաջէ անմահ փեսային և պսակուի յաւիտենական փառաք: — Այսպիսի անդին յուսավք կը պարարէ սրտերնիս ամեն կիրակի՝ մեր երգեցող Շնորհալին յեկեղեցիս Հայաստանեայց:

Իմաստից և բացատրութեան կողմանէ ալ՝ իր սովորական և կարևոր շնորհօքն՝ ունի յատակութիւն և աստուածային եռանդն. որով թէ խմաստալի է հասարակաց և թէ յորդորիչ սրտից, միանգամայն և մտաց ախորժելի՝ գեղեցիկ հանճարովը: Եւ յայտ զարմանալի բան մ'ալ կայ դիտելու, որ այս գեղեցիկ շարականաց և տաղից մեծ մասն իր կաթոլիկոսութեան առեն երգած է. կենաց այն յառաջացեալ մասին մէջ՝ յորում սովրաբար լռեն երգք 'ի շրթունս քերդողաց, և ծածկուին աշխուժից թևերն. իսկ մեր սքանչելի եղեգեցող Փիլիսոփայն 65–70 տարեկան միջոց ալ որպէս և յերիտասարդութեան ըսելով « Բղխեսցեն « սիրտք մեր զբան բարւոյ, և լեզուք մեր պատ« մեսցեն զգործս երկնաւոր թագաւորին », բըղխած է այն վերոյիշեալ բաները, որ առոյգ և եռանդուն հասակի մը արտադրութիւն պիտի կարծէինք, եթէ չգիտնայինք 'ի պատմութենէ ժամանակը: Այնքան ուրիւն մեծ և տաք է եղեր ներ-

սիակ սիրան և հոգին, այնքան եռանդուն միտքն և հանճարն, որք միշտ առոյգ և մանուկ մնացեր են, երբոր մարմինն միայն մաշելով և հըննալով՝ ալ չէ կըրցած այնպիսի ուժով և թռչուն հոգւոյ լծակից մնալ:

Այս կարողութեան վրայ աւելցընելու է և ճարտարութիւնն եղանակաց զանազանութեան և ներդաշնակութեան. որոյ եթէ մենք չեմք կըրնար երաշխաւոր ըլլալ, եօթն գարուց երկարութեամբ՝ այնպիսի նուրբ արուեստի փոփոխութեանն համար, կրնամք հաւատալ ժամանակաւ մերձաւորին վկայութեանը. որ յետ գովելոյ զիմաստս բանիցն՝ կ'ըսէ. « Եւ թէպէտ և հրաշալիք էին բանք երգ« գոց նորա առ միտս իմաստութեան, բայց եւս « առաւել զարմանալի էին արուեստք զանազան « եղանակացն՝ զոր անմահն միմեանց յօրինէր. որ« պէս յանծախելի և յառաւոտոյն գանձարանէ՝ « 'ի ձոխ և 'ի հարուստ մտացն արտաբերեալ »: Բոլորովին ալ հիմայ փոխուած չեմք կըրնար ըսել Շնորհալւոյ եղանակները, զորս քիչ մը մեր երաժշտական արուեստի խազերն պահած են, քիչ մ'ալ ականջալուր վարժութիւնն. միայն թէ շատերն 'ի սկզբան աւելի նեղդաշնակաւոր և աւելի քաղցրանուագ կըրնանք համարիլ:

Արդ Շնորհալւոյ այս երաժշտական ձրից վրայ յերկար զարմանալէն վերջը, հարկ է որ թօթափենք զմեզ այն վայելչ արուեստին կպչուն և թռչուն թևերէն, և դառնանք իր երկրաւոր կեանց ընթացքը բռնելով անոր զանազան դէպքերը, և իր ուրիշ բազմապատիկ աւուրքերը դիտել:

## Ը.

*Փոխադրուրիւն կաթողիկոսական աթոռոյ՝ի Ծովք Դիլեակ: — Քաղաքական վիճակ ժամանակին՝ի տեսիլս ընակուրեան Շնորհալւոյ և՝ի Մեծ Հայս:*

Շնորհալւոյ վիպասանութեամբ մատենագրութիւն սկսեալին, որ է 1121 թուականէն, մինչև 15 տարի, երիտասարդութեան միջոցը, ծածկուած կը մնայ մեզմէ. պատմական յիշատակ մը չեմք գտած այս տարիներուն, այլ կը համարիմք զնա թաքուցեալ այն խորհրդական և արբազան առանձնութեան և լռութեան մէջ, յորում՝ և փըրկիչն և վարդապետան աշխարհի՝ աչք մեր Քրիստոս, ծածկուած և լռած մնաց՝ի տան Մօրը, մինչև ըստ աշխարհի կատարեալ հասակաւ՝ ելաւ՝ի քարոզութիւն: Այս տարիներուս մէջ Շնորհալի իր ուսումնական կրթութիւնն աւարտած և իր կաթողիկոս եղբօր օգնական ընտրուած կ՚ըլլայ: Մէկ միայն դիպուած մը կը յիշուի այս միջոցիս. և է կաթողիկոսութեան աթոռոյն տեղափոխութիւն:

Ասոր տարագրութիւն՝ի հայրենի աշխարհէն և՝ի միջոց բազմութեան բնիկ ժողովրդեան՝ բաբելական գերութենէն երկար քշեր էր. 80 տարիէ աւելի էր. կաթողիկոսք և հաւատացեալք փափաքէին դառնալ նորէն՝ի Մեծն Հայաստան և՝ի վերջին մայրաքաղաքն Անի, որ դեռ թագաւորական շնորհքով պայծառանայր, և ուր դեռ քիչ առաջ Բարսեղ եպրև կաթողիկոս կը նստէր. Գրի-

գորիա ալ փախոդէր իր նախնեաց և ազգականաց քով երթալ, և ազգին կենդրոնը կենալ. և արդէն գաղտուկ բանագնացութիւն ըրեր էր Անոյ իշխող ամիրային Ապուլ-Սուարայ հետ, և հաւանութիւն առած էր. և մինչդեռ յարմար ժամանակի կը սպասէր, Անոյ բնակիչքն այս բաները չգիտնալով, և իրենք ալ իրենց կերպով օտարի իշխանութենէն ազատիլ և քրիստոնեայ իշխանի ձեռք անցնիլ ուզելով, ծածուկ գաշնակցեցան Վրաց Դաւիթ Թագաւորին հետ, որ յանկարծուց եկաւ զօրօք յԱնի. քաղաքացիք ընդունեցան, մատնելով անոր ձեռքը զԱպուլ-Սուար և որդիքը, զոր Դաւիթ տարաւ արգիլեց բերդի մը մէջ՝ ի Վիրս, ուր և մեռան նեղսրտութեամբ: Բայց քիչ աւելնէն ինքն Դաւիթ ալ մեռնելով Ապուլ-Սուարայ երեց որդին Փահլուն եկաւ պաշարեց զԱնի, և յետ երկար ընդդիմութեան և սովոյ՝ առաւ, ու հօրն և եղբարց մահուան վրէժը պահանջեց: Այս բանս լսելով Գրիգորիս կաթողիկոս շատ նեղացաւ Անեցոց անխոհեմ գործոյն, որ իր դիտաւորութիւնն և գործն ալ ունայնացուց. վասն զի ալ չէր համարձակեր Փահլունէն նոյն ընդունելութիւնը գտնել, ինչ որ խոստացեր էր անոր հայրն, այսպէս չարաչար մահնեաւ և մեռաւ: Անին ալ այն առթով շատ մարդ և վայելչութիւն կորուսեր էր: Արդ հարկ եղաւ Գրիգորիսի որ նորէն իր եղած երկրին մէջ ուրիշ յարմարագոյն տեղ փնտրուէ Հայոց հայրապետական աթոռոյն:

Իր առաջին նստած տեղն հաւանօրէն էր այն Շուղը անապատի վանքը, ուր և Բարսեղ նստեր հրամանաւ Մեծ Վկայասիրին. կամ թէ երբեմն հօս և երբեմն՝ ի Կարմիր Վանս նստէին երկոքին հարազատքն, Գրիգորիս և Ներսէս. որք երբ լսեցին Անոյ նորէն նուաճիլն՝ ի Փահլունէ յամին 1123, եկան, եկան իրենց ծննդեան տեղը և հայ.

բենի տունը, 'ի Ծով, զոր Հայրեբնին Ապիրատ ամրացուցեր էր. իրենք ալ նորէն նորոգելով՝ հօն հաստատեցին քառորդ դարու մ'ալ Հայաստա-նեայց տապանակը. որով հարկ է մեր եկեղեցա-կան աշխարհագրութեան մէջ նշանաւոր կէտ մը սեպել զայս, և արքազան յիշատակները ալ փըն-տռել հօն: Այլ դժբաղդաբար և ոչ իսկ տեղն ո-րոշակի կըրնամք նշմարել. վասն զի թէ և ինչպէս հիմայ կարծուէր թէ այս տեղս պիտի ըլլայ Խոր-բերդի և Արշնոյ միջոց եղած Ծովք լըճին մէջ, որ հիմայ Կէօլճիւկ կ'ըսուի յայլազգեաց, սակայն հին պատմչաց կարձ յիշատակներն, և քաղա-քական վարչութիւնք ժամանակին՝ չեն ներեր այսքան հեռու տեղ փոխադրել մեր հայրապետա-նեները և իրենց աթոռը. վասն զի եթէ այն (Խոր-բերդու) կողմերն ազատ և հանգիստ ըլլային Թուր-քաց ձեռքէն՝ աւելի յարմար և աւելի կեդրոնա-գոյն հայկական տեղ մ'ալ կըրնային երթալ մեր հայրապետք, ինչպէս որ փափագէին իսկ. իսկ ե-թէ Թուրքաց իշխանութեան տակ էին, (և էին հաւաստեաւ), չէին կըրնար հօն երթալ: Արդէն այն սակաւ պատմական յիշատակքն, և նոյն իսկ Շնորհալին թէ վիպասանութեան մէջ, թէ 30 տարի եաև Հաւատոյ բանին յիշատակին մէջ՝ զԾով միշտ Դպէսի կ'ըսէ, և ոչ երբեք լըճի նը-կարագիր կու տայ: Ուրեմն այս տեղս իրենց առջի բնակած տեղէն՝ Սեաւ լերանց վանքերէն՝ շատ հեռու չէր. Աթոռն քիչ քիչ կամ իբր ոտն առ ոտն կը տեղափոխէր. հաւանօրէն Մա-րաշու և Անթափոս միջոց տեղ մ'էր. վասն զի հաստատութեամբ կ'ըսուի որ Անանիոքայ Վա-տին իշխանութեան ատեանն էր, և յատուկ գաւառն Տլուք կ'ըսուէր, և տաքարիւն ժողովն Փառանք իշխանին կալուածք էր. գուցէ ուրիշ Կէօլ-ճիւկ լճի մը մօտ (Կեաւուր Կէօլճիւկ), ուր և

հնախօս աշխարհագիրք դնեն զՏլուք աւանն։ Թէ պէտ բաւական ամուր էր տեղին, այլ ոչ շատ, և ոչ ալ ընդարձակ, վասն զի Փոքր Դղեակ կոչուի. այլ այն աւեն իրենց համար յարմար և չափաւոր երեւցաւ. իսկ մեզ համար շատ ցանկալի է հետաքննուԹիւն Թէ այս տեղւոյս և Թէ բոլոր Սեաւ Լերանց բազմաԹիւ վանորէից, որք ԺԱ–ԺԴ դարուց Հայոց ամենէն սրբազան և գիտնական դարքն էին. և որոց վրայ այսօր Թանձր վարագոյր մը քաշուած՝ կը ծածկէ, ո՞ գիտէ որպիսի եկեղեցեաց և չինուածոց նշխարքներ, ո՞րքան յիշատակաց արձանագրուԹիւն, և հռչակաւ անմահանալի անձանց՝ մոռացեալ մահու քարեր։

Ի՞նչ էր արդեօք այս տեղափոխուԹեան պատճառն. — մանաւանդ գիտցուած մը չեմք գիտեր, բայց հաւանական է այն միջամտման երկրին համ օրէն վրդովումն և բռնաբարուԹիւն 'ի զանազան ազգաց և 'ի բազմաԹիւ տիրապետաց. և վախ՝ անհատաւոր և անատոյգ ձեռաց մէջ ընկնելոյ։ Վասն զի յետ մահուան մեծ իշխանին Գոդ Վասլի՝ (1111) իր քեռորդին Տլայ Վասիլն իշխեց Քեսնոյ և սահմանաց, բայց ոչ յերկար. երբ զօրաւորներն կոխեցին իր սահմանները. խոյս առաւ դէպ նաց առ աներ իւր Լևոն՝ Թոռն Ռուբինի՝ մեր ազգին Կիւլիկեան հարըստուԹեան նահապետին. այն ալ չափէն աւելի ուժով մը բռնեց վինքը և արգիլեց։ Իր իշխանանիստ Քեռաւն՝ ինչպէս և Մարաշ՝ ընկան Եգեսիոյ Լատին Կոմսից իշխանուԹեան տակ, որուն այն աւերներն յայնժամ էր առաջին և քաջն Ժոսլէնի որդին Ժոսլէն Բ, որ յետոյ Թողուց այն տեղուանքը իրեն պէս տաքարիւն և անխոհեմ, այլ երբեմ քաջ իշխանի մը, որ էր Պալտին՝ եղբայր Ռեմոնդի՝ իշխանին Անտիոքայ։ Այլ չիմացան ինչուան եաքը պահել իրենց կալուածքը՝ այլազգեաց յարձակուԹէն. նախ

Քեսուն կորաւ, Կեսարիոյ և Մելիտինոյ սիրապետուղ անուանի Տէնիշմէնաին ցեղէն Մահմուտ սուլտանին ձեռքով, որ յամին 1136 աշնան սառն եկաւ պաշարեց զՔեսուն, չորս դին աւերշարկելով. այլասելով որ Պալտին՝ Յունաց (Յովհաննէս) կայսեր դիմեր է՝ի Կիւլիկիա, և նա խոստացեր է օգնել, Թողուց զբերդաքաղաքը, և անոր տեղ մեր կաթողիկոսաց սրբացուցեալ Կարմիր վանքը այրեց և աւերեց, միանձանց խրճիթներ և եկեղեցեաց սուրբ սպասները փճացուց, գնաց. Թողլով այն հռչակաւոր տեղը՝ « որպէս տատրակ սգալից միայն « մնացեալ՝ի զուգակեզ, կամ որպէս զագուաւ « զաղբատեսակ նստեալ՝ի վրայ կոթողոյ », ինչպէս կ'ըսէ պատմիչն (Մատթէոս): Սակայն Պալտին վստահ չըլլալով տեղը անվտանգ պահելու՝ զօրքերն առաւ գնաց Եփրատայ կողմի ամրոցները. մնացին Հայք իրենք իրենց, Վահրամ անուամբ դըքսի մ'առաջնորդութեամբ, որոյ օգնական և խրախուսիչ էր Գրիգոր երէցն, Մատթէոսի պատմութեան շարունակողն. այլ երկու տարի մ'ետև (1140) ուրիշ Թուրք զօրավար մը Գարա-Ալան անուն, այն կողմերէն անցնելով և իմանալով որ բաւական պաշտպանող չունի Քեսուն, մնացողներն ալ իրմէ վախցեր փախեր են, 30 մարդ խաբեց և այրել տուաւ քաղաքը՝ դռներով և մեծ վասլն շինած բարձրայարկ ապարանօք, և Թողուց գնաց: Քանի մը տարի ալ այսպէս անտոյգ վիճակով քրիստոնէից ձեռք մնալէն ետև՝ Իկոնիոնի Սուլտանն Մասուտ տիրեց անոր և սահմանացը:

Շնորհալւոյն գրեթէ բովանդակ կենաց միջոց՝ այն կողմերն ուր ապրեցաւ և մերձաւոր սահմանքն, մեծ շարժման և անհաստատ վիճակի մէջ էին, վախով և յափշտակութեամբ չորս դիսաւոր ազգաց: Առնց առաջինն էր Յունաց ազգն, ՚ի վա-

ղուց քնիկ տէր, իբրև պայազատ արևելեան ինք-
նակալութեան, որ արդէն սկսեր էր կողոպտուիլ
և նուազիլ, նախ յԱլթաբացւոց, յետոյ՝ ի Սէլճու-
կեան Թուրքաց, որք զանազան ամիրաներ և սուլ-
տաններ հաստատեր էին Մէլջադեատց, Ատրուց
և Փ. Ասիոյ գաւառաց մէջ: Ատոնք էին երկրորդ
և ամենէն ահարկու ազգն. ասոնց զօրաւոր տէ-
րութիւնքն էին Իկոնիոնի (Ղոնիա) սուլտանն, Սե-
բաստիոյ և Կեսարիոյ Տանիշմենդն, Հալպայ և Դա-
մասկոսի սուլտանք կամ ամիրայք, և Հաշիշի ա-
ռաջակք Լեռնաբնակք, Անտիոքայ և Տրիպօլեայ
իշխանութեանց միջոց: Երրորդ էին Լատինք, որք
ԺԱ դարու վերջին տարիները՝ Ա Խաչակրաց յայ-
թոլական շահատակութեամբ՝ տիրեցին զատ՝ ի
Պաղեստինոյ՝ նաև Անտիոքայ, Եդեսիոյ, Տրիպօ-
լեայ, Տիբրոսի [1], Սիդոնի, և այլն, և Եփրատայ
արևմտեան գաւառաց ընդ մէջ Հայոց և Ատրուց.
և զանազան կոմսեր և բրինձեր (prince) հաստա-
տեցին այն կողմերը, որք ոչ միայն ընդ Թուրքաց
և Յունաց կռուէին, այլ և երբեմն իրարմէ խլէին
իրենց յանկարծագիւտ կալուածները:

Իսկ չորրորդ ազգն էր մերս Հայոց, որք յետ
Յունաց և ըստ մասին հաւատալ՝ այն կողմերու

1 Այս վաճառաշահ անուանի քաղաքին տիրեցին խա-
չակիրք՝ մեր պատմութեան այս հատած ժամանակին
(1124), յետ իբր վեցամսեայ պաշարման. վենետկեցիք՝ ի
ծովէ, մկայլ դաշնակիցք և ասպետք՝ ի ցամաքէ: Քաղա-
քացիք (որ օգնութեամբ Եգիպտոսի և Դամասկոսի Սուլ-
տանաց դէմ կը դնէին), պաշարողաց մեքենաները կ'այ-
րէին և կը փճացընէին. խաչակիրք կարօտացան զօրաւոր
հնարքի և ճարտարութեան մը. հրաւէր խաւրեցին յԱն-
տիոք, Աւետիք անուամբ Հայ մեքենագիտի մը. որ եկաւ,
այնպիսի մեքենաներ կանգնեց և ուղղեց, որ պաշարելոց
գործիքները դադրեցուց, սովորականէ մեծ քարերով ա-
նոնց տուները սկսաւ կործանել. մէկ երկու օրէն անձնա-
տուր եղան անոնք. իսկ խաչակիրք առատապէս վարձա-
տրեցին զվարպետն Աւետիք:

բնական ժողովուրդ եղեր էին. ոմանք ալ բռնա-
կան. վասն զի կամաւ և ակամայ գաղթելով 'ի
Մեծ և յարևելեան Հայաստանէ, նախ խաղաղու-
թեամբ բնակեցան Ա և Գ անուանեալ Հայոց
միջոց. յետոյ երբ Յոյնք սկսան թշնամենալ՝ հա-
ւատոյ ինդրոյ պատճառաւ, և Թուրքք զօրա-
նալ Մելիք — շահի աշխարհակալութեամբ, Հայք
երկու կողմէն նեղուելով, սակաւուեցան զէնքով
իրենց ձամբայ բանալ, Փ. Ասոյ էին հարաւային
գաւառաց՝ Փալուպոյ, Իսաւրիոյ, Պամփիւլիոյ և
Կիւլիկիոյ ամրագոյն տեղերը ապաւինիլ, Տօրոսի
և Անտիտօրոսի կիրճերը և սարերը իրենց ապա-
ստան ընտրել, նիզակաւ և սրեզամբ սահմաններին
անմերձենալի ընել. և յետ այնորիկ քիչ քիչ բարձ
րերէն իջնել և Կիւլիկիոյ գեղեցիկ դաշտերուն
մէջ ոտք գնելով՝ մղել զՅոյնս, և ակրել նախ բեր-
դից և ապա մեծ և անուանի քաղաքաց, Անար-
զաբայ, Մամեստիոյ և նոյն իսկ մայրաքաղաքին
Տարսոնի, և միանգամայն լերանց, դաշտաց և
ծովափանց: Սակայն այս բանիս յաջողութիւնն
և հաստատուն ու կանոնաւոր տիրապետութիւնն՝
հարիւրամեայ դարու ժամանակ մը պահանջեց
'ի Հայոց. շատ չանք և ձարտարութիւն, երբեմն
և խորամանկութիւն, մեծամեծ նեղութիւններ և
աւելի մեծ քաջութիւններ. միով բանիւ, շատ ա-
րիւն իրենցմէ թափեցին, և ալ աւելի օտարներէ.
մինչև որ կանգնեցաւ Ռուբինեանց քաջաժառանգ
տէրութիւնն և թագաւորութիւնն: Ահա այս հարիւր-
ամեայ բազմաչարչար և բազմակռիւ ժամանակին
մէջ Շնորհալին ապրեցաւ, իբրև առաւել և կոչ-
կոռուտ երկրի մը մէջ արծաթափայլ վտակ մը սո-
ղոսկելով և սահելով, ժայռերէ և խոչերէ արգել-
լուելով, և ոչ առանց դժարութեան՝ այլ ինքն
ինքեան միշտ հանդարտօրէն յառաջ երթալով:
Իր առեն դեռ ձևացած չէր այդ Ռուբինեանց

տէրութիւնն, թէ և որդի 'ի հօրէ չորս հինգ ազգ պայազատեցին. այլ գեռ երկիրն՝ կալուածք գըրուեր կայսերաց, և ասոնց առջև՝ Ռուբէնի որդիքն բռնաւորք և յափշտակողք: Ասոնցմէ զատ ազնուական ցեղերէ Հայ իշխանք ալ այն կողմերու կամ ազատաբար տիրեին, ինչպէս շատ անգամ յիշեալ Գողվասիլն, կամ իբրև Յունաց հպատակ, ինչպէս մեր Պահլաւունիքն, Նաթանաչէլեանք, և Հեթմեանք՝ նախահարք Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ, և այլք: Այս զանազանութիւնն, այսինքն ոմանց հպատակելն Յունաց և ոմանց ոչ՝ աւելի ծանր և վնասիչ եղաւ Հայոց, քան օտարազգեաց յայտնի թշնամութիւնն. անոր համար ալ քանի մ'անգամ մեծապէս վտանգեցաւ նորընծայ տէրութիւնն, և գրեթէ անհետանալու վրայ էր. թէ և հարազատքն Թորոս Ա. և Լեւոն Ա., իրենց անուանանիշ կենդանեաց ուժով և բարքով՝ այնքան աշխատեցան և արիացան՝ որ բռնած երկիրնին իրենց անուամբ Լեռնէ էրիէր, Թորոսէ էրէր կոչուեր յայլազգեաց. այլ Յունաց կայսերութեան գեռ բազմապատիկ զօրքերէն յօդնեցան և նեղեցան. ինքնին կայսերքն Յովհաննէս և Մանուէլ եկան ատոնց գէմ. թէ և շատ հեղ յաղթեցին, բայց վերջապէս Լեւոն Ա. գերի ընկաւ ոմանքը իր որդւոց, և մեռաւ սրանեղութեամբ՝ իբրև առիւծ 'ի գաւազգին, 'ի Կ. Պոլիս. որդին Թորոս Բ՝ ձարտարութեամբ փախչելով 'ի բանտէն՝ նորէն տիրեց հօրն և հօրեղբօրը բռնած տեղերուն, և աւելի ալ ընդարձակեց սահմանները, ինչպէս յետոյ պիտի տեսնենք:

Ուրիշ կողմէ ալ Թուրքաց տապատակն և բռնակալութիւնք անգադար նեղէին արևելեան կողմերը. Եգեսիոյ, Մարաշու, Քեսնոյ, Կարկառայ, և ուրիշ Լատին և Հայ իշխանաց կալուածներուն յափշտակութիւնն՝ պատերազմօք և արիւնհեղու-

Թեամբք, մեր կաթողիկոսաց աթոռոց շատ մօտ և շատ ահարկու էին. անոր համար պատմական սառուգութիւն և ոչ զարդաբանութիւն պէտք է ընդունիլ ըսածնիս, թէ Շնորհալւոյ բոլոր կեանքն՝ քաղաքական անատոյգ և անհանգարտ ժամանակի մը մէջ անցաւ. զոր և ինքն խակ ալնիւ և հեզապին գանգատով կ'իմացընէ զանազան գրուածոց մէջ, ինչպէս 'ի յառաջաբանի Ընդհանրականին. « Յալագս ժամանակիս չարութեան և բազմիշ« խանութեանն. և քաղաք Թագաւորական և « բազմաժողով ոչ գոյ ազգի մերում ». խակ իրեն համար կ'ըսուի. չունէր « և ոչ մի գեօղ և ոչ ան« գաստանս, և ոչ օգնութի 'ի Թագաւորաց և իշ« խանաց »: Եւ այնպէս համաշխարհական մրըրկի և տագնապի առեն՝ երկու հարազատաքն իրենց փո« քրիկ Ծովք դղեկին մէջ քաշուած՝ « աղօթէին առ « Տէր, կ'ըսէ պատմիչն, ապրեցուցանել զնոսա « 'ի չարաթոյն այլասեռից և մարգադէմ գազա« նացն. որ և վրկեալք լինէին և ապրեալք՝ որպէս « ձնձղուկ յորոգայթէ որսողաց. քանզի Տէր « ձեռընկալու էր նոցա, ըստ մարգարէին »:

Որչափ ալ այս ամեն յիշեալ աշխարհք և պետութիւնք՝ Շնորհալւոյ պատմական շրջանակին մերձագոյնք են աեղեաւ և պատահմամբ դիպաց, յայտ է որ իր և մեր բնիկ հայրենի աշխարհն չեն. հարկ է հարևանցի աչք մ'ալ տալ այն մեր մեծ և հին տարաբաղդ աշխարհին, — մանաւանդ թէ տարաբաղդիկ որդւոցս բարեբաղդ աշխարհին, — զոր մեր սաստիկ պատմութեան դարուց կիսէն 'ի վար՝ սեղի օտար ազինք վարեն և վայելեն, քան բնիկքս օտարացեալք պանդխտութեամբ յոլորտս երկրի: Շնորհալւոյ դարն երկուց ժամանակաց միջոց և որոշիչ կէտ մը կրնայ ըսուիլ, յորում դեռ հին հայկական հարստութեանց մնացորդք կային և աւ փոքր փոքր կ'անհ-

հեառնային, որով կերպարանափոխ կ'ըլլար հին Հայութիւնն, և Հայաստանն՝ ի Թուրքաստան, Թաթարստան և Քրդաստան: Յետ բարձման Արշակունի Թագաւորաց մերոց՝ Սասանեանց տիրապետութեան միջոց (428–638), թէ և ինքնագլխութիւն չունէին Հայք՝ այլ երկնից նախնեաց օրինօք, սովորութեամբք և պայազատութեամբք կ'ապրէին. իւրաքանչիւր նախարար և սեպուհ կը յաջողցէր իր հօր գահուն և պատուոյն: Արաբացիք ալ ի սկզբան Թողուցին անոնց կարգերը և սովորութիւնները. բայց ատեն ատեն՝ որ և է պատճառաւ՝ շատ փոփոխութիւններ ըրին, և Ը դարուն սկիզբները շատ հին նահապետութիւնները ջնջեցին. իսկ ի կէս Թին իրենց Թուրք զօրավարաց առաջնորդութեամբ, որպիսի էր սոսկալի Գարա Հուլայն, շատ ալ արիւնհեղութեամբ՝ վերվար ըրին գաչնարհը, և շատ ոհմեր և պայազատութիւններ բոլորովին մարեցին: Այլ այնքան արիւնէն և կրակէն դուրս ցայտեցին քանի մը առաքինի և կարիճ պայազատք նախարարաց. և նոյն Թ դարուն վերջերը կանգնեցաւ Բագրատունեաց Թագաւորութիւն մը, և հետ զհետէ Թագաւորութիւնք Արծրունեաց, Սիւնեաց, Ռշտունեաց, Վանանդայ, Զորոյգետոյ, և այլն. որք Ի և ԺԱ դարուց մէջ բաւական փառօք և բարգաւաճանօք կը փայլէին. Թէ և տեղ տեղ ալ իրենց մօտ Արաբացի և Թուրք կամ Պարսիկ մանր պետութիւնք կամ կուսակալութիւնք կային, Պաղատատու ամիրապետին իշխանութենէն կախ կամ անկախ: ԺԱ դարուն կիսուն մօտ Սկիւթացի Սելճուկեան Թուրքք յայտնուեցան, և շուտ յառաջ գալով՝ յարձակեցան ի Հայաստան, և անլուր անգթութեամբ հուր և սուր սփռելով տակնուվրայ ըրին գաչնարհը, նուաճելով մի ըստ միոջէ զԱնի, Կարս, Արծն, և ուրիշ իշխանանիստ և ե-

բևեռի քաղաքները, յորոց վտանգ ալ չաւեր և ի մոխիր դարձուցին: Այս առեն, կամաւ և ա-կամայ Հայ Թագաւորք Թողին իրենց ազգանունները, Անեցիք, Կարեցիք, Վանեցիք (այսինքն Աենեքե-րիմեանք կամ Արծրունիք), և գաղթեցին ի Փ. Հայս կամ ի Փ. Ասիա, Յունաց կայսերութեան մէջ իրենց տատանեալ տունը հաստատել ուզե-լով. ուր և մէկ ցեղ մը չանցած՝ գրեթէ ամենքն ալ մարեցան, և անոնց մոխրէն վեր ելան Ռուբի-նեանք ի լերինս Տաւրոսի և ի գոգս Կիւլիկիոյ, ի վերջ ԺԱ դարու:

Յաջորդ ԺԲ դարուն՝ բուն մեր Շնորհալւոյն ժամանակ՝ թէ և գրեթէ բոլոր Մեծն Հայաստան Թուրքաց և խառնաղանձից ձեռքերով պաշարեալ և ցցուեալ էր, մանաւանդ միջնաշխարհն, այլ դեռ եղերքները կայինոսազեալ պայազատք Հայկ-ազն փարազանց, և նաև Թագաւորք ոմանք, ո-րոց պատմութիւնն ալ ժամանակին ախտութեան մէջ մթընցեր է. այսպիսիք են սերունդք և շառա-ւիղք Զորոյգեանց Բագրատունեաց, որոց հարքն Անոյ Թագաւորներէն զատուելով՝ Տաշրայ (Լօռի) կողմերը առանձնակ Թագաւորութիւն մը հաս-տատեր էին. իսկ որդիքն անկէ հեռանալով՝ Գու-գարաց և Ուտիոյ հին նահանգաց իրարու սահ-մանակցութեան կողմերը՝ երկու փոքրիկ Թա-գաւորական աթոռներ դրին, ի Տաւուշ և ի Մածնաբերդ՝ սմուռ բերդաւաններ, և որդւոց որդի յաջորդութեամբ՝ շատն Կորիկէ (կամ Գուր-գէն) անուամբ՝ ինչուան ԺԳ դար ալ հասան. Կո-րիկէ Գ կամ Դ յիշուի ի կէս ԺԲ դարուն և ալ վերջերը, որոյ որդին Աբաս Թագաւոր 19 տա-րուան վախճանեցաւ. տարր Թոռն Կորիկէ Գ կամ Ե յիշուի ԺԳ դարուն կիսուն մօտ, յորում Թա-գաւորաց հզօր տէրութիւն կոխեց ամեն Թագ և գահ:
— Ձիշտ Ուտի նահանգին և Ագռաձոյ կողմերը

թագաւորութիւն մ'ալ կար Աղուանից անուամբ, բայց պայազատքն Հայ էին լեզուաւ և կրօնիւք. անոնցմէ ծագեցան Խալենոյ իշխանքն ալ, որ բաւական ազատութեամբ պայազատէին ԺԲ և ԺԳ դարուց միջոց, և որոց սերունդք իշխանական աստիճանաւմբ կամ պանծանօք դեռ շատ դարեր ալ տևեցին, և ինչուան հիմայ ալ Թերևս գտուին ազնուական շառաւիղքն:

Առանց դրակից են Հայոց ամենէն հայկազնեան մէկ աշխարհին՝ Սիւնեաց՝ պայազատք, որք այս ԺԲ դարուս մէջ ալ իրենց նախորդ դարուն ընկերը կանգնեալ թագաւորութեան յաջորդութիւնը պահեցին, Աղուանից թագաւորազանց հետ ալ խնամենալով, մինչև՝ ի ժամանակս կաթողիկոսութեան Շնորհալւոյ. վերջին պայազատն եղաւ թագուհի մը Կատա անուամբ, որուն փեսայքեր էր Հասան Խաչենեցին. և միայն կապանայ բերդը, քանի մ'ալ ուրիշ բերդեր ձնագեր էր ձեռնընկին, ՚ի յափշտակութենէ Թուրքաց, որոց դէմ կենալ անկարելի տեսնելով՝ յաջին 1169 Թողուցին տեղերնին և քաշուեցան ՚ի Խաչէն:

Բագրատունի թագաւորաց քնավայրն յետ անցնելու ՚ի ձեռս Յունաց (1046) և քիչ տաեներ ՚ի սուր Թուրքաց Ալփասլանայ (1066), Թուրք ամիրայի մը տանձին կուսակալութիւն եղաւ. Շնորհալւոյ եպիսկոպոսութեան տաեն վիրք տիրեցին Անոյ՝ Հայոց հրաւիրանօք (1124), այլ նորէն Թողին տալի տէրութեան՝ պայմանօք. 1161ի նորէն նուաճեցին, և գարձեալ Թողին և տալին, և Օրբելեան հին ցեղն ազնիւ իշխանաց յանձնեցին. և երբ զատնք հալածեցին իբրև դաւաճանս՝ (1177) յանձնեցին Զաքարեանց Հայ մեծազօր իշխանաց, որք Երկայնաբազուկք կ'ըսուին, և ինչուան հիմայ գտուին իրենց պայազատքն ՚ի վ-

բահայս. ասոնց ձեռքը մնաց և Անի, և շատ չէնցաւ, մինչև որ Թամարը խլեցին (1239) շատ ա-րեանհեղութեամբ և աւերածով: Յիշեալ Զաքարեանք, մանաւանդ երկոքին հարազատքն՝ Զաքարիա սպասալար և Իւանէ Ամբաբէկ՝ վրաց Թագաւորութենէ սիւնք և վարիչք՝ Թամարայ Թագուհոյ և յաջորդին առեն, գրեթէ Մեծ Հայոց մեծ մասն ազատեցին յայլազգեաց ձեռքէն, և Թագաւորաբար իշխէին: Հայոց հին մայրաքաղաք Դուինն ալ առին, ուր դեռ Պարսիկ սիրապետք գտուէին, ինչպէս նաև՝ ի ժամանակի նահատակութեան Յովսեփայ Նոր Վկայի (1170), զոր յետոյ պիսկ պատմեմք: Ա՛ւ ժամ մի սիրեցին և կարնոյ, ուր Պարսիկ ցեղ մը սիրէր շատոնց, և 1160ին Սէլճուքեան տոհմի մը ձեռք անցեր էր:

Տուրուբերան և Վասպուրական մեծ և հին հայկական աշխարհաց մէջ ալ՝ կային առանձնակ իշխանք և տէրութիւնք. Վանայ ծովուն արևմտեան հիւսիսային ծայրը՝ Խլաթ քաղաքն իր շրջակայիւք՝ շատոնց Թագաւորանման Ախլաթ կամ Պարսիկ սիրապետ մ՚ունէր Շահէ-Արմէն կոչուած, յորոյ աթոռն երբեմն և Հայ մը նստաւ. և բոլոր ԺԲ դարու միջոց ալ կար այս տէրութիւնս, և բաւական այժ ունէր: — Իրեն մօտ Մանազկերտ քաղաքն ալ Ժ դարուն մէջ նման առանձին տէր մ՚ունէր, այլ յետոյ միացաւ յիշխանութիւն Շահի-Արմէնին:

Վանայ արևելեան և հարաւային կողմերը՝ մինչեւգաւառն Հայոց՝ (յետ Շիրակայ Թագաւորաց՝) ամենէն նշանաւոր Թագաւորութիւնն կար, Արծրունեաց ըսուած, զոր կանգնեց խորագէան Գագիկ ՚ի սկիզբն Ժ դարու, և իր երեք յաջորդօք տևեց մինչև տարին 1022, յորում Սենեքերիմ Թագաւոր վախնալով Նեառղաց (Թուրքաց) ասպատակութենէն, և Մեծին Ներսիսի անուամբ եղած

մարդարէութենէն, երկիրը Յունաց կայսեր ծախեց, և փոխան առաւ զԱեբաստիա՝ սահմանօքն. այլ իր ազգականներէն մէկն Խեդենեկ կամ Հեդենիկ անուամբ՝ Ամիւկ ամուր բերդին մէջ հաստատ կեցաւ, և ինքզինք Թագաւոր անուանեց, նոյնպէս և ամենք ՚ի պայազատացն. յորոց էր Աբգէմսեհն Պրոտո–Կուրոպալատ (+ 1121), փեսայացեալն ՚ի Մարիամ քոյր Մեծի Վկայասիրին մերոյ. իր Թոռն Խեդենեկ Բ յիշուի 1199ին, ուրիշ Խեդենեկ մը հարիւր տարի ալ վերջը. եակ իրենց պայազատքն մինչև ՚ի սկիզբն ԺԵ դարու, յորում դեռ Թագաւորութեան անուն ալ յիշուի՝ մինչ ՚ի Կիւլիկիա անգամ կորսուեր էր Հայոց Թագն:

Վասպուրականի և Արծրունեաց գրակից աշխարհին՝ Տուրուբերանոյ մէջ՝ երկու անուանի գաւառք կան, որք աւելի երկար տաեն հայկական իշխանութիւն և պայազատութիւն պահեցին. Տաւրոն և Սասունի. յետինս թէ և ոչ բնիկ գաւառ է յիշեալ աշխարհիս, այլ Աղձնեաց, սակայն անմիջապէս կից Տարօնոյ, և մեր պատմութեան ժամանակ մէկ հայ իշխանութեան տակ էր. մեր Պահլաւունի իշխանաց խնամիքն քաջութեամբ տիրեին երկրին, երբեմն Յունաց կայսերաց խնամակալութեան տակ, և երբեմն ազատ: Ախպիւր էր Թոռնիկն որդի Մուշեղայ՝ զոր յիշեցինք (40), որոյ որդին Զօրտուանէլ Մամիկոնեան կ՚իշխէր ՚ի սկիզբն ԺԲ դարու, զոր արքայակերպ մեծացընէ՝ այն տաեն Մշոյ Առաքելոց վանքը նաստող Պօղոս Տարօնացի վարդապետն, Յունաց դէմ տաստիկ կրնաք գրուածոյն մէջ: Յիշուին տասը որդին Վիգէն, և տասը Թոռն Շահնշահ՝ փեսայն քեռկամ Թոռնէին Շնորհալւոյ, որ կ՚իշխէր նաև յետ Շնորհալւոյ (1184), երբեմն Շահի–Արմէնին քովարգելուած, յետոյ ազատած, և յետոյ դարձեալ ղրկուած:

Ահա այսքան իշխանութիւնք կամ կոտորակք իշխանութեց Հայոց կային՝ ի ժամանակս Շնորհալւոյ՝ ի Մեծ Հայս. յորս միութիւն չըլլալով, նաև անկարելի ըլլալով իրարմէ տեղեաւ զատուածք և յայլազգեաց անջրպետուածք ըլլալնուն համար, ամբողջ ազգութիւն մը չէր երեւեր. և իրաւամբ կոչէր Շնորհալին բաղմիշխանութիւնն և չքութիւն բաղմաձոռով ազգային քաղաքի, ուր կարենային հայրապետական աթոռը դնել. և հիմայ սակաւեցան հանգչեցընել զայն՝ ի դղեկին Ծովուց:

## Թ.

*Եպիսկոպոսուրիւն Շնորհալւոյ. — Օգնական եպիսկոպոսուրիւն կարողիկոս եղբօրն. — Գրիգորիսի յորդորանօք եղած մատենագրուրիւնք. — Իգնատիոս վ. — Սարգիս վ. — Շնորհալւոյ Մահն. Մատենք:*

Հաւանական երեւի որ այս նոր բնակութեան և նոր Աթոռոյն մէջ Ներսէս ընդունեցաւ եպիսկոպոսական օծումը, իր եղբօրը ձեռքէն, և անոր հրամանաւ քան խնդրանօք. վասն զի Շնորհալի իր սովորական պարկեշտութեամբ և խոնարհութեամբ կը ղդուշանար ամեն պատուաւոր աստիճանէ. թէ և գրեթէ անկարելի էր եւս կենալն, այնպիսի ձեռնադրիչ մ'ունենալով, որ թէ ուրիշ նկատմունք չունենար՝ նոյն իսկ կաթողիկոսական աթոռն ալ կ'ուզէր շուտով թողուլ իր հարազատ և սեւելի շնորհազարդ եղբօր: Ամենուն յայտնի էր որ շուտ կամ ուշ Ներսէս պիտի եպիսկոպոսանայ, և հաւանօրէն նաև կաթողիկոսանայ. ուս-

ան իր ամօթխած ուԹիւնն և հնազանդուԹիւնն հաւատար եղան. առանց շատ ընդդիմուԹիւն ցուցնելու այն բանին՝ ուսկից պիտի չկարենար հրաժարել՝ խոնարհեցաւ հայրապետ եղբօրը աջոյն տակ, և մեծ հանդիսի մէջ ձեռնադրեցաւ եպիսկոպոս: Ոմանք համարին ԹԷ 30 տարին անցած էր Ներսէս ձեռնադրուԹեան առեն, այլ Գրիգորիսի սէրն և ջանքն, Ներսիսի արժանաւորուԹիւնն, և այն առենուան սովորուԹիւնն՝ աւելի կարծել կու տան՝ ԹԷ և քսան տարիէն ալ շատ չանցած, և գուցէ դեռ՝ի Ծովք դղեակը չեկած՝ եպիսկոպոսուԹիւնը ընդունած էր. վասն զի ԹԷ Ներսէս կը խորշէր և կը խղձէր իբրև արենակից ցուԹէ պատճառ մը կարծեցընել այսպէս փուԹով եպիսկոպոսանալը, եղբայրն ալ ուշացընելը կը խղձէր՝ իբրև անտեսուլ ըլլալու այնքան արժանեաց. կամ ինչպէս աւելի գեղեցիկ ուժով կ'ըսէ Լամբրոնացին, Գրիգորիս

« Պատիժ անձինն իւր վարկանի
ԹԷ գլրուանաւ լոյսըն ծածկի...
Աղերսանօք առ նա խօսի,
Ածել ըզընծորն՝ ի գործ բարւոյ...
Իսկ խոհականն յամենայնի՝
Սիրով կամացըն հնազանդի...
ՁեռնադրուԹեամբ հօր օծանի
Եպիսկոպոս մեծահարկի »:

Շնորհալին իբրև եպիսկոպոս առանձին ԹեմիԹ մ'ալ ունեցեր է, գէԹ առեն մը, (ըստ ոմանց Մամեստիա), վասն զի ԱւետաբանուԹեանը մէջ խոնարհաբար ինքզինքը մեղադրելով կ'ըսէ. « Եւ « ոչ՝ի ՏէսլուԹեանն՝ ուխտաւոն հօտի արբուցի զջուրն « հանգստեան », և այլն:

Ոչ քիչ անգամ մեր եկեղեցւոյ մէջ տեսուած էին կրկին եղբարք եպիսկոպոսունք, և երբեմն քահանայապետք, այլ գուցէ ոչ այսքան արժանաւոր անձինք, որով և աննմանք. մանաւանդ ոչ երբեք այսպիսի զուգակիցք, որք աւելի քան զ'40 տարի միաբան, իբր արդարև ամոլք սիրալուծք քրիստոսեան ագարակին մէջ՝ շիտակ և անխոնջ արօրտագրելով, անբաւ բարեաց բերովք լցին զհամբարս Հայաստանեայց եկեղեցւոյ և զերկինս իսկ: Պատմչաց և մեր իսկ լուածը՝ դիւրաւ կըրնայ դուշակել խոհական ընթերցող կամ քննող մը, այսպիսի անզուգական զուգից այսքան երկար խաղաղական քահանայապետութեան վայօք. որ համբաւով և արդեամբք մեր աղգին հայրապետութենէ ամենէն պանծալի ժամանակներէն մէկն է, կըրնայ ըսուիլ թէ և յեսմինն: Այս սքանչելի հարազատաց ձեռն՝ի ձեռն գործակցութիւնն՝ ոչ թէ լոկ մէկի տեղ երկու հոգւոյ առաւելութիւն մը տուած է, այլ իբրև մեծ միաբան բազմութենէ մը. որովհետև իրենց միաբանութիւնն կամ միութիւնն՝ ոչ լոկ արեամբ և տարիքով էր, այլ կըրնանք ըսել ամենայն կերպով. եռանդեամբ, մտաւոր կարողութեամբ և ախորժակօք, բնականէն վեր հոգեկան սիրով, և իբրև հայրենասանդ կտակաւ կամ պարտքով մը՝ Հայոց եկեղեցին իր տակի պատուոյն և բարձրութեան մէջ պահելու: Մերձաւոր և օտարաց վկայութիւնն, գարմանք և գովեստն և հաճութիւնն ալ՝ իրենց իրախոյս և նոր ոյժ կ'աւելցընէին, յետ տասուածտարեայ շնորհաց և զօրութեան, որ հաճեցաւ այս հարազատաց ձեռքով նոր այցելութիւն մ'ընել մեր եկեղեցւոյն: Բայց մենք խօսքերնիս կարելով թողունք Ս. Ներսեսի Լամբրոնացւոյ նեղլսողել տանց գործը, յետ յիշելու զեպիսկոպոսանալ Շնորհալւոյն.

« Ահա վերին կամքն հաճեցան
Եւ Լուսաւորչքըս պոյացան.
Յեկեղեցի հասատատեցան,
Ծագայ ի ծագըս փայլեցան.
Երկու Ընտրեալքս որոշեցան,
Հոգւոյն կոչմամբ առաքեցան.
Բարձրաբարբառ քարոզ ելան
Զաւետարանն յազգըս տարան.
Որք յաշատնակ լոյս բարձրացան
Ի Թորգոմեան տուն ծագեցան.
Հիւսիսայինըն խաւարման
Փոյթ հալածող արեւ ցուցան:
Ի յառաջին աթոռ նըստան
Կաթողիկոսք երեւեցան.
Նախ յարեւմուտըս ճոխ ելան
Եւ յարեւելս պայծառ ցուցան:
Սոցա շնորհաց նըշոյլ փայլման
Զահաւորեալ տապով ջերմանն՝
Մեղաց ձըմեռն էառ վախճան,
Առնամածեալ ախտքըն սուզան.
Գարնանային ժամքըն հասան,
Յամպոց քաղցրիկ ցօղ հոսեցան.
Պաքեալ հոգիքն ըղմայլեցան,
Հայոց ազինքըս ծաղկեցան.
Աչխարհ ամեն խաղաղացան.
Ֆրխտանէից ազգ զօրացան,
Եկեղեցիք փակեալք՝ բացան.
Եւ վանորայք առատացան.
Վարդապետաց աթոռք եդան,
Ուսանելոյն ոչ յագեցան.
Մխայնութեան սիրոյք ելան,
Անհիւհական վարս ըսատացան:
Ի զանազան պըտուղս աճման
Յորդիսաեր հարքըն տեսան.
Փրկչին անուանն ըզփառըս տան,
Ընծայն հայցեն մինչ 'ի վախճան »:

Կաթողիկոսի վերաբերեալ անմիջական գործերն՝ ի հարկէ Գրիգորիս գործեր. այլ գործոց մեծագոյն մասն Շնորհալւոյ ձեռօք կատարուէր. և սա մանաւանդ էր գործողն, նա հրամայող կամ վաւերացընող. վասն զի հաւանութիւն և կամք հաւասար էր երկոցուն: Ներսէս թէ և որոշակի փոխանորդ կամ աթոռակալ կոչուած չէ կաթողիկոսին, այլ իրօք առաւել էր քան զայն. ոչ միայն ներքին վարչութիւն և հոգք հայրապետական նոցին, այլ և գրուածք և պատգամաւորութիւնք՝ Շնորհալւոյ ձեռօք և անձամբ կատարուէին: Միով բանիւ յամենայնի առաւել Ներսէս կ'երևէր և փայլէր, քան Գրիգորիս, բայց եթէ ՚ի հանդիսական տեղիս և գործս: Այս բանիս գլխաւոր պատճառն յայտ է որ Ներսիսի շնորհաց և ձրից առաւելութիւնն էր. թէպէտ և Գրիգորիս իսկ շնորհազարդ, վսեմական, զգօն և համառօտ, այլ իր մեծ փառքն՝ մեծագոյն ևս փառք ունէր մօտը, ինչպէս պայծառ աստղ մը պայծառագոյն սաստեղ մը քով. որուն ոչ միայն աննախանձաբար տեղի կու տար Գրիգորիս, այլ և պատուասիրաբար յառաջ անցընէր, մինչև ուր որ կըրնար թողտալ կաթողիկոսական միաթոռութիւնն:

Անշուշտ մէկերնին բաժնած էին գործոց և գրուածոց մասերը. Գրիգորիս վերը յիշեալ կաթողիկոսի անմիջական գործերէն դուրս՝ առանձնական պարապմունք ընտրած էր իր մեծ քեռւոյն Տօնամակը աւելի ճոխացընել, նորանոր վարուք և վկայութեամբք սրբոց, ևս առաւել ներբողենիւք, այսինքն գովասանական ճառիւք Տնօրինական և Տիրամօր ծննդից, և սրբոց ոմանց. քանի մ'ալ ինքնագիր յօրինած է. ասոր համար կոչուեցաւ Փոքր Վկայասէր և Գրոց Ներբողենից. որպիսի են Ս. Աստուածածնի ծննդեան և անդեան գովասանական պատմութիւնն, և « Գրուատ գովեսի Տնօ-

« լինական տեղեաց Երուսաղէմի », և այլն: Ա-
սոնցմէ զատ գեղեցիկ շարականն Աւետեաց՝ խո-
հուրդն անճառ, նաև Ի Ծաղկազարդի ըսուած կա-
նոնն, (Մեծահրաշ այս խորհուրդ). իրեն կ'ընծայուին
Ջրօրհնեաց գեղավեմ տաղն ալ, « Ո՛վ զարմա-
նալի խորհուրդս այս մեծ յայտնեալ », ըստ ումանց
և՛ի պատիս Լուսաւորչի երգուածն՝ « Ի յեղս ա-
րեւու արեւ »: Առաջինն կըրնայ մեր քանաստեղ-
ծական գպրութեան փոքր գրուածոց չքնաղա-
գոյներէն սեպուիլ, և վեմութեամբ ու պարզու-
թեամբ ու զանազանութեամբ իմաստից յայնքան
համառօտութեան՝ Շնորհալւոյ խակ երեց եղբօր
մը արժանաւոր գրուիլ: Կան ձեռագիրներ քանի մը
ջերմեռանդն և զղջական աղօթքներ ալ յանուն
Գրիգորիսի կաթողիկոսի, բայց առաջիւ տաղ
ըլլալը չեմք գիտեր, և հաւանական են յետնոց
ըլլալ: Բայց այս քանի մը յիշեալ, միանգամայն
և քանի մը տեսակ գրաւոր արտադրութիւննե-
րէն կ'իմացուի՝ որ Գրիգորիս ալ հանճարեղ անձն
էր, և ոչ միայն աթոռով այլ և գլխով կըրնար իր
քեռւոյն և եղբօր հետ դասակարգիլ, և քան զնա
աւելի բարձր և խիզախ թռչիլ բանաստեղծական
թեւերով: Այլ չեմ գիտեր իր անձնական գրուած-
ներուն աւելի արգիւնաւոր է մեր գպրութեան
մէջ, թէ ուրիշներու ալ գրել տալովը. որոց մէջ
եթէ առաջինն է իր հարազատ Ներսէս, իրենց
հին ուսումնակից՝ Եպիսկոպոս և Սարգիս ալ՝
արժանաւորք են իրենց դասակցութեանն և յիշման:

Առնոյ մէջ կարգաւ և պատուով առաջինն է
Եպիսկոպոս վարդապետս, որ և եպիսկոպոս եղած
է, հաւանօրէն սոյն Գրիգորիսի ձեռնադրութեամբ.
որ և յանձներ էր իրեն Ղուկասու աւետարանին
մեկնութիւնը գրել. իսկ նա կը գանգատէր, կամ
գործոյն գժուարութեան, կամ որ և է պատճա-
ռաւ. մինչև, ըստ աւանդութեան, տեսլեամբ քնոյ

տեսաւ գեղեցիկ և լուսաւոր տաճար մը, ուր կը մտնէին իր ընկերակիցքն, և իրեն թոյլ չէր տըրուեր մտնելու, որովհետև չէր աշխատած՝ անոնց պէս հոգևոր գրչութեան, և կաթողիկոսին յանձնածը չէր կատարած: Ակէց յորդորեցավ, կ'ըսեն, ձեռք զարկաւ և գրեց Ղուկասու աւետարանին մեկնութիւնը. համառօտ խօսքերով, այլ իմաստը բովանդակելով, առանց երկար քննաբանութեց և յիշատակութեան հին հարց գրուածոց. միանգամայն և յստակ հայկաբանութիւնը և հանճարեղ դարձուածքներով. որով մեր գպրութեան ամենէն ճարտար և յստակաբան գրչաց և համառօտաչաց մէկն կամ գլխաւորն է: Գրութեան տարին չէ նշանակած յիշատակարանաւ, կամ ընծայականաւն առ Գրիգ. Կաթողիկոս, այլ յայտ է որ ԺԲ գարուն կիսէն յառաջ գրած է, թերևս քան զտանա ուշ սկսելով՝ այլ աւելի շուտ աւարտելով. վասն զի յամին 1146 Կոնդ Սարգիս աթոռամբ արևելքի վարդապետ մ'ալ, աշակերտ մեծիմաստ Սարկաւագ վարդապետի, Ղուկասու աւետարանի համառօտ մեկնութիւն մը գրելով կը հաւաքէ 'ի զանազան Հարց և վարդապետաց գրածներէն, որոց մէկն ալ կոչէ Տէր Իգնատիոս:

Իսկ Սարգիս վարդապետ՝ դասընկերն Իգնատիոսի, որ Սեաւ Լերանց Քարաշխոհու ըսուած վանքը կը բնակէր, գրած է եօթն Կաթողիկեայ Թղթոց մեկնութիւնը, երկար քննութեամբ և ան՛լ երկար խրատական յորդորակօք, ջանալով Ոսկիբերանի ոճոյն հետևել. բոլորովին տարբեր ձամբայ մը բռնելով իր դասակիցէն. որքան նա համառօտ կ'անցնի, այնքան սա երկար և ուշ. բայց շարագրութիւնն նոյնպէս յստակ, և աւելի պարզ ու վայելուչ ըլլալով, զրուցուածքն ալ կակուղ և սրտաբուղխ, անհարուժ ջըլլար կարդալու: Այս ընդարձակ գործն հաւաստեաւ քանի

մը տարուան մէջ գրուած է. տեղ մը կը յիշէ հեղինակն որ Քրիստոսի հազար Թուականէն մինչեւ այն գրելու տաեն՝ 156 տարի անցեր էր, եւ ա- տով կ'իմացընէ իր մատենագրութեան ժամանակն ալ: Յետ որոյ տեսնելով ինքն հեղինակն որ գը- րուածքին երկարութիւնն կը գժարացընէ օրի- նակներու շտացընել եւ շատոց ընթերցանելի ընել, քանի մը տարի վերջը, համառօտեց իր գիրքը, եւ նոր գործ մը հրատարակեց. սակայն առաջինն եւ ընդարձակն աւելի ընդունելի եղաւ յետոց, եւ տպագրեցաւ ալ՝ի Կոստանդնուպոլիս, քիչ մը համարձակ ձեռօք: Այս գրուածիս տաեն՝ կը յի- շեցընէ Սարգիս իր ծերութիւնը, «Ազաչելով «ման իմ ծերոյս Սարգսի՝ զՏէր». Թուականն ալ կը նշանակէ, այսպէս. «Հայ Թուականն յայնմ «ամի՝ յորժամ կատարեցի զհամառօտս, յիշա- «տակ ինձ եւ իւոցն, եւ՝ի վարժուհին մանկանց նո- «րոյ առագաստի մօտս մերոյ՝ վերինն Երուսա- «ղէմի, ձեռ էր ընդ վեցհարիւրի. ի փառս Քրիս- «տոսի». որ է մեր Շնորհալւոյ կաթողիկոսանա- լութ տարին, 1166:

Սա ինքն հայրապետս Ներսէս ալ հաւաքած է կաթողիկէից Թղթոց համառօտ մեկնութիւն մը՝ ի բանից Ս. Հարց, որոյ հին օրինակ մը գտուի մեր ձեռքը, գրուած իր մահուընէն 26 տարի ետև, յամի 1198. յորում հեղինակին անունն յիշատակարանին մէջ քերուած է, այլ ուրիշ օրինակ յայտնապէս կը վկայէ թէ հեղինակն էր «Հայրապետական արժանացեալ շնորհի եւ վար- «դապետական վիճակեալ տառիճանի, Տէր Ներ- «սէս, մականուամբ Կլայեցի, համատիրացն հե- «տեւելով պարուց», և այլն. և այս կրնայ լու- ծանել զտարակոյս ոմանց՝ որ [1] իրեն չեն համարիր

1 Զամչեանն, Պատմ. Հայ. Գ. 86:

այս գրուածը. զոր մանաւանդ պէտք էր հաստա-
տել մեր օրինակին մէջ անմիջապէս Թղթոյ մեկ-
նութենէն վերջը՝ Շնորհալւոյ գրած կամ օրբա-
գրած Ս. Սարգսի վկայաբանութիւնն, և գրոց
նախագաղափարն՝ Շնորհալւոյ եղբօրորդւոյ Գրի-
գոր Ապիրատ կաթողիկոսին ըլլալն: Այս մեկնու-
թիւնս Սարգսի գրածին պէս միատարր մեկնու-
թիւն չէ, այլ Ս. Հարց խօսքերն հատուած հա-
տուած շարած և իրարու ագուցած, անուննին
ալ նշանակելով:

Հարկ համարեցանք նշանակել այս բաներս,
մեր Շնորհալւոյ որ և է թէ աներկբայ թէ երկ-
բայական երկասիրութիւնները անծանօթ չթող-
լու համար. միանգամայն յիշելու և այն առեն
Գրիգորիս կաթողիկոսի ունեցած փափագը՝ Ս.
Գրոց դիւրահաս մեկնութիւններ հրատարակե-
լու. որոց կարող և յարմար գիտէր իր այսպիսի
հին ուսումնակիցները: Անհնար էր որ ատոնց մէջ
ալ չգտնուի իր բազմահանճար հարազատն. և
ահա՝ եթէ ոչ Կաթողիկէսյց Թղթերը հեղինակո-
րէն մեկնեց, նոր Կաթակարանաց առաջին գիրքը
սկսաւ մեկնաբանել. և երևի թէ կանուխ ալ
սկսաւ այս գործը. եթէ յառաջաբանին մէջ յի-
շած խոնարհ երախտապարտութիւնն առ իր կա-
թողիկոս եղբայրն՝ համարինք իբրև նոր յիշատակ
մ՚իր դասախարակութեանը, և ոչ հնացեալ՝ իր
խոնարհ սրտին մէջ, որ ինչուան հաքն ալ իբրև
օտար և նուաստ եկեղեցական մը՝ կը պատուէր
զԳրիգորիս իբրև հայրապետ Հայաստանեայց ե-
կեղեցւոյ, և կը սիրէր իբրև հարազատ. և եր-
կուքն ալ կը յայտնէ իր յառաջաբանին: « Սկզբ
« զօրութիւն՝ գերազանց է քան զբնութիւն... և
« եթէ տուն ոմանն՝ ունէ պանծալի ըստ մարմնաւոր
« իրիք պատճառաց, որպիսի ունէ բոլորին կրո-
« ղաց, ըստ խնդրոյ պատահեալ անձին՝ առ՚ի

« քէն գԹուԹեանց. ոչ յաղագս բնաւորականին
« միայն կապակցուԹեան արեան, որ հանուրց
« է առիԹ և փոքրոգեաց, այլ սակս գերա-
« զանցելոյ բանի և գրոյ՝ ներգործեցելոյ առ նա
« բարեաց... Զեանարիեալ յայս առաջարկու-
« Թիւն՝ ըստ պատուականաբար քում հրամանի,
« գլուխ պատուական, յետ գլխոյն եկեղեցւոյ,
« Գրիգորիոս կաԹողիկոս Հայոց », և այլն: Գը-
րուածին կերպին համար ալ կ'իմացընէ, որ նը
կամքն էր « հաւաքել զատրածեալ բանս սըր-
« բոյն, և դնել հանդէպ իւրաքանչիւրուԹեան աւե-
« տարանականաց բանից.... է՛ ինչ զն զնոյն ե-
« գաք նկատագրուԹիւն՝ ի մեկնողացն բանից, և
« է զն զատ՝ ի նոցայն միատ՝ մերոյս բանիս, յոր-
« ժամ ընդարձակագոյն ճառիցն բանք. և Թէ
« յայլ և յայլ տեղիս ցնդեալք՝ ի մի նմն բերեալ
« ընտանեգոյն բանին զուգելով. փոքր ինչ և՝ ի
« մէնջ յաւելեալ՝ անփոյԹ եղելուԹիւն՝ ի նոցունց
« բանի. է զորս յայլոց այլոց՝ ի գիրս գտեալ, և
« է զորս՝ ի մերոց ներածուԹեանց. որպէս զն ա-
« մենեքումբ փառաւորեսցի անկարօտն փառաց
« Աստուած »: Ա.յսպիսի անոյշ խօսքերով է և
մեկնուԹիւնն. որուն սկիզբը արժան համարած է
հին աւետարանաց համաբարբառ ըստուած ցանկե-
րուն վերև պէտէս նկարնեերուն, խորանաձև
կամարներու, կենդանեաց, զարդուց և այլն, խոր-
հըրդաւոր միտքեր տալ կամ արուածը բացատրել:
Իսկ մեկնուԹիւնն Սարգսի գրուածին պէս միա-
ձոյլ է, առանց յիշելու և վկայուԹիւն կանչելու
զՍ. Հարս, Թէ և շատ հեղ անոնց բերնով կը խօսի.
ինչպէս ինքնին իմացուց յառաջաբանին մէջ. և
յայտնի է որ պէտք էր ամենէն աւելի Ս. Յովհան
Ոսկիբերանին իմաստներն առնուլ, որ այնպէս
ընդարձակ և պայծառ բացատրուած էր զՍ. Ա-
ւետարանիչը, և զոր նախնիք մեր՝ գրողին յար-

մար ոսկեղէն հայկաբանութեամբ մը թարգմանած են. իսկ մեր Շնորհալին այն ոսկի բերանին բվնածն՝ իր արծաթափայլ բանիւ և գրչով յերիւրած յարմարած է հասարակաց մտաց գիւրահաս, և միջակ չափով. իբրև անարուեստ ա-րուեստով մը, որ պաճուճելի պարզութեան հետ՝ մտաց յափրդրդ կու տայ և սրտի հանգիստ: Ա.յս գործս Շնորհալւոյ գլխաւոր գործոց մէկն է, և ալ աւելի պիտի ըլլար, եթէ այնու ոճով շարունակուած մինչև ի վերջ աւետարանին՝ մեզի հասած ըլլար. սակայն իր գրածն և մեկնածն մինչև յ'17 համար ե գլխոյ Մատթէոսի հասած և հոն դադրած է. և այսպէս գտաւ 100 տարի վերջը՝ Կիրակոս պատմիչ, որ « ոչ գիտեմ, կ'ըսէ, թէ « վասն ի՞նչ պատճառի խափան եղև », շարունակութիւնն մեկնութեանն. 50 տարի ալ ետև, (յամին 1316) մեծ բանասէրն Յովհաննէս Երզնկացի, շատ քննեց՝ բայց չկարցաւ ստուգել թէ ինչո՞ւ անկատար մնացեր էր Շնորհալւոյ երկասիրութիւնն. և թէպէտ « ոմանք զմահն ասացին « խափանումն, և այլք զհոգ հայրապետական « աթոռոյն, և կէսք թէ գրեաց՝ և չէ՛ ի միջի [1], « բայց ոչքա ինձ ոչ եղեն հաւանելի », կ'ըսէ. և իր առանձին կարծիքը չի յայտներ. բայց միայն կ'իմացընէ, որ իրմէ առաջ ոմանք ձեռք զարկեր էին շարունակելու Շնորհալւոյ սկսածը, « սա-« կայն ոչ էր կարգաւոր որպէս Սրբոյն, այլ հա-« տակոտոր արարեալ զբանս առաջնոյն մեկնչաց, « նաև զբնաբանութիւնն աւետարանին արտաքս « մերժեալ, ուստի ոչ գայր գիւրաւ յիմացումն

1 Յառաջաբանէն յայտնի եղաւ որ եղբօրը կաթողիկոսութեան առեն սկսած էր գրել այս Մեկնութիւնը. բայց Լամբրոնացին՝ առանց Մատթէոսի անունը տալու՝ աւետարանի մեկնութիւն գրել Ներսիսի կաթողիկոսութեան առեն կը ցուցընէ:

« ընթերցողացն », և այլն : Այս ակնարկեալ մեկ-
նիչներէն մեզի յայտնի եղածն է Արիստակէս վար-
դապետ մը և իր աշակերտն Եփրեմ, որք Երզընկացւոյն ըսածին պէս՝ շարունակած են մեկնու-
թիւնը՝ Ոսկիբերանի հետևելով միայն, կամ հա-
մառօտելով զայն : Իսկ ինքն Թադէի վանքը նըշ-
ած առեն՝ ուսումնասիրաց սղաչանօք յորդո-
րուած՝ չանալով ըստ կարի Շնորհալւոյ ոճը բըռ-
նել, անոր գաղափար տեղէն (յ'18 համարով և գըլ-
խոյն) յառաջ տարած և աւարտած է բոլոր Մատ-
թէի աւետարանին մեկնութիւնը, 'ի նոյն ինքն Շնորհալիէն շնորհք և լոյս առնելով, ինչպէս կըր-
նանք իմանալ ըսածը, թէ մեկնութիւնն առած է
մասամբ « յառաջին սրբոյն . և է զի 'ի ծագմանէ
« նշուլից շնորհաց վերատացեալ առնն Աստու-
« ծոյ՝ 'ի միտս մեր ... խառնելով զնաեմատեսակ
« բանից ազեղութիւն՝ ընդ չքնաղագիտ և լու-
« սատեսակ իմաստից պայծառութիւն . գիտե-
« լով եթէ Պօղոսի շնորհէ վարձս՝ ըստ տնկելոյն ,
« և Ապօղոսի՝ ըստ ոռոգելոյն . վասն որոյ ապա-
« շեմ ... վաստհութեաս մերում ներծոյս լինել », և այլն : — Արդարև Երզնկացւոյ յուսոյ և փա-
փագանաց յարմար՝ իր վրայ Ներսէսի շնորհաց նշոյլքն ծագեալ կ'երևին, որով կըրցեր է մանել « յընդարձակութիւն անդնդական խորոց լայնու-
« թեան , 'ի խորութիւն ծովուս անցանել և յեզր
« աւետարանական բանից հասանել », գեղեցիկ վստահութեամբ և յաջողութեամբ . և մեծ շնոր-
հակալեաց արժանի է : Սակայն եթէ մեր ծարաւը կը լեցընէ , ոչ երբեք կը յագեցնէ փափագն և ցան-
բուն իսկ Շնորհալւոյն ամբողջ գրութիւնը չունե-
նալնուս , իր աքանչելի ոճով և հնարքովը . այն
աստուածաշունչ կերպովը՝ զոր 'ի սկզբանն յիշե-
ցինք , իբրև աւետարանն զմայլմամբ և յափշտա-
կութեամբ , որով կրկնակի նմանի Ոսկիբերանի :

Իսկ իր աշխատանաց՝ (գժուարին կամ հակառակել բանից Ս. Աբեսաղամին՝ մեկնութիւնը գտնելու) վկայ ունիմք յիշատակ մը, որ կը ծանուցանէ մեզ, թէ վանդիկն Ս. Յովսեփայ հօրն անուանը, (զոր Մատթէոս Յակոբ կոչէ, Ղուկաս՝ Հեղի) լուծելու համար, հարցուցեր էր նաև Ասպուսայիտ Ասորի բժշկին և հնագիտին, և անոր եկեղեցւոյն աւանդութեամբ ստուգեր, որ Հեղիայ անորդի մեռնելովը՝ Յակոբ առեր էր անոր կինը, ըստ օրինաց Հրէից, և անկէ ունեցած զաւակին Յովսէփ՝ իր որդին էր բնութեամբ, այլ օրինօք՝ որդի Հեղեայ. ինչպէս որ նոյն իսկ Հեղի և Յակոբ ալ եղբարք էին համամարք, այլ տարբեր հայրերէ, մէկն 'ի Մատթանայ (զոր Մատթէոս յիշէ) միւսն 'ի Մելքեայ (զոր Ղուկաս յիշէ): Այսպէս ալ կը գրէ Շնորհալին, ըստ տվօրութեանն լսելով իր մեկնութեան աղբիւրները. վասն զի ոչ եթէ իր հմտութիւնը կ'ուզէր յայտնել, այլ ընթերցողը հմտացընել. ատոր համար չէր խորշեր և չէր զանց առներ հետամուտ ըլլալու հաւաստագոյն աղբիւրներու, որ և է խնդրոյ և գիտելեաց համար: Եւ ահա նոյն յիշեալ Ասորի հեղինակին հարցուց և քննեց իր բնական աշխարհին մէջ եղած անուանի Եգեսիոյ քաղաքին սկզբնաւորութիւնը, որոյ վրայօք իր հաչակեալ Ողբը պիտի գրէր, ինչպես տեսանենք յետոյ: Իսկ հիմայ բաւական ըլլայ ըսածնիս 'ի ցոյց գովելի և վստահալի երկասիրութեան մեր Շնորհալւոյն, և իր անխոնջ աշխատանացն 'ի գիւտ ճշմարտին. յատկութիւն մը՝ որ իր ամեն յատկութեանց ալ կրկին արժէք կու տայ:

## Ժ.

Գիտնական անձինք և տեղիք ժամանակիս ի Մեծ Հայս. — Ագի և Ագնցիք, Սամոռեղ, Միխիթար, Վարդան, ասոր Երգնկիկն. — Գանձակ և գիտնական վարդապետքն. — Միխիթար գոչ. — Հաղբատ և Սանահին. — Յակոբ Քարափնեցի. — Յովհ. Սարկաւագ Սոխնատես:

Անշուշտ Գրիգորիս նոր Վկայասէրն և խմաստասէր՝ ոչ միայն իր մերձաւոր վարդապետաց և գիտնոց գրելոյ և աշխատելոյ յորդորիչ և Մեկենաս եղաւ, այլ և հեռաւորաց, ըստ իւրաքանչիւր յարգողութեանց. որոց մէջ համարուի Ժամանակագիրն Սամուէլ երէց Անեցի, յերիտասարդութեան՝ գերահռչակ Սարկաւագ վարդապետի աշակերտած, անոր բազմապատիկ հմտութեանց հաղորդ և սիրող. մանաւանդ պատմական և ժամանակագրական գիտելեաց: Սովորաբար կարծուի Թէ Գրիգորիս յանձնեց ասոր՝ ստոյգ քննութիւ ազգային և դրացի պատմութիւ ժամանակագրութիւն մը յօրինել: Մինչև այն ատեն չատ Հայ պատմիչք եղած էին, և չատին գրածն ալ կը-ատուեր, սակայն դեռ ոչ ոք այնպիսի ոճով գրած էր, որ Եւսեբիոսի Փրոնիկոնին՝ այսինքն ժամանակագիր պատմութեան նման ըլլայ, ատուգելով դիպաց և թագաւորաց ու քահանայապետաց թուականները, և աղիւսակներով ալ զանոնք չարելով և իրարու հետ համեմատելով: Մեր բազմերախտ պատմահայրն Մովսէս Խորենացի՝ առա-

ջին հետևող Եւսեբեայ, անշուշտ այսպիսի բան մ՚ըրած էր իր պատմագրութեան եռևը, ինչպես որ կարճ խօսքով մը կ՚իմացընէ, սակայն մեզի հասած չէ սոսկ բան մը. և ոչ իսկ Սամուէլ կը յիշէ զայս, այլ միայն Թէ իրեն առաջնորդ կ՚առնու զասունք, « ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբեայ » բի ասեմ և զՄովսէս Խորենացի »: Անոնցմէ եռև Սամուէլ ուրիշ ազգային և Թարգմանեալ պատմիչներու հետևելով, և իր վարպետաց՝ Սարկաւագայ և Գէորգայ Ծանօթութեանց, ՚ի նահապետաց կը սկսի ժամանակագիրը պատմութիւնն ընդհանուր հին ազգաց՝ մինչև ՚ի Քրիստոս, ըստ կարելւոյն Թուականներն ալ դնելով. իսկ ՚ի Քրիստոսէ կը սկսի ասոր Թուականաւն շարել գաւազաններով կամ աղիւսակներով՝ անընդհատ տարի առ տարի, Հայոց, Հռովմայեցւոց կամ Կայսերաց, Պարսից և յետոյ Արաբացւոց իշխողաց յաջորդութիւնները, և ըստ ժամանակին՝ Հայոց կաթողիկոսաց շարքը, իւրաքանչիւրին իշխանութեե և աթոռակալութեե տարիքներն ալ նշանակելով հետզհետէ. իսկ նշանաւոր դիպուածները՝ աղիւսակաց լուսանցքները գրելով, և երբեմն այս աղիւսակները կամ գաւազանները գագրեցընելով, ուր կարևոր տեղեկութիւններ գրելով, յետոյ գարձեալ շարունակելով զգաւազանս. և այսու ոճով կը հասցընէ մինչև Շնորհալւոյն վախճանը և անկէ քիչ անգին, տարին 1177. ուսկից անդին ուրիշ շարունակող հեղինակ մը կ՚ըսէ. « Աստանօր զտեղի « առեալ կացին շարադրութիւնք գեղեցկաբանին « Սամուէլի, զոր բազում երկասիրութենամբ հոգ « տարեալ ստուգագրութեան՝ և ճշգրտիւ հա « տուցեալ մինչև յիւրն ժամանակ »: Իսկ ինքն Սամուէլ յառաջաբանութեանը մէջ կ՚ըսէ. « Մո « ռացեալ զպիտութիւն և զանուսումնութիւն « իմ, ՚ի թախանձելոյ քոյ, սրբազգեացդ Գրի-

« գոր, յաղթեցայ 'ի կամաց ձերոց՝ առ 'ի գրել
« զոր կամեցար ... » : Նոյնպէս և յառաջ քան
զսկիզբն գաւազանագրութեան. « Արդ ո՛վ սըր-
« բազգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ 'ի թա-
« խանձելոյ ձերոյ զեղկելի անձն իմ, եառ զան-
« արհեստ ձեռն իմ 'ի մշակութիւն այսմ գոր-
« ծոյ, մոռանալով զբաջալմունս կենցաղական-
« նիս... : Սկսեալ 'ի ծննդենէն Քրիստոսի՝ յառա-
« ջին ամի, զոր կարգեցից բոլն Թուականն, և
« զԹագաւորս Հռովմայեցւոց, Հրէից և Պարսից և
« զմերոյս ազգի, ատոյգ գաւակաւ գրեցից անյա-
« պաղ » : Մեր ձեռքը հասած օրինակաց մէջ Սա-
մուէլի վերջաբանութիւնն կամ յիշատակարանն
չկայ. գուցէ գուրս թողած ըլլան իր շարունա-
կողքն, որք և իրարու յաջորդելով այս Հայկա-
կան Քրոնիկոնը կամ ժամանակագրութիւնը հա-
սուցած են մինչև յ'ԺԸ դար. և ինչպէս Սամուէլ
զԵսեբիոս օրինակ առեր է, զինքն ալ օրինակ և
առաջնորդ կ'առնուն մերազգիք :

Սամուէլ ժամանակագրութենէն զատ ուսմա-
րական բաներ ալ գրած է, որոց լաւ հմտացեր էր
իր ամենահմուտ վարպետէն (Սարկաւագայ). այս-
պիսի է պարզ ոճով ու հարցմամբ և պատասխա-
նով գրուած մը իր անուամբ, 'ի խնդրոյ Իմաստա-
սէր մականուանեալ Սեփանոս վարդապետի մը :

Թէ և սովորաբար ըսինք կարծուի որ Սամուէլ
Գրիգորիսի յորդորմամբ գրած ըլլայ ժամանա-
կագրութիւնը, այլ ինձ Թուի Թէ ոչ անոր՝ այլ
Գր. Տղայոյ խնդրով գրած է, որոյ ժամանակին
ալ կը գտգրեցընէ պատմութիւնը. վերոյգրեալ
յիշատակարանացը մէջ տեսանք որ զկաթողիկոսը
Գրիգոր կ'անուանէ, պատմութեանցը մէջ ալ
այսպէս անուանէ միշտ զՏղայն, իսկ զեղբայրն
Ներսիսի՝ Գրիգորիս : Բայց մենք ոչ զայս նկատե-
լով՝ հօս յիշեցինք այս հեղինակը, այլ զի ուզե-

ցինք ժամանակիս դրաւոր վիճակին ալ քիչ մը ծանուցանել, թէ մեր պատմական պարտքին աւելի ամբողջ բոլորելու համար, և թէ անոր կերպրոնը բռնող Շնորհալին աւելի պայծառ և գեղեցիկ ցուցընելու:

Արդ Թէպէտ և Շնորհալւոյ դասախօսակութիւնը յիշելու առեն՝ իրմէ ալ լսեցինք (61) որ Հայոց մէջ յունական հռչակեալ վարժարանք չկային, և ոչ դպրութիւն օտար լեզուաց, այլ ձանչցանք ալ որ իր ժի դարն մեր գրականութեան ամենէն ճոխ և պայծառ դարն է, յետ աշուրց Թարգմանչաց: Այս ուսմանց նորոգութեան սկիզբն՝ դար մ՚և աւելի առաջ սկզբնաւորեր էր, Բագրատունի Թագաւորաց հարստութեամբ և այլ և այլ իշխանաց բարեպաշտութեամբ, երբ սկսան վանքերը նորոգել և նորանոր կանգնել, մանաւանդ Շիրակայ և մօտիկ գաւառաց և Ձորոփոգեայ մէջ: Հարկ էր որ անոնց կենդրոն ըլլար մայրաքաղաքն Անի, ուր արքունեաց հետ հաստատեալ և հայրապետանոյն Հայոց, և իր մերձակայ սահմանքն. յորոնցմէ հաստատեցան կրօնից և ուսմանց հռչակեալ վանորայքն Հոռոմոսի, Հաղբատ, Մարմաշէն, Կարմիրվանք, և յաւուրս իսկ ուսմանց անուամբ կոչեալն Դպրեվանք, և Արփինայի կաթողիկոսարանն, ուր Խաչիկ Ա (971–991) «զաստուածախօս կառակս յոլովակի «աստուածայ՝ զկիրս սուրբս, զաւաքելոսացս և «զմարգարէաբարոյ պատգամն՝ հանգերձ ամե«նայն վարդապետացն ձայնիւք», ըստ Ասողկայ [1]: Դժբաղդաբար Անի երբ շինութեան և բարգաւաճանաց ծայրն հասաւ, երբ շատցան իր «վարդապետքն ճշմարտախօսք՝ հանգոյն առաջինն «վարդապետացն՝ ի խորս պիտուէն հասեալ [2]».

1 Գիրք Գ. գլ. Թ: 2 Ար. Լաստիվ. ժէ:

և երբ իր ընկերակից «անարատատոհմն վայրքն լցեալ
«և խճողեալ էին կրօնաւորական դասուք, մինչ
«զի զդեօղս և զպատարակս՝ առ բարւոյն նախանձ
«քահեալ՝ առնէին բնակութիւն կրօնաւորաց [1]»,
նման թարգմանչաց դարուն հանդիպածին՝ սա ալ
շուտով կորոյս Թագաւորական և հայրապետա-
կան գահերը. անով նուաղեցան և իր երկու ձեռն-
տուքն մեծաւոր բարգաւաճանաց. զոր սկ սեբէլ
զրկեցին անդադար և մի ըստ միոչէ յափշտակու-
Թիւնք Անոյ՝ ի Յունաց, Թուրքաց, Վրաց և Պար-
սից: Ի վերայ այսր ամենայնի դեռ մեր պատմա-
կան պարագային միջոց և ցվերջ ժի դարու՝ Անի
Հայոց մայրաքաղաք կը համարէր և բնակարան կա-
Թողիկոսաց, որք և յոյս ունէին վերադառնալու
հօն. որոյ և եպիսկոպոսն իբրև իրենց աԹոռակալ
էր, սկսեալ Մեծ Վկայասիրէն գրուած Բարսղէ.
և հարիւր տարի ետև ալ Հռոմկլայի ժողովին մէջ
(1177) յետ երկուց կաԹողիկոսացն՝ Հայոց և Ա-
ղուանից՝ ամենուն նախաԹոռ բազմեցաւ Անոյ
արքեպիսկոպոսն Բարսեղ. ըսել է որ այսպիսի եկե-
ղեցական աԹոռ, և քաղաքական ալ մեծ տեղակալն
կամ առանձնակ իշխող ամիրայից և փոխարքա-
յից գահ եղող քաղաքն՝ էր կըրնար չունենալ և
ուսումնական պայծառութիւն մը. Թէ և մեզի
անկէ շատ ձառագայԹներ հասած չըլլան՝ զլացու-
Թեամբ ժամանակի, այլ և ոչ խափառ աննշոյլ
մնացած: Եւ ահա վերոյիշեալն Սամուէլ, որ աշ-
խարհիկ երէց մ'էր, ըլլայ մեկ օրինակ մը. որոյ
յիշուին և երեք համաքաղաքացի համչիրակք, ա-
շակերտք Հռչակեալն Սարկաւագայ, Խաչփոր,
Գրիգոր և Յովհաննէս, իբրև նշանաւորք գիտուԹեբ և
գրչուԹեամբ, Թէ և դեռ մեզի ծանօԹ չէն իրենց
գրաւոր վաստակքն:

1 Արիստ. Լաստ. ժ:

Իսկ ինքն Սամուէլ յիշէ վերը նշանակուած Գէորգ վարդապետ մը՝ որուն աշակերտ ալ եղած էր, ինչպէս և Սարկաւագայ. և կ'ըսէ թէ այս Գէորգս իրեն պէս ժամանակագրական գաւազան մը գրած էր առջի դարերուն, ինչուան Հայոց Թուականը, 'ի կէս Զ դարու, և այս գործս եղաւ առաջնորդ Սամուէլի: Գէորգայ բուն գործն չը-կայ հիմայ. այլ շատ հաւանօրէն այս վարդապետն է Գէորգ Անեցի կոչուած Գանձասացն, որոյ ա-նուամբ քահանէն աւելի գանձք կան, չափաւոր ընորհքով, որոց անապլուխ տառքն Գէորգ կը կա-պեն, և մէկուն վրայ Անեցի կոչումն ալ գրած է:

Սամուէլի կրաբեր ժամանակակից և հայրենա-կից է Մխիթար Անեցի, մայրաքաղաքին կաթողիկէին Երէցը. որոյ հմուտ թեանը և հետաքննուած թեանը գովութեամբ կը վկայեն Վարդան և ուրիշ պատ-միչք, իրմէ լոյս առնելով. վասն զի Մխիթար ազ-գային Պատմութիւն մը գրած էր շատ քննութիւ և բազդատուութեամբ. նպատակ ունենալով բազ-բատուներաց ցեղին պայազատաց և թագաւորաց ու անոնց մայրաքաղաքին Անոյ և սահմանաց դի-պուածները. երէք մաս բաժնած էր գործը. ա-ռաջինն՝ բագրատունեաց հին յիշատակները՝ Հայկ-ազանց Պարոյր առաջին թագաւորէն սկսելով մինչև վերջին Յովհաննէս-Սմբատ բագրատունի թագաւորը կը հասցընէր. Ըն 'ի Յովհաննիսէ՝ մինչև 'ի Բարսեղ կաթողիկոս, Գն անկէ մինչև յառաջն Երուսաղէմի 'ի Սալահէտտինայ (1186) և քիչ մ'ալ վերջը՝ մինչև ցամն 1193, որ է ըսել 'ի մահ Գրիգորի Տղայոյ: Յայտ է որ Բ և Գ մասն՝ զոր ինքն Պրակ կ'անուանէ՝ շատ հետաքննական պիտի ըլլան, որոց մէջ «գրեթէ ը140 ամաց մեծամեծ «գործս», կ'ըսէ, պատմել և գրել խնդրեր էր իր-մէ Հաւնոյ [1] Վանաց Հայր՝ Գրիգորն, ինքն ալ

1 Հիմայ Ղչլախ կ'ըսուի, և է Անոյ մօտերը:

յանձն առեր էր գրել և «լայն և տարած բա-
«նիւք ընդարձակել»: Դժբաղդաբար այս պի-
տանի Պրակներն մեր ձեռքը հասած չեն. որոց
մէջ Թուրք տիրապետաց և Աթաբէկաց վրայ
կարևոր տեղեկութիւնք կային, արևելեայ օտար
պատմչաց գրուածներէն առած. որ և յայտնէ
իր լեզուագիտութիւնը:

Այս բանիս վկայութիւն է և պարակերէն լե-
զուէ աստղաբաշխական գիրք մը Թարգմանելն,
արեգական և լուսնի խաւարմանց վրայօք, շատ
աղիւսակօք, որ պարակերէն Զիճ կ'ըսուին, և
աստղաբաշխական գրուածք ալ նշանակեն. Թերևս
զնոյն պէսք է իմանալ Վարդան Պատմչի Ոճէ
կոչածը, զոր ինքն իբրև Պարսիկ հեղինակի անուն
յիշէ: Այս գործոյս մէջ (որ Պատմութեանը պէս՝
մեզի հասած չէ, կամ ծանօթ չէ) յիշէր Մխիթար
1176ին հանդիպած արեգական բոլորական մեծ
խաւարումը. զոր գիտելով և Ներսէս Լամբրոնացի՝
կամ իր հայրենի սարաբարձր գիտանոցին, կամ
՚ի Հռոմկլայի քարանձաւաց գագաթէն, ափշէր և
սոսկայր. «յաւուր նոր կիւրակէին, կ'ըսէ, (11
«ապրիլի), յառաւօտուն պահու ընդ ծագել ա-
«րեւուն՝ եղև խաւար ՚ի վերայ երկրի. ոչ որպէս
«խաւարումն արեգական, այլ որպէս զհասարակ
«գիշերի, յորժամ էգէ առանց լուսնի և աստե-
«ղաց, ՚ի յաշխարհէ Պաղեստինացւոց մինչև ՚ի
Բիւզանդիան, և յայլ բազում գաւառս...: Այլ
«եթէ զկորուստ քրիստոնէիցն գուշակեաց (Մա-
«նուէլն կայսեր և զօրացն ՚ի Խլիճ Արսլանայ՝ յամ-
«սեան սեպտեմբերի) ոչ գիտեմ, և եթէ զսովոյն
«սաստկութիւն՝ որ ՚ի նոյն ամին եղև՝ և ոչ զայն
«ևս (գիտեմ)»: Եթէ քանի մը տարի առաջ
Թարգմանած և հրատարակած ըլլար Մխիթար
Անեցի իր գործը՝ Լամբրոնացին կըրնար առուա-
գեղ այդ խաւարման բնական պատճառը, որ

« քննեալ եղև, կ'ըսէ, յիմաստասիրաց բազմաց. « գտաւ դիր աստեղաց և ընթացք արեգական և « լուսնի յիւրեանց կայանս, առանց իրիք սայ- « թաքման. և ինաց այնու աշխարհս ժամ մի, և « ապա եղև լոյս »: Յայտ է որ այն խմաստասէրքն՝ բաւական հմուտ չըլլալով՝ աւելի սայթաքեր են քան իրենց դիտածը: Մեղի նշանելի բան մ'ալ այս է՝ որ մի և նոյն ժամանակ երկու Մխիթարք, մէկն Անեցի միւսն Հերացի, աստղաբաշխական դիտութեանց պարապեր և հմտացեր են. եա- քինս՝ որ մաթեմացեր էր ընդ Շնորհալւոյ, որպէս և ընդ յայնորդի նորա, պիտի յիշուի յետոյ:

Հիմայ խօսքերնիս Անեցոց վրայ է, որոց համար աւանդութեամբ կ'ըսեն և յետին դարուց գրիչք, թէ շատ ուսումնասէր և կարդացող էին, և իրենք ալիրենք ալ շատպէտ համարելով՝ զօտարներըը հպարտութեամբ ծաղրէին. հաւանօրէն այս դարս էր իրենց գիտնականութեան ամենէն ծաղկած աստեն: Այս աստենս ծաղկած կարծեմք (վասն զի ստոյգ թուական կամ յիշատակ մը չկայ) Վարդան Անեցի վարդապետան ալ, որ ծանօթ է միայն մէկ նորօրինակ իսկատիպ և բանաստեղծական գրքոյկով մը « Վասն Կառաց Աստուածութեանն, « Ներբող »: գրուածն արձակ է, այլ տուն տուն նման գանձի, որոյ փոխան ինքն նորալուր կոչում մը կու տայ, տնապլուխ տառերուն կապելով զայս բան. Անեցի Վարդանս Վարդապետիս Երգեմիկ. յորմէ տեսնուի ալ որ 28 տուն է. առաջին 4 տունքն Աստուծոյ կառաց վրայօք, այն կառաց՝ զոր Եզեկիէլ մարգարէն տեսաւ 'ի տեսլեան. մնացեալ 24 տունքն վեց վեց բաժանին 'ի վերայ չորից կենդանեաց որք զկառքը քաշեն, Մարդն, Առիւծն, Եզն և Արծուին. մէկ մէկ տուն նկարագիր նուիրած է իւրաքանչիւրին անձին, կերպարանքին, ձեռքին, ոտքին, չունչին, եղջիւ-

րին, և այլն. և զամենքն ալ Քրիստոսի օրինակ պրեղով պատկառանօք կը խօսի. այլ հանդերձ ամեն աստուածաբանական խորատեսութեամբքն՝ զերազանցէ բանաստեղծութեամբը, Նարեկացոյց հանճարապետութեց նման, թեպետ և աւելի[1]: Յայտ է որ այսպիսի խորհրդատ պրուած իրեն

1 Ի զբօսանս բանասիրաց՝ դնեմք հօս մէկմէկ տուն յիւրանքաչիւր կենդանեաց նկարագրէն.

Ի լուռն Մոլորեալն).— Անմարմին զուարթուն և անդադար երգեցիկ սիրեցելոյն. ի մատուռն խմանալեացն՝ բերկրական բարբառ և աւետաբեր տուիղ. ի լեզուս պարուց առեղացն ազդեցութեանն զոյց, և զարթուցման ձայն յօդեալ. ի նուրբ չունչս հողմոց՝ բանական ծով, և պատրաստական նաւ՝ գոհար բեռամբք, և նաւահանգիստ ամենառատ՝ խօսուն բուրաստան և ծաղիկ անթառամ: ծածկեալ ի ծոց դչխուհւոյ մօր Աիոնի. հրաշաբեր և կամենաբուխ բանին սուինք՝ ի չըմեռնա աշակերտեցելոյ երկնաւոր մատենագրին. Ջոր հանիդ աշակերտելովդ աղաչեմք զոխով հարազատիդ, զի չամբեացես առ հս ըզկամենդ բանական, միշտ և յարաժամ:

Ի Ջեռան առաքն Աւետեռան. — Բարուն իմանալի մեքենայիցն՝ ձեռքդ չորս, որ ունի զվէմն անկեան և զհամատարած լարն վիճակի, որով շարժէ զճախարակ բրտի, և մատամբքն ոսկի յօրինէ զպարս առեղացն, որով հիւսէ զծիրանին և զերկնագոյնն՝ վառն անխախուտ և խօսուն խորանին, ակզբնատուին և անփոփոխ օրինագրին, որ և շարժէ զտապանակ ինքնաշարժին. յորոյ ձեռինն՝ բնաւ էակքս ի կախ պահին, կապեալքն լուծանին, և գառանցն հօտքն մակաղին ի մէջօրէի առ լերամբքն, յորում քարկոծին զյացեալքն: Ջոր և մաղթեմ զենմամէ գառանցդ, զի առ շինուած սրբոյ խորանիդ՝ պահեացես զհս միշտ և յարաժամ:

Ի լուռն առաքն Եղիա: — Տեսակաւ դիմացդ և հարաւարեր շնչովդ՝ լինի փախուցեալ հիւսիսականն սիպ. որիթք սաղարթազարդք և տունկք խնկաբերք ի քէն շնչաբերեալ՝ անճախապէս բուրեն. ձագք գարնաբերք և ծիծառունք վճիռնաձայնք՝ ի ձայնելդ վճիռն առեալ՝ զգաստանն յաւիտենից ճշեն. զոր մաճակալք և այդեպորթք անկարացան, առ ի կիթել յերկնամիտիչ բարուեակէդ՝ որ եւթեր պտուղ զպարս առեղացն և զգունդս հրեշտակացն. զոր լծով քո սքանչելի և լծակցովդ զարմանալի՝ առ գուք հնձանին ժողովին և ճմլին ի ծոց մեծի արքային:

Լուծմանէ մ'ալ կը պահանջէր, և այս ալ գրուած է [1]. այլ մեր դիտելիքն ամեն բանէ վեր՝ ազատական մտօք և սրտիւ ոճն է Երգելկիս. որ գուշակել տայ Անոյ հանգըստեան և զուարճութեան օրերը, յորս չէին լսեալ յայնէ փնաքայ և բոմբիճանէ ըմբէից, զորս հառաչանօք ողբայր երբեմն լսողն և ապա վիճառողն Արիստակէս Լասախվարացի: Անոյ հազարումէկ եկեղեցեաց և հարիւրաւոր աշտարակաց միջոցէն՝ ոչ միայն աղօթից մաղթանք և զինուց շառաչիւնք, այլ և շատ հանճարոյ և սիրոյ բարձր ու վսեմ թռիչք սլացեր են. և ողբալի աւերակքն՝ շատ սխրալի սրտից և երկնաճեմիկ ձգտաւուց վրայ կը հանդչին:

Այս պարագայիս Հայոց ամենէն արևելեան մեկ մեծ քաղաքն ալ՝ Գանձակ, Անոյ պէս առանձին ինքնագլուխ Պարսիկ խչևան ունէր, և իբրև մայրաքաղաք չէն էր ամենայն բարեմասնութեք, որոց մէջ երևի և ուսմանց մասին գերազանցութիւն. այսպէս գաւեռվով իր ընծայած և պահած երևելի վարդապետաներէն. ինչպէս էին մեծա-

Զոր և համբուրելով իմ զգանկալի դէմդ սրբոյ Եղինդ, զգարնանաբեր և զկենդանարար Շունչդ՝ պահել առ իս աղաչեմ՝ միշտ և յարաժամ:

Ի ինս Աբեղայն. — Գործնականի և անտանելի հոգմոյ Իին կրողիդ, ընչական և բոցայօդ գործնականացն վհհիցն 'ի վերայ կացողիդ, 'ի թռիչս պաշտօնասէր աստեղացն՝ կէտ լուսաբաշխ, և շունչ պաշտելոյն ազդեցութեամբն. 'ի տարակոյսքն գալոյ հոգմոյն՝ յայտնութիւն աստուիկ հնչմամբ. և վառեալդ առ 'ի սիրտ անկիզելի նամակաց. և 'ի ծփանս ծովու թռչուն աւետաբեր, և նաև կենդանի՝ բարձեալ միշտողամբ. զոր աստղաճաճանչ և հարաւադէտ թևօքդ զոլով միշտ ժողովարան: Ւան որոյ և զպատուելի զթևադ սուրբ աղաչեմ, թռուցեալ զիս 'ի խորոց՝ և յանապատ սիրոյ ինձ դադարել, միշտ և յարաժամ:

1 Մեր ձեռքը միայն ակզբնաւորութիւնն հասած է, որ բնագրին պէս տուն տուն բաժնուած կարծուի:

հռչակին Յովհ. Սարկաւագ, և ընկերակիցքն, Դաւիթ՝ որդի Աղուկայ, որ կանոնական գիրք մը գրեց քաղաքակից Աբքայուղիւն անուամբ նորընծայ քահանայի մը խնդրանօք. և Գրիգոր՝ Թոփալեցի որդի, Ընթերցուածոց գրոց մեկնիչ. և ասոր ընկերն Սարգիս Վրդ. Ձգնաւոր և գլուխ վարդապետաց ժամանակին [1]: Որոց յետ յիշուին նոյն Աղուանից կողմերը Խոնկայ որդի Պետրոս վարդապետ մը, և Սփանչէի Յակոբ վարդապետ մը, և այլք: Ասոնցմէ քիչ վերջը և դարուս եռքերը փայլեցաւ և ամենէն անուանի եղաւ Մխիթար Գոշ, որ իբրև գերագոյն քան զայլս՝ Մեծ վարդապետն կ'անուանէր, և ԺԳ դարուն սկիզբները վախճանեցաւ, յետ հիմնելու նոր Գետիկ վանքը, որ և ուսմանց նոր վարժարան մ'եղաւ. և յետ հրատարակելու յամին 1184 իր նշանաւոր Դատաստանագիրքը, և յորատակաբան ու հանճարեղ Առակքը, հանդերձ ուրիշ շատ գրուածովք: Իր առենին և կողմանց պատգամաւոր էր՝ 'ի խնդրոյ ամենուն, Զաքարիայ մեծ ապարապետին խոստովանահայրն, բարեխօս ու բարերար ամեն վշտացելոց և նեղելոց: Բայց ինքն իր շատ հմտութիւնները և վարժմունքը զանազան վանորէից և քաղաքաց մէջ փնտռեց, 'ի Գանձակ, յԱնի, Տփղիս, Կարին, Զորոյ — գետոյ վանքերը և ինչուան յարևմտեան Հայս ալ գնաց, ծածկելով իր վարդապետ ըլլալը. և դուցէ Շնորհալեայ ալ կամ գոնէ անկէ վարժածներուն աշակերտեցաւ, և ապա վարդապետաց վարդապետ եղաւ. վասն զի իրմէ սկսած կամ նորէն սկսած կը սեպեն յետին դարուց վարդապետք՝ իրենց վարդապետական գաւազանի յաջորդութիւնը:

Բայց առաւել քան զԱնի և զԳանձակ, և զվանս

1 Այս երկուքս ալ Գանձակայ ժաժով փլածին մէջ մեռան, զոր յետոյ պիտի յիշեմք:

Գեաւկայ և անոր մօտ Հաղարծին[1] և ուրիշ վանքերը՝ անուանի եղան իբրև վարժարան և գիտնարան՝ մերձաւակից և զուգավիճակ և իբր երկուորեակ վանքն Հաղբատ և Սանահին. ի դարուն կիսուն հիմնեալ, հետ զհետէ բագրատունի և վրացի թագաւորաց և Զաքարեանց և ուրիշ իշխանաց առատաձեռնութեամբ շէնցան, մեծցան, ճոխացան, մեծամեծ եպիսկոպոսաց ալ շքեղացան, և բազմաթիւ միանձանց և վարդապետաց կայանք և օթեվանք եղան. բազմաց ալ իբրև համալսարան ուսմանց տեղիք: Ասյսիսի պաշտպանաց, փառաց, և գիտութեանց համար՝ յիրաւի փառաբերք, հըպարտք, անհաւանք, կէս գիտնականք և խմաստակք ալ շատ եղան հօն. այլ եղան և ընտիրք վարուք և գիտութեամբք ոչ սակաւ՝ ԺԱ–ԺԳ դարուց միջոց. և ամենէն աւելի այս ԺԲ դարուս. յորում Շնորհալի ալ շնորհքով թղթակիցներ ունէր 'ի Հաղբատ, ինչպէս որ անշնորհքներ ալ ունեցան՝ յայնմդն Գր. Տղայ և Լամբրոնացին: Ի կարգի պատմութեանս պիտի յիշեմք Շնորհալւոյն թղթակիցները, Գէորգ Հաղբատայ առաջնորդը և Վարդան գովանի վարդապետը: Նախընթաց դարուն մէջ (ԺԱ) աւելի ծաղկած կ'երևի Սանահին վանքն՝ Դէոսկորոս գիտնական և արժանաւոր անձին առաջնորդութեամբ, զոր Պետրոս Գետադարձի տեղ կաթողիկոս դրին և ապա շուտով ձգեցին, երկու կողմանէ ալ տհաս ընտրութեամբ և հաւանութեամբ, յորմէ սրտցաւութիւն և մահ պատճառեցաւ Դէոսկորեայ: Իր աշակերտաց մէջ անուանի եղան Անանիա Սանահնեցի,

1 Ասոր առաջնորդ էր Գոշի ժամանակակից Խաչատուր Տարօնացին, որ Հայկական երգոց խազերը նորոգեց կամ մուծց յարևելս, ուր խափանուած էր. և երգեց Պատարագի գեղեցիկ նախերգանքը, « Խորհուրդ խորին »:

որ Պօղոսի Առաքելոյ Թղթոց մեկնութիւն մը գըրեց Համառօտ, ըստ ոմանց և Մատթէի աւետարանին մեկնութիւն, և Երկաբնակաց կամ Յունաց դէմ գրուած մը, յորում շարադրութիւնն կըրնայ ընդունուիլ՝ այլ ոչ ոգին և կարծիքն.— և Յովհ Սանահնեցի որ և Քարափնեցի կամ Քարահաւոյ որպէս, որ ընդ հակառակն աշակերտակին՝ ի Կ. Պօլիս կոստ. Դուկաս կամ Տուկիծ կոչեր՝ Քրիստոսի բնութեանց խնդրոյն վերայօք Յունաց համաձայն դաւանութիւն առաւ (1060). զոր Գաւիթ Ե Թագակրոյս Թագաւորն չընդունեցաւ, նեղանալով վարդապետին, երբոր թէ ինքն իր գլխով առանց ազգին մեծամեծաց հարցընելու գործեր էր. թէպէտև իրեն պէս Թագաժառանգք՝ Արծրունիք Ատոմ և Աբուսահլ՝ իրենց աստուածաբան քերան ընարեր էին զնա: Ատոր երգածն կարծուի « Յանակզբնական ծոցոյ Հօր խոնարհ « հեալ » հանգստեան (Գկ) շարականը, որ ի ձաշու ժամուն երգուի: Սա իր ծերութիւնն անցուց Յովհա քաղաքի, ուր և անկողնին մէջ մեռած կամ սպանուած գտուեցաւ (յամին 1085): Տեղւոյն հռչակեալ Տարեգրողն (Մատթ. Ուռհ.) կոչէ զսա, « այր հզօր կորովի. սորա հասեալ ի վե« րայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ. ու« սեալ և հասեալ սորա ի վերայ հեւտորական և « մասուրեցն, և տեղեկացեալ ամենայն փիլիսո« փայական խորին գիտութեցն... Այսին զնա ա« մենայն սիրելի մերձաւորք իւր, և արարին ժո« ղով զամենայն քաղաքն Ուռհա՝ ի վերայ նորա. և « մեծաւ հանդիսիւ թաղեցին զնա՝ ի դուռն տուրք « եկեղեցւոյ իւրոյ, ի հիւսիսեան կողմն քաղա« քին, իբրև նեաւընկէց մի հեռի ի պարսպէն »:

Յաջորդ դարուն (ԺԲ) և մեր պատմական պատրագային և անկէ եառքը՝ առաջնութիւնն առաւ Հալեպա, յորում ցկէս ԺԳ դարու յիշուին պիտ-

նական վարդապետք. այլ քան զբնաւ գերազան-
ցեց և իբրև՛ի ծայր գովութեան հասաւ նախայի-
շեալն Յովհաննէս Սարկաւագ, որ ծննդեամբ էր Գան-
ձակեցի կամ՛ի փառիսոս գաւառէ Արցախոյ, այն
առեն Գանձակայ իշխանութեան տակ, քահանա-
յական ցեղէ. ԺԱ դարուն կիսուն ծնած և 1129ին
վախճանած. և ինչպես երևի՝ 40 կամ 50 տարի մը
աշխատած է գրաւոր երկասիրութեամբք, ան-
թիւ գրքեր կարդալով գիշեր և ցորեկ, մինչև ամ-
բողջ օրեր՝ առանց ուրիշ բանի զբաղելու. Թուի
թէ և յունարէնի ալ տեղեկութիւն ունենալով
և արևելեան լեզուաց: Առանձին ոճ մ՛ունի գը-
րութեան, իմաստասիրական, ոլորուն, տուր և
սիրուն, և խրթնութեամբն հանդերձ յստակ:
Շատ բան գրած է արձակ, քիչ մ՛ալ ոտանաւոր
և շարական, ճառեր և աղօթքներ, պատմական,
բնական և ստմարական, և աստուածաբանական.
ամենքն ալ իր հռչակուած անուան արժանի, և
ինչպես պատմիչք կ՛ըսեն՝ ստրա ամեն խօսքն ալ
Գրիգ. Աստուածաբանի ոճոյն պէս արուեստա-
բան և վեմական է. անոր համար Մեծ խմաստասէր
և Սոփեստ կ՛անուանի. գերեզմանին վրայ ալ՛ի
Հաղբատ գրուած է, « Արձանս այս սեմական է
« Սոփեստոսի Սարկաւագին »: Մէկ մեծ ար-
դիւնքն ալ է Տօնարի նորոգութիւն մ՛ընելն, և
անշարժ տարիով տօներըը հաստատելն, որ Սարկա-
ւագապետէ կոչ ըսուելուս, որուն հետևին Յայտ-
նութիւնք: Այս կարգադրութէն սկսաւ նոր Թուա-
կան մ՛ալ՛ի 1084 տարուց Քրիստոսի, յորում
Հայոց մեծ Թուականէն (552) սկսեալ առաջին
շրջանն հինգհարիւրեակին կ՛աւարտէր. Սարկա-
ւագ ցուցուց որ հին Հայք շարժուն և անշարժ
տարիները գիտէին կանոնել Հայկայ Շրջան անուա-
նեալ պարագայութեամբ, հին Եգիպտացւոց Սո-
թիական կամ Շնկան շրջանին նման. իր Թուա-

կանն կոչեցու Նը կամ Մրուկ. և ժի գարուն գրեալ ձեռագիրք՝ ի Հաղբատ և մօտերը՝ շատ հեղ այս Թուականս կը գործածեն: Աստուածաբանական խնդրոց մէջ Շնորհալւոյ և Լամբրոնացւոյ ուղղատեսութիւնը կամ զիջողութիւնը չունի. այլ ոչ ալ Անանիայի կամ ուրիշներու նման Թշնամախօս. եթէ քիչ մ՚ալ աւելի կամ ուշ ապրէր, և Գէորգայ ու Վարդանայ պէս բաղդ ունենար Թըղթակցելու ընդ Շնորհալւոյ կամ տեսնուելու, յուսալի էր որ իրեն պէս արամիտ և բարեսէր անձն՝ կըլնար նախ իր միտքը բոլորովին հաստատել, և ապա արեւելեան կամ հիւսիսային ըստուածվարդապետաց ալ, որք իր խօսքէն դուրս չէին ելներ, առաջնորդել՝ ի միաբանութիւն: Յաւալի է որ իր գլխաւոր գրուածոց մէկն գեռ չէ գտուած մեր օրերս, թէ և յուսացուի գտուիլն, և է իր Պապռնիխան, յորում ատոյգ քննութեամբ Սէլճուկեան Թուրքաց ծագման և ախտապետութեան վրայ կը խօսէր, մինչև՝ ի մահ Մէլիք Շահի և անոր ժառանգաց պայազատութիւնը: Սամուէլ Անեցի իր աշակերան՝ քանի մը հատուած պահած է այս պատմութեան՝ իր ժամանակագրութեան մէջ [1]: Միայն այս հեղինակս է՝ ի ժամանակակիցս՝ որ կըլնայ կշռուիլ Շնորհալւոյ հետ, և տաղանդով ու հմտութեանց ուժով դերազանցել իսկ, և խոյանալ երբև զարծուի նաև իր ժամանակէն բարձր. այլ Ներսես գարձեալ իր հոգեշնորհ արծաթատպատ աղաւնեկան սուր և սուրբ Թևօք՝ կշռաչափ ընթացքին մէջ՝ ոչ կը Թուլնայ ոչ կը ցածնայ, և իր ջերմագոյն հոգւոյին աւելի հայր է Հայաստանեայց՝ քան Թէ Սարկաւագն գաստիարակ բանաստեղծաց:

1 Սարկաւագայ վրայ առանձին տեղեկութիւն մը հրատարակուած է յ՚Ր Հատ. Յուշիկք Հայրենեաց, 279:

Յետ յիշելոյ այսպիսի հանճար մը ի հռչակաւոր և խոշոր-փաղաք կոչուած Հոդբատ, աւելորդ սեպենք ուրիշ երկրորդական վարժապետներ և վարժարաններ ալ փնտռելու, և դառնանք մեր բուն նպատակեալ պատմութեան:

## ԺԱ.

*Հայոց և Ասորոց ընդհանրաբանութիւն կրօնական. — Թոռղր Շնորհալոյ առ մոլորեալ հաւատացեալս ի մէջ Ասորոց:*

Քիչ մ'առաջ յիշեցինք այս ժամանակիս քաղաքական վիճակը, և Հայոց Կաթողիկոսաց և նորընծայ Ռուբինեան պայազատաց բռնած տեղւոյն շրջակայ ազգերը և տէրութիւնները. ինչպէս որ անոնք մեր ազգին քաղաքական կենաց վրայ մեծ ազդեցութիւն ունէին, նոյնպէս՝ եթէ և ոչ նոյնչափ՝ ազդեցութիւն ունեցան և այն շրջաբնակ քրիստոնեայ ազգաց վարդապետութիւնք. յորոց գլխաւոր երկուքն են Յոյնք և Լատինք, որոց հետ շատ նշանաւոր յարաբերութիւնք եղան Գրիգորիսի և Ներսիսի սաւն, ինչպէս՝ի կարգին պիտի տեսնենք: Կար երրորդ ազգ մ'ալ, որոյ հետ ալ քիչ շատ յարաբերութիւն ունեցան մերայինք այս Պահրաւունի հայրապետաց և Լևոնեան ու Հեթմեան թագաւորաց սաւն: Ասորի հին քրիստոնեայ ազգն՝ Թերևս յառաջ քան զմերայինս եկեր բռներ և կը բնակէր այս կողմերս, ուր մեր պատմութեան տեղն է. և աւելի իրենց բնական էր երկիրն քան մերոց. որով կըրնայ ըսուիլ թէ Հայք եկան մէջ սան ընդ մէջ Յունաց և Ասորւոց, նաև Լատինք

ընդ մէջ այս ամենեցուն: Մեր կաթողիկոսական աթոռն որքան որ Գետադարձի առջի նստած տեղէն հեռանալով՝ դէպ 'ի հարաւ և յԵփրատ մօտեցաւ, այնքան ալ զրակցեցաւ Ասորւոց: Ասոնց հետ մերայոց ունեցած քրիստոնէական յարաբերութիւնն խիստ հին էր, և գրեթէ նոյն իսկ քրիստոնէութեան սկիզբը կ'ելնէր. որովհետև երկու ազգքս ալ զնոյն մէկ անձն Թադէոս՝ իրենց առաջինն առաքեալ կը ճանաչէն, և զԱբգար՝ Թագաւոր: Քրիստոնէութիւնն երկու բնական ճամբով մտած է 'ի Հայս, մէկ մը 'ի Փ. Ասիոյ՝ յունական աւանդութեամբ, մէկ մ'ալ 'ի Միջագետաց կամ յԵդեսիոյ՝ ասորի աւանդութեամբ. և թերևս սա աւելի հնագոյն և զօրագոյնն էր, ինչպէս կը հաւատան մեզ Լուսաւորչի առեն եղածն, և մինչև Ս. Թարգմանչաց օրերը՝ ասորի դպրութիւն իրենն յեկեղեցիս Հայոց, որ Տարօնոյ և Աղձնեաց կողմերը, աւելի երկար առեն ալ տևեց, վասն սահմանակցութեան երկրին: Սակայն որքափ ալ մերձաւորութիւն և բնական խին հարկ կար Հայոց՝ Ասորւոց հետևողկամ միաբան ըլլալու, և եղած ալ են բաւականապէս, սակայն գրեթէ միշտ ալ Հայք մեծ սիրելութիւն մը չեն ունեցած այս ազգին հետ. յետ ոյոյ Ճանչցան Յունաց նրբութիւնը և Հռոմայեցւոց առաւելութիւնը՝ աւելի առնց հանճարը սիրեցին և յարեցան, իսկ Ասորւոյն իբր հարկաւ հետևէին իրենց եկեղեցական կարգաց մէջ, քանի որ առաջ գիրք չէին թարգմանուած հայերէն. իսկ երբ առնք թարգմանեցան և աշակերտք Ս. Մեսրովբայ և Սահակայ սկան յաճախել յԱղեքսանդրիա և 'ի Կ. Պոլիս, ինչպէս Գ դարուն մէջ ալ ուսումնասէրք մեր յԱթէնս, Ասորիք երեսկ ընկան. և անշուշտ ալ աւելի պիտի ըլլար այսպէս, եթէ նոյն առեն Հայոց սէրութիւնն չվերցուէր՝

Յունաց ցրտութեամբը, և Քաղկեդոնի ժողովին պատճառաւ խոր խորոց մը բացուեր ընդ մէջ Յունաց և Հայոց. ոչք յայտ՝ իրենց ըմբռնման աւելի համաձայն գտնելով զԱսորիս՝ ասոնց հետ պահեցին միաբանութիւն կամ բարեկամութիւն մը. և երկուց ազգաց Կաթողիկոսունք՝ ըստ սովորութեան առաջին հայրապետաց գլխաւոր աթոռոց եկեղեցւոյ՝ իրարու շնորհաւորութիւն կը գրբէին, երբ աթոռայն կը յաջորդէին: Մեր պատմութեան ժամանակին սկիզբները՝ Հայոց և Ասորոց ինչ տարիճան բարեկամութիւն ունեցեալն յայտ չէ. թուի սակայն թէ շատ տաքութիւն չկար. զի այս օտար ազգաց այսպէս բռնի և հարկաւ իրարու տահմանաց մերձաւորութիւնն, յորմէ և եկեղեցական իրաւանց սակաւ շփումն կը պատճառէր, շատ հաճելի չէր իրենց. մանաւանդ որ եթէ ըստ վարդապետութեան հաւատոց համաձայնք կամ մերձաձայնք, ըստ ծիսից՝ ոչ սակաւ կը տարբերէին, և ոմանք կամ ոմանքմիսք աւելի արտաքին ծիսից նայելով, դատելով և չհասնելով հակառակութիւն և սուտելութիւն կ'սուտէին. ինչպէս որ ամեն սուտն եղած է և կ'ըլլայ:

Հիմայ այս մերձաւորութեան սուտն՝ դիպուածմը կը յիշեն Ասորի պատմիչք, որով կ'իմանամք թէ ինչպէս Յունաց հետ՝ ասոնց հետ ալ ընդդիմութիւն կամ տհաճութիւն կայ եղեր վերջապարձաբար. բայց շատ անընդունելի և յայտնի հակասաբանութեամբ կ'սուտանդ Ասորի պատմիչն, թէ Գրիգորիս կաթողիկոս (փոխանակ ուրիշ Գրիգորի մ'ըսելու) ինքնին հեղինակ ըլլայ ընդդիմաբան կամ վիճաբանական գրուածոյ մը, յորում կը պախարակէր զԱսորիս՝ իրենց քանի մը եկեղեցական ծիսից համար, և մանաւանդ մէկ մասով խաչակնքելնուն համար: Ասոր դէմ Յովհաննէս Բար–Անդրէաս (Որդի Անդրէի) անուամբ

Ասոր վանահայրն որ Հռոմկլայի մօտ Փարաման աւանէն էր հայրենեաք, և հայերէն ալ լաւ գիտէր, մեր լեզուաւ բան մը շարադրեց 'ի պարսաւ քանի մը ծխից Հայոց, և 'ի մանաւորի անկրանաւն պատարագելնուն համար. և Փոտական ձարտարուեստիւք՝ գրուածքը տարաւ մտուց նոր հաստատուած և հռչակուած Դրազարկ վանքն (Կիւլիկիոյ) գրոց մէջ. ուսկից յերեան գալով մեծ շփոթութեան պատճառ եղաւ, և շատ հակառակութեանց և կռուոց Ասորւոց և Հայոց: Այն երկու կայծոտ գրուածներն ուրիշ կայծերու ալ պատճառ եղան. և թերևս մեծ կրակ մը պիտի ծագեր և շատ հոգի հրդեհեր, եթէ մեր արթուն և խոհեմ հովուապետն Գրիգորիս՝ արիութեամբ և մեծոգիութեամբ գեղեցիկ ճար մը չէր գտնէր. նիւթական կրակով մը հրապարակաւ այրելով այն երկու գրուածներն ալ, զհայն և զասորին, և հոգեմաշ կրակը մարելով՝ երկու եկեղեցւոց և ազգաց մէջ բարեկամութիւնը հաստատեց, երկուքէն ալ գովութիւն ժառանգելով: Ահա կ'երևի որ ինքն չէր հեղինակ այնպիսի գրուածոյ. իսկ եթէ իր մէկ գրուածն ալ առանց իր գիտման, կամ անզգուշութեամբ՝ այսպիսի քանի պատճառ եղած էր, և ինքն այս կերպով վերուց զպատճառը, շատ զարմանալի և գերագոյն առաքինական գործ մ'ըրած է, նման սքանչելի Ֆենելոնի ըրածին, իր Թերուղիղ գրուածը գատապարտելով: — Այս դէպքն եղած է յամի իբր 1134 [1], կամ քիչ վերը:

1 Լը—Գիւէն անուանի գիտնականն Արևելք Քրիստոնեայ անուանեալ գրոցը մէջ (Oriens Christianus. Ա. 1401). սխալմամբ Գրիգորի Տղայոյ առեն եղած կը դնէ այս պիտուածը, մինչդեռ Ասահմանի ոչ միայն մեր վերոյհիշեալ ժամանակը կը նշանակէ, այլ և ըսա—Անդրէի մահուան տարին ալ 1156, Մմբէճի կամ Յերապօլսոյ եպիսկոպոս եղած առեն:

Ուրիշ և աւելի խառնակ կրօնական չփոթու-
թիւն մ՚ալ կար այս առեններս, թէ Հայոց և
Ասորւոց իրարու հակառակութեամբ, և թէ նոյն
իսկ Հայոց իրենց մէջ, թանձր տգիտութենէ ա-
ռաջ եկած, այն ասորական երկիրներու մէջ, որք
ինչուան հիմայ իսկ գրեթէ անծանօթ մնացած
են. և թերևս շատ յարմարապէս Շնորհալին
« Խառնափնդորեալ գաւառք », կ՚անուանէ, որք
կոչէին Ամայք և Շղղեան. և թուի թէ Եդեսիոյ
սահմաններէն հեռու չեն, ուր տարագրած Հայք՝
իրենց կեդրոնէն և վարդապետներէն հեռու մնա-
ցեալ, գուցէ և եպիսկոպոս ալ չունենալով, ա-
ւելի կամ պակաս ազէտ քահանայից և անոնց
նման Ասորւոց մէջ կ՚ապրէին. և ոչ միայն ծխից
վրայ կը վիճէին, Հայք՝ Ասորւոց ձիւթով և ապով
նշխար շինելը, Ասորիք՝ Հայոց Մատաղը, պախա-
րակելով, այլ նոյն իսկ Հայոց երիցունք՝ հաւա-
տոց ամենէն գլխաւոր նիւթոց վրայ տարակոյս և
հակառակութիւն ունէին. ինչպէս է, Քրիստոսի
Յարչարանաց և մահուան կերպն, թէ Աստուած
և մարդ ըլլալով՝ արդեօք ինչ բնութեամբ մեռաւ.
և որովհետև շատերն բնութեանց միաւորութեան
և միութեան խնդիրը չէին լաւ խմանար, ոմանք
մի բնութիւ ըսելով՝ կարծէին որ չի կրնար ըսուիլ
Աստուած խաչեալ և մեռեալ. ոմանք ալ ընդհա-
կառակն՝ աստուածութեամբ խաչեալ և մեռեալ
ըսել հարկ սեպէին. և երկուքն ալ մեծամեծ մո-
լորութեանց և հերետիկոսական սպանդոց մէջ կ՚ին-
կնային. և կրակը փայտով ածեցընելու պէս՝ վի-
ճաբանութեամբ և հակառակութեամբ ալ աւելի
կը զայրացընէին չփոթութիւնը և դայթակղու-
թիւնը: — Այն կողմերը բարեպաշտ և խոհեմ
Հայ իշխան մը կար Առիւծ անուամբ, որ կը նըս-
տեր Թլկուրան աւանին մէջ, (զոր ոմանք յաշխարհ
հագիր վարդապետաց մերոց կարծեն զԱսկին,

հայրենիք Յովբայ նահապետի). ասոնց ձեռաս-
կար վէճը դադրեցընելու համար՝ մարդ և գիր
խաւրեց առ Կաթողիկոս մէր, որ ձար ընէ. նոյն-
պէս քահանայից ալ ոմանք գրեցին: Գրիգորիս
յանձնեց իր եղբօրը գրել այն քահանայից, վար-
դապետութեամբ, խրատով և յանդիմանութիւ:
Ներսէս ալ իր ընորհքն եղբօրը իշխանական ոճ-
ոյն խառնած, գրեց երկայն թուղթ մը, որոյ խո-
րագիրն է. « Թուղթ Տեառն Գրիգորիսի կաթողի-
« կոսի Հայոց, գրեալ եղբօր նորին Ներսէսի ե-
« պիսկոպոսի, հրամանաւ նորին, ՚ի Մէջագետս
« Ասորւոց կոչեցեալ նահանգին. յաղագս որ անդ
« մերոյ աղգի քահանայից հակառակաբանելոյ՝
« առեալաբար ընդ միմեանս, ոմանց ասել Աստուա-
« ծութեանն բնութիւն չարչարեալ և մեռեալ ՚ի
« խաչին ընդ մարմնոյն. և ոմանց զմարդն միայն.
« և ոմանց գարձեալ ընդունելի լինել Աստուած, և
« յոմանց արհամարհելի. և այլք, եթէ դրախ-
« տին խմանալի է և միայն օրինակաւ առացեալ,
« այլ ոչ ճշմարիտ էութիւն. և այլ որ յայսպի-
« սեաց: Ի խնդրոյ ուրուն աստուածասիրի Ա-
« ռեւծ անուն իշխանի ՚ի Թլկուբանն աւանի »:
Ասոնց ամենէն հարկաւոր բանը նախ կ՚ըսէ Շնոր-
հալին. այսինքն թէ այսպիսի սրբազան և բարձր
խնդրոց վրայ պէտք չէ վիճիլ, ճանչնալով իրենց
տգիտութիւնը, մինչ գիանոց անգամ շատ զգու-
շութիւն պէտք է. մանաւանդ երբ Ս. Հարց խօ-
սից մէջ հակասութիւն մը տեսնեն. զորօրինակ,
երբ Քրիստոսի մի անձն ըլլալուն համար՝ աս-
տուածային և մարդկային բնութեանց պատշաճ-
ները՝ երբեմն Աստուծոյ անուամբ և երբեմն
Քրիստոսի՝ անխախտ կը պրեն. ուսկից տգէտք ան-
ընարողաբար կրնան չխոթել և խառնակել զաս-
տուածութիւն ընդ մարդկութեան: Արժանա-
պէս կը յանդիմանէ զանոնք՝ որ Քրիստոսի չար-

ջարանքը և մահը՝ աստուածային բնութեան կ'ընծայէին. հին Աստրի սուրբ վարդապետի մը, Զենովբայ՝ խօսքը մէջ բերելով, որ ըսած էր երբեմն կեանք բանին և մարմնոյն, և երբեմն Մահ բանին և մարմնոյն. ուրեմն կ'ըսէին բանն Աստուած մեռաւ, կամ թէ մահն՝ բանին կ'ընծայուի: Շնորհալին կը մեկնէ Ս. Հարց խօսքը և միտքը, թէ ինչպէս այս բանս կըրնար ըսուիլ, որովհետև Քրիստոս՝ Աստուած և մարդ՝ մի անձն էր. բայց երբ պահանջուի՝ թէ ինչ բնութեամբ մեռաւ Քրիստոս, հարկ է զանազանել և ըսել որ աստուածութեամբն անչարչար և անմահ էր, մարդկութեամբն կրեց և մեռաւ. այլ վասն զի աստուածութիւնն և մարդկութիւնն անբաժանելի միացեալ էին յանձն նորա՝ կըրնայ ալ ըսուիլ թէ Աստուած մեռաւ. ինչպէս 'ի հակառակն ալ աստուածային զօրութիւնքն կ'ընծայուին մարդկութեան Քրիստոսի. զորօրինակ, հրաշագործելն, և ըսելն թէ Ես և հայր իմ մի եմք, և այլն: Ս. Գրիգորի Աստուածաբանի և Ս. Աթանասի վկայութեամբք կը հաստատէ Շնորհալին իր պարզաբանութիւնը. այլ իր կողմէն ամենագեղեցիկ խըրատ մը կ'աւելցընէ անոնց և մեզի և ամենուն համար, որ այսպիսի խնդրոց զոր եկեղեցին ընդունած է՝ աւելի հաւատք ընծայենք՝ քան քննութիւն. « Որում ոչ հասեր մտացդ քննութեամբ՝ հասու « ցեւս վսեմական հաւատոցդ քաջութեամբն »: Իսկ եթէ գեւ մեկն անհաւատ գտուի և հակառակաբանէ սակէ վերջը, զայնպիսին մերժել և հալածել կը պատուիրէ, իբրև խռովիչ և գայթակղիչ ժողովրդեան:

Դարձեալ կը յանդիմանէ և կը հերքէ զանոնք՝ որք երկրորդ անգամ Թուղթ մը գրելով երկբայեր էին, Թանձր մոլորութեամբ, Քրիստոսի մարմնոյն վայօք, թէ յերկնից բերուած ըլլայ, որովհետև

հին օրինաց առեն ալ Աստուած մարդակերպ կ'երևէր: — Ուրեմն հրեշտակներն ալ այնպէս երևնալնուն համար՝ մարմնաւոր պիտի ըլլան, կը հարցանէ Շնորհալին: Նոյնպէս անոնց ալ որ պայթակղէին՝ Աստուծոյ աչք կամ ձեռք կամ բերան լսելով, 'ի հակառակէն օրինակ կը բերէ ըզմարդ՝ որ Պատկեր Աստուծոյ կ'ըսուի. և կը բացատրէ Թէ նմանութիւնն Աստուծոյ և մարդկան իրենց հոգեկան կարողութեամբքն է, իսկ Քրիստոսի մարմինն՝ է ծննդեամբ 'ի Ս. Կուսէն:

Մեծ զարմանք է մեզի յիշել, Թէ ժրքան այլանդակ մոլորութեանց մէջ ընկղմեր են եղեր այն խեղճ երիցունքն. և եթէ այս Թուղթս չըլլար՝ գուցէ անհաւատալի ալ ըլլար. սակայն երբ դիտենք ժամանակին և տեղւոյ հանգամանքը այն Յոռնոփնդրեալ գաւառաց, ընդ մէջ մահմետականաց և հակակիր Աւորւոց անչատ մնացեալ Հայոց, զարմանքնիս կը Թեթևնայ, յաւերնիս աձելնալով. այլ բարեբաղդ կը սեպեմք որ Շնորհալի մ'ալ կար այն առեն այնքան խոր խաւարին ալ փարատելու:

Գալով Մատաղին՝ որ Աւորւոց պայթակղութեան առիթ էր և Հայոց կուռի՝ անոնց հետ, ինչպէս որ անկէ ետև ալ շատ հեղ եղած է առիթ պայթակղութեան և վիճի բազմաց, գիտնոց և ապիտաց, Շնորհալին Թէ այս Թըղթին մէջ և Թէ յետոյ ուրիշ Թղթոց կը բացատրէ, որ այս բանս մէկ մը հին քրիստոնէից ափսին, կամ ողորմութեան և սիրոյ կերակրոց նման է, մէկ մ'ալ մասնաւոր ազգային դէպք և հարկ մը. ինչպէս որ մեր Մեծն Ս. Սահակ Հայրապետն ալ կ'իմացնէ, Թէ երբ Լուսաւորչի քարոզութեամբն քրիստոնեայ եղան Հայոց քուրմերն ալ, որք հեթանոսական զոհերով կ'ապրէին, և հիմայ ինչպէս սպրուստ Ճարեը կը մատածէին, Լուսաւորիչ անոնցմէ ար-

ժանաւորները քահանայ ձեռնադրեց, և ժողովրդեան ալ Թոյլ տուաւ որ փոխանակ ղոհից և սպանդից՝ եկեղեցւոյ և աղքատաց նուիրեն իրենց կենդանի ընծաները. զորս քահանայք օրհնած աղով ալ սրբեալով, ընդունին Թէ իրենց, Թէ աղքատաց համար և երբեմն նաև մատուցողաց ալ ման հանելով: Ո՛րքան տարբեր էր այս նուէրս հին օրինաց զոհերէն, որոց արիւնն կը համարուէր Թբրև՝ի քաւութիւն մեղաց և՝ի հաշտութիւն, և պէսպէս խարութիւններ պահանջէր. իսկ Մատաւն՝ պարզ ողորմութեան և քրիստոնէական սիրակցութեան նպատակաւ էր. և որպէս զի այսպէս ալ ձանչցուի և գայթակղութիւն չըլլայ՝ կը պատուիրէ Տնորհալի՝ կաթողիկոս եղբօրն Նրատմանաւ, որ նախնեաց աւանդութեան մէջ եկամուտ և աւելորդ սովորութիւններ չհատնին. վերցնեն այն նարօտները և պէսպէս զարդերը՝ որովք զմատաղը զարդարէին. և առաւել այնպիսի ձևեր կամ ծէսերը՝ որ զոհի նմանութիւն մը կընային տալ, եթէ այնպիսի բան մտած էր տեղ մը: Իրենները՝ աւելորդ և պիտանական սովորութիւնները խոտելով՝ աւելի ալ պախարակելի կը ցուցընէ Աստուծոյ պիտութիւնն և աւելութիւնը, որք Հայոց չհնած պանիրն անգամ չէին ուտեր, վախնալով որ գուցէ մատաղ եղած գառնին խախացէն խառնուած ըլլայ անոր մէջ. և կը յանդիմանէ անոնց խարական և օտար աղգերէ տարբեր սովորութիւն և ծէսերը, Մհնապիղծ և մեռելոտի ուտելնին, Ուրբաթալեզը, խոստովանութիւնը մերժելնին, և այլն: Եւ եթէ այնքան գայթակղելի կ'երևի, կ'ըսէ, անոնց՝ Հայոց մատաղը, ուրիշ ազգաց մէջ այս սովորութիւնս չըլլալուն համար, Թող նային և տեսնեն զԱտաինացիս, որք գոնէ Զատկին ոչնին գառնուկ կը խորովեն և խորանին վրայ կ'օրհնեն և կը բաժնեն. այս բանս իրենց եկեղեցւոյ առաջին դա-

բուց մէջ ալ կար, և Լուսաւորիչ ալ անոնց հե-
տևեցաւ, կ'ըսէ: Իսկ աղով և ձիթով պատարագի
հայց պատրաստեն՝ ոբր կը տեսնուի՝ բայց յԱ-
սորոց:

Կը յիշէ ուրիշ մոլորութիւն կամ կարծիք մ'ալ
Դրախտին վրայօք, զոր նոյնպէս Ասորիք հնարեր
և մտուցեր էին այն Հայոց մէջ. Թէ Ադամայ
Դրախտ ըսուածն՝ իրօք և զգալի պարտէզ, ծառ,
պտուղ՝ պէտք չէ իմանալ, այլ այլաբանութեամբ
վերացեալ բան մը, կամ երկնաւոր պարգև մը.
գոնէ երկրիս վրայ չկար այնպիսի տեղի: Ասոր ալ
ամենևին անտեղի ըլլալը պարզ խօսքերով կը ցու-
ցընէ Շնորհալին. իրաւ ուրիշներն ալ և ոմանք՝ ի
գիտնականաց ևս դրախտին տեղւոյն և երկրիս
վրայէն վերցընելուն վրայ՝ տարբեր կարծիքներ
ունեցան, բայց ոչքամիա մարդ մը չէ ուրացած որ
Ադամայ և Եւայի պատմութեան մէջ յիշեալ
պտուղքն նիւթական ջրլան. և հարկ է որ պը-
տուղն ալ ծառէն ըլլայ, ծառն ալ՝ի պարտիզին:
Դրախտը այլաբանեալ և ոչ զգալի ըսողք՝ զե-
կեղեցին ալ նոյնպէս կ'ուզէին ընել. և գեռ գը-
տուէին այն կողմերը մոլորեալ Հայ Թոնդրակեցի
աղանդաւորներ, որք չէին ընդուներ նիւթական
եկեղեցի և եկեղեցւոյ արբազան սպասներ, և ոչ
խակ զնաչ և աղօթք և օրհնութիւն. այլ եկեղեցի
մենք եմք կ'ըսէին, և այլն. իրենցմէ առաջ և վերջն
եղած աղանդաւորաց նման: Որոց կ'իմացընէ Շնոր-
հալին, Թէ հաւատացեալք արդարև քահանան
կամ բարոյական եկեղեցի են. այլ ամենևին աւր-
դելք չէ, մանաւանդ Թէ հարկաւոր է որ իրենց
հաւատոց յայտարար նշաններ և չէնքեր ալ ըլ-
լան, ինչպէս խաչ, աւետարան, մկրտոց, եկեղե-
ցիք և մատուռնք, և այլն: Խաչին պատիւ և երկրը-
պագութի ընծայելն ոչ եթէ անոր նիւթոյն է, այլ
յիշեցուցած Քրիստոսին. և այն ալ յեա օրհնե-

լոյ և օծելոյ զնաչն. նոյնպէս ալ եկեղեցեաց չնուԹիւնն և օրհնուԹիւնն ամենահին է, մանաւանգ Թէ քրիստոնէուԹեան հետ սկսեալ. որուն յայանի համաձայնուԹի առաջ կայսրն Կոստանդիանոս՝ մեծ հանդիսիւ օրհնել տուաւ Երուսաղէմի նորաշէն եկեղեցին, և այլն: Ահա բաներուս վերայօք երկար գրեր էր ընդդէմ Թոնդրակեցւոց՝ Անանիա Նարեկացին, Ս. Գրիգորի Նարեկացւոյ քեռին, որոյ գրածները՝ կարդալ կը խրատէ Շնորհալին. զոր և մեզ փափաքելի էր գանել, վասն զի հիմայ չկայ ուրեք, կամ մեզի ծանօթ չէ: — Կ'ըսացընէ, վերջապէս, Մաշտոցի համար ալ, որ յիրաւի այս անուամբ վարդապետ մը եղած է, և եկեղեցական օրհնուԹիւններ և աղօԹքները հաւաքեր է՝ ի մէկ գիրք, որ այդ իր անունը առած է. աղօԹքներն ինքն չէ հնարած, այլ ըստ մեծ մասին առջի հայրապետաց գրած և գրած կարգերն են, զոր ինքն և իր աշակերտքն Թարգմաներ էն. այլ Թէ և իրեն շարագրածն ըլլային, կամ ուրիշ անձի մը, իրմէ առաջ կամ վերջը, ինչ Ճնաս կ'ըլլար, մինչդեռ սրբազան և արժանավայել բաներ են կարգադրուԹիւնքն և խօսքերն:

Ահա ամեն խնդրոց վրայ երկարօրէն գրելով Շնորհալին՝ կնքէ այս խրատով. « Ի գոյն հաստատեաւ՝ գարձուսջիք զաչեիս ձեր՝ ի Թիւր և՝ ի « մոլար բանից անիմաստից և՝ ի մոլորեցոյն. զի « և առաւել կենօքս խաղաղացեալք ոգւով, արժանի « եղիցուք հաստանել ուղիղ հաւատով և բարի « գործովք՝ յանքոյթ և՝ ի խաղաղ նաւահանգիստն « խոստացելոց բարուԹեանցն. » և այլն:

Ահա՝ ի Միջագետս գրուած ԹղԹոյս ժամանակին անյայտ է. այլ մեջը Աստուց յանդիմանուԹիւն ըլլալէն կրնամք հետևցընել, Թէ կամ նահապետական դիպուածէն ալ առաջ ըլլայ, այսինքն Գրիգորիսի ըրածէն և այրածէն, կամ անկէ բա-

ւական ժամանակ վերջը, երբ հին կիլիքեցին նորէն արձընցեր էին, դէթ 'ի միտս ոգիտաց: Յանդիմանութիւնքն թէ և չեն ծանր և կծու, այլ չեն երևիր Շնորհալւոյ յեսին Թղթոց մէջ, երբ ինքն ինքնօրէն կը գրէր, պարզ իր սրտին թելադրութիւ, և ոչ վեհապետի մը: Ներսիսի վայել հմտութիւն և մանաւանդ զգուշութիւն՝ լաւ կ'երևի այս թղթոյս մէջ ալ, մանաւանդ առաջին խնդրոյն վրայօք, որ այնպէս փափուկ՝ միանգամայն և դիւրաշփոթ խնդիր մ'է, գոնէ մեր ազգին և նմանեաց և իրենց քննողաց և դատողաց համար. այլ իր աքանչելի օծութեն և շնորհքն՝ որ հօս կը փայլփըլլին, ա՛լ աւելի զտութեամբ պիտի ցոլան և ծաւալլին՝ իր ժամանակին և առաքինին յառաջընթացութեամբ գրած Թղթոց մէջ, զոր առեղին պիտի նշանակենք, թէ և ոչ շատ երկարօրէն խօսելով՝ որչափ հօս: Եւ այս առաջին առիթ ըլլալով՝ զայս ալ աւելցընենք, որ Շնորհալին ինչպէս առաքինութեան և այլևայլ բաներու մէջ, այսպէս և Թղթագրութեան՝ մեր գպրութեան մէջ նախադաս օրինակ է. այս բանիս մէջ ալ՝ իր պապէն (Գրիգոր Մագիստրոսէն) զատ՝ ոչ ոք իրեն չափ Թղթոց աւանդ Թողած է մեզի, կամ պահուած և հասած է մեզ. և ամենքն ալ այսպէս աստուածաբանական չեն, աւելի ընտանեկանք ալ կան:

## Ժ.Բ.

### Գևորգ Բ. Լևոն Ա. — Հրաւէր Գրիգորիսի՛ն Լատինաց՛ի ժողովս Անտիոքայ և Երուսաղեմի։

Հայոց՝ Ասորւոց հետ ունեցած յարաբերութիւնները լինչ կերպով ալ որ ըլլար՝ ծանր հետևանք մը չէին ունենար. իսկ Յունաց հետ՝ այսպէս չէր։ Մեր և այս ազգին հետ անցած գոյացն 6–700 տարուան միջոց՝ քիչ շատ յայտնի է ամենուս, թէ ըստ քաղաքական և թէ ըստ կրօնական տեսութեան. իսկ այս մեր հատած պատմութեան միջոցին՝ ամենէն սաստիկ հակառակութեան, վնասմանց, կռուոց և պատերազմաց յեղանակ մ՚է. որ սկսաւ Բագրատունեաց թագաւորութեան վերնալէն, և սաստկացաւ անոնց վերջին թագաւորին՝ Բ Գագկայ սպանմամբն՝ ի Մանուէլեանց, և ասոնց ալ սպանմամբ յԱ Թորոսէ, որոյ յաջորդեր էր եղբայրն Լեւոն Ա. և զինուց բռնութեամբ՝ եղբօրը, հօրը և պապուն սիրած սահմաններուը կը չանար ընդարձակել, աւելի վրէժխնդրութեամբ և քաջութեամբ՝ քան իրաւամբք և զգօնութեբ չարժեցով։ Ասով անխուսափ ամենուն հետ ալ երբեմն բարեկամ և երբեմն թշնամի կ՚ըլլար, թերևս բաց ՚ի Յունաց. ասոնց մէն Լատինաց (Անտիոքացոց) հետ միաբանելով Թուրքերը հալածեց իրենց բռնած տեղերէն. վերջը գժտելով իր նիզակակցաց հետ՝ Թուրքաց հետ գաշինք դրաւ, կոխեց զԱնտիոք, և նեղեց զԵդեսան մինչև ՚ի մահ (1130)։ Գանի մը տարիէն Անտիոքացիք ալ օգնութիւն գտնելով Լեւոնի վրայ յարձակեցան, բռնեցին և տրցիլեցին յԱնտիոք, (1135)։ Նոյն տարինեն

Յովհան Կոմնենոս կայսրն Յունաց՝ ուզեր էր ըզ-
Կոստանդիա՝ Անտիոքայ իշխանին դուստրը՝ իր
մէկ որդւոյն հարսնացընել, որպէս զի զԱնտիոք
ալ նորէն Յունաց ինքնակալութեան տակ ձգէ.
Անտիոքացիք խմանալով դիտաւորութիւնը՝ մեր-
ժեցին. կայսրն՝ փոխանակ դեսպանաց՝ բանակներ
խաւրեց, և սկսաւ գալ Անտիոքայ վրայ: Անտիո-
քացիք իրենց ազատութեան ձար գտան զՎռն
ազատել (1136). հետը դաշինք գրին, նիզակա-
կցեցան ընդդէմ Յունաց: Վռն առաջնորդելով
Հայոց և Լատինաց՝ գնաց պաշարեց զՄելէտիա
(յապրիլի, 1137): Յովհան կայսր ալ խորագէտ և
ձարտար էր, բայց աւելի ալ բաղդաւոր՝ բազմու-
թեամբ զօրացը. Թշնամւոյն ըրածին յարմար ինքն
ալ կը գործէր. Թողլով զՄելիտիա՝ սկսաւ Կիւրի-
կիոյ գլխաւոր քաղաքաց վրայ յարձակիլ, որք բա-
ւական ամրութիւն ալ չունէին, և մէկիկ մէկիկ
առնուլ: Անարզաբա՝ աւելի զօրաւոր էր. Վռն
անձամբ եկաւ պաշտպանելու զայն և երկար գի-
մացաւ. սակայն տեսնելով որ պիտի չկարենայ
ապրեցընել, անկէ առաւ տեղ մը ձգեց զինքը, և
մնացած ոյժը հօն կեդրոնացուց. այս էր Վահկայ
բերդն: կայսրն զԱնարզաբա նուաձելով՝ շուտ մը
եկաւ զՎահկա ալ պաշարեց. քանի մը Լատին
իշխանք՝ որք Երուսաղէմի կոմսերէն կը գառնա-
յին՝ Անտիոքացոց ոմանց հետ միաբանած՝ եկան
Վռնի օգնելու. կայսրն Վահկայի քով գունդ մը
Թողլով մնացեալ զօրօք դէպ յԱնտիոք սկսաւ
վազել. Լատինք սոսկութեան Թողուլ զՎահկա
և զՎռն՝ և իրենց վտանգին ձար մտածել: Այս-
պէս իրարմէ զատելով զՀայս և զՅոյն՝ կայսրն
Յովհան երկուքն ալ ակարացուց, երկուքն ալ
նուաճեց: Վռն երկայն ատենի պաշար չունե-
նալով՝ հարկադրեցաւ անձնատուր ըլլալ երկու
որդւովքն, (Ռուբէն և Թորոս Բ), և զրկուեցաւ

'ի Կոստանդինուպոլիս. Անտիոքացիք ալ հարկադրեցան կայսեր գերագոյն իշխանութիւնը ճանչնալու, և քաղքին դռները բացին:

Այս կերպով Հայոց անկախութիւնն կամ բռնակալութիւնն 'ի Կիլիկիա՝ գրեթէ առ ժամն ոչընչացաւ. և Յովնք առնէ գտան վրէժխնդրութեան 'ի Հայոց, անխտիր կոխելով, աւերշարկելով, կողոպտելով զտուրբ և զանտուրբ տեղուանք, զբերդ և զվանք, զքաղաք և զեկեղեցիս: Որոց հեռուէն իմն ականատես ըլլալով մեր Շնորհալի եպիսկոպոսն, որչափ ալ չէզոք երկրի մը վրայ էր, ժողէն իշխանին տերութեան մէջ, ընդ մէջ Անտիոքայ և Եդեսիոյ, և որչափ ալ Լատնի ամեն գործոց չէր հաւներ, սակայն Յունաց այս անխտիր և անգութ գործոց վրայ սաստիկ վշտանալը, և իր ազգայնոց կարեկից ըլլալը, կը յայտնէ հին գրքի մը մէջ յիշատակագրելով. « Յորժամ եկ Թագա-
« ւորն Հռոմոց յաշխարհն Կիլիկեցոց, և առ զինա
« յիշխանէն Լեւոնոյ, որ էր Հայ ըստ ազգի և ըստ
« հաւատոյ. և աւերեաց զբազում վանորայս և
« զեկեղեցիս. և զինչան տերունական խորտա-
« կէին, և անհնարին հարուածս ազգի մերում
« հասուցանէին քինաբար. և այս եղև 'ի Թուին
« ՇՀԶ ». (1137): Այս համառօտ յիշատակութիւնն պատմական շատ յարգ կընծայ ունենալ՝ այնպիսի գրչէ մ' աւանդուելով. այլ առաւել յարգի են մեզի այն կարճ խօսքերուն մէջ յայտնուած մարդասէր և ազգասէր զգացմունքն, որք կարօտ չեն մեր մեկնութեանը. և որք այնքան շնորհք վայլեալ երևոտասարդ սրտին մէջ՝ 'ի հարկէ գերագոյն և առաքինական կիրք մը գրաւելու են և ոչ ռամկական ազգային սէր կամ նախանձ մը:

Լատնի և Անտիոքացւոց դիպուածն՝ որ երկնց ձախող եղաւ ընդդէմ Յունաց ակարանալով, գոնէ յայտ յայտ եղաւ՝ որ երկու զօրեալ ազգաց մէջ

(Հայոց և Լատինաց) աւելի կարեկցութիւն և սէր մատուց. և առ ժամանակ մը գադրեցան երկու դըրացի աերութիւնց մէջ հակառակութիւնքն, որ յետոյ ի Լեռնի ատեն նորէն պիտի ծագէին և սասակա-նալին ուրիշ պատճառաւ: Իսկ այժմեան բարեկամութիւնն՝ աւելի ալ ճանչցուց զիրենք իրարու, և փոխադարձ յարգել տուաւ իրենց բարի բարի յատկութիւնները և առաքինութիւնները: Այլ պէտք է խոստովանիլ որ այս բանիս գլխաւոր առիթն էր մեր սքանչելի Պահլաւունի եղբարց վարքն և վարդապետութիւնն. որք Անտիոքայ սահմանաց մէջ բնակելով՝ յայտ յանդիման ամենեցուն կը վայելէին, անկարօտ վկայի և համբաւոյ. և երկու ազգաց ալ պարծանք էին, Հայոց՝ իբրև բնակաց, Լատինաց՝ իբրև անոնց քաղաքական իշխանութեան տակ գտուելով. վասն զի, ինչպէս որ վերը յիշեցինք, իրենց աթոռն այն ատեն էր « յերկրին Անտիոքայ, 'ի գաւառին Տըլբոյ, 'ի փոքրագոյն դըղեակին Ծով »: Բնական էր որ բնակակցութիւնն պահանջէր բանակցութիւն ալ, և կրօնական տեսութեանց միաբանութիւն և միագործութիւն. և այնպէս ալ եղաւ: Մեծ Վկայասիրին անձամբ նորոգեալ ծանօթութիւնն և յարաբերութիւնն ընդ Լատինաց եկեղեցւոյ, ալ աւելի զարգացաւ նախ այս իր յաջորդաց ատեն, և յետոյ ատոնց յաջորդաց և Լեւոն Թագաւորի օրով: Երեք կրօնական միաբանութեան դէպք կը յիշուին Փոքր Վկայասիրի և Շնորհալւոյն ատեն, որք մեր եկեղեցական պատմութեան ալ մեծ դիտելիք և գիտելիք մը պէտք է ընծայեն. և անշուշտ արդէն այսպէս կ'ըլլային, եթէ դէպքն մանրապատում ատանդուած ըլլային կամ մնային. այլ ոչ միայն մեր պատմիչք հարևանցի յիշեն, այլ և Լատինաց յիշատակք և ժամանակագրութիւնք համառօտ են այս միջոցիս, և կարևոր յիշատակարանք և կոնդակք՝ կորուսեալ կամ դեռ անյայտ:

Առաջին դէպքն է Անտիոքայ ժողովը, յամի 1138 կամ 1139[1]. թուի թէ առաջ և եռա քանի մը անգամ ժողոված են հոն Լատին եկեղեցականք և գլխաւորք ժողովրդեան, իրենց քաղաքախառն կրօնական խնդրոց համար. իսկ ծանօթագոյն գիւտածն այս է, որ յետ մահուան Բեռնարդոսի առաջին Լատին պատրիարքի Անտիոքայ (1136), անոր յաջորդին համար չփոթութիւնք եղան: Դիքաղդաբար այն միջոցին Հռոմայ մէջ ալ չփոթութիւն մը կար, Ինոսվկենտ Բ ի հակառակաթոռ կանգնելով Անակլետ Բ մը. այս բանս առիթ առնելով Ռատուլֆ՝ ազգաւ Փրանկ եպիսկոպոսն, հաճութեամբ Անտիոքայ ազնուականաց, պատրիարք նստաւ. և կէս մը Հռոմայ աթոռոյն չփոթութիւնը պատճառելով, կէս մ'ալ Անտիոքայ երբեմն Ս. Պետրոսի աթոռ ըլլալը, (բայց աւելի իր յանդգնութիւնը), ինք զինքը հաստատեց 'ի պատրիարքութեան. ինքնին օրհնելով և վիզը անցընելով զպալէոմ վկայսը, զոր Ս. Քահանայապետք Հռոմայ կու զրկեն իրենց պատրիարքաց, նախագահից և պատուաւոր արքեպիսկոպոսաց: Ատոր վրայ ուրիշ անհամհեմութիւններ ալ աւելցնելով՝ կղերը և ժողովրդեան մէկ մասը իրեն դէմ գրգռեց. որք դիմեցին առ Ռոճեր Թագաւորն Սիկիլիոյ: Ռատուլֆ վախնալով ատոր իշխանութենէն՝ անձամբ գնաց 'ի Հռոմ, և խոթագիտութեամբ արդարացուց զինքն առաջի Ինոսվկենտ Պապին, և ընդունեցաւ անկէ պալլիում: Սակայն չկարցաւ դիւրաւ դառնալ յաթոռը. այնպիսի ընդդիմութիւն տեսաւ Անտիոք՝ որ կեանքն ազատելու համար քաշուեցաւ 'ի Սեաւ

1 Ոմանք, ինչպէս նաև այժմու մեծ Պատմիչն Ժողովոց Հէֆելէ (Ե. 397) այս ժողովս կը դնեն յամի 1139, յաջորդ տարին ալ Երուսաղեմի ժողովը. այլք աւելի առաջ կամ ետև:

Լեռնեըը, և սահեն մը պահուըտեցաւ, մինչև որ ձարտարուեստով ձամբայ բացաւ և նորէն մտաւ նաւուս յանծոռը: Սակայն Քահանայապետն Հռոմայ բոլորովին վատահ չէր անոր վրայ. հարկաւոր սեպեց նուիրակ մը խնդրել, որ կ'ըսուի Լէկոպ, և քննել Անախոքայ խնդիրը: Առաջին լեկագն յԱնախոք չմտած մեռաւ, և ոմանց կասկած բերաւ անբնական մահուան. տեղը դրկուեցաւ Ասիոյ եպիսկոպոս Ալեքսիկ Կարդինալն, որ հրատարակեց ժողովք գումարել յԱնախոք նոյեմբեր ամսոյ վերջին օրը, քաղքին Ս. Պետրոս մայր եկեղեցւոյն մէջ. ուր և ժողովեցան՝ Երուսաղեմի պատրիարքն Գուլիելմոս, Տիւրոսի արքեպիսկոպոսն, և ուրիշ տասնիւ չափ արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք և վանահարք Լատինաց, և գըլխաւորք Անախոքայ: Յայտ է որ պէտք էր երկպառակութիւն ըլլալ Անախոքայ մէջ՝ ի պատճառս իրենց անուանեալ պատրիարքին, ոմանց կողմնակից ոմանց հակառակ ըլլալով. այլ վէճն շատ էր կարեց՝ Որտուլֆի նոր պնդապլխութեամբը. որ իրեք անգամ հրաւիրուելով՝ չերևցաւ ի ժողովին, և ըստ եկեղեցական օրինաց՝ մերժեցաւ յանծոռոյն և բանադրեցաւ. և իբր յանցաւոր՝ Անախոքայ իշխանն բռնեց և բանտեց զնա բերդի մը մէջ. ուսկից փախչելու հնարքն ալ գտաւ և գնաց ի Հռոմ, և հոն մեռաւ պատրակութական մահուամբ, կամ անկէ նորէն եկնելով՝ ձամբուն մէջ: Անոր տեղ հաստատեցին ուրիշ Փրանկ մը, Էմբըի կամ Ամարիկ անուամբ, որոյ գլուխն ալ շատ փորձանք եկան իր երկար պատրիարքութեան միջոց:

Արդ այս ժողովոց առթիւ հրաւիրեցաւ մեր Պահլաւունի կաթողիկոսն ալ իր Շնորհալի եղբայրն Անախոք. զորմանք զանոց ընել և թողուլ ալ անկարելի խնդիր էր, այնքան մօտք և այնքան մեծք ըլլալով.

« Մեծն Անտիոք ժողովէն եղեալ,
Խնդրոյ սոցա արագ ելեալ ».

կ'ըսէ Լամբրոնացին. իսկ Կիրակոս Պատմիչ շատ մեծաբանութեամբ կ'աւելցնէ, թէ կաթողիկոսին հասած առեն՝ « Եւ ամենայն քաղաքն ընդ « առաջ նորա ջահիւք և լապտերօք, և մեծաւ « պատուով տարեալ նստուցին զնա յաթոռն « Պետրոսի առաքելոյն »: Պետրոսի աթոռ կոչուելն Անտիոքայ յայտնի է. իսկ այս առթիս մէջ այն աթոռը նսեմին կը յարմարէր Պապին լեկատին, որ նախագահ էր ժողովոյն, եթէ կըրնայ ըսուիլ յաթոռն Պետրոսի նստիլ: Սակայն այս ժողովիս մէջ յիրաւի մեր կաթողիկոսին և իրեն ներուն գտուիլն՝ աւելի պատուաւորաբար համարելու է քան թէ հարկաւորաբար, կամ կարևոր քննութեանց համար. 'ի վերայ այսր ամենայնի՝ երբ երկու աննման ծէսք և լեզուք եկեղեցեաց՝ մէկ տեղ գան, բնաբար և տարբերութիւնք գտուին, և իսօք կ'ըլլան. գուցէ այս բանս կ'ակնարկէ Լամբրոնացին, վերը յիշածնուս վերայ աւելցնելով,

« Ուր հանդիսիւ 'ի ձահ իսօեալ,
Ունկըն դնելով նոցա՝ նուաճեալ ».

այսինքն ժողովական հանդիսին մէջ մերոնք ալ, (անշուշտ Շնորհալի լեզուն) պատշաճ և վայելուչ կերպով իսօելոյն, և լսօղքն Լատինք՝ հաւանեալ համոզելոյն. եթէ կրօնական տեսութիւն մ'էր իսօուածքն, և եթէ պատուադրական պատասխանի մը, կամ յորդորակ մը սիրոյ և միաբանութեան:

Այս առաջին առթէն Լատինաց հետ միաբան ժողովակցութեան՝ պատճառ եղաւ անմիջապէս

երկրորդի մ՝ալ. Պապին լեհաց արգէն դիտաւորութիւն ունէր երթալու Երուսաղէմ, Ս. Սիոնի եկեղեցւոյն նուաճականութիւն ընելու. թէ հանդիսին փառաւորութեան համար և թէ մեր կաթողիկոսին փառաց և իր եղբօր շնորհաց համար, փափագեցաւ որ մէկ տեղ կատարեն այն սուրբ և շքեղ գործը. և ըստ ոմանց միաբան ալ ըրին իրենց ձամբորդութիւնը, և մնան՝ի սուրբ քաղաքն: Շնորհալւոյն ալ մեկտեղ ըլլալն չի վկայուի բայց երկուքն ալ հաւանական կըրնայ ըսուիլ, թէ երթալն և թէ մնալն՝ իբրև աթոռակալ իր եղբօրն՝ի կաթողիկոսարանին: Իսկ Գրիգորիսի երթալն և փառօք ընդունուիլն թէ Լամբրոնի վկայեն և թէ մեր պատմիչք. միայն թէ Անտիոքայ ժողովոյն պէս՝ այս Սիոնի ըսուած ժողովոյն ալ պատմութիւնն մանրամասն գրութեամբ չէ հասած մեզի: Այլ նկատմամբ մեր պատմութեան, երկու գլխաւոր և կարևոր բան յայտնի վկայուի երկու ազգին գրողներէն ալ. մէկ մը մեր կաթողիկոսին մեծափառ երևնալն և այնպէս ընդունուիլն. մէկ մ՝ալ Հայ և Լատին եկեղեցեաց անխափ միութեան բանակցութիւն ըլլալն հօն և հաստատուիլն: Մեր այն առենի ժամանակագիրն Սամուէլ՝ կը յիշէ այս բաներս. նախ, թէ Գրիգորիս իր վարուց մաքրութեան և շնորհաց համար էր «պատուեալ փառաւորութեամբ, ոչ միայն «՝ի մերոյ ազգէս, այլ և յօտարատեռ թագաւորաց «լատց և իշխանաց և պատրիարգաց»: Այս պատրիարգաց հօս ներկայ գտուողն էր տեղւոյն բնակիչն, այսինքն Երուսաղէմին, որ և լեհադին և կաթողիկոսին հետ մեկտեղ Անտիոքէն եկաւ. իսկ իշխանաց մէջ գլխաւորներէն մեկն եղաւ այս ժողովոյս մէջ ալ ժողովն, մեր կաթողիկոսին բնակած տեղեաց իշխողն, որ գուցէ նոյնպէս ուղեկից եղած էր հայրապետացն. իսկ թագաւորաց

մէջ յայտ է որ Երուսաղէմինը փինտրեքու է հօս, որ էր այն առեն Ֆուլք կոչուածն։ Ուխտերնին և Քրիստոսի Զարչարանաց և Յարութեան մեծամեծ տօները կատարելէն ետև, մեծաւ փառաւք և հանդիսիւ՝ զատկին երկրորդ օրը կատարեցին Ս. Սիօնի նաւակատիքը. այսինքն է Սիօն լսուած բարձրաւանդակին վրայ՝ Քրիստոսի Ընթրեաց Վերնատան տեղ շինուած եկեղեցին՝ նորոգուած էր. զայն հանդիսապէս օծեցին լեկատն և պատրիարքն և մեր կաթողիկոսն. և երրորդ օրն ալ հօն գումարեցան ՚ի ժողով, որ կըրնայ լսուիլ թէ միայն Հայոց համար եղաւ, կամ ասոնց և Լատինաց յայտնի միաբանութեան. վասն զի ասկէ զատ ուրիշ ինդիր մը չի կրնար այս Սիօնի ժողովին մէջ։ Մանաւանդ պատուով բազմեցուցին մեր կաթողիկոսը լեկատին քով, կամ ամենէն բարձր աթոռին, ինչպէս վկայեն յետին պատմիչք. և նմանապէս պատուաւոր տեղ տուին իր հետ եկող եպիսկոպոսաց Հայոց, որոց գլխաւորն ըլլալու էր, (եթէ հօն չէր Շնորհալին), Եգիպտոսի Հայոց և Երուսաղէմի եպիսկոպոսն։ Հայոց եկեղեցւոյն Ուխտին այսպիսի երևոյթն առաջին անգամ էր Լատինաց ժողովի մէջ, և թուի թէ անոնց եպիսկոպոսներէն և աթոռակիցներէն պակաս թուով չէին մերայինք ալ. այլ թուէն աւելի արևելեան և հայկական կերպարանքն, հագուստն, և ձևն ու ծէսն, շքեղութիւնն, և մանաւանդ մեր Պահլաւունոյն իսկական շնորհքն և արժանիքն՝ այնպէս տպաւորութիւն մ՚ըրած են հանգիսականաց վրայ, որ կարծես թէ անոնց ժամանակակից ամենէն մեծ լատին ժամանակագիրն Գուլիէլմոս՝ Տիւրոսի եպիսկոպոսն, դեռ 40 տարի վերջ ալ այս դիպուածը գրելու առեն՝ պատկառանք մը կը զգայ, և բառական չի սեպեր զԳրիգորիս անուանել Մեծ կամ Ամենամեծ քահանայա-

պետ Հայոց (Maximus Armeniorum Pontifex), այլ մանաւանդ թէ, կ'ըսէ, ամենայն եպիսկոպոսաց ոլոք 'ի Մեծ և 'ի Փոքր Հայս, 'ի Կապադովկիա, 'ի Պարս և 'ի Մարս կը գտանէին, գլխապետն և ընտիր վարդապետ, որ կաթողիկոս կոչուի. (Omnium Episcoporum... Princeps et Doctor eximius). Իսկ իր Հայ արուեստակիցն և աշխատակիցն՝ Սամուէլ մեր Անեցի՝ կը յաւելու. « Անդ « ծանուցեալ և խմացեալ զառաւտահաս ծաւա- « լումն աստուածային շնորհին 'ի վերայ Հայրապե- « տին՝ ազգն Հռովմայեցւոց՝ իշխողք աշխարհացն, « որ փառնդք կոչին, և ըստ վայելչազգեաց և « պատշաճադեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան և ըղ- « հոգւոյն գեղեցկութիւն, և 'ի բանս հաւատոյ « զճշմարտութիւն՝ ամենևիմբ. զոր պայծառ և » կանոնական կարգաւ և քանոնով վարդապե- « տական ճոխութեամբ բարբառէր: Ուրախացան « հաճելութեամբ, և առաւել սէր հաստատեցին « ընդ Հայրապետին և ընդ ազգս մեր: Եւ այս ա- « մենայն ըստ խնամոցն Աստուծոյ. զի ոչ մերժէ « Տէր զժողովուրդս իւր, ըստ Սաղմոսերգողին »: Այս խմաստը կը համառօտէ և Կիրակոս պատմիչ մեր. « Ազգն Փռանկաց՝ որ իշխէին քազաքին (Ե- « րուսաղէմի) և պատրիարքն նոցա՝ առաւել սէր « հաստատեցին ընդ ազգիս մերոյ՝ վասն նորա. զի « էր նա բարի տեսլեամբ, գիտութեամբ սուրբ « գրոց զարդարեալ: Չհին գաշինս արքոյն Գրիգո- « րի և Տրդատայ, և Կաստանդիանոսի և Սեղբեհա- « տրոսի՝ վերատին նորոգեցին առ սուրբ »:

Խնդիրները՝ որոց վրայ եղաւ առաջարկութիւն 'ի կողմանէ Լատինաց, որոշակի չեն յիշուիր, այլ կըրնան գուշակուիլ, որ մէկ մը ծիսից և սոնից օրերուն համար էին, որոց պատճառն խմացընելով Հայրապետին մեր՝ համոզեց զնրենք. մէկ մ'ալ հաւատոյ քանի մը վարդապետութեանց, որոց

որոշ կամ յամենայնի չիտակ բացատրութիւն էին տար ամեն կողմի Հայք և անոնց վարդապետքն: Այս բանս խիստ շատ զգուշութեամբ և փափկութիւ կը նշանակէ վերոյիշեալ Տիւրացին՝ որ մեծ պատիւ կ'ընէ իր խոհեմութեանն ալ. և օրինակ կ'ընծայէ հաւատոյ խնդրոց վրայ քննողաց և վիճողաց, որ ընտրեն զանձինս, և մանաւորաց կարծիքը և խօսքը՝ հաստրակաց չսեպեն. և դարձեալ՝ անձանց պատիւն ըստ աստիճանին և վարուց յարգեն, թէ և անոնց գիտութեան կամ կարծեաց մէջ տարակուսական և սխալ գտնեն. « Խօսք եղաւ, կ'ըսէ, հաւատոյ այն յօդուածնե« րուն վրայ՝ որոց մէջ մեզմէ տարբերիլ կ'երևի « իր ժողովուրդն. և իր կողմանէ խոստումն եղաւ « շատ բանի մէջ ուղղել [1] »: Երբոր երկու կողմէն այսպէս պատուաստիրաբար և խոհեմաբար վարմամբ հաւանութիւն եղաւ, և կաթողիկոսն Հայոց օրինաւոր բաներու մէջ զիջաւ և խոստացաւ, բոլոր ժողովական Հարք ելան և մեծարանօք գըրկեցին և համբուրեցին զինքը, ինչպէս կ'աւանդեն եկեղեցական պատմիչք ոմանք:

Ահա այսպէս Թուխ Թէ մեկ աւուր և մեկ նըստի մէջ կատարեցաւ Ժողովն Սիոնի. յետ որոյ իւրաքանչիւր կողմանք զատուեցան իրենց առանձնական գործոց գացին. Լեկադն գնաց 'ի Պտղոմայիս (Ա.քքեա), որ Փառանկաց առաջին ամրոցն էր Սուրբ Երկրին մէջ, իրենց խնդիրները տեսնելու համար. և քիչ աւեղէն բարի լուրերով գարձաւ առ Ս. Պատն Իննովկենտիոս Բ 'ի Հռոմ, գուցէ սիրոյ և մեծարանաց Թուղթ մ'ալ հեաը առնելով 'ի Գրիգորիսէ կաթողիկոսէ մերոյ. որ

1 Cum hoc etiam de fidei articulis, in quibus nobis dissentire videtur populus ejus, habitus est tractatus, et ex parte ejus promissa est in multis correctio.

կամ պատասխան ալ էր Պապին Թղթին, կամ առիթ առը պատասխանին:

Երրորդ և աւելի ալ նշանաւոր յարաբերութեան վայրօք ընդ Լատինաց՝ պիտի խօսիմք քիչ մը վերջը, ի Գլ. ԺԹ:

## ԺԹ.

Ներոգոբիւն Աղուանից կաթողիկոսութեան. — վահրամ և վասակ հօրեղբարք Շնորհալոյ՝ իշխանք յԵգիպտոս. — Աբգարոբիւն Գրիգորիսի. — Հայ վզրուկք յԵգիպտոս:

Գրիգորիսի յաթոռէն հեռացած աւեն և հանօրէն յԱնախոք եղած աւեն, զոր Կիրակոս պատմիչ յարևմուտս գտուիլ կ'ըսէ, « էր նա ի « կողմանս արեւմտից », փոխանակ Արևմտեայց քով ըսելուն [1], իբեն նախրակութիւն մ'եկաւ Աղուանից աշխարհէն, 1139 տարւոյն սկիզբները, այն աեղին համար կաթողիկոս մը գնելու: Հայոց ամենէն մերձաւոր, հաւատակից և հաւատարիմ ժողովուրդ՝ Աղուանք եղած էին, Տրգատայ և Գր. Լուսաւորչի օրերէն սկսեալ, երբ սա իբենց առաջնորդ խաւրեց իր թոռը՝ Գրիգորիս պատանին. և անկէ ետև սովորութիւն եղաւ որ ի Հայոց առնուն իբենց եպիսկոպոսապետաց ձեռնադրութիւնը. և ալ աւելի կապուեցան իրարու հետ, երբ ի վերջ Զ. դարու կամ ի սկիզբն էին՝

1 Ապա թէ ոչ հարկ էր կարծել թէ Գրիգորիս յԵրուսաղէմ եկած ըլլայ, որոյ ուրիշ նշան կամ յիշատակ բնաւ չկայ:

Հայք ուղելով իրենց կաթողիկոսը պատրիարք անուանել՝ վԱղուանից Արքեպիսկոպոս անուանեցին, Վրացը՝ Մեսրապօվիտ, որ սեբէլի սարքին սահիճան համարուէր. ընդ որ տհաճեցան Վիրք, որ սեբէլի մեծ ազգ էին. սակայն որովհետև Աղուանք անմիջապես Քրիստոսի աշկերտներէն ընդունած էին սուրբ կրօնքը՝ Հայք զասոնք նախամեծար սեպեցին. ասկից ծագեցաւ կ'ըսեն ոմանք 'ի պատմչաց մերոց՝ Վրաց գժտիլն և զատուիլն 'ի Հայոց: Թողլով զանոնք՝ ատոյգ է որ մեր եկեղեցական պատմութեան մէջ շատ հեղ կը տեսնուի Հայոց և Աղուանից յարաբերութիւն. գրեթէ առանց Հայոց Աղուանք ժողով չէին ըներ. մերոց ժողովոց և կաթողիկոսի ձեռնադրութեան՝ շատ հեղ ներկայ կ'ըլլար անոնց կաթողիկոսն: Երբ Յովհաննէս Բագրատունի Թագաւոր մերժեց ընդ Պետրոս Գետադարձ յաթոռոյ՝ Աղուանից կաթողիկոսն եկաւ միջնորդելու հաշտութեան, և նորէն յաթոռը նստուցանելու զՊետրոս: Վերջերն ալ ակնի տեսնենք որ Շնորհալի Մխիթարութեան ինդրոյն համար անհրաժեշտ հարկ կը սեպէր Աղուանից կաթողիկոսին ներկայութիւնը, ինչպէս որ յիրաւի ալ ներկայ եղաւ և գահակցեաւ՝ յետ Գրիգորի Տղայոյ մեր կաթողիկոսին՝ 'ի ժողովն Հռոմկլայի, յետ 40 տարուոյ մեր հիմնակուսն յիշելու դէպքէն: — Գրիգորիսի կաթողիկոսութեան սկիզբներէն Աղուանից ալ մնացեր հատուկ կաթողիկոս մը գրուած էր, Սահականոս անուամբ, որ և սակաւակեաց եղաւ, յետ տարուոյ և կիսոյ վախճանելով. անկէ ետև՝ չի յիշուիր ինչ պատահաւ՝ աթոռն անյաջորդ մնաց ուեթ տարի [1]. իրենց սակաւաթիւ եպիսկոպոսունք ալ

1 Կիրակոս Պատմիչ 25 տարի կ'ըսէ:

դրեթէ քոլոր մեռան, մինչև օտար թեմեր կը խնա-
րէին քահանայացուները ձեռնադրուելու:

Արդ այս միջոցիս վարդապետք աշխարհին, (որ
ոչ էր հին աշխարհն Աղուանից՝ Կովկասէն ան-
դին, այլ մեր Հայոց Ուտի և Արցախ նահանգ-
ներն), ժողովելով 'ի խորհուրդ՝ առաջնորդութիւ
Գրիգորի վարդապետի Թոքաքերի որդի կոչելոյ՝
աշակերտի մեծանուն Դաւթի Աղաւակայ որդւոյն
(+ 1130) զորս յիշեցի (131), կաթողիկոս ընտ-
րեցին Գագիկ անուամբ պատանին՝ նախորդ կա-
թողիկոսին Ստեփանոսի հօր (Կարճկի) եղբօր
(Գէորգայ) որդին (և Թոռն Կարապետի). արժա-
նաւոր վարդապետ մ'ալ նուիրակ խնդրեցին առ
կաթողիկոսն Հայոց, խնդրելով՝ որ եկողը եպիս-
կոպոս ձեռնադրէ, և անոր հետ ինքն ալ պա-
տուաւոր եպիսկոպոս մը խնդրէ՝ որ զուրիշներ
ալ ձեռնադրեն և ապա զկաթողիկոսն ալ: Կա-
տարեց Գրիգորիս անոնց խնդիրը. և եթէ սոյպ
է Կիրակոս Պատմիչին ըսածը՝ հարկ է որ յԱն-
տիոք եղած տաեն ձեռնադրած ըլլայ զնուիրակն
Աղուանից. որոյ ընկեր գրաւ զԱհակ՝ իր Դրան
եպիսկոպոսը, որ անուանէր և եպիսկոպոս կար-
նոյ. սոր յանձնելով իր կոչմանէ ձեռնադրել
իւրենց եպիսկոպոսապետը: Ըստ այսմ երբոր հա-
սան յԱղուանս՝ քանի մ'եպիսկոպոս ձեռնադրե-
ցին (12, ըստ Կիրակոսի), քանի մ'ալ մօտակայ
կողմերէն ժողովեցին. և նոյն տարին Չոգեգալըս-
տեան տօնին ժողովեցան մեծ հանդիսիւ 'ի բեր-
դաքաղաքն Տաւուշ, ուր Բագրատունեաց ցեղէն
փոքր Թագաւոր մը նստէր, Աբաս անուն, նոյն-
պէս փոքրիկ Թագաւոր եղբայր մ'ալ ունէր ուրիշ
բերդաքաղաքի մը (Մածնաբերդ) տէր՝ Դաւիթ ա-
նուն, մէկ (եպիսկոպոս) եղբայր մ'ալ՝ Ստեփա-
նոս անուն. որք եկան հօն հանդերձ վարդապետօք
և եպիսկոպոսօք, և առաջնորդութեամբ Սահա-

կայ՝ ձեռնադրեցին զԳապիկ ՚ի կաթողիկոս, ա-
նունն ալ փոխելով ՚ի Գրիգորիս: Յետոյ նորին
ժողովեցան առջինէն աւելի եկեղեցականք և կրօ-
նաւորք Վարդավառի տօնին՝ Կաթողիկոսի–քար
ըսուած բերդը, և երկու եպիսկոպոս ձեռնադրեց
նորընտիր կաթողիկոսն, ու մեծ հանդիսիւ միւռոն
օրհնեց և բաժնեց [1]:

Գրիգորիս կաթողիկոսի երուսաղեմայ Հանա-
պարհորդութեան վրայօք ուրիշ յիշատակ չկայ
առ պատմիչս. այլ շատ հաւանական և գրեթէ
անտարակոյս ալ երևի որ անկէ անցած ըլլայ Յե-
գիպտոս, յայցելութիւն տուրբ տեղեաց, այսինքն
Ս. Հարց Ճգնաւորաց վանորէից, միանգամայն և
իր իսկ հօրեղբարց գերեզմանաց, և գուցէ դեռ
մօտ ՚ի գերեզման ապրող և Ճգնող ծերունւոյ մը:
Մեծ վկայասիրին հօն երթալուն դիպուածին յի-
շեցինք որ իր քեռորդին և համանուն Գրիգորիսը՝
Եգիպտոսի և Պաղեստինու առաջնորդ կարգեց
արքեպիսկոպոսական պատուով, զոր ամանք և
պատրիարք և կաթողիկոս կ՚անուանեն. և սա
ըստ խոստման քեռւոյն առ Խալիֆային Եգիպ-
տոսի՝ շատ Հայեր կանչեց և բնակեցուց անոր իշ-

1 Այս խնդալի և հոգևոր գործերէն քիչ օր ետև տա-
կալի սուգ մը հասաւ (30 սեպտեմբ. 1139) այն կողմե-
րուն, սաստիկ երկրաշարժէ. որով ուրիշ տեղերէն զատ
Գանձակ մայրաքաղաքն ալ գրեթէ հիմնովին կործանե-
ցաւ, բոլոր բնակչացը գերեզման ըլլալով, և անոր աւե-
րակաց տակ մնացին վերոյիշեալ Գրիգոր Վարդապետն և
իր աշակերտակիցն Սարգիս վարդապետ, որք այն կողմե-
րուն ամենէն երևելի վարդապետքն համարելին, յետ Դաւ-
թի իրենց վարպետին. ձեռնադրութեան ժողովին մէջ՝
Սարգիս ամենէն պատուաւոր անձն սեպուած էր՝ յետ
ձեռնադրող Սահակ եպիսկոպոսի. իսկ Գրիգոր որ սովո-
րաբար Գանձակեցի կ՚անուանի՝ ծանօթ է Ընդերցո-
ղաց գիտնական գրովք, թէպէտ և այսպիսի մեկնու-
թեան գիրք գուցէ զանազան ոճով, զանազան հեղինա-
կաց գործ, և չէ յայտ ո՛րն է իրեն յատուկ գործն:

խած երկիրներուն մէջ. ասոնց հետ հրաւիրեց և եկան իր երկու իշխանազուն եղբայրքն ալ՝ Վահրամ և Վասակ. միայն իրենց միւս եղբայրն՝ Ապիրատ՝ հայր մերոյ Գրիգորիսի և Շնորհալւոյ՝ մնաց իր հայրենի ժառանգութեան մէջ: Վահրամ և Վասակ Խալիֆայից ծառայութեան մէջ մեծ պատիւ գտան, մանաւանդ զինուորութեան կարգին, յորում և բարձր աստիճանաց հասան. զոր և համառօտիւ կ՚ունի յիշէ Շնորհալին Վիպասանութեանը մէջ.

« Ըզհամազգիս ըզկնի ձրգեալ
Զարի եղբարս իւր քաջացեալ,
Ըստ Յեսովայ զօրապետեալ.
Որոյ Վահրամ վերաձայնեալ,
Միւսոյն Վասակ անուանադրեալ.
Որք վեհագոյն փառս ընկալեալ
Եւ մեծարգի պատուոյ հասեալ.
Ըզպատերազմ ազանց վանեալ,
Հակառակաց յաղթող գըտեալ.
Վասն այսորիկ շքեղացեալ,
Եւ աշխարհի նոցունց տիրեալ »:

Վիպասանութեան վերջի տողերն մեծ և յիշատակաց արժանի դիպուած մը կ՚ակնարկեն, զոր արժան է քիչ մը բացայայտել, արաբագիր քրիստոնեայ հեղինակաց թողած աւանդութեամբք: Յետ մահուան Էպուլ-Մանսուր Ամիր խալիֆայի եղբայրն՝ իր յաջորդին Հաֆիզ Լէանիլլահի իշխանութեան սկիզբը՝ (1130) շատ չխոթուեցին եղաւ աէրութեան և ժողովրդեան մէջ, պատճառաւ անխոհեմ և անհանգարտ բարուց և գործոց իր վեզիրին, որ իր օրդին ըլլալով՝ համարձակ և յանդուգն կը գործէր. ժողովուրդն և իշխանք ձանձրացած՝ և մէկմէկու վրայ կասկածելով, դի-

մեկին առ խոհեմ և ծերունապարտ իշխանն և զօրավարն Վահրամ, (զոր Պէհրամ Թակէատուլլահ անուանեն), որ երկար տարիներ մէկ աէրուԹեան ծառայեր էր հաւատարմուԹեամբ, և մէկ իր կրօնից և ծխից անփոփոխ պահպանուԹեամբ, որով մէկ քրիստոնէից և մէկ բնիկ աեղացեաց սիրելի և վստահանալի եղած էր: Վահրամ իրեն պարտք սեպեց այս պաշտօնս ալ. խալիֆային հաւատարիմ եղած զօրօք և իր իսկ տոհմազգի Հայ գնդով՝ սկսաւ դիմել՝ի մայրաքաղաքն Գահիրէ. խռովարար վզիզրուկին (Էլ-Հաչէն) Վահրամայ ոտնաձայնը լսելուն՝ մեկէն Թողուց փախաւ. Գահիրէ և Խալիֆային իբրև հրեշտակ խաղաղուԹեան ընդունեցան զՎահրամ. և խաղաղուԹիւնն ապահովելու համար՝ ազաչեցին և աւիպեցին զնոյն ինքն Վահրամ՝ Խալիֆային երկրորդ ըլլալ, այսինքն վզիզուկ, և աէրուԹեան հազարապետ: Կառնաւ կամ ակամայ յանձնառու եղաւ Վահրամ այս անակնկալ և դերպդոյն պատուոյն (1134). և խոհեմուԹեամբ կառավարեց քանի մը տարի: Բայց հալածեալ վզիզուկին կուսակիցք սկսան քիչ քիչ ձայն վերցընել և գանգատիլ, Թէ Խալամի ձեռքէն իշխանուԹիւնն վերցուեցաւ, և ամեն բան Հայոց անցաւ. օր մ՚ալ միաբան ժողովելով իրենց հաւատոց գլուխը՝ Կոպտանը՝ նիզակներնուն ծայրը կախած, ելան դիմեցին յարքունիս՝ կանչըռտաելով և աղմկելով: Հայոց հեծեալքն և ազնուաւորք՝ որք Խալիֆային և Վահրամայ պաշտպանք և հաւատարմուԹիւնն էին՝ ուզեցին ցրուել զանոնք. բայց Վահրամ արգիլեց. Զասոնք հալածել՝ շատ գիւրին բան է, ըսաւ, բայց սեղոյս աէրուԹիւնն և պաշտօնք՝ իրաւամբք մերը չեն, այլ այլազգեացս. հարկաւ օր մը նորէն իրենց ձեռքը պիտի անցնին, և կըրնան այն առեն ասանիկ վրէժխնդրուԹիւն ընել. լաւ է որ հիմակուընէ Թողունք իրենց, և

մերինը առնելով երթանք: Հրամեց Հայոց որ ուղածնին առնուն, և իրենց ինչերով և զինքերով եկեն քաշուին Սայիտայ կողմը, ուր իր եղբայրն Վասակ կ'ինկաէր, հին Թեբէի քովերը նստած: Խալիֆային շատ սիրուելեամբ Թողուց զՎահրամ. մանաւանդ երբ ապստամբաց գլուխն Իոաննան անարգել առաջ եկաւ, և իշխանութիւնը ձեռք ձգելը բաւական չտեսնելով ուզեց Հայերը ջնջել: Զօրքերը շատցնելով վազեց Վասակայ վրայ, քաղաքը պաշարեց. և վախնալով որ Վահրամ եռանդն չհանի՝ ծածուկ իմաց տուաւ ներսը եղող մահմետականաց և գաւով սպաննել տուաւ զՎասակ, ու սիրեց քաղաքին: Ինչ տեսնէն հասաւ Վահրամ իրենները լսելով և ինքն ալ պաշարեց զԻոաննան. սակայն տեսնելով որ պաշարումն շատ երկար պիտի քշէ, որովհետև քաղաքն շատ պաշար ունէր, ընդհակառակն իր բանակին պաշարը կարճ էր. մեծ որոշմունք մ'ըրաւ. ինքն իր վիճակն և բաղդն ընարեց. զօրացը պատուէր տուաւ գրուելու. ինքն տուրին տեղ խաչ, սաղաւարտին տեղ կնիկուղ առնելով քաշուեցաւ Սայիտայ վանքի մը մէջ, մնացեալ կեանքն ապօթքով և ճգնութեամբ կնքելու: Իոաննան անկասկած մնալով, և վատութեամբ՝ Հայոց քաջ կռուողներէն առնուլ չկրցած վրէժը՝ անոնց կրօնաւորներէն առնուլ ուզեց. դարձաւ նորէն յիշեանան. որոյ մօտերը կար Հայոց վանքն Զահիր կամ Զահիրատ ըսուած տեղ մը, ուր նստէր և Անանիա արքեպիսկոպոս, յայնմդն Գրիգորիոսի, (եղբօր Վահրամայ և Վասակայ). Թէ զսա և Թէ զվանականքը Թրէ անցուց: Ձեռայ քննելով և իմանալով Վահրամայ ուր ըլլալը՝ մարդ ղրկեց որ զինքն ալ բռնեն. Վահրամ գէմ չկեցաւ. այլ իրեն կրօնաւորական ձևն և իր աննկուն սիրտն՝ կապեց եկողաց ձեռուըները. Թուլացուց Իոաո-

վանի խստասրտութիւնն ալ. որ Թոզ տուաւ ա-նոր՝ ապրելու այս նորատեսակ խաղաղագեաց սպառազինութեանը մէջ:

Սակայն անոր հին բարեկամն և երախտապարտ Խալիֆայն՝ շատ ալաչանք խաւրեց Վահրամայ՝ որ նորէն դառնայ գայ իր քով. Վահրամ շատ դէմ կեցաւ. սակայն յետոյ, կ'ըսեն, յանձն ա-ռաւ գալու՝ իր կրօնաւորական կերպարանքը և կարգքը. և այնպէս ալ ապրեցաւ մինչև 'ի մահը ալքունի դղեկին մէջ. և երբ մեռաւ՝ մեծ հանդի-սիւ և փառօք յուղարկաւորութիւն ըրին իրեն քրիստոնեայք և մահմետականք, և Թաղեցին 'ի Զահիրատ 'ի վանս Հայոց:

Այս դէպքս, Վահրամայ իշխանութիւնը Թո-ղուլ և կրօնաւորին եղաւ յամի 1137. յորմէ քիչ տարի վերջ գալով իր եղբօրորդին Գրիգորիս կաթողիկոս՝ այս կողմերս, հաւանական է որ դեռ կ'ապրեր Վահրամ. և այն տաեն տեղի ալ հա-ւանական կ'ըլլայ այս երկուքին տեսաւորութիւ-նը. երկու համարեանց, և մէկմէկ կերպով ծայ-րագոյն պատուաւոր Պահլաւունեաց. որոց մէկն իր քաղաքական և զինուորական ասպարէզը փա-ռօք չափած՝ կենայ ընթացքն ալ կնքելու մօտ էր կրօնաւորական քօղով. միւսն՝ 'ի մանկութենէ այն տուրը աքեմով մեծցած՝ իր երկար հայրապե-տութեան շրջանին կէսը հասեր էր. և դեռ նոր Սիոնի ժողովին մէջ՝ եկեղեցական փառաց բարձ-րագոյն կէսը ելած կըլնար ըսուիլ[1]:

1 Արաբագիր պատմիչք կ'ըսեն թէ Վահրամայ այցե-լութեան եկողն էր իր եղբայրն Գրիգոր, և թէ երկրորդ անգամ ալ եկաւ և հօն վախճանեցաւ յամի 1146: Յայտ է որ շփոթեն զմեռականն և զդէպս. նախ կաթողիկոս կամ պատրիարք կոչելով զնա, թէ և այս կերպով մը ստոյգ է, ըստ մեր նախ պատմածին (33), այլ 1146ի վախ-ճանելն անտեղի է. վասն զի արդէն իր յաջորդն՝ Անանիա

Զուզելով մեր նպատակէն շատ խոտորիլ, այլ և ոչ վերոյիշեալ ազգային պատմութեան անտեղի դէպքը և հետևանքը անյիշատակ թողուլ, համառօտիւ աւելցնեմ, որ Վահրամ ուրիշ ազգային յաջորդ մ՚ալ ունեցաւ. որովհետև Իտատվան սաստիկ խատութեամբ վարուելով քրիստոնէից դէմ, որ բազմաթիւ էին այն տեղն Եգիպտոս, Հայք, Վիրք և Աղուանք, և այլն, տեղւոյն եղաւ անոնց. և հազիւ փախչելով ձեռքերնէն՝ պատնեցաւ առ Խալիֆայն: Սա իշխանութիւնը վերցընելով անկէ՝ կեանքը շնորհեց. այլ երբ նորէն խլեցնել ակսաւ՝ սպանուեցաւ: Իսկ Խալիֆայն ալ թոյլ և անզգոյշ մարդ մ՚ըլլալով՝ իր անխոհեմութեան զոհ եղաւ, սպանուելով իր նոր վզուկէն՝ որ կոչուէր Ապպաս: Սա՝ սպանութեան յանցանքը ուրիշի վրայ ձգելով և ուրիշ անմեղներ ալ սպաննելով՝ Խալիֆային դեռատբոյս որդին յաջորդեցուց, և ինքն իր Նասր որդւով՝ ուզածին պէս կը կառավարէր: Ահա այն տեղն Հայ զօրավար

ալ սպանուած էր այն տեղն: Հաւանական և անտարակոյս է որ Գրիգոր արքեպիսկոպոս երբեմն երբեմն կուգար իր մեծապատիւ և մեծազօր եղբայրը տեսնելու, որուն մօտ ալ կը բնակէր, և անոր քով ալ մեռած ըլլայ: — Գրիգոր ցանկալի անուամբ՝ ժամանակակից եպիսկոպոսաց յաճախութիւնն՝ կը շփոթէ կամ տարակուսելի կ՚ընէ զպատմութիւնը. տարակուսի և քննութեան առիթ մ՚ալ կ՚աւելցընեն նոյն արաբագիր հեղինակք, նոր Գրիգոր եպիսկոպոս մ՚ալ մէջ բերելով, զոր չեն յիշեր պատմիչք մեր. և եր կ՚ըսեն քեռորդի Գրիգորիսի և Ներսիսի. զոր՝ թէ և իրեն պէս շատ երիտասարդ էր՝ Գրիգորիս իր կաթողիկոսութեան ակիզբը նուիրակ խաւրեց ՚ի Կ. Պոլիս, յերուսաղէմ և յԱղեքսանդրիա, շատ ընծաներով. յԱղեքսանդրիա Յակոբակաց հետ ժողովքի մտած և հաւանած է, կ՚ըսեն, և հօն էր յամի 1117, երբ ներկայ գտուեցաւ անոնց մեծ եպիսկոպոսի մը յուղարկաւորութեան: Շնորհալին իր քրոջ (Մարեմայ) Վահրամ անուամբ որդի մը կը յիշէ, որ ՚ի կէս ճի՛ դարու վախճանած էր, բայց ուրիշ գաւակներ ալ ունենալը կ՚իմացընէ. մեր գիտցածն այսչափ է:

մ՚ալ՝ զոր Դալայի կամ Դալաս Իսն-Ղալաա-էլ-մէլիք Էսսալիհ կոչեն պատմիչք, եկաւ զօրօք այս բռնաւորաց վրայ (1154), որք շուտով փախան գացին Ասորւոց երկիրը. այլ չկարցան ապրիլ՚ի վրէժխնդրութենէ. երկուքն ալ մեկմեկ կերպով սպանուեցան: Դալայի եղաւ վզրուկ և հազարապետ Եգիպտոսի, միանգամայն և աներ Խալիֆային. և բաւական ատեն խոհեմութեամբ կառավարեց, հաւասար հոգալով ղբրիստոնեայս և ըղմահմետականս, ինչուան վերջին Ֆաթիմեան Խալիֆային ատեն, որ էր Ադհէտ Լէաիննիլլահ (1160–1173): Ասոր հօրքոյրն նախանձելով կամ ոխութեամբ թոյն տուաւ՝ հայ վզրուկին. որ չմեռած՝ վրէժն առաւ և սպաննեց զդեղատուն. զոր ինքնին Խալիֆային իրեն մաներ էր (1161): Դալայեայ յաջորդեց իր որդին Ջաուիկ (գուցէ Ջարեհ), այլ ուրիշ բռնաւորէ մը զրկուեցաւ. որուն ալ յաջորդեց հռչակաւորն Եուսուֆ Սէլահէտտին, որ և տիրացաւ բովանդակ Եգիպտոսի և Ասորւոց:

Այս վերջին երկու Հայ վզրկաց հաւատով ալ հայ, այսինքն քրիստոնեայ ըլլալն, ստոյգ չէ մեզի. իսկ անոնց այսպիսի բարձր իշխանութեան հասնելուն պատճառն յայտ է, որ մեկ մը Խալիֆայից ակարութենին էր, մեկ մ՚ալ մերայնոց ճարտարութիւնն. և եթէ ասոնք ուրիշ նախանձորդներ չունենային՝ գուցէ աւելի ալ դիմանար Ֆաթիմեանց ցեղն յիշխանութեան [1]:

1 Ջարմանալի հանդիպութիւն մ՚է այս աշխարհքին (Եգիպտոսի) մահմետական խալիֆայից կամ իշխողաց՝ Հայազգի պաշտօնեայ և պաշտպաններ ունենալն. ինչպես մեր դարուս և մեր օրերս Ծանօթ եղան և են Հայազգի ճարտար առաջին Պաշտօնեայք տէրութեան, այս պատմութեանս միջոց ալ աւելի մեծ իշխանութեամբ՝ քանի մը Հայ վզրուկք եղած են, և ամբողջ Հայ զօրագունդ մը, որ նստէր ՚ի Գահիրէ ՚ի թագն Հիւսէյինիէ: Նաև յառաջ քան զվահրամ և զվասակ՝ 1080—1094ի միջոց կար Հայ

Այս եաքինա է անշուշտ կամ իր մէկ մերձաւոր ընկերն, այն ուրացեալ Հայ սպարապետն Եգիպտոսի, զոր Խաչակրաց պատմիչք Էլմելինք Էլ-Ափդել կամ Էմիրենոյ կը կոչեն, (գուցէ Էլ-Էրմանի)· որ յետ Խաչակրաց Երուսաղէմին տիրելու, բազմաթիւամբ 200,000 զօրաց՝ վազեց անոնց դէմ Յակաղոն, բայց մեծ կատորածով չալածուեցաւ և դարձաւ յԵգիպտոս: Խաչակրաց գործոյն ա-ռաջին հռչակաւոր երգիչ և մեծ բանաստեղծն Իտալացւոց՝ Թասսոյ, այս գեղեցիկ քիչ մը այլայլեալով, անմիջապէս անոնց Երուսաղէմի մտնելուն առեն՝ վերոյ հատած կ'ըսէ Հայ սպարապետը, որ հետաքրքին հեթ՝ Կլեմենդ (Կլեմէս) անուն՝ ալ՝ փոխեր էր Էմիրեն, (ժէ, լը)·

Guida un Armen la squadra, il qual...
Fù già Clemente, ora Emiren s'appella.

և կը գովէ մեծ հանճարը և քաջութիւնը·

È duce insieme e cavalier soprano
Per cor, per senno e per valor di mano.

Վզուկ մը Պէօդ—է—լ—ձէմալ անուամբ, մեծ իշխանութեամբ և զօրութեամբ, ծեր և տկար խալիֆայի մ'ատեն, ուսկից ապստամբեցաւ իր որդին և քաշուեցաւ յԱղեքսանդրիա. այլ Հայրն պաշարեց առաւ քաղաքը, և զորդին բանտը դրաւ, ուր և մեռաւ նա: Պփտեաց և Ասորւոց եկեղեցիներէն մէկ քանին՝ Հայոց տուաւ, թէ և իր ազգակիցներն ալ սաստիկ կ'աշխատցընէր: Ասոր հրամանաւ Աղեքսանդրիոյ պատրիարքն (Կիւրեղ) ժողով մը գումարեց յամին 1086, իր ազգին վէճերը դադրեցընելու համար. այս ժողովին ներկայ եղաւ և Գրիգոր արքեպիսկոպոս մը՝ քեռորդի Վկայասիրին, և Հայոց ու Պփտեաց մէջ եղած հակառակութիւնը դադրեցուցին: Նոյն տարին Հայ Վզուկն պատուիրեց քրիստոնէից սեւ գօսկալ և իրենց գլխահարկին չափը սահմանեց: Պէտր—իւլ—ձէմալի յաջորդեց իր որդին Շահնշահ որ և Էլ-Խաէֆ, և նոյնպէս տիրաբար վարեր, և փոխանակ անդրանկան խալիֆային՝ ուրիշ մէկ որդին իշխանացուց: Բայց այս Հայ Վզուկքս կրօնքնին փոխեր էին:

և ամենէն մեծ և յետին ախոյեան զնա կը դնէ Խաչակրաց: Միայն բանաստեղծական հնարք է ըսելն, թէ յետ բանակին ջարդուելուն՝ յարձակեցաւ Խաչակրաց Դիւցազնին՝ Կոփրեասոսի վրայ, վիրաւորեց անոր ձախ ձեռքը, այլ ինքն ալ անոր աջէն զարնուած մեռաւ: Իրաւ է որ այն պատերազմով կը լմննայ Երգողին ալ Երգելոյն ալ մեծ գործն. Կոփրեասոս երկրորդ անգամ յաղթանակաւ կը մտնէ Երուսաղէմ, և

Զեւ մերկացեալ զարիւնազանգ վերարկուն՝
Գայ՛ի տաճարն, այլովքն հանդերձ, Պետ զօրուն.
Կախէ անդէն ըզզէնս, և զուխան հոգեւանդ՝
Համբուրելով զմեծ Գերեզմանն՝ կընքէ անդ:

Ահա տողերով կնքէ սիրաբաղդ բանաստեղծն իր վիպասանութիւնը: Իսկ պատմութիւնն կ՛աւանդէ հաւատափոխ Հայ սպարապետին համար, որ կոտրածէն ապրելով Յակաղն, երբ տեսաւ անոր աշտարակներէն իր բանակին բեկորները և քրիստոնէից յաղթական դրօշները՝ լալով կանչած ըլլայ. « Ա՛յսպէս ուրեմն մեծ է եղեր Խաչեցեալն « զօրութիւնն՝ քան զՄահմետին »: Ասոր նման պատմիչ մ՛ալ կ՛աւելցնէ, թէ մահմետական բանաստեղծ մը հետեւելով այս բանիս վրայ, գրեց այս տողերս քերդողաբար առ Ռայմոնտ Սէն-Ժիլ (Անձիլ՝ մեր Պատմչաց), զոր համարեր դևնաւոր յաղթող. « Մեսիայի սրոնէն յաղթեցիր, ով անոր « մտան Սէնժիլ. աշխարհք Ափտալայ կոտորուա- « ծին նմանը տեսած չէր »: Ափտալ խմանալով զայս՝ սպաննել կու տայ քերդողը: Իսկ ինքն պատերազմին դաշտը և քաղաքը Թողլով՝ մեացորդ փախստականօք կը մտնէ՛ի նաւ և կը դառնայ Յեդիպտոս:

# ԺԴ.

*Կրօնական բանագնացութիւն ընդ Հռովմայ Եկեղեցւոյն. — Որոն Ցրիգիւնկայ ժամանակագիր. — Ս. Բեռնարդոս. նամանուրթիւն ընդ Շնորհալւոյ. — Հայկական զուգադիպութիւնք. — Վանք Հայոց ՚ի Սաղոնիա Ջուրս Հռովմայ. — Խնդիրք Հայոց։*

Քաղաքական շարժմունք և շփոթք դադրեալք չունէին, եկեղեցական խնդիրք ալ չէին պակսիր, մեկ մ՚ի Յունաց կողմանէ մեկ մ՚ի Լատինաց. հարկ սեպեցին մեր հայրապետքն՝ առաջին յաջմար գտած միջոցին նուիրակութիւն մը խաւրել յարևմուտս, առ Ս. Գահանայապետն Հռովմայ. ղրկեցին՝ որպէս երևի՝ ՚ի գարնան 1144 տարւոյ, թէ և շատ ուշ հասան նուիրակքն իրենց գիտած տեղը։ Սիոնի և Անտիոքայ ժողովքներէն ալ առաջ թղթակցութիւն և բանագնացութիւն եղած ըլլալն՝ Հռովմայ և Հայոց աթոռոց մէջ վկայուած է, թէ. և վկայական գրուածք և թուղթքն չէն գտնուիր հիմայ. ՚ի Սիս գրուած կաթողիկոսաց գաւազանագրութեան մէջ (յորմէ կ՚առնու և Մխիթար Ապարանեցի ՚ի վերջ ԺԴ գարու) կ՚ըսուի, թէ. « Առ սա (Գրիգորիս)՝ հայրապետն « Հռոմայ գրեաց թուղթ, և խնդրեաց կատարել « զաջն Ծննդեանն և Մկրտութեանն՝ ընդ մեծ « եկեղեցին Հռոմայ և ամենայն սիներովք. և ար-

« կանել ջուր ՚ի սուրբ խորհուրդն : Եւ յետ սորա « Իննովկենտիոս Պապն զնոյնս գրեաց և եցոյց « հարկաւոր » : Իննովկենտիոսի նախորդն է Ո- նորիոս Բ Պապ , որ քահանայապետեաց յամս 1124–30. ըսել է որ այս միջոցին առաջին անգամ Թղթակցութիւն եղած է այս կրօնական և ծխա- կան խնդրոյ վրայ , զոր առաջ և եւս ամեն Հռով- մայ հայրապետք ալ առաջարկած են Հայոց. յե- տոյ զնոյն կրկներ է Իննովկենտիոս Բ (1130–1143) հաւանօրէն իր նախայիշեալ Աղեքսիկ նուիրակին ձեռօք , յամին 1141 , ինչպէս նշանակէ մեծանուն վարդապետն Եսայի Նչեցի. « Նոկենդիոս Պապն « Հռոմայ , որ էր ՚ի հինգ հարիւր և չինաւուն « Թուին Հայոց ». և որ աւելի փափագելին էր մեզի , կ՚աւելցընէ Եսայի Թէ իր առեն՝ յետ իբր 160 կամ քիչ մ՚աւելի ամաց՝ « ունիմք այսօր « ՚ի միջի մերում՝ գխնդիրն (Պապին) հանգերձ « Պատասխանական բանիւ », Գրիգորիսի և Ներ- սիսի. զոր մեք հիմայ գրողքս՝ գժբաղդաբար ոչ ունիմք : Այլ որչափ Եսայեայ նշանակածէն գու- շակուի՝ այս պատասխանին յառաջ գրուած է քան զնուիրակութիւնն Հայոց , և իմաստն ալ Թուի բացատրութիւն մը Հայոց եկեղեցւոյն սո- վորութեան , Թէ ինչո՞ւ այն երկու ծոներըՙ Ծնընդ- եան Քրիստոսի և Մկրտութեան՝ մէկ օր կը տօ- նեն. նոյնպէս ալ Բաժակին խնդիրը , որուն փո- փոխութիւն ընելն ալ՝ այնպիսի ժամանակ՝ յո- րում Հայք զանազան սիրատածաց իշխանութե- տակ և մէկմէկէ հեռու՝ ոչ միայն չէին կրնար ժո- ղովիլ մէկ տեղ ՚ի խորհուրդ , այլ Թերևս գրով և նուիրակով ալ գժար էր բան հասկըցընել , միա- բանութիւնն՝ ընդարձակելու տեղ՝ գուցէ նեղքին անմիաբանութիւն և կռիւ կրնար պատճառել , ինչպէս քիչ մ՚առաջ Աղեքսանդրեցոց , և յետոյ Հաղբատեցոց գործեր և գրեր ալ վկայեն : Այս

բանիս համար էր որ Մեծ Վկայասէրն ալ նոյն Թելադրութիւնն ընդունելով իր անուանակոչէն, Գր. Է Պապէն, չէր կըրցած նոր փոփոխութիւն մ՚ընել: Ցոյնք ալ, ուրիշ խնդիրներէ զատ, այս բաներուս վրայ կը վիճէին ընդ Հայոց և կը սախպէին. բայց որովհետև չատ աւելի հակառակութեամբ և ուրիշ պատճառներով, և իրենք ալ Հայոց խոչընդոտին սովորութիւններ և ծէսեր ունէին, ոչ միայն չէին կրնար միաբանիլ, այլ և իրարու մերձաւորութեան պատճառաւ՝ մէջերնին վէճն անպակաս էր:

Այս բանիս ալ ճար մ՚ընելու, և Հռովմայ բարձրագոյն աթոռէն վկայութիւն և հեղինակութիւն մ՚առնելու յոյս ալ կ՚երևի Հայոց նուիրակութեան մէջ, գէթ ըստ բանից մեկ հատիկ Լատին ժամանակագիր և ականատես վկային այս դէպքիս. որ է Ոթոն՝ Պաւիերայի Ֆրիզինկէն քաղաքին արքեպիսկոպոսն. արժանապատիւ անձն թէ վարուք, թէ պատուով և թէ գիտութեամբ, որոց համար Մեծ մականուանի. Աւստրիոյ տոնէլի սուրբ իշխանի մը (Լուդովիկոսի) որդի, ինքն ալ Ոթոն՝ Երանելի անուանեալ, և բռնի (Կիստերսեանց) վանքէն հանուելով եպիսկոպոս ձեռնադրուած (1138 + 1158): Իր ժամանակակցաց մէջ ամենէն աղէկ գրողն ալ կը սեպուի. գլխաւոր գործուածն է ժամանակագրութիւնն, սկսեալ՝ ի հինն դարուց՝ մինչև իր օրերը. և գրեթէ այս մեր կարևոր դիպուածին յիշատակութեամբ կ՚աւարտէ պատմութիւնը, այն ալ կիսկատար յիշատակութիւն մ՚է. վասն զի նուիրակութեան հետևանքն չի յիշուիր:

Արդ ըստ այսմ ականատես վկայի՝ նուիրակքն Հայոց, որոց մէջ յիշէ եպիսկոպոս մը՝ առանց անուան և տեղւոյ, (որով գուցե իր յիշած Գաբուլացւոց Ասորի եպիսկոպոսէն, զոր ոմանք նոյն

Հայը կը կարծեն), յետ սարի ու կէս ձամբոր-
գութեան եկան հասան ՚ի Վիդերպոյ քաղաք ի-
տալիոյ, ուր գտուէր այն սուրբն Պապն. ըսել է
յաշնայնի 1145 տարւոյն: Այսչափ երկար ուղե-
գնացութեան պատճառը չըսեր, և զարմանալի է.
եթէ Նուիրակքն ուղէին ծովով երթալ՝ Թուխ
Թէ կըրնային Անտիոք և ՚ի Տրիպօլիս կամ Այք-
քեա անցնիլ, կամ ՚ի Նաւահանգիստ Տարսոնի,
և ոչ այնքան ուշ հասնիլ Իտալիա. այլ Թուխ
Թէ ցամաքային ճամբայ բռնած են նախ, գուցէ
արևելեան Հայ եպիսկոպոսաց հետ տեսնուելու
համար. և Թերևս իրենցմէ վերջը ԺԹ և ԺԹ դա-
րուն Լատին քարոզչաց և Նուիրակաց նման՝ հիւ-
սիսային երկար ճամբան ընտրեր են, Կովկասէն
և Վոլգայի եզերքէն անցնելով, մտնելով Սեր-
պիա, ՚ի Թագաւորութիւնս քրիստոնէից, և ան-
կից առաջ գալով մինչև ՚ի Հռոմ և ՚ի Վիդերպոյ:
Եթէ արդարև առջի տարւոյն գարնան ճամբայ
ելած էին՝ կըրնային գիտնալ Ք Իննովիկենտեայ
մահը (23 սեպտ. 1143), և կաթողիկոսին Թուղթն
ուղղած կ՚ըլլայ առ յաջորդ նորա, որ է Սեբե-
նիոս Գ, աշակերտ գերահռչակ Ս. Բեռնարդոսի,
որ այն տարին արևմտեան եկեղեցւոյ սրեգային
էր ինչպէս Շնորհալին ալ Հայոց՝ յարևելս. և
գուցէ չափազանցութիւն չըլլայ ըսել, Թէ այն
տարին եկեղեցւոյ մէջ տասնք էին երկու ամենէն
նշանաւոր անձինք, վարդապետութեամբ և սըր-
բութեամբ:

Եթէ պատմութիւննիս պարզ անպատրուակ
պատմութիւն չըլլար՝ կը փափագէի որ Հայոց ա-
Թոռէն եկած Եպիսկոպոս նուիրակն ինքնին Ս.
Ներսէս ըլլար. այն տարին անհրաժեշտ տեսաւո-
րութիւն և գրկակցութիւն մ՚ընել կու տայի այս
երկու հոգևոր հարազատաց, կամ հոգեծին ջուխ-
տակաց, այն աննման և իրերանման մաքրակեն-

ցոյլ ընդհազարդ և մեղրածորան վարդապետաց։ Այլ դարձեալ ասոնց այս գերագոյն նամանակցութիւնը և մերձաւորութիւնը՝ վիպասանութեան փափագածէն և պատմութեան ժխտածէն վեր կը դասեմ. և գրեթէ բռնադատիչ և անանձնելի հարկ կը զգամ՝ հօս ընդհատելով մերոց նուիրակութիւնը՝ ներկայացընել պատմութեանս մէջ այս մեծ կերպարանքը, Ս. Բեռնարդոսը. և այս ոչ այնքան իր անհատասարելի մեծութեանն համար, որքան նուրբ նամանութեան մը ընդ Ներսէսի Շնորհալւոյ, և խորհրդական յարաբերութեան մը ընդ Հայութեան. որպէս թէ Հայոց հովանաւոր հրեշտակն՝ ասոր առաջը երբեմն իր թևոց տակ առած ըլլայ։ Ընթերցողս ալ, յուսամ, կ'արդարացընէ ըսածս՝ զարմանալի հանդիպութիւնները աեսնելով. և ով ալ որ ընդհանուր եկեղեցւոյ պատմութիւն գիտէ՝ չի տարակուսիր զբեռնարդոս այն դարուն մէջ արևմտեան եկեղեցւոյն հոգի տեսնել, շնորհալի՝ արևելեան եկեղեցւոյ հրաշալի չունչ։ Ասոնք ածային նախախնամութեան զարմանահրաշ գործերէն մէկն է ասոնց նորոգութիւնակ զուգութիւնն. և պարագ է ճանչնալ և օրհնել զգործ Աստուծոյ։

Նոյն իսկ Բեռնարդոսի ծննդեան տեղն, Փոնտենկաց Ֆոնդէն գեղն Տիժոնի (Fontaine-les-Dijons) իրեն պաշտպան ունէր և ունի Ս. Աբբոհանու[1] մը, զոր աւանդութիւն տեղւոյն և ժամագիրք եկեղեցւոյն՝ ճանչնան Հայազգի եպիսկոպոս մը. և կ'ըսուի թէ ծնողքն Սարմատաց կամ Վրաց կողմերէն էին՝ հեթանոսութեան ժամանակ, և

1 Արաբացի և եթովպացի լեզուաւ թարգմանած Ս. Հարց հին հաւաքածոյ գրոց մէջ գտուին և բանք Ս. Աբբա Հայ հայրապետի կամ եպիսկոպոսի մը, և Գարէն առաջ. այլ բուն ժամանակն, կամ վերոյիշեալ նահատակին հետ նոյն ըլլալն և չըլլալն՝ յայտնի չէ։

հալածանքէ փախչելով եկան ՚ի Հայաստան, բնակեցան յԱրտամէտ (Վանայ մօտ?). հօն ծնաւ Սուրբն, և Սահլատաուն (Սահնատաուն, Սահնոյ ձոր?) քաղաքի եպիսկոպոսին օգնական և յաջորդ եղաւ. յետոյ իր հայրենի երկիրը գնաց քարոզելու, ուր և նահատակեցաւ: Ի՞նչ կերպով և ե՞րբ իր նշխարքն և պաշտօնն փոխագրեցան ՚ի Ֆոնդէն Փառանկաց, յայտնի չէ: Ծանօթն այս է որ Բեռնարդոսի մայրն բարեպաշտ սկիզնին Ալիծա՝ շատ ջերմեռանդ էր իր եկեղեցւոյ Սրբոյն, ուր սակաւ նուէրքներ կ'ընծայէր, և որոյ բարեխոսութեան պատուղ համարէր իր Բեռնարդն ալ Նուարդն ալ, (զի այսպէս կ'անուանէր իր կրտսեր որդեակն, Nivarde), ուրիշ զաւկներն ալ. որք և ամենքն իրեն պէս յետոյ հրաժարելով յաշխարհէ կրօնաւորեցան. մինչպէս նաև իրենց քոյրն (Հումբլինա) նման մեր Ներսեսի քրոջ (Մարիամու), և ամենքն ալ ՚ի գաստ Սրբոյ յիշատակուին: Բեռնարդ 10 տարի յառաջ քան զՆերսէս եկաւ յաշխարհ (1091) և 20 տարի անկէ առաջ վերափոխեցաւ (1153):

Գրիգորիսի կաթողիկոսութեան տարին (1113) Բեռնարդոս ալ մտաւ Ջրհոր ըսուած վանքը (Cîteaux) կամ Կիստերսեան Բենեդիկտեանց ուխտը, և երկու տարիէն հաշիւ 25 տարեկան՝ նոր վանքի մը շինող և հայր եղաւ, Պայծառաձոր կոչուած (Clairvaux), որ արդարև իր բնակութեամբն և կարգերովն մեծապէս պայծառացաւ և հռչակեցաւ: Երբ Ի Ինոսկենտեայ քահանայապետութեան սկիզբը հերձուած ծագեցաւ Անակլետի հակաթոռութեամբ և ժողով մ'եղաւ ՚ի Բիզայ քաղաքի, Ս. Բեռնարդոս երեք չորս տարի աշխատեցաւ քարոզելով և յորդորելով աշխարհէ աշխարհ քաղքէ քաղաք, և շատերը՝ թէ առանձնական մարդիկ թէ ամբողջ հասարա-

կութիւններ և պետութիւններ՝ հաւանեցուց օ-
րինաւոր Պապին. իր սրտաբուղխ և հոգեբուղխ
խօսքին ոչ ոք կըրնար ընդդիմանալ կամ չյաղ-
թուիլ. վասն զի էր միանգամայն քաղցր և հզօր,
գիտուն և շահիչ, կրակոտ և ոչ այրող, և թէ
այրէր՝ զմոլութիւնս և զմոլորութիւնս, այլ ոչ
զանձինս, որով շահէր և զմոլորեալս. յորոց աշ-
խարհահռչակ եղած է գիպռուածն Աբելարի, ե-
լոյիսայ սիրահարին, որոց երկրաւոր սէրը յԱս-
տուած գարձընելով անմահացուց. ինչպես Գրի-
գորիս և Ներսէս Ասորւոց և Հայոց վէճերը և
խնդիրները կը հանդարտեցընէին բանիւ և գրով:
Արևմտեան վէճերը հանդարտեցնէն ետև՝ Բեռնար-
դոս գնաց ի Հռոմ (1140) յուխտ. ուր Ինոսվ
կենսից Պապն իրեն յանձնեց հին վանք մը Բե-
նեդիկտեանց, կարգաւորելու և շէնցընելու: Այս
վանքս քաղքին սովորական շրջանակէն գուրս է,
և Ս. Պօղոս առաքելոյ նահատակութեան տեղը,
որ ի հնուց ի վեր Սալուեան Ջուրք կ'ըսուի [1],
նաև Երեք-Աղբերք, որք ըստ աւանդութեան քա-
րեպաշտից՝ բղխած են Ս. Պօղոսի գլխոյն կտրուե-
լէն ետքը իրեք անգամ թաւալած կամ ցատքած
տեղերը. առջի գարերէն սկսեալ քրիստոնեայք
այն կողմերը շատ մեծ ու փոքր եկեղեցիներ և յե-
ատոյ վանքեր ալ շիներ էին, որոցմէ մէկն ալ կար-
ծուի ըլլալ Հայոց վանք՝ Ռենատոսի անուամբ յի-
շուած յ'Է գարու [2]: Ս. Բեռնարդոսի տրուած

1 Ad Acquas Saluias.

2 Renatus. այս վանաց տեղն յայտնի չէ այս կողմս ըլ-
լալն. վանքը յիշէ Ս. Գրիգոր Մեծն ի վերջ Զ դարու.
իսկ մեր յիշեալ տառն (յամի 649) թուլատ անուամբ վա-
նաց երեցն՝ մէկ մը Ա. Աստուածածնին և Ս. Անդրեաս
վանաց հայր կոչուի, մէկ մ'ալ Ռենատոսի վանաց Հայոց
կամ Հայուհեաց. վասն զի գրչագիր օրինակաց մէջ թէ
Armenorum գրուած կայ և թէ Armenissarum. կայ և Arme-
nistarum գրուած, որով հաւանական կ'ըլլայ առաջինն, այս-
ինքն միանձանց և ոչ միանձնուհեաց:

վանքն՝ յանուն իր եկեղեցւոյն՝ կոչուէր և կոչուի Ս. Անաստաս[1] և Ս. Վինգենտ, մօտ յԵրիս Աղբերան. որոց մօտիկ է և Ս. Աստուածածնի եկեղեցեակ մ՚ալ. ուր օր մը Ս. Բեռնարդոս պատարագելու առեն տեսիլք մը տեսաւ, իբրու թէ լուսեղէն սանդուղ մը կար տեղանէն ինչուան յերկինս, որով քաւեալ ննջեցելոց հոգիք կը վերանային. և այնու յիշատակաւ մինչև ցայժմ կոչի տեղին (Scala Cœli) Սանդուղք Երկնից: Ս. Բեռնարդոս այն վանքը քիչ մը կարգաւորելէն ետև շուտով գարձաւ, և իրեն տեղ խաբեց իր համանուն և որբակրօն աշակերտը՝ Բեռնարդոս Բիզացին, որ ըստ ոչ կարծեաց վարդապետին՝ չետ մահուան Ինոմվկենտեայ և իր երկու կարձակեաց յաջորդաց (Կելեստինոս Բ և Լուկիոս Բ) Պապ ընտրեցաւ (27 փետր. 1145) և կոչեցաւ Եւգենիոս Գ. առ որ իր սուրբ և մեծ վարդապետին խրատական գիրք մը գրեց, անոր ծայրագոյն պաշտօնը զգուշութեամբ կատարել տալու համար: Ահա երկու (Բեռնարդոս) վանահարց Ս. Անաստաս գտուած առեն՝ արդեօք Հայք ալ վանք ունէին հօն, և արդեօք Եւգենիոս նախ հօն տեսած էր այս մեր արևելեան ազդայինքը՝ իրենց հայրենի լեզուաւ և ծխիւ՝ իրեն միանձանց հետ երբեմն սլօթակցելու Ս. Պօղոսի ուխտատեղիները: — Յայտնին այս է, որ մեր օրերս քիչ տարի առաջ (1869) յիշեալ Ս. Անաստաս եկեղեցւոյն յատակը նորոգել պէտք եղաւ, խոնաւութիւնը ցամքեցընելու համար, և ատիճանները քակելու առեն՝ տակէն ելած քարերուն մէջ գտուեցան երկուք մ՚ալ հայերէն

1 Այս է Ս. Անաստաս Պարսիկն զոր կը ծանեմք, որ և նահատակեցաւ յամի 628, և քիչ վերջը Հերակլ կայսր անոր գլուխը և նշխարաց մաս մը խաբեց՝ ի Հռոմ, թերևս՝ ի ձեռն իր նիզակակից Հայոց. և այն առեն շինուեցաւ հօն եկեղեցին յանուն սրբոյն:

արձանագրութեամբ, մեկն ՉԺԶ (1267) թուա-
կանաւ, միւսն գեղեցիկ խաչվէմ մը՝ ՉԾԴ (1305)
թուականաւ և յատակ արձանագրութեամբ, 'ի
յիշատակ հանգուցեալ Վարդան Ճգնողի մը, ո-
րուն միաբանքն ալ կը յիշուին հօն՝ 'ի Գլխապան
Վանս (Հայոց). շատ տարիներով և դարով առաջ
հնագոյն հայ խաչ արձան մ'ալ դտուեր էր ՈՂԵ
(1246) թուականաւ, որ հիմայ Հռոմայ Լատերա-
նեան Թանգարանը գրուած է. անկէ քանի մը
տարի առաջ ալ գրուած գիրք կայ 'ի Հռոմ (1240),
յանուն Սահմանոսի քահանայի, որ կը յիշուի
նաև ՈՂԵ և ՉԺԶ թուոց արձանաց մէջ ալ. և
Ս. Բեռնարդոսի հօն այցելութենէն միայն դար
մը ետև ըլլալով, միանգամայն և հնագոյն քան
զամենայն եկեղեցեաց և վանաց Հայոց Իտալիա,
կըրնայ կարծուիլ՝ թէ երկու Բեռնարդոսից հօս
գտուած սահն ալ ըլլային իրենց դրակից և ուխ-
տակից Հայ միաձուլք. և յառաջ քան զնուի-
րակութիւն Գրիգորիսեանց՝ Պայծառաձորոյ հիմ-
նադիրն և Անտառատայ աբբայն՝ իբրև բոլոր Հա-
յութեան նուիրակ տեսեր էին մեր հեռաշխարհիկ
ուխտաւորները:

Դառնանք հիմայ մեր բուն պատմութեան և
խնդրոյն: Նուիրակքն Հայոց անշուշտ զՊասն
կարծէին գտնել 'ի Հռովմ, բայց այս տեղ քաղա-
քական շփոթութեանց կասկած ըլլալով՝ նորընծայ Պասն՝ որ շտապաւ ընտրուած էր, շտապաւ-
մ'ալ և լռելեայն հեռացաւ անկէ, ուրիշ վանքի
մը մէջ ձեռնադրութիւն և հովուապետական գա-
ւազանն առաւ, ու գնաց նստաւ 'ի Վիտերպոյ,
Հռովմայ և Տոսկանայի սահմանաց միջոց հին քա-
ղաքը: Հօս մեր նուիրակներն գտան զՍ. Գահա-
նայապետը, և կատարեցին իրենց յանձնուածը:
Բերած և տարած թուղթերնին հիմայ չգտուե-
լով՝ ստոյգ չմնացուիր թէ գլխաւորապէս ինչ բա-

նի համար էր, և ինչ հետևանք ունեցաւ: Ժամա-
նակագիրը պատմիչն Ոթոն՝ որ ներկայ ալ էր, և
տեսաւ և խօսեցաւ Նուիրակաց հետ, որոշ և քա-
ւական տեղեկութիւն մը չիտալ. մանաւանդ թէ
շփոթութիւն կայ ըսածին մէջ, ինչպէս նաև մե-
ծաբանութիւն, որ կամ Նուիրակաց կողմէն մը-
սած է, կամ գրչագրաց այլայլագրութենէն:
Վասն զի նախ Կաթոլիկոսին համար կ'ըսէ թէ
« այսպէս կոչուի՝ վասն զի անթիւ, այսինքն հա-
« զարէն աւելի (!) եպիսկոպոս ունի իր իշխանու-
« թեան տակ »: Իսկ Նուիրակութեան դլխաւոր
պատճառն՝ անոնցմէ լսածին համեմատ՝ էր Յու-
նաց և Հայոց վէճն, մանաւանդ պատարագի վրա-
յօք. Յոյնք՝ Հայոց անապակ բաժակը կը մեղա-
դրէին, Հայք՝ անոնց խմորուն հացը [1]: Երկրորդ
վիճի առիթն էր Ծննդեան և Մկրտութեան տօնից
միութիւնն կամ զատութիւնն. ասոնցմէ դուրս
ուրիշ խնդիրներ ալ ունէին, կ'ըսէ. և եկեր էին
Հռոմայ Քահանայապետը դատաւոր բռնելով
իրմէ հրահանգ մ'առնուլ պատարագի արարո-
ղութեանց վրայ: Իսկ Ս. Պատն քաղցրութեամբ
լսելով անոնց, փոխանակ վարդապետութեան՝ ը-
սաւ, որ իրենք իրենցմէ գիտեն Լատինաց թէ թիւ
և թէ ձայնաւոր հանդիսական պատարագ մատու-
ցանելը, և իմանան ծիսից տարբերութիւնը կամ
նմանութիւնը: Տօնական օր մ'ալ (Ս. Պետրոսի
եկեղեցւոյն նաւակատեաց, (յ'18 Նոյեմբերի) ինքն
Պատն կը պատարագէր. մեր Նուիրակքն ալ ուշի
ուշով կը դիտէին. մէջերնէն եպիսկոպոս մը յան-
կարծ տեսաւ Պատին գլխուն վերև արևու պէս
պայծառ լոյս մը, մէջն ալ երկու աղաւնի որ կ'ել-

1 Ոթոն, կամ իր հիմայ հրատարակուած գործն յայտնի
սխալ կ'ըսէ թէ Հայք ալ Յունաց պէս խմորուն հացով
կը պատարագէին:

նէին կ'ինչնէին: Զորս դին գարձաւ զննելու թէ արդեօք պատուհանէ մը ծագած էր լոյս, կամ աղաւնիքն եկած, սակայն յարմար բան մը չտեսնելով համոզուեցաւ որ հրաշալի երևոյթ մ'էր, և նշան ուղղութեան Հռովմէական եկեղեցւոյ. զոր և աներկբայաբար ընդունելով ամենուն պատմեց տեսածը, և հանդիսական ժողովն մէջ ալ ըզնոյն վկայեց: Իսկ Ս. Պաւլն ալնուական խոնարհամտութեամբ ըսաւ, թէ տեսածն իր արժանաւորութեանը համար չէր, այլ տեսանողին հաւատքին, որով Աստուած ուզեր է յայտնել ճշմարտութիւնը, որպէս զի ինքնին ընտրեն Նուիրակքն ինչ որ պէտք է ընդունիլ և խմացընել զիրենք ըզրկողներուն:

Երկրորդ պատճառ կամ խնդիր Նուիրակութեան՝ տարօրինակ կամ նորալուր բան մը կ'ատենդէ ՈՒթոն. յիշեալ եպիսկոպոսն՝ որ Նուիրակաց գլուխ կը յայտնուի, պատմեց, որ իրենց Հայոց տահմանակից հեթանոս ազգ մը կար, որոց աղաւնիներն հոտած և գաղջելի կը ծնանէին, և ինչուան որ Հայոց մկրտել տային՝ էին ազատիր այդ պատուհասէն. բայց երբ մեծնային՝ իրենց ծնողաց ծուռ ալանդով կ'ապրէին: Հիմայ Հայք խիղճ ընելով՝ թէ արդեօք օրինաւո՞ր է մկրտելզանոնք՝ որ հետևանօրէն յետոյ հեթանոսաբար պիտի ապրին, և չկարենալով ինքնին որոշել այս յիրաւի ծանր խնդիրը՝ Հռովմայ աթոռոյն վճռին կը սպասէին: Արդարև ոչ միայն եկեղեցական՝ այլ և պատմական հետաքննութեան արժանի բան մ'է գիտնալն՝ թէ ինչ ժողովուրդ էր այդ տահմանակից Հայոց, արդեօք Տաւրոսի խորշերուն մէջ մնացած հեթանոս յունահառն ցեղ մը, թէ՝ (որ աւելի հաւանական կ'երևի) Թուրքաց ցեղ մը, ինչպես կըընայն ըլլալ Իկոնիոնի Սուլտանին հպատակներէն ոմանք, որոց վախէն Հայք էին

համարձակեր մերժել առնոց խնդիրը, և գարշահոտ ծնունգները մկրտելով անուշահոտ կ'ընէին: Շնորհալին իր Ընդհանրականին մէջ կը խօսի այս թուրքաց երախայից մկրտութեան վրայօք, ինչպէս պիտի յիշենք իր տեղը: Պատմիչն ասկէ առաջ բան չըսեր. և ոչ ալ քահանայապետին վճիռը այս բանիս վրայօք. որ հիմայ ալ կըմնայ առուածաբանական խնդիր կամ դէպք (casus) մ'ըլլալ:

Աւելի փափաքելինք որ առջի խնդրոյն վրայօք եղած և որոշուածն յիշած ըլլար Ոթոն. որ թուի թէ ինչուան վերջը ներկայ չգտուելով նուիրակաց հօն եղած ատեն, գործոյն վերջը չէ տեսած և լսած. այլ սկիզբը կ'ըսէ, թէ Նուիրակքն՝ Հայոց եկեղեցւոյն Ուխտին կողմանէ ամենայն հպատակութիւն մատուցին Ս. Պատրին: Պատմըչին արժանաւոր հաւատարմութեանը վրայ տարակոյս չունիմ, այլ Նուիրակքն անծանօթ ըլլալով կըրնան աւելի պակաս տարակուսելի ըլլալ իրենց կողմանէ մէջ բերուածները. Հայոց հպատակութիւնը, եպիսկոպոսները, ամենակերպ հպատակութիւնը, և եպիսկոպոսին տեսիլքը. միով բանիւ, ըզՅոյնս յաղթահարելու կամ լռեցընելու համար՝ Լատինաց աւելի բան մը չնորհած կ'երևին, որուն յայտնի նշան չիգտուիր [1]: Իսկ Ս. Քահանայապե-

1 Թէ ոչ այս դէպքս՝ նոյն ժամանակի ուրիշ դէպք մ'ալ կասկած մը կու տան Հայոց վրայ՝ հնարագիտութեան, թէ և աւելի յօտարաց հնարեալ թուին: Նոյն ժամանակիրն Ոթոն կը պատմէ իր ուրիշ գրուածի մը մէջ (Պատմութիւն գործոց Ս. Փրեսրիկոսի կայսեր), որ գրեթէ ճիշդ այս Հայոց նուիրակութեանս տարիները, յորում և խաչակիր զօրք հանելու հրաւէրք եղան, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը վերջը, մարգարէական գրուածմը հրատարակեցաւ այն ատեն տիրող փառնկաց կուռվիկ էր Թագաւորին վրայօք. իբր թէ Կիւրոսի պէս պիտի տիրե Բաբելոնի և արևելից. իր վարդապետն գրօշներն պիտի թաղէին ինչուան Հերակլեայ գործոց տեղերը, և

աին կոչմանէ՝ Իննովկենտիոսի Ե և Գրիգորի էի գըրածին համեմատ կոնդակ մ՝ալ տրուիլն՝ վկայուած է այս Թուականէս երկու դար ետև Մխիթար կաթողիկոսի առեն եղած Սոյ ժողովէն. որոյ ըսածն՝ Թէ բաժակի և տօնից [1] խնդրոյն վրայօք սուրբ Հարց վկայութիւնները « գացես 'ի « Թուղթն Եւգինէոսի Պապին Հռովմայ, զոր գը« րեալ է առ Տէր Գրիգորիս կաթողիկոս՝ եղբայր « մեծին Ներսիսի Կլայեցւոյ », կ'իմացընէ ալ Թէ ոճով և երկար գրուած Թուղթ էր, և Թերևս անկէ առեր էր Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսն իր առ Հեթում Ե գրածները: Այս Թուղթէն՝ և ընծաներէն զատ, ինչպէս էին գաւազան և քօղ կամ գլխի Թագ առ կաթողիկոսն, անշուշտ և առ գործակից հարազատն Ներսէս [2], շատ հաւանա-

պիտի բացուէր իրեն դուռն Բ... և ուրիշ խրթին և անիմանալի խօսքեր. զոր մեծ յարգութեամբ կ'ընդունէին փառանկք նաև բարեպաշտ անձինք. և ոմանք կարծէին Թէ Սիբիլլական գրոց մէջ գտուած է, ոմանք ալ Թէ Աստուած յայտներ է Հայու մը. Cuidam Armenio divinitus revelatum affirmaretur: Մեր մէջ Ագաթրոնի, Մեթոտիոսի և Մեծին Ներսիսի անուամբ գուշակական գրուածք կան, աւելի աշխարհիս վերջի ժամանակին վրայօք. արդեօք աստոնց մէկն է Ոմանի յիշած յայտնութիւնն առ Հայն, Թէ բոլորովին այլ ինչ, աւելորդ համարիմ քննել, անստոյգ և անպիտան համարելով:

1 Կըրնայ ըլլալ որ զօրութեամբ այս կոնդակին Գրիգորիս ուզած ըլլայ տօնից աւուրց յարմարութիւն մ'ընել, գոնէ Աւետեաց տօնը որոշակի և հանդիսիւ տօնել. և անոր համար յօրինած ըլլայ խորհուրդն անճառ շարականը:

2 Լամբրոնացին Ս. Ներսիսի վարուց վիպասանութեան մէջ կ'ըսէ,

« Մեծն ի Հըռոմ լուրըն հասեալ
Առ հայրապետն որ անդ նըստեալ.
Նա գաւազան և քօղ յղղեալ,
Գըրով ըզսերըն պահանջեալ ».

սակայն ետևի ըսածներէն կ'երևի որ այս բանս Եւգենիոսէ առաջ պապ մ'ըրած է. ինքն ալ անշուշտ առանց ընծայի չէ դարձուցած կաթողիկոսին նուիրակները:

կան է որ նուիրակքն ազէկ մը քննելով Հռոմայ մեծ եկեղեցւոյն ծէսերը, զոր հօն աւելի կատարեալ և անկասկած կըրնային դիտել՝ քան Անտիոքայ և Եգեսիոյ կողմերը, հետեւրնին բերած ըլլան նաև ծիսական գրքեր. և անկէ պատճառած ըլլայ մեր Մաշտոցի Ձեռնադրութեանց կարգին փոփոխութիւնը և ընդարձակութիւնը. ինչպէս վերոյիշեալ Մխիթար կաթողիկոս գրելով առ Կլեմէս Զ (1343) որոշակի կ'ըսէ, թէ ասկէ 200 տարի առաջ ընդունեցան Հայք 'ի Լատինաց Ձեռնադրութեան նոր կարգը. և ուրիշ մ'ալ աւելի որոշակի, թէ Եպիսկոպոսի և քահանայի օծումը՝ զոր Հայք ջոնէին՝ Յունաց պէս, ընդունեցան 'ի Լատինաց Ներսիսի Կլայեցւոյ առեն. և հօս ալ 200 տարի առաջ ըսելով, ձիշդ մեր հիմայ տեսած նուիրակութեան առեն կը հանդիպի. և այս կարգաց հայերէն յարդարմունքն ալ՝ մասամբ՝ մեր Շնորհալւոյ գրչին: Եթէ այնպիսի ձեռքէ մ'անցած չըլլար՝ գուցէ այնպէս ընդհանուր Հայաստանեայց ընդունելի ալ չէին ըլլար այս կարգքս, որք Լատին և Հայ եկեղեցեաց միաբանութեան գեղեցկագոյն պատուաստ կամ պտուղ մը կըրնան սեպուիլ: Այնպիսի խոհական և աստուածաբեր հայրապետաց չնքով՝ ծիսիւ և լեզուաւ օտար եկեղեցեաց յարմարութիւնք և միաբանութիւնք աւելի դիւրաւ կը յաջողէին քան քանի մը դար եաքը, երբ քաղաքական փոփոխմամբք ալ հեղինակութեանց զուգակշռութիւնն շատ այլայլեցաւ. Հայոց աչքերնին սկսաւ ջեկ, ազգն զանազան իշխանութեանց և ազդեցութեց տակ ցրուեալ, որով կաթողիկոսական իշխանութիւնն ալ նուազեալ. իսկ Աւինիոնի Պապից հեղինակութիւնն, մանաւանդ մեր ընտանի և օտար ամբաստանողաց փչմամբ, շատ զօրացեալ. սրանց աղատ սիրոյ հաղորդակցութիւնն կ'ամփոփուէր,

և տեսակ տեսակ կերպարանքներ կ'առնուր: Այն-
պիսի տեղն կշտաց յոյժ վերացեալ և թախանձեալ
կողմն՝ ծանր հարկեր ալ կըրնար դնել կամ պա-
հանջել՝ ի խոնարհելոյն, ինչուան ուզել որ, զատ
յայլոց, Հայոց եկեղեցւոյ Ջեռնադրութեան
նոր կարգերն ալ նորէն թարգմանուելով՝ քըն-
նուին. և Մխիթար կաթողիկոս թէ հին և թէ նոր
քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրու-
թեանց կարգերը լատիներէն թարգմանել տալով
(Պեմունդ անուամբ կոմսի մը) խաւրեց խնդրո-
ղին: Ո՛ր և է միաբանութիւն այն տեղն սերտիւ
և սրտով կ'ըլլայ, երբ երկու կողմէն ալ ըստ կա-
րելոյն հաւասարութիւն կամ չափաւորութիւն
մ'ըլլայ. զի ինչուան որ երկու թաթքն ալ գծի մը
վրայ չզնչանին՝ կշիռքն չհանգչիր: Գերակայու-
թիւն և սորակարգութիւն՝ անհաւասարելիք
կ'երևին ամմասց. այլ սէր և խոնարհութիւն
բարձրն ու ցածը կը հաւասարեն, միաբանեն,
միացընեն:

Ասկէ աւելի յայտագիր մը չտեսնելով մեր
նուիրակաց ըստծին և լսածին, և ոչ իրենց դար-
ձին Համբուն, կամ մեր հայրապետաց ըրածին և
գրածին, դառնանք մեծ քաղաքական տեսարանի
մը, զոր և ոմանք կերպով մը կը կապեն այս նուի-
րակութեան հետ. և կ'ըսեն թէ ատոր մէկ վախ-
ճանն ալ էր՝ ի քրիստոնէից օգնութիւն խնդրել
ընդդէմ Թուրքաց, որ է ըսել Խաչակիր զօրք յա-
րուցանել, յետ սիրելոյ նոցա Եգեսիոյ քաղա-
քին: Սակայն սխալ է այդ կարծիքդ. որովհետև
մեր նուիրակաց Համբոյ եղնելէն շատ ժամանակ
վերջը հանդիպած է Եգեսիոյ առումն. և Ոմեան
յայտնապէս կ'ըսէ թէ Ասորւոց Գաբալայ [1] թե-

1 Gabulensis ըստ Ոմեանի, Հալէպի կողմերը քաղաք մը,
որ Թուրքարէն ալ Ճապուլ կոչուի:

մին եպիսկոպոսն էր այս բանիս ինդիր ընողն, 'ի կողմանէ Անտիոքայ պատրիարքին ու բրընձին, և առր մօրը՝ որ Երուսաղեմի Թագաւորին դուստր էր, և ուրիշ Լատին իշխանաց. յայտ է ուրեմն որ ինքն ներկայ 1145 տարւոյն մէջ ձամբայ ելեր է, մինչդեռ Հայք 'ի գարնան նախընթաց տարւոյն, որուն վերջը հանդիպեցաւ Եգեսիոյ արկածն, զոր իրենք ալ հօս Պապին քով լսած պիտի ըլլան. Թերևս այն առեն իրենք ալ աւելցուցած ըլլան իրենց կողմերուն տագնապեալ վիճակը յայտնելու: Արդ որովհետև այն դեսպանածն աւելի մեծ դեսպանածի մը պատճառ եղաւ, որ զանրևմուտք նորէն դրդեց յարևելս դիմելու, միանգամայն և մեր պատմութեան նոր յիշեալ գլխաւոր անձանց, մանաւանդ Բեռնարդոսի և Շնորհալւոյ, մեկմեկ կերպ գործելու և գրելու առիթ եղաւ, արժան է որ զանոնք յիշենք:

# ԺԵ.

*Վրէժիանդրոբիւս Ճոպլինի և Պալտիմի. — Մահ սորա և Գևրևզևանական ողբ Բարսղի վարդապետի. — Եղևախոյ առոտմև՝ ի թոռրքաց. — Բ. Խաչակիրք քարոզոբևամբ Ս. Բևռևարդոսի. — Ողբք Շնորհալւոյ յԵղևախս։*

Մինչդեռաց և հիւսիսային Ասորւոց՝ թէ ոչ ամենեն մեծ և հզօր, գոնէ ամենէն ազնիւ քաղաքն կըլնայ ըսուիլ Եգեսիա. այսպէս կոչուած Անտիոքոս Սելևկոսի՝ իր նորոգ շինողին սեն, անուամբ անոր կնկանը, յետոյ Ուռհա անուանեալ՝ իր յատուկ իշխողի մ՚անուամբ, զոր՝ ոմանք Հայ ոմանք Ասորի համարին։ Այլ իր մեծագոյն շէնքն և շնորհքն առաւ Քրիստոսի անօրէնութենէ սեն հօն թագաւորող Աբգարէն, զոր նոյնպէս Հայք և Ասորիք իրենց սեփականեն. և պատճառաւ գերահռչակ Դատաստակին Քրիստոսի՝ սըրբազան քաղաք և ուխտատեղի մ՚եղաւ քրիստոնէից. և համարուեր ՚ի տեղացեաց՝ թէ քաղաքն անառիկ պիտի ըլլայ ՚ի թշնամեաց, ըստ գրաւոր խոստման Քրիստոսի առ Աբգար. սակայն ոչ թէ միայն այն գիրն երկբայական է, այլ և անոր հին օրինակաց մէջ այդպիսի խոստումն չկայ։ Յուդայ և Պարսից պատերազմաց սեն ՚ի Ջ դարու, և յետոյ Արաբացւոց բռնակալութեան սեն՝ շատ դիպուածներէ անցաւ Եգեսիա, զոր եր-

բեմին սաստիկ գեանաժաժք ալ աւրըշտրկեցին. ի դարու մէջ կայսերք յարմար առիթ մը գտնելով Դասատառակը իրենց մայրաքաղաքը ձգեցին, ուս-կից՝ ի ԺԴ դարու փոխադրեցաւ և պահի հիմայ՝ ի Ձենովա քաղաքի Իտալիոյ [1]: Եգեսիա այսպէս իր ցանկալի գանձը կորուսած՝ բոլորովին երեսէ չընկաւ, այլ դեռ այն կողմերուն գլխաւոր քաղաքաց մէկն ձանաչուէր Արաբացւոց և Թուրքաց իշխանութեան առեն. մինչև որ Ս. Խաչակիրք ԺԱ դարուն վերջը դիմելով Երուսաղէմ, նախ քան զայլս՝ ուրեցին այս քաղքիս, որ Հայ քաղաքապետի մը (Թորոսի) պահպանութեամբ ազատ մնացեր էր Թուրքաց տէրութենէն: Երբ Խաչակիրք մօտեցան, անոնց մեծ առաջնորդին Կոփրեասոսի եղբայրն՝ Պալտինն՝ առաջ անցնելով այս կողմերս եկաւ. Եգեսացիք հրաւիրեցին զինքը, և Թորոս ոչ միայն սիրով ընդունեցաւ՝ այլ և իրեն որդեգրեց զՊալտին և ժառանգ անուանեց. սակայն Թուխ Թէ ժառանգութեան փափաքն չարաչար փուԹալով՝ Թորոսի սպանման պատճառ եղաւ, և Եգեսիա այնուհետև մնաց Փռանկաց ձեռք. որք երբ Անտիոքայ և Երուսաղեմի ալ տիրեցին, զԵգեսիա առանձնակ իշխանութիւն մը կարգեցին կոմսութիւ պատուանուամբ: Երբ Պալտին Երուսաղեմի թագաւոր եղաւ՝ զԵգեսիա Թոզուց իր համանուն ինամոյն (Baudouin de Bourg). ուսկից ժառանգեց մաս մ՚իր որդին,

1 Ի Ս. Բարդուղիմէոս եկեղեցին, զոր կանգնեցին երկու Հայ կրօնաւորք՝ Սեաւ Լեռներէն փախած յամին 1307, Եպիսկոպոսաց արշաւանաց առեն. որոց ուրիշ ընկերներ ալ գալով հաստատեցին հօն վանք մը և կրօնք մը Հայոց անուամբ, որով մնաց ալ մինչև յամին 1650, Իտալիոյ շատ քաղաքաց մէջ ալ նոյն Հայոց անուամբ տարածուելով. թէ և յետոյ շատին միաբանքն Իտալացիք էին: Ձենովայի դուքսն յամին 1384 յանձնեց այս Հայոց զՍ. Պետրոս առաքեալը, զոր ինքն բերեր էր ի Կ. Պոլսոյ:

մաս մ'ալ քաջ իշխանն Ջոսլին կամ Ժոսլէն (Joslin de Courtenay), որ խնամեցեր էր մեր Ռուբինեանց, առնըլով կին զդուստր տարաբաղդին Լևոնի Ա, և վախճաներ էր յամի 1131: Իր կալուածքն Եդեսիոյ և Անտիոքայ երկու իշխանութեանց միջասահման էր, անոնց հիւսիսային ափամեան կողմն և իր անուամբ Երկիր Ջոսլինի կ'ըսուէր. հօս էր ահա Ծովք դղեակն ալ'ի Տլուք գաւառի, ուր մեր կաթողիկոսն և իր Շնորհալի եղբայրն կը նստէին: Ջոսլինի յաջորդեց իր համանուն որդին Բ Ջոսլին, որ հօրը և մայրենի պապուն քաջութենէն մաս մը միայն ունէր, իսկ ըզգօնութենէն շատ փոքրիկ մասն. այլ առջի տարիները յաջողելով Եդեսիոյ կոմսութիւնն ալ ժառանգեց, և երբեմն Գող Վասլի ափրած երկիրները Թողուց իրեն պէս տաքգլուխ կարգէ մը, որ էր Պալտին, եղբայր Անտիոքայ Ռեմոնդ բրընձին [1]: Այս երեքն ալ քիչ շատ իրարու նման, զեղծ մեղծ բարքով, երբեմն բարեկամ և երբեմն թշնամի իրարու, Փռանկաց համբաւն և յաժը նուաստացուցին Յունաց կայսերաց և Թուրքաց սուլտանաց և ամիրայից առջև, որք քիչ քիչ ատոնց տահմանները կոխեցին և կարեցին. մինչև հարկ եղաւ որ Ռեմոնդ Բրինձն երթայ'ի Կ. Պօլիս և Մանուէլ կայսեր հպատակութիւն երդնու: Ասոր համար կ'ըսէ մեր ժամանակակից Պատմիչն (Գրիգոր Երեց), թէ « էր'ի սխա մանկութէ, այր հզօր « և ուժեղ, այլ ոչ խելայիմաստ ». և յետոյ թէ ատոր և թէ իր ընկերաց յարմար՝ կոչէ « անպէտս « եղբայր Պաղտոյինին. որք ըստ ամբարտաւանութեան թեան իւրեանց՝ անձնահաճութեամբ կամեցան « պատերազմել ընդ թշնամւոյն, և ոչ հաւանեցան

1 Փռանկաց Prince բառն այսպէս սեփականեր են մեր այս ժամանակի պատմիչք՝ Անտիոքայ Իշխանաց:

« ցան միաբանել ընդ զօրս քրիստոնէից. որ ոչ
» միայն ինքեանք կորեան և բարձան 'ի միջոյ՝ այն-
« պիսի գլխաւորութք, (այլ և) բազումք 'ի քրիստո-
« նէից »:

Արդ այսպիսի անգլուխ գլխաւորաց Փռանկ իշխանաց սառն՝ հեռուէն զնրենք ընդառաջող Թուրք իշխանք կընային յուսալ երենց 50 տա-
րուընէ վեր կորուսած երկիրները գրաւելու. բա-
ւական ճանչցեր էին Փռանկաց ոյժը և պատե-
րազմելու կերպերը, և հիմակուան վիճակին այս
անառիկ երիտասարդաց ձեռքը: Ամենէն արթուն
և ազահ դիտող, միանգամայն և ամենէն մերձա-
ւոր և զօրաւոր այլազգի իշխանն էր Էմաուէսաին
Զանկի ամիրայն, Հալէպու տիրոջ որդին, որ առ-
ջի խաչակրաց հետ կռուող Թուրք զօրավարաց
բանակը վարժած՝ իր հօրը յաջորդելէն ետև,
Խալիֆայից ալ ծառայութիւն ընելով՝ անոնցմէ
նոր պատիւներ և երկիրներ ընդուներ էր և ա-
ւելի ընդարձակեց իր զէնքերովը, Պաարայէն ին-
չուան 'ի Հալէպ, տիրելով նաև Մօսլայ իշխանու-
թեան, Հալէպէն ալ անդին Համայ և Եմեսոյ և
շրջակայից. ըսել է գրեթէ բոլոր Միջագետաց և
Ասորւոց, և անմիջապէս Լատինացւոց սահման-
ներուն վրայ, որոնցմէ ալ մաս մը գրաւեց: Այլ
մեծագոյն պատառն մը կը սպասէր, երկար ա-
տենէ աչքը դրած Եդեսիոյ վրայ: Հիմայ իմանա-
լով որ անգլուխն Ճոսլին հեռացեր է անկից, բա-
ւական պահապան չթողլով, ու Եփրատ գետէն
անդին գացեր է իր զբօսանաց տեղուանքը, (հետն
ալ տանելով մէկ եգեսացի աղնուական Հայու
մը յափշտակած աղջիկ), սկսաւ Զանկի իր բա-
նակը քալցընել. բայց աղէկ մը խաբելու համար
զՃոսլին՝ հեռու ճամբայ մը բռնեց, որպէս թէ
Ամիդայ կողմերը երթալ կ'ուզէ. և յանկարծ և-
րեսը դարձընելով շուտ շուտ քշեց փութացուց

զօրքերը, հասաւ պաշարեց զԵդեսիա: Ճոսլին ուշ արթնցաւ. կըրցաւ հնարք գտնել իր քաղաքը մտնելու, բայց չկարցաւ օգնութիւն բերելու, ոչ ի Թագաւորէն Երուսաղէմի և ոչ յԱնտիոքացւոյն. ամսոյ մը չափ քաղաքացիք ամենայն ճըգմամբ և չարաչարութեամբ դիմացան, անդադար նետով և քարով զարնելով զայլազգիս իրենց պարսպացց վրայէն. այլ Զանկի ալ անդադար այն պարսպացց հիմերը քանդել կու տար. և երբ փլըզնելու մօտ էր՝ իմացուց քրիստոնէից վտանգը, որ անձնատուր ըլլան. և երբ չեղան՝ զօրացը խոստացաւ քաղաքը աւարառութեան մատնել: Այս յուսով ոմանք փլուզին պարսպին մասը, ոմանք գործիքներով ալ վրան ելան. ոմանք ալ կ'ըսեն, թէ Ճոսլինի յափշտակեալ ապկան հայրն՝ իր աշտարակը թողլով՝ ձամբայ բացաւ: Դեկտեմբեր ամսոյ 23ն էր, շաբաթ օր մը (1144) մուտն ի լոյս, խուռն ներս դիմեցին այլազգիք անդադար և անխնայ սուր ու նիզակ շարժելով. « ոչ խնայելով « ի պատուական ծերան, և ոչ ողորմելով գառնա- « նման տղայոցն. որ և յահէ սրոյն զարհուրեալ « քաղաքացեացն, փախստեամբ դիմեալ յապա- « ւէն իւրեանց, զոր կ'ըսէ Մանիակայ ասէին, ոչ « եղբայր զեղբայր հոգայր, և ոչ հայր զորդին, ոչ « մայր ի դուստր գթայր, և ոչ մերձաւոր բա- « րեկամ առ սիրելի իւր նայելով. յաղագս գառն « և ծանր լուծոյն այնորիկ՝ ոչ ժամանեալ փախու- « ցելոցն այնոցիկ մատնել յամուրն իւրեանց, « խեղդամահ եղեալ ի գուռն ամրոցին, և մե- « ռան ոտիք իբրև 2000. ուր և Պապիոն Ֆռան- « կաց հեղձաւ յամբոխամիջին »: Այս պապիոս ըսածն մեր Գրիգոր պատմչին՝ էր Ոգոն արքեպիսկոպոսն Լատինաց, որ Հայոց, Յունաց և Ասորւոց արքեպիսկոպոսաց հետ ժողովրդեան յորդոր կու տար և կ'առաջնորդեր այլազգեաց դէմ

դնելու. մեկալներն կըլըցան ազատիլ, ինքն հօն խաչով և զէնքով ոանակոխ եղաւ [1]: Ա յս միջոցիս ոմանք յայլոզեցան քաղքին դուռ մը բանալ և փախչիլ, որոցմէ եղաւ Ճօսլին ալ՝ վաճառականի զգեստ հագած: Զանկի իբրև բաւական սեպելով եղած կոտորածը՝ հրաման կարգաց որ դադրին գործն. այլ եւթը քրիստոնեայք ալ դադրեցան իրենց խուճապէն՝ փնտռելը բռնել և սպաննել տուաւ, կնիկներն և զաւկընին գերի տանիլ, մեկալները թողուլ: Ա յսպէս ալ ըրաւ բերդին մէջ ամրացողներուն. որոց ջուրն հատնելով՝ ձարերնին ալ հատաւ, և կամաւ ակամայ բացին դուռը, և հօս ալ ոմանք կեանքերնին ազատեցին. բայց գոմանս ալ անողորմ և անխրատ այլազգիք չարաչար մահուամբ սպաննեցին, կամ նետահար ընելով, կամ մոլեներնին հանելով, և անոնց արեամբ լուացուելով: Յետոյ եկեղեցեաց աշտարակներէն իրենց կուրանին քարոզը կարդալով՝ հանգչեցան:

Սակայն մեծ գժբաղդութեամբ Եդեսիոյ վրատանգն և ցաւն տասվ չըմընցաւ. այլ իր անզգաստաէրն և անոր նմանակիցն՝ աւելի մեծ վատնդ և կորուստ հասուցին, և բոլորովին փճացուցին իրենց հարց և հին սիրոլոց աշխատանքը, և մանաւանդ խեղճ բնակիչները: Վասն զի յայնորդ տարին Զանկի դաւաճանութեամբ սպանուեր էր, և իր որդին և յաջորդն Նուրէտտին՝ ուրիշ կողմ էր. Եդեսացիք տեսնելով որ քաղքին մէջ շատ պահապան չկայ՝ իմաց տուին Ճօսլինի, որ իր մեսերմին Պալտինի քով գացեր էր, և զօտ ալ յորդորելով՝ հեռն առաւ, և քիչ մարդով եկաւ մըտաւ յԵդեսիա: Թուրքք քաղքին երկու բերդերը

1 Ոմանք՝ ի ժամանակակցաց՝ մեռնողին ազահութեան պատիժ կը սեպեն այսպիսի մահը:

քաշուեցան և սպասեցին, ինչուան որ Նուբիա-
աին հասաւ. հիմայ տառապեալ քաղաքացիք եր-
կու կողմէն սուրի մէջ մնալով՝ յուսահատաբար
ուզեցին մահուան մէջ ճամբայ բանալ. քաղքին
դուռը բացին, և կուրծքէն Նուբիասլինի բանակը
ձեղքել անցնիլ կամ հօն մեռնիլ փորձեցին: Եւ
յիրաւի, ոմանք կըրցան ազատիլ, որոց հետ քա-
րեացապարտ Ճոսլինն ալ. այլ շատերն՝ առջինէն
սեղի չարաչար կոտորուեցան. անոնց հետ ան-
հետացաւ Պալտին իշխանն ալ, Մարաշոյ և Քես-
նոյ տէրն. որ թէ և Ճոսլինի պէս անխոհեմ, այլ ա-
ւելի կարիճ և սիրելի անձ էր, վեհանձնութեամբ
ու առատաձեռնութեամբ իր երիտասարդական
պակասութիւնները կը ծածկէր: Քեանոյ Հայ արք-
եպիսկոպոսն Բարսեղ՝ որ անոր խոստովանա-
հայրը և խրատատուն էր և շատ ալ կը սիրէր, շատ
յորդորեր էր զնա՝ որ մինչ ջրնե Ճոսլինի և չեր-
թայ այն անզգոյշ ձեռնարկութեան [1]: « Բա-
« զում անգամ զեկուցաք, կ'ըսէ, ոչ գնալ զան-
« գառնալի վճանապարհն զայն. և ոչ անսաց բա-
« նից մերոց, զորոյ առեալ էր զփորձ. անլուր գը-
« տաւ յայսմ ամենայնի. ուստի և մեք խակ գու-
« շակեաք զկորուստ առաջի նորա՝ բազում ան-
« գամ, թէպէտ և ցաւ էր մեզ և գժուարին էր
« զայն ասել նմա . . . : Եթէ փոքր մի անսացեալ էր
« նորա մեզ՝ կենդանի էր այժմ հոգւով և մար-
« մնով . . . »: Բարսեղ ողբալով զմահ իր սիրե-
լւոյն՝ զոր Սիրի Պալտին կոչէ, իրեն ալ մեզի ալ
մխիթարանք կը թողու՝ անոր հայասիրութիւնը

1 Վարդան Պատմիչ չփոթելով զՊալտին՝ Ջօսլին կոչէ. Բարսեղի տեղ ալ Գէորգ կոչէ զողբասաց խոստովանա-հայրն: Կըրնար Գէորգ մ'ալ ողբալ զՃոսլին, բայց նոյն իսկ Վարդանայ Հայոսէր կոչելն զսպանեալն, և 70 օր ե-գեսիոյ սիրելէն վերջը սպանուիլն՝ կ'իմացընէ որ Պալտինի համար է բսածն:

և հայերէն խօսիլը, և գոնէ քաջութեամբ կռուիլն
ու կռուել տալն այն վերջին օրը. յորում՝ « Մար-
« զէր զօրան ամենայն, յորդորէր, սրտապնդէր,
« քաջալերէր. իբրև ըմբիշ արի և զքաջ նահա-
« տակս չուրջանակի զօրացն անցանէր, ուժգին և
« ահագին ձայնիւ ամրապնդանէր զօրան ամե-
« նայն. ձայնէր առ ամենեսեան յանուանէ զա-
« նուն քաջութեան. վա՛շ, ով քաջք, վա՛շ բազ-
« դին, և աւուրս չնորհի. որ ասա նահատակի
« փոքր մի և յաղթէ: Մի զանգիտէք ՚ի նոցանէ.
« ահա օր հանդիսի, և մահ երանելի՝ վասն Քրիս-
« տոսի ՚ի վերայ քրիստոնէից մեռանել: Եւ իբրև
« այսպէս զօրացուցանէր և հաստատէր զարտա-
« քոյ կողմանս բանակին, գարձեալ ՚ի միջոց անդ
« զօրացն մտանէր. զլքեալսն երկիւղիւ և զնուա-
« սափեալսն Թագաւորամբ՝ յառաջ քարշէր, և
« զքաջասիրտսն գովէր. զի քաց ընկեցեալ զէնս
« անարի արանցն, կամ ծունք ունէին կարկամեալ
« ցամաքեալ ձեռս, յափշտակէր կորզէր և ա-
« րիացելոցն մատուցանէր ՚ի ձեռին. ոմանց տայր,
« յոմանց առնոյր: Եւ գարձեալ առիւծաբար
« խրոխտանօք յայլ վայրս հասանէր, ահաւոր
« գոչմամբ և բարձրաձիչ աղաղակաւ. զգիշերն
« ողջոյն և զտիւն ամենայն ընդոյր զմիջոց բանակին:
« Չի ոչ ունկն պարապէր զայլ ուրուք լսել ըզ-
« ձայն քաջութեան, կամ ակն՝ տեսանել զարտա-
« ընթաց սլացումն՝ հաւասար և նման Սիրի
« Պաղտնին. մինչև պակասեալ հատաւ ՚ի ձայնէ,
« և ՚ի բնական ուժոյն զօրութենէ [1], հանդերձ
« երիվարաւն. և ժանգանալ կարմրութեամբ զո-
« լոշեաց սրտին՝ ՚ի սանձապատ զրահէ բերա-

1 Մեր օրինակն գրած էր և ՚ի բանսին զօրութիւնէ. թերևս յետընտրեցին կար պատճառ բառս մ՚ալ. բայց միայն անով ալ իմաստն չի ստուգուիր. շիտակ և պակաս բան մը կայ, որ լատագոյն Զեռագրի կը կարօտի:

« Նոյ Նորա, որպէս ասէ յոմանց »: Այս բանս
մեջ բերինք՝ ոչ միայն իբրև Եդեսիոյ մեծ դի-
պուածին դրուագ մը, այլ և այն ժամանակին
մեր մատենագրութեան ճաշակ մը. որովհետև
Դամբանական դրուածի և ոչխոյ՝ մեր ձեռքը հա-
սած մեկ հատիկ մնացեալ ազգային ճառն է այս
Բարսեղ վարդապետիս գրածն՝ ի սիրելին իւր Սի-
րի Պաղտին. « Սիրելիք զնա, կ'ըսէ, հոգևորական
« սիրով, որպէս օրէն է ծառայից Աստուծոյ, ըստ
« որում և նա զմեզ. և զկնի մահուան նորա հարկ
« էր մեզ փոխանակ անչափ սիրոյ նորա՝ հատու-
« ցանել սէր կորուսելոյն՝ ի կենաց ասէ »: Սի-
րոյն հաւասար է ցաւն ալ՝ այնպէս անյայտ մեռ-
նելուն և կորսուելուն վրայ, որով անյիշատակ
մնաց ուրիշներէ, յետ այնպիսի անհանգարտ և-
ռանգուն երիտասարդութեան մը. « Ի կենդանու-
« թեան իւրում ոչ հանգեաւ, ոչ վայելեաց՝ ի
« սմա. այլ՝ ի աղայական տիոց սկսեալ՝ ի տագ-
« նապի, ի ցնորս և՝ ի տատապանս անցոյց զժա-
« մանակն մանկութեան իւրոյ. ՝ի դիւաց, ՝ի թըշ-
« նամեաց և՝ ի խաւերախ մարմնական տերանց և
« ՝ի գաւաճանիօղ ընկերակից իշխանաց. և այժմ
« ՝ի կատարածի կենաց իւրոց՝ կորեաւ անյիշա-
« տակ. ընկճեցաւ բարձաւ անուն նորա և սէր՝ յա-
« մենայն աշխարհէ և՝ ի սրտէ, ընտանեաց և օտա-
« րաց: Զայս ամենայն դառն և անհնարին կո-
« րուստ՝ յորժամ տեսանեմ հատեալ՝ ի վերոյ
« նորա, հեղձամղձուկ եղեալ ցնդիմ յարտասուս,
« և ոչ գիտեմ զինչ արարից, և կամ որպէս օգ-
« նեցից ձեռն կարկառելով. ցաւակից մեզ յայ-
« տոսիկ յԱստուած ապաւինեալ վաստհացայ, որ
« միայն է անոխակալ և մարդասէր...: Եւ գրե-
« ցաք զայս գիր խոստովանութեան և սէրոյն՝ ՝ի
« դիմաց նորա և մեր. և ոչ դադարեմք յարա-
« ժամ գոչել այսու յամենայն տեղիս՝ առաջի ո-

« ղրմած հզօրին, որ բարկացաւ նմա և մեզ,
« հաշտեսցի ողորմութեամբն իւրով, և յայտ-
« նեսցէ զնա մեռեալ կամ կենդանի »:

Ահա մեկ անձիս կորուսան և սուգն առհասա-
չեայ ըլլայ այն մեծ ազգ և ցաւոց՝ զոր զգացին
քրիստոնեայք, և մանաւանդ արևմտեայք՝ կո-
րըստեամբ Եգեսիոյ, որ իրենց արևելեան տե-
րութենց արևելագոյն և հեռագոյն պատուարն
էր. և որոյ կորուսան՝ զնոյն կը սպառնար արևմը-
տագոյն կալուածոց ալ: Ահա այս պատճառաւ էր
որ Գաբալացւոց եպիսկոպոսն, որոյ ձայնակից և
այլք, գուցէ և Հայք, ազերս մատուցին առ Ս.
Պապն Եւգենիոս, թէ եղած և թէ ըլլալիք խեղ-
ճութիւնները յիշեցընելով. և մեծ ազդեցութիւն
ըրին լսողաց, և նոյն իսկ Պապին. որ առանց ու-
շանալու խնդրուց արևմտեան Թագաւորաց և իշ-
խողաց՝ արևելից վառնգը. և յետ առաջնոյն՝ եր-
կրորդ անգամ խաչակիր զօրք հանել յորդորեց,
յաղաւութիւն վառնպետալ և վառնպելի քրիստո-
նէից և Սուրբ տեղեաց: Հիմայ Ս. Խաչակրաց ա-
ռենի քարոզ՝ Պետրոս Ճգնաւորէն աւելի զգօն և
խօսուն քարոզ մը կար, անուան քարոզիչ ժա-
մանակին, Ս. Բեռնարդոս: Երբեմն աշակերտ
Պապն՝ գրձաւ իր Վարդապետին, յանձնեց այս
խաչակրութիւնը քարոզել: Բեռնարդոս իբրև
հրաման քահանայապետի և գործ Աստուծոյ՝
այնպիսի եռանդեամբ և հոգւով քարոզել սկսաւ՝
զսակի օրերը յամի 1146, որ լսողաց և ուշադրաց
չբաւելով պատրաստուած խաչենշանները, սկ-
սուեցաւ իր զգեստներէն կտրտել խաչաձև և
բաժնել. ամեն քայքէ և գետէ Բեռնարդոսի ձայնը
լսողք՝ գինքն և ձամբու կը պատրաստուէին. Լու-
դովիկ Է Փռանկաց Թագաւորն՝ արդէն իր հան-
գուցեալ եղբօր ուխտը կատարելու համար՝ կ'ու-
զէր Երուսաղէմ երթալ, ուստի և յօժարութիւն

ընդունեցաւ խաչակրութիւնը։ Բեռնարդոս անցաւ ՚ի Գերմանիա քարոզելու. անոր կայսրն Գոնրադոս Գ, որ մեզի ծանօթացեալ Ոթոն ժամանակագիր արքեպիսկոպոսին խորթ եղբայրն էր, քիչ մը ուշ հաւանեցաւ, այլ աւելի շուտ շարժեցաւ Ջամբայ ելնելու, իր Ոթոն եղբայրն ալ հետն առած, ՚ի գարնան 1147 տարւոյ, 70,000 ոպառազէն հեծելօք, բաց ՚ի թեթեւազէն հեծեալներէ և անթիւ հետեւակներէ. և որովհետեւ Գոնրադ՝ Յունաց Մանուէլ կայսեր փեսայակից էր, երկու քերդ արք ըլլալով, կը յուսար որ դիւրութիւն և օգնութիւն գտնէ Ջամբուն, որոյ համար գրեց և խոստումն ալ առաւ։ Բայց Յոյնք իրենցինէն զատ ուրիշ կայսեր կամ ինքնակալի անուն չէին ուզեր լսել, և ոչ ինքն Մանուէլ. որ և կասկածանօք ամրացուց զԿ. Պօլիս, և գունդ մը զօրաց խաւարեց իբրև յօգնութիւն իր եղբայրակիցին, այլ աւելի լրտեսելու և շփոթելու համար։ Ահա բանիս շատ առիթ տուին Գերմանացի անզուսպ զօրականք ալ, և անհամբեր Յոյնք. մանաւանդ երբ բանակն յԱդրիանուպօլիս հասաւ. և հարկ եղաւ քանի մ՚անգամ զէնքով զարնուիլ իրարու. անկէց աւելի՝ մեծ փոթորկէ և գետոց ողողմանէ ձնասեցաւ Գերմանացոց բանակն, և երբ Վոսփորէն անցան յԱսիա՝ 90000 մարդ մնացեր էր։ Լուդովիկոս Փռանկաց Թագաւորն կ՚ուզէր հետն առնուլ զԱ. Բեռնարդոս, բայց սա հրաժարեցաւ. նոյնպէս գրեր էր Գոնրադի՝ որ սպասէ իրեն ՚ի Կ. Պօլիս, բայց նա մարկ չընելով առաջ անցեր էր, և Յունաց խարդախութեամբ Թուրքաց ապատատակներէն նեղուած՝ շատ մարդ կորուսանելով քաշուած էր ՚ի Նիկիա, երբ Լուդովիկոս ալ քիչ շատ խաբուելով ՚ի Յունաց՝ հօն հասաւ. ուսկից գարձեալ իրեն նուազած բանակովը բաժնուեցաւ և անցաւ գնաց մինչև ՚ի Պաղեստին, նոյն-

պէս և Լուդովիկոս՝ շատ նեղութեան և կորուստ կրե-
լով՝ ի Յունաց և՝ ի Թուրքաց. որք յառաջ քան մեծ
պատերազմ մը սկսել տալու՝ այն երկու գեղեցիկ
Գերմանացի և Գաղղիացի բանակաց ոյժը կոտրեր
էին. զոր ալ աւելի չլսաեցին Դամասկոսի քով:
Հարկ եղաւ որ երկու առաջնորդ Թագաւորք ալ
(1149 տարւոյն սկիզբը) կորակոր եւ դառնան, այն-
քան կարճ երիտասարդաց սակաւաւոր Թուով
մը. մնացեալ բազմութիւնը Փ. Ադիոյ և Ատրուց
հողուն տակ Թողլով. որոց վրայ մեծ սուգ մեծ
ցաւ ըրաւ Եւրոպա. և շատերն Թողլով Խաչա-
կրաց ըրած անզգուշութիւնները և Յունաց մատ-
նութիւնները՝ սկսան մեղադրել և բամբասել զՍ.
Բեռնարդոս, իբրև պատճառ ամեն վնասուն:
Լսեց սրտահար Սուրբն, ինչուան որ բամբասողք
ալ լսեցին. ապա գրով ցըցուց՝ որ իրենց անզգու-
շութիւնները և անպատշաճ գործն ու անմիաբա-
նութիւնն էին աւրինք չարեաց. իսկ ինքն ոչ միայն
Թէ Պապն մը հրամանաւ յորդորեր էր զնրեանք
՝ի խաչակրութիւն, այլ և Ատուծոյ հաճոյ գործք
կը սեպէր զայն. Այլ դուք կ՝ուզէք և կը հարցը-
նէք, կ՝ըսէր, Թէ ինչ նշանով կը ցուցընես Ա-
ստուծոյ կամքն ըլլալը. այս բանիս վրայ Թողէք և
զիս մի ամրջցընէք: Այս խօսքով կ՝ուզեր յիշեց-
նել այն հրաշքները՝ զոր իր քարոզութեան առեն
Ատուած իր ձեռքով ցուցած էր: Ահա այսպէս
կերպով մը արևելքին աւելի՝ արևմտից վնաս
բերաւ Եդեսիոյ կորուստն: Իսկ մենք յետ այս-
քան երկար զարտուղութեան՝ դառնանք տեսնել
մեր Բեռնարդոսին արևելեան ամոլն՝ այս աւելիս
մէջ:

Շնորհալին՝ Բեռնարդոսի նման ձայն չվերուց.
էր ալ կըրնար վերցընել իր փոքրիկ բերդին, որ
այնքան մօտ էր այլազգեաց բանակաց և անոնց
նոր կոխած երկիրներուն. ուսկից Թէ ոչ սպանե-

լոց՝ գոնէ փախատէից հեծուելիւնը կը լսէր և կ՚ո-
ղորմէր. և եթէ վերոյիշեալ Բարսղն նման չկար-
ցաւ ապրեցընել սիրելի մը, լացաւ սիրելեաց վը-
րայ, և ողբաց այրիացեալ և ամայացեալ քաղա-
քը: Իր երգած Եգեսիոյ Ողբն՝ իր գործոց մէջ
շատ նշանաւոր տեղ մը բռնած է, և քան զամեն
քերդուածոն աշխուժիւ և ճարտարուելեամբ գը-
րուած, և ինչպէս իր պատմիչն կ՚ըսէ՝ «զամենայն
«ընթերցողս շարժէ»: Այս դասընտիր գրուածոյն
պատճառ կամ փափագող եղաւ իր մէկ մանկա-
հասակ եղբօրորդին, Ապիրատ, որդին Զօրավա-
րի, որ յետ ժամանակաց կաթողիկոս եղաւ (Գրի-
գոր Ապիրատ անուամբ), և այս առեն քաղաքա-
կան և զինուորական կեանց ու փայլման ակնկալ
էր. և ըստ յիշատակի բանի Շնորհալւոյն՝

Մանուկ տղայ գոլով ահոց
Եւ կատարեալ յիմաստ ոգւոց.
Ներհըմտացեալ յարհեստ զինուց,
Ըստ հրահանգի Հառվմայեցւոց.
Գոլ աչողակ զինուց ձիոց,
Որպէս օրէն է վարժելոց:

Իբրև տղայոց և տխմարաց համար հասարակօրէն գրուած մը և ոչ գիտնոց համար ոճով բան մը՝ կը սեպէ հեղինակն իր գործը. այլ յետագայք մեծ յարգիւ ընդունած են, անոր թէ վայելուչ թէ արտաուղչ գրուցուածոց և թէ ճարտար բար-
առնութեանց, նկարագրութեանց և գրուագոց համար: Արդարև այս քերդուածիս մէջ նորա-
գիւտ հնարքներ և գարձուածքներ ըրած է Ներ-
սէս, որով իսկաչնորհ կերպ մ՚ունի, իր սովորա-
կան վայելչաբանութենէ զատ. և նախ բուն Եգե-
սիոյ քաղաքին բերնով կը խօսի, անոր համար
Թան բարառնական կը մակագրէ քերդուածը, և իբրև

ողբերգու կամ ողբակից մուսայից կոչումն ընե-
լով՝ կը հրաւիրէ՝ ի ցաւակցութիւն անոր ընկեր-
ները. նախ պերուսաղէմ քաղաք,

« Չի քո հըմուտ գոլով սըգի՝
Ըսա ողբալոյն մարդարէի.
Քանզի յանցեալ ժամանակի
Աղբեր և դու դառն ըմպելի »:

Շնորհալին չէր գուշակեր որ քառասուն տարի
մը վերջը՝ Երուսաղէմ գառնագոյն բաժակ մ'ալ
պիտի ըմպէր Սալահէտտինի Թուրքաց և Եգիպ-
տացւոց ձեռքով, և անոր վրայ ալ իրմէ օրինակ
առնելով իր միւս եղբօրորդին և յաջորդն՝ Գրի-
գոր Տղայ՝ Ողբ երգէր: Յետոյ կը հրաւիրէ քրիս-
տոնէութեան կեդրոնը, այս շատ անգամ յիշեալ
տողերով.

« Եւ դու Հռոմ, մայր քաղաքաց,
Գերապայծառ և պատուելի,
Մեծին աթոռոդ Պետրոսի՝
Առաքելոց գլխաւորի.
Եկեղեցիդ անշարժելի՝
Ի Կեփայեան շինեալ վիմի,
Դրանց դժոխոց անյաղթելի,
Եւ կնիք երկնիցըն բացողն »:

Երրորդ կը հրաւիրէ զԿոստանդինուպօլիս

« Քաղաք յոյժ պանծալի...
Շինեալ՝ ի սկիզբն Ախայի...
Գահոյք հըզօր մեծ ազգայի ».

այլ կը գանգատի որ այս ազգայն՝ որուն իշխանու-
թեան տակն էր երբեմն, անխնամ թողուց զինքը.

« Բայց այժմ Թողեր զնա ամայի
Իբրեւ ըզբուս յաւերակի »։

Ասպա կարդը կու գայ Աղեքսանդրիոյ մայրաքաղաքի Եգիպտոսի, որ մեկնելերու նման աւետարանչի մ'աթոռ էր, բայց հիմայ անքրիստոնէից իշխանութեան տակ՝ իրեն պէս խեղճացեր էր.

« Զի հաւատար հանդուներակից
Յանօրինաց եղեալ գերի ».

և կը յորդորէ որ գոնէ աղօթքով Աստուծոյ ողորմութիւնը շարժեն։ Յետոյ արդար գանգատով և իրաւամբք կը դառնայ առ դրացին և խնամին իւր Անտիոք.

« Բանիւ գաւառաբնդ քեզ կագիմ,
Ո՛վ Անտիոք, քոյր սիրելի,...
Իմ մերձաւոր և անձկալի
Յուրախութեան ժամանակի.
Ընդէր չհասեր վաղվաղակի
Ինձ՝ի թիկունս օգնականի.
Այլ թոյլ եառուր վասըն խեթի՝
Մատնիլ՝ի ձեռս անօրինի ».

այսպէս կշտամբելով Ռեմընդի և Ճոսլընի աստելութիւնը և անմիաբանութիւնը։ — Այս արևմտեան քաղաքաց, կամ ինչպէս ինքն կ'ըսէ Աստրին կողմի աշխարհիս, հրաւէր տալէն ետև՝ կը դառնայ յարևելս, ՚ի բնիկ աշխարհ մեր Հայոց, որոց իշխանութեան տակ ալ երբեմն եղած էր Եգեսիա.

« Յորում էիր ի սահմանի
Յառաջագոյն՝ որպէս ասի ».

մանաւանդ որ թէ Եդեսիա և թէ Հայք նոյն թա-
դէոս Առաքելոյ քարոզութեամբ ընդունեցան
զքրիստոնէութիւն. և իբրև անոր յաջորդ էր
Գրիգ. Լուսաւորիչ, որ էջմիածնի եկեղեցին հաս-
տատեց, և մեծ ազգ մը ու թագաւոր մը քրիս-
տոնեայ ընելով պայծառ ցանկալի սեղ մ'ըլաւ
զՀայաստան:

« Բայց հարցանեմ, ով սիրելի,
Բանիս խնդրեմ պատասխանի.
Այժմ ո՞ւր է Թագըն քո զարդի,
Եւ կամ պսակըն հրաշալի:
Ո՞ւր զարդարանքըն դէհոյի,
Հարսին որդւոյ, Թագաւորի...
Է՞ր չէ փեսայն ի խորանի,
Կամ փեսաւէրքն ի տաճարի:
Ո՞ւր են մանկունքն առագաստի,
Զի ոչ հընչեն զերգըն Դաւթի.
Զիաւրդ լըռեալ ոչ հարկանեն
Զփողըն հընչող Տարտնայի:
Ո՞ւր պարարակ եզն ամոլին,
Զիաւրդ ի քեզ ոչ զենանին...:
Ո՞ւր է աշխոյ հայրապետի,
Կամ քահանայք ի սուրբ բեմի...
Կամ ժողովոյըն գումարուին
Ցաւուր ծննիցըն տէրունի:
Ո՞ւր են գահոյք Թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի.
Կամ նախարարըն ո՞ւր արքայի
Արարատեանըդ գաւառի...
Ո՞ւր զօրականքն յատպարիսի.
Կամ լեգէոնքն ի Ճակատի:
Ահա բարձաւ այս վաղագոյն,
Ցոյժ հեռացաւ որ էերևի.
Անուրջք եւրաղք էին յայտնի.

Արդ ծաղկեցաւ ի զարթմընի...
Փանդի նըստիս որբ և այրի
Տըխուր գիմօք զերդ ի սըգի »:

Որչափ ալ զկծեցուցիչ և ցաւեցուցիչ էր Հայաստոյ մը այս իր հին փառաց յիշատակը, Արշակունեաց Թագաւորութեան և կաթողիկոսաց՝ Վաղարշապատի և Դըւնի աթոռոց, սակայն դեռ ա՛լ աւելի մորմոքեցուցիչ և սրտաշարժ էր նորահասոյս և դեռ կիսակէս Հայոց յետին Թագաւորութեան մայրաքաղաքին բաղդը. զոր յետ ամենեցուն յոլոր հրաւիրելով յիրաւի ժամանակակից առանց ոչ ոքոյ չեն կարդացեր, որպէս և մեք յետագայքս ոչ առանց խոր զգացման կըրնամք լսել և կարդալ Անոյ մասը, թէ և շատ հեղ լսած ըլլամք.

« Բայց և ըղքեզ՝ յայս հրաւիրեմ,
Արևելեան քաղաքդ Անի,
Կըցօրդ իմոյս լինել ձայնի
Եւ ըսփոփիչ սարակուսի:
Փանդի և դու երբեմն էիր
Վայելչական հարսն ի քօղի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափագելի...:
Յորում էիր ժամանակի
Բերկրեալ ուրախ և ցընծալի...
Մանկունըք քո զուարթալի
Ընման նորոգ բուրաստանի.
Դաստերըք քո պաճուճալի
Յերդ և քնար միշտ ի խաղն.
Իսկ Թագաւորք քո պանծալի
Նըստեալ յաթոռ Թագն ի գլխի.
Եւ զօրականքն ասող անոլ
Կալով ի սպառ իւր հրամանի:

Նաեւ որդիքըն Սիոնի
Նըման դասուցըն հրեղինի...
Հայրապետք ւ եպիսկոպոսք
Եւ քահանայք այլ ըստ կարգի:...
Փանզի անցին ըստ երազի
Որպէս ծաղիկք ամառայնի...
Կամ ուռուցեալ պըղպըջակի՝
Որ ընդ լինելըն պատառի:
Սո՛ւրն անողորմ անօրինի՝
Որ մեր արեանս է ի սովի...
Նոյն նա եհաս ուրեմն ի քեզ՝
Որպէս յիս՝ յայն ժամանակի...
Արար դիակն անթըւելի
Անթաղ մեռեալ գէշ գազանի:...
Վասն այնորիկ, ով ցանկալի,
Որ ես ներհուն այսմ ամենի,
Ի քոյն յայնժամ խիստ աղեաւ՝
Ծանիր եւ զիմս ողորմելի.
Եւ որպէս փորձ առրակուսի՝
Ւեր արամակից ինձ յայս վայրի »...:

Որչափ ալ զԱնի իրեն յարմար ցաւակից և կսկիծակից կը գտնէ Եգեսիա, բայց դեռ վէրքերն աւելիւնոտած՝ ոչ անով և ոչ առջիններով կը բաւականանայ, այլ իրեն սրգացող կ'ուզէ

« Ձչորեքծագեան կողմ աշխարհի
Ուր են հանուր մարդկան ազգի ».

և անխտիր ամեն հասակ և ամեն վիճակ, իշխանք և անանկք, քահանայք և աշխարհականք, ծերք և տղայք, կարիճք և կուսանք.

« Լայէք լայէք բարձր ի ձայնէ
Զիս ողբացէք կողկողալի,

Եդեսիէ քաղաք Ուռհայ
Որդեկոչոյս, որք և այրի։

Եւ ալէքսպասեալով ուրիշներուս՝ կը սկսի ինք ալ ինքն ողբալ այն այրի և որդեկորոյս կնկան պէս։ Յետոյ կը սկսի պատմել իր անցեալ վայելչութիւնը, իր գեղեցիկ դիրքը Եփրատայ և Տիգրիսի միջագետաց մէջ, իր պարարտ երկիրը, բազմամարդութիւնը, վայելուչ չինուածքը, և իրեն կենդանութեի, տուող գետակը (Սկիրտոս ըստ նախնեաց, հիմայ Դայզան)։

Գետաց նըման վըտակ հոսէր,
Ըզբուրաստանս արբուցանէր։
Ծուխ ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր։
Զաղտեղութիւն տըղմի մաքրէր,
Եւ զհրապարակըն զարդարէր...
Սալարէաբեր ծառովք ծաղկէր,
Առատագոյն պտղաւէտէր։
Տերեւախիտ հեզիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր։
Նարդոս քրքում ինձ ընձիւղէր,
Վարդ մանիշակ վերաբերէր։
Առաւօտուն ցօղն իջանէր,
Ոսկենըման ճաճանչ փայլէր։
Անհամեմատ յերկրի նա էր,
Պտղովք ամեն զոր ընծայէր։
Զոր եւ ասել ոչ ոք կարէր
Մի առ միոյ՝ թէ և կամէր »...։
Բայց թէ զդիրս իմ յանկաւոր
Ոք պատմեսցէ պատշաճաւոր,
Կարծեմ թէ չէ նըմանաւոր
Այս քաղաքաց որ երկրաւոր։

Այս ըսելով կը սկսի նկարագրել իր վայելչափառ կեցուածքը 70 գեօղաւանաց մէջ՝ իբրև ազգապաշտպան մը հաւերու մէջ,

« Կամ Թագուհի յոյժ գեղաւոր
Ոսկէտրտուն և ճամկաւոր » .

կը յիշեցնէ իր աշտարակները

« ... Բարձր և ահաւոր...
Որպէս գլուխըն գիսաւոր...
Մահարձանօք պըսակաւոր » .

իր վաճառները, վաճառափողոցքը, և իր աննկատ գագրելի պայծառ եկեղեցիները, և մնացեալ շէնքերը: — Ասկէ ետև կը սկսի պատմել իր, վերջին դժբաղդութիւնը, որոյ պատճառ կ'ըսէ իր՝ կամ իր պահապանաց՝ անհոգութիւնը, որով 40 տարուընէ վեր քիչ քիչ կը տկարանար, և Հպատրացնէ զօրանալով մօտենային և չորս կողմը կ'աւերէին. մինչև իմանալով որ մէջը բաւական զօրք չկար՝ յանկարծ պաշարեցին բազմութեամբ՝ զանազան ցեղք այլազգեաց, ամեն տեսակ զէնքերով և մեքենաներով: Չօս աշխոյժ եռանդեամբ կը նկարագրէ երկու կողմին յամառ պաշարումը և պաշտպանումը, քաղաքացեաց վերար քաջալերելը (ուր քիչ մը կ'երկննայ խօսքն), և կէս յուսով օգնութեան՝ կէս յուսահատ վերջին ճիգը. որոյ ձեռնտու չգտուեցաւ դըրսէն. և մնաց Եդեսիա իր սեւ բաղդին: Կը սիրտուի այնուհետև իր տագնապն ու ալէտը յայտնել, այլ բերանն առաջ չերթար.

... Ատանօր սիրտ իմ ճըմլի
Ի երիկամունքըս գալարին.
Յաւ հարկանի որովայնիս,
Միտք և հոգիս իմ այլայլին,

Մինչդեռ յիշեմ զօրն ահագին
Եւ զառաւօտըն մըթագին.
Զանկոյս ցերեկըն խաւարին՝
Որ լուսացաւ նըսեմ խորին.
Յորժամ ըզՆուըրն Սոգոմին
Նեղքաւսա՛ւ վեր բորբոքեցին,
Ոչ՛ւ վերսաւսա անձրեւածին՝
Այլ՛ւ սաւրինըս փորածին:

Այսինքն պարըսպաց հիմերը փորելով ական գոր-ծեցին և կրակ դրին մէջը, որով և փլուցին.

Յայնժամ պարիսպ ամրականին
Վերսաւսա ի վայր կործանէին.

՛ւ վերայ այսր ամենայնի քաղաքացիք դեռ բոլո-րովին չանձըրկեցան. յորդորուած՛ւ քահանայից և եպիսկոպոսաց՝ ոմն առ ոմն և քայլ առ քայլ կը կռուէին ընդ Թշնամեաց.

Եւ որպէս փայտ ինչ անտառի
Յանօրինաց կոտորէին
Մինչ զի զահի հարկանէին
Եւ յետս ընդդէմ նահանջէին:

Այս առեն էր որ Զանկի զայրացեալ և ամբչցած՝

Գոչեաց ռամիկ զօրականին,
Ի սուր յաւարն ու ի գերութիւն,
Ասաց լինել զամենեսին:

Արեան և աւարի ձայնէն վայրենի այժ մ՛ալ առ-նըլով արդէն վայրենացեալ զօրքն՝

Իբրև զեռանդ պըտոյտքէին,
Շըրջան առեալ շուրջ քաղաքին,

Ջեռամբք յեռալ տագնապէին,
Մի առ միով արշաւէին,
Փողս եւ գօսերըս գոչէին,
Իբրեւ յամպոյն որոտային,
Զայնս ահագինըս հընչէին.
Մինչ զի զերկիր դըղըրդէին »:

Ոչ քաջութիւն թշնամեաց, այլ քիչերուն յօգնութիւնն ատիպեց որ ասոնք բերդը քաշուին. ժողովուրդն ալ անոնց եաւէն կ'երթար. բայց բերդն չէր կրնար ընդունիլ այնքան մարդ. և ահա հօս այն սոսկալի կոտորածն եղաւ. զի

« Մարդադէմըն գազանաց
Հզայրասուրըն քամէին.
Եւ որպէս գայլք ի հօտ գառանց՝
Ի մէջ նոցունց անկանէին.
Ահասարսակ կոտորէին.
Արեան վըտակըք հոսէին.
Զերիտասարդս եւ ըղմանկունս
Անխնայապէս խողխողէին.
Ցալիս ծերոց ոչ գըթային
Եւ ոչ ի հասակըն տըղային.
Ոչ՝ի պատիւ քահանային
Եւ ոչ յաստիճան հայրապետին.
Մինչ զի յարեանցըն Ճապաղիս
Ծերոց ալիք հարկանէին.
Եւ քահանայքըն խորհըրդին՝
Ի սուրբ արեան կենարարին
Զարիւնս իւրեանց յայն խառնէին,
Եւ ընդ նոսին Թաթաւէին:
Քանզի արեան էր ծարաւի
Եւ արբեցաւ սուրըն նորին ».

Բայց ամենէն խղճալի և զարհուրելի դիպուածն

եղաւ բերդին դրան քով, երբ դուռն փակեցաւ, և Թշնամիք հասան անոր մօտ՝ դուրս ինացողաց վրայ.

« Յայնժամ առ դուրսըն կուտէին
Իբրեւ ըղձեղջս անհընարին,
Կամ յօրինակ մայրից փայտին
Միմեանց վերայ դիզանէին.
Աղբ եւ կանայք ծերք եւ տըղայք,
Մանկունք, սամեն չափ հասակին.
Դըստերքն ի մարց լային գըրկին
Եւ ընդ լալոյն նըւաղէին.
Մարքն ըզարըդայսըն գրկէին,
Ի միասին մեռանէին.
Հարք ընդ որդւոց տառապէին
Թէ փրկուԹեան հասանիցեն.
Որդիքն ընդ հարցըն չանային
Զի ի յանդորը եւանիցեն:
Այլ չի էր ոք օգտակար
Ոչ ձեռնտու ի յայն վայրին,
Միայն յերկինս ամբառնային
Զաչըս մըտաց կողկողագին.
Եւ չի խօսել ոչ կարէին՝
Յոգւոց հանելըն հեղձնուին:
Եղբայր եղբօր ոչ օգնէին
Եւ ոչ ի քորըն գըԹային,
Թէ եւ կարի յոյժ սիրէին
Ի աղէկըտուր խակ լինէին,
Բայց փրկուԹեան ձեռն ոչ տային.
Զի եւ շարժել ոչ կարէին.
Իբրաքանչիւր յիւրում տեղւոջ
Ուր պատահեացն՝ անկանէին,
Եւ ի շընչոյն նուաղուԹեանց
Հեղձամըղձուկ անդ լինէին:
Իակ փախըստեայքն որ շտապէին

Յահէ սըրոյն զարհուրապին,
Եւ յանկելոց դիակուսին,
Կէսքըն ոսիւք ընթանային
Որպէս ի գետ կամ՝ ի ծովն
Վերայ գլխոցըն լեղային:
Բայց այլազգեացըն բազմութիւն
Որ սուսերօք՝ ի հետ գային՝
Իբրեւ գազանըս վայրենիս
Ի մէջ հօտիցն անկանէին.
Իւրաքանչիւր ոք ըստ մըտին
Առ յընարութիւն պարապէին »:

Ցետ կոտորածոյն կը պատմէ յափշտակու-
թիւններըն՝ յարմար հասակէ անձանց, իսկ ան-
ցեալ հասակներուն՝ գարձեալ սպանութիւնը և
կողոպտումը. կը յիշէ նաև ջորից ազգաց եպիսկո-
պոսաց քալապէս իրենց ժողովրդեան գլուխ կե-
նալն ընդդէմ թշնամեաց և նաև կռուիլն, ու Հա-
մայեցոյն մեռնիլնը, որ սարսօք ալ ծեր էր. Հա-
յոց եպիսկոպոսն ալ կ'ըսէ շատ անգամ կենաց
վտանգաւ կռուեցաւ ու յաղթեց, այլ չի սպա-
նուեցաւ.

« ... Յոգունց ի հանդիսին
Յաղթող գըտաւ յասպարիսին,
Անձամբ սրեալ զանձն իւր ի մահ
Իբր յօրինակ հօտից նորին »:

Փափագելի է որ յայտնուէր այսպիսի քայլ և հո-
տատէր հովուի և հովուաց անուանն:

Ողբասացն կը յիշէ ասկէ ետև բերդին անձնա-
տուր ըլլալը և Ջանկիի երդմնազանցութիւնը կամ
խարդախութիւնը, և անկէ եղնոլներըն նետահար
սպաննելը. քաղաքին և եկեղեցեաց տուրբ սպա-
սուց կողոպտումը. ուր ցաւելով եկեղեցւոյն առ-

ջի փառքը և հանդէսները կը յիշէ. անկէց ալ աւելի սոսկալով՝ սրբուհեանց և պատկերաց պըղծելը, հայհոյութիւնը, և զանգակատանց վրայէն մոնայից քարոզելը, Մահմէտի և Մէքքէի աւետիս տալը. սուրբ սաճարները իրենց և ուղտուց ու իշուց ախուռ դարձընելը. և այլ պէսպէս չար ու գարշելի գործեր. որոցմէ սրբուհելու համար՝ գեռոյն ջրով լուացուիլը բաւական կը սեպեն, կ'ըսէ, և հոգւոց մաքրութիւնը չեն մտածեր:

Այս ցաւալի դիպուածները պատմելէն ետև կը խորհըրդածէ ոլբացոյն, թէ իրեններուն մեղաց համար արդար պատուհաս մ'էր այս, և այլ ամենքն ալ պէտք է վախնան, ոչ ոք վստահի իր հաւատքին վրայ, այլ ըստ այնմ և գործէ: Բայց չարաբաստին ալ հաւատացեալք՝ թէ Աստուած ինչքա՜ն անհաւատից կը մատնէ զիրենք. ո՛չ ապաքէն երկրաւոր իշխանք ալ ցած մարդկանց և դահճաց կը մատնեն յանցաւորները՝ և ոչ թէ իրենց սիրելեացը ձեռքը: Իսկ ի՞նչ ըսէ ապա այս բաներս չարութեամբ գործողին. — ալ լեցուած սիրտն կը փրթի անոր վրայ, և անարգանօք և անիծիւք կը գուշակէ և կը սպառնայ իրեն ալ պատուհասը. այս ձև զրուցուածքի, զոր ճարտասանք նզովաբանութեան ձև կ'ըսեն, գեղեցիկ օրինակ մ'ընծայելով. յորմէ մաս մը միայն յիշենք.

« Արդ քեզ ելցէ կարճն յօրեր,
Եւ կայենին հասցէ երեր.
Ի գառնութիւն դարձցին տարեքդ.
Զըրհեղեղին ելցեն գեռեր.
Սեաւ ամպ մըթին կարկըտաբեր՝
Զքեզ արասցէ անպտղաբեր.
Սոդոմացւոց հուր ծըծմբեր
Իջցէ ի գլուխդ արիւնաբեր.
Իսրայելին Աստուած Յիսուս
Զքեզ արասցէ անմանկաբեր.

Չարցէ զարեւդ ի սուր սուսեր,
Իբր յանկարծայ չիս դու հարեր.
Եւ ըզքաղաքըս քո յաւեր
Զերդ զԵրիքովըն հիմն ի վեր,
Որ զՔանանուն ըզնչեայց զազգեր՝
Յեսուաս՝ յերկրէն աւետաբեր.
Սոյն արասցէ տէրն իմ Յիսուս
Զքեզ տարապրեալ օտարաբեր...
Աւրդ ի գըժոխս իջցես ի խոր,
Քեզ անկողին մեռ.ք և ցեցեր.
Եւ նոյն հրեշտակըն մահաբեր
Սրով հատցէ զքեզ ի յազգեր:...
Մինչեւ առցէ բազմապատիկ
Ըզվրէժ արեան իմ զոր հեղեր,
Յայս առօրեայս և անցաւորս՝
Յորում ոչնիս փոքր ինչ օրեր.
Յոր հուպ եդեալ է քեզ տապար
Եւ հատանէ որպէս ծառեր:
Բայց ինչ լինիս, ով եղկելի,
Յայն ահագին օրն ահաբեր,
Որ սպանելոցն է կենաբեր,
Եւ քեզ՝ կըրկին նա մահաբեր... »:

Անշուշտ քերդողական աղատուԹեամբ և կեղ-ծեօք զրուցած է Շնորհալին այս և ասոր նման և աւելի սաստիկ տողեր. այլ իր հոգին աւելի յըս-տակ յայտնուի յետագայ միսԹարուԹեամբ և յուսադրուԹեամբ եգեսիոյ՝ առ իր կոտորեալ և կորուսեալ զաւակները, գեղեցիկ բացատրուԹեամբ.

« Բայց դուք որդիք իմ սիրելիք՝
Զէք ինձ մեռեալ, այլ կենդանիք.
Քանզի յերկրի նահատակեալք
Եւ ի յերկինըս պըսակիք.

Յաչըս մարդկան մեռեալ կարծիք
Եւ ի յայժմյս ողորմելիք,
Ահա յԱստուծոյ ձեռըս լինիք
Եւ կենդանի յուսով պահիք.
Ի հրեշտակաց այժմ երանիք.
Եւ յանմարմնոց դասըս կարգիք.
Զմահկանացու մարմին լուծիք
Եւ ղհողեղէն տուն քակեցիք,
Ահա գեղեցիկ եւ հրաշալի
Անձեռագործ շինուած ունիք...
Ի ձմերայնի վաստակեցիք,
Յանձրեւաբեր սերմանեցիք,
Զցօրեանն ի հողըն թաղեցիք.
Յորում նեխեալ անդ լուծանիք,
Եղեմնապատ սառամիք լինիք
Եւ ձիւնաթաղ ամբողջ պահիք,
Մինչ ի գարուն հողով ծածկիք,
Ամեթացեալ պարարտասջիք.
Յորժամ կենաց ցօղոյն արբջիք՝
Վտլվաղակի բուսանիցիք,
Ոլոռընդոստ վերաբերիք
Յանկարծակի վերերեւիք...։
Որ արտասուօքըն ցանեցիք՝
Յորժամ ասեն անդր երթայիք,
Խընդայք ցընծայք զուարճալից
Զորայն ի գիրկս առեալ հրճուիք...
Որ չարչարեացն ըզձեզ՝ լացեք,
Դուք խնդալից սրտիւք բերկրիք...
Դուք ի ձեռաց Տեառըն ահնչեալք
Զպարախս մեղաց կրկին առիք...
Զայս նեղուԹիւն անդր ոչ յիշէք
Զոր ՚ի մարմնի ասա տեւեցիք.
Ըզչարչարանըս մոռասջիք
Ի ի մահուանէ այլ չերկընչիք։
Մի ի յերկիր հայիք ի չար՝

Եւ զայս՝ կենայ ասէք վըճար…։
Մի՛ ոըք մեռանն ասա չարաչար՝
Լայք եւ ողբայք անյուսաբար.
Քանզի ունիմք տէր բարերար
Որ բժըշկէ զմեզ սիրաբար…։
Թէ և մեռայք այժմ ի մարմնի՝
Կեանք առ Աստուած ծածկեալ ունիք…։

Յետ մեռելոց կենդանի ճնացողաց ալ երկնաւոր յոյս տալէն ետև՝ հեղինակն նաև ժամանակեայ յոյս մը կու տայ, Թաչակրաց երկրորդ գալուստը, իբրու զի Աստուած

« Շարժէ կըրկին զազգըն Ֆրանկ՝
Անհուն հեծեալ եւ հետեւակ,
Իբր ըզծովու ալեաց կուտակ
Բարբառելով գան խիստ ու բարկ.
Ափան ծովու աւզն գունակ,
Կամ զերդ ասաեղց երկնից ի կարգ,
Լընուն զօրէն երկրի աստակ
Որպէս ըզձիւն ասրաքաստակ.
Չընչեն զերդ հողմն հիւսիսակ
Զամպըն վարեն ըզհակառակ.
Մաքրեն զաշխարհըս բովանդակ
Յանհաւատից առնել գաւառակ…։
Քրիստոնէից հանուրց ազգաց
Փրկիչ լինին յանօրինաց.
Յեկեղեցիսըն խաւարած
Յայնժամ վառի լոյս կանթեղաց…։
Յայնժամ որդիքդ իմ հեռացած
Ոըք այժմ լինէն էք բաժանած
Գայք՝ ի վերայ բարձեալ կառաց
Պալարակապ երիվարաց…։
Վերհամբառնամ զաչս ի բարձանց
Զձեզ տեսանեմ շուրջ ժողոված,

Ընդ որ խնդամ՝ եւ ցընծացայծ
Գիրկս արկանեմ զբաւարձացածս:
Եւ զտխրական զգեստս մերկացածս
Կարմիր կանաչ գոյն զգեցածս...:

Ահա խօսքերէս յայտնի է որ Շնորհալին Խաչակրաց գալուն համբաւը լսեր էր, և դեռ անոնց չհասած իր Ողբը գրեր էր. որ պէտք է ըլլայ յամին 1145 կամ 1146, Բեռնարդոսի քարոզութեան սկիզբը. թէ և յետագայ քանի մը տողով ալ կը յիշեցնէ Փռանկաց գալուն և զարևելս աշխատելուն հին աւանդութիւնը Հայոց մէջ, զոր ոմանք Մեծին Ներսէսի կամ անծանօթ Ադաւրոնի մարգարէութիւն համարին. և հիմայ առեն հասած կարծելով՝ շուտով պիտի կատարուի կ'ըսէ այս բանս.

« Զի եկն եհաս աւուրց մերոց
Զոր ասացին ամաց թըւոց,
Եւ ի սըւեալ նըշանս ի գրոց՝
Տեսաք մըտօք թէ է գալոց »:

Եթէ ի խաչակրաց անյաջող դարձէն վերջ գրած ըլլար Շնորհալի՝ ի հարկէ խօսքը ուրիշ կերպով կը յարմարէր: Ֆերդուածոյս խնդրող Ապիրատի մանկական հասակին ալ կը պահանջէ կանուխ կեկ տարի մը գրութեան, և ոչ 1149 տարին՝ յորում ոմանք կարծեն Եդեսիոյ Ողբոց յօրինելը, և յորում թերևս այսչափ աշխուժիւ չէր կըրնար երգել և ողբալ Շնորհալին. մանաւանդ որ երկրորդ անգամ Նուրէտտինի ձեռքով Եդեսիոյ առման ամենևին յիշատակ չկայ այս ողբոց մէջ. թող որ հետևեալ տարիները ուրիշ ողբալու բաներ ալ պատահեցան, զոր Շնորհալւոյ անկարելի էր լռել, և մեզ հարկ է հիմայ յիշել փոքր ի շատէ:

# Ժ.Զ.

*Թուրքք տիրեն Մարաշայ, Քեսունոյ, և այլն. — Գրիգոր Իսահատաւոր Մարաշացի, և գիրք իւր վայից. — Նահատակուրիւն Գռհարիենեանց. — Փոխադրուրիւն կաթողիկոսական սրոռոյ 'ի Հռոմկլայ։*

Յետ հարուածոց և նուաճման Եգեսիոյ՝ բնականաբար կարգն պիտի զար անոր մօտ եղած կաղնուածոց քրիստոնէից, և Ճոսլինի. որ յետ մահուան Պալատինի՝ քաշուեր էր ասոր յանձնուած եկեղեցեաց մէջ, և կարծէր ապահով ըլլալ, տեսնելով որ Նուրէտտինն ուրիշ կողմ զբաղեր է. սակայն նոր և ոչ պակաս զօրաւոր թշնամի և աշխարհակալ մ'ելաւ, զինքը բոլորովին վտանգելու և կապաելու։ Սա էր Իկոնիոյ մեծազօր սուլտանն Մասուտ, որ 30 տարիէ վեր կը տիրէր Փ. Ասիոյ միջին մասին, և Մանուէլ կայսեր հետ կռուեր էր փոփոխ բաղդիւ. յետոյ զինադուլ և հաշտութիւն ըրած՝ կայսեր խորամանկութեամբ՝ 'ի միտս Իսահակայ, որոց շատ նեղութիւն ալ տուաւ իր տապատակիչ զօրօքը, և եկեղեցին լեռնոտ և գժուար անցքերուն մէջ՝ անոնցմէ շատ մարդ կորզել տուաւ. և երբ հեռացան անոնք և բոլորովին ալ դարձան յարևմուտս՝ իրենց եկեղեցը, Մասուտ ալ անկասկած թէ 'ի ցուներց և թէ 'ի փառանկաց՝ դիմեց Եգեսիոյ կոմսութեան միացեալ տէրութեանը նուաճելու։ Այս կողմերուս ամենէն գլխաւոր և երևելի քաղաքն էր Մոռաշ կամ Գերմանիկէ, Զահան և Եփրատացիք ըսուած Նահան-

գին մայրաքաղաքն, զոր յետ մահուան Մեծ Վասլին և Փոքրին զկուեէլոն՝ գրաւեցին Փռանկք, և հիմայ Ճոսլինի կալուած էր: Սեպտեմբեր ամսոյ կիսուն յամին 1449 Մասուտ յանկարծահաս պաշարեց զսա, և չուշացաւ առնելու. վասն զի քաղաքն բաւական պահապան չունէր, Ճոսլինի սովորական անհոգութեամբ. որ աւելի իր անձին՝ քան իրեններուն ազատութիւնը և հանգիստը կը մտածէր: Ահա առիւներս Շնորհալին իր առանձնութեան մէջ Սողոմոնի Առակաց գիրքը կամ առնոր մեկնութիւն մը կ'օրինակէր, և վերջերն էր՝ երբ լսեց այս նոր կորուստը, և գրածին յիշատակարանին մէջ խառնեց զայն այլ.

« Ի ժամանակ յոյժ անբարի
Մինչ Գերմանիկն առեալ լինի,
Ժամանեցին աշխարհի գոյժ,
Քրիստոնէից գոլով անոյժ.
Թուական Հայոց հինգհարիւր ւութ
Նա եւ ութսուն ւերկուք եւ ութ ».

Յայտ է որ այս թիւերս գումարեն Շղը, որ է 1149:

Շնորհալի այսպէս համառօտիւ նշանակէ այս նշանաւոր քաղաքին կորուստը, որ մօտ ամեն քաղաքներէ աւելի Հայկական հնիք մ'առած է և պահէ մինչև ցայժմ: Եգեսիոյ ապով լցուած ինքն ուրիշներու Թողուց ոչքալ զՄարաշ: Անուանի էր այն առիւներ հօս՝ քնիկ Մարաշցի Գրիգոր վարդապետ մը Խոտպաէր անուանեալ, և նաեւ Մարաշայ մօտ հռչակաւոր Ցէսուանց-անապատ ըսուած վանքը. Թուի Թէ իր հայրենեաց պատահարէն վշտացեալ՝ ոչքական գրիչ առաւ, այլ փոխանակ զքաղաքն ոչքալու՝ ինքն իր ներքին քաղաքը կ'ոչքայ. նորաձև ոչքոց և վայից գիրք մը շարադրեց այսպիսի վերնագրաւ. « Վայթ ոչքոյ մեղուցեալ ան-

« Ձին, խոստովանաբար ասացեալ առաջի Աս-
« տուծոյ. Յանդիմանութիւն հոգւոյ և մտաց և
« մարմնոյ. Ի զգուշութիւն բարուց և յուղղութիւն
« սիսալանաց. Ի բղխումն արտասուաց, և Ի խոյ-
« տառակութիւն մեղաց և ծուլութեան. Որ էրն
« Հայկազնեան Թուաբերութեանս ՇՂԸ » (1149):
Եւ կը սկսի. « Վա՛յ քեզ, անձն իմ. ընդէր ոչ
« սկսանիս տեսանել, թէ ո՞րպէս պատրաստիս,
« և եթէ ընդ՞նչ պակասութիւն է Ի քեզ », և այլն:
Այսպէս 250 տուն վա՛յ քեզ անձն իմ կրկնելով մէկ
մէկ խղճալու և զղջալու նիւթ կ'առնու, կ'ողբայ,
կը խրատէ. երբեմն մարմնոյ երբեմն հոգւոյ կիր-
քերը և վտանգները յիշելով, երբեմն աշխարհիս
վտանգները, տառապանքը, ընդհանայնութիւնը,
և շատ հեղ օրհասը, մահը և Աստուծոյ դա-
տաստանը: Երբեմն մէկ տողով կ'սարսռեցնէ վայրը,
երբեմն երկայն էջերով, նկարագրութեամբք և
խորհրդածութեամբք. և ամենէն վերջը (ա՛ս
վայն) երկար նկարագրութիւն մը կ'ընէ օրհասա-
կանի, մահուան, Թաղման, և այլն. և ատոնց միջոց
կանգ առնելով կը կանչէ. « Եւ արդ ընդ՞նչ էիցէ
« մարդ: — Ո՛չ ինչ: — Զընդ՞նչ էիցէ մարդ: — Ո՛րդն:
« — Զընդ՞նչ էիցէ մարդ: — Աստուերք: — Զընդ՞նչ էիցէ
« մարդ: — Գաղալ և փուշն: — Զընդ՞նչ էիցէ մարդ:
« — Երազ անկայուն: — Ահա վերացաւ. ահա
« գնաց. ահա անտես եղև. ահա խաղաղացաւ:
« Ա՛յլ որ գադարեցին, և այլ որ գադարէն: Այն
« մեծ և անյաղթելին, այն առիւծն, այն առ-
« ջոն, այն բռնաւորն, այն զօրաւորն, այն բարձրն,
« այն ամենեցուն ահարկուն, քան զոչխար հե-
« զագոյն գտաւ: Քանց որ երևելին էր՝ իբրև զան-
« երեւոյթ. որ ծննեալն էր՝ որպէս զոչ ծննեալ.
« այն որ բազում կարծր էր քան զբազում՝ այժմ
« եղև իբրև զոչինչ. որ ըմբռնէրն՝ այժմ ըմբռնե-
« ցաւ, և որ կապէրն՝ այժմ կապեցաւ: Ահա ե-

« լանէ ուր տանողքն տանին. և յայնժամ կորիւ-
« ցեն ամենայն խորհուրդք նոցա, յորժամ առ-
« նուն զհոգին աստուածային յանդիմանիչքն, և
« յօդս ելանեն », և այլն[1]: Կարծուի թէ Գրիգոր

1 Այս գրոց բաւական հին ձեռագիր մը կայ քովերնիս, ուր անկից եառեւ ուրիշ նման գրուած մ'ալ կայ, յորում փոխանակ Վայից Մեղաց կրկնին. մեր օրինակին մէջ ասոր սկիզբն և վերջն պակաս ըլլալով չեմք կրնար որոշակի ըսել այլ հաւանօրէն թէ նոյն հեղինակին ըլլայ, միայն թէ աւելի ստորին ոճով գրուած է: Առջինին մէջ ալ կան շատ հասարակ կամ սովորական զրուցուածք և կրկնաբանութիւնք, այլ կան և ընտիր նկարագրական բանք և խորհրդածութիւնք բարոյականք, որոց համար կրնայ իմաստասիրական գործ մը գրած էր: — Սակաւ-դիւտ համարելով այս գիրքը, միանգամայն և բանասիրաց հաճոյ՝ հատուած մ'ալ աւելցընենք ի Մէջ Թիւ Վայից. յորում յետ յիշելոյ մարդուս խեղճուկ սկզբնաւորութիւնը՝ կը նկարագրէ՝ սկսեալ ի ծնընդենէն՝ վիճակաց խնդիրը և ծանրութիւնները. « Սրճակեաց արդանդն՝ զոր ունէր. արտաքս անկաւ (մարդ) ի կենցաղս: Զինչ ի վշտաց աղքատ գտաւ, ասա, ով մարդ: Շնչէ յօդս առաբած լեզուն: Եւ յետ այսորիկ զինչ. — Նախաձայն եղաց: Բաւական է ի նախկին օրինակացն իմանալ զկենցաղս: Անկեալ ի յերկիր տղայն՝ և նախկի ոչ ծիծաղեցաւ, այլ յանկանեղն աշխատութիւն կրեալ և լայ: Իմացաւ իսկ ի վշտացն՝ զնաւակոծեալ ծովս: Անաւ արտասուօք. ստացաւ զոր ոչ կամէր: Ի մանուկ կատարեցաւ. — երկեղ ի ծնողացն և ի դայեկացն: Պատանեակ եղև. — ի մանկավարժից տուաւ ի բանս. և հալի երկիւղիւն: Հեղգացաւ և ապտակեցաւ. արթուն եկաց և ուսաւ: Նախառաջնորդեցաւ ի կատարումն. բանական եղև ի բանս. եղոյց պատրաստութիւն. յամենայն տեսակ բանից փայլեաց. օրինօք կատարեցաւ յուսմանն: — Ի յայր փոխեցաւ տիօք. ի զինուորութիւն զինքն ետ: Սկիզբն դարձեալ մեծագոյն վշտաց. երկեղ ի յիշեանաց. զզուանք ի նենկաւոր ընկերակցաց: Բևեռի ընդ կենցաղս. կատաղի ի շահիցն. զարթնու ի դատաստանս. ի բանաստեղծութիւն փութայ. ոչ տանելով և ձգի բռնութեամբ. վաստակի ի վեր քան զզօրութիւն. ի գիշերի հոգայ. ի տուէ կանգուն կայ իբրև զստրուկ, զի կարևորացն զազատութիւն վաճառեաց: Եւ յետ այսր բազում վաստակոց հաճոյ գտաւ և պատուոյ արժանի. ի բարձրութիւն առաջ-

խնամատարէրս ալ Սիր Պաղտինի պէս (193) հզօր անձի մը համար կ'ըսէ այս խօսքերս:

Մարաչէն եաև ինչպէս կարգը կը պահանջէր՝ Մասուտ եկաւ պաշարեց զԹ'ըլպաշար բերդաւան, ուր քաշուեր էր Ճոսլին, և այս տեղս բաւական ամուր էր, դրիւք ալ շէնքերով ալ, Մարաշոյ և Եփրատ գետոյն միջոց. չկարնալով առջինին պէս դիւրաւ առնուլ, Մասուտ անոր չորս գին աւրըշ-ըլկեց, շատ գերիներ բռնեց և քշեց տարաւ իր երկիրը, Խորասան անուամբ զօրավար մը Թող-ըլով գործը առաջ տանելու: Ճոսլին այս անգամուս ալ իր ապահովութիւնը փնտռելով ելաւ բերդէն և աւելի ամրագոյն բերդ մը քաշուեցաւ Եփրատայ եզերքը. բայց Թ'ըլպաշարայ ալ օգնութիւն մ'ընել ուզելով՝ շատ մը ուտելիք ձարեց, և յանձնեց մեր կաթողիկոսի և Շնորհալւոյ երեց եղբօր Վասիլ Լչխանին, որ իր Զօրավար եղբօր

նորդութեան վերացաւ. հակառակի ընդ ազգս. զօրակա-նաց հրամայէ. իբր հիւպատոս սիրապատուի. ժողովեաց հարստութիւնս: Բայց փութայ ընդ աշխատութիւնն՝ ժա-մանակն. հատակակից եղև ընդ իշխանութեանն՝ ծերու-թիւնն: Մինչչև էր զուարճացեալ փափկութեամբն՝ գը-նաց յափշտակեալ. և մինչչև էր ժամանեալ՝ի նաւահան-գիստն՝ կրեաց զնաւաբեկութիւնն. զհետ գնայ ունայնու-թեան՝ յուսոյն, ծիծաղելով կերչացն զմահն:

Ա.յսպիսի է մարդկան կենցաղս. անհաստատուն ծով օդափուր. երազ անվստահանալի. հոսանք սահեալք. ծուխ վերացեալ, ստուերք փոփոխեալ. աչիս կուտակաց խռովեալ: Տեսանեմ զհոյլս տերպատարափացս ահագին և սոսկալի, և նաւս անհաստելի, և որք՝ի նաւին՝ խորդամբ. ահագին և վայրենացեալ է կենցաղոյս ծովս. ունայնու-թեան յոյզք՝ իբրև զալիս գոչեն, և նենգիչքն իբրև զծա-ծուկ վէմս երևեացին. թշնամիքն իբրև զշուներս պատեն. յափշտակողքն որպէս զաւազակս՝ի գարանի նստին. ծե-րութիւնն իբրև զձմեռն հասանէ. մահն իբրև ընկղմել զնաւս մերձեալ է: Տեսէր զմրրիկս. նաւապետս զքո ձմեռն. հայեաց որպէս լօղաս որ ոչ ընկղմեցուցանես զգ-կուրն քո՝ի ծովուն...: Ո՛վ մարդ, յորժամ այսչափ են ձմերունք չինուածոցն, ուր է գարունն հանգստեան»:

հետ իրեն օգնութեան եկեր էին։ Վասիլ ապահով կարծելով գործը, կամ մեծ անձնանուիրութե֊ ֆնամեաց բանակը ձգքելով՝ կ'ուզէր բերդին օգ֊ նել, բայց հետը միայն 400 կարիճ ունէր. որոնք յանկարծ պաշարուեցան բազմախումբ բանակի մը. և կռուին անօգուտ և ինքասակար ըլլալով անձնատուր եղան։ Վասլի բռնուին շատ մեծ յուզմանակ էր Մատուտեանց, վասն զի ոչ միայն անձին այլ և անոր ամրոցին պիտի տիրէին։ Այս ամրոցս էր Կարկառ բերդաւանն Եփրատ գետոյ ձախակողմը (արևմտեան), թէ ժայռերով և թէ յորձանահոս ջրերով անկասկած և անառիկ տեղ մը, ուր էր Վասլի տունն, կինն և որդիքն։ Խորասան հօն տանելով զՎասիլ իբրև գերի՝ ի֊ մացուց սիկինոյը (որ էր Հեթմեանց ցեղէն), որ եթէ չհաւանի բերդը տալ՝ պիտի սպաննէ զերի֊ կը։ Այրուսեր և իսոհեմ սիկինն՝ երդմամբ խնդրեց ՚ի բռնաւորէն որ ոչ միայն իր տէրը՝ այլ և ուրիշ բռնած գերիները անվնաս թողու. և երբ նա եր֊ դուաւ յօժարութեամբ՝ ու գերիները արձակեց տանելու ՚ի Սամոսատ, Կարկառայ գռնեին ալ բացուեցան և յանձնուեցան Խորասանայ. սա հաւատարիմ կալով խոստմանը՝ մարդու վնաս չըրաւ, և զՎասիլ ալ պատուով պահելով՝ տա֊ րաւ առ տէր իւր Մատուտ Սուլտան. սա ալ ըստ արժանեաց բռնուողին՝ մեծարանօք ընդունեցաւ, և փոխանակ Կարկառայ՝ իր սուլտանութեան մէջ Իկոնիոյ կոմսերը ուրիշ երկիրներ տուաւ անոր. ուր և Թուխ անկէ վերջը ապրած և մեռած, վասն զի պատմութիւնն ասկէ եառ լռէ անոր անունը, այլ միայն դեռ քանի մը տարի վերջ ալ Շնորհալի եպիսկոպոսին՝ իր յիշատակարանաց մէջ մեկտեղ եղբարց հետ յիշէ զինա (յամն 1151–1152), առանց այս բռնութենէն դիպուածն ակնարկելու. որով կըրնայ ալ կարծուիլ թէ քիչ ժամանակ վերջ

Մասուա ազատուելիւն առած ըլլայ Վասլի՝ ուզած կողմը երթալու, պայման դնելով որ իր թըշնամեայ ձեռնասու չըլլայ:

Ճոսլին այսպիսի կարիճ և հաւատարիմ նիզակակից ալ զրկըւելով՝ սկսաւ հաստատուն օգնական մը փնտռել, որ՝ ի հարկէ պիտի ըլլար Անտիոքայ բրինձն. արդէն այս միջոցս (1149) Ռեմոնդ՝ իր հակառակորդն ալ՝ բռնական մահուամբ մեռեր էր, և տեղն յաջորդեր գեռահասակ որդին Պեմոնդ Գ, որ յետոյ երկայն (52 տարի) իշխանութեանն առեն շատ յարաբերութիւն ունեցաւ Ռուբինեան պայազատաց հետ: Արդ Ճոսլին յԱնտիոք կ'երթար ապահովութեան ձար գտնելու, թերևս այս անգամ ալ անապահով և անզգոյշ կերպով. վասն զի իր սիեբիմ թշնամին Նուրէտտինն, ուսկից երբեմն ազատեր էր, լսես և դարանակալ դրեր էր անոր երթևեկը գիտենալու. և այս անգամ յաջողեցան բռնելու զինքը, և միայն զինքը. ըսել է որ հօս ալ ընկերներէն հեռու կը գտուէր. և տարին՝ ի Հալէպ առ Նուրէտտինն. որ բերդին մէջ բանտել տուաւ զինա, և պահել զգուշութեամբ. վասն զի այն կողմի քրիստոնէից ամենէն զվնասաւոր և մեկ հատիկ մնացեալ փառանկ իշխանն կը սեպուէր. իսկ նա ոչ այնքան՝ բանտին՝ որքան սրտին նեղութենէն հիւանդացաւ և մեռաւ շուտով: Այսպէս քիչ տարուան միջոց այն երեք տաքգլուխ և անհոգեմ Փռանկ իշխանքն Ռեմոնդ, Պաղտին և Ճոսլին, իրենց անառակութեամբ և անզգուշութիւն կորուսին կալուածնին ալ կեանքերնին ալ:

Հիմայ այս եաքինեերուն երկիրը մնաց աւար յափշտակութեան երկու բռնակալաց, Նուրէտտինի և Մասուտի: Սա յետ առնելոյ զՄարաշ և աւերելոյ զԹլպաշար, տարի մը հանգչելէն ետև՝ նորէն եկաւ այն կողմերը (1151) և Պենտակոս-

« Գրիգոր, ակն ունէր գալստեան Հոգւոյն Ա-
« տուծոյ, եկն յառաջ ասացեալ Սուլտանն Մա-
« սուա անուն, անհնարին բազմութեամբ. և՝ ի
« ձայնէ հնչման զանգակացն, և՝ ի հրաձգութենէ
« սուսերացն, և՝ ի ձօճել բազմախուռն նիզա-
« կացն՝ զմեզ զամենեսեան զահասոլ՝ ոչք էաք՝ ի
« քաղաքն Փեանոյ, առհասարակ դողայոյց. ոչք
« ահաբեկ եղեալ առ ժամայն եաոան զքաղաքն
» Փեասեն, երդումն առեալ՝ ի նմանէ և յորդւոց
« նորա: Եւ յետ ութ աւուր զանմատոյց և զան-
« առիկն, զՊեհեանի, և զինի չորրորդում աւուր՝
« զերևելին Ռապան. և ապա գնաց յերկիրն Թըլ-
« պաշար, զոր յանցեալ ամին քակեալ և աւե-
« րեալ էր », այսինքն քաղքին սահմանները.
վան զի այս անգամ ալ չկարցաւ առնուլ զԹըլ-
պաշար, ուր Ճոսլինի որդին համառուն՝ կրսերն
Ճոսլին Գ, հօրմէն աւելի քաջութեամբ, կամ իր
օգնականաց արտասանդութեամբը՝ դէմ կեցաւ. և
Մասուտ նորէն սախպուեցաւ յետ դառնալոյ,
հիւանդ ալ ըլլալով:

Այս բանս ալ կը լինի Շնորհալին՝ իր մեկ ըն-
տիր քերդուածին (Բան հաւատոյ) յիշատակա-
րանին մէջ.

ի վեց հարիւր թուականի Հայոց...
ի տարանալ Հռովմայեցւոց
եւ զօրանալ Հագարացւոց...
Մասուտ Սուլտան յիկոնացւոց
եկեալ յաշխարհ Գերմանացւոց,
Առեալ զաւանս քաղաքացիոց
Մինչ՝ ի կողմանս Եփրատացւոց:

Թլպաշար Մասուտի ձեռքէն ազատեցաւ, այլ
ոչ՝ ի թուրքաց. վան զի երբ անոր զօրքն քա-

չուեցան, Նուրէտտինեանք եկան. քաղաքացիք տարի և կէս պաշարմանէն նեղեալ՝ ատիպուեցան անձնատուր ըլլալ, կենաց ազատութեե երդմամբ պայման առած. զոր սիրապետողքն ալ շնորհեցին, և Թողուցին Փռանկաց և Հայոց որ երթան յԱնտիոք կամ ուրիշ ուզած կողմերնին: Այսպէս բոլորովին վերջացաւ Լատինաց ատացած Եդեսիոյ կոմսութիւնն, միայն քանի մը կտոր մանր բերդեր մնացեր էին, զոր կամաւ Թողուցին և քաշուեցան իրենց բնիկ երկիրը:

Մատուտի և Նուրէտտինի արժանաւոր Թուրք իշխող մ'ալ կար, Փոքր Ասիոյ հիւսիսային արևելեան կողմը. Ալիբաս կամ Ալփասլան, Սեբաստիոյ Տէնիշմէնան. — երեք ահել բռնակալք, որք Պոնտոսի ափունքէն մինչև 'ի Միջերկրականն և մինչև յԱրաբիա սիրապետէին. շատ հեղ քրիստոնէից, երբեմն ալ իրարու վախ ձգելով, մէջերնէն՝ քրիստոնէից ամենէն ահարկուն և ատող Տէնիշմէնան էր. — մէկալներուն ասպատակութենէն քիչ վերջ ինքն ալ ասպատակեց Երզընկայ և Կամխայ կողմերը և շատ աւարով դարձաւ 'ի Սեբաստիա: Այն ուրախութեան առիթը յարմար սեպեցին ոմանք ամբաստանելու զԳրիգորիոս. այսպէս անուանէին ընտանիք մը որ Հայ կոչուին, այլ ըստ անուանցն աւելի Յունահայ կամ Հայհռոմ Թուին: Հայրերնին Դաւիթ՝ առնօք գերուելով 'ի Թուրքաց՝ ինքն ալ Թուրքացեր էր իր անդրանիկ Աբև որդուն. յետ իր մահուան միւս որդիքն՝ Գոհարինէ (որոյ իգական անուն կըրնար կարծեցընել թէ Դաւթի կինն ըլլար), Ութանոս կամ Ութիկոս, Ծամիդէս կամ Ծամինդէս և Տուկիոս կամ Տնկիկ, բարեպաշտութեամբ կ'ապրէին մօրերնուն հետ: Ամբաստանութեան իրաւ մահմետականութիւնը Թողուվ քրիստոնեայ դարձողք. Ալիբաս յատեան կան-

էէց, հարցուց. Արև՝ որ յիրաւի ուրացեալ էր, փութաց պատասխանելոս, թէ Մեր պաշտածն ալ քու կրօնքդ է. և այսպէս ապրեցուց եղբայրը. բայց անոնք նորեւ յիրաւի ուրացեալ սեպելով զնոսին՝ սիրուելեամբ գարձան. և Ռաֆիկոս Թոդոց տունը՝ վանք մը քաշուեցաւ: Հիմայ Ալեքսայ Եղնկայէ գաւառէն եաև՝ նորէն մատնեցին զանոնք. որ այս անգամ ուրախուելեամբ և պնդուելեամբ գաւանեցին իրենց քրիստոնէութիւնը. և յետ չարաչար տանջանաց գլխատմամբ կատարեցան, յամին 1155 կամ 1156: Մարմինները ալ իրենց նահատակուելեան տեղը թաղուեցաւ, Սեբաստիոյ Ալևս (Գզըլ-ըրմագ) գետոյն եզերքները ձախճախուա տեղ մը: — Քանի մը տարի վերջը նոյն բանակաւ Տէնիշմէնան նահատակեց Գոհարինէի մէկ որդին ալ՝ Թէոդորոս անուամբ, որ Ս. Նշան վանքը կրօնաւորած էր. և բանտուած տեղը վանքին և քաղքին առաջնորդն՝ Գրիգոր եպիսկոպոս՝ քաջալերական թղթով զօրացուց զնա. և յետ կատարմանն մարմինը փոխագրել տուաւ 'ի նոյն վանս [1]:


1 Ասոր նահատակութեան տարին նշանակուած չէ, այլ ամսոյն օրը, յունիսի 22: Իսկ Գոհարինեանց համար կ'ըսուի ՈԳ թուականին հրոտից ամսոյն 22դ օրը. որ եթէ բուն նահատակութեան օրն է՝ կը պատշաճի յանուարի 28ին, 1156 տարւոյ. իսկ եթէ ուրիշ պատճառաւ՝ ըստ հաստատուն տօմարի հրոտից ամսոյ այն օրը դրուած է տօնն՝ կը պատշաճի յուլիսի 28ին. նահատակութեան տարին ալ 1155. այս հաւանական կ'երևի մեզ. վասն զի կ'ըսուի թէ Ալեքսա բանակած էր Ալիսայ եզերքը. և այս ամառնային եղանակի կը յարմարի: — Ազգային լրագիրը հրատարակեցին որ անցեալ տարի (1871) Սեբաստիոյ Ս. Հրեշտակապետ վանուց մօտ բլրակի մը վրայ կը յայտնուին այս Նահատակաց մարմիններուն քարուկիր գերեզմանի մը մէջ, քարեայ տախտակի մը վրայ այսպիսի արձանագրութեամբ. « Աւյս նահատակք որ կատարեցան « վասն Քրիստոսի, Ռաֆոխոս եւ Գոհարինէ, Տնկիկ եւ

Լատինաց ձեռքը մնացած բերդերուն գլխաւորն և իրենց ամուր ապաստանն էր Թլպաշարին հարաւ-արևելեան կողմը, Անթիոքի հիւսիսային արևելեան և Պիրիճիկի արևմտեան կողմը, Եփրատ գետոյն ալ արևմտեան ափը՝ հռչակաւոր Հռոմկլայ բերդն (Ռում-Գալէ), որ հնուց՝ի վեր ամրութեամբ նշանաւոր էր, թէ և չի յիշուիր՝ի պատմութեան, գոնէ այս անուամբս. զոր սովորաբար Հռոմոց ձեռքը մնալուն համար՝ այսպէս կոչուած կ'ըսեն, որ և Կլայն-Հռոմական: Տեղւոյն գլխաւոր ամրութիւնն է դիրքն. քարակտուր բլրագագաթի մ'ըլլալով, և արևելքէն լայնախոր, յորդահոս և բարձրատափ Եփրատն ունենալով, զոր անցնիլ և հօս մտնելն ամենադժար է. հիւսիսային և արևմտեան կողմէն ալ ունի գետակ մը, Մէրզպան կամ Մէրզիմէկ (Փարսման) ըսուած [1], որ՝ի հարաւոյ արևմտից գալով կը պատէ զքաղաքաբլուրը իւր ձորակով մը և կը խառնուի Եփրատ. վրան կամուրջ մը ձգուած է բերդին հաղորդելու համար. կարաւային կողմն ալ լերամբք և շինծու ամրութեամբք ապահոված էր. քարաբլրին և գետակին միջոցն պարսպէղներու Թողուած էր և քիչ բնակութեան: Բուն արուարձանն գետակէն անդին է հիւսիսի կողմը [2]. Եփրատայ դիմացի կողմն ալ շէնքեր կան, որ հիմայ

« Ծամիդէս, եւ եղան յայս տեղւոջ, ի ձեռն սուրբ վար-
« դապետին Բարսղի. Թուա. ՈԼԶ »: Եթէ հաւատարիմ է գրուածն՝ ըսել է որ իրենց նահատակութենէն 32 տարի վերջը (1187) մեզի անծանօթ Բարսեղ վարդապետ մը հօն փոխագրեր է անոնց նշխարքը:

1 Հիմայ կ'անուանեն ևս Մարղան կամ Մարսման:

2 Հիմայ Գուսպա կոչի այս տեղս և յայլազգեաց բնակեալ է: Ասկէ քանի մը տարի առաջ Հռոմկլացի այլազգի բնակչաց մեծ մասն թողլով զբերդը՝ այս կողմս փոխադրուեցան, նոր բնակութիւն մը հաստատելով Խալֆէի անուամբ:


Ճան.Ամուսատայ
Քարափար տունք
Ա.թաւարճան
Պարտէզք
Մարգուման կամ Մեջնաբերդ
Ճանապարհ Պերկրիկայ
Եփրատ
Պարտէզք
Ձանապարհ Տիմոթէի

ՀՈՄԿԼԱՅ

Հա
ինք
ոտք
՛ի Հ
եայ
քա
հան
ինչ
ոեւ
ոխր
յին
նոյ
հա
կոտ
պատ
պա
« Ը
« վ
« բ
« ո
« Յ
ոին
՛ի Հ
պայ
կան
Թա
Թո
որ
որ
Եկ
նե
ձեռ
կա
Թ

Հռոմկլայի մաս կը սեպուին: Իսկ բուն կլայն այս-
ինքն բերդն՝ այն քարաբլրին գագաթն է, իբր 360
ոտք բարձր Եփրատայ եզերքէն, հիւսիսէն դէպ
'ի հարաւ երկայնած. լայնագոյն կողմն ալ հարա-
ւայինն է, ուր հիմայ մղկիթ մը կայ. անոր մօտ
քարափոր ջրհղէղ կամ աւազան, ուր ջուր կը
հանէին բազմապատիկ քարակտուր սանդղօք, որ
ինչուան յԵփրատ կ'իջեցընեն. պատերազմի ա-
տեն ասիկայ էր պաշարեալց ջրոյ: Բերդա-
տիրոջ բնակութիւնն անառակոյս էր հիւսիսա-
յին լայն կողմը, ուր և շատ ամրութիւններ շի-
նուած են, պարսպօք և մարտկոցօք: Իսկ մեզի
համար աւելի նշանաւոր եղաւ հարաւային նեղ
կողմն, որ իբրև դար և կէս Հայոց վէհարանն ե-
ղաւ. վասն զի այս ժամանակներս, Վարդան
պատմչէն խորհրդածութեանն համեմատ՝ « Ա-
« թոռն Հայոց ջրջեալ'ի բազում վայրս, 'ի Կարմիր
« վանքն, և 'ի Շուղրն և 'ի Ծովքն՝ գնացեալ դադա-
« րէ 'ի Հռոմկլայն կոչեցեալ դղեակին, յորմէ ա-
« ռին Տաճիկք, և 'ի նոցանէ Վասիլ իշխանն Հա-
« յոց, և 'ի նմանէ առին Փռանգք »: Ասոնց յե-
տին պայազատան Ճոսլին Ի երբ բանտեալ մեռաւ
'ի Հալէպ՝ որդին Փոքր Ճոսլին Թուխ Թէ Եւրոպա
գացեր էր. այրն մայրն անձըրկած և անօգնա-
կան՝ վախնալով միանակ բնակիլ այլազգեաց մէջ,
Թէ և աեղն ամուր էր, աղաչեց Գրիգորիս կա-
թողիկոսի՝ որ տիրութիւն ընէ աեղւոյն, ինչուան
որ ինքն ալ երթայ յարևմուտք և խաւրէ որդին,
որ եթէ կ'ուզէ նսաի հօն, և թէ չէ՝ գիտցածն ընէ:
Եկաւ Ճոսլին Գ, և աեղւոյն միանակութիւնը աես-
նելով՝ սիրտ չբրաւ հօն բնակելու. այլ հօրմէն
մնացած կարասիքն առաւ, և աեղը վաճառեց մեր
կաթողիկոսին:

Հետ գՀեաե Եգեսիոյ, Մարաշայ, Քեանոյ, Թլպաշարայ և ուրիշ բերդերու նուաճումն 'ի

Թուրքաց՝ արդէն կղզեացուցեր էր զԹովք դըղեակն, ուր 25 տարիէ վեր դրուած էր հայրապետական աթոռն Հայոց, և հարկ էր նորէն ապահովագոյն տեղ մը ընդրել. որոյ համար մինչ կը մտածէին ինչուան Վրաց սահմաններըը երթալ, լսելով անոնց այն աստեն բաւական զօրանալը, ահա ըստ բաղդի գտան զՀռոմկլայ, իբրեն երկրատեղիոջ ամրագոյն ապաստանը, և հօս փոխադրեցին Աթոռը՝ յամի 1151., բոլոր իբրեն Դրան մարդիկներով և ազգականներով, պէտք եղած չէնքերը նորոգելով և շինելով, նոյնպէս ամրութիւններն ալ: Շնորհալին Բան Հաւատոյ քերդուածեան Յիշատակարանին մէջ ոչ միայն զայս յիշէ, այլ և վայելուչ նկարագրութիւն մ'ալ կ'ընէ Հռոմկլայի.

« Ի յանառիկս ամրոց հասեալ
Հռոմայական Կլայ յորջորջեալ,
Յորմէ նախնի տէրանցն ելեալ
Յահէ նեղչացըն փախուցեալ.
Ըզսա՝ կամաւ սըմին [1] տըւեալ
Լինել յաւէտ սեփականեալ:
Անդ յայսպիսւոմ ժամանակի
Դառն և դըժնեայ և անբարի,
Յորում բնակեմք յայամ ամրոցի
Ի գետապատ քարանձաւի,
Ի յԵփրատայ պարագրելի
Ող յԱգեհայ քառորդ հոսի.
Յելից կուսէ հեղիկ շարժի,
Ի միւս փոքուէ մըտիւք պատի.
Ինքս ամբարձեալ իբր ըզկըղզի,
Յաչեաց ծովուց ոչ երկընչի,
Ի մարդկանէ ոչ զարհուրի,

1 Այսինքն՝ Գրիգորիսի կաթողիկոսի:

Զի է հնարից անյաղթելի.
Զոր անօրինիչն աւետեանի՝
Տեղ պատրաստեաց ապաւինի
Սուրբ աԹոռոյս ըսքանչելի,
ի բարկուԹեան ժամանակի.
Յորում՝ նեղեմք յանօրինաց
ի յարտաքին չար գազանաց,
Եւ ոչ նըւազ՝ 'ի դըրժանաց
ի սուտանուն քրիստոնէից.
Յորոց փրկիչըն մեր կենաց
Մինչեւ ցայսօր ամբողջ պահեաց
Ողք եւ յապայն ժամանակաց
Յանձն եղիցուք նորին կամաց »:

Ուրիշ պատմչի մը [1] ըսածէն կ'երեւի որ յառաջ քան իրենց անձամբ փոխադրիլն՝ կաԹողիկոսաբանին սրբազան սպասները և աւանդները հօս ապահովեր էին մեր Պաչլաւունի հայրապետք. որք և յետոյ փոխանակ ասոր՝ Ճոպընի կնոջ և որդւոյն՝ հաւասար արժէքք տեղ տալ տուին 'ի Կիւլիկիա, զոր Թորոս Բ այն աւեններըը մեծ քաջուԹեամբ կը նուաճէր. այլ Ճոպընեանք քիչ աւենեն լաւ սեպեցին դառնալ երԹալ յարմուաք իրենց ազգականաց քով: Այս գեաուպատ և իբրև զկղզի ամբարձեալ քարանձաւն, ինչպես կ'անուանէ Շնորհալի, Հայոց Սիոնն եղաւ 142 տարի, Թէ սրբուԹեամբ և Թէ ամրուԹեամբ. և այն բազմավտղով ժամանակին մէջ, 'ի կիսոյ ԺԲ դարու ցվերջկոյս ԺԳին, յորում մեծապես յեղաշրխեցան վեց ազգք և աէրուԹիւնք, Յոյնք, Փռանկք, Թուրքք, ԹաԹարք, Հայք և Եգիպտացիք, սա անառիկ և անխուով մնաց մեր հայրապետաց խաղաղական հովուուԹեամբ, և պաշտ-

[1] Կիրակոս Պատմիչ:

պանութեամբ արքային նշխարաց Գրիգորիսեանց, Մեծի և Փոքու Վկայասիրին և Շնորհալւոյ, զորս հօս տեղաւորեց Գրիգոր Տղայ՝ յաջորդն Ներսխի, և վրանին հոյակապ եկեղեցի մը կանգնեց. որ կիսաւեր մնայ ցարդ և ուխտատեղի է Հայոց և այլազգեաց: Այլ յամին 1292 անոնք որ Նախախնամութեան Թոյլտուութիւ՝ առլի տարին զԱքքեա (բոլոր արեւմտեան քրիստոնէից յետին ապաստանարանն յարեւելս) առեր տերեր քանդելի էին, և անով Խաչակրաց և Քրանկաց գործը լմընցուցեր յարեւելս, երկրորդ տարին ալ Հայոց արքային ամրոցն առին և քանդեցին. և Աթոռն փոխադրեցաւ 'ի մայրաքաղաք Թագաւորութենն Հայոց 'ի Սիս, ուր և մնաց ցքաժանել աթոռոյն Երուսա, և մնայ ցարդ մի բաժինն: — Այլ հիմայ մեր Պահլաւունիք այսպիսի կաթողիկներէ ազատ՝ երբև յանքոյթ նաւահանգիստ մը խարխափ ձգելով, իրենց եկեղեցական և գրաւորական հոգոց կըրնային զբաղիլ, ինչպէս և ըրին:

Այլեւան մ'ալ կար հօս, ուսկից ազատիլ գրեթէ անհնար էր. այն է կլիմայն և տմառնային տաքութիւնն: Հռոմկլայ արդէն երբ լայնութեան 37 աստիճանին տակ է, ներկ տպառաժի մը վրայ. ջորս դին տաքութիւնը ցոլացուցիչ քարայերինք, Եփրատ գետ խորաձորի մէջ ընկղմած՝ չի կըրնար իր զովացուցիչ ալիւնները վեր հասցընել. գետնին երկրագնտական դիրքն ալ Մեծ Հայոց բարձրութիւնը չունի, որ նրբագոյն օդոց հոսանք վայելէ. մեր հարազատ հայրապետք ալ արդէն ձգնութեամբ ձնչեալ, և տարւօք ալ հիմայ ծերութեան խոնարհեալ, բաւական կենսական ոյժ չունէին այն բարկ արեւուն անվնաս դիմանալու. գոնէ Շնորհալւոյ քանի մ'անգամ գըրածն և կրածն՝ զայս յայտնէ իրեն համար. ինչպէս'ի սկիզբն Ընդհանրական Թղթոյն, թէ «երբև

«'ի կամաւոր բանսէ և կապանաց՝ յայսմ փօխա-
«գին փրանչոսի արդելեալք», և այլն. վերն ալ
('ի Յիշատակարանի Հաւատոյ Բանին) անուանեց
Գեռատպատ քարանձաւ. որով ոչ միայն տեղւոյն
տաքուելիւնը, այլ և նեղուելիւնը կը յայտնէ:
Թէ և ամուր և ապահով 'ի ծշնամեաց, այլ նեղ
և տաք. երկու մեծ տագնապ սրտի և մարմնոյ.
որոց՝ առ սէր իրենց ազգին և հօտին և նախնեաց
աւանդին՝ համբերեցին հայրապետք մեր, մանա-
ւանդ անոնք որ պատերազմաց առեն հանդիպե-
ցան: Թէ այսպիսի կրից Շնորհալւոյ, թէ 23 տա-
րի բնակուելեանը տեղ և յետոյ մահուանը և մա-
քուր նշխարացը պահարան ըլլալուն համար, շատ
սիրելի տեղ մ'է, և պէտք է ըլլայ ամեն Հայոց՝ այս
գեռատպատ և ոսկեզին քարանձաւս Հռոմկլայ.
և ահա իրրև երախտապարտ ճանաչումն այս բա-
նիս՝ ինքն տեղն ալ իր անունը սեփականեց Շնոր-
հալւոյ. որ և այս ու Երզնկ մականուններէն զատ՝
կոչուեցաւ և կոչուի յատկապէս Կայեղի, թէ և
իրմէ զատ իրր 10 կաթողիկոսք ալ նստան 'ի Կլայն
հանգերձ իր եղբարբը. որուն պատճառ ոչ այն-
քան իր առաջնուելիւնը կամ երկար ժամանակ
հոն բնակուելիւնն կրնայ ըլլալ, այլ իր գերա-
զանցուելիւնն քան զայլս: Եւ եթէ ուրիշներն ալ
երկար բնակեցան հօն, և մարմիններն տեղին
անոր եկեղեցւոյն, տասր միայն գերեզմանն պայծա-
ռացաւ յետ մահուն, ինչպէս վարքն ալ հռչակե-
ցաւ յառաջ քան զմահը՝ սրբուելիւամբ և գիտուե-
լիւամբ [1]: Այն քարանձաւին խորշերը՝ իրրև ձըգ-

1 Հռոմկլայի ոսկեզեայ շէնքերու և հանգամանաց վրայ
չկարնալով տեսնել և ստոյգ ծանօթուելի տալ, կ'ընծայենք
անոր դրից պատկերը, զոր շատ տարիներ առաջ նորերս
հռչակաւոր եղած Մոլդքէ մարտագէտ զօրավարն գծա-
գրեր էր, Օսմանեանց և Եգիպտացւոց պատերազմին ժա-
մանակ:

նաւար մը յանապատի ներանձնական կրթուԹիւն եւել քան զեւել զաւեցաւ արքեցաւ Ներսէս, և իբրև անզբաղաստեր փիլիսոփայ մը մենացեալ ապրաստեցաւ մտաւար և բանաւար գիւտից և գպրուԹեանց. անկէց առաջ շատ բաներ գրեր էր. այլ ոչ միայն աւելի շատ ալ այս քարիս գլուխը գըրեց, այլ և աւելի գեղեցիկ բաներ, իր գերբնաիւր պրուածները. որոյ՝ արդ ժամանակն է գաւնալ աչք մը տալ, Թողլով դարձեալ ղոմանս ալ յետոյ յիշելու ըստ կարգի ժամանակին:

## ԺԵ.

*Գասլնտիր գրուածք Շնորհալւոյ. — Բան Հաւատոյ. — Թուղթ առ Գր. Ապիրատ. — Մխուռս Որդի. — Հաւատով Խոստովանիմ:*

Ահա գրուածոց առաջինն է ժամանակաւ Բան հաւատոյ կոչած ոտանաւոր գրուածն. Շնորհալւոյ տաղերական չափովը, ուԹոտեայ, իբր 1500 տող, պէսպէս վերջյայնգերու փոփոխուԹեամբ: ՆիւԹ բանին է համառօտուԹիւն մը Քրիստոսի անօրէնուԹեանց, բոլոր վարքը և մահը ինչուան համբարձումը պատմելով. սկիզբն ամենատուրը երկրորդ գալստեան, գատաստանն և յաւիտենական հատուցմանց հաւատքը. զոր ընդունողք և ընդ նմին բարւոք գործողք՝ պիտի վայելեն յերանուԹեան.

« Բայց վայելումն Թէ զինչ է, —
Եւ ոչ մըտօք ոք հասանէ.

Անմահութիւն՝ բանըս պիտէ,
Ի անախտութիւն՝ միայն թէ է.
Ըզհարսանեաց անուն բերէ
Զոր Միածնին՝ Հայր իւր առնէ.
Եւ ինք փեսայ անվախճան է,
Եւ յաւիտեան թագաւորէ:

Շնորհալին՝ ժամանակին համար կ'իմացընէ յիշատակարանաւ մը՝ որ'ի Հռոմկլայ նոր փոխագրուած աաեն գրեր է զայս. վասն զի յետ վերոյգրեալ աստրագրութեան տեղւոյն՝ անմիջապէս կը յարէ.

Ի սմա գրեցի զիանս հաւատոյ
Ոտանաւոր տաղիս չափոյ:

Եւ զի առաջին անգամ էր որ այսպէս հաւատոյ վերջաբան վարդապետութիւնն ոտանաւոր կը գրէր երկարօրէն, և ալիսի թողուր յետնոց, կը խոշտէ որ նորօրինակ բան մը չերևի ոմանց, և կ'ըսէ.

Եւ զի ոսիւք է պարզական
Եւ ոչ բանիւ անչափական,
Մի յայս լեզուաւ պարսաւական
Բարբառեսցի անփակ բերան.
Փանզի բազումք նախ վարեցան
Այսպէս յիմաստ աստուածական.

և օրինակ կը բերէ 'ի հին օրինաց զԴաւիթ և զՍողոմոն, 'ի նոր եկեղեցւոյ

Զմեծըն Գրիգոր Աստուածաբան
Եւ սուրբ Եփրեմ աստրական:

Այս գրուածիս վերջաբան Շնորհալւոյ կենսագիրն կ'ըսէ. « Առնէր և խոստովանական գաւանութիւնս « սրբաբան աստուածաբանութեաւն Ս. Երրոր-

« դուԹիւնն և միանական աստուածուԹիւնն և
« Որդւոյ անօրէնուԹիւնն, ըստ ուղղափառ դա-
« ւանուԹեան Ս. Հարցն, նովին տպաւորափու-
« Թեամբ. յոյժ ընդունելի և հաւանական ընդ-
« հանուր եկեղեցեաց ուղղափառաց և խմաստա-
« խոհ քննողաց »:

Իսկ գրուԹեան պատճառն ալ կը յայտնէ որ էր դարձեալ՝ի խնդրոյ իր այն Ապիրատ եղբօր-որդւոյն, որոյ համար Եգեսիոյ Ոդբէն ալ շարա-դրած էր. այս անձին ուրիշ բան մ՚ալ դրած է, զոր յետոյ պիտի յիշենք. իսկ հօս հարկ կ՚ըլլայ մեզի խորհրդածել և ճանչնալ զայնպիսին՝ որ լաւ ճանչցեր էր իր հօրեղբօր մեծ հանճարը, նա ալ սիրէր զնմատատաեր Թուռնիայն, որուն ար-դեօք չէին ըլլար զինուորական կրԹուԹիւնն և կայ-սեր դրան սպասաւորուԹիւնն: Ապիրատ Շնորհալեայ կրտեր եղբօր՝ Ներսէհ կամ Զօրավար ա-նուանելոյն որդին էր, այլ աւագ եղբօր Վասլի որդիքներէն առաջ ծնած, կամ այն տեն անոր մնացեալ որդիքներէն մեծ ըլլալով՝ Շնորհալին կ՚ըսէ ատոր,

« Երիցագոյն եղբօրորդոյ
Որ Ապիրատ յորջորջելոյ,
Ըստ նախնեաց Հարցն անուանելոյ ».

այսինքն ցեղական և աշխարհիկ անուամբ Ապի-րատ կոչուէր, իսկ կրօնական կոչմամբ Գրիգոր. և որովհետև Վասլի որդին ալ նոյնպէս Գրիգոր կոչէր, և երիցուքն ալ յետոյ եկեղեցւոյ նուիրա-գան և եպիսկոպոսացան. իրարմէ որոշելու հա-մար սովորուԹիւն եղաւ տարբեր պատիկը՝ որ էր Վասլի որդին՝ Տղայ անուանել. սա է անուանի Գրիգոր Տղայն՝ անմիջական յաջորդ Շնորհալեայ, իբրև անդրանիկ եղբօր որդի. բայց Ապիրատան

Գրիգոր երկարակեաց ըլլալով յետ նորին և յետ Թոռին Վասլի տարաբաղդ Քարավիժին՝ ծեր. րութեան առեներ նստաւ յաթոռ հօրեղբարցն, եղբայրակցին և Թոռնէին, և բաղդ ունեցաւ Հա. յոց նորոգեալ թագաւորութիւն մը օրհնել և պսակել, Լատինաց եկեղեցւոյն հետ աւելի յաչք. ղատէս միաբանութիւն ընել, և ինչուան ԺԳ դա. րուն սկիզբները աեսնելով խորին ծերութեամբ հանգչիլ (1203):

Աս սա ինքն Ապիրատ գրած է Շնորհալին ո. տանաւոր նամակ մ՝ալ՝ի կ. Պոլիս, ուր գտաւէր նա այն տաեն երիտասարդ 30 ամեայ, և վինուո. րական կրթութեամբք և հրահանգօք անուանի և սիրելի կ՝ըլլար կայսեր և արքունեաց: Այլ շատ առաւել սիրելի ըլլալն իր հօրեղբօրը՝ կը յայտ. նուի ասոր բառածներէն.

« Արեգական լուսոյ ծագմանն [1]
Մէր քո՝ առ իս համանըման...
Ապիրատիդ գըրեմ զայս բան
Եղբօրորդւոյդ իմ ըղձական.
Պանծացեալդ արիական
Զիավարժից ներհըմտական.
Ի տէգ նիզակ շարժողական
Որպէս ծըղօտ մի եղեգան.
Բամեալ յահեակ կըրող վահան,
Իբըր առնձով անչէզական,
Արիութեանց պարառական
Նահանեաց քաջացըն գոլ նըման:
Տիրականիդ ընդհանրական՝
Որպէս լըսեմ՝ գու պատուական.
Նաեւ միւսոյմ սեռ արքունեան՝
ՅԱնգրոնիկեայ՝ սիրալըրական:

1 Քերդուածին առաջին տառէն կազմեն այս բառս. Ա= Ապէրօն՝ Է Տէր Ներսէս բան լփով սա:

Իսկ առ ի մէնջ հրաժարական
Ի սիրելեացըս քո բնական.
Տենչամբ սիրոյդ սըրտի տարփմամբ
Մինչ զի կիզուլ սեռոյդ յիշմամբ.
Էից վէհ երանական՝
Զքոյդ սեռութիւն քոյքըս վարկան:

Յիշեալ Անդրոնիկոսն որոյ ալ սիրելի եղած էր Ապիրատ, և զոր սեռ արքայական կոչէ Ներսէս՝ Թուխ թէ էր կայսեր Չօրեղբօրորդին, անուանին ըզբուխեամբ. որ մեր ի Թորոսի հետ կռուեցաւ (1151–2) և յաղթուեցաւ, յետոյ կայսեր դէմ ապստամբութիւն մտածելով բռնուեցաւ բանտեցաւ 'ի Կ. Պոլիս. երեք կամ չորս տարիէն (1154) բանտէն փախաւ, բայց շուտով բռնուեցաւ և աւելի զգուշութեամբ պահուեցաւ. յետ 12 տարւոյ (1165) նորէն փախաւ, Թոդոսիւն պատաւ կայսրէն, և երկրորդ անգամ ղրկուեցաւ Թորոսի դէմ (1166), ու դարձեալ յաղթուեցաւ, և նորանոր անհաւատութեամբ սէլճուկեան ամենուն՝ նորէն փախաւ, Յունաց եկեղեցւոյն նզովից տակ մնալով: Ուրիշ Անդրոնիկոս մ՝ալ կար Անգելոս անուանեալ մերձաւոր խնամի կայսեր, հարազատոյ որդիք, կըրնայ ասոր համար ալ ըլլալ Շնորհալւոյ ըսածն: Զայս ատուգէն կարևոր կ՝ըլլար այս գրուածին և Ապիրատայ կենաց Թուխ կանին համար. որ՝ եթէ առաջին Անդրոնիկոսն ընդունուէր՝ հարկ կ՝ըլլար Ապիրատայ 30 ամեայ ըլլալն ելլ 1152 Թուականին կարծել, որով և ինքը գէթ 1122ին ծնած. ապա թէ ոչ հարկ էր գրած սեպել 1165ի և 6ի միջոց, որով 1136ի ծըն. նած կ՝Ապիրատ, որ շատ ուշ է: Շնորհալի ուրիշ հաւանութեան նշան մը կու տայ՝ վերոյիշելոյ եւ աւէն յարած փափագանաց կամ հրաւիրանաց տողերովը.

« Բառել 'ի յայս վայր ամրական,
Գալով քոյին ընդ բիւրական
ՆերածուԹեամբ արքունական
Առ ՍկիւԹական ահեղ գոչման »։

որով հրաւիրանաց ամրական տեղին կը ձանչցուի Հռոմկլայ։ ուրեմն յետ 1151 գրուած է։ իսկ բիւրական, արքունական և ՍկիւԹական բառերն ալ կը յայտնեն Մանուէլ կայսեր պատրաստուԹիւն երկրորդ անգամ գալու 'ի Փ. Ասիա, ընդեմ ՍկիւԹացի Թուրքաց Իկոնիոնի և Հալպայ, որպէս և մերոյս քալ Թորոսի, որոց հետ ԹէՀ Ասպիրատն ալ եկաւ՝ չէ յայտնի։ Ասպիրատայ կաԹողիկոս նստեցուն (յամի 1195) աղէկ ծեր ըլլալն կը յիշեն պատմիչք, և ըստ այմ Հաւանագոյն կ'երևի յամին 1122 ծնած ըսել զինա։ իր հայրն ալ որ կրաեր էր քան զՇնորհալի՝ 1103–4ի միջոց ծնած պէտք է ըլլայ։

Հաւատոյ Բանին գրուԹեան կը յաջորդէ անմիջապէս

« Ի վեց հարիւր Հայոց Թուականի
Եւ յառաջին ակըսեալ նոր ամ »,

որ է ՈՒԹիւն Հայոց, (սկսեալ 'ի փետրուարի 1152 փրկչականին), աւելի ընտիր և արդարև գեղընտիր, միանգամայն և խակաշնորհ բազմաշնորհ գրուած մը, զոր մեկ բառով բացատրել և անուանելն ալ դժար է։ հատարակաց սովորուԹիւն ձարը գտած է՝ սկզբնաւորը բառերովը կոչել Յեսուս որդէ։ Այս անուն՝ անհնար է որ կարդացողն և հասկըցողն սիրտը փափուկ և հոգևոր խոր ապաւորուԹիւն մը չընէ։ Կենսագիրն համառօտիւ կը բովանդակէ. « Եարտգրեր բանս աղըեանս « նոյն արուեստիւ (տաղաչափուԹեան), սկսեալ

« 'ի նախնի հօրէն մինչ 'ի կատարած յաւիտենից
« այսմ. և ընդր 'ի նմա զմիտս և զզօրութիւն
« հնոյն և նորոյս (Կաակի). և զբովանդակ յան-
« գուածս տանցն՝ միով գծիւ յօրիներ », վերջա-
ւորելով ին վանկիւ. և այս նոյնաձայնութիւնն
միայն կրնայ պակասութիւն մ'ըլլալ այն « երկ-
« հազարեան տամբ յանգական [1] » (4000 տո-
ղով) չքնաղ քերդուածին, զոր սովորութիւնն
բաժնէ յերեք գիրս. և որոյ նիւթն և նպատակն՝
սովորաբար կարծուի թէ արձակ բան կը պահան-
ջէր, աւելի աղօթական ըլլալուին. սակայն ասոր
ալ ինքնին հեղինակն՝ ինչպէս Բանին Հաւատոյ,
պատճառ կու տայ, նախ Աստուծոյ տուրքն և
ազդեցութիւնը, որ մեկուն արձակ բանիւ, միւսոյն
չափաւ գրելու յայլոցութիւն կու տայ. երկրորդ,
չափաւ գրուածին աւելի ախորժելի ըլլալն.

« Եւ մի՛ ի յայս ոք ախտանայ,
Թէ չափաւոր բանիւ է ասայ,
Եւ արտաքին կարծի նըմայ
Որպէս և զերգն Ամբրոգիոսեայ.

1 Այս հոմաձայնութիւնը բացարձակ կամ անայլայլելի պէտք չէ իմանալ. Շնորհալին թէ ուրիշ թէ այս քերդուածոյս մէջ երբեմն անհոյնայանգ տողեր ալ կը թողու, կամաւոր և գեղեցիկ զանցառութեամբ. ինչպէս այս Աղբերգութեանս Բ Գրոց 217—220 տուները. որոց միայն երկրորդ տողերը սովորական յանգն ունենալով, տաղաչափութիւնն ալ հին հայկական տաղից ձևը կ'առնու.

« Աղբիւր կենաց, ջուր խնդրեցեր
Սամարուհւոյն՝ ի ծարաւին,
Եւ խոստացար ջուր կենդանի
Փոխանակել անցաւորին.
Շնորհեա եւ ինձ կենաց աղբիւր՝
Լցհոգեւոր սուրբ ըմպելին,
Գետահեռեալ յորովայնէ
Զառատաւուղս շնորհաց Հոգին »:

Չի եթէ սուան որ ձեւանայ
Սովա՝ այնքան գեղեցկանայ,
Քանի արդեօք վայելչանայ
Ձմարտութեան բանս որ ի մայ։
Երգոյն Հանգոյն Սողոմոնի
Սա՝ որ Երգոց երգ անուանի,
Որ զփեսային երկնաւորի
Ըզսէրն առեալ հարսին Կուսի,
Եւ կամ դաւթեանըն Սաղմոսի...
Որք վարեցան չափով բանի.
Ոչ ի յինքեանց՝ այլ ի Հոգւոյն,
Այն որ շարժէ յորըս կամի։...
Ըստ այսմ եւ ես նըկարեցի
Զներոտազական բանս ի քարտի,
Ի զուարճութիւն բանասիրի
Եւ բարեմիտ ընթերցողի »։

Այս գրուածիս թեզադիր և պատճառ՝ որչափ ալ ժամանակակցաց և մեր յետագային օգուտն էր, և յիշատակ՝ իր հարազատաց և ցեղին, որոց կը նուիրէ զսա հեղինակն՝ աւելի նիւն գորովանօք քան զայլ քերդուածսն, (որոց մէջ երկարութիւնն ալ առաջինն է), այլ բուն շարժիչ ինքնին իրեն խորազգած բաղձանքն և սիրան է, մանաւանդ թէ շնորհազարդ սրտին շարժող Ս. Հոգին։ Աւելորդ է վիճաւել այսպիսի գրուածի մը մէջ բանասիրաց խնդրած սովորական բանասաեղծութեան ձևերը, թռիչներ և գրուագներ. որովհետև սա սովորական քերդութեան ոճի և ձևի նկատում չունի. յաստուածայինս ընկճեալ ապնիւ սիրտ մը, ապնիւ լեզուաւ և ապնուագոյն զգացմամբ և բացատրութեամբ, միանգամայն և աքանչելի ճարտարութեամբ և ամփոփմամբ, այն կարճառեան տողերուն մէջ կը բովանդակէ ողբական աղօթաբանութեամբ՝ բոլոր մարդկութեան կարօտութիւնը, ցաւն և պէտքն աւ նորոգողն իր բնութեան.

« Ըզբան եւ զգործ համանգամային
Առ իս փոխեալ գիմառնական »:

Ապա (ի գրոց մէջ) այս Նորոգողն բնութեան՝ Քրիստոսի՝ անօրէնութիւնքը. և յետոյ (ի գրոց մէջ) անօրէնութեանց կատարումը՝ մահուամբ և յարութեամբ Փրկչին, նոր քաղաքավարութեան մարգկան, այսինքն նոր կենաց քրիստոնէութեան՝ կնքուելն գալստեամբ Հոգւոյն, Եկեղեցւոյ հաստատութիւնն քարոզութեամբ աւետարանի Առաքելոց և Հայրապետաց, և պայծառութիւնն՝ առաքինութեամբք դաս դաս սրբոց, մարտիրոսաց, Ճգնաւորաց, կուսանաց, և այլն. և հուսկ յետոյ՝ մարգկութեան և Աստուծոյ նախանամութեան վախճանաւն, որ է և վախճան այս աշխարհիս, և հանդերձեալ կեանք, երկրորդ անգամ գալստեամբ Քրիստոսի, ահեղ դղրդմամբ և այլայլութեամբ, որով յաջորդէ նոր և յաւիտենական աշխարհ. այսպիսի իրաց անհաւատ և անհոգ եղողաց դատապարտութեամբ, և սիրողաց և ջանացողաց՝ անապատ երանութեամբ:

Եթէ արդարև զարմանալի է Ճարտարութիւնն այսքան փոքրիկ գլխուկի մէջ ամփոփել, և « լնուլ « (ըստ կենսագրին) զմիտս և զչօրութիւն հնոյն և « նորոյս », կամ ըստ նոյն ինքն հեղինակին խորագրութեան՝ « յիշատակաւ անցելոցն իրի, նեղ « կայի և ապագայի », (որով Ա մասին մէջ կ'ամփոփէ հին կտակարանի պատմութիւնը, Բին մէջ Քրիստոսի աւետարանը, Գին մէջ անոր չարչարանքը և հետևեալքը, որ և յիրաւի մեծ հանճարոյ գործ է). որքան ևս աւելի զարմանալի և սքանչելի են խմաստքն և զրուցուածքն. յորս սիրտ հոգի և բերան՝ կարծես մէկ տեղ կը հոսեն հանդարտ և քաղցրահոսուր ներդաշնակութեամբ մը:

Աղօթական բան մ'է, ինչպէս ըսաւ կենսագիրն, քան պրոպէն յիշատակարանին հետևելով, թէ « Բանըս « գրեցաւ աղօթական ». և կատարեալ աղօթական, աղօթից ամեն տեսակն ալ'ի մի յարմարելով, որպէս զանազան գործիքներէ միաձայնեալ երաժշտութիւն մը, զրկական և խոստովանական, մաղթական և խնդրական, նուիրական և սիրական. երկու հիմնական տարերօք ձուլեալ. սրտի ցաւոց և սիրոյ, որոց մէկն ողբովքն յայտնի, միւսն երգով: Նօթօրինակ աղբիւր մը, որոյ վրայ կըրնաս զարմանալ, գո՛ւ իսկ Յակովբոս, Եղբայր Տեառն. « Մի՛թէ աղբիւր անդստին 'ի միոյ ականէ՝ բղխէ « ցՔ քաղցր և դառն ». (ձ. 11): Ա յսպիսի աղբիւր է զրկմամբ բղխեալ և սիրով եռացեալ սիրտ քաջահաւատ քրիստոնէի. այնքան յորդ և յորատակ՝ որքան աւելի ունենայ Շնորհալւոյ, Բեռնարդոսի, Լամբրոնացւոյ, Նարեկացւոյ, Փռանկիսկեանց և նմանեաց զգացմունքը: Ասոր համար ալ ինքնին հեղինակն Ողբերգութիւն կ'անուանէ այս արտաքուստ նոգեքուստ արտադրութիւնը, և աւելի բացատրութեամբ՝ « Ներանձնական հո« գւոց... Ողբումն հեծութեան սրտի, խօսք ընդ « Աստուծոյ »: Անշուշտ մեր հոգերգոլաց պարառակ Նարեկացւոյն աղօթից վերնագրին հետևեր է յայտ Շնորհալին. չէր ինչ անյարմար անուան հետևութիւնն՝ մինչ դեռ իր հոգին ալ նոյն մաքուր և հրակիր հոգւոյն ճամբէն կ'անցնէր յետ դարու և կիսոյ: Ինչպէս ձայնք ողբոց և երգոց՝ լսողներէն աւելի նախ լսողներուն կ'ազդեն, որոց արտէն և բերնէն կը բղխեն, այսպէս անտարակոյս այսքան ժամանակ այս գրքուկիս՝ ամեն զմայլմամբ կրկնողներէն աւելի՝ ինքն հեղինակն զմայլեր է. և գրեթէ նոյն տատուածարեալ դէպքմամբ՝ որով ողբերգեց՝ այս Ախոռաճայն ողբերգութիւնը, ինչպէս արժան էր զան վերակոչել՝ զոր

գաղրութեամբ Իտալացւոց քերդողահօր Աստուածային Թալերդութեան [1], նովին գրչմամբ՝ ինքնին կը խոստովանի իմն առաջի Աստուծոյ, թէ անոր չընչով և չարժմամբն են այսպիսի խօսք,

« Ոչք ոչ լինէն յառաջ եկին,
Այլ աննախանձ քո պարգևին ».

վան այնորիկ և պարկեշտ պատկառանօք և երկիւղածութեամբ կը փափագի որ ժամանակակից և յեռապայք՝ նովին ոգւով զգածեալ աղօթեն, կարդան, օրինակեն, սահման, 'ի բերան սովրին, չանալով և խնդրելով

« Ֆաջ խմանալ զնմասա բանին
Որ ամբարեալ կան ի սուին ».

և գարձեալ նովին աստուածասէր հոգւով չարժեալ՝ համարձակի և վկայէ, որ այսպիսի աղօթական և ողբերգական բանս է

..... Սիրոյն տրտրչական՝
Որ սերմանեալ ի մեզ բնական՝
Սա զարթուցիչ ներբուսական,
Հասող յաճուն արդիւնական.
Զհոգին մըթին նըսեմական
Զանկեալ ի հող այս նիւթական՝

1 Տանդէի Divina Commedia. — Հ. Վ իլլոդ փառանք Յիսուսեան քարոզիչն, որ շատ լաւ սովրեր էր հայերէն, անցեալ դարուն սկիզբը, համառօտ գաւազանագրութեան մը մէջ այսպէս կ'ըսէ հայ լեզուով Շնորհալւոյ գործոյն համար. « Սա ոտանաւոր տառիւք գրեաց զՅիսուս—Որդի « կոչեալ երկնաշունչ գիրքն ». իսկ լատիներէն գրութեան մէջ կոչէ զնոյն՝ ապոստոլային մատեան. Scripsit carmine librum planè divinum, cujus titulus *Jesus-Filius*.

Սա փոփոխէ լոյս պարզական,
Խառնէ ի գունդն անմարմնական.
Զմիաս անմաքուր աշխարհական՝
Որ ըստ ծովու ալեաց ծըփման,
Սա վերբերէ հըրոյ նըման
Որպէս բնութիւնն է վերնական.
Զանձըն զգածեալ եւ զհոգական
Ի պատճառէ լինչ տրտմական՝
Սա ներգործէ ուրախական
Ի թախծութեանցըն հիւթական:
Եւ որք արբեալքն են թմբրական
Ըմպոլք գինւոյն յիմարական՝
Սովաւ զարթնուն և զգաստանան
Թէ ընթեռնուն՝ մըտաւռական:
Որք Աստուծոյ տեսոյն բաղձան
Գերագունին լուսոյ ցանկան՝
Սորին թեւովք վերասլանան
Մերձին ի տիպն անտեսական,
Եւ զփոքրագոյն անձըն մարդկան՝
Որ է բնութիւն ծառայական,
Անտանելւոյն և տիրական
Բնութեան՝ առնէ սա օթարան:

Աքսպիսի կարևոր հոգևոր օգտի համար՝ յանձն առեր էր երանելին ոչ սակաւ աշխատիլ, ջանալով՝

« Սկիզբն ի հօրէն մեր նախնական
Մինչ ի վերջին դարուս վախճան »,

հին և նոր կտակարանաց գէպքերն այսու կերպով ամփոփել.

« Վասն այսորիկ տաժանեցայ
Պըրել չափով ըղբանս ի սմայ »:

Ապա և արժանապէս կը փափագի՝ որ այս գրքով

ամեն աղօթողի հետ ինքն իսկ Հեղինակին ալ միշտ աղօթակից դրուի.

« Եւ որք ինեւ եւ կամ յետ իմ
Այսու բանիւ քեզ պաղատանին,
Համարեսցես միշտ ընդ նոսին
Զիս ըզնեռսես՝ մաղթել սովին ».

և վերջապէս, յետ իր հարազատաց և մերձաւորաց, զսա Թողու և իր Հոգւոյն յիշատակ և կըատակ աղօրմութեան.

« Եւ առ հոգիս իմ յաւանդին,
Եւ ի մարմինս իմ տապանին՝
Բարեաց ազդումն ի քէն լիցին,
Եւ ցընծացեալըք կայտառեսցին »:

Ցիշեցի առաջ որ այս տոփերիս մէջ խնդրելու էի գիւցազներգակ քերդողաց բանաստեղծական հնարքներ և զարդեր. բայց դեռ ինքնին այս պարզութեան մէջ ալ ունի իր յաջողակ հնարագիտութիւնը, վայելչաբանութիւնը, և տեղ տեղ բանաստեղծական զրուցուածք. միով բանիւ նոր ինն տեսակ Դրախտ կորուսեալ է սա, հինգ գար առաջ քան զՄիլտան հանճարեալ. յորում ոչ Ադամայ պատուիրանազանցութիւնն միայն՝ այլ և անոր բոլոր սերնդեան յանցանքը և խեղճութիւնը՝ ինքն իր վրան առնելով հեղինակն, կամ զինքն անձնաւորելով իբրև մեղապարտ՝ փոխանակ ամենեցուն կ'ողբայ և կ'աղօթէ Աստուծոյ գթութեանը և Քրիստոսի կենագործութեանը, ինչպես վերն ըսինք: Եւ յետ մաղթելու Փրկչին անօրէնութեանց և Հոգւոյն սրբոյ շնորհաց իրեն օգնական, կը մաղթէ նաև սրբոց բարեխոսութիւնը, սկսեալ ի Ս. Աստուածածնէ, Առաքե-

լոց, աշակերտաց, հայրապետաց, և մանաւանդ մարտիրոսաց, յիշելով ասոնց պէս պէս չարչարանքները և մերձեցընելով իր հոգւոյն. յետոյ և Ճգնաւորաց և ամենայն առաքինեաց բարեգործութեանց փափագի հաղորդ ըլլալ կամ հետևող. և թէ չի կրնար անոնցմէ յառաջադիմաց հասանելը, գոնէ, կ'ըսէ, զիս

« Արժանացո՛ յոյժ խոնարհին,
Քան ըզբնաւից Թերեւս յետին.
Միայն ի Թիւս օգեաց դասին
Կացո եւ զիս յաջակողմին,
Եւ լըսեցո ըզպընծալին
Ջերանաւէտ ձայնըն քոյին »:

Այս ըսելով բնաբար կ'անցնի 'ի յիշատակ վերջին դատաստանի և հատուցման գործոց ամենայն մարդկան. և այն տիեզերաց վերջին ահեղ տեսարանն այնպէս իմն կը բացուի մտաց առջև՝ որ յիբրեւ սաստիկ զգածմամբ և անշուշտ ոչ առանց դողդըղալու կ'աւարտէ ողբերգութիւնը, ողբերգութեանց վերջին տեսարանին վայել սրտառուչ և ազդու. ուր՝ ոչ ոք կրնայ ժխտել Թէ հեղինակին յափշտակուած կամ վառուած ջըլլայ, և գերազանցած սովորական չափէ վեր. ինչպէս որ չի ալ կրնար ջըզգածուիլ նոյն իսկ ընթերցողն՝ երբ այս մեր հնացեալ և բազմազբաղ աշխարհն ալ վերջապէս իբրև օրհասական ներկայանայ.

« Յորժամ տարերքըս դըղըրդին,
Հաստատութիւնքըն սասանին,
Իբր ըզծովու կոհակք կուտին
Ի յեռանգանըն կաթսային.
Լայնատարած դողայ գետին,
Ի թանձրութեանց հիմանց չարժին.

Լերինք հիմամբըք զարհուրին,
Եւ ուժգնակի բախմամբ թընդին.
Կարծըր բնութիւնք վիմայ հալին
Եւ ամենայն նիւթք հրդեհին.
Մինչ գետք հրեղէնք յորդահոսին
Իբր ըզհեղեղ ջուրց ծաւալին.
Հողմով հանդերձ սաստիւ հընչեն
Եւ միգախառըն մըրմըռին.
Խըրթնահայեաց գիմօք վառին
Եւս թափանցիկ վայրաբերին.
Իբր ըզաերեւս մի բոլբոքին
Բնութիւնք ամեն հողեղինին.
Բըլուրք լերամբըք հալեացին
Եւ գաշտաձեւ աշխարհք լինին.
Ծովու ալիքըն ցամաքին
Եւ կենդանիք նորա նուազին.
Յորժամ բարբառքըն նըւագին,
Փողըն գոչէ Գաբրիէլին
Յանկարծակի մէջ գիշերին՝
Ի յեղակարծ ժամանակին՝»:

Կիրթ և հմուտ ընթերցողք կըրնան դատել թէ ո՛ր և է վսեմական քերդող մը կըրնա՞ր աւելի վայելուչ և ազդու կերպով նկարագրել այն լայնատարած գետնին դողը, իր թանձր յատակին քակտուիլը, լերանց՝ ի հիմանց զարհուրիլը, և ամենայն տարերաց հողմով հըլոտ և միգով մրմըռիլը և խրթնահայեաց գիմօք վառիլ բոլբոքիլն և ապա աերևի մը պէս թօթափիլը:

Մեծ ապերախտութիւն առ հեղինակն համարէի՝ այսպիսի չքնաղ գործոյ, այս աստուածային Ողբերգութեան վրայ քիչ խօսքով անցնիլը. այլ ոչ պակաս ապերախտութիւն առ ազգն իմ համարիմ՝ շատ ալ խօսիլն անոր վրայ, որ պէտք էր ըլլալ և է ծանօթ իրեն, և յետ իր ժամագրոց և

Սաղմոսին, Նարեկայ հետ կը գործածէ զՅիսուս—Որդին. որով և ոչ միայն շատ ձեռագիր օրինակք գտուին այս գրուածիս, այլ և հայերէն տպագրութեանց առաջին երախայրեաց մէկն եղած է[1]:

1 Ադարև հայերէն տպագրութեան երախայրեաց մէկն կամ գլխաւորն կըրնայ ըսուիլ Յիսուս—Որդին: Այս գրաւոր արուեստն ԺՉ դարուն մէջ (1565) 'ի Վենետիկ, 'ի Հռովմ և 'ի Կ. Պոլիս սկզբնաւորելէն ետև, Եւրոպիոյ քանի մը քաղաքաց մէջ ալ մէկ մէկ հայերէն գործ ընծայած է ԺԻ դարուն սկիզբները. այլ ամեն տեղ ալ դարձեալ խափանուած կ'երևի շատ տարիներ. և երկրորդ անգամ դարձեալ Վենետիկ առաջին կ'ըլլայ Հայերէն տպագրութեան, շնորհիւ բազմաթիւ Հայ վաճառականաց տեղւոյն. և առաջին պատուղ յետ Սաղմոսին՝ 'ի լոյս կ'ընծայէ յամի 1643 'ի ձեռն Յովհաննու Աղկիւրացւոյ՝ Յիսուս—Որդէ գիրքը, վայելուչ գրով և տպով, և նշանաւոր պատկերաւ մը 'ի ճակատուն. զոր համանման ընդօրինակել տալով մենք ալ հօս կը ներկայացընենք, 'ի ցոյց մեր 230 տարուան հնութեամբ տպագրեալ գրքի մը, և այսպիսի գրքի, միանգամայն և նշանական կերպարանօք պատկերին, որ բաւական ճարտարութեամբ ալ պղնձագծեալ է. իսկ թէ զո՞վ կերպարանէ, զՇնորհալի՞ թէ զտըպագրողն, թէ ուրիշ մը՝ չեմք գիտեր: Բայց նոյն պատկերը գրեթէ անփոփոխ նորէն փորագրուած է իբր 20 տարի ետև ալ, յամի 1660ին, և Յիսուս—Որդւոյ նոր տպագրութեան մը ճակատը դրուած է, դարձեալ 'ի Վենետիկ քաղաքի, այլ ուրիշ տպագրատուն մը: Այս ետքի տարիս՝ (1660) Հոլանտայի մայրաքաղաքն (Ամստերտամ) ալ իր Հայ վաճառականաց և մեծաջան Ոսկան Վարդապետի կանխիկ արդեամբք՝ ընծայեց իր հայերէն տպագրութեանց անդրանիկը, և այն ալ նմանապէս եղաւ Յիսուս—Որդի մը, պատկերազարդ: Մարսիլիոյ Հայոց արդիւնաւոր տպագրանոցն ալ ընծայած է Յիսուս—Որդի մը 'ի սկիզբն ԺԸ դարու (1702): Իսկ Կ. Պոլսի բազմաթիւ տպագրութիւնները Ներէն մեզի ծանօթ հնագոյնն է 1724 տարւոյն 'ի տպագրատան Աստուածատրոյ. 1746ին երկու տարբեր տպագրութիւնք եղած են 'ի Կ. Պոլիս: Ընդկաց հեռաւոր Հայ գաղթականք ալ անցեալ դարուն վերջերը ընծայեցին տըպագրութիւն մը 'ի Մատրաս, յամի 1792. ինչպէս անոնց մէ առաջ ռուսաբնակ Հայք 'ի Բեդրպուրկ, յամի 1785: Կը թողունք յիշել նորագոյն տպագրութիւնները, որոց մէջ ընտրելագոյնն է Ս. Ղազարու Մխիթարեանց տպա-

թէ գրուածին արժէքով և թէ հասարակաց առ ձեռն և պիտանի ընելու դիտմամբ՝ Շնորհալին յետ այսպիսի գործոյ մը, ինքն իրեն յայլեց և գերազանցեց ուրիշ աղօթական արտադրութեամբ մը, և տարբեր ոճով: Փափագելով և պարտք համարելով՝ իր ստուածային սիրով վառուած սրտին պէս մերձաւորաց և համօրէն ազգայնոց սիրտն ալ վառել առ աղբիւրն սիրոյ, աւելի կարճ և դիւրաւելի աղօթք մը հարկաւոր սեպեց, բնական արձակ բանիւ. աղօթք մը կամ խօսք ընդ Աստուծոյ, յորում բովանդակի քրիստոնէին ամենայն կարևոր դաւանութիւնն, խընդիրն, պէտքն և խղճն, արտասուքն ալ սէրն ալ. և ահա ըղնեց հոգեսիրտ աղբիւրէն՝ ամենայն Հայոց քաջածանօթ հրաշալի Հաւատով խոստովանիմն, որ Յիսուս Որդւոյ պէս իր սկզբնաւորը բառերով կ'անուանի: 24 տուն բան, 24 անգին ակունք գըրաւոր և հոգևոր. անբաւ արժէքիւք իր չափաւորութեան մէջ. աւազամեծար գործ մ'ալ հեղինակին աւազ գործոց մէջ, և ամենայն քրիստոնէական աղօթից նախաշարին գասակից: Ոմանց թուած է թէ այսպիսի սուրբ հայրապետաց արժանի վսեմական գլուխգործոցք՝ հնադոյն աղբերէ մը յառաջ եկած ըլլայ, և Ս. Եփրեմի սքանչելի սրտէն և գրչէն ցայտած. այսինքն թէ ասոր գըրած աղօթից խմաստներէն ներշնչեալ՝ գրած ըլլայ մերս Ներսէս: Այս բանիս ոչ զարմանք պէտք է և ոչ ընդդիմութիւն. երևելի բանաստեղծք անգամ բանաստեղծից գրուածէն ներշնչեալ կամ վառեալ՝ նոր և սեփական շնորհօք արտադրու-

գրանոցին, յամի 1830, հեղինակին բոլոր տաղաչափական գործերովը մէկ տեղ, բաց յՈղբոցն Եդեսիոյ: Վերջ յիշեալ տպագրութեանց մէջ ալ կան Շնորհալւոյ քանի մը քերդուածք, բայց ոչ այնչափ որչափ այս հատի մեր տպագրութեան մէջ:

Թիւններ կ'ընեն. ինչո՞ւ Եփրեմք, Գրիգորք և Ներսէսք ալ իրարմէ չարձարծուին, և նոր լոյս նոր բոց չարձրկեն: Բայց Թէ ո՛րքան ուրիշէ լոյս և կայծ առած է Ներսէս այս աղօթից մէջ՝ աւելորդ համարիմ քննել. իր սիրտն այնքան վառ և պայծառ էր, այնքան լցեալ տուրբ խնասաներով և ըղձերով, որ կարծեմ Թէ երբ մտածեց Հաստատակաց քրիստոնէից համար յարմարագոյն աղօթք մը գրել՝ շուտով մ'արտադրեց. գուցէ մէկ գըրչութեամբ մէկ օրուան մէջ, առանց ուրիշ լոյս ուզելու՝ բաց 'ի Աչմարիա լուսոյն Քրիստոսէ: Թերևս փափաքէր որ Թէ հնար է՝ անով օրուան 24 ժամուց իւրաքանչիւրին մէկ մէկ տուն աղօթէին հաւատացեալք. այլ զի և ինքն գիտէր որ խիստ քիչերու կարելի է իրեն պէս հակել գիշեր ու ցորեկ, կը խրատէ յիշատակարան կամ պատուիրագիր մ'ալ գրելով աղօթից հետ, որ ով որ կըրնայ օրն հինգ անգամ ըսէ այս աղօթքս, կամ չորս անգամ, կամ առտու, կէսօր և իրիկուն. և եթէ մէկին չկարենայ նաև երեք անգամ այս կերպով ներկայանալ առ Աստուած, գոնէ օրն անգամ մ'աղօթէ զայս, կամ գոնէ քանի մը տուն՝ բերան սովրելով, և եկեղեցւոյ բոլոր օրական աղօթից կամ ժամատացութեան տեղ բռնէ. անոր համար վերնագիրն կ'ըսէ. « Աղօթք իւրաքանչիւր « անձին հաւատացելոյ »: Եւ իբրև այսպէս հաստարակաց հաւատացելոց յարմար և կարևոր՝ մեր բուն սրբազան Հայաստանեայց աղօթից գրքին կարգը անցաւ, որ է ժամագիրքն. յորում առաւօտեան կը գրուի յետ ամենայն աղօթից, 'ի Հանգստեան ժամու. իբրև գուշակ ակամայ փակման սրտի հարկիւ քնոյ, որ և ըլլայ նախագրունք անոր բացմանն 'ի ծագել նորոյ աւուր: Յայտ է ուրեմն որ այս չքնաղ տիփերս աւելի քան զՅիսուս որդի և քան զամենայն աղօթական բանս Հայոց՝ ծաւա-

լեալ է մեր ազգին մէջ, և Շնորհալին բաւական յաջողած է յայտ փափագն. և թերևս աւելի քան զփափագն և զկարծիս, ասով՝ որ իբրև առանձնական աղօթք ամեն ազգային աղօթքէ ընդհանուր եղած է, և ամեն հայ հոգեխօսներէ աւելի ինքն է մշանջենաւոր խօսնակ մը՝ ի մէջ իր եկեղեցւոյն և ազգայնոց սրտից: Նա մանաւանդ՝ այս հրաշալի աղօթքս՝ ազգային սահմաններէ անդին անցեր է, և թերևս քան զամենայն ազգաց առանձնական աղօթաբանութիւնս. որովհետև իրաճանաչ և երախտագէտ ազգայինք և բանասէրք այս գարուս սկիզբէն վեր Ասիոյ և Եւրոպիոյ գրեթէ ամեն գլխաւոր լեզուօք (իբրև 36) թարգմաններ և հազարաւոր օրինակ սփռեր են. և եթէ շատ բանասէրք և հետաքննիչք իբրև բազմապատիկ լեզուաց հաւաքուածն կը վինաւեն այս գրքոյկս, ոչ սակաւք ալ հեղինակին բանից վըայ աքանչանալով կ'ընդունին [1]:

1 Եւրոպական լեզուաց մէջ լատինն և իտալացին նախ թարգմանած են այս աղօթքս, և իրենց ուրիշ աղօթից հետ տպագրած շատ հեղ: Յամին 1690 'ի Բատուա տպագրած է զայն հայերէն և իտալերէն՝ Մէրտինի արքեպիսկոպոսն Տիմոթէոս Գառնուկ, որ պանդխտեր յիտալիա: Իբրև դար մը վերջը (1780) 'ի Լոնտրա տպագրած է Հաւատոյն չորս լեզուով, հայ, լատին, փռանկ և անգղիարէն. որոց վրայ յունարէն և թուրքարէն ալ աւելցընելով տպագրեցաւ դարուս սկիզբը՝ 'ի վանս մեր Մխիթարեանց 'ի Ս. Ղազար. անկէ ետև եօթն անգամ ալ՝ յաւելմամբ նորանոր թարգմանութեանց, մինչև վերջին և նոր տպագրութիւնն այս տարի (1873) կ'ըլլայ 36 լեզուօք. որք են.

| | | |
|---|---|---|
| Հայ | Բորդոգալ | Կրեներանտ |
| Յոյն | Գերման | Անգլիացի |
| Լատին | Հոլանտ | Իռլանտ |
| Իտալ | Շուետ | Կելտ |
| Փռանկ | Դանիացի | Վլահ |
| Սպանիացի | Իսլանտ | Ռուս |

Ոչ միայն Յիսուս որդւոյ հետ զուգակցութիւնն հարկաւորեց զմեզ այս աեղ նշանակելու Հաւատով աղօթից երկասիրութիւնը, այլ զի և ոմանք նոյն իսկ այս ժամանակս գրուածք կարծեն. թէ և մեզ հաւանական երևէր աւելի ուշ գրելն, բայց յառաջ քան զկաթողիկոսութիւնը. որովհետև յառաջաբանին խրատին մէջ կը յիշեցընէ «զԳրի-
«գորիոս կաթողիկոս Հայոց, և զեղբայր նորին
«զաէր Ներսէս՝ զաղօթից յօրինողն՝ յիշեցէք՝ի
«Քրիստոս». մանաւանդ հոգով կը պատուիրէ
ալ որ զգուշութեամբ օրինակեն և մինաւ գրչաց
օրինակել ասն, «զի մի այլ և այլ, այլ հաւա-
«սարք լինիցին ամենայնքն՝ ուր և գրեսցին. և
«ախմարքն՝ի գիրս՝ ուղիղ գիտողացն ասցեն գը-
«րել, զի ուղղորդ լինիցի»: Շնորհալւոյն գլխա-
ւոր նպատակն էր այսպիսի ախմարաց և սխա-
լաց՝ աղօթք սովրեցընելն. «վասն այդր պատ-
«ճառի, կ'ըսէ, արարաք զաղօթս զայսոսիկ պարզ
«և յատակ բանիւ վասն ախմարաց գիւրահաս
«լինելոյ յաղօթեն իւրեանց»: Սակայն պար-
զութեան և յատակութեանն հետ անպակաս ու-
նի լեզուին շնորհքն, ինչպէս և խմաստից. աւելի
պարզ և ասմկականի մօտ է այս նախադրեալ
խրատն, որ և ոճով զրուցուածքին քիչ մը տար-
բերի հեղինակին ուրիշ գրուածներէն, աւելի ան-
րաբար և յանդիմանական կերպ մ'ունենալով. և
թէ հատուածակինք ըսելու՝ քիչ մը նեղասրտալ
վասն անհոգութեան ոմանց, որ կամ ժամանակ
կամ կարողութիւն չունինք կ'ըսէին բերնուց ա-

| | | |
|---|---|---|
| Լեհ | Պարսիկ | Եթովպացի |
| Մերով | Արաբ | Մալդացի |
| Շկլաւեն | Հրէաբէն | Մալացի |
| Մաճառ | Ասորի | Պիրմեն |
| Վրացի | Քաղդէացի | Պենկալ |
| Թուրք | Չին | Սանսկրիա: |

վրէլու աղօթքներ, և սակայն « զսաստանայական
« երգան բազում փուճով ուսանին ». Մահմե-
տականք, կ'ըսէ, ինչուան պատերազմի ատեն ալ
իրենց օրինագրեալ աղօթքները չեն խափաներ,
« իսկ մեր Ժողովուրդքս արտաքոյ աղօթից տեղ-
« ւոյ՝ և ոչ քնաւ յիշեն զանուն Աստուծոյ...
« այլ սիրեն ղդատարկաբանութիւն՝ քան զա-
« ղօթան ». Եկեղեցւոյ մէջ կեցուածքնին ալ կը
մեղադրէ, վասն զի « կամ փակեալ բերանով
« կանգնին, կամ զրուցատրութիւնս առնեն ընդ
« միմեանս »[1]: Վերջապէս, Հաւատով խոստովա-
նիմ աղօթից պանչելի հանդարտութեան քով
այս նախադրութիւնս քիչ մը խռովեալ կ'երևի,
թէ և ըլլայ իրաւամբք տուած պատճառներուն,
կամ իր իսկ կրած վնասց՝ յոգին և 'ի մարմին:

Հաւատով խոստովանիմ սկզբնաւորութեամբ
կարճ աղօթք մ'ալ գտուի, մակագրեալ՝ « Տեառն
« Ներսէսի Կլայեցւոյ Խոստովանութիւն հաւա-
« տոյ՝ ամենայն աւուր և 'ի ժամ վախճանին ».

1 Պատկառանօք պէտք է լսել Շնորհալւոյ մեղադրու-
թիւնը, այլ և չմոռնալ ժամանակին վրդովմունքը, զոր
յիշեցինք (Գլ. Ը, ԺԵ, ԺԶ). և զոր պիտի յիշեմք (Գլ. Ի),
որք սրտից վրայ ալ մեծ ազդեցութիւն ունին: Երբ յետոյ
Հայոց քաղաքական և եկեղեցական վարչութիւնքն վա-
յելչապես հաստատուեցան՝ բարուց բարեկարգութիւնն
ալ զարգացաւ: Շնորհալիէն 110 տարի վերջ Լատին կրօ-
նաւոր մը (Պուրքարտ) իր նշանաւոր Պանդխտութեան
մէջ՝ Հայոց Թագաւորին (Գ Լեւոնի) և կաթողիկոսին ապա-
րանքն ալ շաբաթներով բնակելով, և ազգին սովորութիւնը
և բարքը հետաքննօրէն դիտելով, շատ և շատ գովէ անոնց
ջերմեռանդութիւնը. « Շատ բարեպաշտիկ են, կ'ըսէ, յե-
կեղեցիս, թէ կղերիկոսք և թէ աշխարհականք. և ուրիշ
բան չեն ըներ հօն՝ բայց եթէ աղօթել կամ երգել, կամ
այն բաները ընել՝ զոր իրաւապէս պէտք է ընել: Ոչ երբեք
տեսանք մէկը յեկեղեցին՝ որ ծիծաղի կամ ցուփ կենայ:...
Դեռ շատ բան տեսայ այս երկրիս մէջ՝ թէ աշխարհակա-
նաց վրայ և թէ եկեղեցականաց և կրօնաւորաց, արժանի
օրինակ ընծայուելու, որ մեր երկրին մէջ հազիւ թէ հա-
ւատալի կարծուին »:

նախ դաւանելով « Հաւատով խոստովանիմ զքեզ,
« ամենասուրբ Երրորդութիւն անմահ, Հայր և
« Որդի և Ս. Հոգի ». ապա ջորս տուն բան՝ իւրա-
քանչիւր սկսանելով, « Հաւատամ և խոստովա-
« նիմ զքեզ Հայր սուրբ, Աստուած Հշմարիտ. —
« Հաւատամ և խոստովանիմ զքեզ, Տէր Յիսուս
« Քրիստոս, որդի Աստուծոյ, Աստուած Հշմա-
« րիտ. — Հաւատամ և խոստովանիմ զքեզ Հո-
« գի սուրբ, Աստուած Հշմարիտ. — Հաւա-
« տամ և խոստովանիմ զքեզ, ամենասուրբ Եր-
« րորդութիւն »: Ինչպէս կրնայ գուշակուիլ՝ միոյ
միոյ յերից անձանց աստուածութեան պատշաճ
դաւանութիւն է ըստ առանձնական յատկու-
թեանցն. և չորրորդ տումբ՝ գարձեալ բովանդա-
կութիւն նոյն խմաստից, համառօտ, յատակ և
բացայայտ:

Այն գրոց մէջ ուր այս Հաւատոյ խոստովա-
նութիւնս գտուի՝ անմիջապէս վերջը գրուած է և
« Հաւատը, զոր Սարկաւագն Ի ծունկս անկեալ
« ասէ », քահանայ ձեռնադրուելու առեն. և
աւելի համառօտ և աւելի որոշ դաւանութիւն
մ'է ամենասուրբ Երրորդութեան առանձնաւո-
րութեանց. արժանաւոր բան մեր Հերինակին,
թէ և անունն վերագրեալ չէ: Նշանակութեան
ալ արժանի համարիմ մեր ազգին կրօնական դա-
ւանութեան աշխարհածանօթ խնդրոյն վրայօք
հօս ըսածը, զոր Շնորհալւոյ արգէն ծանօթ բա-
նից կարգը յաւելլի է. « Ոչ վասն մարմնոյն՝ թանձ-
« րացեալ աստուածութիւնն (Քրիստոսի), և ոչ
« յաղագս աստուածութեանն՝ առաչօք եղեալ
« մարմինն. այլ՝ Աստուած և մարդ, մարդ և Ած.
« յերկուց բնութեանց միաւորեալ անձառ խառ-
« նմամբ: Բնութիւնքն՝ տեսութեամբ մտածու-
« թեամբ՝ երկու, միաւորութեամբ մի. ոչ լոկ մի,
« այլ միացեալ յերկուց անշփոթ խառնմամբ »:

## ԺԸ.

*Այլևայլ Երկրորդական գրուածք. — Յաղագս Երկնից գաբրուց. — Մխիթար Հերացի. — Մեկնութիւն և. չափաւ յաբրահառութիւն Ներքոյի Խոսիւ Դաւթի Անյաղթի. — Վարդան Վդ. Հաղբատացի. — Մեկնութիւնք իմաստասիրական բանից. — Աստիճանք Աղգաբանութեան. — Քանի մը բարգմանութիւնք. — Վկայաբանութիւն Ս. Սարգսի։*

Յետ այս գլխաւոր և գասընտիր գրուածոց՝ որ ժան համարիմ յիշատակել հօս Շնորհալւոյ քանի մ՚ուրիշ գրուածներ ալ, որք եթէ ասոնց պէս ՚ի գլուխ գործոց չանցան, սակայն գործեալ ընտիր և գեղեցիկ են, և որոնց գրութեան Թուականն անյայտ ըլլալով՝ բոլորն ալ մեկտեղ կը յիշեմք, յառաջ քան զկաթողիկոսութիւն հեղինակին. Թողլով յետ այնր յիշելու ինչ որ յայտնապէս ՚ի կաթողիկոսութեան ժամանակը գրած է։ Արդ ասոնց մէջ են երկու գեղեցիկ քերդուածք, այլևայլ ոճով, երկուքն ալ ՚ի խնդրոյ բարեկամաց գրուած. մէկն բոլորովին իր մտաց ծնունդ, որ է Յաղագս Երկնից և գրդռոց նոցին. միւսն Դաւթի Անյաղթի գրած խաչի Ճառին յաղագս Թութիւն։ Առաջինն 200 տող է 12ոտեան, բոլոր ան յանգով աւարտած, և առանց շատ բանաստեղծական Թռչանաց՝ շատ վայելուչ, կոկ և շնորհալի գրուած մը. և Թէ ոչ խօսքերն՝ այլ խօսքին աղբիւրն կամ պիտան ինքնին բանաստեղծա-

կան է. Եգեսիոյ ոդոց նման դիմաւնուէթեամբ, ինչպէս հօն գերեալ քաղաքին խօսել կու տայ, հօս ալ բուն երկնից բերան կու տայ ինքզինքը նկարագրելու, սկսանելով.

« Իմ՝ եղական գոլով բնութիւն և սկզբնական,
Յաներկեն ձըգեալ կամաբ անդուգական՝
Անչըրպետեմ զքաւրսըն վերին եւ նեղքնական,
Որպէս պատմէ զինէն Մովսէս առաւածաբան »:

Նպատակ բանին է ցուցանել երկնից զարմանալի կազմուածը, նուրբ նիւթերը, կարպը, և այլն. և թէ ասոնց վրայ արժան է հիանալ՝ այլ ոչ ինքնաբուն և գերագոյ բան մը կարծել և պաշտել, ինչպէս ըրին հեթանոսք. վասն զի թէ և ըստ մեզ երկինքն անչափ ընդարձակ է, « Այլ և Թըզաւ « միով չափիմ՝ թէ ոչ մարդկան ». Թէ և անբաւ բարձր երևի՝ այլ նոյնչափ և խոր անդունդ է, թէ և անշարժ՝ միշտ 'ի շարժման է. Թէ և նիւթական՝ այլ միշտ նոյն վիճակի մէջ անայլայլակ է. Թէ և անայլայլակ՝ այլ Աստրջին կամօք և բանիւ այնպէս է և ոչ թէ 'ի բնէ. որպէս զն երկրաւոր արարածոց կենդանութեան պատճառ ըլլայ, 'ի ձեռն լուսաւորաց. յորոց նախ զարեգակն յիշէ, գեղեցկութեամբ խըրև

..... « Պայծառատիպ մի կարկեհան
Եգեալ ի լանջս ըստ վահասին ահարոնեան »,

և օգուիւ՝ պատճառ բեղմնաւորութեան, տաքութիւնը խառնելով ջրոց հետ. զոր նմանեցընէ փեսայի և հարսին զուգութեան.

« Փեսայօրէն ջերմամբ սիրոյ յոյժ ըղձական՝
Գիրկս արկանէ հարսին իւրոյ խոնաւութեան ».

ապա նկարագրէ զլուսին,

..... « Սպիտակափայլ բիւրեղանման,
Որ միշտ աճէ և նըւազէ հընդհատաբար ».

յետ սոցա՝ եօթն մոլորակները իբրև եօթն կանթեղք ներկայանան,

« Որք մոլորեալք՝ տան անմոլար իմաստ մարդկան ».

ապա 12 կենդանակերպներն, զոր ըստ հին ոճոյ արևելեայց նմանեցընէ քաղաքի և 12 աշտարակաց. որոց շարժմունքէն կամ ընթացքէն կըրնան երբեմն բաներ գուշակուիլ: Այս իսկաբուլ Շնորհալին ոչ եթէ աստեղագիտաց յիմարաբանութեանց իրաւունք տայ, այլ միայն կարծէ թէ ինչպէս հուր, ջուր, բոյսք և անբան կենդանիք՝ զանազան բանի նշան, գուշակութիւն և ազդեցութիւն կու տան, այսպէս ասոնք ալ

« Թէպէտ են յանկենդանեաց նոքա ու անբան՝
Սակայն շարժմամբ անձանց՝ ունին ինչ ազդական »:

Եւ յիրաւի այս ինդը կը փնտռեն թէ մոլորեալ և թէ ողջմիտ աստեղաբաշխք, և գեռ գտած չեն. այսինքն զպատճառ, և մանաւանդ զվախճան և զնպատակ այնպիսի շարժման և բազմութեան աստեղաց: Ամեն քիչ շատ խոհուն միտք կ'ուզէ այս բանս գիտնալ, և շատք յաստուածային լուսոյ զուրկ ըլլալով կը մոլորին, կ'ըսէ հեղինակն ալ, փոխանակ որ գոնէ անոնց աքանչելի գեղեցկութեամբն և կարգաւն՝ պէտք էր առ Աստուած դառնային: Յետոյ խորհրդական

խնաամնեը կը բերէ, եօթն մելորակները 7000 տարի ժամանակի փոփոխական դարուց նմանցը-նելով, հաստատուն աստղերն ալ՝ հանդերձեալ անփոփոխ աշխարհի. որոյ համար այնուհետեւ այս երկինք եւ լուսաւորքն պէտք չեն, վասն ո-րոյ եւ պիտի չնչին. կամ թէ աւելի զարմանալի կերպով մը պիտի նորոգուին, եւ պիտի ըլլայ նոր երկինք եւ նոր երկիր: Երկնից դիմառնական նկա-րագրութիւնն աւարտելով՝ չորս տող ալ հեղի-նակն իր բերնէն կ'ըսէ շատ յարմար եւ ատյգ, իր հիացումը նշանակելով.

« Նայիմ յերկինս եւ նըկատեմ զայս ամենայն,
Եւ փառըս տամ անեղ բնութեան արարչական »:

Ահա վայելուչ քերդուածիս պատճառն ալ վայելուչ եւ սիրելի է մեզ կամ մեր հայերէն դը-պրութեան. զոր յայտնէ ուրիշ փոքրիկ քեր-դուած մ'ալ առջինին եւևէն գրուած՝ Յորդորակ, 62 տող. յորում իբրեւ դաւանութիւն մը հաւա-տոյ՝ կը խոստովանի ամեն բանի պատճառ զԱ-տուած. անով չարժունք եւ անշարժք, անկէ եւ մարդիկ. որոց փրկութեան համար նոր Ադամն Քրիստոս. եւ այլն: Ահա Յորդորակ՝ բայց յիմաս-ակից արբութենէն, առջինին քով շատ հեռւակ է. բայց մեզի պիտանին անագլուխ տաւերն են, որք կը կապեն այս բանս. Մխիթար Բծնեցի ընկալ 'ի Ներ-սէսէ պայս բան. արդէն առջի մասին խորագիրն ալ կ'իմացընէր որ գրուած է ի խնդրոյ առն Բծնկապէտի եւ ապեղապետի Մխիթարայ: Բնականապէս հարկ է որ հիմայ այս անձս ներկայանայ մեր պատմական պարագային մէջ, որ եւ ժամանակիս եւ բոլոր ժո-ղովուրդն, մանաւանդ թէ բոլոր մեր գպրութեան նշանաւոր անձանց մէկին է, եւ իր մասին կամ ա-րուեստին մէջ՝ առաջնին, եւ արժանապէս յամեն-

արժան Շնորհալւոյ վկայուած Բժշկապետ. ոչ եթէ իրմէ առաջ կամ իրմէ հմուտ Հայ բժիշկ չէնք ունեցած, այլ իրմէ առջիններուն գրուածքն մեզի չեն հասած, իրմէ վերջիններուն ալ չեն հասածները իրեն. գէթ զգաբար՝ իրեն գրուածներէն ալ փոքր մաս մը հասած է մեզի, և այն ալ միայն յայամ մասին Բժշկութեան. իսկ Շնորհալւոյ գինքը Ասեղապետ կոչելն՝ կը յայտնէ նաև յայամ ուսումնական գիտութեան քաջութիւնը, որոյ ուրիշ վկայութիւն կամ նշան և ծնացորդ մը չունինք: Նոյնպէս իր վարուց և գործոց ալ ուրիշ տեղեկութիւն չունինք, բայց մէկ մ'այս Շնորհալւոյ քերդուածն. մէկ մ'ալ բուն Մխիթարայ յառաջաբանն իրմէ մեզի հասած միակ գրուածքին, որ է « Բժշկական՝ վասն երեք ազգ Ջերմանցն ». յորում կ'իմացընէ որ ինքն էր ծննդեամբ 'ի Հէր քաղաքէ, որ է այժմեանս Խոյ 'ի Պարսկական Հայս, անոր համար Հերացի կ'ըսուի. և « 'ի մանկութենէ սիրով եղէ, կ'ըսէ, իմաստութեան և « բժշկական արուեստից, և վարժեցայ 'ի գպրոցս « Թիւն Արաբացւոց, Պարսից և Հելենացւոց ». յայտ է թէ և իր բնիկ ազգին Հայոց, ինչպէս գըրոց վերնագրին մէջ կ'ըսուի. այլ մեր լեզուով գրած կատարեալ բժշկարան մը չգտանելով, ուզեց գոնէ միայն Ջերմի հիւանդութեան և անոր երեք գլխաւոր տեսակաց վրայ գրել « համառօտ, « Նախապիտութեամբ և Սահմամբն », (Theorique et Pratique): Այս բանիս ալ պատճառ կամ յորդոր կը վկայէ ղայլորդ Շնորհալւոյ, զկաթողիկոսն Գրիգոր Տղայ, « ամենայնիս սիրով իմաստութեան և հմուտ ». և ինչ որ յոյն, պարսիկ և արաբիկ գրոց մէջ գտաւ այս նիւթոյս վրայօք՝ հաւաքեց, տեղ տեղ քաղուածով, տեղ տեղ ալ թարգմանութեամբ, անոր համար յիշատակին վերջը կ'ըսէ. « Թարգմանեցաւ և գրեցաւ գլուխս

« այս յամի 1184ի Տեառն մերոյ »· այն բարե-
նշան տարին մեր գպրութեան, յորում Ն· Լամ-
բրոնացի յունական Օրինագրոց հատաքում մը
հրատարակեց, Մխիթար Գոշ իր Դատաստանա-
գիրքը: Ինքն Հերացին այս գիրքը անուանեց « Զէր-
« մանդ Մխիթարուհեան· զի սա մխիթարէ զբիժշկին՝
« ուսմամբ, իսկ զհիւանդն՝ առողջութեամբ, ո-
« ղորմութեամբ և օգնականութեամբ արարչա-
« գործին Աստուծոյ »: Ոչխոյն և լեզուին համար
ալ կ'ասէլըննէ· « Եւ արարի զսա գեղջուկ և ար-
« ձակ բարբառով, զի դիւրահաս լինի ամենայն
« ընթերցողաց, առ՝ի յիշատակել զմեզ », և այլն:

Այս գիրքս որ 46 հատուած կամ գլուխ բաժ-
նուած է, (և 150 էջ մը բովանդակէ ուղածալ)
արդէն տպագրուած ալ ըլլալով [1], հօս աւելի ծա-
նուցանելն աւելորդ և օտար կը համարինք, միայն
գործոյն արժանաւորութիւնը յիշել հարկաւոր,
թէ ըստ իմաստից, թէ ըստ հմտութեան և շատ
Արաբացի և Պարսիկ բժշկաց յիշատակութեամբ,
և թէ ըստ աշխարհիկ հայ լեզուին, որով՝ գրեթէ
առաջին երկարօրէն գրուած ծանօթ գիրքն է մե-
զի: Իսկ հեղինակին արժանաւորութեան՝ բաց՝ի
գրքէն մեծ վկայք են Ն· Շնորհալւոյ և Գր· Տղա-
յոյ կաթողիկոսաց՝ բարեկամութիւնն և վարկն·
եթէ առջինն իր կաթողիկոսութենէն առաջ գը-
րած է առ Մխիթար վերոյիշեալ քերդուածը՝
նշան է որ Մխիթար 1184 թուականէն 20 տարիէ
աւելի առաջ ալ նշանաւոր և հռչակուած էր:
Մխիթարայ վարուց վրայ ուրիշ տեղեկութիւն
չունինք, այլ գրուածոց և հմտութեանն ուրիշ
նշաններ ալ կան մեր ընտիր բժշկարանաց մէջ·
զոր կ'երևի թէ Զերմանց գրքէն վերջը գրեր է,
որովհետև անոր յառաջաբանին մէջ կ'ըսէ· « Զսո-

1 Ի Ս· Ղազար Վենետկոյ, 1832:

« վանդակին՝ որ վան արուեստի բժշկութեանն՝
« թողն, և զերեք ազգ չերմանցս միայն հաւա-
« քեցի ». իսկ բժշկարանաց մէջ կը գտնեմք ու-
րիշ շատ առեակ հիւանդութեանց գրուածներ,
որոց վրայ օտարաց և նախնեաց խօսքերը աւան-
դեցին եւս, առեպ կ'ըսուի. « Բայց ես Մխիթար
« յիշեմ եթէ յուսոյ լինի (այս ինչ ցաւ). — Այլ
« ես Մխիթար յիշեմ զպատճառն զձիճուն, և
« այլն. — Այլ ես Մխիթար կամիմ գրել'ի յայլ
« գրոց վան Սնկանն. — Կան և այլ ցաւեր որ
« չէ յիշած 'ի գիրքս, բայց ես Մխիթարս յի-
« շեմ », և այլն: Երբեմն ալ յեաին հաւաքաբան
բժիշկք՝ կարդացողը կու ղրկեն առ բժշկապետան
մեր. զոր օրինակ. « Եւ զայլ ատածուին գտանես
« 'ի Գիրս Մխիթար բժշկին. — Յիշեմ 'ի բանից
« Մխիթարայ », և այլն: Որով յայտ է թէ Մխի-
թար երբեմն թողած Բռլանդակ արուեսպէ բժշկութեան
գիտեցիքը՝ յետոյ գրեր է, և դեռ հիմայ ալ գտուին
գրուածքն, գէթ ըստ մասին:

Ի Մխիթարայ վերադառնալով առ Ներսէս և
իր քերդուածին, ասոր նկատմամբ զայս ալ յիշե-
ցընեմ, որ յետ երբ 120 ամաց՝ Յովհաննէս Ել-
զընկացին, որ բաղդ ունեցաւ Շնորհալւոյ Մատ-
թէի Մեկնութիւնը շարունակելու, նման ինն
բաղդով՝ 'ի խնդրոյ Ապլոց իշխանի՝ ասոյն նիւթիս
վրայօք Յաղագս Եւինէց՝ հնդասաւանիկ երկար 1000-
տողեան քերդուած մը գրեց նոյն չափով (12ոտ-
նեան) և նոյն (ան) յանգաւ, Շնորհալւոյ իմաստ-
ները ընդարձակելով, յայտնապէս ասոր գրուա-
ծովը ներշնչեալ:

Երկրորդ քերդուած Շնորհալւոյն է մեր Գա-
ւիթ Անյաղթ փիլիսոփային և հին Թարգմանչին
գրած Խաչի գովեանին տաղաչափեալ յարաւու-
թիւն. որոյ պատճառն և յարակից դէպքն ալ
կ'արժէ յիշել: Հին հեղինակն ներբողիչ մեծն և

եռամեծ կոչեալ Դաւիթ՝ աղբակից Մովս. Խորե-
նացւոյ արեամբ և արդեամբք, ՚ի պատիւ Քրի Ս.
Խաչին ներբող կամ ձառ մը գրած է, ՚ի խնդրոյ
Գիւտ կաթողիկոսի, որ է ըսել իբրև ՚ի վերջին
քառորդի ե դարու. թէ գրողին և թէ խնդրողին
համբաւն, և թէ գրուածին արժանաւորութիւնն՝
այնպիսի յարգ և պարծանք մը տուած էին այս
ձառիս ՚ի հնուց հետէ, մինչև կարծել կու տայ՝
որ բնական արժէքէն ալ քանի մ՚անգամ աւելի
ըլլայ ընծայուածն, եթէ կարելի և ներելի է այս-
պէս ըսելս: Մխիթար Այրիվանեցի Պատմիչն
յ՚ԺԳ դարու իր ժամանակագրութեան մէջ գը-
րած է ցանկ մը Սուրբ Գրոց և Ս. Հայոց գրոց՝
զորս մեծիմաստ սոփեստէն Սարկաւագ սուռ-
գեր էր, այսինքն յընտիր օրինակաց հաստատեր
էր հարազատութիւնը. այս առէլ անմիջապէս նոր
կտակարանի Աստուածաշունչ սուրբ Գրոց եռևէն
կը գտնուին իբր սրբազան գիրք մեր, ժամագիրքն
և Պատարագամատոյցն, և որ զարմանալին է՝ այն
երկուքէն ալ առաջ գտնուի Բոյժաղոչէն Դա-
ւիթ. վասն զի այսպէս կոչուի ձառն, սաղմոսին՝
« Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր », խոս-
քըն բնաբան ունենալով: Այսքան մեծարանաց
առաջին պատճառ Թէրևս համարելու էր զանհա-
մեմատ յարգութիւն Ս. Խաչին. այլ ըստ աչ-
խարհի՝ Թէրևս ձառին շինուելուն պատճառն ըլ-
լար. որոյ համար մէկ աւանդութիւնն ալ այս է,
Թէ Դաւթի գարուն՝ գեռ սովորութիւն էր յա-
Թէնա, (ուր որ ինքն ալ ընկերակցօք Թարգմանչօք
առեն մը ուսմանց և իմաստից պարապեցան),
ձարտասանութեան կամ փիլիսոփայութէ վար-
դապետի աստիճան առնելու համար՝ ձառ մը խոս-
սիլ. և Դաւիթ այս ձառս խօսեր է, կ՚ըսեն, և
իրեն հետ մէկտեղ յաղթեր և գերազանցեր. այս
բանս՝ ստոյգ կամ անստոյգ՝ բաւական աւելի մ՚էր

Հայոց պարծանաց և խրոխտանաց 'ի վերայ Ցուն-
նաց. բայց ոմանք ալ ուրիշ պատճառներ կ'աւան-
դեին: Արդ թէ ատոնց ստոյգը հաւատաւէն, և թէ
ձառին խմաստները պարզապէս հասկընալն, (որով-
հետև քիչ մը խրթնաբան կամ նրբաբան է), չատոնց
փափագելի էր. և այս ժամանակներս՝ որ թէ յա-
րևելեան և թէ յարևմտեան Հայս՝ գպրութեանց և
մեկնութեց ուսումն և ջանք վառուած էր, և առա-
ւելապէս՝ հօս 'ի կոզմանս Սեաւ Լերանց և Կիլի-
կիոյ, հօն՝ 'ի Հալբատ և 'ի Սանահին, Հալբատա-
ցի գիտնական և բանասէր վարդապետ մը՝ Վար-
դան անուն, որ առաջուց իսկ պէտք է ծանօթ ե-
ղած ըլլայ Շնորհալւոյ, խնդրեց այս մեր նոր ի-
մաստասիրաց պարտզլխէն՝ հին իմաստասիրին ձա-
ռին մեկնութիւնը և պատճառը: — Շնորհալին
իր սովորական պատրաստականութեամբն 'ի կա-
տարել զինդիր բարեսիրաց՝ Վարդանայ ուշածն
ալ ըրաւ. նախ ձառին գրութեան աւանդուած
պատճառները կը յիշէ, զոր արդէն իրմէ շատ ա-
ռաջ մեկին յիշած էր իբրև նախադրութիւն մ'ը-
նելով, և անոր հետ կ'ընդունի որ Գիւտայ իբրն-
դրուածքով գրուած էր, ընդդէմ այն մոլորելոց՝
որք նեստորաբար ոչ զՍ. Կոյան կ'ընդունէին Ա-
ստուածածին, և ոչ զԱստչն՝ աստուածընկալ: Իսկ
մեկնութիւնը գրեց Ներսէս չափաւոր ընդարձա-
կութեամբ և պարզ բանիւ բացատրելով վիպեա-
փային միտքը, ևս առաւել իր մտածմունքն և
զգացմունքը: — Անշուշտ այս բաներուս վրայ
խորհրդածելու առեն՝ յօժարութիւնն վառեցաւ՝
զնոյն ներբող իր քաջարուեստ ներդաշնակութիւնը
տաղաչափել. և ինչպէս որ երկու մտան ունի
ձառն, մեկն աւելի քննական և պատճառական,
միւսն գովասանական, այն առաջին մասը կը բո-
վանդակէ Ներսէս 220 երկտասանոտնեան տո-
ղից մէջ (ան յանգով.) իսկ երկրորդ մասը իբրև

400 տող ուխտանեան զանազան յանգերով: Քերդուխեան խմաստից վրայ չունիմք բան մ'ըսելու, այլ միայն Շնորհալւոյ հանճարեղ մտածուխեանը, որ բաւական չհամարելով գրած մեկնուխիը, վան զի և դժար էր հասարակաց զայն ունենալ և այնչափ երկար բանը կարդալ, միւս կողմէ ալ նոյն ձառը նորէն արձակ բանիւ պարզ շարադրուխեամբ գրել անհեղի համարելով, որ հեղինակին նուազուխիւն մը ջըլլայ, ոտանաւոր բանի դարձուց, առանց աւելցընելու կամ պակասեցընելու. ասով կարդացողն թէ բոլոր Դաւխի գըրածը կ'ունենայ և թէ աւելն որոշ կը հասկընայ անոր միտքը:

Նոյն Վարդան վարդապետն գարձեալ հարցուց և խնդրեց 'ի Ներսիսէ՝ Գրիգորի Նիւսացւոյ այլևայլ գրոց վրայ տեղեկուխիւն, թէ ի՞նչ պատճառի համար գրած էր. և թէ ի՞նչ նշանակէին քանի մը մուխ բանք գրոցն. Շնորհալին ատոր պատասխան և պատճառ գրած է, որ մեզի հասած չէ. այլ Վարդան իր քովէն ալ բան աւելցընելով՝ տեղեկուխիւններ գրեց Նիւսացւոյն գրոց վրայօք, ինչպէս որ Լուծմունք ըսուած հատորին մէջ կը յիշուի: — Այսքան ընտանուխիւն ունող անձն (Վարդան) ընդ Շնորհալւոյ՝ պէտք է նշանաւոր անձ մ'ըլլայ. պատմչաց ու յիշատակագրաց քանի մը կարճ խօսքերն ալ զայս յուսցընեն. մանաւանդ երբ Հաղբատայ նշանաւոր և ուխտի տեղեաց մեկն ալ՝ այս վարդապետին գերեզմանը կը նշանակեն. որոյ արդարև ցանկալի էր ատոյգ վարքը և գործերը գիտնալ. միայն մահուան Թուականն ալ հարևանցի կը նշանակի իբր 20 կամ 22 տարի յետ Շնորհալւոյն. այս եղբի Թուականիս (1195) գրիչ մը 'ի Հաղբատ, այսպէս յայտնէ անոր մեծ արժէքը՝ ապաչելով յիշել, « Զարդիւնակատար « տուրը և ամենըչնորհ վարդապետան Վարդան,

« պատուածասէր հոգին, ՚ի մանկութենէ մինչև
« յաւագոյն ընդ Քրիստոս միացեալն, զՀոգւոյն
« Սրբոյ բնակարանն, զլցեալն ամենայն առաքի-
« բարութեանց, զզարդարեալն ամենայն առաքի-
« նութեամբ, զպատէնն անանկաց, զվերակա-
« ցուն օտարաց, զսիրուն աղքատաց, զբժիշկն
« հոգւոց, զՀայրն որբոց, զպարծանքն քրիստո-
« նէից, զլուսաւորիչ եկեղեցւոյ, զՀովիւն բանա-
« ւոր ոչխարաց, զՀոգին օրհնեալ, զարժանին
« Աստուծոյ, զգերապանծեալն քան զգովութիւն,
« զփոխեալն ՚ի կենաց և զՀանգուցեալն ՚ի Քրիս-
« տոս... յիշեսջիք յաղօթս »: — Արժանաւոր գովութիւն Շնորհալւոյ բարեկամի. զորս միաւեղ յիշէ ուրիշ մերձաւոր գրիչ մ՚ալ (յամի 1207) յընդօրինակելն գմեկնութիւն Բարձրացուցեաց, « զոր արարեալ է երիցս երջանիկ աւրբ կաթո-
« ղիկոսն Հայոց Ներսէս, ՚ի խնդրոյ Վարդանայ
« վարդապետի, որ ՚ի Հաղբատ կայ եդեալ ՚ի
« դամբանի. որոց յիշատակն՝ օրհնութեամբ »:

Թարձեալ այն վարդապետս Վարդան խընդրեր էր ՚ի Շնորհալւոյ՝ Գրիգոր Աստուածաբանի « Քրիստոս ծնեալ » ըստուած ձառին մեկնութիւնը. յայտ է որ Գր. Աստուածաբան հին Ս. Հարց մէջ ամենէն աւելի իմաստասիրաբար գրող և նըրբաիմաստ է, քիչ բառով շատ բան իմացընող. սակայն նոյն իսկ կարճաբանութեամբն ալ իմաստքն մթանան և գժուարիմաց են. անոր համար գրեթէ անհրաժեշտ կարիքաւոր է մեկնութիւնն ալ. և այս Քրիստոսի ծննդեան վրայ գրած ձառն շատ աստուածաբանական կարևոր խօսքերով ՚ի վկայութիւն կոչուելէր յաճախ, անոր համար աւելի ալ կարօտէր մեկնութեան. զոր և կատարեց Ներսէս խնդրով Վարդանայ. իսկ սա աւելի ընդարձակելով՝ վերոյիշեալ Նիւսացւոյն բանից մեկնութեան նման՝ գրեց Լուծմունք, որ և գանուի հի-

մայ, թէ և հեղինակաց անուանն նշանակուած չըլ-
լայ :

Փոքրիկ խմաստասիրական գրուածք մ'ալ կայ՝ որ թէ Դաւթի Անյաղթի կ'ընծայուի և թէ Գր. Նիւսացւոյ, երկուքին գրոց ալ վերջը գտուելով. և է Զարմին բնութեան վրայ էջ մը բան կամ ա-
ռածք. որ կը սկսի, « Ամենայն չար առնչելի ». խնդիր մը՝ որ շատ գիանոց և տգիտաց ալ մտա-
տանջութիւն կը պատճառէ. ասոնց որ կարգէն ալ ըլլայ՝ բանասէր և արժանաւոր անձ մը եղած պի-
տի ըլլայ Սահմանոս անուամբ մէկն, որ խնդրեց 'ի Շնորհալւոյ այն փոքրիկ՝ այլ խմաստալից բա-
նին մեկնութիւնը. գուցէ Տիրացու մականուա-
նեալ հմուտ և անուանի եպիսկոպոսն էր Վանայ կողմերու, զոր գովութեամբ յիշէ և Լամբրոնա-
ցին, և որ իրմէ քանի մը տարի վերջը վախճանե-
ցաւ. Թերևս նոյն խմաստասէր Սահմանոսն է՝ որոյ խնդրով Սամ. Անեցին ալ բան մը գրեց (123): Արդ Շնորհալին կատարեց ասոր խնդիրը, ըսկե-
լով ուզած մեկնութիւնը հանդերձ թղթով, յո-
րում հարկաւոր է, կ'ըսէ, « Զխնդիր հոգևորա-
« կան և հաւատով և սիրով հայցողաց՝ տալ յո-
« ժարութեամբ ». Թղթին վերջն խօսքերն ալ կ'իմացընեն որ անհանգիստ պարագայի մը՝ թէ ըստ ժամանակի և թէ ըստ տեղւոյ, և թուի թէ նաև ձամբորդութեան առեն գրած է. « Իբրու « 'ի դէպ է 'ի ձանապարհի պատահելոյ անձին, « և աշխարհածուփ հոգովք խամրացելոյ մտաց ». Թերևս յամին 1165 Կիւլիկիա երթալը նշանակէ այս 'ի ձանապարհի պատահումն: Իսկ գրուա-
ծոյն վրայ գալով՝ զայս արժան է խորհրդածել, որ Շնորհալի ոչ միայն պարզ աստուածաբանա-
կան և Սուրբ Գրոց միտքը քննած էր, և ոչ լոկ տաղաչափ քերդող էր, այլ և խմաստասիրական գրուածներ քննած էր և լաւ կը հասկընար. միով

բանիւ, ինչ որ ազգային դպրութեան մէջ կը գըտուէր և ձեռքը հասած էր՝ աչքէն և մտքէն ալ չէր վրիպած, և Սեաւ լերանց վանորայից մէջ՝ ամեն տեսակ գրոց պարապեր և հմտացեր էր. վասն որոյ և արժանապէս թէ մօտէն թէ հեռուէն ամենայն բանասէրք իրեն կըրնային դիմել. իր բնական հեզութիւնն և ձեռնտուութիւնն ալ զինքը ամենուն կը մօտեցընէր. ձիրք մը՝ որ Թերևս գիտութենէն աւելի մեծ է, և անշուշտ աւելի սիրելի:

Այսպիսի իմաստասիրական կամ մեկնողական գրուածոց հետ կըրնանք յիշել Շնորհալւոյ պըզտի գրուածիկ մ'ալ, որոյ նիւթն թէ և չէ շատ իմաստասիրական, այլ հասկացողութիւնն գժար ըլլալով, միանգամայն և շատ կարևոր վասն կրօնական բարոյականի, ինքն իսկ նախ աշխատեր է հասկընալու և ապա դիւրաւ հասկացընելու. և է ցուցակ մը Ասաիճանաց աղգականութենէ վասն խնամութեան. զոր գտեր է 'ի նախնեաց աշխատասիրեալ, աղիւսակաձև շարած՝ վեց աստիճան դէպ 'ի վեր, վեց դէպ 'ի վար, երկու կողմէն ալ ձղձըղելով, բայց քանի որ վեր բարձրանայ՝ ամեն մէկ աստիճանի կողմնակի թևերէն մէկ մէկ աղիւս կամ խորշ կը պակսի. իսկ դէպ 'ի վար՝ կողմնակի խորշեր գրուած չեն, այլ միայն Թոռունք և Թոռանց Թոռունք. յայտ է որ բոլոր աղիւսակին միջին երկու կարգի խորշքն՝ են Հայր և Մայր, Որդի և Դուստր: Այս աղիւսակին հետ վարդապետութիւնն ալ կայ՝ խրթնաբան և անսովոր անուամբք ազգականութեան. անոր համար Շնորհալի մտածեր է այն Բաբելոնի աշտարակին ձևով շարուած աղիւսակը՝ բոլորակի վերածել, կեդրոնը կամ նեղքսագոյն չորքանակին մէջ դնելով զՀայր և Մայր, զՈրդի և Դուստր, և անկէ սկսեալ իրարու վրայ հինգ չորքանակ ալ աւելցընելով քան

կարդի հեռաւորութեան աստիճանաց և կեդրո-
նական անձանց՝ իւրաքանչիւրին նմանը դէպ՝ ի վեր
և դէպ՝ ի վար նշանակելով անոնց մէջ. զոր օրինակ,
հօր՝ դէպ՝ ի վեր Պապ, Հօրն Պապ, Պապուն
պապ, Երկու Պապք, Երեք պապք. Որդւոյն՝
դէպ՝ ի վար՝ Թոռն, Առաջին Թոռն, Թոռին Թոռն,
և այլն: Իգաց կողմանէ ալ՝ Մայր, Մամ, Մօրն
մամ, Մամուն մամ, և այլն. դէպ՝ ի վար Դուստր,
Թոռնիկ, Առաջին Թոռնիկ, Թոռնիկային Թոռ-
նիկ, և այլն: Առանց տեղ հին ազգաբանութիւնն
ուրիշ կերպ կը բացատրէ. օրինակի համար, Պա-
պուն պապը կոչէ Ապո-պապ, Թոռան Թոռը՝ Ա-
պեկ Թոռն, իգաց ալ Ապեկ Թոռնիկ. իսկ կողմ-
նականաց, այսինքն անոնց եղբարց և քերց նոյն
աստիճանի սերընդոց՝ Եկ-Թոռն, Եկ-Թոռնիկ.
Հօրեղբօր և հօրքեռ կ'ըսէ Ընտանի և Ընտանիկ.
անոնց ալ հօրեղբօր և հօրքեռ՝ Մեծ Ընտանի,
Մեծ ընտանիկ. էգ աղջիկ Թոռը՝ Թոռնեայ կ'ա-
նուանէ, ասոր աղջիկը Թոռնիկ, և այլն: Ահա այս
փոքր երևցած բանին ալ՝ մանաւոր խնամք տա-
րած է Շնորհալին, և « հարկաւորապէս ապա
« դրոշմեցի, կ'ըսէ, ՚ի Բոլորակի, վասն զի՚ս որոյ և զանուանն
« գոլոյ ուսուցնասիրաց, վասն որոյ և զանուանն
« ևս պարզ եդի ». և կը խնդրէ ՚ի գաղափարողէն
որ եթէ ուղէ՝ իր բոլորակին ալ գծէ. բայց զայս
թէ ընէ թէ չընէ՝ « Մի՛ իշխեսցէ Թողուլ զհինն,
« որ է սահմանաձև դրոշմածն, զոր առաջնոց վե-
« հից աշխատասիրեալ »: Այսքան պատուով և
պատկառով էր Շնորհալին՝ առաջնոց և վեհից.
որով իր գծած խնամուեթեան աստիճաններէն ա-
ւելի մեծ և զարմանալի կը փայլեցընէ իր խոնար-
համտութիւնը, և յարգանքը առ գիտունս և որ-
դեաս:

Գրուածիս բարոյականին կամ կրօնականին վրայ
խօսք մ'ալ ըսեր յարմար տեղ սեպելով, սեբեյը-

նենք, որ Շնորհալին ասոր մէջ պատուէր կամ խրատ մը չէ տար՝ խնամուելէ եօթն աստիճան կամ ինչպէս ռամկաբար կ'ըսուի՝ եօթն պորա հեռաւորութեան, այլ աւելի իբրև ուսումնական գիտելիք մը կը պարզէ. այլ իր Ընդհանրական Թղթոյն մէջ կը պատուիրէ առ քահանայս՝ ինչուան չորս աստիճանի զգուշանալ, ինչպէս որ սովորաբար կը զգուշացընեն ամենայն եկեղեցիք. բայց արևելեայց մէջ աւելի խնդիր և խորութիւն ծագելով այս բանիս՝ հարկ եղած է շատ անգամ այս խնամութեան աստիճանաց վրայ որոշողութիւն ընել. ինչպէս որ մեր մէջ ալ գտնուին այսոր վերաբերեալ գրուածք. յորս նշանաւոր է երեք դար յետ Շնորհալւոյ Յակոբ Վ. Ղրիմեցւոյ գրածն՝ ի խընդրոյ Թովմայ Մեծոփեցի վարդապետին, ՝ի կէս ԺԵ դարու:

Յետ այս գործոց յիշենք քանի մ'ալ ստոյգ Թուականաւ առաջ և եռև գրուածներ. որոց հնագոյնք են քանի մը Վկայաբանութեանց և Ներբողից Թարգմանութիւնք կամ արբագրութիւնք Թարգմանութեանց, 1141–2 տարիներուն երկասիրած: Այսպէս է Ս. Յովհան Ոսկիբերանի գրչին ընծայուած Ներբողն՝ ի Ս. Լուսաւորիչն մեր, « Հրաշափառ է մեզ ածնս », որոյ յառնարէն բնագիրը գտնելով Ներսէս « ՝ի հին և յեղծած օրի- « նակաց », հրամանաւ իր եղբօրն Թարգմանել տուաւ Հայագէտ Յունի մը, « Աբրահամու Ղուա- « մաւիկոսի, ինչպէս կ'ըսէ Ներսէս, և յորմա- « րեցաւ ըստ քանից գլխոյ թութի՝ յիմոյ « նուաստութենէ Ներսիսէ »... և կ'ապաչէ որ աչխատողները յիշելէն զատ՝ « եւ զսակաւ զայս « յիշատակի բան գրեալքիս յիւրաքանչիւր փոխ- « արկութեան. զի և դուք գրեալ լինիք՝ ի կեն- « դանի տախտական Քրիստոսի՝ անջինջ յիշատա- « կաւ »: Քանի մը ձառ և վկայաբանութիւն ալ

աստրերէնէ Թարգմանել տուաւ և սրբագրեց, ո-
րոց մէջ մանաւորապէս յիշուի Յակովբայ Սըր-
ձեցւոյ Ճառն 'ի Խաչելութիւն Քրիստոսի. « ի
« ձեռն քահանայի ումեմն Իսահակ անուն կոչե-
« ցեալ Աստրի յազգէ, անարհեստ գոլով մերոյ
« դպրութեանն, չաղփատի և կոկորդախօս լե-
« զուաւ. և ստուգեցաւ 'ի սուրբ և յանբիծ և 'ի
« մեծ արհիեպիսկոպոսէ Տեառն Ներսիսէ, հռե-
« տոր իմաստասիրէ »: Յայտ է որ այս յիշատա-
կարանս ոչ ինքն Ս. և ամբիծ արքեպիսկոպոսն
Ներսէս գրեր է, այլ ժամանակակից ումն և ընդ-
օրինակողն անոր սրբագրածին: Գրիգորիս՝ որ,
ինչպէս առաջ յիշեցինք, փոքր վկայասէր ըստուե-
ցաւ, միանգամայն և հաւաքող ներբողինից, ձե-
ռամբ իր եղբօրը գեռ շատ վկայաբանութիւնները
և ճառերը Թարգմանել և սրբագրել տուած է,
հաւանօրէն՝ ասկէ առաջ ալ և շատ եռքն ալ. ո-
րոցմէ մեզի ծանօթ եղած զոյգ մը հօս յիշենք,
կանխելով ժամանակագրական կարգը. որոց մէկն
դարձեալ յունարենէ, միւսն յաստրերէնէ: Ա-
ռաջինն է Սրբոց Տարագոսեանց վկայաբանութիւ-
նը՝ Կոստանդին [1] անուամբ Յոյն քահանայի մ'օգ-
նութեամբ Թարգմանեալ, յամի 1157. « յարմա-
« րութեամբ բանի և դրութեամբ... 'ի մերս փո-
« խադրելով. որ և 'ի վերծանողացդ և 'ի լսողացդ
« հայցեմք յիշել աղօթիւք զաշխատողքս 'ի Քրիս-
« տոս, գրել և զսակաւ բան գծիս յիշատակի՝
« յիւրաքանչիւրս »: Իսկ երկրորդն հետևեալ
տարին (1158) Թարգմանած և յարմարած է վկա-
յաբանութիւնն հռչակաւոր Ս. Սարգսի: Այս
Ս. Զօրավարս՝ որ մեր եկեղեցւոյն կամ ազգին ա-

1 Թուի նոյն Կոստանդին Հռոմկլայեցին, զոր յետ մա-
հու Շնորհալւոյն՝ Գրիգոր Տղայ վկայականաւ խաւրեց 'ի
Կ. Պոլիս և արքեպիսկոպոս ձեռնադրել տուաւ Յերա-
պոլսի Թեմին:

մենէն պաշտելի և պաշտպան արբոց մէկին է և ե-
ղած էր ի հնուց հետէ, և գժբաղդաբար՝ առիթ
մը հակառակութեան ցունաց, սուտ և անոսկ
պատճառանօք և կարկատանօք, թէ և հնագոյն
վարդապետներէ պաշտպանուած էր, և ցուցուած
թէ ինչպէս Հայք մեծ չերմեռանդութեամբ կը ծո-
նեն զնա, կամ ինչպէս է անոր ծնունդն առաջ շաբա-
թապահքն. ի վերայ այսր ամենայնի սոյգ և
տեղեակեղը վկայաբանութիւն մը չունենալով, այլ
համառօտ պատմութիւն մը, վէճն և հակառա-
կութիւնն չէր դադրեր: Այս առեններս, ի կէս ժ-
դարու, վիրք բաւական զօրաւոր թագաւորութի
մ՝ունէին ի նուաղել Բագրատունի թագաւորաց
մերոց, որով և մէկ մեծ մաս մը Հայոց անունց իշ-
խանութեան տակ էր. և ասկից՝ վիրք՝ որք ծխու
աւելի մերձաւոր էին ցունաց, անոնց պէս ալ եր-
բեմն ծուռ կը նայէին Հայոց վրայ, և ուրիշ խնդիր-
ներէ զատ՝ այս Ս. Սարգսի խնդիրն ալ սաէպ կը
յուզէին: Այս բանէս վերացեալ այն կռմերուն
Հայոց գլխաւոր առաջնորդն, որ էր Հաղբատայ
արքեպիսկոպոսն, Գէորգ անուամբ, և մեծ մաե-
րիմ Շնորհալեայ, մտածեց սորը գիմել, հարցը-
նել և խնդրել որ սոյգ տեղեկութիւն մը սայ
Հայոց հաչակած և ծնած Ս. Սարգսի վրայօք,
որոյ շատ անուանի ոխտատեղիք ալ կային ի
Մեծ Հայս, թէ յԱյրարատ և թէ Վրաստանի
մօտ Հայաստանի մէջ, ինչպէս ի դաշտին Գադայ՝
որ յիշուի Սրբոյն շարականին վերջին տան մէջ:

Շնորհալին որ ազէկ գիտէր այս խնդրոյս կարևո-
րութիւնը, փութացաւ և ապահովագոյն տեղ
գինուելէ առաւ, որ էր Ամորւոց հռչակաւոր
Պարսամայ վանքն՝ մօտ ի Մելիտինէ քաղաք, ուր
կային շատ գիրք և գրագէտ Ամորիք. որք և իրենց
մատեաններէն քննելով գտան չորս զանազան Ս.
Սարգիսներու վարք, որոնցմէ Շնորհալին խնդրեց

Սարգիս Զօրավարինը. անոնք ալ իրենց մէջ բա-
ւական հայադէտ Միքայէլ անուամբ հմուտ քա-
հանայի մը ձեռօք (որ Թուի յետոյ Մեծն անուա-
նեալ Միխայէլ պատրիարքն) Թարգմանել տա-
լով խաւրեցին. « Որ Թէպէտ և 'ի յարմարուա-
« Թիւնս բանից և 'ի շարկտոյս բառից ոչ զուգիւր
« ըստ մերում լեզուոյ, սակայն զբնութիւն բա-
« նին և զկարգ պատմութեան ամբողջ ունէր յին-
« քեան, կ'ըսէ Շնորհալին. զոր և մեր ընկալեալ,
« և ըստ չափոյ զօրութեան յղկեալ զդուրս բա-
« նիցն և զպատմողականն՝ առաքեցաք ձեզ և հա-
« նուրց եկեղեցեաց Հայաստանեայց, դանձ երկ-
« նային և հոգևոր, որ ծածկեալ էր յայլալեզուս
« ազարակի աղանց, և այժմ յայտնեցաւ շնոր-
« հօքն Քրիստոսի, 'ի ձեռն քոյին խնդրոյ, պա-
« տուականդ 'ի գլուխս եկեղեցւոյ, Գէորգիոս »:
Ցետ յառաջաբան նամակին ամբողջ Պատմութիւնը
կը դնէ, և ապա յիշատակարան մ'ալ Թարգմա-
նութեանն 'ի ՈԷ (1158) Թուին. և ըստ սովորու-
Թեան կ'աւելցնէ. « Մաղթեմք զընթերցողդ և
« զդպաղափարողդ՝ յիշել զաշխատեալքս 'ի սմա՝
« աղօթիւք, առաջի Աստուծոյ, յաւուր ահին ե-
« րանելոյն. և զբանդ յիշատակի գրել յիւրա-
« քանչիւր գրեալդ՝ հայցեմք »: Արդարև վաե-
րական կնքոյ և ստորագրութեան յարդ մ'ունին
մեզի ալ այսպիսի յիշատակագրութիւնք, զոր և
դպաղափարողք հլութեամբ և հաւատարմութեամբ
հաստցին մեզ, ինչպէս մեք ալ մեր ընթերցողաց.
վասն զի Շնորհալին կ'ուզէր իմացընել՝ որ քննու-
Թեամբ և հաստատութեամբ գրուած էն և պէտք
է ընդունելի ըլլան. միանգամայն և կը յուսար՝
որ ասով հակառակողաց բերանն ալ կարկի,
« զղջասցին կամ ըմբերանեսցին ». ինչպէս մենք
ալ կարծեմք որ այնպէս եղած ըլլայ այն վրայ
կոմսերը. իսկ Յունաց՝ որ անծանօթ էին այս բա-

նիա, և յետ քանի մը տարուց Հայոց հետ միա-
բանութեան վրայ խնդիր ընելով՝ այս բանս ալ
մէջ ձգեցին, հարկ եղաւ որ Շնորհալին աւելի
վարդապետաբար գրէ և խմացընէ: Ա.յս գիւտով
(Ս. Սարգսի վարուց) թէ կրօնական պէտք մը լե-
ցուց, ինչպէս տեսանք, և թէ գրաւորական. և
յայսմ մասին՝ յիշատակաւ գտուած հին թարգ-
մանեալ վկայաբանութեանց կամ յետինն է կամ
մի՛ ի յետնոց այս Ս. Սարգսի պատմութիւնն. և
թէ գարձեալ՝ ազգային սիրելի պարծանքի մը
հաստատուն վկայութիւն մը տուաւ և աւանդեց,
և հակառակորդաց անոսի կասկածներէն և խայ-
թուածներէն ապահովեց զՀայս:

Ժամանակաւ եաքինները և սոյգ թուակա-
նաւ գրուած գործերէն մէկն ալ (յամի 1162) է
« Գովեստ ներքուղական բացատացութեամբ յա-
« զագս ոճի գերապունից էութեանց Հրեշտա-
« կապետացն սրբոց... և ամենայն երկնային զօ-
« րութեանցն ». այսինքն է երկարօրէն ճառ մը՝
Հրեշտակաց գասուց վրայօք, ըստ աւանդութեան
եկեղեցւոյ, կամ Ս. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ
անուամբ գրուածի մը, և Հրեշտակաց պաշտա-
մանն և պաշտպանութեան վրայօք. զոր գրեր է
Շնորհալին՝ ի խնդրոյ հարազատին իւրոյ Գրիգ.
Կաթողիկոսի, և թերևս յետինն ըլլայ անոր խըն-
դրով կամ յանձնելով գրուածոցը մէջ: Յառա-
ջաբանն քիչ մ՛երկայն և ճապաղ է, և սակայն
երկնութեամբ իր անբաւականութեանն այսպիսի
բարձր և մութ խնդրոյ վրայ ճառելու, անոր հա-
մար Ս. Դիոնեսեայ վարդապետութեան պիտի
հետևի և զնոյն բացատրէ: Եւ զի իր առջև այս
հին գրուածն ունէր՝ որ թէ խմաստիւք և թէ չա-
րադրութեամբ բանիկ կամ հայերէն թարգման-
նութեամբ ալ խրթին է, Սահմանոսի Սիւնեաց
քերդողին երկասիրածն ըլլալով, Շնորհալի ալ

այս իր գրուածին մէջ քան ուրիշ գրուածոց՝ ա-
ւելի բարձր և արուեստակեալ ոճ կը բանեցընէ.
շատ տեղ ալ Դիոնիսեայ գրուածն և իր մեկնածն
կըրնան իրարու հետ չփոթիլ, եթէ լաւ մտա-
գրութիւն չընէ ընթերցողն: Նախ հրեշտակաց
լինն դաս բաժնուիլը կ'ըսէ, լինն ալ երեք կարգ
բաժնուած. առաջինն և բարձրագոյն դասակար-
գին են Սերովբէք, Քերովբէք և Աթոռք. երկրոր-
դին՝ Տէրութիւնք, Զօրութիւնք և Իշխանութիւնք.
երրորդին Պետութիւնք, Հրեշտակապետք և Հրեշ-
տակք. ապա իւրաքանչիւր կարգի և իւրաքան-
չիւր դասու անուանց նշանակութիւնը, պաշտօ-
նը և օրհնաբանութիւնն առ Աստուած կ'ասէ-
դէ: Հրեշտակք՝ որ ստորնագոյն են լինն դասուց
մէջ՝ մարդկան մերձաւորագոյնք են և խնամողք,
և շատ տեսլեամբ յայտնուին. Հրեշտակապետք
ալ երբեմն նոյնպէս երկրաւոր եկեղեցւոյ տնտե-
սութեան մէջ երևցած են, ինչպէս Միքայէլ
Հրեից պաշտպան ըլլալով, Գաբրիէլ՝ առ Ս. Կոյսն
և առ Զաքարիա պատգամաբեր ըլլալով, և այլն:
Հրեշտակաց կերպարանքն՝ երբ երևնան մարդ-
կանց՝ հրակերպ և լուսեղէն կ'ըլլան, վասն զի այս
բաներով աւելի կը բացատրեն կամ կ'երևակայեն
մարդիկ՝ զԱստուած. որք և իրենցմէ վեր նիւթա-
կան կերպարանք մը չկրնալով մտածել՝ զանոնք
ալ մարդակերպ կը ներկայացընեն. բայց միանգա-
մայն և անոնց երկնաւոր ըլլալն իմացընելու հա-
մար՝ թևաւոր կերպարանեն, որ և անոնց երա-
գութեան նշան է: Երբեմն նկարին անղգեստ, եր-
բեմն զգեստաւոր, երբեմն զինուորական, երբեմն
քահանայական ձևերով, գոյներնին ալ երբեմն
զանազանին. և ըստ տեսլեան մարգարէից ոմանց՝
երբեմն ևս նկարին առիւծակերպ, արծուակերպ,
ձիակերպ, եզնակերպ, այն կենդանեաց ուժոյ և
յատկութեանց պերազոյն կատարելութիւնն ըն-

ծայելով իրենց: Երբեմն ալ՝ ի տարեբս կերպա-
րանին, ինչպէս գետ, ամբք, հով. կամ՝ ի գործիս,
ինչպէս կառք, անիւ, և այլն, որք մէկ մէկ իմաստ
ունին, և այլն: — Կը քննէ և զայս, Թէ ինչու
ամեն դասք ալ որք իրարմէ տարբեր են աստիճա-
նաւ, առ հասարակ Հրեշտակ կամ Չուարթուն
և Չօրուվիին կ'ըսուին. և կը մեկնէ, Թէ ինչպէս
քահանայապետ մը քահանայութեան աստիճան-
ներն ալ ունի, բայց աստիճանքն իրեն աս-
տիճաններըը չունին, այսպէս բարձրագոյն կարգք
և դասք ալ աստիճանը և պաշտօնն ու-
նին, անոր համար եթէ ամենքն միով անուամբ
կոչելի է՝ հարկ է որ աստիճանց անուամբ կոչուին:
Դարձեալ ամենքն ալ Աստուծոյ սպասաւոր հա-
մարուին, ուրեմն ըստ մեզ՝ իրեն հրեշտակք են. և
ամենքն ալ մեծ կարողութիւն ունենալով՝ միօրի-
նակ Չօրուվիին անուանին. Չուարթունք ալ
կ'անուանին Թէ ուրախ զուարթ ըլլալնուն, և Թէ
անքուն միշտապաշտօն ըլլալնուն համար: — Թևե-
րուն Թիւն ալ 2 կամ 6 կամ 8, իրենց իրարմէ
վերագոյն աստիճաններըը կը ցուցնէ, և Աստու-
ծոյ անհուն փառքն ու սրբութիւնը: Իսպմաչեայ
կերպարանին ալ կը նշանակէ ամենամեծ զգու-
շութիւնն և պատրաստութիւնն՝ ի սպասաւորու-
թեան Աստուծոյ: Հրեշտակաց Թիւն ալ յիշէ՝
անթիւ ըլլալ ըստ մեզ. և բոլոր եզած և ըլլալի
մարդկան Թիւն՝ անոնց մէկ դասուն միայն պիտի
հասատարի: — Յետ այսր ամենայնի կը քննէ հե-
ղինակն Թէ Հրեշտակք ինչ վերաբերութիւն ու-
նին մարդկանց հետ. եթէ ամեն մարդ ալ ունի
պահապան, և Թէ ունի՝ ինչու ամեն մարդ չի փըր-
կուիր. որոյ՝ առօրեական պատճառ կու տայ՝ մար-
դուս անձնիշխան կամքն, որոյ վրայ չեն քանանար
Հրեշտակք, ինչպէս և ոչ սատանայք. այլ եր-
կուքն ալ բարի կամ չար սերմանացանի նման են,

ոյոց սերմը կ'ընդունի մարդկային բնութիւնն, և
զոր ուզէ՝ կը պահէ և մեծցընէ, զոր չուզեր՝ ան-
բեր կ'ընէ. եթէ զբարին ընդունի և պահէ՝ հրեշ-
տակք աւելի կը խնամեն և ուրախութեամբ բա-
րեխօսեն առ Աստուած. ինչպէս որ 'ի հակառա-
կէն՝ դևք ալ կ'ամբաստանեն, և կը չանան վոր-
ձել զմարդիկ: Հրեշտակին բարի ազդարարութիւն
կըրնայ խնամել մարդ՝ երբ անտարբեր իմն եղած
առեն՝ « Ձմլի սիրտն յիշմամբ սիրոյն Աստուծոյ,
« և 'ի զեղջ և յարտասուս հարկանի, և յիշելով
« զվատթարն ինչ 'ի նմանե եղեալ գործս՝ առեայ
« բոլորով սրտիւ և ապաշաւէ, և փափագէ 'ի
« ժամուն յայնմիկ բարեաց գործոց, և հեշտա-
« նայ հոգին անձառ խնդութեամբ և ուրախու-
« թեամբ ». և այլն: Իսկ Սատանայի չար սեր-
մանքը ճանաչելն աւելի դիւրին է կ'ըսէ հեղի-
նակն. թէ և շատ հեղ սա չար բաներն ալ ազնիւ
տեսքով մը կը ներկայացընէ մարդուս. « և այն
« է աչակողմեանն ասացեալ պատերազմն »: Հօս
Եւագրի խօսքն ալ յիշէ, որ կ'ըսէր թէ դիւաց
ամեն խաբէական հնարքները ճանչցայ, բայց հրեշ-
տակաց խնամողական հնարքներէն շատ քիչ: Յիշէ
և զայն՝ զի առաքինագոյն անձինք ոչ միայն՝ այլ շատ
հրեշտակ ունին պահապան. որոց վերջին և գլո-
ւխագոյն պաշտպանութիւնն կ'ըսէ, կ'ըսէ, 'ի ժամ
մահուան մարդոյ. և արդարոյն հոգին « առեալ
« խնդութեամբ սքանչ նովաս հանդերձ յիմա-
« նալեացն կայանս, և հանգուցանէ զնա ընդ
« հոգւոցն արդարոց կատարելոց գրեցոյն յե-
« կինս, ըստ Պաւղոսի »: Եւ եթէ հօս զկատա-
րեալ վարձատրութիւն հոգւոյն չէ յայտնէ
մարմնոյն կ'խնացընէ, որով և զլուսն երանու-
թեանն, և հիմակուան աստուածաբանից սէս
անհաւիւ աստուածատեսութիւն մը չըսէր, յիշե-
լու է որ իրեն ժամանակակից և հոգեկից և աւելի

սրատես Ս. Բեռնարդոն անգամ աղօտաբար վար-
դապետէ զայս, ինչպէս և ուրիշ շատ Հայոց և
վարդապետաց, մինչև որ գրեթէ երկու դար վերջը
Բենեդիկտոս ԺԲ կանոնական կոնդակաւ այս խընդ-
իրը վճռեց և դադրեցոյց: — Շնորհալին ալ յի-
շելով վերջին դատաստանը և հատուցմունքն ար-
գարոց և չարաց՝ ըստ իւրաքանչիւր գործոց աւելի
կամ պակաս, գրեթէ յանկարծ կը կտրէ խօսքը,
կամ հեռևակ ընթացքը թողլով իր քերդողական
թևերը կ'առնու, և իբրև յորդորակ կը յարէ՝ ի
Ճառը՝ 200 տող ուղղոտեան չափաւ, կամ ինչպէս
ինքն կ'ըսէ «տունք հարիւր ըստ հարիւրոց ոչխա-
րացն». մաղթելով հրեշտակաց բարեխօսութիւնը,

« Ալլ պաղատիմք առ հոգեղէնսդ՝
Մեք արկարքս և հողեղէնքս », և այլն.

բոլոր եկեղեցւոյ, և ամեն դաս մարդկաց համար
առանձինն, նաև եղանակաց բարեխառնութեան,
հիւանդութեանց փարատման, խռովութենէ խա-
ղաղութեան համար, և այլն. ևս առաւել վանա-
պաշտպանութեան՝ ի ժամ մահուան.

« Եւ զբանականքս մեր հոգի
Ըզհամազգիս ձերոյ բնութեան՝
Հեշտալիս աւանդեցէք,
Եւ քաղցրութեամբ ըզձել ցուցէք...
Եւ ընդ հոգւոյ սուրբ անդրանկաց
Ողբ ի վերինն երուսաղէմ,
Դասաւորեալ անդ հանգուսջիք,
Մինչ ի շարժել պահապանացն.
Ցորժամ արծուիքըն սրլանան,
Ընդ գէշ մարմնոյն դան միանան,
Փողով մեծաւ ձեր ժողովին
Առ աթոռով դատաւորին »:

Այս հարիւր տուն տաղտացուԹիւնը՝ որչափ ալ Թուղցիկ իմաստներ ջնջի, Շնորհալի մանաւոր աշխուժիւ և երգուԹեամբ մը գրած կ'երևի, նեղբողական բացատացուԹիւնն ատարտելու ատեն. անոր համար շատ տողից յանգերու նոյնաձայնուԹեան հոգ չընելը, եղածներն ալ իր շատ վարժուԹենէն իբրև բնականաբար եկած են, ինչպէս ուրիշ քերդուԹեանց մէջ ալ:

Թուի Թէ այս Ճառէն և յորդորակէն շարժելով՝ 'ի պատիւ Ս. Հրեշտակաց և Հրեշտակապետաց՝ այս առեններս յօրինած է Շնորհալի մեզի աւելի պիտանի բան մ'ալ, որ է Կանոն կամ Շարական նոցա, «Որ յանէից առեղծեր զպաշտօնեայս քո», զոր ամեն տարի 'ի տօնի նոցին կ'երգէ մեր եկեղեցին. և յորում՝ Ճառին մէջ բացատրեալ իններեակ դասքն հրեշտակաց՝ յիշուին մանաւորապէս Տէր յերկինից տանց մէջ, յԱԹոռոց մինչև 'ի Հրեշտակս: Նշանակելի է որ Շնորհալեոյ եղբայրն Գրիգորիս ալ իր երգած Բ Ծաղկազարդի կամ Համբարձման դիմացի կիրակի օրուան Շարականին մէջ կը յիշէ այս դասակարգուԹիւնս. «Ըստ դասուց երկնայնոցն տօնէին ուրախուԹեամբ, 'ի Հրեշտակացն սկսեալ, մինչ 'ի յաԹոռան կատարեալ»: Եւ տող յարէ. «Իսկ 'ի չորրորդն դասէ՝ պաշտպան եղեալ Լուսաւորչին», և այլն. որ և ըստ առաջնին տան մէջ ըսածին «աւանդուԹեամբ առ մեզ հասեալ». և Թուի Թէ յետ Շնորհալեոյ Ճառին երգած է Գրիգորիս, և այս աւանդուԹիւնը նորոգած. ապա Թէ ոչ զարմանալի կ'ըլլար Շնորհալեոյ լռելն զայս և չյիշելը բարձրագոյն դասու հրեշտակաց պաշտպանուԹիւնն՝ առ բարձրագոյն դաս սրբոց. Գրիգորիսի շարականին չէնքն ալ ծերուԹենէ փեռուր մը կը ցուցընէ, ոչ Աւետեաց շարականին վեհուԹիւնն, և ոչ ջնջոհնեաց տաղին Թուոյցքն նշմարուին անոր մէջ:

## Ժ.

*Հիւանդութիւն Շնորհալւոյ. — Մահ Ս. Բևեռապրոսի. — Ծնունդ և անունդ Ներսիսի Լամբրոնացւոյ։*

Շնորհալւոյ տեղափոխութենն ևնոր կլնայ կլայ, մանաւանդ ամառնային տաքութիւն տեղ- էոյն՝ իր աշխատանաց վրայ աւելնալով՝ վրան ծանր հիւանդութիւն մը բերին, զոր ինքնին յիշէ 'ի նախայիշեալ Թղթին առ եղբօրորդին իւր Ապիրատ. Թէ և հիւանդութեան սաստկութիւնն կ'երևի գարնան սկիզբները կամ ալ առաջ. վասն զի Թուղթը գրեր էր

« Ի հիւանդոտ եւ ցաւալից
Անձնէ, յաւուրըս գառաւանից.
Զոր մերձ մահու հասեալ մըտից՝
Դարձոյց այսրէն՝ Տէրն ամենից ».

և ինչպէս որ, կ'աւելցընէ, Թղթաբերներէն ալ « լինիս տեղեակ կըրից », զոր կրեր էր երկար և սաստիկ հիւանդութեամբ։ Թերևս այս կամ ուրիշ ծանր հիւանդութիւն մ'է՝ ուրիշ Թղթի մը մէջ յիշածն ալ, առ մտերիմ բարեկաւին Գէորգ վարդապետ Հաղբատեցի. « Եւ մեք ևս յետ մարմնա- « կանին ախտի վճարելոյ՝ ախտանամք օր ըստ օրէ « իմանալեաւս փոքու և մեծաւ »։ Այս յիշատակքս և Հռոմկլայի տաքութեան վրայ քանի մ'անգամ Շնորհալւոյ քաղցր գանգատքն (231), և Լամբրոնացւոյն անոր սովորական հիւանդութենն կոչելը գվերջինն ալ՝ որով և մեռաւ, կարծիք կու

ման որ պարագային կերամ մը կը բռնէր գնա, ուս-
կից չկարցաւ ալ բժշկուիլ, բայց զգուշութեամբք
15 կամ 20 տարի դիմացաւ:

Թերևս մինչ Շնորհալին առաջին անգամ այս-
պիսի հիւանդութիւն կը կրէր, Ս. Բեռնարդոս
ալ վերջինը կրեց. 1153 տարւոյն սկիզբներէն սը-
կարանալով, և աւելի կամ պակաս ոյժ առնելով
և ուժէ ընկնալով, վերջապէս նոյն տարին ամա-
ռուան տաքուն՝ օգոստոսի 20ին (մօտ այն օրե-
րուն՝ որ մեր Շնորհալւոյ ալ մահաբեր եղան), իր
սքանչելի մաքրութեամբ և եռանդեամբ հոգին ա-
ւանդեց՝ պարզևողին ձեռքը. եկեղեցւոյ Թողութ
առատ և պայծառ գանձ մը վարդապետութեան,
և աշխարհի օրինակ մը անարատ վարուց, զգօն
մտաց և գործունեայ կենաց. և այնպիսի ազդե-
ցութիւն մը ժամանակակիցաց վրայ՝ զոր Թերևս
ոչ ոք ունեցեր է, մանաւանդ այսպիսի խոնարհ
միանձնական վիճակի մէջ. քահանայութենէ վեր
աստիճան մը չուննենալով, և սակայն քահանա-
յապետաց և իշխանապետաց առաջնորդելով բա-
նիւ և գրով: Կենաց և մահու հարկաւ՝ այս ա-
րեւմտեան աշխարհի Շնորհալի լուսաւորին խո-
նարհելու առեն՝ մեր արևելեան լուսաւորն գեռ
իր հորիզոնին բարձրութեան մէջ էր, թէ ոչ կե-
նաց շրջանին չափով՝ այլ արդեանց և գործոց:
Այս երկուքին զուգակցութիւնն յիշեցի առաջ,
և հօս ալ ներուիլ աւելցընելու, եթէ ուզեմք բաղ-
դատել, որ Բեռնարդոս աւելի կը նմանի այն մեծ
լուսաւորաց՝ որ աւելի կարճ ժամուց մէջ աւելի
ասասիկ ցոլմունք կու ցուցընեն, և երբեմն աւելի
երբեմն ալ աւելի կը փայլին. իսկ Ներսէս կը նը-
մանի այն արուսեակ աստեղն՝ որ միշտ համանման
հանդարտ լուսով կը փայլի, և երկարագոյն ա-
տեն: Երկուքն ալ կանոնաւոր ընթացիք գեռոց
նմանին, բայց Բեռնարդոս երբեմն մեծամեծ ա-

վքինեռով կը Թաւալի, մինչ Ներսէս մանր ալեակ-
նեռով հաւասար կ'ընԹանայ. Բեռնարդոս շատ
հել իբրև մեծաւոր հնոցէ կամ հրդեհէ կայծեր
կը ճայԹէ. Ներսէս իբրև հեռաւոր հնոցի կամ
հրդեհի լոյս մը՝ հանդարտօրէն հորիզոնին վրայ
կը նկարուի: Երբ Եդեսիա գերեցաւ և վերաե-
ցաւ, ինչպէս տեսանք, Բեռնարդոս կերպով մը
վազեց 'ի վրէժխնդրուԹիւն, դրդեց զարևմուտս.
Ներսէս մօտանց ալ տեսնելով ալէտքը՝ նստաւ և
ողբաց. մեծ էր այն աւերն Բեռնարդոսի ձառից
ազգեցուԹիւնն. հիմայ մեծագոյն է Շնորհալւոյ
Ողբոյն: Արևմտեան Ս. Հայրն՝ իր կոլմերու մո-
լորելոց հետ տաք տաք կը վիճէր, կը մրցէր, կը
յաղԹահարէր. մեր արևելեան Ս. Հայրն՝ աւելի
կը ջանար իր եկեղեցին պաշտպանել՝ սխալ դա-
տողներէ, աւելի պահանջողներէ, և անփոյԹ Թո-
ղողներէ: Անիկայ հրեղէն լեզուս մ'էր ձարտասան.
ասիկայ մեղրակաԹ շրԹունք երդահան: Բեռնար-
դոս անդադար շարժման մէջ, մերԹ յարքունիս
և մերԹ յանապատս, Ներսէս աւելի առանձնա-
ցեալ 'ի խորչս վանաց և 'ի ծերպս եփրատական
քարանձաւաց, գրով քան բերնով խօսէր. այլ և
երբեմն ելնէր՝ նման իր արևմտեան զուգակցին,
կամ 'ի հաշտեցընել զնիւհանս, կամ ընդառաջել
Թագաւորաց, և այլն: Իսկ երբ զմարդիկ Թողլով՝
երկնաւորաց հետ կենակցիլ և խօսակցիլ ուզեն,
երկուքն ալ սարբեր եղանակներով և հաւասար
ներդաշնակուԹեամբ օրաերնին կը լարեն. և յետ
երկար ընկղմելոյ յաստուածծուԹեան, գեղեցիկ
լուռեան խաղան զմայլեալք յԱստուածամայրն. մին
կ'երգէ « Ողջ լեր աստղիկ ծովային », Ave maris
Stella, միւսն՝ « Նոր երկինք յերկրի, արփւոյն
« պարուհակոյն, ծագողին ծագող [1] »:

1 Տաղ Աւետեաց:

Եթէ այս առեն արևմտեան եկեղեցին զրկուեցաւ իր վաւերուն հոգևորէն, մեր եկեղեցիս մեծաբաղդ գտուեցաւ՝ գրեթէ այն թուականէ հոգին գողնալով, և իրօք ուրիշ անոր նման մ'ալ ժառանգելով, և նոյն օրերուն ընծայելով մեզ Բեռնարդոսի հոգեկից և Ներսէսի անուանակից՝ Լամբրոնացին, որ ծնաւ սոյն 1153 թուականին: Նոյն աստուածային սիրոյ և եռանդեան կաղապարէն թափուած հոգի և անձ մ'ալ, որ յետ Բեռնարդոսի և Շնորհալւոյ՝ վեմադոյն և աքանչելի կերպարանքն է ժի դարուն վերջին քառորդին. աշխուժիւ և տաքուԹեամբ և ուժգին վերապատմամբք՝ աւելի նմանագոյն Բեռնարդոսի, կըրնամ ըսել Թէ և կորովի տրամադատուԹեամբն և սիրալիր խօսիւք ընդ Աստուծոյ, նոյնպէս և գործունէուԹեամբն՝ քան իր պատեղբայրն. և եԹէ նուազուԹիւն կամ նուաստուԹիւն մը չէրևի ըսելս՝ երկու Ներսէսից բարքն յիրար խառնելով կատարեալ Բեռնարդոս մը կը ձևանար. սակայն իւրաքանչիւրն նմանողուԹեամբ հանդերձ իր յատկուԹիւնն ունի, և մեր Շնորհալիս կը գերազանցէ միշտ ինքն իրեն նման ըլլալովն և յամենայնի կատուղի շնորհափայլուԹեամբն: Ինչպէս Շնորհալին յետինն է մեր վեհակերպ հայրապետաց, Լամբրոնացին ալ յետին վեհ եպիսկոպոս և վարդապետն է մեր եկեղեցւոյն. ատով կը փակուի Հայկական մեծուԹեան վերջին Դարն, ժի: Եւ զի Թէ արդեամբք և Թէ ժամանակաւ այսպէս յարաբերուԹիւն ունի Ներսես Լամբրոնացի մեր պատմական պարագայիս՝ զոր և յետոյ յիշեցի և պայծառացուց, արժան է որ համառօտիւ յիշենք իր ծագումը:

ԺԱ. գարուն կիսուն՝ երբ Մեծ Հայոց զանազան կողմերէ ազնուականք և սանուտեաւք՝ գաղԹեցին 'ի Փ. Հայս և յերկիր կայսերուԹեան Յու-

նաց, Հայոց ամենէն արևելեան գաւառներէն՝ Գանձակայ կողմէն ալ՝ Օշին անուամբ ազնուական մը եկաւ Կիւլիկիոյ կողմերը՝ ի 1073. ուր կայսրն կուսակալ կարգեր էր Հայ Ափծրունի Ապլղարիպ իշխանը, որուն արգէն ծանօթ և նժդեհակից էր Օշին. ուստի և կրկին մտերիմ և օգնական եղան իրարու. Ապլղարիպ տուաւ Օշնի Լամբրոն ա֊նուամբ ամուր բերդ մը՝ Տօրոսի գԺուարին դըրից մէջ, ուսկից իր տոհմին Լամբրոնացի ըսուեցաւ. և յետ մահուան Ապլղարիպի՝ առաջին ազնուա֊կան և մեծապատիւ տոհմ եղաւ այն կողմերը, կայսերաց ծառայութեան մէջ. որք նախ Օշնի որ֊դին Հեթումը Սեբաստոս կոչմամբ պատուեցին: Սա ԺԲ գարուն սկիզբները իր դստերաց մէկը տուաւ կին Վասլի՝ անդրանիկ եղբօր մեր Հայրա֊պետաց, և այս առաջին կապ մ՚եղաւ երկու ազ֊նիւ տոհմից խնամութեան. որ ալ աւելի մերձա֊ւորեցաւ՝ երբ Հեթմոյ որդին Բ Օշինն ալ՝ անունց կրաեր եղբօր Շահան–Ջօրավարի Շահանդուխտ գուսարը իրեն կին առաւ, առանց խմացընելու կաթողիկոսին և Շնորհալւոյ՝ որ արգելք չըլլան իբրև մերձաւոր ազգակցութեան: Առնցմէ ծնան 5 արու և 3 աղջիկ զաւակ. նախ աղջիկ մը, տպա (1151) Հեթում (Բ) պայազատան, ետ Սմբատ (1153), որ նոյն ինքն է մեր խնդրելին և քննելին՝ Ս. Ներ֊սէս Լամբրոնացի: Սա լաւ ոչ յարգանդէ՝ այլ և ոչ ուշ յետ ծնընդեանն նուիրեցաւ Աստուծոյ և Աստուածամօրն. վասն զի ոտնդիայ հասակին մէջ մահու վտանգաւ հիւանդանալով՝ բարեպաշտ մայրն ուխտ՝ ի սիրտ բերաւ զերեխային իրենց բերդին քով իր երկանը չինած Սկևռայ վանքին Ս. Աստուածածնի եկեղեցին, և խոստացաւ անոր ըն֊ծայելու՝ եթէ առողջանայ: Եւ այնպէս ալ եղաւ. առողջացաւ և նուիրեցաւ Աստուծոյ կուսական կենաք և սրբազան կարգաւ իրեն ծառայելու. զոր

և կրկին պատուիրեց հայրն Օշին՝ մահուանն ա-
տեն, երբ զանդրանիկին իրեն յաջորդ դրաւ, Սըմ-
բատն ալ իր շինած Սկեւռայ վանից առաջնորդ
սահմանեց, երբ հասակն առնու. բայց և՛ ի տղայ
հասակէն յանձնեց այն տեղի միաձանից զինքը
դաստիարակելու. որ և նման մեր Պահլաւունի
հայրապետաց՝ յետ մօրը կաթին՝ միաձնական
կենաց կրթութիւնը ծծեց բոլոր մանկութեան ա-
տեն: Այն ատենէն՝ յառաջ իսկ քան զանունը ժա-
ռանգելը՝ ժառանգեց իր պապերջօր ընութիքը և
հոգին. գուցէ մասամբ բաղդատոր ալ քան զնա
գտուելով՝ ի մտին վարժից. վասն զի մայրն՝ զոր
պատմիչն կոչէ « կին ժրապլուխ և պատկ առն իւ-
րոյ », ըստ առակաց Սողոմոնի, քիչ մը յոռնա-
րէն լեզու գիտնալով՝ հոգաց որ որդին ալ սովրի.
և սա ալ՝ ի բնէ և կրթութեամբ սրամիտ և շատ
ուսումնասէր ըլլալով՝ տղայութեան ատենէն սո-
վրեցաւ այն կարևոր լեզուն, և յետոյ լատինա-
րէն ալ. և երկու լեզուէն ալ գրոց և թղթոց
թարգմանութիւններ ըրած է: Այնքան մեծ էր
եռանդն ատտուածախրութեան և իմաստասիրու-
թեանն՝ որ և ոչ քնանալ կ'ուզէր. այլ երբ յետ
ինչուան պահ մը պիշերոյ աղօթելէն և կարդալէն՝
սակաւ՝ ի քնոյ՝ անկողնին չէր մտներ, հապա
աթոռի մը վրայ կծկելով քանի մը ժամ կու քը-
նանար. և արթննալուն պէս՝ մէկէն իր աղօթից
և ուսմանց գրոց կը դիմէր. աղօթից ատեն՝ այն
տղայութեան հասակէն ընդունած էր արտասուաց
կամ փղձկման ընորհքը, զոր շատ քիչ սուրբք
ընդունած են, և այն յետ շատ տարիներու: Մաս-
վարժութեանն համար ալ կ'ըսեն, թէ գետ 16 տա-
րուան ըլլալով սկսեր էր Ս. Գիրքերը մեկնել. և
արդէն հմայ իրմէ մնացեալ մեկնութիւններն ալ՝
գալար հասակին ընծաներ են, որ հասունացեալ
մտաց բերք կ'երևին. և անոնց մէջ ամենէն գլխա-

*ասպ գործն՝ Պատարագի մեկնութիւնը, որ մեր դպրութեան և տրամաբան գրուածոց ամենէն առջի կարգը գասուելու գրոց մէկն է, իր կենաց 24 տարին չանցած՝ գրեր աւարտեր էր. ասով և ճարտասանական գրուածօքն՝ աւելի զօրաւոր և տպաւնդաւոր միտք կը ցուցընէ՝ քան իր հայրապիր Հայրապետն: Բարեսիրութե և խնամատարութե մեծ հաւատաւիք մ'ալ ցըցուց իր հայրենի ժառանգութե գործածութըը. հայրն՝ ուրիշ բաներէ զատ իրեն 30,000 ոսկի Թոլուցեր կամ տուեր էր, որ հինակուան արժէքիւք կէս միլիոն Ֆրանգի մօտ կըրնայ ըլլալ. ինքն այս գումարս երեք մաս բաժնեց. մէկը՝ եկեղեցւոյ սպասուց և վայելչութեան սահմանեց, մէկալը՝ աղքատաց սեպհականեց, երրորդն ալ գիրք ստանալու և գրել տալու. շատ գրքեր ալ իր ձեռօք գրած է. որոց մէկ քանին մեր ձեռքն ալ հասեր է, տեսեր և համբուրեր ենք. ինչուան Հռովմայ և Բարիզու մեծամեծ գրատանց մէջ ալ գտուին իր մատանց գծագրութիքն:*

*Պատանեկութե 16–ամեայ հասակի մէջ էր Սըմբատ՝ երբ մայրն տարաւ զնա առ Շնորհալի հօրեղբայրը իւր, այն առեն կաթողիկոսացեալ (1168), որ և Եղիայի նման տեսնելով իր կրկին հոգին այն նոր Եղիսէի վրայ, չզանդալեցաւ զնա քահանայ ձեռնադրելու, ինչպէս որ ինքն ալ ձեռնադրուեր էր տղայ հասակի մէջ. և 'ի նշան մեծ սիրոյն և յուսոյն՝ իր անունն ալ պարգեւեց անոր, զոր և կրեց սա արժանապէս՝ նաև յետ մահուան իր ձեռնադրողին. որոյ վրայ վոխադարձաբար սէրն և եռանդագիտութիւնն ալ ցըցուց նորընծայ քահանայն՝ անոր վարքը և դովութիւնը գրելով ստանաւոր բանիւ: Ձեռնադրութենէն զատ՝ Շնորհալին մեծ խնամքով քիչ մ'առեն քովը պահեց իր սիրուն և սրբիկ սանուկը, իր մեծ հոգւոյն վերջին ճառագայթից*

խառնելով. և մեծագոյն զարմացմամբ և հաճու-
թեամբ տեսնելով այն անկատար հասակին մէջ
գերագոյն կատարելութիւն մը, խոր հասկնա-
թիւն մը աստուածային իրաց, և նախանձելի սէր
մը աստուածխօսութեան, որով փափագէր նոր-
ընծայն՝ Հռոմկլայի և Շնորհալւոյ աթոռէն տեսնել
աստուածամօտ անդբաղ ապաստանարանին: Ըսր-
կեց գնա Սեաւ լերին ամենէն ապահով վանքե-
րու. ուր քանի մը տարի պարտեզով և նատելով,
և իր հոգւոյն և մտաց ախորժածներըը հաւաքե-
լով՝ գարձաւ իր հայրենիքը. բայց յանձն չառաւ
հօրը կաթոլիկոսին համեմատ Սկևռայ վանաց առաջ-
նորդութիւնը, զինքը դեռ անկատար համարելով
տարօրք և վարուք. և Յովհաննէս անուամբ վար-
դապետի մը աշակերտելով՝ անոր հետ անապատե
անապատ վանքէ վանք կը քաշուէր, մանաւանդ
Սաղմոս ըսուած վանքը, ալօթից և ուսմանց և
տուրբ պատարագը մատուցանելու միայն զբաղե-
լով: Ինչուան որ յետ մահուան Շնորհալւոյն՝ յա-
ջորդն Գրիգոր Տղայ՝ քովը կանչեց, և քիչ մ'ա-
տեն ալ ժամանակին պիտանագոյն վարդապետաց
քով վարժեցընելով 23 տարուան հասակին արք-
եպիսկոպոս ձեռնադրեց զնա Տարսոնի և Լամ-
բրոնի և մերձակայ գաւառաց. և այնուհետև ար-
դեամբք ժամանակին եկեղեցականաց մէջ այն տե-
ղը բռնեց՝ զոր Շնորհալին իր ժամանակակցաց
մէջ: — Բայց մեր պատմութեան սահմանին հա-
մար բաւական կարծեմք Ն. Լամբրոնացւոյ արե-
գակնանման հոգւոյն այս ծագումը, յորմէ կըր-
նար դուշակուիլ իր ապագայ պայծառութիւնն
եկեղեցական և քաղաքական գործոց մէջ. որով
և նոր պարագայ կամ ժամանակ մը կը կազմէ իր
կենաց երկրորդ կէսն (1175–1198), արժանաւոր
՝ի շարունակութիւն իր պապերէն վարուց, և ՝ի
բովանդակել մեր ծի դարը՝ Նէրսէսեան կոչմամբ:

Բայց զինքըն Ներսէս Թոռլոս առեն՝ հարկ է որ նորէն իր հօրը (Օշնի) դառնանք, առ որ մեծ հարկ մը պիտի բերէ զՇնորհալին՝ ի Հռոմկլայէ՝ ի Լամբրոն և ուրիշ Կիլիկիոյ քաղաքներ. և այս հարկին գլխաւոր պատճառ եղող անձ մ'ալ, որ և ժամանակիս ներկայացող արդարև մեծ և նշանաւոր կերպարանք մ'է, և սիրելի ազգիս, և որ Թեբևս կըրնայ մեծութեամբ՝ (Թէ և տարբեր տեսակաւ) հաւասարիլ Շնորհալւոյ մեր պատմութեան մէջ. և է սա՝ նախ Կիւլիկիոյ լերանց տպա և դաշտաց և քաղաքաց իշխեցողն, Թորոս Բ, եղբօրորդի Ա. Թորոսի Թոռին Ռուբինի, կանգնողն համանուն հայկական հարստութեան:

## Ի.

*Թորոս Բ և եղբարքն՝ Ստեփանէ և Մլեհ. գործք նոցա ընդ Յոյնս, Լատինս և Թուրքս. — Շնորհալի վիճակող հաշտութեան Թորոսի և Օշնի Լամբրոնացւոյ:*

Արդէն քանի մ'անգամ յիշեցինք զԹորոս Բ, որ մեր պատմութեան պարագային մէջ՝ ի սկզբանն իւրև ոլբերգելի մանուկ մ'է գերութեամբն ընդ հօր իւրոյ Լևոնի և բանտեալոյն՝ ի Կ. Պօլիս. յետոյ իբրև վիպասանելի երիտասարդ մը՝ անկարծելի կերպով բանտէն ազատելով, յորում սիրահար հանդոյցներ ալ կը նշմարուին. իսկ կատարեալ հասակաւն՝ կարճ գիւցազն, և այնչափ գովելի և հաճոյ գիւցազն, որչափ որ քաջութեն հաւասար հայրենեաց նախանձախնդիր էր. մինչև Յունաց մայրաքաղաքի և ազնուական տիկնոջ մը հրապոյրքը Թոռլով՝ դեռ դալար երիտասարդութեան մէջ, իբրև առիւծու (Լևոնի) վարժարանի

մէջ կրթուած զուարակ մը՝ ցնցեց ցաւոքեց այն թուլացուցիչ ցանցերէն, և զարմանալի, ըստ ո-մանց և հրաշալի յաջողութեամբ կամ առաջնոր-դութեամբ, եկաւ մնաւ իր հօր և հաւուց արեան քրտամբք կռուած և բռնած տեղերը: Այնքան սքանչելի թուեցաւ Թորոսի ազատումն և տիրա-պետութիւնն՝ այնքան կայսերական առելութե և հզօր զօրութեան դէմ, որ եղածը կամ դիպուա-ծը պէսպէս պատմելով և այլայլելով՝ իրմէ գար մը վերջը գրողք ալ կը տարակուսէին, թէ ո՞րն է ասոյգն, և չկարցան մեզի աւանդել. նոյնպէս վեր-ջի գործոց շատութիւնն կամ շուտութիւնն ալ՝ թէ իրարու և թէ ժամանակի շփոթութեանց առիթ եղած է. կամ լաւ ևս ըսելով, մերձաւոր ժամա-նակակից պատմագիր և տարեգիր մը չըլլալով՝ կարգաւ և թուականաւ աւանդուած չեն գոր-ծերն, և շատ բան անյիշատակ թողուած և թա-ղուած է: Ի վերայ այսր ամենայնի՝ գեռ շատ բան ալ զանազան տզգաց պատմիչք հարևանցի յիշա-տակեր են. յորոց քաղելով և ընտրելով կը հա-մառօտենք, որչափ որ մեր նպատակին պատշաճ դատինք:

Ռուբինեանց իշխանութիւնն գրեթէ բոլորովին ջնջուած էր Թորոսի գերութեան առեն. Յոյնք, Թուրքք և Լատինք գրաւեր էին Ս. Թորոսի և իր եղբօր Լեւոնի նուաճած երկիրները. Թորոսի գար-ձին առջի տարիներն ալ՝ Զանգիի և Նուրէտտինի արիւնահեղ աշխարհակալութեանց առենն էր, յորում Յոյնք և Լատինք անդամ վախի մէջ էին: Անոնց աղմուկն և զբաղմունքն իրեն օգտակար եղաւ՝ անյայտօրէն մնալու իր հարց սահմաննե-րը [1], և քիչ քիչ նուաճելու: Իբրև վախտակից և

1 Յետ ինն տարուց գերութեան կ'ըսուի Թորոսի գար-ձըն, որ կ'ըլլայ միջոց 1137—1145 տարիներու. և յիրաւի Լեւոն գերեցաւ յամի 1137, այլ Թորոսի գարձին տարուըն չենք միաբանիր պատմիչք մեր:

պանդուխտ մ'եկած՝ առանց ընկերի և օգնակա-
նի, միայն զինքը սիրող Յոյն տիկնոջ գանձուց մէկ
ման ունէր իրեն ապրուստ և ճար. որով նախ
նաւեց եկաւ'ի Կիպրոս, անտի մտաւ'ի Կիւլիկիա.
քահանայի մը յայտնեց զինքը, որ տաճն մը քովը
պահէց իբրև ծառայ կամ հովիւ. յետոյ Ատոլի մե-
ծատաւլուի մը (Ադանաս անուամբ) յայտնեց,
իմանալով անոր հաւատարմութիւնը. որ և իրեն
ձի մը տուաւ, 12 ալ ընկեր. որոց օգնութեամբ,
յայտ է թէ և խաբէական հնարքներով, Թո-
րոս կըրցաւ Ամուռա ամրոցը մտնել և տիրել
(1145), և անոր վրայ իր հայկական և հայրենա-
կան դրօշը բարձրացընել. ու մեծ ալէկոծութեամբ
ընկղմեալ նաւու մը մէկ հատիկ ըսէ զերծ մնացած
նշանակիր կայմի պէս՝ երևցընել հաւատարիմ ազ-
գակցացը, 'ի զարմանս Թշնամեաց և ընտանեաց:

Համբաւն տեսութենէն աւելի տարածուելով՝
փութացան կարիճք ժողովելու առ պայազատն
Ռուբինի, որոց առաջինք եղան իր երկու եղբարքն
Ստեփանէ և Մլեհ, Թողլով զՆուրբատին, որոյ
քով էին կամաւ կամ ակամայ. քիչ քիչ բազմա-
ցան հայրենոգիք և յունատեացք, մինչուան 10000
հոգւոյ գունդ մը ձևացաւ երեք եղբարց քով:
Զօրաց չտանալուն համեմատ Թորոս ալ կ'ընդար-
ձակէր շարժմունքը և յարձակմունքը. և առաջին
ձեռքն ձգած տեղերէն մէկն ալ եղաւ Վահկա
բերդն, իր նախնեաց նախնի տոհմատուածն. յետոյ
Սիմանակլայ և Ռուբէ ըսուած բերդերն. կամաց
կամաց լեռներէն և բերդերէն իջնելով սկսան Հայք
դաշտային քաղաքաց վրայ յարձակիլ, և մէկ մէկ
նուաճել երբեմն Լևոնի իշխանութեան տակ ե-
ղածները: Այս կերպով քանի մը տարիէն հռչա-
կեցաւ Թորոսի անունն. և իմացուեցաւ որ նորէն
Հայ տիրոջ կամ բռնաւոր մը երևցեր է'ի Կիւլիկիա,
և ով որ առանց անոր հաշիւ կ'ընէ՝ կըրնայ սխա-

լիլ, և վանդուիլ, ինչպէս որ նախ Թուրքք փոր-
ձեցին: Երբ անգամ մը Թորոս միայն 12 հեծելօք
և ջոկատ մը հեռւակօք կ'երթար 'ի Ռապան՝ յայց-
ելուԹիւն մեր նախայիշեալ Ձոսլինի (1149-1150),
քանի որ սա դեռ յիշխանուԹեան էր [1], բազմու-
Թիւն աւարառու ասպատակաց յարձակեցան,
և կ'ուզէին զԹորոս ալ ալափել. բայց ինքն և իր
կուիձներն պատրաստագոյն գտուելով՝ ոչ միայն
զնրեանք պաշտպանեցին՝ այլ պատերազմի դաշտ
մը գարձուցին տեղը, 3000 Թուրք ԹօԹափելով:
Այս գործս Թորոսի համբաւոյն հետ վախն ալ
տարածեց չորս կողմ, և յերևան հանեց արժա-
նաւոր յաջորդ մը հօրը և հօրեղբօրը, և նոր Հայ
քաջազուն մը, « խոհեմ և զգօն, և 'ի կռիւս յա-
« ջողակաձեռն, տեսուչ ԹխամորԹ, երկայն և
« գեղեցիկ, ահարկու և գանգրահեր. և լի ա-
« նային չնորհօք », ինչպէս կ'ըսէ Սմբատ պատմիչ:

Աւով ինքն յաջողածն ալ աւելի խրախուսելով
յարձակեցաւ մեծ և ամուր քաղաքաց վրայ, և
առաւ 'ի Յունաց զԹիլն Համալենոյ և զՄախս (Մա-
մեստիա): Այս եաքի քաղաքիս մէջ կը նստէին
այն ատեն Յունաց կայսեր երեսփոխան կուսա-
կալք Կիւրիկիոյ, գուքս պատուանուամբ, և ամեն
տարի կը փոխուէին. այս տարուան (1151) գուքսն
էր Թովմաս անուամբ մէկն, զոր գերի բռնեց Թո-
րոս, ուրիշ ազնուականներով. յարմար միջոց գըտ-
նելով՝ կայսեր զբաղմունքը Սիկիլիոյ և Դանուբայ
կողմերը, Նուրէտտինայ ալ որշտանքը յերկիրն
Ձոսլինի և զայս բռնելը: Աւով Թորոս գրեթէ հօ-

1 Միխայել Ասորի պատմիչ Թորոսի երթալուն պատ-
ճառ կը դնէ Ձոսլինի դուստրը իրեն կին առնուլ. որ հա-
ւանական չերևիր, թէ մերձաւոր խնամութեանն համար,
զի իր քեռ Թոռը կ'ըլլայ կինն, և թէ արդէն պատմչաց
յայտնի յիշելով որ իր անունն էր Թոմաս Պայլ կոչուած
լատին իշխան մը:

րը բոլոր ժառանգութիւնը ձեռք առաւ. և աւելի ալ ընդարձակել սկսած էր, երբ կայսրն Մանուէլ դարձաւ 'ի կողմանց Ունկարաց, և լսելով եղածը՝ իր անխոհեմ հօրեղբօրորդին Անդրոնիկոսը կեսար անուանելով՝ մեծ գնդով զօրաց խաւրեց 'ի Կիւլիկիա, նուաճելու զերկիրը և աւելի զԹորոս (1152): Իսկ սա տեսնելով Թշնամեաց բազմութիւը՝ խոհեմութիւն սեպեց պաշտպանուիլը քան յարձակիլը, և քաշուեցաւ Մամեստիոյ մէջ. զոր Անդրոնիկոս քիչ ատենէն եկաւ պաշարեց իր մեծ բանակովը, զոր աւելի մեծցուցեր էր Կիւլիկիոյ մէջ Յունաց հաւատարիմ գտուող իշխանաց զօրօք, որոց մէջ կային նաև Հայք. ինչպէս Նաթանայէլեան կոչուածքն՝ Ակուռայ բերդին տէրքը, Պապեռօնի և Բարձրբերդի տէրքն, և մեր նոր ծանօթացեալ Լամբրոնի տէրն Օշին, և այլք: Այսքան բազմութե և պատրաստութեան դէմ եթէ մէկ կողմէն յանդգնիլ չէր ըլլար, ուրիշ կողմե ալ երկար պաշարեալ դիմանալ չէր ըլլար, բաւական պաշար և պատրաստութիւն չունենալով. անձնատուր ըլլալն ալ անտանելի էր Թորոսի. սկսաւ կակղութեամբ և խոնարհութեամբ բանագնացութիւն ընել, ըսելով թէ ինքն ալ ուրիշ ազգային իշխանաց պէս յանձն կ'առնու Յունաց ինքնակալութիւնը ճանչնալ, և հաւատարիմ ըլլալ կայսեր. բայց նա ալ ճանչնայ իր հարց իրաւունքը, և աւելի չնեղէ: Իսկ գոռոզն Անդրոնիկոս ամեն բանէ մէկ պատասխան կու տար, թէ անկարելի է Թորոսի ուրիշ պայման դնել, բայց եթէ անձնատուր ըլլայ, որ կապեն զնա այն շղթաներով՝ որով իր հայրը կապեր էին. « Չերկաթն՝ որով զհայրն քո « տարաք՝ 'ի հետ ունիմք, որով զքեզ կապեալ « տարցուք »: Այս կակծագին և ամբարտաւան խօսից էդիմացաւ Թորոս. և առջի առթին, որ անձրևաթափ և հողմաշունչ գիշեր մ'եղաւ, մինչ-

դեռ Անդրոնիկոս կատակերգութեանց և անառակութեանց զբաղած էր, Թորոս քաղաքին պարիսպը ձգելով՝ զօրքերովը դուրս ելաւ զգուշութեամբ. և առաւօտուն դէմ յանկարծ Յունաց բանակին եաեն ընկած՝ սկսաւ չփոթել, քշել ու կարդել. Յոյնք՝ որ 12,000էն աւելի էին, մեծագոյն մասամբ կոտորեցան, քիչերն վատ և չարեաց պարտ Անդրոնիկոսի հետ փախան ինչուան Յունոլիք, մինչ որոյ սահմաններըը հալածեց զնա Թորոս և դարձաւ իր քաղաքը՝ ի Մամեստիա, ոչ յաղթութեամբ միայն, այլ և շատ թանկ աւարաւ, և աւելի թանկ գերիներով: Վասն զի հասարակ զինուորները միայն կողոպտելով մերկ արձակեւ տուաւ, իսկ պատուաւորները կապել տուաւ, փոխանակ իրեն ազատնացեալ կապանաց: Անոնց հետ կային նաև Հայ իշխանք, որոց քանի մը գերխաւորքն անօգուտ քաջութեամբ կռուելով սպանուած էին. գերելոց գլխաւորն էր Ն. Շնորհալւոյ փեսան և Ն. Լամբրոնացւոյ հայրն՝ Օշին. որ և Յունաց խոհեմագունից հետ մահուանէ աւելի ամաչելով այնքան մեծ բանակով այնքան փոքր դունդէ և մէկ իշխանէ մը յաղթուելնուն վասյ, ինդրեցին շուտով ազատիլ: Թորոս ալ զիրենք աւելի զկծելու համար Թողուց որ իրենք իրենց գին կարեն. Յոյնք ազահութեամբ՝ իրեն Թողուցին որ արժէքնին իմացընէ. Թորոս ըսաւ, եթէ բան մ՝արժէք՝ և ոչ կը հաւանէի զձեզ Թողուլ: Ասկէ աւելի ամբոյած՝ իրենք իրենց որոշեցին ծանր գիներ, որ անձնանախատ չեպուին, և ազատեցան. բայց դեռ չհեռացած՝ տեսան որ Թորոս իրենց կենաց գինը բովանդակ զօրացը բաժնեց. և երբ կը զարմանային՝ իմացուց պատճառը. Որպես զի ուրիշ անգամ ալ զձեզ բռնեն, ըսաւ, իմ զօրքերս. և յիրաւի ալ շատ տարի վերջը նոյնպես եղաւ: Ահա այս տաեն Օշին ալ իր գլխուն

դին կորեց 40,000 ոսկի, որ եթէ սովորական բիւ-
զանդիկ ոսկին է՝ կէս միլիոն ֆրանգի մօտ կ'ըլլայ.
բոլորը մեկէն չկարենալով հատուցանել, կէսը
տուաւ, մեկալ կիսուն փոխան գրաւական դրաւ
իր ամենէն թանկ սաստուածքը, իր անգրանիկ
պայազատը, երախայ Հեթումը, որ այն տաեն
հազիւ քանի մը տարուան էր: Թորոս գոհուելէ
ընդունեցաւ այսպիսի գրաւ և պատանդ մը. միըս-
տեղ տուաւ տղայն, զի դեռ անկնունք էր, և իբրև
իրեն որդին մեծցուց. և տղուն հատակին հետ խե-
լաց աճումն և առաւելութիւնն ալ տեսնելով՝ ա-
ւելի սիրեց. միանգամայն և հաշտութեան կապը
ապահովել մտածելով խօսեցաւ հօրը հետ, և իր
գաղտիկը նշանեցին Հեթումոյ հետ. Օշնի մնացած
20,000 ոսկւոյ պարտքն ալ՝ Թորոս իր գաեր
օժիտ տեսնելով խաւրեց փոքրիկ հարսն ու փե-
սային 'ի Լամբրոն. որով երկու ծնողք ալ գոհ ե-
ղան: Բայց իրենց զաւակաց գոհութիւնը ժամանակն
պիտի սատեր. և սատեց Հեթումոյ ժգոհու-
թիւնը, երբ հատակին տաեսաւ, և ճանչցաւ որ քա-
ղաքական տեսութիւնք կանխեր են քան զսիրոյն.
և յետ մահուան իր հօրը՝ միայն Թորոսի վախճն
էր որ հարսը կը պահէր. իսկ երբ նա ալ մեռաւ,
ուզեց արձակել. բայց Թորոսի եղբայրն Մլեհ
վրէժխնդիր ելաւ, պաշարեց նեղեց զԼամբրոն. և
դուցէ նորէն սպիտեցաւ Հեթում ընդունել ըզ-
կինը:

Մանուէլ կայսր իր խաւրած զօրագնդին կը-
տորնելը տեսնելով, և լսելով եղածը՝ անոնց ան-
խելք ու անխոհեմ գլխաւորէն, որ իր (կայսեր) կե-
նաց ալ որոգայթ կը լարէր, բանեց բանաեց զԱն-
դրոնիկոս. և Թորոսի դէմ զօրաւոր Թշնամի՝ միան-
գամայն և իրեն շահաւոր, մտածեց գտաւ և հա-
նեց Իկոնիոյ Սուլտանը, Մաղսուտ, որուն եղբեւր
ինքն Թշնամի էր, հիմայ զԹորոս ամենէն աւելի

առելով շատ տուրք խոստացաւ Մաղաւուի (1153) և ապաստակել տուաւ Թորոսի երկիրը։ Մաղաւուա ժամանակին ամենէն հին և զօրաւոր իշխանն էր այլազգեաց. 1117 Թուականէն՝ի վեր կը տիրապետէր, և հայրենական իշխանութիւնը շատ ընդարձակեր էր, թէ Լատինաց և թրիաւոնէից տիրած երկիրները նուաճելով, թէ իր կրօնակից Սէբաստիոյ Տէնիշմէնա իշխողաց. որոյ մէկ երկու գործերն ալ արդէն յիշած եմք [1]. հիմայ ոչ այնքան երկրակալութեան՝ որքան բիւզանդական ոսկինեղու փայլմամբ յորդորուած, բազմաթիւ զօրուց ահել բանակ մը շարժեց, մաւաւ Թորոսի երկիրը, Հայք իրենց քաջ և առաւաձեռն իշխանին վատահ՝ անվախ ասոր եռւէն գացին, որ փութացաւ Թուրքաց եկած կոչմը երթալ. անոնք լեռան մը եռին կը պատէին, Թորոս ալ սկսաւ լերան այս կողմը պատել։ Զարմացաւ Մաղաւա Հայոց անհոգութեանը կամ արուեստին, թէ ինչպէս պզտիկ գունդով մը բազմախուռմբ բանակի մը մօտ կը շարժին. և այս պեղեցիկ յանդգնութենէն՝ սրտմտութեամբ յայլթուեբով քան թէ անձամբ, պատգամաւոր խրկեց Թորոսի և իմացուց, որ իր նպատակն չէր ոչ երկրի տիրել և ոչ մարդ կարդել. այլ միայն ստիպել զՀայս որ հնազանդին, և ցուցնացմէ առած երկիրներն ետ դարձընեն։ Թորոս ալ Մաղաւուի ըրածին հաւնեցաւ, բայց և նուաստութիւն մը չուզեց ցուցընել. քանի մ՚օր գեսպաններն պահեց, յետոյ ինքն ալ անոնց հետ մարդ խրկեց և իմացուց որ Սուլտանին պէս մեծ տիրոջ թագաւորի հնազանդիլ յանձն կ՚առնուն Հայք, «վասն զի չես նախանձիր ընդ յաւելեալ» «նաչս մեր. այլ երկիր գարձընել՝ի Հռոմն՝ անկ» «հնար է[2]»։ Մաղաւա ալ աւելի չնուաստացաւ Թո-

1 Տես յերես 98. 216—24։
2 Մխիթար Պաւոմիչ։

ղոսի քաջութեան և խելքին վրայօք. և ակամայ առելութիւնը կամաւոր սիրոյ դարձընելով՝ խաղաղութեան դաշինք դրաւ իր պատուաւոր դրացին հետ և դարձաւ տեղը, մեղադրելով զկայսրը: Սակայն կայսրն յիշեցընելով Սուլտանին իրենց դաշնակցութիւնը, զոր յետ քան և հինգ տարի Թշնամութեանց՝ հաստատեր էին, և որով Իսաչակրաց արշաւանքն ալ փճացուցեր էին, նորէն յորդորեց որ սա պզտիկ արգելքն ալ վերցընէ իրենց միջէն: Բայց կարծածէն շատ մեծ էր Թորոս՝ քաջութեամբ. որոյ հետ առելութիւնն ալ կ'աւելնար Յունաց անխոհեմութեամբը. անոր համար արձան կեցած և ամեն դի լուտես դրած՝ կը գիտէր. և հազիւ թէ շարժմունք մը տեսաւ Թուրքաց սահմաններէը (իբրև 'ի սկիզբն 1154 տարւոյ), ինքն ալ աւելի շարժմունք և պատրաստութիւն ցուցուց, Սուլտանին սահմաններէը կոխեց և սկսաւ աւերըշարկել: Այս անգամ ալ Մաղասուտ զարմացած՝ կանգ առաւ. նոյնպէս և Թորոս իր տեղը: Բայց երբ երրորդ անգամ ապստանք եկաւ 'ի կայսերէ, և անոր հետ մեծ գումար մ'ոսկւոյ և ընծայից, Մաղասուտ իր 40 ամեայ իշխանութեան և զօրութեան վերջին փորձը ուզեց Թորոսի վրայ թափել. և աւրինէն աւելի բազմաթիւ զօրաց բանակաւ մտաւ անոր երկիրը (1154), և հեղեղօրէն լցուց դաշտերը, պատելով զՄսիս և զԱնարզաբա. զոր չկարնալով առնուլ շուտ մը՝ ինչպէս կը յուսար, և չուզելով ալ ուշանալ անոնց քով՝ աւելի զօրաւորին վրայ վազեց և պաշարեց զԹիլն Համամլոյ: Գունդ մը զօրաց ալ՝ 3000էն աւելի՝ տալով իր մէկ փեսային, Եաղուպ Մելիք անուամբ «Ժանտ և չարաճակէր» մարդու մը՝ ըստ Ուռհայեցւոյ պատմչին, գէպ 'ի Անտիոքայ կողմը արձակեց: Երբ ասոնք լերանց պահակէն կ'անցնէին, Անաւարզայէն անդին, յանկարծ Թո-

րոսի եղբայրն Սահմանէ և Լատինացի կարգա-
ւոր սաղեաք իրենց գունդերովը վերէն վար յար-
ձակեցան, գրեթէ զամենքն ալ ջարդեցին, Եա-
ղուպն ալ նիզակաւ լերդախոց սպաննեցին, անոր
սոսկալի կռուչլովը արձագանգները կրկնել սա-
լով։ Եթէ ոչ անոր կառաչն՝ այլ իր գնդին կառորա-
ծին աղմուկն հասաւ ինչուան Մազսուտայ բանա-
կը, զամենքն ափշեցուց և սոսկացուց. այնպէս
վախ մ'ընկաւ զօրաց մէջ՝ որ կարծէին թէ իրենց-
մէ մեծ բանակէ մը պիտի պաշարուին. միայն փախ-
չել և ազատել մտածեցին, թողլով ոչ միայն իրենց
շատ կահ ու կազմածը, այլ և ձիանն ու ջորին,
անոնց ջիղերը կարելով. որովհետև ասոնց վրայ
ձիաստաց բռնած պիծակներու բազմութիւն եկած՝
հիւանդութիւն մը ձգած էին վրանին, « զոր լին-
« քեանք Տապխ ասէին, կ'ըսէ պատմիչն, յորոց
« յոլով սատակեցան քան թէ մնացին »։ Ասոնց
վրայ աւելցաւ ամառնային օդոց սովորականէ
դուրս խառնակութիւն և փոթորիկք. արդէն աւե-
լի օրերն (մայիսի 28ին) անանկ սաստիկ հով մ'ե-
զաւ՝ որ ծառերը կը խլէր, և այնպիսի կարկուտ
մը՝ որ արտերը վնասելէն զատ՝ զօրաց բանակն ալ
տրորեց. քիչ առեն վերջ ալ երեք օր երեք գիշեր
(յունիսի 6–8) երկինք միակերպ ամպապատ մը-
թընցած անդադար կ'որոտային փայլատակէին և
կայծակէին. « և յամպոցն բախմանէ ընդ իրեարս
« որոտալով՝ որպէս լերինք կարծր և անդամանդ-
« դեայք՝ բախելով զմիմեանս. և հրաձգութիւնք
« կայծականց ոնէր զծիր երկնից, ոչ գոլով տեղի
« յերկինս՝ որ ոչ ունէր զփայլատակունս հողմա-
« խառն. և ծվ էր բաւական հայել աչօք իւրովք
« յահաւոր դղրդմունքն՝ որ լինէին անդադար »։
Եթէ բնակիչք երկրին ահաբեկ եղան, որքան և
առաւել անոնց վրայ եկող թշնամիք, որք և մարդ-
կանցմէ ահաւոր և զօրաւոր թշնամի տեսնելով

զտարերս՝ աւելի չուտով կը հեռանային, և չաւերն չիտակ ձամբէն ալ մոլորելով՝ իրենք զիրենք կ'ընտեցին. մինչդեռ Թորոսեանք անոնց չփոթութիւնը տեսնելով՝ անչփոթաբար անոնց երկրին մէկ ուրիշ կողմը [1] ասպատակ սփռեր էին, և իրենց բերած աւարներէն աւելին դառն թիլ Համմունոյ քով Թողած: Այս բանս յիրաւի հրաշխառն աստուածային այցելութիւն մը կը համարի պատմիչն. և տեսաք աչօք մերովք, կ'ըսէ, երկիցս «անգամ շարժեալ զԹուրքաստանն ամենայն 'ի «վերայ Թորոսի և զօրաց իւրոց. և ոչինչ կարա«ց եալ առնել եկեղեցեացն, զոր բազում պա«տուէր առեալ էին 'ի Թագաւորէն Յունաց՝ յա«ձին դարձուցանել. արդ ոտքա (Հայոց) մնալով «խաղաղութեամբ, և նոքա գնացին փախստեամբ «և մեծաւ ամօթով»: — Այսպէս անակնկալ յաջողութեամբ բարձրացաւ Թորոս, և նոյնպէս ձախողութեամբ նուաստացաւ Մալտուա, և հաստակաւ ու յօդնութեամբ ծանրացեալ՝ ոտն ամսէն եռև մեռաւ (1155). բայց յառաջ քան զմահն՝ իր յաջորդ որդւոյն Խլիճ-Արսլանի ձեռքով Թորոսի հետ հաշտութեան պայման դրաւ. զինքը ապահովցուց, զկայսրն ամօթով և արտութեամբ մահացուց:

Մանուէլ երկրորդ անգամ խաբուելով, և չկարնալով ըստ փափաքանաց անձամբ գալ Թորոսի վրայ, ուրիշ Թշնամի փնտռեց, և Թէ ոչ աւելի բազմաթիւ՝ այլ աւելի բազմակրթ զօրք, և աւելի մեքձաւորք. գրգռեց իր երեսփոխան Ալեքսիս Կիփարոսի ձեռքով զՓռանկս Անտիոքայ և անոնց ընկերները: Այն առեննուն այս աեղն Բրինձն

1 Ըստ Միխայէլի Ասորւոյ այս տեղս էր Խաւատանէք վիճակն Մերապտոյ կողմերը. բայց ժամանակագրութեամբ մէջ սխալմամբ Հայոց Թուականն 10 տարի պակաս գըրուած է, ՇՂԳ, փոխանակ ՈԳ գրելու:

Պեմոնդ Գ՝ գեռ անկատար հասակաւ տղայ ըլլալով իր հօրուն Ռենալա կոմսն Քարաքայ (Կրակայ), (Renaud de Chatillon) տէրութեան յանձնառնիչ և կառավար էր. փառասէր և անհանդարտ մարդ մը, որ աղէկ կաշառքի յուսով ձարտարութեամբ իրեն հետ միաբանեց Տաճարականն ասպետներն ալ, և ամենևին չկարծուած արշաւանքն ըրաւ (1154–5) 'ի կալուածս Թորոսի: Սա անպատրաստ գտնուելով այսպիսի յարձակման մը՝ ստիպեցաւ ամուր տեղուանք քաշուիլ, ինչուան որ զօրքերը ժողվեց, և Ալեքսանդրիոյ (Իսկէնտէրուն) քով սաստիկ զարնուեցան իրարու, երկու կողմէն ալ շատ արիւն թափելով. Ռընալա մինակ չյուսալով պատերազմը առաջ տանիլ՝ զօրակարգ ասպետները յօգնութիւն կանչեց, որք առիթ կը սպասէին քանի մ'ամուր տեղուանք խլելու: Թորոս պատկառելով ասպետաց քաջութենէն և համառութենէն, որոց հետ միաբաներ էին ամեն հաւատարիմքն և վախցողքն 'ի Յունաց, գէթ ատոնցմէ ապահովուելու համար՝ քանի մը բերդ տուաւ անոնց՝ Անտիոքայ սահմանաց վրայ՝ և հեռացուց: Ռընալա ալ մինակ նոր փորձ մը չըրած՝ ուզեց նախ իրեն խոստացուած կաշառքը ապահովել. և տեսնելով որ Յոյնք կ'ուշանան տալու, կամ պիտի չտան, և յետոյ Թորոսն ալ իրեն թշնամի և վրէժխնդիր պիտի ունենայ, ատոր հետ հաշտութիւն ընելու փութացաւ. միանգամայն և նիզակակցելու ընդդէմ Յունաց, որոց արդէն թշնամի էր Թորոս: Եւ ինքն իրաւ և անիրաւ շահասիրութեամբ նաւեր պատրաստեց և հինաբար մուտ 'ի Կիպրոս (1155), որ այն ատեն գեռ Յունաց ձեռքն էր, և ամենևին անկասկած. իբրև յանցաւորաց և չարագործաց վրայ ընկնալով՝ չէնն ու անշէնն աւրեց, թալնեց, և անհատիր ամեն կարգի, վիճակի և սեռի անձանց ինաս, չարիք ու

տանջանք տուաւ, շաւեղուն քիմին, ականջն և ձեռուընին ալ կտրելով. և անվայել ու անշահ ա-
ւարով ետ դարձաւ. « զոր երբ լսեց Թագաւորն
« Յունաց Մանիլն՝ բարկացաւ յոյժ. այլ ատ ժամին
« իրք չկարաց առնել [1] »: Թորոս համարձակ ու-
րեց բոլոր Կիւլիկիոյ դաշտաց և գլխաւոր քաղա-
քաց՝ Տարսոնի, Մսիս, Անարզաբայ, Ադանայ,
Սոյ, և այլն. և անկէ դուրս լեռնակողմանց Փաիւ-
գիոյ և Իսաւրիոյ: Ապա արևմուտքէն յարևելս
դարձուց իր զէնքերը ընդդէմ Նուրէտտինի՝ Հալ-
պայ սուլտանին. « Բազում տեղիս և ամրոցս ա-
« ռեալ քանդեաց, և յաղթութեամբ բազմաւ
« գարձաւ 'ի բնակութիւն իւր », կ'ըսէ նոյն օ-
րերը (1155) գրոց ընդօրինակող մը կարևոր յիշա-
տակարանին մէջ:

Ի հարկէ շատ երկար չէր կրնար անդործ մնալ Մանուէլ կայսր այսքան կորըստեանց և ամօթոց վրայ. նորանոր զօրավարներ և իշխաններ խաւրեց 'ի միջոցի 1155–6 տարւոյն. նախ Միքայէլ Պրա-
նաս անուամբ մէկը, որ Կիպրոսի կողմնակալ էր. որ առջինէն աւելի բաղդաւոր չեղաւ, այլ Թորոսի յոյժը աւելի ամրացուց՝ ջրրն մրխուածծ երկաթի պէս: Ջնոյն ըրաւ իրմէ վերջը և մեծ իշխանն Անդրոնիկոս Եւփորպեն կայսեր ընտանին, որ Տարսոնը առնուլ կը չանար: Թորոս՝ իր նոր դաշնակից Փռանկաց դունդ մ'ալ հետն առած՝ ընկաւ

1 Ոմանք 'ի պատմչաց մերոց, Սմբատ և Ուռհայեցին, զԹորոս կ'ըսեն խրատատու Ռընալտոյ, և գործակից այս անգութ ասպատակութեան. սակայն Գուլիելմ Տիւրացի ժամանակակից հաւատարիմ պատմիչն որ յիշէ Ռընալտի յարձակմունքը յերկիր Թորոսի, և յետոյ դարձեալ կը յիշէ զԹորոս գովութեամբ՝ իբրև օգնական Լատինաց, Կիպրոսի յարձակմունքը միայն Ռընալտոյ գործ կը պատ-
մէ. այսպէս և ուրիշ օտար պատմիչք: Մեր պատմիչք ալ չեն յիշեր Ռընալտի արշաւանքն 'ի Կիւլիկիա, ընդէմ Թորոսի:

Յունաց վրայ, 3000 մարդ կոտրեց. ինացեաղիներն հազիւ կրցան փախչիլ ՚ի ծովեզը, և նաւերնին մնալով հեռանալ: Անդրոնիկոս աւելի դանդաղ գառւեցաւ, և Թորոսի շղթայից ծանրութիւնը պիտի կրեր, եթէ իրեն միջնորդ չգտնէր Երուսաղէմի երիտասարդ Թագաւորը, Պալտուին Գ, որ կայսեր փեսայութեան կը պատրաստուէր. սա ազատեց իր խնամին, և Թողուց որ ամօթապարտ դառնայ առ կայսրն: Վերջապէս Մանուէլ տեսնելով՝ որ օտարաց ձեռքով իր ամեն ըրած փորձերն ընդդէմ Թորոսի՝ անոր փառք և իրեն ինաքակար եղան, անձամբ ելաւ վրէժն առնելու: Սիկիլիացւոց հետ կռիւը դադրեցուց, հաշտութիւն կնքեց անոնց (Գուլիելմոս Ա.) Թագաւորին հետ, և մօտ Ամերան 1158 տարւոյ մեծ նաւատորմիլաւ և մեծագոյն գնդօք ելաւ եկաւ յափրունա Պամֆիւլիոյ. և լաւ գիտնալով որ խաբէութիւնն աւելի յաջողակ պիտի ըլլայ քան պատերազմն, զօրաց բազմութիւնը Թողուց յԱտալիա, որպէս թէ Թուրքաց դէմ պիտի երթան. և ինքը քիչ զօրօք սկսաւ ծովեզերքէն յառաջ գալ. Սելևկիոյ Կասիան կռւսակալին ալ ծածուկ խմաց տուաւ որ պատրաստէ տեղւոյն կարիճները՝ որոնք աւելի վարժ էին Հայոց հետ կռուելու: Բայց երբ հօն հասաւ՝ անպատրաստ գտնելով կարծածը, և իր ձիերն ալ հիւանդութենէ բռնուելով միայն հետևակօք և 500 ամենէն կարիճներով շուտ շուտ յառաջելով՝ մտաւ Տարսոնի, ուր այն առեն անկասկած նստէր Թորոս. և թերևս կայսեր ձեռք ալ ընկնար, եթէ բաղդավ Լատին ձամբորդ ուխտաւոր մը չմտացընէր իրեն՝ Յունաց գալը: Թորոս քովը բաւական մարդ չունենալով՝ մեկնեցաւ քաղաքը և քաշուեցաւ յամրութիւնս լերանց. ընտանիքը և գանձը ապահովեց Տաճկի-քար լսուած անառիկ և ամայի բերդ մը. ինքն ձիաւոր

ըօքը տեղէ տեղ կը փոփոխէր, հետեւ ընկերը ուն-
նալով իր անելքը Թովմա, և Գորդ կամ Կորկաս
անուամբ կարնեցի մը: Իմացաւ Մանուէլ խաբուելը,
և շուտ մը կանչել տուաւ զօրքերը յԱտալիայէ,
և սիրեց 'ի Կիւլիկիա, նուաճեց զԱնաւարզա և
ուրիշ քաղաքներ. Տարսոնի վրայ ալ գունդ մը
զօրաց Թողուց 'ի ձեռն Թէոդորոսի Վատասի:
Հայք կարծելով Թէ կայսրն բոլոր բանակաւ պա-
տեր է զքաղաքը՝ յուսահատեցան. մէկերնէն ո-
րոնք որ կը վախէին Յունաց անգըթութենէն՝ ի-
րենք զիրենք աշտարակներէ և պարիսպներէ վար
ձգեցին. մէկալներն բացին քաղքին դռները, և
ընդունեցան զՅոյնս, ուր յետոյ եկաւ և կայսրն
և ամբրեց: Յաջորդ յարմար եղանակին պաշա-
րեց յերկար և առաւ զՄամեստիա:

Չօս ներկայացաւ իրեն Անախոքայ իշխանն
Ուընալտ վատ և խղճալի կերպարանօք. որովհետև
ոչ միայն Յունաց առջև յանցաւոր էր, այլ և իր
քաղաքացեաց և անոնց պատրիարքին, զոր ան-
արգօրէն չարչարեր էր, եկեղեցւոյ սպասները կո-
ղոպտելու համար. ուստի հիմայ անձար և անյոյս՝
ձգնաւորի զգեստ հագած, գլխիբաց և բոպիկ,
վիզը չուան ձգած, ինքն զինք մահապարտ վճռած,
բոլոր Մամեստիոյ մէջ պարտէզէն եւս, եկաւ ըն-
կաւ կայսեր ոտքը՝ մերկ սուր մը մատուցանելով
անոր, իբր Թէ Թոյլ կու տար որ լսած արժանւոյն՝
գլուխն կարուի. գունդ մը կրօնաւորաց ալ նոյն-
պէս գլխիբաց և բոպիկ՝ 'ի ծունկ ընկած կայսեր
գԹողութեան կ'ապաւինէին: Բաւական տեսեց նա
այսքան խայտառակութիւնը. և Թողութեն տուաւ.
պահանջելով որ Անախոքացիք ընդունին Յոյն պա-
տրիարք մ'ալ, և երբ որ կայսրն ուզէ՝ խաւրեն
գունդ մը օգնական զօրաց: Փռանկաց և Լատի-
նաց շատ ծանր էր այսպիսի նախատինք մը, բայց
պատճառն ալ իրենցմէ էր: Անկէց քիչ պակաս

ամօթալի չէր Թերևս Երուսաղէմի Թադաւորին
չանքն, որ կ'ուզէր խլել զԱնտիոք 'ի Ռընալտոյ.
բայց Մանուէլ յանձն չառաւ անոր Թողուլ այն-
պիսի մեծ աւար մը, զոր ինքն հազիւ ձեռք ձգեր
էր: Պալտուին ոչ միայն ակնկալութիւնը կորուսա,
այլ Ռընալտոյ բարեկամութիւնն ալ կորուսա-
նելու վտանգի մէջ դրաւ զինքը. և վատահանալու
օգնական մ'ունենալու համար ալ յիշեց զԹորոս,
որոյ դէմ կը պատրաստուէր կայսրն. խոստացաւ
որ ինքը առանց պատերազմի բերէ զնա իրեն հնա-
զանդութեան. և Թողութեան խոստումն առնը-
լով՝ փութացաւ վերադարձ գտաւ զԹորոս. յորդո-
րեց վատահացուց կայսեր հետ հաշտուելու, և
անոր հաւանութեամբ նորէն իր նուաճած երկիր-
ները տիրելու: Ահա բանիս միջնորդ և աղաչա-
ւոր եղան նաև Անտիոքայ լատին պատրիարքն (Ա-
մաւրի), իշխանք, զինուորակարգ Ատպետք, և մա-
նաւանդ Հիւրընկալաց (Hospitaliers) կարգա-
պետն Ռեմոնդ Տէ Բոտիոյ, վասն զի ամենքն ալ
մեծ սէր և համարմունք ունէին անոր վրայ: Յանձն
առաւ Թորոս ալ. տեսնելով որ ամենքն ալ միա-
բանած են կայսեր հետ, և իր մեծագոյն բարե-
կամն Թադաւորն Երուսաղէմի ալ փեսայացեր է
անոր, և անկարելի է այնքան բազմութեան զօ-
րաց դէմ կենալ, բայց եթէ լերանց մէջ ծած-
կուելով: Եկաւ. բայց ոչ Ռընալտի խայտառակ
ձևովը. խոստացաւ հաւատարիմ ըլլալ կայսեր:
Մանուէլ առջի բերան պզտիկ հաւանութիւն մը
ցուցուց, և չուզեց մեկալ իշխանաց հետ իր սե-
զանին ընդունիլ զԹորոս. բայց շատ հաւնեցաւ
անոր կերպին և խօսուածքին և կարիճ կերպա-
րանաց. կամաց կամաց ընտանութիւն ցուցուց:
Թորոս ալ խնդրեց որ հարկաւոր բանի մը հա-
մար երթայ իր ընտանեաց քով և դառնայ. և
հաւանութեամբ կայսեր գնաց. ու քիչ աւեղէն

գառնալով անոր զօրաց համար առատ պաշար բերաւ, ոչխար և արջառ, և ընծայ՝ ընտիր ձիան: Ասով աւելի որսաց կայսեր սիրտը, որ և փոխարէն արքայապէս պարգևեց զԹորոս, անուանելով զնա և Պանսեբաստոս, և ոսկեկնիք հրովարտակաւ առջինէն աւելի երկիրներու վրայ իշխանութիւն ատաւ, իբրև կայսերական կուսակալի. միայն Անաւարզա քաղաքն իրեն պահեց կայսր, Յոյն պահապան իշխան մը դնելով հոն:

Ապա ամենայն պետք և իշխանք մեծ հանդիսութեան ընդ կայսեր և ընդ Թորոսի յԱնտիոք, (12 ապրիլի 1159): Այս առթիս համար կ'ըսէ վիպասանն Վահրամ.

« Ի յԱնտիոք կայսրըն երթեալ,
Զմեծըն Թորոս ընդհետ կոչեալ.
Որ քաջութեան գործըս ցուցեալ,
Զամենեսեան հիացուցեալ »:

Այս քաջութեան գործն երևի թե եղաւ Նուբէտաինի դէմ կիսկատար արշաւանաց մէջ: Վասն զի երբ այսպէս միաբանեցան Յոյնք, Լատինք և Հայք, ամեն իշխանք և ասպետք զինակարգք, սկսան ապաչէլ կայսեր՝ որ ըստ խոստմանն կամ համաձայն՝ առանց տնտղնալու երթան քրիստոնէից և հասարակաց ամենէն հզօր թշնամւոյն դէմ, որ էր Հալպայ և Դամասկոսի տէր անուանի Նուրէտտինն: Կայսրն ալ մեծ յօժարութիւն և հաւանութիւն ցուցուց (գոնէ դրսեւանց). և շուտ պատրաստութեամբ Համբայ ընկան դէպ ի Հալէպ երթալու, իբրև անտարակոյս յաղթանակի և հանդիսի երթալով. այնքան մեծ էր ուրախութիւնն. և տան տարի առաջ Մանուէլի նենգութեամբ Խաչակրաց անօգուտ արշաւանքը՝ հիմայ

Դորէն իրեն ձեռքով արդիւնաւորել կը յուսային։ Ցիրաւ վախցաւ Նուրէտտինն անոնց միաբանութենէն, բազմութենէն և երազութենէն, որով ինչուան օրուան մը ճամբայ մօտեցեր էին Հալպայ։ դեսպան խաբեց կայսեր, խոստանալով 10,000 գերեալ քրիստոնեաներըը արձկել։ և մեկէն ալ անոնց մեկ մասը և գլխաւորները, Տաճարական Ասպետաց կարպապետը և ուրիշներ՝ արձկեց։ Դաշնակից֊ք յանձն չառին, և կ'աղաչէին կայսեր որ չհաւանի, մինչև որ Նուրէտտինն քրիստոնեից երկիրները ետ տայ, և կամ պատերազմի ելնէ։

Մինչ այսպիսի յաղող առթիւ մեծ յուսոյ մէջ էին, յանկարծ սոխակական լուր հասաւ կայսեր, թէ մայրաքաղաքին մէջ մեծ չփոթութեան վախ կայ, պէտք է շուտով դառնայ հօն։ — շաւերն կարծեցին որ սուտ է այս լուրս և կայսեր հնարքն է։ — կ'աղաչէին որ գոնէ իրեք օր ալ համբերէ, մինչև յարձկին և առնուն զՀալէպ։ Բայց կայսրն իր դարձն ուշացընելն ամենևին անկարելի սեպելով, բանակին գլուխը յետ շարժեց։ Նուրէտտինի հետ հաշտութեան դաշինք դրաւ, որով գերիներուն մեկ մասն ալ անոր ձեռքը մնաց, և փութացաւ յամաքով դառնալու 'ի Կ. Պոլիս։

Աւելորդ է ըսել դաշնակցեալ քրիստոնէից տըխրութիւնը և վհատութիւնը։ շաւերն չէին կըրնար մեկնութիւն մը տալ այս յանկարծական փոփոխման և սոխակական գարձին։ մենք ալ կ'ըսէ մեր ժամանակակից պատմիչն Ուռհայեցի, « ոչ « կարացաք 'իվերայ հասանել պատճառին։ (այլ) « որպէս և եղև (էր) գործ սատանայի։ Բայց ըս« տուգիւ այս էր պատճառն, որ լուր գիրինձն « (Անահոքայ) հաւանեցոյց, և գթորոսի խլած « երկիրն գարձոյց։ և զայն բաւական համարե« ցաւ իւր յաղթութիւն...։ Զի թէ վան քրիս« տոնէից էր եկեալ՝ եօթնամսեան ժամանակաւ

« ոչ էր ՚ի Մախ յամեալ։... Ապա ՚ի խորհուրդ
« մտեալ... ազգն Հռոմոց՝ առեալով ընդ Թագա-
« ւորն Խրեանց, Մի լսեր Հայոց և Յունականց,
« փութացիր երթալ յաթոռն քո, և դարձեալ
« եկեսցես։... Դարձան անհամար բազմութքն,
« փոխանակ զօրել առնուծոյ՝ խրով զաղուէս սը-
« կար. և որպէս վիճախոտականք գային հասա-
« նէին յերկիրն Խլիճ Աալան Սուլտանին ». որոյ
հետ խաղաղութեան դաշինք դրած էր կայսրն.
բայց իր երկրին մէջ բնակող « վատ և աներևակ
« ազգ Թուրքմանաց՝ կոտորեցին ՚ի Հռոմոց արս
« 12,000. ապանեալ և զաներ Թագաւորին (Մա-
« նուէլի), առեալ ձիս և ջորիս 20,000. վասն ո-
« րոյ յոլով խռովութիւն եղև ընդ Թագաւորն
« Յունաց և ընդ Սուլտանն Խլիճ Աալանն »։

Ամեն իշխանք և տեարք կոչմանցս այլ խռովե-
ցան Մանուէլի ըրածին. և Թուի թէ աւելի քան
զայլս՝ մերն Թորոս. որ երբ իբրև յոլովարկ կայ-
սեր կ՚երթար մինչև յԱնտարտոս, և հօն բանա-
կէին, գիշերանց իրեն մարդիկն առաջ հեռացաւ
պնաց իր ամուր Վահկայ բերդը.

« Չի կամ արքայ չար լինչ խորհեալ՝
Եւ ոչ նըմա զայն ծանուցեալ,
Եւ կամ թէ ինքըն զարհուրեալ՝
Չի մի լսցի ըզհետ երթեալ։
Իմմանուէլն անդրէն դարձեալ,
Եւ անվրդով Թորոս կացեալ.
Որ քաջապէս նա յարձակեալ,
ՉԱնտարտոս կրկին կալեալ »։

Վահրամ՝ որ զայս վիպասանէ՝ առանց ժամանա-
կագրութեան, Թորոսի գործոց սկիզբը կը դնէ,
որպէս թէ Անդրոնիկոսի և Օշնի հետ պատերազ-
մէն առաջ. սակայն պիտեմք որ Մանուէլի գալն և

դէպքն յետոյ եղան, ինչպէս որ վերը յիշեցինք: Սակայն պատմիչք այս ալ կ'ըսեն, որ յետ հաշտութեանն՝ Թորոս հաւատարիմ մնաց կայսեր. եւթէ թէ ոչ ընտանութիւն ցուցուց և ոչ թշնամութիւն, այլ շրջահայեաց զգուշութիւն. ինչուան որ պատճառաւ մահուան իր եղբօրն Սահակայ՝ նորէն կռիւ ծագեցաւ, և անկէ ետև Անդրոնիկոսի նոր խակագործութեանց համար, ինչպէս ալեւոր տեղեկութիւն քիչ մը վերը, և այն տեղ Թորոս Անտարզայ ալ տիրեց Մամեստիոյ ալ:

Սահմանէն յիշելով մեր պատմութիւնն ըստ կարի ամբողջացընելու, և Թորոսի գործոց և վարուց արժանաւոր պատկառ և պատկեալ Լեւոնի հայրն ալ ծանօթացընելու համար, արժան համարիմ վերջի յիշած դիպուածներէն քիչ առաջ՝ անոր ըրածներն ալ յիշելու: Ա. Լեւոնի ամեն որդիքն ալ կտրիճ և տաքարիւն կոլիւններ էին, և երբեմն քաջութենէ անդին անցան նենգութեան և անգթութեան գործովք. մէկ մեծ եղբայրնին Ռուբէնն՝ հօրը և Թորոսի հետ գերուելով ի Կ. Պոլիս, և հօն կարգէ դուրս ուժով փորձեր ցուցընելով կայսերական տան առջև՝ անոնց նախանձովը նախ աչաց լուսէն զրկեցաւ, յետոյ արամութեամբ՝ և ի լուսոյ կենաց: Երկրորդ եղբայրնին էր Ծառնօղ քաջն Թորոս. երրորդն Սահմանէ, նոյնպէս կտրիճ, այլ պակաս խոհեմութեամբ և զգուշութեամբ. վերջինն Մլեհ՝ շատ աւելի պակաս ի զգօնութենէ և ի հաւատարմութենէ՝ առ մարդ և առ Աստուած. բազկաց և սրտին ոյժը՝ իշխանութեամբ, բռնութեամբ և բռնաբարութեամբ սրատեց. Տաճարականաց կարգը մտնելով՝ եղաւ քաջ ասպետ, այլ յետոյ ուրացաւ զկարգն ալ հաւատքն ալ. վերջապէս յետ մահուան Թորոսի բռնութեամբ տիրելով իր ազգայնոց՝ անոնցմէ ալ սպանուեցաւ: Սահման այնպէս ապականեալ

սիրտ չունէր, այլ և ոչ միշտ առողջ գլուխ. առջի տարիները կ'օգնէր աւագ եղբօրը՝ Թորոսի, ինչուան որ սա հաստատեցաւ յիշխանութեանն, Մաղասուտ սուլտանին ջանքերը պարապ հանելով և անոր որդւոյն Խլիճ Ասլանին հետ հաշտութիւն պայման դնելով: Թուի թէ Սաեփանէի հաճոյ չէ րնացաւ այլապէսց հետ հաշտուիլն. Եգեսիոյ առաման առեն՝ ինքն ալ հօն գտուելով՝ տեսած էր քրիստոնէից վտանգը և անկէց հեռացեր. Մարաշայ առումն, Պալտինի և Ճոսլինի դէպքն՝ իր սիրան ալ վիրաւորեր էին: Ադդ երբ Թորոս Թուրքերը Թողլով Աինախոքացւոց և Յունաց դէմ սկսաւ զբաղիլ, Սաեփանէ տեսնելով որ Իկոնիոյ Սուլտանն ալ (Խլիճ Ասլան) Սեբաստիոյ և Կեսարիոյ Տանիշմէնեանին հետ հակառակութեան մէջ է, և երկուքն ալ իրարու դէմ կը բանակին, յարմար միջոց կարծեց անոնց 'ի քրիստոնէից խլած երկիրները՝ իրենցմէ խլել (1156). և առանց հաւանութեան կամ անյօժար թոյլտուութեամբ[1] Թորոսի՝ գնաց նախ Սեաւ Լերանց կողմերը և նուաճեց. անկէց սկսաւ Մարաշոյ երկիրը ասպատակել. և գիշեր մը գաղտուկ ղօրքերը մտուց քաղաքը, ու առաւօտուն յանկարծ սփռեց ու բռնեց գլխաւոր տեղուանքը. բայց բերդն ալ չկարենալով առնուլ՝ թաչնեց և այրեց քաղաքը, Թողուց գնաց, բնակիչ քրիստոնեաները հեռը տանելով[2]: Անկէց յառաջ անցաւ դէպ յարևելք

1 Վասն զի ունինք 'ի պատմչաց և ժամանակագրաց՝ ընդդեմ կամաց Թորոսի կ'ըսեն Սաեփանէի բոլոր ըրածները, ունինք ալ հաւանութեամբ:

2 Առանց մէջ եր քաղքին Ասորի եպիսկոպոսն ալ գիտնական Դիոնիսիոս կամ Յակոբ Սալիբայ որդի, որ և հնարք գտաւ փախչելու 'ի վանս Ս. Բարսղի, և երեք ողբական երգ գրեց այս Մարաշայ առումն և աւերման վրայ: (Ասեմ. Բ. 317): Եւ թուի թէ այս պատճառաւ

Բեհեանի գժուարակռիւ ամրոցին և մեծ աւանին վրայ՝ որոյ այլազգի տեղականն բռնաւոր անգութ մարդ մ՚էր, և ընդդէմ կամաց Սուլտանին կը չարչարէր զքրիստոնեայ բնակիչսն, մանաւանդ զեկեղեցականս, և ծանր հարկեր կը պահանջէր: Անկէ նեղեալ բնակիչքն՝ ծածուկ խնայց տուեր էին Սահփանեայ. ասկայ ալ հետը քարամուտ (բերդին հիմը փորող) մարդիկ առնելով՝ եկաւ զայն նուաձելու. այլ բնակչաց մէջ մանուկ մը դաւեցաւ. խնայցուց բռնաւորին որ կենացը վանգ կայ, բաղնիքի մէջ պիտի սպաննէին զինքը. ղգուշացաւ. նա, և կատղած՝ զով որ կրցաւ բռնել՝ ձեռք ու ոտք կապելով բերդին պարիսպներն վար կը գլորէր: Սահփանէ տեսնելով որ փոխան փրկելու՝ աւելի կորստեան պատճառ կ՚ըլլայ, բերդէն դուրս աւանին բնակիչները շուտով քշեց տարաւ օտար տեղեր բնակեցուց. ուսկից քիչ սահմանն անունք Սուլտանին դիմելով դարձան իրենց տեղը: Սահփանէ գնաց ուրիշ ամուր բերդի մը վրայ՝ Բերդուս անուանեալ, որոյ բնակիչքն ալ յայլազգեաց նեղեալ՝ նեղսէն օգնեցին դրսէն եկողին, և Հայոց ձեռք անցաւ այն բերդն: Սահփանէ սպաննեց բերդապահը «որ էր այր «ժանտ և սահեցող քրիստոնէից». և գնաց անուանի Քեսուն քաղաքին վրայ, որ երբեմն Գոզ Վասլի կալուածք էր, յետոյ Ճոալինեանց: Քաղաքապետն որ սուրբ մարդասէր էր՝ քան զառաջինս, տեսնելով որ պիտի չկարենայ ոչ հալածել զՍահփանեան և ոչ ալ յերկար պաշարման դիմանալ, բոլոր մարդիկը հանդերձ եկեղեցականօք դուրս վռընտեց, միայն զկանայս և տղայս նեղս Թողլով, որոց

գրգռուած՝ Հայոց հաւատոց դէմ ալ գրած է զրպարտուելմէ կամ սխալմամբ: Ինքն յետոյ Ամիդայ եպիսկոպոս ըլլալով մեռաւ յամի 1171: Սա յետոյ ալ պիտի յիշուի մեր պատմութեան մէջ:

համար կըրնար պաշար բաւեցընել բաւական ժամանակ, ինչպէս ալ եղաւ. ինայելով անփնաս և անարատ պահել զանոնք, մինչ իրենց տըքն և եղբարք դուրսը տագնապէին. ոմանք սիրով չհեռանալով անկէ, այլ ծառերու և հովանեաց տակ դեպերելով, ոմանք ալ մօտաւոր գեղեր և վանքեր քաշուելով, հինգ կամ ինն ամիս երկար պաշարման տաեն [1]:

Ա յս միջոցներուս Սեբաստիոյ արշաւանաց առեն՝ Լատինք ալ միաբանած, Թագաւորն Երուսաղէմի և Իբլինացն Անտիոքայ, կոմսն Ֆիանտրայ (Փլէնդր) և Ասպետքն, սկսան կառուչըմդ Նուրէտտինայ, փոխոխակի բաղդով. և Թէպէտ նոր օգնականներ ալ ընդուներ էին յարևմտից, այլ անով ալ չկարնալով գլուխ ելնել, ժողովք ըրին և միաբան խորհրդով աղաչաւոր խաւրեցին առ Թորոս՝ իբրև ամենահզօր (potentissimus) իշխող մը, ինչպէս կ'ըսէ ժամանակակից լատին Պատմիչն (Գուլ. Տիւրացի), որ ամեն մտածմունք և հոգ Թողլով գայ իրենց օգնելու յԱնտիոք: Հաւանեցաւ Թորոս. և մեծ ժրութեամբ ու զօրութեամբ [2], բազմութեամբ զօրաց փութացաւ հասաւ հօն. և միաբան գնացին, պաշարեցին տէրն Կեսարիա կամ Կեսու անուամբ քաղաքը՝ Տըրխօլէայ և Դամասկոսի տէրութենէն միջոց (1157): Թորոս յաջողութեամբ այս կարևոր գործն 'ի գլուխ տանելով, և Թողլով զՓռանկս որ վիճին իրենց աւարին վրայ, գարձաւ իր տեղը, գուցե լսելով իր տահմանակից Սուլ

1 Ուռհայեցին կ'ըսէ 'ի մարերի տնոյ մինչև 'ի յունիս ամիս. մեկն հայ և միւսն լատին անուամբ ըլլալով մեր օրինակաց մէջ կարծեմք թէ մարտի կարդալու է և ոչ մարերի. վասն զի ուրիշ շատ տեղ ալ լատին ամիս կը գործածէ պատմիչս. իսկ եթէ տուգիս մարերի էր՝ նոյեմբերի տնոյն կը պատշաճի այն (1156) տարին, թէ ոչ՝ երկու ամիսքն ալ 1157 տարւոյն կ'ըլլան:

2 Sicut vir impiger erat et strenuus. Գուլ. Տիւր:

տանին շարժմունքը, որ Սեբաստիոյ սկզբոջ հետ հաշտութիւն ըրած էր. և Սահմանէն վերայ կ'ուզէր դառնալ, թերևս մեղադրելով զԹորոս, որոյ հետ նորէն ուզեց դաշինքը հաստատել, նոյնպէս ուրիշ քրիստոնէից հետ. « Սէր առնելովընդ Թա-
« գաւորին Երուսաղէմի և ընդ սէրն Անտիոքու,
« և ընդ Թորոս յաղթող. և ինքն դարձաւ յա-
« ծառ իւր »: — Ահա զայս լսելով Փեանոյ փա-խըստականքն ալ՝ դիմեցին առ նա՝ իբրև իրենց բնական տէր. իսկ Սահմանէ առանելով մինակ մնալը՝ սիրեցաւ յետ քաշուելու. մանաւանդ որ Թորոս իր նոր հաշտութեան դաշնագրութեամբ՝ կը պարտաւորէր յետ գարձընելու անպատշաճ կերպով նուաճուած երկիրները. և դարձուց ալ 'ի Սուլտանն (յօգոստ. 1157) նաև զԲերդուս բերդը: Սուլտանն ալ հօն եղած Հայոց Թէ հեծեալ Թէ հետևակ պահապաններըը ազատ Թողուց: Կըմնար ընդդէմ մը սեպուիլ Հայոց այսորովհետև Սահմանէ՝ Թէպէտ նոյնպէս սեղջուկ առջի պահապաններըը ազատ Թողեր էր առաջ՝ բան խոստմանն, այլ երբ նոքա երթալու տաեն կը սպառնային որ օգնական գտնելով ետ պիտի դառնան, ինքն ալ եկեղեցականաց խորհուրդ հարցընելով՝ ինքզինքն ազատ սեպեց երդմունքէն, անոնց ըրած սպառնալեացը պատճառաւ, և ետևնէն հասնելով՝ զամենքն ալ կոտրեր էր: Յայտ է որ հիմայ այս կերպով առնուած բերդին յետ տալուին՝ իրեն ցաւ եղաւ. մանաւանդ որ մեկալ նուաճած տեղուանքն ալ գրեթէ բոլոր նորէն այլազգեաց ձեռք ընկած էին. ուստի և տրամադրեցաւ խաղաղութիւն Թորոսի հետ, ինչուան չարիք սպառնալով: Թորոս որ աւելի զգաստ և աւելի զօրաւոր էր, բանից գնա և բանտեց. մինչև շատ ազաչանօք միջնորդաց՝ իրմէ ալ երդումն առնելով, յետ տասն ամսոյ ազատեց. « և սիրեին զմի-

մեանս »: Գուցէ այն միջոցին Մանուէլ կայսեր 'ի Կիւլիկիա գալն ալ առիթ մ'եղաւ հաշտութեան երկուց եղբարց (1158):

Կայսեր եւս դառնալէն ետեւ Երուսաղէմի եւանգոն Թագաւորն նորէն միաբանելով աղգակից քրիստոնեայ իշխաններըը՝ շատ հեղ կռուեցաւ Նուրէտտինի հետ, և ոչ քիչ անգամ յաջողեցաւ. բայց յետոյ քանի մը ամուսան կամ տարուան համար զինադադարութիւն ըրին (1160). ապէց զինքն ազատ համարելով կամ խաբդախելով՝ Անտիոքայ անզգոյշ իշխանն Ռընալտ, անգամ մը 500 հեւաւակօք և նոյնչափ ալ խառն զինուորօք և հեծելօք՝ Նուրէտտինի սահմանները կոխեց. և երբ նա այն Տլքոյ երկիրը և այն Ծով քարաբերդը՝ զոր քիչ տարի առաջ մեր կաթողիկոսաց աթոռ սեանք, և անոր մօտերը Կոմմի (?) անուամբ տեղ մը եկեր էր, յանկարծ Նուրէտտինի մեծ տեղապահն Նէձէմէտտին կամ Մէճտէտտին, (որ և ուրացեալ Հայ մ'էր ըստ ոմանց, և հօրեղբայր մեծահռչակ Սալահէտտինի), 10,000 զօրօք շրջապատեց անհնահեմ ասպատակները. յորոց 400 մարդ սպաննեցին հօն, մնացածներըը բաց 'ի քանի մը փախչողներէ, բռնեցին, հանդերձ երեսուն ձիաւորով և իրենց գլուխ Ռընալտով, բերին 'ի Հալէպ, բանտեցին: Նուրէտտին այս յաջող լուրը լսելով՝ ինքն ալ արշաւեց աւերեց Տրիպոլեայ և Անտիոքայ սահմանները, քանի մ'ամուր բերդեր ալ առաւ, քակեց, և գերիները բերաւ 'ի Հալէպ. ուր որ արդէն բռներ բանտեր էր և պճոսլին Գ, նման անոր տարաբաղդ հօրը. և նոյն բանտին մէջ 16 տարի մնացին [1]: Աւելի առաջ չկըր-

1 Ռընալտ ազատեցաւ յամի 1176, և իր առջի ժառանգութեան տեղը դարձաւ, 'ի բերդն Կրակ, Արաբիոյ կողմերը. յամին 1187 Տիբերիայի մեծ կռուին (5 յուլ.) յաղթութեամբ բերուեցաւ Սալահէտտինի առջև որ, իր ձեռօք կարեց անոր տաք ալ թեթև գլուխը:

ցաւ անցնիլ Նուրէտտին. վասն զի երկու կորիճ ախոյեանքն՝ Թագաւորն Երուսաղէմի Պալեին և մեր Թորոս՝ վրայ հասան (1161), հանդերձ Յունաց գընդով մը. բայց Թագաւորին հիւանդութիւնն պատճառ եղաւ որ իրենք ալ աւելի առաջ չվազեցին. և նոյն ակարութենէն մեռաւ երիտասարդ և քաջակորովն այն Պալեին Գ (10 փետր. 1162), մեծ սուգ և ցաւ Թողլով ամենայն քրիստոնէից, և իր արժանաւոր նիզակակցին՝ Թորոսի:

Սա և Հայք մեծ կորուստ մ'ալ ըրին նոյն տարին կամ'ի սկիզբն յաջորդին (3 փետր. 1163), որ և նորէն Յունաց հետ Թշնամութեան և կոտորածի դուռ բացաւ: Կայսեր տեղապահն'ի Կիլիկիա՝ իր խնամին Անդրոնիկոս Եւփորպենոսքան, չեմ գիտեր Սեբաստիի առջի ըրածներուն համար Թէ նոր գործոց համար, նենգութեամբ հրաւիրեց զնա'ի Ճաշ՝ Համուս բերդը, և բարբարոսական անգթութեամբ եռացեալ (ջրոյ) կաթսայի մէջ ձգել, խաշել խղդել տուաւ: Հարկ չէ ըսել Թէ Լինչ ատելութեան զայրացան Թորոս և Մլեհ եղբարքն և իրենց ազգայինք. և որչափ անգթութիւնք եղան ատոնց կողմանէ ալ, որչափ անպարտ արիւններ Թափեցան. մեկին տեղ հազարապատիկ, կ'ըսեն մեր պատմիչք. այլ աւելի մերձաւոր և օտարազգի պատմիչն (Միխ. Ասորի) 10,000 կ'ըսէ Յունացմէ սպանուածներուն վրէժխնդրութեամբ եղբարց Սեբաստեայ. և ալ աւելի պիտի ըլլային, եթէ Անդրոնիկոս յուսահատած չդիմեր առ նոր պատրաստակ Թագաւորն Երուսաղէմի, որուն շատ պարգևներ տալով և աւելի շատ ալ խոստանալով բերել տալ'ի Կ. Պօլսոյ, և շատ երդմամբք հաստատելով որ իր գիտութեամբ եղած չէր Սեբաստիի մահն, միջնորդ բռնեց զնա առ Թորոս, և հազիւ դադրեցընել տուաւ առ ժամանակ մը ասոր սոսկալի սուրը: Իսկ Սեբաստիի մարմինը

տարին և օրինաւոր հանդիսիւ Թագեցին յԱքքա-
կաղնի վանքը: Կինն Ռիթա, որ դուստր էր Սըմ-
բատայ Պապեռոնի ախթօջ, այն որ Օշնի հետ Թո-
րոսի դէմ կռուելով մեռաւ 'ի Մախ, առաւ իր եր-
կու դեռահասակ զաւկընեերը՝ Ռուբէն (Բ) և Լևոն
(Բ) և գնաց 'ի Պապեռոն՝ իր եղբարց քով, և հօն
մեծցուց զանոնք. անդրանիկն քիչ տարի ետև
Թորոսի իշխանութիւնը ժառանգեց. իսկ կրտեին
աւելի բարեբաղդ և ճարտար եղաւ, Հայոց նոր
Թագաւորութիւն մը կանգնելով, որոյ հիմը հաս-
տատող կամ ամրացընող կը տեսնենք իր մեծ հօր-
եղբայրը՝ Թորոս Բ:

Ոչ միայն իր ազգին նեցուկ էր սա այս ատեն,
այլ և մերձակայ քրիստոնէից պաշտպան, մանա-
ւանդ Փռանկաց, որք շատ հեղ մեծ օգնութիւն
գտան իրմէ. և այս ատենները սլ (1163), Ին-
նալտի բանտարգելութեան ատեն, երբ անոր փա-
ռատէր կինն Կոստանդիա [1], զՄանուէլ կայսր իր
Մարիամ դստեր փեսայացընելով՝ անոր օգնութիւ-
կ'ուզէր իր առաջին զաւակը (Պեմոնդ Գ) զրկել
յիշխանութենէ, կամ գեռ տղայ սեպհելով ինքնին
իշխել և կառավարել, Թորոս մեկէն վրայ հա-
ռաս յԱնտիոք, մերժեց ամբարտաւան մայրը, և
հաստատեց պատանի Պեմոնդը՝ յաթոռ հօրը:
Դժբաղդաբար Պեմոնդ Թորոսի երախտեաց ար-
ժանի փոխարէն չըրաւ Հայոց՝ յետոյ իր երկար
իշխանութեան ատեն, և շատ վէճեր ունեցաւ ա-

1 Կոստանդիա իրեն նման իշխանասէր մայր մ'ունէր, Ալիզա, որ էր դուստր Բ Պալտին Թագաւորին Երուսաղէմի և Հայ Թագուհւոյ մը, զոր Մարսիլիա անուանեն արևմտեայ պատմիչք, և դուստր էր Գաբրիելի իշխանի Մելիտինոյ, որ և Վաւերիլ կոչի ըստ Յունաց. սորա մէկ դուստրն ալ առած էր Թորոս իշխողն Եդեսիոյ (188): Մարսիլիա արու զաւակ չունենալով՝ իր անդրանիկ դըստեր Մելիսինտայ փեսայացուցին զՓուլկ՝ կոմսն Անժուի՝ և Թագաւորեցուցին Երուսաղէմի (1131):

նոր յաջորդաց առեն. սակայն Լևոնի Ճարտարու-
թիւնն և զօրութիւնն գտաւ հնարք զանիկայ չա-
փաւորելու: — Յաջորդ տարին (1164) Թորոս
դարձեալ զինչաւ Փռանկաց աղաչանքին, որոց նոր
օգնականներ եկեր էին յարևմըտից, և միաբան ա-
նոնք և Պեմոնդ ալ առաջին անգամ, Ռեմոնդ
Տրիպօլեայ կոմսն, Յունաց Կաստանդին Կալաման
դուքսն և այլք, Նուրէտտինայ վրայ գնացին, և
Տրիպօլեայ սահմանաց մէջ գարկին զինքը: Նու-
րէտտին հրաւէր մը հանեց իր հաւատակցաց, ա-
նոնց բազմութեամբ՝ վրէժն առնելու. Թորոս իր-
րատ տուաւ գաշնակցաց՝ որ յետ քաշուին. երբ
անոնք մոխիկ ջրին՝ ինքն իրեններովը գարձաւ.
բայց իր եղբայրն Ամէհ մնաց անխոհեմներուն հետ:
Նուրէտտին Անտիոքայ Հարէնկ կամ Հերիմ ը-
նտած ամուր բերդը պաշարեց. և երբ գաշնա-
կիցք հօս վազեցին ազատելու, լերանց կիրճերու
մէջ գարան գնելով, բաց 'ի սպանուածներէն՝ ա-
նոնց բոլոր գնհատուրները բռնեց, զՊեմոնդ և Ռե-
մոնդ, Յունաց դուքսը, և այլն. և Ռընալտ և
Ճոսլինի քով բանտեց. միայն Ամէհ օգնութեամբ
Նիւրիւք Թիւրքմէնից, իր գնդին, և քանի մ'ա-
պետաց հետ յաջողեցաւ պրծիլ (10 օգոս. 1164):
Թորոս Թէ և գիրենք զգուշացուցեր էր և ան-
պարտ էր, այլ դարձեալ գթալով անոնց վրայ՝
ընծաներ ղրկելով խնդրեց 'ի Նուրէտտինայ, որ
արձրկէ գերիները. երբ նա մոխիկ ջրաւ՝ Թորոս
վազեց Մարաշոյ կողմերը ասպատակելու, իրեն
դէմ եկած զօրքերն ալ գարկաւ և մաս մը գերի
բռնեց. այն առեն ասիպետաւ Նուրէտտինն Թո-
րոսի ուզածները տալ. Լատինացոց խնդրով ալ
Թողուց զՊեմոնդ որ երթայ գլխուն վրկանքը
Ճարէ 100,000 ոսկի. ինչպես որ գնաց ալ 'ի Կ. Պո-
լիս առ քոյր իւր և քեռայր կայսրն Մանուէլ,
սակը խնդրելու:

Ա յս առեն Թորոսի հզօր և փառաւոր իշխանութեան ականատես և վկայ եղաւ նորանշան ուղեւոր և մատենագիր մը, Սպանիոյ Դուտեղայ քաղաքացի՝ և Հրեայ Բաբունն Բենիամին, որ իր կրօնակիցները փնտռելով երկրիս երից հին մասանց մէջ, յետ շրջելոյ Իտալիա, Յունաստան, Կ. Պոլիս, և՛ի կղզիս, և՛ի Կիպրոսէ անցաւ՛ի Կիւլիկիա, եւս՛ի Կոռիկոս, որ սահմանագլուխ էր, կ՛ըսէ, Հայոց և տէրութեան Թորոսի՝ Թագաւորի Լերանց և Հայոց իշխանի, որոյ իշխանութիւնն կը տարածուի մինչև՛ի սահման Թագաւորաց կամ Թուրքաց և՛ի քաղաքն Դուքիա [1]: Բենիամին անցաւ՛ի Ամաստիա, և անկէց յԱնտիոք, ուր քանի մը ազգային ապակէգործ գտաւ. իսկ Թորոսի երկրին մէջ Հրեայ չի յիշեր:

Յետ այսքան գործոց և կռուոց, մեր քաջ շահատակն անգամ մ՛ալ իր բազմայաղթ զէնքերը ազգային արեան միսեց, իր հին հակառակորդին հետ գժտելով, որոյ զգուշութեան համար՝ խնամութիւն ալ ըրած էր անոր հետ. և երբ երկու լեռնաբոյն արծուեաց պէս Թորոս և Օշին իրարու ձագերը կը ճանկէին, իրարև հեզաթև տալուն մեր Շնորհալին ալ իր Հռոմկլայի բոյնէն սրանալով ընկաւ մէջերնին և հաշտեցուց (1165): Կռուոյն կամ նոր հակառակութեան բուն պատճառ ինչ էր՝ որոշ չէ նշանակուած. այլ մեր ազգային յիշատակողք երկու կուսակցութեանց հոգւով գրած են. ոմանք մեղադրելով զԹորոս՝ որ իշխանասիրութիւնէ կամ Յունաց դէմ ատելութեամբն՝ եկաւ Օշնի վրայ. — որովհետև սա հաւատարիմ մնաց

1 Կամ Դուպիմ: Շատ փափաքելի էր այս քաղքին դիրքը կամ իսկութիւնը գտնել, որով և Թորոսի տէրութեան արևելեան հիւսիսային սահմանները: Բենիամին Թորոսի երկիրը եկած համարուի 1165—4 թուին, և մեռած՝ Շնորհալոյ վախճանած տարին, 1173:

կայսեր, իսկ ինքն իր երդման դէմ կ'ընէր. — սակայն չափազանց կ'երևի մեղադրութիւնն. որովհետև Թորոս ինչուան Սահմանէի ապանման առեն՝ եթէ կասկած ալ ունէր, գոնէ թշնամութիւն չէր ցուցած Յունաց դէմ. այն առթիւ վկէժն առնէլէն ալ դադրեր էր, միջնորդութեամբ Թագաւորին Երուսաղէմի, և հիմայ հաշտ երևէր ընդ Յոյնս: Իսկ իրեն կուսակիցք կը մեղադրեն զՕշինն, որ ոչ միայն Յունաց՝ այլ և այլազգեաց կողմ բռնած էր ընդդէմ Թորոսի. և անգամ մը առաջնորդեր կամ ձամբայ ցուցած էր Թուրքմանաց ասպատակելու յերկիր Թորոսի, ուր Ատանայի սահմաններէն 500 աղչիկ յափշտակեցին: Յայտ ալ չափազանցութիւն կ'երևի. բայց հետևանքն ըստոյգ է, որ երկու մեծ իշխանաց մէջ նորէն աեղութիւնն արթընցաւ, կռիւ ծագեցաւ, և շատ արիւնահեղութիւն եղաւ. հաւանօրէն Օշինի կողմն աւելի ակար էր. և թերևս նորէն և աւելի սաստիկ Թորոսի վկէժխնդրութեան կամ պատժոց տակ պիտի ընկնար, երբ համբաւն հրաշակուեցաւ: Գրիգորիս կաթողիկոս փութացուց իր հարազատը՝ ազատելու իրենց Թոռներըն և հաշտեցընելու հակառակորդները. « որ և աշխատասիրաբար ձանապարհ հոգեառ գայր առնո« սա, և գնաւատացեալ գործն՝ արդեամբք կա« տարեր 'ի ձեռն իւրոյ միջնորդութեանն »: Միջնորդութիւն, որ գուցէ առանց այսպիսի շնորհազարդ և աչքազարդ հայրապետի մը՝ անկարելի պիտի ըլլար ուրիշ անձի ձեռքով կամ բերնով: Աւելորդ է հետաքննել եթէ ինչ պայմաններ գըլուխեցան հաշտութեան երկու կողմէն. Շնորհալւոյ չունչն ամեն բան գիւրած է և ապահոված: Օշին արդէն կրկին կատերով կապուած էր անոր և Պահլաւունեաց առմին հետ. իսկ Թորոս ոչքան և տակալի և ծանրաձեռն էր պատերազմի

և կուռի մէջ, այնքան ալ խոհեմ և արդարասէր
'ի հաշտութեան. և քաջութենէն պակաս չէր բա-
րեպաշտութիւնն ալ. ոչ միայն յարդող եկեղեցա-
կանաց, այլ և շինող եկեղեցեաց և վանուիցս. և
ոչ այսչափ միայն, այլ և վերլսապէս իր կարիճ կե-
նաց յեռին օրերը կրօնասիրութեամբ կնքեց:

Հաշտութիւնը կնքելէն ետև Թորոս իր աեղը
դարձաւ. իսկ Օշին իր ընտանւոյն ընկերած 'նախ
եկան 'ի Մամեստիա, կայսեր տեղակալ դուքսը
մեծարելու, որ էր Ալէքս Աքսուխ (Axouch),
« փեսայ գոլով Թագաւորին (Մանուէլի), այր
« կորովամիտ և հանճարեղ, պատուով յառաջին
« հնծեալազօրացն, ըստ յունական բարբառոյն
« Պռոտոստրատոր յորջորջեալ »: Յետ արժա-
նաւոր ընդունելութեան, Ներսխոյ հնօրհաց փայլե-
ամանք ջատագով Յոյն իշխանին՝ սիրափեցաւ իր առջի
հակառակ կարծիքներէն զոր ունէր Հայոց վրայ.
և եկեղեցական խնդրոց ալ քննող և սիրող ըլ-
լալով՝ փափագ ցուցուց որ այսոխի մեծ և գիտուն
Հայ եպիսկոպոսն և կաթողիկոսին փոխանորդին՝
տեղեկանայ մանրամասնաբար Հայոց դաւանու-
թեան և ծիսից: Սա ալ պահանջեց որ օրինաւոր
կերպով մ'ընէ խնդիրը. և երբ այնպէս խնդրեց,
ապա գրեց Շնորհալին իր հնօրհաբան գրչաւը՝
այն հռչակաւոր դաւանութիւնը, որ պատճառ է-
ղաւ Հայոց և Յունաց մէջ երկար տարիներ թըշ-
թակցութեանց, քոլոր Ներսխի կաթողիկոսու-
թեան տաեն և անկէ վերջը, և աշխարհածանօթ
թեան տաեն և անկէ վերջը, և աշխարհածանօթ
խնդրոյ միաբանութեանն, որոյ վրայ պէտք է յի-
շոյ խօսինք, յուզելով հօս ընդհատակ մեր քա-
ղաքական և ընտանեկան դիպաց պատմութիւնը:
Ալէքս՝ որչափ որ աւելի կեցաւ քովը Շնորհալին՝
այ աւելի ճանչցաւ անոր յարդը. շատ գոհու-
թեամբ ընդունեցաւ անոր գրած դաւանութիւնը,
խոստանալով անձամբ տանելու առ կայսրն. և

իրեն արժանաւոր ընծաներ տալով յուղարկեց (1165)։

Հիմայ Օչլին Թորոսի հետ հաշտութենէն առնլի մեծ ուրախութեամբ մը՝ բռնադատեց տարաբ իր պաշտելի հիւրը իր աթոռը՝ի Լամբրոն. բոլոր ընտանիքը, տունը, բերդը և երկիրները օրհնել տուաւ անոր սուրբ ոչովը. և առնլի քանի որդիականի սիրով մը պահեցին ու պատուեցին զնա՝ ինքն և կինն Շահանդուխտ, դուստր եղբօր Շնորհալւոյն. որ և անշուշտ միւս որդւոց հետ ներկայացուց հօրեղբօրը՝ Ակնեայ անապատաներէն բերելով անարատ ատտրակի պէս իր Սմբատիկը, որ յետոյ պիտի ներսիանար անուամբ և հոգւով պապուն. և այն տաեն 12ամեայ մանուկ, նման երբեմն իրեն հասակակից մանկացելոյն Յիսուսի, նաեր առ ոտս այս շնորհաշարդ վարդապետին, լսէր՝ի նմանե և հարցանէր զնա [1]։ Քաղցր էր անշուշտ և Շնորհալւոյ այսպիսի ընտանեաց և թոռանց կենակցութիւնը, և քիչ մ՝առեն Հռոմկլայի հոգերէն և տաք օգերէն հեռանալով՝ի սարս Տաւրոսի՝ Լամբրոնի 4500 ոտք բարձրաւանդակներէն զովագին և կենդանարար սիւգ շնչել, և բնութեան ու հասակի գալարեաց մէջ իր արծաթափայլ ալիքը ծածանել։ Սակայն եղբօրը Գրիգորիսի ծանրացեալ հասակն և հարկ պաշտօնին կը կանչէին զինքն՝ի տօթագին քարանձաւն, ուր այնուհետեւ ալ աւելի պիտի արգելուէր. և թերևս յետին անգամն էր՝ որ մեծ ընկերակիրական գործոյ մը համար՝ իր հոգեկից Բեռնարդոսին պէս հեռացեր էր իր մենարանէն, և վերջին անգամ Հռոմկլային դուրս երկիր կը տեսնէր. որուն՝ հանդերձ հիւրընկալօքն ինաք բարով ըսելով և օրհնելով՝ գարձաւ՝ի հայրապետանոցն։ Իսկ մենք յա-

1 Ղուկ. Բ. 46։

ռաջ քան զմեր դարձն յայս կողմս, աւարտենք Թորոսի տեսութիւնը, որոյ մէկ հատիկ ամենասիրելի յետամնացն ալ դարձեալ զարմանալի բաղդով պիտի աւանդուէր Շնորհալւոյ ձեռքը, և անդարձ աւանդուէր:

Թորոս որչափ որ խելօք և ուժով յայլող էր, այնչափ ալ բաղդաւոր չեղաւ իր ամենէն մերձաւորներէն յարգ և սէր ընդունելու. տեսանք յառաջ Սահմանէի ըրածը, և յիշեցինք Մլեհի անկարգութիւնը, զոր ալ աւելի ցուցուց այս ժամանակ և ասկէ ետև: Հօրը գերութեան պատճառաւ սիրտպլուխ մնացած՝ անկիրթ և ազատակամ մեծցեր էր. որ իշխանն որ իրեն հաճոյ երևէր՝ անոր քով կ'երթար և կ'ընկերէր զինուորութեամբ, երբեմն նաև չխարելով զքրիստոնեայ և զանքրիստոնեայ. շատ հեղ ալ ինքնապլուխ զօրք ժողովելով, ասպատակելով և սիրելով, ոչ սակաւ բռնաբարութեամբ և անիրաւութեամբ: Սահեն մը եղբարցը կ'օգնէր, սահեն մ'ալ իրենց ծէսը Թոռլով անցաւ Լատինաց մէջ և այն սահենուան հռչակաւոր Տաճարական (Templiers) ասպետաց կարգը մտաւ. եղաւ կարիճ և յանդուգն ձիաւոր մը, այլ միշտ քիչ մտածող, կրօտ ու կրակոտ: Թորոսէն ա՛ւելի ուզեց իր (Սահմանէ) եղբօր մահուան վրէժն առնուլ՝ ի Յունաց: Մինչ բանիւ ուր որ վրիժու և կռուի խնդիր կար՝ առաջին կ'ըլլար հօն վազելու, ինչպէս քիչ առաջ տեսանք՝ դաշնակցեալ քրիստոնէից հետ Նուրէտտինայ դէմ երթալը. որուն ձեռքէն հազիւ ազատեցաւ (1164), իրեն անվայել կամ վայել ընկեր ըրած Թիւրքմէնաց օգնութեամբ, զորս մեր պատմիչն՝ վախ ի անէրեսէ ազգ կոչէց. և չէ զարմանք որ ասպետաց սանձագել ձին Թոռլով հետևակ (Եհուդիք) Թափառականաց հետևողը եղաւ, երբ խնամանք որ ձևին հետ խաչն ու կրօնքն ալ կը փոխէր, որով և անկրօն կը

մնար. Թէ և ոչ միայն կրօնասէր անձանց մէջ մեծ-
ցեր էր, այլ և մեր հայրապետաց ատեն խնամի և
փեսայ էր: Ըստ այմ որչափ ալ դարձեալ պըճ-
գալի՝ զարմանալու չէ, եթէ անհաւատան առ փըր-
կիչն իւր Քրիստոս՝ ըլլայ անհաւատարիմ և առ
հարազատն Թորոս. և Սպարապետ պատմչին
խօսքերով ըսենք, « կ'ուզէր որ ապանէր զՊարոն
« Թորոս. և յարեցոյց յինքն այլս ոմանս օգնա-
« կանս իւրոյ չարութեան: Եւ օր մի ելան եր-
« կուքն 'ի յորս 'ի մէջ Մսիսայ. և կամէր Մլեհն
« զչար խորհուրդն իւր անդ կատարել և սպանել
« զեղբայրն. և Պարոն Թորոս գիտաց, և կալաւ
« զՊարոն Մլեհ, և առաջի իշխանացն քշփեց
« խիստ զնա: Եւ ետ նմա շատ ոսկի և արծաթ,
« ձի և ջորի, և եհան զնա յերկրէն. և այլ չար
« չարար փոխարէն նմա: Իսկ նա գնաց առ Սուլ-
« տանն Հալպայ Նուրատինն, և եմուտ 'ի ծա-
« ռայութիւն նորա. և նա ետ նմա զԿիւրոս և զը-
« գաւառն իւր ». որ է Անթէպի և Քիլիսի միջոց
արևմտեան կողմը: Այս բանս հանդիպած պիտի
ըլլայ 1165–6ի միջոցը: Աւանկ անպիտան և ան-
խիղճ անձի մը դէմ հարկաւոր էր դարձեալ ար-
Թուն կենալ. ուստի և Թորոս անկէ ետև զգու-
շութեամբ և բարեկամութեամբ կը վարուէր
Նուրէտտինի հետ, որ աւելի ալէկ խոստմունք
կը պահէր, և կը պատկառէր 'ի Թորոսէ. այն ա-
տեններն ալ զբաղած էր Եգիպտոսի խալիֆային
դէմ, չտանելով ուրիշ ուրացեալ Հայու (կամ
Քրդի մը ձեռքով որ էր Շիրաքոս Հայրն Սա-
լահէտտինայ), Ափրիկէի մայրաքաղաքին և մեծ
պետարհին ալ տիրելու. բայց ատոր պաշտպան և
օգնական խալիֆային եղաւ Ելուտաղէմի Թագա-
ւորն՝ Ամաուրի:

Կարծեն ոմանք Թէ այս բարեկամութիւնս Թո-
րոսի և Նուրէտտինի՝ որուն Յունաց կայսրն ու

աոեղութիւնը արթընցուց, և մէջերնին նոր կրակ վառեց. այլ աւելի հաւանական կ'երևի թէ Թորոսէն շատոնց յաղթուած վատ հակառակորդն՝ Անդրոնիկոս Կոմնենոան էր այս բանիս պատճառ, որ իրեն նոր նախատինք աւելցուց, մեր իշխանին նոր փառք: Յետ 12 տարի բանտարգելութեան Անդրոնիկոս երկրորդ անգամ հնարք գտեր էր բանտէն փախչելու, (1166) և շատ հեռու փախչելու, մինչև՛ ի Քիեբ Ռուսաց մայրաքաղաքը, և անոնց Կարոլոս իշխանապետէն նիզակակից ընդունելու. Մանուէլ որ այն առեններըը (1166) Ոնգարաց հետ պատերազմ ունէր՝ վախցաւ Ռուսներն ալ անոնց օգնական աւելցընելու. և Թողութեան մուրհակ խաբեց իր հօրեղբօրորդւոյն. Անդրոնիկոս ուրախութեամբ գարձաւ իր համբերակին քով և իբրև՛ ի նշան շնորհակալութեան՝ մնաւ՛ ի պատերազմ, և Զեւկինա քաղաքը առնելու առեն Ոնկարաց ձեռքէն՝ բաւական կորըձուԹիւն ցուցուց, ապա խաղաղութիւն ընելով գարձաւ կայսեր հետ՛ ի Կ. Պօլիս. սակայն իր հին քարքն և փառասիրութիւնն նորէն յերևան ելան: Մանուէլ իր աթոռը ապահովելու համար՝ յօժարեցաւ՛ ի խնդիր Անդրոնիկեայ, Թերևս և յորդորեց ալ, Թորոսէ իր հին վրէժը առնելու. և երբ գուքան Ալեքս Ա. քաոսի իր տարեկան պաշտօնը կատարելով՛ ի Կիւլիկիա՝ գարձաւ՛ ի Կ. Պօլիս (1166), Շնորհալւոյ գրած Դաւանութիւնն ալ հետը բերելով առ կայսրն, սա զԱնդրոնիկոս գուքս և առեղակալ կարգեց արևելից, և շատ Թոշակ և ատակ տալով, Կիպրոսի եկամուտն ալ իրեն շնորհելով՝ հեռացուց իրմէ (1167): Անդրոնիկոսի կիրքն այս անգամ առեղութենէ վեր առփանք մ'էր. ոչ այնքան զԹորոս կ'ուզէր հալածել, որքան որսալ զՓիլիպպինէ՝ քոյր իր քենւոյն (Մարիամայ կայսրուհւոյ) և Գ Պեմոնդի, որոյ գեղեցկութեան համբ

բաւը լսեր էր և հաւատաի կը սեպէր՝ անոր քոյրը տեսնելով։ Ալէքսի չափաւորութիւնն և խոհեմութիւնն՝ զԹորոս ալ չափու մէջ պահած էր, և իրարու առիթ չտալով՝ բարեկամութեամբ կը վարուէին, և Թորոս դեռ կայսեր բարձրագոյն հովանաւորութեան նեցքև համարուէր. իսկ այդ անառնլին Անդրոնիկոս բոլորովին փճացուց զայնքը և կայսեր ոսկի հրովարտակը. սիրաբար պատուիրանեերով և գրգռմամբ բռնադատեց ըզԹորոս նորէն զինքն վազելու, զոր անկէ առաջ ինքն դուքսն առած՝ կոխեր էր մեր պանտոսեքատոսի խաղաղացեալ երկիրները։ Քանի և հինգ տարիներ պատերազմելով՝ Թուլցած էին Լեռնի ոգեղէն Թևերն. և շատ երկար ժամանակ ու հնարք պէտք չեղաւ Հայոց՝ քանի մ՚անգամ զարնելու զԱնդրոնիկոս. որ և փոխանակ այնպիսի կարևոր փորձ Թշնամւոյ մը դէմ հնարք և զգուշութիւն փնտռելու, այլանգակ մտածութեամբ մը, գուցէ զՀայն նախատելուզելով, բանակը՝ անասնոյ ձևով դասաւորեց, դլխով, ոտիք, և այլն։ Իսկ Թորոս իրեններըը զանազան գունդ բաժնելով, և զմանր անտառաց մէջ պահռըայընելով՝ այն նորաձև գազանը զարկաւ չարդեց ցրուեց. և երբ իր դնդից ետ դառնալուն կը սպասեր ձիուն վրայ, Անդրոնիկոս յուսահատ յանդգնութեամբ մը կրցաւ ազատել զինքը նոր գերութենէ։ Տեսաւ որ Թորոս ուրիշ կողմ զբաղեր է. յանկարծ ետևէն գնաց, և անոր մօտ եղողներուն վրայ սուր շարժելով, բոլոր ուժովը նիզակը Թափ զարկաւ Թորոսի երկայն վահանին, և ձիէն վար ձգեց. Թորոսի ամուր զրահներն զինքն անվնաս պահեցին. բայց մինչև որ նորէն ցատքեց ձիուն վրայ՝ Անդրոնիկոս ժամանակ ունեցաւ շուտով ետ քաշուելու, և ինչուան յԱնտիոք փախչելու իր անարժան սիրոյն զբաղելու. և ապա հեռու և օ-

տար երկիրներ, աւելի օտար ու անվայել կրքեր փնտռելու. որով ամենուն զզուելի եղաւ, և Յունաց եկեղեցւոյ նզովից տակ ընկաւ. այլ իր ամպարշտութիւնն և ամբարտաւանութիւնն գրեթէ հաւասար էին. որով և յետ շատ տարիներու՝ Մանուէլի մահուանէն վերջը՝ իր այնքան ագահութեամբ և անկարգութեամբ փափագած կայսերական գահն ալ գրաւեց, և պղծեց նորանոր չարութեամբք և անգթութեամբք. մինչև ինքն ալ չարաչար մահուամբ սպանուեցաւ (1185): Իսկ հիմայ երեն տեղ՝ միանգամայն և իբրև փեսացու Փիլիպպինեայ ղրկեց կայսրն զնախայիշեալ գուքան Կոստանդին Կալաման. այլ և սա կրկնակի գըժբաղդ եղաւ. զի Փիլիպպինեայ սիրտը վաստրկիլ չկարնալով, գոնէ Թորոսի վրայ յաղթութիւն մը վաստրկիլ ուզեց. և Տարսոնի քով զարնուելով անոր հետ՝ ոչ միայն մեծ կորուստով յաղթուեցաւ, այլ և նորէն գերի ընկաւ մեր քաջայաղթ Թորոսի ձեռքը, ուսկից՝ ծանր փրկանք տալով կայսրն՝ երկրորդ անգամ գնեց և ազատեց:

Բայց այնուհետև Կիւլիկիա կայսեր համար կոտած էր, և Թորոսի իշխանութեան տակ հաստատուած. որ հիմայ անխիղճ՝ նորէն սիրեց Մամեստիոյ, ուր որ կայսեր տեղակալ գուքան նստէր երբեմն, և թուի թէ Թորոս ալ իր վերջին տարիները հօս նստաւ. ասոր համար պիտի ըլլայ Սմբատ պատմչէն յատկապար կոչէն զԹորոս՝ անոր մահը յիշած առեն, թէ « մեռաւ Պարոն Թորոս որդի Լեւոնի, տէրն Մսիսայ ». որ էր տէրը և գրեթէ բոլոր Կիւլիկիոյ և մեծ մասին Իսաւրիոյ և Փռիւգիոյ: Եւ այսպէս իրաւամբք հաստատելով քաջութեամբ նուաճածը, ամեն մեծաւորաց ահաւոր և սիրելի ըլլալով, հեռաւորաց ալ համբաւելի, և թէ քրիստոնէից թէ այլակրօնից պատկառելի, մեր ազգային պատմութեան մէջ

շատ բարձր տեղ մը բռնելով, հանդարտութեամբ տեսաւ անվրիպելի մահուն մերձենալը, յետ բազմամեայ անդադար աշխատանաց, պատերազմաց, շինութեանց և ամրութեանց: Ի 11 մայիսի կը նշանակէն իր մահը արքունական Յայսմաւուրք, 1168 տարւոյն, թէ և ոմանք մեկ երկու և ինչուան չորս տարի ալ վերջը կը դնեն զայն: Յայտ է որ Թորոս դեռ կատարեալ տարիքն առած չէր, կամ չէր ալեւորած, բայց եթէ իր շատ քրտամբք և արդեամբք, և հազիւ 45–50 ամեայ մը կըրնար ըլլալ: Մեկ մանչ զաւակ մ'ունէր՝ դեռ տղայ տարիք, զոր յանձնեց 'ի խնամս իր անեղբօրը՝ որ կոչուէր Թովմաս, և երևի թէ Անտիոքայ կողմերը բնակող ազնուական մ'էր: Իշխանազուն տղայոց խնամակալք և տէրութեան հոգացողքն՝ Պայլ կ'ըսուէին մեր Ռուբինեանց տէրութեան առեն. այսպէս անուանեց Թորոս զԹովմաս՝ իր իշխանաց առջև. և յետ զամեն բան յանձնելու և կատկելու, մնացեալ մասնութիւնն ալ դարձուց բոլոր իր հանգերձեալ կենաց. կրօնաւորական հագուստ բերել և օրհնել տուաւ, և այն խոնարհ ձևով ցուցուց յետին օրերուն, թէ ոչ կը վերջանան այնքան կիրք և կռիւք: Մարմինը փառօք թաղեցին 'ի Դրազարկ վանքը, զոր իր հօրեղբայրն Թորոս Ա. շիներ էր, և հոն հանգչէր. ուր որ յետոյ շատ Թագաւորք և Թագուհիք Հայոց ալ հանգուցան:

Թորոս քաջութեան պէս բարեպաշտութեան և ազնուութեան ալ մեծ համբաւ ունէր, և գերագոյն աստիճանի մը, եթէ լսենք Վահրամայ Բաբունոյ.

« Էր սա մարմնով յառաջացեալ,
Ակն և հոգւով յոյժ զօրացեալ.
Զոլորմութիւն առատ սրբեալ,

Ըստ արեգական լուսոյ փայլեալ.
Բարեաց գործովք բարգաւաճեալ,
Եւ հաւատով պայծառացեալ.
Աստուածային գըրովք վարժեալ,
Եւ յիմաստից արուեստ մըտեալ:
Ասեն, հոգի սա ընկալեալ
Մարգարէի հաւատարեալ,
Որով գըժուար բանըս լուծեալ,
Որ գըտանի այժմըս գըրեալ:
Յամենայնի փառաւորեալ,
Եւ յԱստուծոյ հաճոյս կացեալ»:

Իցի՛ թէ և մեր ժամանակին այժմըն ալ ծնացեալ ըլլային այդպիսի թրաթափ հելլենակի մը մեկնաբանութիւնք, և զինուց գծածին հետ գրչի գծածքն ալ բաղդատէինք. որոց հետ փափագելի էր իր գործոց հաւատարագոյն պատմութիւնն կամ ժամանակագրութիւնն ալ գտանել, որով իր ժամանակին դիւցազանց ո՛ր գիրքը գնելնիս աւելի կը ստուգէինք. առ այժմ՝ ոչ միայն ազգայնութեան սիրով, այլ և ժամանակակից և յետագայ թէ արևմըտեան և թէ արևելեան պատմչաց վկայութեամբք՝ չենք զանգիտեր առաջին տեղը տալու, միշտ քաջութեան հետ՝ խոհեմութիւնն ալ դիտելով, որով հաւատար ահաւոր և սիրելի եղած և ըսուած էր:

Յաւալի էր որ իրեն արժանաւոր և չափահասակ անմիջական յետամնաց չունէր, որ նոյն իր ոգւով և ոճով իշխանութիւնը բանեցընէր. և գուցե դարձեալ Թովմասու պայլութեամբ այս բանս յայտներ՝ եթէ նախանձոտ և չարաչիտ Մլեհն չըլլար. որ եղբօրը մահը լսելուն՝ մեկէն քիչ մարդով փութացաւ մտաւ 'ի Կիւլիկիա, պարոնութիւնը առնուլ. Հայք՝ որ արդէն զզուած էին իրմէ՝ դէմ կեցան օգնութեամբ Անտիոքայ իշխա-

նին և Երուսաղէմի Թագաւորին, ու վերնաեցին. նա իր բարեկամ Նուրէտտինն Սուլտանին դիմեց, որ եկաւ Փառնկաց Կրակ բերդը պաշարելու. դաշնակիցք հօն փութացան ազատելու. Նուրէտտինն յետ քաշուեցաւ: Մլեհ անոր հեծելազօրաց մեծ գնդով մտաւ նորէն 'ի Կիւլկիա (1170), և աւելի քան զԹուրքս անգթօրէն դատեց և թալանեց. իր հակառակորդները բռնեց բանտեց, սատցուածքնին յափշտակեց, և անկէ Թանկապին՝ անձանց պարկեշտութիւնն ալ, եպիսկոպոսաց բերնին տալով հայհոյութեամբ և ծեծով՝ առատնին թափեց, զամենքը դողացուց, նուաճեց. ապա Թուրքերը առատ պարգևներով ետ դարձուց, և բռնաբար նստաւ իր եղբօրն այնքան քաջութեամբ և ազնուութեամբ կանգնած աթոռը: « Էր այր գազանամիտ և չար և անողորմ, և ա« տելին զնա ամենեքեան, և ցանկային փախչել 'ի « նմանէ. բայց առ ժամն չգտանէին տեղի », կ'ըսէ Պատմիչն Սմբատ: Բայց միայն Պայլն Թովմաս անհրաժեշտ պէտք էր որ գտնէ տեղ մը, իրմէ աւելի իր պատուական աւանդին համար, որ էր Ռուբէն, որդին Թորոսի. զոր առաւ փախաւ յԱնախոք. այլ անկէ աւելի ապահով տեղ վնտռելով՝ խաւրեց սանուկը ամենէն անկասկած և ամենէն սըրբազան տեղ մը, Շնորհալւոյ դիրկը, որ այն ատեն կաթողիկոս էր 'ի Հռոմկլայ: Սփոփա, որ տղայն՝ Ռուբէնիկ, տարաժամ կտրած ծաղկի մը պէս թռումեցաւ. այլ գեռ երջանիկ որ իր կարճատև անմեղութեան հոտն խառնեց Շնորհալւոյ անմահութեան բուրմունքին մէջ, և այնպիսի առատաձեռնութեամբ ձեռնք դրուեցաւ անոր ծերունի վկայասէր եղբօրքով, որոց քով քիչ առենէն ինքն ալ պիտի հանգչէր: Գուցէ կարծեց անդգամն Մլեհ՝ մեծ կասկածէ մը ազատուած ըլլալ՝ անմեղ տղուն մահուամբը. և առանց զգաստանալու անխոհը կը շարու-

Հակէը բռնութիւնը և բռնաբարութիւնը, որ և է ազգի մարդկան դէմ, և սեբէլի ընդդէմ կրօնից և իր հին կարգակցաց՝ Տաճարական ասպետաց, որոց Թորոս շատ կալուածներ պարգևեր էր: Անգամ մ՚ալ Երուսաղէմի Թագաւորն՝ Տիբրոսի եպիսկոպոսը և ազնուական կոմս մը դեսպան կը խաբեր առ Մանուէլ կայսր (1171). երբ Մաժեսթոյ մօտերէն կ՚անցնէին՝ Մլեհ բռնել և կողոպտել տուաւ զանոնք, յետոյ միայն քուրջերով և անպիտան ձիերով Թողուց որ երթան: Ուրիշ անգամ ալ Պալեստինոյ կողմերը ասպատակեց (1172), բայց Աստեաք չԹողուցին սեբէլի անզգամելու: Իսկ ինքն սեբէլի ապահովութեան համար ընդդէմ Լատինաց և Յունաց, (որովհետև Մանուէլ նորէն կը ջանար նուաճել զԿիւլիկիա), դաշնակցեցաւ և Իկոնիոյ Սուլտանին հետ, ուստի ան կայսրի պատերազմ հրահրակելու՝ Յունաց Փ. Աթոյ գետաւներուն մէջ ասպատակել կուտար. ուսկից ծագեցաւ յայտնի պատերազմ կայսեր և սուլտանին մէջ: Նուրէտտինի հետ ալ այնքան սերտ բարեկամ էր, որ զնրան եղբայր կ՚անուանէին, և կարծուի ալ Թէ՝ ի նշան միաբանութեան գրամ ալ կոխած են: Ամեն ազգային իշխաններէն սեբէլ նեղուց մեր Լամբրոնացիները. որովհետև Հեթում՝ ինչպէս առաջ յիշեցինք (292) յետ մահուան Թորոսի՝ անոր գուստրը հետացուցեր էր իրմէ. Մլեհ իբրև վերժինդիր եղբօրը պատուոյն՝ սրով և հրով ապականեց Լամբրոնի սահմանները, չխնայելով բերդին ալ տիրել:

Այսքան անկարգ և անգութ գործոց ալ չկարնալով դիմանալ իշխանքն՝ վերջապէս հնարք գտան ապաննելու զինքը ի Սիս (1175), զոր նոր չիներ կամ նորոգեր էր Մլեհ, և զոր յետոյ սեբէլ չէնցնելով իր եղբօրորդին Լևոն Բ՝ Թագաւորանիստ քաղաք ըրաւ: Մլեհի մարմինը՝ ըսին ոմանք Թէ

չնեղու ձգեցին. բայց յայտ է որ թէ մնասամբ թէ բոլոր՝ տարին Թաղեցին ի Մեծքար վանքը. վասն զի որքան ալ գործովք անկարգ և անկրօն էր՝ յայտնապէս ուրացած չէր զքրիստոնէութիւն. նուրբ հատինի անուամբ գտուած քանի մը դրամոց վրայ հաչի նշանն ալ այս բանիս հաւաստիք կարծուի: — Մլեհ հարձորդի մ՚ունէր Ռուբէն անուամբ, որոյ ինչ ըլլալն յայտնի չէ. իսկ օրինաւոր կնկանէն (որ Պահլաւունեաց ցեղէն էր) [1] Դոլեետա կամ Տալիթա անուամբ դուստր մը, զոր կին առաւ Ժիպլէի փառանգ իշխանն Պերդրան:

Մլեհի տեղ իշխանք Հայոց իրենց Պարոն գրին զանդրանիկ որդին Ստեփանէն՝ Ռուբէն Բ կամ Գ. որոյ ժամանակն մեր պատմութեան շրջանէն դուրս կ՚ելնէ. միայն զայս ըսենք, որ սա Տարսոն քաղաքն ալ գնելով յԱնտիոքայ իշխանէն (որոյ ձեռք ընկեր էր այն տաճն), բոլոր Կիւլիկիոյ տէր եղաւ, վերջին անգամ Յունաց հետ հակառակելով. և անկէ ետև կայսերք ետ կեցան այն հին աշխարհէն, մանաւանդ թէ վաւերացուցին Հայոց ժառանգութիւնը, արքայական թագ ղրկելով Ռուբէնի եղբօր՝ Բ Լեւոնի (1199):

Յետ ձանձնալու ըստ բաւականին մեր Կիւլիկեցւոց քաղաքական վիճակը՝ Շնորհալւոյ կաթողիկոսութեան տաճն և անկէ առաջ, և այն անձինքը որոց հետ քիչ շատ յարաբերութիւն մ՚ունեցաւ, դառնանք այսուհետև իր աւելի հանդիսական գործերը տեսնելու բարձրագոյն տասնամեայ վրայ:

1 Մլեհ Գրիգորի Տղայոյ փեսայ կ՚անուանի (ի Մխայէլ Ասորւոյ): Տես ի ծանօթ. երես 14:

# ԻԱ.

*Ձեռնադրութիւն Շնորհալւոյ ՚ի կաթողիկոս. — Առննաբանութիւն նորա. — Մահ Գրիգորի Գրիգորիսի :*

Յետ երկու ամենուսական ազգակցաց Հայոց՝ Օշնի իշխանին և Թորոսի իշխանապետի՝ հաշտութիւնը ապահովելու, և քիչ մը ժամանակ իր ընտանւոյն քով կենալու, և Սկեքս դըքսին Դաւանութեան Թուղթը տալու, Շնորհալին գարձաւ ՚ի Հռոմկլայ, ՚ի վերջ 1165 տարւոյ կամ ՚ի սկիզբն 1166ի. և իր կաթողիկոս եղբայրը՝ որ արդէն տարւոք և ակարութեամբ ալ չտառապեր էր՝ աւելի ծանրացեալ գտաւ: Մերազգի պատմչաց մէկն ի Գրիգորիս կաղ կ՚անուանէ. բայց ինչ տութով և երբ կաղանալն յայտնի չէ. և ոչ այն Թուի պատճառ եեսին ակարութեանն և հրաժարելու ՚ի կաթողիկոսութենէ, այլ բոլոր մարմնոյն ուժէ ընկնալն, որ և է պատճառաւ. յորոց յայտնի է ծերութիւնն, և նախայիշեալ բնակութեան տեղւոյն օդոց տաքութիւնն: Թէ այսպիսի պատճառանօք և թէ իր եղբօր գերազանցութիւնը յարգելով, ինչպէս որ յառաջ ալ նշանակեցինք, Գրիգորիս շատ հեղ առաջարկեր և յորդորեր էր ընտրեսէս՝ որ յանձն առնու վկաթողկոսութիւն, և իրարու տեղ փոխանակեն, ինչպէս որ ուրիշ ամեն բանի մէջ ալ համահաւասար էին. սակայն Շնորհալւոյ անհնարին կ՚երե-

էր իր երեց և նախընակիր և պատուական եղբօր կենդանութեան առեն՝ այսպիսի բան մը յանձն առնուլ, որչափ ալ յամենայնի հպատակ էր անոր. և երբ տարիքնին առին՝ և դարձեալ այս առաջարկութիւնս կ'ըլլար, Ներսէս իրեն ալ արդէն բաւական ծերացեալ և ակարացեալ ըլլալն ալ արդելք համարէր. վասն զի արդէն ալեւորեալ էր, ըստ պատմչին[1]. և նոյն իսկ ձեռնադրութեան օրն ալ կ'ըսէր Ներսէս, թէ « ոչինչ նուազ և մեք նովին « ակարութեամբ զգածեալ եմք »: Բայց երբ այս տարի նորէն առաջարկեց Գրիգորիս, և ակարութիւնն ալ յայտնի կը ցուցընէր՝ որ երկար չի կրնար ապրիլ, Ներսէս ուրիշ զօրաւոր պատճառ չէր գտներ հրաժարելու, բայց իր նեղլին խոնարհութիւնը. որով զինքն անարժան համարէր այնպիսի տառնճանի և պաշտամանի, որոյ ծանրութեան մեծ մասն արդէն կրեր էր այնքան տարիներ: Չարիք եղաւ որ Գրիգորիս առաջացային կամքն՝ ի մէջ բերէ, զոր իբրև հոգևոր ազգմամբ ալ խնացած եմ կ'ըսէր. և առը համար հրաւէր խաբերէր մօտաւոր և կարևոր եպիսկոպոսաց և վարդապետաց և Սեաւ Լերին կրօնաւորաց, որ յառաջ քան զգաստիկն գան ժողովին՝ ի հայրապետանոցն. յայտնելով անոնց իր մտածութիւնը և փափաքը: Բան զայս ընդունելի բան չկար իրենց. թէ՝ ի կաթողիկոսութիւն կոչածին ամենայայտնի արժանաւորութիւնն, և թէ կոչողին կէս գործ աւելի անարատ հովուապետութիւնն՝ իրենց երախտեաց պարտք էին. ոչ միայն յօժարակամ հաւանեցան, այլ և հաւանեցուցին զՆերսէս. որոյ և անշուշտ հարկաւոր էր այս բռնադատութիւնս, որպէս զի չունենայ խիղճ մը իբրև ազգականութեան համար յաչերդ հա-

1 Պատճառ թղթոց և ժողովոյն Հռոմկլայ:

մորուելու, և ոչ ալ մեղադրուելու յեպիսկոպոսաց, մանաւանդ յԱղթամարեանց, և վրաց իշխանութեան տակ եղող քանի մ՝անհաւան եկեղեցականաց:

Երբ հասարակաց հաւանութիւն եղաւ, Շնորհալին ինչպէս որ իրեն կը վայլէր՝ քիչ մը ժամանակ առանձնացաւ միայն ընդ միայնոյ Աստուծոյ, իր հոգին պատրաստելու նոր և մեծ շնորհաց, ազգի մը, և այնպիսի ցրուեալ և տատանեալ ազգի մը հոգևոր հայրապետ ըլլալու: Ձեռնադրութեան և հանդիսի օրն սահմանեցաւ զատկէն առաջ՝ Ծաղկազարդի ուրբնի օրն, որ այն տարի (1166) կը հանդիպէր ապրիլի 17ին. Հռոմկլայ երբեք այսպիսի արժանաւոր և վեհական տեսարան չէր ընծայած. և ինչպէս ինքն իսկ Ներսէս կերպով մը յիշեց ժողովքին մէջ, այն գեղատպաւ քարանձաւն այն օր ձևացաւ բարձրացաւ իբրև Հովը լեառն, յորոյ գագաթան՝ Հրէից առաջին քահանայապետն մերձ՝ի մահ կը մերկանար իր պաշտամանն շքեղ պատմուճանները և կը զգեցընէր որդուն. հօն այս գործողութիւնն կատարուէր Մովսէս, իսկ հօս անոր և Ահարոնի և Եղիազարու կերպարանքն և գործն՝ երկու վեհական հարազատաց վրայ բաժնուէր և բովանդակէր: Երբ գումարեցաւ ժողովն և պատրաստեցաւ հանդէսն, և շնորհազարդ և ալեզարդ նուիրեալն՝ աւելի սպիտակ անմեղութեամբ, իբրև պատկառում և գողդոջ մանուկ մը ընծայեցաւ առաջն սուրբ սեղանոյն և քահանայապետական աթոռոյն, նախ ծեր և սկսր հայրապետն՝ անտուվոր կարմրութեամբ մ՝ոգևորելով իր դալնկապոյն դէմքը, և անտուվոր այժ մ՝առած՝ կանգնեցաւ իր գահուն առջև. օրինաւոր և արժանաւոր առեներանութիւն մ՝ընդառաջ ժողովեալ եպիսկոպոսաց և իշխանաց, համառօտելով իր երկար հովուութեան համարը, և կենաց մերձեցեալ վախճանը, և ազ-

գին ու եկեղեցւոյն ապագայն մտածելով և իրմէ
վերջ ալ անոնց շահն և փառքը փափագելով կ'ա-
ռաջարկէր ժողովոյն իրեն յայտնել և իրենց հո-
վուապետ՝ ընտրել. ոչ իբրև հարուստ ըստ
մարմնոյ, այլ արժանաւոր ըստ հոգւոյ, որուն
արդէն իրենք ալ վկայած էին. իսկ իրեն մնացեալ
և կարճատև աւուրց մէջ մեծ մխիթարանք պիտի
ըլլար՝ իր կրտսեր եղբայրը տեսնել անոնց և իրեն
իսկ հայր ըլլալ, և փոխանակ այն ձեռնադրու-
թեանն զոր հիմայ անոր վրայ պիտի կատարէր,
քիչ առենէն անոր ձեռօք ընդունիլ հանդերձեալ
կենաց Թոշակը: Հանդիսին կէսը կատարուած և
կէսը դեռ կատարելի, Ներսէս լի բազմապատիկ
զգացմամբք, ինչպէս գիւրին է գուշակել, և զայն
ևս զգալով՝ որ այն օրուան ծր և է տեսարանք և
ապաւորութիւնք շուտով պիտի փոփոխին և քիչ
շատ չնչուին, այլ իր վրայ պիտի մնայ մեծ պաշ-
տօն և պարտք մը. և դարձեալ անոր մեծութեան
դիմաց իր տակաւ զօրութիւնը կշռելով, իր մեծ և
աքանչելի խոնարհութեամբը շարժեց ինքն ալ իր
շնորհազարդ շրթունքը, և խօսեցաւ այն մարգար
տի և հեզ հոգւոյ, միանգամայն և քաջախոհ
մտաց Ատենաբանութիւնը, որ իր ամենէն գեղեցիկ
արտադրութեանց կարգը կրնայ դասուիլ, և որ
մեր մէջ այսպիսի առթիւ խօսուած կամ գրուած
բաներէ մէկ հատիկ մնայեալ օրինակ է, ինչպէս իր
ուրիշ շատ գրածներն և խօսածներն ալ: Այսպէս
յառաջաբանէ Շնորհալին առ ժողովեալ ուխտն
եկեղեցւոյ. « Առ ձեզ են բանք իմ, դասք սրբա-
« զանից Հայրապետաց և քահանայից, և
« իմաստուն Վարդապետաց. ոչք իբրև զանդամն՝
« յիւրաքանչիւր կողմանց ժողովեալք՝ ի մի լծու-
« թիւն մարմնոյ, հասեք ատամնոր կոչմամբ՝ ի
« հրամանէ Գլխոյս եկեղեցւոյ. որպէս ղն նովաս
« և ընդ նմին՝ վեմ ինչ յանարգաց և ոչ՝ ի պա-

« տուականաց, ձերով ճարտարապետական ա-
« րուեստիւ յղկեալ՝ ի շինուած մարմնոյն Քրիս-
« տոսի յօդիցեք խմաստնապէս »: Ա՛յս գոնարանը-
ման կուռ խմաստալից ակզբնաւորութենէն եաւ
խնդրե լսողաց մատդրութիւնը. ապա սկսեալով
բուն խօսքը՝ կը յիշեցընէ մարդուս անկայուն վի-
ճակը, որով հարկ է զնորա փոխանակել, ինչպէս
Լուսաւորիչ և իր որդիքն, և անոնցմէ սերեալն
մեծ Վկայասէրն Գրիգոր, զոր և գովելով համառօ-
տիւ՝ կ՛անցնի ի գովութիւն Երկրորդ և դեռ կեն-
դանի Վկայասիրին, որ « յոյժ հրաշափառագոյն
« բանիւ և գործով քան զբազումս յառաջակա-
« լացն գտաւ նախնեաց. ի մանկութենէն հոգւոյ՝
« ըստ հրոյ գոլով զուգամանութեան. յիմաստս
« բանի և ի շարագրութիւնս տառի՝ գեղեցկապէս
« և ըստ կարգի. ի վերծանութենէ՝ իբր թէ նոյն
« է որք կենդանի խօսեցան ձայնիւ. ի գիտու-
« թիւնս գրոյ ծայրագոյնս և ի խորհուրդս հան-
« ճարոյ՝ ըստ աերունեան իրատու բարիոք խո-
« րագիտութեամբ »: Բայց վախնալով որ մարդա-
հաճութիւն չերևի եղբօր վրայ և իր առջև գո-
վեստ խօսին՝ կ՛ուզէ լռել անոր խոհեմութիւն և
արիութիւնը. այն դժուար ժամանակին մէջ ալ
իր ծանր պաշտօնը առաջ տանելով, հանդերձ շի-
նութեամբ եկեղեցեաց, միանգամայն և իր ազգա-
տոհմին վրայ խնամք տանելով, զոմանս աշխար-
հական և զոմանս եկեղեցական աշխատանաց բարձ-
րացընելով, ինչպէս զինքն Ներսէս, որ տղայու-
թեան դաստիարակութենէն սկսեալ ինչուան այս
կարգը հասուց: Մեծ հոգ տարաւ նաև այն ալե-
կոծեալ և խռովալից ժամանակին դիպուածոք
վտանգեալ և գերեալ անձանց. « Իմաստութեամբ
« և ջանիւ և առատապէս ծախիւք՝ բիւրուց և
« հազարաց պատճառ եղև փրկութեան և ազա-
« տութեան ի ծառայութենէ. որ և փրկեալքն

« 'ի զանազան լեզուաց և աշխարհաց՝ ողջոյ-
« կեն »: Հասակին և դիպաց ամեն միջոցներուն
ալ անարատ և անվրդով քաղաքավարեալով՝ հինայ
ծերութեամբ և հիւանդութեամբ « վանդեալ՝
« յառաջ կոչելով զմեզ անարժանութիւն, առ-
« ակ առնուլ զաստուածընկալ աթոռոյ իւրոյ
« փոխանորդութիւն. զոր ոչ միայն այժմ՝ այլ և
« կանխագոյն ժամանակօք գներ զայս առաջի . .
« իսկ այժմ զի զօրացաւ քան զքնութիւն՝ տկա-
« րութեանն կիրք, վասն այնորիկ հարկիմք ընդ-
« ունել զհարկեցուցիչ հրամանն սորա »: Վասն
զի կը վախնամ, կ'ըսէր, չհնազանդելով՝ մեղանչել
Աստուծոյ. սակայն յանձնառութենէս ալ կը վախ-
նամ, յիշելով պաշտօնին մեծութիւնը և իմ ան-
արժանութիւնս. և կը ջանայ ցուցընելու մեկիկ
մեկիկ թէ ուրչափ առաքինութիւն և արթութիւն
կը պահանջուի հայրապետէ մը, զորս ինքն չունի:
Եւ հօս նման իր արժանաւոր անուանակից նա-
խորդին՝ մեծին Ներսէսի, որ 800 տարի առաջ
(365) ասիպատեալ՝ի Թագաւորէն և՝ի նախարա-
րաց Հայոց, և հրաժարելով՝ պէսպէս պակասու-
թիւններ և յանցանքներ կը յիշէր՝ իբրև ըրած,
որուն չհաւատալով կը ծիծաղէին անոնք. այն ա-
ռեն կարճ և երիտասարդ վիճակին այն իր ան-
ձը թողլով՝ սկսաւ զաշնկնդիրսն մեղադրել, իբրեւց
խոտորութեանը համար. « Այսօր տարապար-
« տուց սիրէք զուք զիս, և վաղիւ՝ առնլի և թըշ-
« նամի և Թաւին զգլխոյ ձերմէ կոչոճիչ կապիք
« զիս », երբ զձեզ յանդիմանելու ըլլամ: Այս-
պէս ինն և մեռաւ վերջին Պահլաւունի Ներսէս՝ կը
սխալուի պահիկ մը զինքը թողուլ, և մեղադրել
սրտցաւութեամբ և զգուշութեամբ՝ իր ժամանա-
կին խոտորեալ անձինքը, նաև եկեղեցւոյ բարձր
կարգի եղողքը. յորս՝ առանց անուանելու՝ կը
ճանչցընէ զԱղթամարեանս, որք ոչ միայն հայրա-

պետական աշխուժն հակառակեցան, այլև « զա-
« զաւեալս ի Քրիստոսէ զեկեղեցի սուրբ՝ ընդ
« հարկաւ արարին անօրինաց, կամաւ և ոչ ի
« հարկէ ». յայտ է թէ կաշառք տալով: Այս ա-
մեն դժարութիւնները ցուցընելէն ետև, որովհե-
տև ալ հրաժարիլ չէր կրնար, մեկ հատիկ
ձար կը գտնէ լալով և բոլոր սրտով խնդրել՝ դեռ
պահ մ՚ալ Հայոց եկեղեցւոյն գլուխ եղող հարա-
զատէն և յամենայն եկեղեցական դասուց՝ հնարք
աղօթից օգնականութեան: Աղօթից կերպն կամ
նպատակն ալ ինքն կը սովրեցընէ. նախ խնդրել
Աստուծոյ՝ որ իր մեղաց և յանցուածոց թողու-
թիւն տայ, միանգամայն հոգւոյն մաքրութեան և
զօրութեան հետ՝ մարմնոյն ալ առողջութիւն և
ոյժ. և այնպիսի սրբատրար զօրութիւն մը՝ որ ոչ
միայն իր անցեալ տկարութիւնը քաւէ, այլև
« առնել զնա՝ փոխանակ հնոյ, և պահել նա-
« վին նորոգութիւն յապագային հնացուցիչ կրից,
« մինչև ի կէտ կոչման իմոյ ի Քրիստոս »: Երկ-
րորդ, խնդրել Աստուծոյ շնորհք և խմաստու-
թիւն իր բարձր պաշտօնը արժանապէս կատա-
րելու, անաչառութեամբ և սիրով. ըլլալ « Ըստ
« աղաւնոյ միամիտ՝ ի սէր պատուիրանացն Քրիս-
« տոսի, և ըստ օձի՝ բարիոք խորագիտութեամբ
« ընդդէմ չար խորամանկութեանց սատանայի և
« նովաւ զօրացելոցն. որպէս հնարաւոր խմաստու-
« թեամբ առաքելական ուսմանցն զմարդիկ ի
« կեանս, և հանել ի ծովէ աշխարհի ի ցամաք,
« յախտից՝ յերկիրն կենդանեաց »: Այս խօսքերս
ամենով ինքնըլէն ետև իբրև յաւելուած մը կը խնդրէ
երրորդ, որ աղօթք ընեն բոլոր եկեղեցւոյ՝ և Հա-
յոց ազգին համար. և մանաւանդ այնէն ի-
րենց նախահայրը՝ Ս. Լուսաւորիչը և անոր Որ-
դիքն ու Թոռունքը, որք այնքան նեղութեամբք
և չարչարանօք աշխատեցան. զանոնք բարեխօս

բառնեն առ Աստուած, «մանաւանդ թէ զԱստուած
«առ նոսա», ՚ի վերայ կը բերէ Շնորհալի՝ գեղե-
ցիկ յանդգնութեամբ. որպէս «զի նախ նոքա
«Թողութիւն շնորհեսցեն արդարապէս անիծիցն՝
«զոր հեղին ՚ի վերայ որդւոց Ժողովրդեան իւ-
«րեանց, որով և աններելի եղև բարկութիւնն
«Աստուծոյ՝ այսքան երկար ժամանակաւ, բաւ-
«նալով զԹագաւորութիւն և զիշխանութիւն»
ազգիս. և երբոր անոնք հաշտին՝ ապա իրենք ալ
կ՚ազատէն Աստուծոյ «բառնալ զցասումն պա-
«տուհասի յանցանաց՝ զոր մարգարէացան գալ
«՚ի վերայ մեր». այն ատեն կըրնան և մերայինք
«հալածել զարուսցեալսն՚ի վերայ, և փրկել զգ-
«մեզ ՚ի բերանոյ առիւծուց... և դարձուցանել
«զամենեսեան յաշխարհն հայրենի»: Ա յսպիսի
հայրենասիրական և հոգեխառն խօսքերով կը կնքէ
Շնորհալի իր առենաբանութիւնը, փաստարկու-
թեամբ ամենատուրբ Երրորդութեան:

Ի՞նչ ազդեցութիւն ըրած ըլլալն այսպիսի խօ-
սից յայնպիսի բերնէ և այն վայրկենին՝ դիւրին է
գուշակել. երբ մեք իսկ զայն կարդալու և գրելու
առենեկս կը հիանամք իր սրտին մեծութեանը, որ
կըրցաւ այնքան կատարելապէս բովանդակել յին-
քեան առաքեալսիրութեան և հայրենասիրութեան
կրակները, աքանչելի խմաստութեամբ մը մերթ
ծածկած և մերթ յայտնած, և միշտ զուգած. և
վայրկեան մը ափշած՝ կըրնայինք չփոթել, թէ Ներ-
սէս՝ քահանայապետութիւն եթէ թագաւորա-
կան գահն ու գաւազանը պայազատելու կու գայ:
Կ՚ախորժիմք հաւատալ՝ թէ իր «ի բոլոր սրտէ և
«ջերմագունիւ արտասուօք» խնդրածն, աղօթք
և օրհնութիւն ժողովոյն, այն վայրկենին իջուցին
յերկինից ՚ի վերայ ալէզարդ գլխոյն, և ըրին զնա
«Նոր փոխանակ հնոյ», կամ մանաւանդ բազմա-
պատկեցին զշնորհսդը, «զնոր առ հնով», ըստ Եր-
գոց Երգոյն:

Յետ այսպիսի կենդանի գաւանութեան մը՝ Գրիգորիս իր երկար տարիներէ վեր փափաքածը կատարեց. 53 տարի իր գլուխը կրած կաթողիկոսական վեհաշուք քօղը՝ հանդերձ իր ամենայն իշխանութեամբ՝ փոխադրեց 'ի գլուխ Ներսեհի և յարդիւնաւոր ալ նորին.

« Գլուխ հանուլոյ ընտրեալն օծէր,
Յաթոռ ընդ իւր նստուցանէր.
Կրկնամածեալ քօղ արկանէր
Եւ գաւազան 'ի ձեռսըն դնէր.
Բազմախաչեան զգեցուցանէր,
Եմիփորոն զանկեաքն ածէր.
Փեսայապէս զարդուք ալճնէր.
Գլխոյն պըսակ Քրիստոս նաեէր.
Բարեկամօքն ուրախ լինէր ». և այլն:

Ամենայն օրհնութիւն և արարողութիւն կատարուելէն ետև 'ի վերայ Ներսեհի, կարգն եկաւ որ սա ալ օրհնէ զինքն օրհնողները. և իրեն առաջին խոնարհական երկրպագութեամբ պատիւ դնողն՝ եղաւ ինքն հրաժարեալ կաթողիկոսն Գրիգորիս, իբրև զԻսահիմ Թագաւոր երկրպագելով իր հրամանաւ Թագաւորած որդեկին Սողոմոնի. և ասոր մօրը պէս բազմելով յայմ նորընծայ Օծեալն, որ յԱստուծոյ առանգեալ հայրապետական օրհնութիւնը կարգալով 'ի վերայ երբեմն հայրացեալ և հիմայ որդիացեալ աւագ հարազատին և ամենայն ուխտի եկեղեցւոյն և ժողովականաց, արձակեց զանոնք 'ի խաղաղութիւն: Ո՛րքան տարբեր էին իր զգացմունքն և մտածմունքն՝ երբ կէս դարէ աւելի առաջ՝ 11 տարեկայ մանուկ՝ իր եղբօր ձեռնադրութեան հանդէսը կը տեսնէր 'ի Կարմիր Վանս Սեաւ Լերանց: Իր պապն՝ մեծ Վկայասիրէն՝ ձիշդ դար մը եւս նստաւ Ներսէս անոր աթոռը (1065-1166):

Յայտ է որ մեծ հանդիսաւութեամբ կատարեց այն սրբազան օրերը և Յարութեան մեծ տօնը, ՚ի ներկայութեան եպիսկոպոսաց և վարդապետաց. և Թերևս առաջին անգամ միւռոն ալ օրհնելով՝ պարգևեց անոնց, հանդերձ վայելուչ ընծայիւք և վայելչապոյն խրատուք և յորդորանօք, և յուղարկեց իրենց տեղը: Բայց մեկ ընծայ մ՚ալ կալ ընելու և մեկ յուղարկ մ՚ալ, որ օրչափ ալ պատրաստուած էր՝ գեռ շատ ծանր և դժար էր իր սրտին. այն էր իր գերագոյն եղբայրը՝ Գրիգորիսը՝ առ Աստուած ընծայել, յետին յուղարկաւորութեամբ գերեզմանի, որ այնուհետև համարձակ կը կանչէր զինա. մանաւանդ թէ Գրիգորիս կը փութար, երկրիս վրայ կարևորագոյն և յիրաւի թանկ գործը կատարելով: Շատ կարճ ժամանակ ապրեցաւ յետ աթոռակալութեան եղբօրը: « Իբրև « կատարեաց զգործ հրամանին՝ որ ազդեցաւ նմա « ՚ի վերուստ, կ՚ըսէ Շնորհալին ՚ի յառաջաբանէ « Ընդհանրական Թղթոյն, յետ երից ամաց փո« խեցաւ՝ իբր կոչմամբ՝ առ Քրիստոս. դասաւո« րելով ընդ հարան՝ հայրապետան, ընդ առաքեալ« սըն՝ երկոտասանիցն լուսոյն, ընդ հալածեալսն « վանն արդարութեան՝ համբերողն ՚ի հալածանս « և ՚ի զանազան փորձութիւնս՝ ՚ի հակառակացն « Ճշմարտութեան, ընդ փառաւորեալսն պա« տուհասն Աստուծոյ և ՚ի մարդկանէ՚ի կեանս. « որոյ և մահ պատուական եղև առաջի Տեառն, « ըստ գերագունից սրբոցն, զորոց ասէ մարգա« րէն »: Ակն կ՚երևի որ Գրիգորիսի մահն եղած է նոյն ամառը (1166), որով մօտ 53 տարի քշած է իր կաթողիկոսութիւնն, երկարագոյն քան զամեն կաթողիկոսաց մերոց թէ իրմէ առաջ և թէ վերջը. իրեն մօտ միայն իր հին նախահայրն Մեծն Ս. Սահակ այսպիսի երկար շրջան մ՚ունեցաւ 51 տարւոյ, թէ և յետին տարինները՝ իբրև զրկեալ

'ի՞մեծ պատուոյն. իր հայրն Ս. Ներսէս և անոր պապն Ս. Յուսիկ ալ՝ երիտասարդ էին իրենց ա-թոռակալութեան առեն, և երկար կենաց ապրեցմը կար առաջի բնութեան. այլ նոքա՝ ըստ սրտակուր յիշելոյ Շնորհալւոյն առենաբանութեանը մէջ՝ « յապառում թագաւորացն Հայոց « և 'ի վայրենաբարոյ իշխանացն՝ տաժանելի կրիւք « եղեն յաշխարհէ ». և չկարցան կատարել մինչ որ իրենց ստուածատուր կարողութիւնն կը յուսացընէր, և մինչ որ աներկբայ կը հաւատային օրինակք երկարակեցիցն, Ս. Գրիգորի Լուսաւորչի և Սահակայ, և Վկայասիրաց մերոց. յիրաւի ատոնք ալ հալածանօք և թափառանօք ապրեցան, այլ դէթ Տիրանայ, Արշակայ և Պապայ պէս պիղծ և անարժան թագաւորաց սև օրերը և սև երեսը չտեսան: Դարձեալ յիրաւի դժար էր ատոնց ժամանակին ալ, ինչպէս որ ըստ բաւականին տեսանք, այն բազմավրդով դիպաց մէջ, շրջապատեալ յանդադար արշաւանաց և պատերազմաց սուրբ նահատակացն Իկոնիոնի, Հալպայ և Դամասկոսի, իշխանաց Անտիոքայ, Տրիպօլեայ և Եդեսիոյ, թաչատկրաց Փառանկաց և Ալամանաց, կայսերաց Յովհաննու և Մանուէլի, և մեր իսկ Պարոնայց՝ Թորոսեանց, Լեւոնի և որդւոցն. 'ի վերայ այսր ամենայնի Գրիգորիս մեր կաթողիկոսութեան Աթոռը սաղայն՝ անսոգիւտ և անպակաս վարեց իր պաշտօնը, նաև պատուով և մեծարանօք յօտարաց. որոց համար, այս ալ իրաւ է ըսել, որ գրեթէ միայնակ բաւական չէր, այլ երկրորդ գլուխ և երկրորդ սիրտ մ'ալ պէտք էր, և գտաւ գոյն յեղբայր Ներսէս, որ ամենայն զօրութեամբ անձին միացեալ ընդ եղբօրն՝ իբրև ամրակ անբաժանք և իբրև մի գլուխ և ես մը, յառաջ վարեցին Հայաստանեայց տապանակին կառքը, զոր այսու հետև Ներսէս միայնակ պիտի տանէր հօտին

տալի ալ։ Ոլոց համար յարմարագոյն դառիմ
մեր պերճաբան և առեղծաբան Նարեկացւոյն ը-
սածը՝ քան իր Վասլի և Կոստանդնի կայսերաց.
« Եղբարքն երկոքին հարազատաք, միաշաւիղք,
« համակցորդք ... որք ՚ի մի նկատումն կամաց
« խորհրդոյ՝ երկեակ մարմնով և մի սրտիւ կենցա-
« ղավարեցան. և որպէս զէութիւն երկուց առ-
« բազուց՝ անձին և մարմնոյ՝ ՚ի մի կերպարան շա-
« րունակեցան. և զնմանականն նախասաց բան՝
« յանձինս գծագրեցին. Եղբայր երեքօրէ օգնեալ
« իբրև զքաղաք ամուր անկործան. և ձշմարտա-
« բար միութեամբ՝ առանց այլայլման կացին ան-
« բաժին։... Այլ թէպէտ և բազում սրտից առ-
« րակուսելոյ՝ երկայնմտութեան հետս հոլովեցին,
« յաւէտ առաւել հիւսիսայնոցս արևելականաց,
« ասես թողցուայ՝ ազբիւրս շնորհաց կենաց անձ-
« րևաց՝ ՚ի գիտութենէ իւրեանց ցօղեցին »։

Գուցէ այսպիսի և յարմարագոյն ևս խօսքեր արտասանեց ինքնին որբացեալ կաթողիկոսն մեր նորընակը՝ ՚ի վայ դամբանի իր ձեռօք հանգուցեալ հայրապետին հարազատին. ոչ ևս « յերկիւղէ մարդահաճութեան զանգիտեալ, մանաւանդ զի « խնդրեմ և ոչ օտարի աղագաւ դրուատից բանի « գովութիւն յարմարի ». ինչպէս կ՚ըսէր յառաջ նախանութեան յաւուր ձեռնադրութեան. խակ հիմայ զԳրիգորիս յերկինս ընդ սրբոց հայրապետաց նկատելով՝ կըրնար սրտին և բերնին աւելի համարձակութիւն տալ. ինչպէս որ իր Ընդհանրական Թղթոց սկիզբն ալ ըրած և ըսածը մանաւանդ տեսանք վերը. ուր և զկնաւորիչ յիշեցուած « համանման նմին, կ՚ըսէ, մաքրութեամբ անձին և խնամատութեամբ. այն որ բարուք հովուեաց երկայն ժամանակաւ զհօտ բանական « ոտ... Ինքն նաւու հաւատով ընդ ծովաշխար-
« հիս՝ հոլմով Հոգւոյն ուղղակի նաւատեառեալ

« Ճշմարտութեամբ և առաքինութեամբ՝ եհաս
« անվնաս յանքոյթ և յսուտանց ալեաց նաւա-
« հանգիստ », և այլն: Անշուշտ կամ ինքն Ներ-
սէս կամ իր եպիսկոպոս եղբօրորդեաց մէկն և
կամ ուրիշ քաջաբան վարդապետ մը՝ խօսած է
դամբանական ճառ մը՝ի վերայ երկրորդ Վկայասի-
րին, զոր ժամանակին չէ յայտնած մեզի, որպէս և
ոչ այն ցաւակցութեան թուղթը՝ զոր գրեց Գրի-
գորիս Գադիկ կաթողիկոսն Աղուանից, (161) և ո-
րոյ համար վկայուի թէ էր գրուած « ի հանճա-
« րով և յոյժ գովեցաւ »:

## ԻԲ.

*Տեսչութիւն Շնորհալւոյ՝ի վերայ Եկեղեցւոյն Հայոց. — Ընդհանրական թուղթն. — Բաղդատութիւն ընդ կաւնունական թղթոյ Յովհաննու Օձնեցւոյ՝:*

Շնորհալի իր բազմարդիւն կենաց ինն մասն ար-
դէն լցեր էր. տասնեւրորդն միայն մնայր իր կա-
թողիկոսութեան, յեռանն և ծայրագարդ ծերու-
թիւնն. սակայն եթէ և մարմնով ակար՝ հոգւով
կրկին զօրացեալ՝ ամենևին առջինէն անպակաս,
մանաւանդ թէ և աւելի ինն ուժով և շնորհօք.
լուսի բարեօք և արդեամբք կատարեց մնացեալ
քիչ տարիներն ալ, որք կերտով մը առջիններէն
աւելի արդիւնք ցուցին և թողուցին մեզի: Կըր-
կին և կրկին զարմանաց արժանի է, թէ ինչպէս
այն հասակով և կազմուածով մարմնոյ, այնքան

սակաւաթիւ ամօք և « յայնքան սաժանելի և յաղ-
« ցաւոր կեանս, 'ի մէջ օձից և կարձաց, և զանա-
« զան խածանող գազանաց՝ երևելեաց և աներևու-
« թիւց. և ոչ այս միայն, այլ և ծանրութիւն բեռանց
« 'ի ներքոյ՝ հոգևորաց և մարմնաւորաց », ինչպէս
ինքնին կ'ըսէ, կրցաւ այնքան բարեօք ընդունիլ զե-
կեղեցիս Հայոց: Մեր զարմանաց լուծուելն ալ
ինքնին կու տայ. նմայընելով, որ « ծանրութիւն
« հոգոց ամենայն եկեղեցեաց... և երկիւղ գա-
« տաստանին Աստուծոյ.. որ վասն հովուաց և
« առաջնորդաց՝ 'ի հին և 'ի նոր կտակարանս ա-
« սացեալ », միշտ միտքն էր. « Մինչ զի ոչ տալ
« քուն աչաց կամ նինջ արտևանանց՝ յերկիւղէ
« այսոցիկ՝ չարչարեալ ոգւոյ իմոյ »: Ուրեմն այն-
պիսի անքուն և չարչարակիր ոգի մը պէտք է ե-
ղեր՝ հայրապետութեան համառօտ շրջանն ալ
յերկարագունից հատասար և աւելի պիտանի ը-
նելու. և Յովսեփայ նահապետի նախագուշակեալ
առատութեան եօթն տարիներուն պէս՝ իր եօթն-
ամեայ ժամանակուընէ իրմէ մինչև 'ի մեզ ձգեալ
եօթն դարուց քիչ շատ սովեալ միջոցը՝ ընդու բաղ-
մապատիկ բերովք բարեաց, զոր ցարդ վայելեմք
և մեք, և պիտի վայելեն մեր ապագայք ալ:

Ներեաս կաթողիկոսական աթոռը բազմելուն՝ մեկէն աչքն եկեղեցւոյն բոլորը դարձուց, քննե-լու եղածը և պակասը, ըստ այնմ հոգալու և լե-ցընելու.

« Խոհեմագոյն մըտաք նայի
Թէ ինչ տահման կարգած Թերի.
Ախտագոյն ուղղիչ լինի,
Աճել 'ի կիրթ զարհեստ բանի ».

կ'ըսէ Լամբրոնացին: Գլխաւորք 'ի բերոցս բա-րեաց և 'ի վաստակոց Ներսհալեցւոյն են իր տեսչու-

թիւնն և զգուշութիւնն ընդհանուր Հայ եկեղեցւոյն վրայ, մանաւանդ իւնամքն մերձաւորաց վրայ. Եկեղեցւոյ ներքին հոգևոր և բանաւոր պէտս բարեկարգութիւնք և բարեզարդութիւնք. արտաքին բարեզարդութիւնք ալ ոչնչի և ինչ ծառայ ուր որ ձեռքն հասնէր. գրաւոր վաստակք ըստ ներելոյ մնացեալ ժամանակին և կարևոր հարկի. և մեծ գործ և հոգ մ'ալ Յունաց եկեղեցւոյ հետ միաբանութեան, անոնց առաքելութեամբ, զոր յառաջ քան իրօք կատարելն՝ արդեամբք կատարեց՝ մահուան վրայ հասնելով: Ահա այս զանազան իրաց վրայ կը մնայ մեզ խօսիլ մեր պատմութեան մնացեալ պարագային մէջ, և ապա իր զարմանալի կենաց և շնորհաց բնաղբիւրը փնտռելով՝ աւարտել մեր տեսութիւնը:

Յայտնի է ամենայն քրիստոնէից՝ որ իրենց հոգևոր իւնամողաց գլխաւորքն կ'անուանեն Տէսուչք կամ Իէսք կամ Ա.յցելուք, վասն զի զայս նշանակէ յունական բառն Եպիսկոպոս, որով ամեն ազգ և լեզուք սովորաբար կոչեն զանոնք. և զի ամենայն եպիսկոպոս չափաւոր և առանձին ժողովուրդ մ'ունի իւնամելու, որ Վիճակ կամ Թեմ կ'ըսուի, բովանդակ ազգի մը և ժողովրդեան եպիսկոպոսք ալ իրենց ընդհանրական գլուխ մ'ունին, որ է եպիսկոպոս եպիսկոպոսաց, կամ Եպիսկոպոսապետ: Յայտ է ևս, զի մեր ազգին և եկեղեցւոյն գլուխն կամ եպիսկոպոսապետն սովորաբար կոչի կաթողիկոս. և քանզի յայլ շատ ազգաց եկեղեցւոյ գլուխս մեծագոյն հեղինակութիւն մ'ունի իր եկեղեցւոյն մէջ, այս պատճառաւ՝ որ Հայոց եկեղեցին արքեպիսկոպոս կամ մետրապօլիտ չէ ընդունած, կամ թէ անուամբ և պատուով ընդունած ալ է՝ այլ ոչ իշխանութեամբ՝ ձեռնադրութեան եպիսկոպոսաց և օրհնութեան իւղոյ օծման. այս բաներս կաթողիկա-

ևին սեփականեալ ըլլալով աւելի որոշակի կ'երևի միապետութիւնն և հովուապետութիւնն. և անկէց ալ պարտքն՝ ընդհանուր տեսչութեան, հոգոց և խնամոց՝ ի վերայ բոլոր եկեղեցւոյ ազգին. և այս է մեր դիտածն ալ՝ այս բաներս յիշելնուս մէջ: Հայոց կաթողիկոսն և իր նմանիք՝ աթոռոյն բարձրութենէն կամ պատուէն շատ աւելի պէտք է զգան պարտուց ծանրութիւնը, և պահանջումն համարոյ յամենահովուէն և՝ ի քնիկ գլխոյն եկեղեցւոյ՝ ի Քրիստոսէ. և խմանան որ ոչ լոկ խոնարհութեան համար կը հրաժարէր Ներսէսէ Ներսէս մը յայնպիսի առաքինանէ, ինչպէս շատ հեղ կ'ըսէ թէ առեներսանութեանն, թէ ընդհանրականին և թէ առանձին թզլթոցը մէջ, այլ և՝ ի քնութենէ հարկի պաշտամանն. վասն որոյ և զարհուրեր և սարսէր, և դիշեր ու ցորեկ հոգայր չարչարեալ ոգւով: Եւ երբ վերջապէս անցաւ յաթոռն գերապոյն՝ արժանապէս հարկ համարեր, որ ոչ լոկ իբրև ցնծանաց կամ այլ ումանց եկեղեցեաց գլուխ՝ իմացընէ իր ընարութիւնն առ արքեպիսկոպոսունս, այլ առ ամեն եպիսկոպոսունս եկեղեցւոյն, որով և առ ամենայն գաւս մարդկան եկեղեցւոյն. և այսպէս ըրաւ Ներսէսն. ոչ դիպաց լուր մը տալու, այլ աստուածային ձայնը և պատշաճը լսեցընելու ամեն Հայ քրիստոնէի, մեծի և փոքու, ամեն եկեղեցականի և աշխարհականի առ հասարակ:

Թէ մեր ամեն կաթողիկոսունք ալ այսպիսի բան մ'ըրած են յաթոռակալութեան իւրեանց՝ չենք տարակուսիր. բայց շատ տարակուսիմք թէ Ներսէսէ յետոյ նման բան մ'ըրած և գրած ըլլան. գոնէ մեզի հասած չըլլալով՝ յայտ ալ յառաջագէմ և նախօրինակ կը գտնենք զինա, և իր ընդհանրական ըստած վարդապետական թուղթը կամ գրքոյկը, իր եզական և գաւառական գործոց մէկն, գարձեալ

ընտիր մը յընտիրս և պարծանք ՚ի պարծելիս:
Մեր նախհայրապետ Ս. Գրիգորի Լուսաւորչի
Յաճախապատում գիրքն, Ս. Յակովբայ Մծբնա-
ցւոյ Չգօն գիրքն՝ դրեալ ՚ի խնդրոյ Արիստակիսի
կամ Վրթանիսի, Յովհ. Մանդակունւոյ Ճառքն,
կըրնան կերպով մ՚իրենց քահանայապետական
Շրջաբերական համարուիլ, այլ չունին որոշակի
երեսոյթ, և աւելի գիրք կազմեն քան յատուկ
Թուղթ կամ Կոնդակ մը: Աւելի ասոր կերպն ու-
նին Ս. Սահակայ հինգ կամ վեց կանոնական
բանքն կամ Թուղթքն, որոց հետ Թերևս ուրիշ
բանք ալ կային: Իրմէ 300 տարի վերջը՝ աւելի
որոշակի կերպարանաւ ընդհանրական մը կ՚ըն-
ծայէ Իմաստասէր Հայրապետն մեր Յովհան Օձ-
նեցի, զոր արժան է բանասիրաց՝ աչքէ անցընել
և բաղդատել մեր Շնորհալւոյ Շրջաբերականին
հետ, և քննել զտարբերութիւնս ոճոյ բանիցն,
մանաւանդ ժամանակին և ոգւոյ հեղինակացն:
Հոգւոց օգտի դիտումն հաւասար է երկուքին ալ.
բայց Շնորհալին աւելի կերպով այս բարոյական
օգուտը կը դիտէ, Յովհան զեկեղեցւոյ կարգաւո-
րութիւնը: Սա՝ որպէս քաջ երևի՝ յունական
դպրութեան և Ս. Հարց գրուածոց՝ աւելի վարժ,
և ժամանակաւ աւելի մերձաւոր կրթեալ դասա-
կան մատենագրաց կուռ և ճարտար ոճոյն՝ ՚ի մի-
տս և ՚ի շարակարգութեան բառիցն ալ հաւա-
սար խմաստասիրէ և արուեստ մ՚ալ կը ցուցընէ,
թէ ոչ և արուեստակութիւն. իսկ Շնորհալին միշտ
իր միջնաշաւղին մէջ՝ աւելի անարուեստ պարզ և
յատակ, մանաւանդ թէ շեշտ և շնորհակ իր նպա-
տակին կ՚երթայ, և հոգիները կ՚արթընցընէ: Օձ-
նեցին՝ վայելուչ և յիրաւի հօս անատակ և ման-
կամեայլ ոգւով մը կը յիշեցնէ իր առաջին ան-
պաղատ և հոգէ ազատ կեանքը, և կը հառաչէ ան-
ցեալ մանկութեանը, յորում՝ սուր միտք ալ ու-

դեռևալով միայն զայն հարըստացընելու և զարդա-
րելու կը պարապէր, « երբև զհարանական յօրի-
« նուածոյն զբեաս, պատշաճ լինելով յերկնայ-
« նոյն պարիակիլ փեսայի առագաստ ». և այնքան
մաքուր էր սիրտն՝ որ Յիսուսի շնորհքն իրմէ
դուրս կը ցոլար, « հանդոյն արեգական՝ ի խորս
« ուրեք ընդ յատակութիւն ջուրցն առաքելով
« զիւր ճառագայթան ». այնքան ալ մտադիր էր
հոգւոյ և մտաց արժանաւոր բարեաց, որ « որ-
« պէս ի ծաղկահոտ գինի՝ սպունդ լինչ թացեալ՝
« այնպէս լցեալ ուռճանայր ի նմանէ՝ բանականս
« իմ ոգի. մինչև զի կարել ասել... Մանուկ էի
« մտավարժ, և ոգւոյ բարւոյ դիպեցայ ». ցան-
կալի բաղդով մ'ալ գտնելով իրեն « վարժապետ
« վեհագոյն... հայր միանգամայն և հրահանգող
« հոգեկան վարժութեանց՝ Թէոդորոս » մէկ մը,
որ կարծուի Քաղքենաւոր կոչեցեալ վարդապե-
տն: Ասոնց նման ուրիշ գեղեցիկ բանիւք և նմա-
նութեամբք կը ներկայացընէ իր մանկութեան ե-
ղանիկ օրերը՝ յեա կնայ ի դարուս. և հիմայ որ աս-
տիճանաց բարձրութեամբ, հասակաւ և հոգւովք
յառաջացեր էր, կը փափագի՝ թէ կարելի՝ էր՝ թո-
ղուլ զայս ամենայն և « գառնալ հանդիսել մա-
« տաղապուն և անթարշամ ի մեղաց եղելոյ հա-
« սակին ». բայց որովհետև անկարելի է այս, ու-
րեմն կ'ըսէ, « գարձցուք և զկարելոյն բուռն
« հարցուք... և այս են առաքինութիւնք », և
այլն: — Կլայեցին ալ կըրնար այս բաներս ըսել, ո-
րովհետև Յովհաննու ըսածին պէս ունէր մաքուր
սիրտ « յատուածայնոյ թափանցմանց լինելոյ նը-
« շուլից », և մտավարժ հանճար, և փոխանակ
Թէոդորոսի՝ Սահմանուս վարժապետ մը, և հօր
տեղ Գրիգորիս հարազատը, և անզբաղ պարա-
պեր յուսմունս բանաւորս և հոգևորս ի մեծա-
րանս Սեաւ Լերանց, և անշուշտ իրեն ալ ցան-

կալի էին այն օրերն և զբաղմունքն՝ քան հիմիկու հոգքն. և զայս միայն յիշէ լսելով աւչլիններըը: — Յովհան՝ աւելի հանգարտ սրտով մը՝ յետ առաջին կենացն յիշատակի, իր վրայ ըսելով՝ բայց ամենուն ազդելով կը յիշեցընէ որ ինք և է հասակի և վիճակի մարդ՝ պարտաւոր է ջանալու առաքինութեամբք վինքը կրթելու, որպէս զի ըստ կարի նմանի Աստուծոյ, յորմէ զայս պատուէրը առաւ. և ասկէ առաջ կ'անցնի յանդիմանելու զանոնք որ փոխանակ ասոր՝ անհոգութեամբ աչքերնին արտաքին բաներու կը զբաղին. և գլխաւորապէս եկեղեցական իրաց մէջ անփութութիւն և շփոթութիւն մը կայ, և զանազանութիւն արտօղութենէն՝ ի զանազան կողմանս: Անդ այս բաները դարմանն տանելու և բարեկարգելու համար՝ կանչէր էր զեպիսկոպոսունս՝ ի ժողով, և անոնց գործակցութեամբ կը սահմանէր ինչ որ պէտք էր վասն ծննից, ժամակարգութեան, և խորհրդոց կատարման. և այս ամեն բանս 32 կանոնի վերածելով իբրև եկեղեցւոյ հրաման ամեն Թեմի կը խրատէր: Այսպիսի է Օձնեցւոյն շրջաբերականն, որ ինչպէս վերջն ըսածէս երևեցաւ՝ ժողովական և կանոնական գրուած մ'է: Իսկ Կլայեցւոյն աւելի բարոյական է. Աստուծոյ նեղքսպոյն տաճարը՝ որ է հոգին՝ բարեկարգել դիտելով, ըստ զանազան վիճակաց և գաւուց մարդկան: Յովհաննու առեն՝ Թէ և ազգերնիս մեծաւ մասամբ Արաբացւոց բռնակալութեան տակ էր, այլ Իմաստասէր կաթողիկոսն մեր՝ որ նեղսէն խրատն կը հոգնէր, դրսէն ոչ միայն պերճապճեսաերևէր, այլ և ինչուան մօրուքն ալ ոսկեթել պըճնելով՝ ամիրայից և ամիրապետաց առջև կ'երևնէր ոսկեջուած ոսկեհագ գաւազանն՝ ի ձեռին. զանոնք պատկառելուցեր հիացուցեր էր իր վեհափայլ կերպարանօք և խօսուածքով, և անոնց իշխանու-

թիւնը կակղացուցեր էր մերայոց վրայ. անով և
ինքն հայրապետան՝ մեծ հեղինակութիւն և իշխա-
նութիւն ունէր ազգին վրայ, իբև եկեղեցական
թագաւոր մը. իշխանք և եպիսկոպոսունք մեծա-
րանօք և սիրով իբրև հարկաւոր հնազանդէին.
հայրապետանոցն ալ իբրև հարուստ պալատ մը
կը բարձրանար արշակունեաչէն մայրաքաղաքին
Դունայ հարուստ ապարանից մէջ. մանող և ել-
նող, բերող և տանող անթիւ էր: Իսկ հիմայ չեա
430 տարեաց, ոլքան փոփոխած Հայոց ազգին
վիճակին. ամբողջ թագաւորութիւն մը (բագրատու-
նեաց) կանգնուած և կործանուած էր այս միջո-
ցիս. հին պայազատութիւնք իշխանազանց բրեթէ
բոլոր մարած, և մնացորդք իշխանաց ալ մեծապոյն
մասամբ յօտար երկիր գաղթած. Հայաստան՝
մեկի տէր չատ տերանց և բռնաւորաց բաժին ե-
ղած, Թուրքաց, Պարսից, Արաբաց, Վրաց, և
այլն. կաթողիկոսն վտարանդեաց հետ վտարած,
Մեծ և փոքր Հայոց և Միջագետաց միջոց, գետոց
մը պատուածքի և քարանձաւի մը ծոց ապաստա-
նած, գրեթէ անայցելու և անօգնական. և, թո-
ղունք որ ինքնին ըսէ ցաւագին և աննկուն սրտիւ
Շնորհալին. « Ցաղաք թագաւորական և բազմա-
« ժողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր
« նաւելով յաթոռ հայրապետութեան և վար-
« դապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան
« մերոյ զաստուածային պատուիրանս, ըստ ա-
« ռաջնոյն հայրապետացն և վարդապետացն. այլ
« եմք իբր զայծեամն յորոտոյտս և ՚ի շանց փա-
« խուցեալք ՚ի քարանձաւս յայս բնակելով. յո-
« րում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շա-
« տացեալք ՚ի գեղից կամ յագարակաց, յորոց
« ունիմք և ոչ մի. (մինչ Պետրոս Գետադարձ 500
« մեծամեծ գեղեր և աւաններ ունէր.) նա և ոչ
« անդասան հողոյ, զի վաստակօք և աշխատու-

« Թեամբ՝ զպէտս մեր ընուաք. և ոչ օգնութիւն
« ուսուեք, որպէս արժան էր, ՚ի Թագաւորաց և
« իշխանաց ՚ի Քրիստոս հաւատացելոց. այլ միայն
« ՚ի Տեառնէ Աստուծոյ »:

Հռոմկլայի կղզեացեալ մենացեալ դիրքն, ոչ միայն բնապէս այլ և քաղաքականապէս, (վասն զի գրեթէ անկախ էր յամեն սէրութենէ), այսպիսի վիճակի պատճառ մ՚եղաւ. ամեն քաղաքական հաղորդակցութիւն կտրուած էր հօն Եփրատայ քարափատոյտ ջրերուին, և անոր պատած փոքրիկ և քարուտ միջոցն միայն էր կալուած և աշխարհք Հայոց հայրապետին. բայց ոչ եթէ ընդհայնին բնաւ իշխանք և հարուստք որ կարենային օգնել, այլ կամ անհոգ էին, կամ իրենց հոգերով զբաղած. և միայն իրեն ազգականքն զինքը կը պահէին, և անկէց աւելի՝ իրեն ազնուականութիւնն և արժանիքն՝ որք անյայտ կերպով ալ դարմանի և թոշակ կը ձարէին: Շնորհալւոյ դանդաղ և ցաւն ոչ ատենց նուաղութիւնն էր, այլ անկարելիութիւնն տեղէն հեռանալու և ազգին մէջ պտրտելու, որք՝ ըստ իրեն բարեպաշին՝ ամեն դեհ ցրուած էին, « որք յարեւելս՝ ՚ի սեպհական
« աշխարհդ Հայաստանեաց բնակեալք, և որք
« յարեւմտեան կողմանդ սահեալք նշդեհութիւ,
« և որք ՚ի մէջերկրեայս այլազգաց տարբերեալք, և որ յիւրաքանչիւր եղերս աշխարհս
« հայ՝ ըստ մեզաց մերոց՝ ցրուեալք, ՚ի քաղաքս և
« ՚ի գիւղս և յապարակս»: Սակայն սէր և պարտք՝ ազգասութեան և հեռաւորութեան ալ կը յաղթեն. Շնորհալւոյ գրիչն ամեն տեղ կըրնայ թըռչիլ և հասնիլ, և ցայս ձայր կը գտնէ. « գրով ձեռն մերոյ խօսիմք՝ որպէս բերանով՝ ընդ ամենայնեսին »: Ա՛յս պարտքս ամեն եկեղեցական ալ ունի, կ՚ըսէ, ըլլայ կաթողիկոս, ըլլայ հայրապետ (պրեպիսկոպոս), ըլլայ եպիսկոպոս կամ քահա-

նայ. ասոնց ամենուն ալ կը վայլէ ըլլալ ժողովրդեան հոգեւոր ծնօղ, դայեակ, վարդապետ, բժիշկ, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, գաւազան, և այլն. և այս իւրաքանչիւր պաշտամանց վրայ կը խօսի համառօտիւ, ինչ որ աւելի ընդարձակօրէն ոչ չատ տարի առաջ Յովհ. Սարկաւագ վարդապետեան գրած էր Յաղագս քահանայութեան Հառին մէջ: Ապա ամենէն ալ մտադրութիւն և ներողամտութիւն խնդրելով՝ նախ և առաջ հասարակաց հարկաւոր հաւատոյ դաւանութիւն մը կ'ընէ և կը սովրեցընէ, զի հաւատքն է, կ'ըսէ, բանական մարմնոյն գլուխ. իսկ ինչպէս որ գլխոյն ալ կը վայլէ անձ մը՝ այն ալ պէտք է ըլլայ մարդուս՝ բարեգործութիւնն. « Եւ որպէս գլուխ առանց « անձին յարմարութեան՝ ոչ կարէ կրել կենդա- « նութիւն, և ոչ անձն առանց գլխոյ, նոյնպէս և « հաւատ առանց գործոց, և գործք առանց հա- « ւատոյ՝ մեռեալ են երկոքին, ըստ Առաքելոյ »: ասոր համար կը խրատէ և կ'աղաչէ զամենքն որ մեծ հոգով ջանան այս երկու ամենակարեւոր բաներուս, Հաւատոյ և բարի գործոց. զորս կերպ կերպ պիտի բացատրէր իւրաքանչիւր դաս մարդկան առանձնաբար գրելով. և որպէս զի չկարծէ մէկն թէ ինքն իբրև անկարօտ՝ ուրիշներու կը պատուիրէ, կը խնդրէ որ իրեն համար ալ աղօթեն, որպէս զի ինքն ալ զնոյն կատարէ, « ալ լինելով՝ « նեխելոյ, և լոյս՝ խաւարելոց, ըստ Հրամանին « Տեառն, նախ անձին և ապա այլոց »:

Ուրեմն կամ ինն Դաս և վիճակ մարդկան կը բաժնէ Շնորհալին իր ժողովուրդը, նախ վեհերեցականս և յետոյ զաշխարհականս դասելով, այսպէս. ա Կրօնաւորք կամ վանականք, և բ Վանահարք. գ (կամ բ) Եպիսկոպոսք. դ Քահանայք, ե, իշխանք. զ. Ձինուորք, է, Քալաքականք. ը. Երկրագործք և ամենայն ժողովրդականք. թ, կանայք:

Ա և Բ. Վանականները ամենեն նախատաս դնե-
լու պատճառն՝ ոչ ասոիճանաւ վեր ըլլալ կը
ցուցընէ, այլ միայն անոր համար՝ որ կրօնաւորաց
կը վայլէ քան զամենայն դաս մարդկան սրբագոյն
և ասուածամերձ վարք ունենալ, կամ ինչպէս
ինքն վայելչապէս կ'ըսէ, գերաշխարհին ըլլալ, աշ-
խարհիս մէջ ըլլալով իսկ՝ երբ աշխարհէ դուրս
կամ վեր կեանք մ'անցընել. « հրեշտակք՝ ի մարդ
« մընի և աստեղք լուսաւորք յերկրի ». և երբե-
ւն այսպիսիս՝ մեծարանօք և իսնարհուրեամբ կը
սկսի խօսիլ Հայրապետն՝ երբեմն ծառայակից առ
ծառայս Աստուծոյ: Որով կը յայտնուի ալ՝ թէ
դեռ այն աստէն շատ բարեկարգ վանքեր կային և
շատ բարի օրինակք, և այսպիսի պերազատու-
թեան կ'արժանանային կրօնաւորքն. և զի այն ա-
տեններէն սկսեր էր ամեն բարձր աստիճանի եկե-
ղեցականաց ալ՝ ի վանորայս կրթուիլն, աւելի ալ
մեծ յարգ կ'ընծայուէր վանականաց: Սակայն
Աչմարիա յարգն՝ ոչ անուան կամ կարգի կամ ձևի
և տեղւոյ վրայ է, այլ վարուց. վարք մը՝ որ աշ-
խարհային բաւած բաներու կցորդ պիտի չըլլայ.
աշխարհքէ հրաժարուիլն չի վայլեր նորին զաշխարհ
նկատել, Ղուկաս կինան պէս եւս դառնալով
նայելով. զի « ոչ Աստուծոյ է պիտանացու այն-
« պիսին՝ երբեմն զկրօնաւոր, և ոչ աշխարհի օրի-
« նաց՝ որպէս զաշխարհական. այլ է անարգ և
« անպիտան, կոխան եղեալ՝ ի մարդկանէ՝ որպէս
« զաղ անհամեալ »: Աչխարհի, որ է բաւել ամե-
նայն մարդկան, բարի օրինակ ըլլալ՝ բանիւ և
գործով, կամ որպէս աղ և լոյս պիտանի ըլլալ՝
անհրաժեշտ պարտք է կրօնաւորի. բայց ոչ եթէ
աշխարհի և աշխարհականաց մէջ պարտեալով, այլ
մանաւանդ հեռանալով, և միայն հոգևոր և մաս-
նաւոր օգտի համար անոնց մէջ մտնելով. միայն ծե-
րոց և ակարաց կը նեւրէ վանքէն դուրս բնակել,

երբ հօն չէն կընար կարևոր գեղ և դարման գըտ-
նել. այլ և այն « բնակիչն յաշխարհի՝ ուղիղ և ոչ
« բամբասասէր վարուք » : — Այն սահմանն կրօնա-
ւորաց մէկ կարևոր զբաղանքն և անկէ պատ-
ճառեալ յանցանքն կ'իմացընէ. դարմանոյ և
սրից նուազութեան համար՝ սահմանած ըլլալնին
յերկրագործութիւն և յայգեգործութիւն, որ
ամենայն հին կրօնից մէջ ալ ներելի և պիտանի
պարապմունք էր. սակայն երբեմն ժամավաճա-
ռութեան և ագահութեան պատճառ կ'ըլլար. ա-
սոնցմէ կը զգուշացընէ Շնորհալի, և կը պատուի-
րէ որ աղքատաց և կարօտաց տան ինչ որ իրենց
կարևոր ոգեպահիկէն կ'աւելնայ, որպէս զի ընչա-
սիրութիւն չմնանէ. ուսկից կարգաւ առաջ կու
գան դիւրակեցութիւն, փափկութիւն և ցանկու-
թիւն. որոց համար հարկաւոր է զգուշանալ 'ի
լինութենէ, մանաւանդ գինւոյ : — Կը զգուշացընէ
զկրօնաւորս վանքէ վանք փոփոխուելէ, ինչպէս
շատերն կ'ընէին, անոր համար ալ կը սնային ան-
հրահանգ, անխրատ և անհնազանդ. և եթէ խրա-
տուէին՝ այն վանքն ալ կը թողուին, ըլլայ նաև
գիշերանոց « իբրև ծառայ փախուցեալ 'ի տեառ-
« նէ ». և որպէս զի ամենքն ալ չփախչին՝ առաջ-
նորդն կը սահմանը լռելոյս : Մեր օրերս թէպէտ
և վանորայք շատ քիչ են, որով և վանականք, այլ
թերևս թափառականքն ոչ պակաս՝ համեմատու-
թեամբ : — Ոմանք ալ « ծանրագոյն յիմարու-
« թեան » խօսքով կ'ըսեն, թէ « Աստուած ա-
« զատ արար զմեզ և ինքնիշխանս. զինչդ զազա-
« տութիւնս մեր դիցուք 'ի ծառայութիւն մարդ-
« կան » : Երանի՛ թէ, կը պատասխանէ Շնորհալի,
իրենց ազատութիւնը « բարւոք 'ի կիր արկանէին,
« այսինքն 'ի չախտից լինել ազատս » . որոց դըժ-
բաղդաբար ծառայ և գերի են այդպէս ըսողքն.
մինչդեռ կրօնաւորն առաջին և իսկական պարտքն

ի հնազանդութիւն և խոնարհութենէ. և Ս. Բարսղ վկայութեամբ կը հաստատէ, թէ « Անհնային « ժուժկալութիւն և առաքինութիւն այնմ՝ որ « ջհնազանդութիւն առաջնորդին ոչ ունիցի՝ անօ- « գուտ են, և յոչինչ պէտս համարեալ »: Ապա կը խրատէ սիրով հպատակիլ, և մի արանջալ մե- ծաւորաց վրայ. չբամբասել ոչ զմեծ և ոչ զփոքր. ամենևին չար չխօսիլ: Եւ դարձեալ կը կըրկնէ արթուն կենալ որ բան մը իրենց չսեփականեն իբր և սաացուած, թող թէ անհրաման բան առ- նուն, որ է իրենց գողութիւն: « Եւ գլխաւորե- « լով զբանս՝ որ առ Ծայրագունիցդ եղաքն, ա- « սեմք զայս. եթէ խորհուրդք և բանք և գործք « ձեր, և ամենայն շարժուածն հոգւոյ և մարմնոյ, « այնպէս եղիցին պարկեշտք և աստուածաւայե- « լուչք, որպէս զի անուանն Աստուծոյ և ձեոյ « կրօնաւորութեանդ՝ մի հայհոյութեան և պար- « սաւանաց՝ այլ գովութեան և փառաւորելոյ լի- « նիցին պատճառք 'ի սեաղաց և 'ի լուռեաց »:

Իսկ վանահարց կը յիշեցընէ՝ որ բաւական չէ իրենց՝ պարզ կրօնաւորի մը առաքինութիւն, այլ կը պահանջուի սրբութեան հետ և գիտու- թիւն, լաւութիւն և իմաստութիւն. և թէ հրա- մայելու պաշտօնն զիրենք ապատ ջներ և յաչխա- տելէ. մանաւանդ թէ օրինակ ալ պէտք է տան յայնմ: Մանաւանդապէս կը զգուշացընէ յաչա- ռութենէ կամ 'ի կողմնասիրութենէ. այլ ծերոց և տկարաց պէտք է աւելի խնամք տանին: Զգու- շութեամբ և խնայութեամբ գործածեն վանաց և եկեղեցւոյ նուիրած տուրքը, և չսեփականեն ի- րենց անձանց: Առաջնորդութիւնն ալ ոչ անձնա- հաճութեամբ և ոչ կաշառօք առնուլ, այլ հրա- մանաւ և քննութեամբ « Ժամանակին առաջնոր- « դի ». և չխոհել զառաջնորդն՝ եթէ եկեղեցւոյ ինչս կամ անարժան գործք մ'ըրած չէ: Վերջա-

պէս՝ կ'ըսէ Հայրապետեան, Թէ վանաց առաջնորդէ
մը շատ բան կը պահանջուի՝ ինչպէս որ « եդեալ
« (է) 'ի բանս սրբոց հարցն... և Թէ զամենայն ոչ
« է՛ք բաւական կատարել, յորոգս ձմեռն գոլով
« 'ի բարեաց ժամանակիս, գոնեա զյոլովն գոր-
« ծովք կատարեցէք, և առ պակասեալն՝ զյո-
« ժարութիւն կամաց ունկնգիք, և զղջումն և
« տրամութիւն՝ վասն պակասութեանն »:

Գ. « Առ Առաջնորդս եկեղեցւոյ, որ են յաշ-
« խարհի, որ կոչին Եպիսկոպոսունք... որ... ըստ
« աստիճանի առաջին էք », Թէ և վերոյգրեալ
պատճառաւ յետ Վանականաց դասեցան. և են
յաշխարհի ըսելով, կ'իմացընէ՝ որ դեռ այն առեն
ալ ըստ հին և ըստ գովելի սովորութեան եկեղե-
ցեաց՝ եպիսկոպոսունք քաղաքաց և ժողովրդեան
մէջ բնակէին յեպիսկոպոսարանս, և ոչ 'ի վանս,
ինչպէս յետոյ սովորութիւն եղաւ 'ի Հայս և
յայլ արեւելեայս. և աւելի յաճախեց մեր Շնոր-
հալիէն քիչ վերջը, երբ վանորայք Թագաւորաց և
իշխանաց հիմնարկութիւն ըլլալով և իրենց պաշ-
պանութեան տակ, կամ բարձրաստիճան եկեղե-
ցականներու կը յանձնէին, կամ եպիսկոպոսունք
ապահովութեան համար հօն քաշուելով՝ վանա-
հայրութիւն և եպիսկոպոսական տեսչութիւն միա-
ցուցին: Թողլով այս խնդիրը, Շնորհալին ցու-
ցընելով եպիսկոպոսաց գերագոյն աստիճանը՝ կը
հետևցընէ Թէ կամ անոր համեմատ ալ վարք ու-
նենալու է, կամ հրաժարելու է 'ի պաշտօնէն.
կամ Թէ չէ՝ ղջմամբ դառնալ յուղղութիւն:
Պօղոսի առաքելոյ առ Տիմոթէոս գրած խրատնե-
րը կը բացատրէ, Թէ ինչպէս պէտք է Եպիսկո-
պոսն ըլլայ անարատ, հեզ, ցած, պարկեշտ, և
այլն. որոյ համար զգուշանալի է 'ի պերճութենէ,
և մանաւանդ ձանապարհի մէջ՝ երևելի ձի և
ջորի հեծնելէն, որ մեր եկեղեցականաց սխալե-

լու առիթ մ'եղած էր՝ ինչուան Մեծին Ներսիսի օրերէն, և կը յուշըննէ ալ Հայոց քալ հեծելու-
Թիւնը. « և ոչ սրընթաց ձիով չահատակել, և
« շամբք և բաղխիւք որսականօք՝ բերել առ երէ-
« վայրիս և Թռչունս, որպէս լսեմք զոմանց Թէ
« իցեն, (յորսորդութեան). որ այնքան պատշա-
« ճի այսմ ձևոյ ունուցաց այս գործ, որպէս Թէ
« զգտակ կարմիր դիցէ 'ի գլուխ կրօնաւորին՝ փո-
« խանակ քուսկիայի, և զգեստ բեհեզեայ՝ ընդ
« ատուոյ և այծեաց »: Շատ մեղադրանօք կը յի-
շէ ոմանց կաշառօք և կատալօք եպիսկոպոսու-
Թիւն գնելն՝ 'ի ձեռն այլազգի իշխանաց. և որ ա-
ւելի ցաւալին էր, ոչ Թէ այլազգիք սկան կաշառ
պահանջել, այլ « յաղգէս մերմէ սկսաւ այս գործ
« չարութեան, և ծանուցաւ այլազգեաց՝ յաներ-
« կիւղից ոմանց և 'ի փառամոլից. որք մի 'ի միոյ
« վրայ յառնելով՝ տակաւին աճեցուցանեն զկա-
« պալս 'ի վերայ եկեղեցւոյ Քրիստոսի, որպէս ըզ-
« տունս բաժից կամ գնեւրկոցաց ». ոմանք ալ 'ի
կաթողիկոսէն մերժուած ըլլալով՝ նորէն աթոռ-
նին կը գրաւէին այլազգեաց պաշտպանութեամբ.
այսպիսիք ոչ Թէ տուրք կարգին՝ այլ և ոչ քրիս-
տոնէութեան արժանի են, և ոչ Թաղման և յիշ-
ման 'ի տուրբ պատարագի: Այս փառասէր եպիս-
կոպոսներէն ետև մեծագոյն սրտցաւութեամբ կը
յիշէ Աղթամարայ հերձուածը, առանց անունը
տալու, այլ յայտնապէս կ'ըսէ որ իր եղբօր ա-
ռեն 2500էն աւելի անձամբ ժողով եղաւ 'ի Ս.
Խաչն, այն ինքնագլուխ ապստամբաց դէմ. « և
« սրով բանին Ատուծոյ հատեալ 'ի բաց ընկե-
« ցան' որպէս գնեխեալ և զփտեալ անդամ յա-
« ռողջ մարմնոյ եկեղեցւոյ, անէծս ցաւագինս
« կուտեալ 'ի գլուխ նոցա ». այլ անոնք գժբաղ-
դաբար առանց զգաստանալու յամառեալ մնան,
« որոց արիւն 'ի գլուխ նոցա եղիցի »: Ապա յոր-

դարձեալ զնաւատարիմ եպիսկոպոսունս «՛ի գործ «հոգևոր հովուութեանդ», և՛ աւարտեէ խօսքը։

դ. «Ա՛ւ դասս քահանայից»։ Եկեղեցական գործոց մեծ մասն ասոնց ձեռօք կատարուի. ըսել է որ քահանայք բազմաթիւ են քան զայլ պաշտօնեայս. հարկ էր ուրեմն որ մեր քահանայապետն ալ երկարագոյն խօսի և խրատէ զասոնք։ Եւ նախ յիշեցնէ զմաքրութիւն վարուց, որ էրևւ նիւթ պէտք է ըլլալ քահանայութեան. և անոր հետ պիտութիւն, թէ իրենց գործը լաւ կատարելու և թէ ժողովուրդը հրահանգելու համար։ Կը յանդիմանէ շատ տեսակ անկարգութիւններ որ տեղ տեղ մտած էին. ինչպէս առանց քահանայական զգեստու պատարագել կամ աւետարան կարդալ, կամ ժողովուրդը դուրս թողուլ և դռները գոցելով պատարագել. կամ ինչուան պատարագի ատեն այս գիս այն դին պտըտելով՝ ապա աճապարելով և ուրիշ քահանային պատրաստած նչխարով պատարագել. և առաւել ջար՝ առանց խըղճի մաքրութեան և սրտի հաշտութեան՝ հաղորդիլ կամ հաղորդ տալ։ Այս բանիս վրայ երկար կը խօսի Շնորհալի, այսինքն զգուշանալու որ սրտի մէջ ոխակալութիւն կամ հակառակութիւն չըլլայ, որ և շատ բանէ կըրնայ պատճառիլ. զորս յիշելով՝ կ՛աւելցընէ «ազաչեմ զամենեսեան զձեզ, «գժուարաշարժս լինել՛ի վիճաբանութիւնս և «՛ի կռիւս, և դիւրաշարժս՛ի հաշտութիւն և՛ի «խաղաղութիւն. և մի՛ ոք որ զօրաւորն է՛ի «մարմնական յառաջադիմութիւնս՝ չանայ զըր«կել զընկերն և անխրատել»։ այլ մեծագոյնից կը վայլէ աւելի զինջ և նեղող ըլլալ, կրսերագոյնից՝ հնազանդ և խոնարհ. սասնկով կըրնան ժողովեան ալ բարի օրինակ ըլլալ։ ընդ հակառակն, «եթէ՛ի վիճութիւնս և՛ի հակառակութիւնս միմեանց տե-

« սանեն զձեզ, յորս են բաղումք, մանաւանդ
« թէ ամենեքեան՝ բաց ի սակաւուց, անուն
« Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի տեսողացն
« արտաքնոց, և ժողովուրդ ձեր առաւել խո-
« տորին ի պատուիրանացն Աստուծոյ, և զպա-
« տիժ դատաստանին դուք կրէք զթիւրելոցն
« ձերով պատճառաւ՝ յուղիղ ճանապարհէ աս-
« տուածային օրինացն »: — Յաւելով կը յիշէ
նաև շատ քահանայից տգիտութիւնը, որ և պա-
տարագի աղօթներն անգամ չէին գիտեր բեր-
նուց մինչդեռ կը վայլէր՝ « ըստ աւանդութեան
« կանոնի հարցն սրբոց » բոլոր սաղմոսն ալ
գիտնալ, և դեռ կարգը չտուած՝ գոնէ երգոց ե-
ղանակներն և ընթերցմունքը լաւ գիտնալ: — Ա-
պա մանաւանդ գործերու գալով, նախ Մկրտու-
թեան խորհուրդը կատարելու կարևոր խրատներ
կու տայ. սուրբ աղօթից հետ ծիծաղական խօս-
քեր չխառնել. զառողջ երախայն կերակրել եաև
չմկրտել. անհաւատ կնքահայր չառնուլ. այլազ-
գեաց մկրտութիւնն ալ կ'արգիլու, բայց եթէ
շատ ղժուարութեամբ և ի հարկէ յանձն առնուլ
երբեմն: — Երկրորդ Պատկի վրայ կը խօսի աւելի
երկար. և նախ որ գաղտուկ պատկ չըլլայ, այլ
յայտնի, ինչպէս որ « երգոցն ձայնք և նուագա-
րանացն՝ զնոյն վկայեն »: Մանր տղայ չպատկել,
այլ մանչն գոնէ 15 տարեկան ըլլայ, աղջիկն ալ 12
կամ աւելի. և այն ալ միշտ երկուքին հաւանու-
թեամբ, և մի բռնակալաց հրամանաւ, ինչպէս
Մեծ Հայոց կողմերը կ'ըլլար: Իսկ կնաթողը կամ
յափշտակողը՝ ամենևին չպատկել: Խնամութեան
աստիճանաց ալ ղժուշանալ մինչև ի չորս աղգ:
Պատկին ժամանակն ալ մինչև ի կէսօր է. և եկե-
ղեցական հանդիսին առեն՝ աշխարհական երգք և
նուագարանք պէտք է դադրին, մինչև որ պատ-
կեալքն եկեղեցիէն դուրս ելնեն: Պատկ ըլլալու

կամ ջըլլալու օրերն ալ կը նշանակէ: Պատկող Քահանայից ալ կը պատուիրէ՝ որ Հարսանեաց կոչունքին ինչուան վերջը չկենան, այլ « մինչ « յերկիս միայն արբուծն բաժակի ». և անկէ ետև հեռանան, Թողլով զաշխարհականս. վասն զի յայտ է որ երբ գինւոյն բաժակք յաձախեն՝ գլխին սկսառակն կը թեթևնայ, և ափեղպիղ խօսք և կատակք կըլնան ըլլալ: — Աստնցմէ ետև կը խրատէ զքահանայս՝ եպիսկոպոսաց հնազանդ ըլլալ, անոնց դէմ բողոք չընել առ աշխարհական իշխանս. աշխարհական հոգոց, քաղաքի կամ գիւղի վերակացուներուն, հարկ ժողովելու, ձիու և զէնքի կրթուելու չպարտակիլ, ձիընթացից մէջ չմրցիլ, կամ որսոց և նետաձգութեանց: Կարձեալ, իրատու պատուոյ և պաշտամանն ալ մտադիր ըլլալ, մէկուն բանադրածը՝ չարձակել, կամ արձակածը չբանադրել: Յետ ամենայնի դեռ երիտասարդ ըլլալնուն կամ այլ երկյանց ալ խրատ կու տայ՝ որ այնուհետև վանք քաշուին, որ անփորձ մնան յաշխարհէ. իսկ եթէ մէկն չառնուր յանձն հեռանալ տընէն և տեղէն՝ գոնէ անկէ ետև պատրաստ ալ չընէ. իսկ տարիքն առած ամուրի երկյանց՝ կը թողու իրենց խղճին՝ կենալն յաշխարհի:

Ե. Յետ եկեղեցականաց կու գայ կարգն « առ « Իշխանս որ ըստ աշխարհի.. որք ՚ի նուաճեալ « ժամանակիս տիրեք ՚ի տեղիս տեղիս՝ բազմաց և « կամ սակաւուց՝ զօրաց և գաւառաց ». որոց յիշեցընէ որ իրենք ալ Աստուծոյ իշխանութեան տակ են, պէտք է օրինաց յարմար շարժին. չնեղեն հպատակները ծանր հարկերով, կամ չար և անիրաւ գործակալներով. արդարութեամբ գտնին. չառնուն կաշառս. անլսող չըլլան այրեաց և տկարաց. չարաչար չհնատեցընեն իրենց ձեռքի տակ եղողները. ամենևին չզրկեն մէկը, կամ չվըշտակեն օտարաց առաջուածը. և այս բանիս

վայ երկար կը խօսի, սովորական պակասութիւն մ'ըլլալով: Նոյնպէս կը զգուշացընէ 'ի սուտենէ և 'ի խաբէութենէ, և հպարտութեամբ գործելէ. եկեղեցւոյ օրինաց և հրամայեալ պահոց ալ պարագաներին ձանձնալ. իրենց ծառանելը և զինուորներն ալ չբանադատել ընդդէմ օրինաց և իրաւանց. զգոյշ ըլլալ նաև երդմանց, ոչ երդնուլ, և ոչ ալ օրինաւոր երդմունքը զանց ընել, թէ և այլազգւոյ և անհաւատի եղած ըլլայ. դառնաստանիք առեն ալ զգոյշ ըլլալ՝ որ բարկութեամբ կամ կրքով չերթայ, մանաւանդ պատիժ կամ մահ վճռելու առեն. իսկ վկայութեան համար ամենևին չդառնապարտեն, կամ կռիւ ընեն. այլ Ջրհառոսի սէրն և համբերութիւնը չիշեն, և իր խօսքը, թէ «որով չափով չափէք՝ չափեցի ձեզ»:

Զ. Յետ իշխանաց բնականօրէն կարգն կու գայ առ Ջինուորս. որոց առաջին պարտք է հաւատարմութեի առ տեարան, թէ և անհաւատ ըլլան անոնք. երկրորդ, գիտութիւն և արդարութիւն, երբ իրենց վերակացութեան գործ յանձնուի կամ պահպանութիւն. ամենևին չի վայլեր զրպարիչները նեղել կամ զրկել կամ կողոպտել. պէտք է գոհանան իրենց Թոշակաւն. գողութիւնն՝ ինչպէս ուրիշ մարդկանց՝ իրենց ալ մեղք է. այսպէս և եկեղեցւոյ պատուիրանները չպահեն: Կերպով մը զինուորաց աւելի կը վայլէ երկիւղած կեանք մ'անցընել, որովհետև միշտ մահուան վտանգի մէջ են. որչափ որ իրենք զգուշութեամբ և գիտութեամբ ապրին՝ Աստուած ալ իրենց օգնական կ'ըլլայ և «ախոյեան 'ի պատերազմունն»:

Է. Կարգն կու գայ առ Քաղաքականս, որով կ'իմացուին Վաճառականք և Արուեստաւորք, որք ամեն ազգաց մէջ առանձնական դաս մը կը կազմեն Ժողովրդեան: Ասոնց կարևորագոյն յիշե-

լինքն է անխարդախութիւն՝ ի տուրևառս. չնաբեր չհանչցողները, երկու տեսակ կշռոք չբանեցընել՝ վաչխով ստակ չտալ, այլ մանաւանդ ողորմութեամբ: Եւ որովհետև քաղաքացիք նախատապատիւ են քան զգեղացիս՝ ասով պէտք չէ որ զանոնք արհամարհեն:

Ը. « Աւ երկրագործս և համօրէն ժողովրդա-
« կանս »՝ որով իմացուին գեղացիք և ծառայական կամ ստորին կարգի ժողովուրդն. որք չատ հեղ միայն ապրուստ և զուարճութիւն կը մտածեն, և կրթութենէ զուրկ են. ուստի ատոնց կ'ի-մացընէ որ մարդուս վախճանը նիւթական հեշտութիւնք չեն, այլ աւելի ազնուագոյն բաներ կը պահանջուին քրիստոնէէն. պէտք է որ ամեն մարդ զգուշանայ յանտառակութենէ՝ ի զեղխութենէ և յարբեցութենէ, և՝ ի յիշոցաութենէ կամ յայտերզի խօսից և յերդմանց, զոր սաստիւ արգելուն աստուածային օրէնք: Մեծ պարտք մ'ալ ունին իրենց զաւակաց կրթութեան, զորս՝ ի տըղայութենէ պէտք է վարժեցընեն աղօթից և մաքուր խօսից: « Եւ գլուխ ամենայն բարեաց՝ զսէր
« առ Միմեանս կալչիք, և առ աղքատս և մերկս և
« հիւրս և բանտեալս և հիւանդս՝ զկարեկցու-
« թիւն և զողորմութիւն »:

Թ. Յետ ամենեցուն կու գայ փափուկ գանկանոց. որոց՝ ի հարկէ առաջին պատուէրն պիտի ըլլար՝ Պարկեշտութիւն, թէ իրենց անձանց օգտին և թէ երիտասարդաց համար. չըլլայ որ համարձակ կամ արուեստակեալ գեղեցկութիւ
« գիւբ հոգին և զյանկացողին ինքեան՝ արկցէ՝ ի
« գուբն անօրէնութեան ». Եւս առաւել՝ սատանայօրէն առաջնորդ չըլլալ զուրկիններըը իրարու ձգելու: Ինկը յիշէ նաև կախարդութիւն և գեղատուութիւնը, « զի այս գործ կռապաշտից է և
« ոչ քրիստոնէից ». սակայն թուի թէ գտուէին այնպիսի անզգամ կանայք՝ ի Հայս ալ:

թէ այս վերջին գասին և թէ առաջնոց ալ՝ դեռ զգուշացընելու շատ բաներ կար, զորս կը թողու իւրաքանչիւր քահանայից և եպիսկոպոսաց. և ինքն կ'աղօթէ որ Աստուած ամենուն ալ յօժարութիւն տայ լսելու և կատարելու լսածը. որով « զուարթապէն և անտրտում երեսօք ասասցուք « յաւուրն գատաստանի առաջի արդար գատաւորին. Ահա ես և մանկունք իմ՝ զոր ետուր « ցիս. և գասեացուք ընդ աջեայն 'ի յաւիտեան « կան կեանն, ձեօք հանդերձ, 'ի Քրիստոս Յի« սուս 'ի տէր մեր ». և այլն:

Ահա է բովանդակութիւն Ընդհանրական Թղթոյ Շնորհալւոյն առ համօրէն ազգային, որոց սերունդք ալ մինչև ցայսօր յարգեն զայն. և տպագրութեամբ հրատարակեալ է նախ 'ի կողմանս ռուսաբնակ Հայոց: Ահնքան կատարեալ և կարևոր համարէին զայն՝ նաև յայլորդք Շնորհալւոյն, որ անկէց լաւ բան մը չյուսալով ըսել՝ շատք իրենց հայրապետութեան սկիզբը՝ զնոյն օրինակելով կը խաւրէին իրենց շրջաբերական ծանուցագրին հետ. ինչպէս յայտնի կ'իմանամք Յակոբոս Ա. կաթողիկոսի կոնդակումէն, որ յետ 100 ամրոյ նատու յաթոռն (1268), և կ'ըսէ. « Գալ « յաթոռ Ս. Գրիգորի 'ի Հռոմկլայա, 'ի սրբա« զանն մեր, սուրբ կաթողիկոսին մեծին Ներսէսի « գրեալ զայս լուսաւոր պարզ և իմաստուն բա« նից խրատ յորդորական... ինդացի յոյժ ու« րախութիւն մեծ, և յԱստուծոյ հատարեցայ « շնորհեալ ինձ զգանձն զայն... զայս գիրս լի ի« մաստութեամբ և գիտութեամբ և հանճարով. « և 'ի ձեռն իմ՝ մերոց հնազանդելոց ամենայն 'ի « Քրիստոս հաւատացելոց:.. Դուք՝ մեր հոգևոր « որդիք, առաքելաշնորհ եպիսկոպոսունք, ընկա« լարուք զայս գանձ հոգևորական... զայս ասաս« ցուք և խօսեացուք առ քահանայս և առ ժողո-

« վուրդս... Յամենայն շաբաթս երիցս կամ եր-
« կիցս ընթերցիք զայն որ վասն Եպիսկոպոսացդ
« խրատք յորդորականք.. և զայն որ վասն վա-
« նական քահանայից և կրօնաւորաց է խրատք՝
« յամենայն կիւրակէի՝ ի վերջին գասն, յառաջ
« քան զՀարցն՝ ընթերցցին ի լուր ամենեցուն.
« և զայն որ վասն Քահանայից և Ժողովրդակա-
« նաց է խրատք, գրեցէք և առաքեցէք յամե-
« նայն եկեղեցիս որ ի քաղաքի իցեն, և յամե-
« նայն գիւղս որ ընդ ձեռով իշխանութեամբ են:
« Զայն՝ որ վասն քահանայիցն խրատք են՝ քահա-
« նայքն առանձինն ընթերցցին. և զայն որ վասն
« Ժողովրդեանն է խրատք յորդորականք, քա-
« հանայքն յամենայն կիւրակէի ի վերջի գասն
« յառաջ քան զՀարցն՝ ընթեռնուն ի լուր Ժո-
« ղովրդեանն». և այլն: Զարմանք չէ որ Յակոբ
կամ ուրիշ կաթողիկոսք և եպիսկոպոսունք մեր՝
այսքան պատուական և պիտանի Ճանչցան այս
գրուածը. մինչ Ժամանակիս լուսաւոր արևմտեայ
եպիսկոպոսունք անգամ, ոլք անոր տպագրեալ
լատին Թարգմանութիւնը կարգացեր են՝ վկայած
են շատ օծութեամբ և լաւ գրուած ըլլալուն [1]:

1 Տպագրեալ ի Ս. Ղազար Վենետկոյ, 1833:

# ԻԳ.

*Եկեղեցական բարեկարգութիւնք Շնորհալւոյ. — Հոգ Եպիսկոպոսաց. բիւ և կարգ ստացա. — Կանոնք. — Խնամք ՚ի վերայ կրօնաւորաց, Տղայոց, Աղքատաց, Ծառայից. — Երգ վասն գիշերապահից. — Հանգուցք։*

Յակոբայ կաթողիկոսի վերոյիշեալ իրատն առ եպիսկոպոսունս՝ առեալ կարդալու իրենց համար գրուածն ՚ի Շնորհալւոյն, աներկբայ կը յայտնէ երկուքին ալ լաւ գիտնալը՝ որ եկեղեցւոյ ուղղութիւնն գլխաւորապէս յեպիսկոպոսաց կախուի. և հայրապետն՝ ժողովուրդը և կղերը բարեկարգելու համար՝ նախ պէտք է որ բարեկարգ եպիսկոպոսներ հաստատէ. ապա թէ ոչ՝ քահանայք եպիսկոպոսին անկարգութեանց կը հետևին, ժողովուրդն ալ քահանայից, կամ ամենքն իրենց յօժարութեանց, չպատկառելով իրենց վերակացուներէն, որոց վրայ միայն աստիճանին պատիւը կը տեսնեն և ոչ վարուց և արդեանց համաձայնութիւն։ Ոյքան ալ յայտնապէս կը տեսնէր զայս Ներսէս՝ ժամանակին պարագայից նկատմամբ չէր կրնար աւելի ախրաբար գործել և ատատել, որպէս երբեմն իր հին նախահայրն Ս. Սահակ. աշխարհական իշխանութեան կամ թագաւորական թևարկութեան նպատակն ալ հարկաւոր էր այս

բանիս. ապա ինքն զուրկ առանցմէ՝ իր տաք սըր-
տովն, չնորհալի խօսքովն և անբիծ վարուք՝ կըր-
նար ազդել և ազդեց: Բայց ահկե զատ մէկ հնարք
մ'ալ կը մնար իրեն. — ձեռնադրութե՛ բանալիքն,
որ իր ձեռքն էր. գոնէ առով կըրնար որոշել
զարժանաւորս յանարժանից՝ ինոր ընարութիւնս,
եթէ առաջիններըը չէր կըրնար շարժել ըստ կա-
մի. « Ունէր հաստատաբար՝ ի մտի, կ'ըսէ պատ-
« միչն, և զգրեալն Պաւղոսի առ Տիմոթէոս, թէ
« Մի վաղվաղակ ձեռնադրութեամբ՝ լինիս կցորդ
« մեղաց օտարաց. և ոչ զայլ ոք երբեք յատաւ-
« ձան եպիսկոպոսութեան կոչէր, բայց եթէ
« զարս իմաստուն և զգիտնականս, որք վարժք
« և կիրթք լինէին յօրէնս Աստուծոյ և բևեռեալք
« յերկիւղ նորա: Զորս մեծաւ զգուշութեամբ և
« երկայնահոգի ընարութեամբ քննէր՝ ի բազում
« աւուրս, ՝ի ժամանակս, և ապա յետ պէսպէս
« ուսուցանելոյ և խրատեալոյ առաւածայինօքն՝
« առնէր առաքձանի հովուութեան արժանի »:
Ահկե ալ յայտ է որ եպիսկոպոսաց թիւը և թեմը
էր աձեցըներ վայրապար, շատ վիճակաց և մեծ
նահանգի հովուապետ երևնալ ուզելով, այլ միայն
անհրաժեշտ հարկաւ՝ երբ օրինաւոր վիճակ մը
կարօտեր իր հովուին: Իր եօթնամեայ հովուապե-
տութե ժամանակ միայն եօթն եպիսկոպոս ձեռ-
նադրեր է, որպէս աւանդեն: Առանց մէկին միայն
ծանօթ է, իրեն համար գրուած կոնդակովն, և ար-
ժան համարիմք յիչելու. հին Վանանդ գաւառին
և գեղ գար մ'առաջ Թադաւորական աթոռ մ'ե-
ղած Կարս քաղաքին եպիսկոպոսն՝ Տէր Աբրա-
համ՝ վախճաներ էր, որոյ տեղ իր աղգական Յա-
կաւսար քահանայն ընարեցին Թեմականքն, և
վկայական Թղթով խաւրեցին առ Ներսէս, ինչ-
պէս որ հին և բարի սովորութիւն էր՝ Եպարքան-
չիւր եկեղեցւոյ իր հովիւներն ընարելու և ներ-

կայացընելոյ առ հովուապետն. « զոր և ընկա-
« լեալ մեր, կ'ըսէ Շնորհալին, և հաւատացեալ
« վկայութեանն՝ որ 'ի ձէնջ թղթով և բանիւ,
« (որով կ'իմացընէ Խաչատրոյ հետ եկողներուն
« առանձին հարցընելն և քննելն զնա), կատա-
« րեցաք 'ի վերայ գորա զաստուածային խոր-
« հըրդածութեանցն ձեռնադրութիւնս, յաստի-
« ճան եպիսկոպոսութեան վերակոչելով կենաս-
« կիր խաչիս և աստուածախօս աւետարանաս,
« և Ս. Լուսաւորչին աջով ». և այլն: Ահա առ-
թով կ'իմացընէ ալ ամենուն, թէ ինչպէս պիտի
կատարէ ձեռնադրեալ եպիսկոպոսն իր պարտքե-
րը. մանաւանդ յընտրութեան ձեռնադրելի քա-
հանայից. և օրինաւոր պսակը չլուծելոյ, « որ-
« պէս լսեմք զոմանց յեպիսկոպոսաց արևելից,
« զի արհամարհելով զօրէնս Աստուծոյ՝ բաժա-
« նեն անխտրաբար, սակս սակաւ ինչ կուրացու-
« ցիչ մամոնայի »: Ապա կը յիշեցընէ որ եպիսկո-
պոսն պէտք է ամենայն բարի գործովք օրինակ
ըլլայ քահանայից և ժողովրդեան, և քարոզու-
թեամբ ալ զնոյն սովրեցընէ, որպէս զի անոնք ալ
հետևին իրենց հովուին. զգոյշ ըլլան յանառա-
կութենէ, յանկարգաբանութենէ, յանիրաւու-
թենէ, և այլն: Եւ ապա հայրական առատ օրհ-
նութեամբք կ'աւարտէ. « Ի մտանել գորա յաշ-
« խարհդ այդ՝ մոցէ և շնորհք ողորմութեանն Աս-
« տուծոյ առ ձեզ. և բարձցէ 'ի ձէնջ զամենայն
« պատուհաս որ վասն մեղաց, և տացէ պաղա-
« բեւութիւն երկրի ձերում, և զաճումն անդէոց,
« և զբարեբարութիւն թագաւորացդ, և զնա-
« ղութիւն արտաքին թշնամեաց և զշինու-
« թիւնն աշխարհաց », և այլն... « Շնորհեցաք ձեզ
« գովաբ և... զմիաբանն սուրբ », և այլն: Իրենց
քաղաքին գովութիւնն ալ կ'ընէ 'ի սկզբան թըղ-
թին, « յանմատոյց դղեակդ և 'ի հոյակապ քա-

« զաքդ կարս, և որ ընդ գովաւ նահանգք գե-
« ղօրեից, վանօրէից և ագարակաց »: Կարս այս
աւերեալս երբեմն վրաց Թագաւորաց ձեռք
կ'ինկնար, երբեմն ալ Անոյ տիրող այլազգեաց:
Ժողովրդեան գաւառակարգութիւնն ալ, առ որս
գրէ, նման Ընդհանրականին մէջ գրած կարգին
կը գտանէ. նախ կրօնաւոր, յետոյ քահանայ, ա-
պա իշխան, զինուոր, վաճառական, տանուտէր
(fermier), երկրագործ, ձեռնհմուտ արուեստա-
գէտ. իւրաքանչիւրին ալ պատշաճ պատուոյ մակ-
դիրներով, և ամենուն մէկէն կու տայ ոչխոյն և
օրհնութիւն « յաստուածընկալ սուրբ նշանացս,
« և յառաքելական նշխարացս, և 'ի Սուրբ Լու-
« սաւորչին մերոյ աջէս, և յանթառոյս, և 'ի մէնջ »:
Յիշեցինք զասոնք՝ որպէս վկ օրինակ մ'ըլլան Ըն-
նորհալւոյ կաթողիկոսական թղթոց ձևին, որուն
յետագայք ալ հետևեցան. իսկ ինքն զինքն կ'ա-
նուանէ սովորաբար պարզապէս, « Ներսէս ծա-
« ռայ Քրիստոսի և ողորմութեամբ նորին կա-
« թողիկոս Հայոց »: — Այս նորընծայ կամ
(ինչպէս կոնդակին վերնագիրն կ'ըսէ) Նորաւէրս ե-
պիսկոպոսն Խաչատուր կը ներկայանայ Հռոմկլայի
անուանի ժողովին մէջ յամի 1179, գուցէ իբր 10
տարի ձեռնադրութենէն ետև, ուրիշ 30 եպիս-
կոպոսաց հետ:

Եւ զի եպիսկոպոսաց վրայ է խօսքերնիս՝ ան-
շուշտ հետաքննելի է անոնց այն աւենուան թիւն
և աթոռակարգութիւնն, զոր դժբաղդաբար ոչ
ոք 'ի պատմչաց չէ ծանուցած կամ թուած որ-
շակի, ոչ առաջ և ոչ վերջը. կամ լաւ ևս ըսել,
մեզի չէ հասած ասոնք: Լուսաւորչի համար կ'ըսէ
Ագաթանգեղոս՝ թէ 400էն աւելի եպիսկոպոս
ձեռնադրեց, որ և այն հին աւենի սովորութեան
համեմատ և Հայոց բազմութեան՝ շատ զարմանալի
չէ. միայն թէ չենք կրնար որոշել թէ արդեօք

քորեպիսկոպոսք ալնոյն Թուին մէջ էին Թէ գուբա. որովհետև ուրիշ պատմիչք կ'իմացընեն որ 30 գլխաւոր եպիսկոպոսք կային, որք և ախոռընկալ այսինքն նախաթոռք կոչէին. այս միայն հաւանական կ'երևի որ 30էն շատ աւելի պէտք է ըլլալ եպիսկոպոսաց Թիւն. և եթէ ամեն գաւառի ալ մէկ եպիսկոպոս մը դրուէր՝ գոյնալ պէտք էր քանի մը հարիւր ըլլալ, ընդունելով ալ ժամանակակից Ջենոբայ պատմչին յիշած Հայոց 620 գաւառները, զոր այլք 665 ալ կ'ըսեն, այլ բնիկ Մեծ Հայոց գաւառքն էին իբրև 200, որոց չափը և իշխանութիւնը չեմք գիտեր: Ջ գարու մէջ Յուստինիանոս կայսեր ատեն և անկէ ետև Յուստոս կայսերութեան բաժին եղած Հայոց՝ քանի մը նահանգաց յիշեալ եպիսկոպոսաց Թիւն ալ նկատելով՝ գոյնալ բոլոր Հայոց քանի մը հարիւր եպիսկոպոս պատշաճ կ'երևի: Աբրահամ Սիւնեցի քերդողն (ի ԺԵ գարու) Մեծին Ներսեսի համար կ'ասանդէ,

« Եպիսկոպոս օրհնեաց չնորհօք սուրբ Հոգւոյն՝
Եօթըն հարիւր Թըւով, այլ եւս քառասուն »,

այսպէս կ'ասանդեն Յայսմաւուրք ալ, Թէ մինչ կաթողիկոս մը իրեն բնական աթոռն էր՝ Անի, « այնքան փարթամ էր՝ որ ունէր 700 եպիսկո. « պոսունս 700 Թեմից ». և Թուի Թէ Մաամէտեան Ուսհայեցւոց խօսքը կրկնելով Պետրոսի գեսագարձն համար, որ 500 եպիսկոպոս կ'ըսէ. (նձ, գաղափարողք նշ փոխեր են). որ Թէ և չափազանց երևի՝ այլ ոչ որչափ առաջ տեսանք (180) Լաւինեցւոց ըսածն կամ լսածն՝ մինչև 1000 եպիսկոպոս: Ինչուան հիմայ գտուած Ժողովոց պատմութեանց մէջ անուանք առորագրող եպիսկոպոսաց 40 կամ 50ը չեն անցնիր. նոր յիշեալ Հռոմկլայի Ժողովին մէջ Աղուանից կաթողիկոսին հետ

մեկուկ 32 եպիսկոպոսունք կային. բայց պատմութիւնն կ'ըսէ թէ կաթողիկոսն մեր Գրիգոր Տղայ՝ առաջուց Արեւելեան 36 եպիսկոպոսաց հաւանութիւնն առեր էր [1]. Ժողովին մէջ միայն 15 արեւելեան եպիսկոպոս գտուին. եթէ անոնցմէ զատ են 36, և թէ անոնց հետ, և թէ այն 36էն զատ գտուէին և անհատանք, բոլորին թիւն 100էն աւելի չէրևէր: Շնորհալիէն զատ մ'և աւելի վերջ արաբապիր հեղինակ մ'ըսած կ'երևի թէ Հռոմկլայի կաթողիկոսն 64 եպիսկոպոսական թեմ ունէր. բայց հօս ալ որոշ չեմք իմանար թէ արեւելեան թեմերն ալ ամբողջ բովանդակած է թէ չէ: Վերջապէս մեզմէ 200 տարի առաջ (1670) երբ անուանի ապագիր վարդապետն Եղեանեցի Մակարն՝ յԵրուսաղէմ էր, Գաղղիացի բանասէր մը խնդրեց անկէ և նա ալ նշանակեց ցանկ մը եպիսկոպոսարանաց Հայոց, երբև 200, յորոց 40 միայն արքեպիսկոպոս էին, իսկ եպիսկոպոսաց մէկ մեծ մասն ալ վանաց առաջնորդք, թէ և փոքր թեմեր ալ ունէին վանաց վիճակներն: Այս ամեն յիշատակներէ մեզի կ'երևի թէ մեր եկեղեցին առաջին դարուց մէջ 100էն աւելի եպիսկոպոս ունէր, կըլլկին նոյնչափ ալ քորեպիսկոպոս. երթալովնուազեցան թիւ թեմական եպիսկոպոսաց ըստ հին կարգաւորութեան, այլ առն առն շատցան եպիսկոպոսունք, կամ անթեմ կամ փոքր թեմեր ունենալով, մանաւանդ երբ անոնց սովորութիւն եղաւ վանաց մէջ նստիլ, կամ վանահարց եպիսկոպոսանալ, կամ ըսկ պատուոյ համար եպիսկոպոս ձեռնադրուիլ. և ըստ այսմ կըրնայ ըստ մասին ջնջուիլ Լատինաց կարծիքն յ'Ի գարուս, կամ Հայոց մեծաբանութիւնն:

1 Գայտնութիւն առն յ'1,2 եպիսկոպոսաց, զոր Ղամչեանն անտեսիկ թիւ կարդալով 31,2' գրե 336 եպիսկոպոսունս. (գ. 121):

Իսկ եպիսկոպոսաց նախապատուութեան և կարգաց գալով՝ մինչև ՚ի ԺԱ դար, կամ քանի որ Հայք երկնց քնիկ երկրին մէջ էին, ամենքն ալ հաւասար անուամբ և իրաւամբք Եպիսկոպոսք էին, ոչ կանոնական իրաւամբ մետրապոլիտ կար և ոչ արքեպիսկոպոս, ՚ի բաց առեալ Սիւնեաց կամ Մարդպետականն, որք միայն այդպիսի պատուանուն մը կրած են: Ի վերայ այսր ամենայնի ՚ի հնուց ՚ի վեր կային Հայոց ալ Գլխաւոր եպիսկոպոսունք, որք էին իւրաքանչիւր աշխարհաց կամ նախարարութեանց գլխաւոր և իշխանանիստ գաւառին և քաղաքին եպիսկոպոսունքն, և հարկաւ նոյն աշխարհին միւս եպիսկոպոսաց մէջ նախապատիւ էին, և երբեմն հեղինակութիւն մ՚ալ ունէին անոնց վրայ. որոց որպիսութիւնը քննել և ձշդելն՝ մեր գործէն դուրս է: ԺԱ դարուն մէջ երբ սկսան Հայք գաղթիլ Յունաց կայսերութեան զանազան կողմերը, անոնց գլխաւոր քաղաքաց մէջ արքեպիսկոպոսներ տեսնելով իրենց ազգային եպիսկոպոսներն ալ արքեպիսկոպոս անուանել սկսան, իրրու թէ անոնցմէ վար չմնալու. իսկ ԺԲ դարուն մէջ սովորական կ՚ըլլայ այդ վերակոչումն. և նախ այս յիշեալ Հռոմկլայի ժողովին (1179) մէջ է՝ որ չետ երկու կաթողիկոսաց (Հայոց և Աղուանից) ատորագրին լինն արքեպիսկոպոսունք, (Անոյ, Երուսաղէմի, Անտիոքայ, Տարսոնի՝ Ն. Լամբրոնացին, և այլն), ապա 22 եպիսկոպոսունք: Սոյն դարուս վերջերը և յաջորդին սկիզբները, և աւելի ՚ի Կիւրիկիա, կը սկսին եպիսկոպոսունք նաեւ ՚ի վանորայս, և կ՚անուանին եպիսկոպոս այս ինչ Թեմի և Տէր այս ինչ վանաց՝ ուր կը նըստէր. զորօրինակ Սսոյ եպիսկոպոսին աթոռն և վանքն էր Դրազարկ, Մասայ՝ Արքակաղնի, Տարսոնին, Մլիճ, Լամբրոնին՝ Սկևռա, Անաւարզայ՝ Կաստաղոն, Անտիոքայ՝ Յեսուայ վանք, և այլն:

Այսպէս եղաւ քիչ առաջ կամ վերջը և ի Մեծ Հայս, այսպէս են տեղ տեղ և հիմայ:

Թողլով զայս և ասոր նման խնդիրները նկատմամբ եպիսկոպոսաց և կաթողիկոսի, մէկ մը միայն յիշեմք, որ Շնորհալւոյ պատմուԹեան մէջ ալ հարկաւ կը մնէ. և է այն ընծայն կամ տուրքն զոր ձեռնադրեալն՝ ձեռնադրողին կը մատուցանէր. որ մէկ կողմէ նայելով՝ անվայել բան մը կ'երևի, և իբր կաշառք կամ սիմոնականուԹիւն. և երբեմն յիրաւի այսպէս ալ ըլլալով՝ անարժան անձանց մէջ՝ ամենախրատւի ալ անարդուած է. այլ եԹէ հաւատամք որ Շնորհալի մ'ալ այսպիսի ընծայ ընդունած է՝ պէտք է և հաւատալ որ օրինաւոր կերպով ըլլալ այդ բանդ՝ իբրև պատուհաս ստորուԹիւն և ոչ իբրև հարկ. մանաւանդ յորմէ հետէ կաթողիկոսաց սեփական կալուածքն կողոպտեցան, և ինչպէս լսեցինք ինքնին Շնորհալւոյ ըսածը, որ և ոչ դեղ մը կամ ագարակ մ'ունէր, իսկ եպիսկոպոսք ժողովրդեան մէջ՝ի հարկէ բաւական հասոյԹ կը գտնէին. ապա արժան էր որ կաթողիկոսն ալ եպիսկոպոսաց ընդունէր բաժին մը: Այսպէս էր մեր պատմուԹեան աւեն ալ, և ամենէն ալ օրինաւոր ձանչցուած, բաց ի չարասիրաց և անօնգմէ խաբուողներէն. առջիններն, զորս և յետոյ պիտի յիշեմք, իրենց անկարգ և անուղղայ վարուց համար մերժուած ի Շնորհալւոյ, դատապարտելի կրնաք փնտռելով այնպիսի անձի վրայ բամբասելու բան մը գտնել՝ զայս յիշեր են մեղադրուԹեամբ. և որովհետև մերժուած էին իրենց աղգէն և հովուապետէն՝ անցնելով իրենց մերձաւոր Աստուծոյ, ինչպէս անոնց կաթողիկոսին՝ Միխայէլի քով համարձակեցան անդուռն բերանին բանալ: Այս անձս զանազան առԹիւ մէջ յարաբերուԹիւն ունեցաւ Շնորհալւոյ հետ, ինչպէս պիտի տեսնեմք յետոյ.

և Թերևս իր քահանայութեանն առեն՝ անոր Թարգմանութեանց օգնողն է՝ ի հաւաքման վըկայաբանութեանց. և երբ յաղթուն բարձրացաւ՝ ըստ հին սովորութեան՝ Թղթով խնացուց մեր կաթողիկոսին, ինչպես մերն ալ Աստուծոյ կ'խնայըներ: Սա կը յիշէ իր պատմութեան մէջ վերոյիշեալ դիպուածը. և երբ Գրիգոր Տղայ յաջորդեց հօրեղբօրը՝ Մխիթար ընդհատութեան Թղթին մէջ գրեցի, կ'ըսէ, որ այդ արծաթասութիւնը վերցընեն, որպէս զի չարախօսաց բերանն գոցուի: Սակայն եթէ և նա որոշակի չըսեր Թէ Շնորհալին ալ կ'ընդունէր այս տուրքը Թէ ոչ, Վարդան Պատմիչ չատ որոշ կ'ըսէ Թէ չէր ընդուներ. « Ներս « սէս... եօթն ամ պաշտեալ զպատիւն, և եօթն « եպիսկոպոս ձեռնադրեալ ՅԷ. արդ անուանիք « և ընծիրք, որ վարդապետս և որ վիճակոպոյ »:

Դառնանք մեր առաջին տեսութեան, որ էր բարեկարգութիւն եկեղեցւոյ՝ եպիսկոպոսաք. որոյ հնարքն՝ ոչ միայն անունց անձամբ և վարքով կ'ըլլայ, այլ և անունց ձեռքով և հեղինակութեամբ, որոն կաթողիկոսք՝ իբրև գործակըցաց. վասն զի առանց եպիսկոպոսաց ժողովքի և հաւանութեան՝ հայրապետս մը իր բովանդակ եկեղեցւոյն չի կրնար օրէնք դնել կամ նորոգել զօրէնս. այսպիսի օրէնք յայտ է որ եկեղեցւոյ՝ Կանոն կ'ըսուին, և կանունք ժողովոց սահմանին և հաստատին: Մեր պատմութեան չորրորդ մէջ յիշեցինք ժողով մը 2500 ժողովականաց բաց յեպիսկոպոսաց, ի սկիզբն հայրապետութեան եղբօր Շնորհալւոյն (56). իսկ սա որ այլ աւելի հոգացող էր եկեղեցւոյն լաւութեանը՝ ի հարկէ փափագեր ալ միայն անձամբ չկրցածը՝ ժողովով հաստատել: Ժողով ընելու չատ դժուարութիւնն յայտնի է, պատճառաւ անհանգիստ ժամանակի և հեռաւորութեան տեղեաց. բայց գոնէ իր կա-

Թողնիկոս ձեռնադրութեան առեն եպիսկոպոսաց դումարին՝ յարմար առնէր մ՚էր այս բանիս. և Թուի թէ Շնորհալւոյ առնէրը չէ փախուցած. և թէ այս ոչ՝ հարկ է ըսել որ ուրիշ առնէրով ժողով գումարած է և կարևոր կանոններ սահմանած, առաջին հայրապետաց նման, թէ և դժբաղդաբար առուգիւ աւանդուած չէ մեզի, այլ միայն աներկբայ ըլլալու չափ նշան կայ: Մխիթար Գոշ՝ որ գրեթէ ժամանակակից էր († 1214) կը յիշէ իրեն առեն այս երկու հարուածաց հայրապետաց կանոններ դնելը [1]. կանոնագրաց մէջ ալ կը յիշուին՝ ի յանկի՝ կանոնք « Ներսէսի Կլայեցւոյ Հայոց կա- « Թողնիկոսի, եղբօր Տեառն Գրիգորիսի, գլուխք « 145 ». որով ոչ միայն կանոնադրութիւնն հաւասարի, այլ և կանոնաց առաւտութիւնն, որ Թըւով առաւելու քան զամեն հարց և ժողովոց մերոց. և ինչպես Շնորհալին յամենայնի լիացոյց և կատարեց մեր եկեղեցւոյ կարգերը և գրքերը, այսպէս ալ ըրած կ՚երևի յայտ մասին. գաւաղնին այս է, որ կամ կանոնաց բազմութիւնը համար կամ որ և է պատճառաւ՝ մեր ձեռքը հասած կանոնագրաց մէջ միայն վերնագիրն կայ և ոչ բուն կանոնք. որ յուսամք թէ ժամանակաւ յայտնուի բաղդատութեան ձեռօք. և որպէս կարծեմք՝ թէ իրմէ առջինները ուրուն և թէ իրմէ դրածներով հաւաքուած մ՚ըլլայ կարևոր կանոնաց:

Եկեղեցականաց՝ որով և եկեղեցւոյ՝ բարեկարգութեան համար, յետ Եպիսկոպոսաց՝ կարևորագոյն գաան էր կրօնաւորաց, և վայելուչ էր որ Շնորհալին այս բանիս ալ մեծապէս ուշ դնէ. որովհետև միայն այս գաան էր՝ որ շատ առեղ եպիսկոպոսաց իշխանութենէն ալ ազատութիւններ ու-

1 Գլ. ՃԽԵ Դատաստանագրոց. յիշած կանոնն է անկատար Հասակաւ քահանայ չձեռնադրելու վերաբեր:

նին, շատ վանորայք իշխանաց դասատակեալ ըլլալով անոնցմէ կախումն ունէին. և մեր եկեղեցւոյ սկզբնաւորութենէն՝ ի վեր ալ, յաւուրց Ս. Գրիգորի և Տրդատայ՝ այս կարգաւորաց դասն մեծագահարկի եղած է, ինչպես որ Ս. Սահակայ կանոնական գրուածքն ալ կը ցուցընէ, յառաջ քան Շնորհալւոյն. թէ և առաջին դարուց կրօնաւորքն աւելի ճգնաւորք էին և բարերարութեան գործոց միայն պարապէին, որպէս գթութեան եղբարք, հիւրոց, պանդխտից և հիւանդաց ծառայելով. անոր համար ալ իրենց բնակութեան տեղիքն՝ մեր մէջ վանք կ'ըսուին յատկապէս, որ օթևանի իմաստ ունի. և այնպիսի տեղուանք կը շինուէին վաներն՝ ուր ճանապարհորդք և պանդուխտք կը հանդիպին, այսինքն քաղաքներէ հեռու մեծ ճամբաներու վրայ, անշէն տեղուանք. Մեծին Ներսէսի համար կ'ըսուի թէ 2000էն աւելի այսպիսի վանքեր հաստատեց՝ ի բոլոր Հայս: Յաջորդ դարերուն ձեւացան աբեղայ և վարդապետ կարգաւորաց միաբանութիւնք, որոց նման են կամ պիտի ըլլան հիմիկու սակաւաթիւ վանական միաբանութիւնք ազգիս, զատ՝ ի ճգնաւոր միաբանից, որպիսիք են Վանայ կղզեցւոց և Սևանայն: Արևելեան ուրիշ եկեղեցեաց մէջ ալ սովորութենի է շատ կրօնաւորաց անմիջական կախումն՝ ի պատրիարքէն. մերոնք ալ քիչ շատ այսպէս ըլլալով՝ յառուկ կերպով մը կը պահանջէին Շնորհալւոյ ինամքը, զոր և ցուցած է, ըստ հանգանութեան յետին գլխոց ոմանց, նորոգելով Ս. Բարսղի կարգաւորութիւնը և կանոնները, որով ամենայն արևելեայք վարին: Հոգեսէր և ընկերասէր հայրապետն մեր չնացած է ոչ միայն ուղղել այլ և գիւրել ամենուն պարտքը, ինչպէս իր Ընդհանրական Թղթոյ խրատներէն ալ տեսանք. և այս գասուս համար ալ՝ որ ամենէն հաստակրօնն

պէտք է ըլլայ, յիշած է ժամասացութեան մէջ
ըսուածը, « Թեթեւացո՛, Տէր, զբաղդը լուծ քո՝
« զոր եդեր ՚ի վերայ մեր ». որպէս զի պատշաճ
դիւրութեամբ՝ աւելի յօժար կարգապահ ըլլան,
քան դժարութեամբք՝ շատերն կանոնազանց։
Մանաւոր գուշ և խնամքն ալ ծեր վանակա-
նաց վրայ նշանակեց Ընդհանրականին. և Պատ-
միչն ալ կը վկայէ, թէ « Պարգեւեր ՚ի վանորայս
« ծերունեաց և վանգելոց եղբարցն՝ դահեկանս
« և զգեստս՝ ՚ի պէտս կարեաց նոցա ». որպէս զի
տկարացեալ բնութիւնն կարողանայ կրօնին մե-
կալ պարտքերը կատարել անզբաղ, և հասակն
ու հիւանդութիւնք պատուհաս չհամարուին այն
սուրբ վճռակին։

Այս երկու մեծ դասերէն զատ, որք եկեղե-
ցւոյ՝ որով և աշխարհի կամ մարդկութեան՝ բա-
րոյական ուղղութեան մեծ պատճառք են, կայ դաս
մ՚ալ մարդկան, որ յիշուած չէ Շնորհալւոյ Ընդ-
հանրականին մէջ. տեսքով փոքրիկ, այլ իրօք ա-
մենէն մեծ կըրնայ ըսուիլ, վասն զի ամենուն ալ
սկիզբն է. և է Մանկանց կամ Տղայոց դասն. ո-
րոց վրայ խնամ տանելն՝ պարտք է ծնողաց և քա-
հանայից. անոր համար անպատշաճ էր անոնց
ալ զատ բան գրել Ընդհանրականին. սակայն
անմոռանալի դաս մ՚է սա մարդկութեան, որոյ
ամենայն մեծութիւնն ասոր փոքրկութենէն կը
ծագի. և անկարելի ալ էր որ Ներսէսի պէս անձ
մը ասոնց ալ չհաղորդէ իր շնորհքները։ Բայց ՚ի
պատուիրանաց առ ծնողս՝ մանկանց համար հար-
կաւորագոյն բանը հնարեց, այսինքն է բարի և ողջ
ջամիտ սկզբունքներ տպաւորել անոնց թարմ
մտաց և սրտին. և զայս ալ իր սովորական քեր-
դողական արուեստովը ձեւացուց, ոտանաւոր բա-
նիւք. զոր և տղայոց հասկացողութեան և սովո-
րութեան համեմատ՝ պարզ կամ ռամիկ

ոճով գրած է, և այբուբենիկ կարգաւ անաաեալ. կայ որ ուղղաորէան տաղիք և ոաիւք.

« Ա՛յբն՝ Աստուծոյ զքեզ մերձակայ,
Խրատէ լինել, թէ հաւատայ ».

կայ որ ջորաորէան,

« Ա՛յբն՝ առաջին ըզքեզ, Տըղայ,
Հանէ յիմաասըն գերակայ ».

ատոր նման

« Ա՛յբն՝ անբակիզբն ասէ զԱստուած,
Անեզ բնութիւն, ոչ արարած »:

Ա՛յս եաքինա՝ հաւատոց վարդապետութիւն մ'է. երկրորդն՝ ուսումնասիրութեան յորդոր մը, ա- ռաջինն՝ բարոյական խրատք. որ են ըսել հոգւոյ, մտաց և սըրտի դաստիարակութիւն: Հաւանօրէն և յառաջ քան զկաթողիկոսութիւնն գրեր էր այսպիսեաց մաս մը. ինչպէս նաև Սողոմոնի գրոց Յիշատակները, որք մանաւորապէս բարոյական կրթութիւն կը գիաեն:

Ա՛յս փոքրկանց մեծագոյն գան (Մանկանց) կ'առաջնորդէ մեզ Շնորհալւոյ մարդասիրական բազմապատիկ և ջերմագոյն խնամքը և սէրը քըն- նելու, մանաւանդ թէ հիանալու. վան զի այն- պիսի սրտէ մը ընկերասիրութիւնն իբրև յառատ աղբերէ բղխելուն՝ չեմ կարծեր որ տարակոյս մ'ընայ. և ոչ խակ հարկ էր յիշել, եթէ Շնոր- հալւոյ մեծութեան մանաւանդ նշան մ'ալ չնչմա- րէինք, կամ թէ այսպիսի անապակ և սրբագոյն սիրոյ վայ խօսքն և լսելն միշտ քաղցր և օրինա- ւոր ջըլլար: Բնութիւնն կ'իմայընէ որ ամեն գաս-

և վհատակէ աւելի կարօտ են ողորմութեան և սի-
րոյ՝ աղքատք և տնանկք. և ասոնց մէջ ալ տնանկք
մանաւանդ՝ զորս աշխարհօրէն ի՛ղդ ըսուածն՝
լաւագոյն դրից մէջ դրած էր կամ պէտք էր դնել,
և ո՛ր և է պատճառաւ՝ կարօտութեան մէջ ըն-
կած են, առանց արտաքին կերպերնին շատ փո-
փոխելու. որով մուրոդութիւն ալ չեն կրնար
ընել, և սրտանց աւելի կ'այրին և տառապին քան
մարմնով. անոնց ցաւը գիտցողք անգամ՝ շատ
հեղ չեն կրնար դեղ ընել. այնքան փափուկ է
սիրտն և ամօթխած՝ որ ողորմութիւն տալով և
առնելով անգամ՝ կրնայ արիւնոտիլ. կարօտէն
աւելի կարօտութիւնը լեցնողն պէտք է Ճարտա-
րութիւն հօս: Ընտրհալոյ սիրտն որ ամենէն փա-
փուկ մարդասէր սրտից նիւթով զանգուած էր,
և գերագոյն ընտրհօք թաթաւեալ, և ըստ վկայու-
թեան պատմչին « ողորմութիւնն՝ ունէր նախ-
« կի քնաւորաբար սովորութեամբ », առանկ փա-
փուկ գիպաց հնարքն ալ կը գտնէր. յայտնի աղ-
քատաց յայտնապէս կու տար առատապէս, որ-
չափ որ իր աղքատութիւնն ալ նեղեր կրէն. խակ
ամբչկոտ աղքատաց և կարօտելոց համար՝ ծա-
ծուկ լուռեններ ունէր քանի մը խորհրդապահ և
հաւատարիմ անձինք, որք միայն յետ իր մահուն
այս բանս յայտնած են. և « տայր ցնոսա ծրարս
« ոսկւոյ առատապէս », և կը սովրեցընէր թէ ինչ
կերպով գիշերանց առանց մէկուն տեսնելու՝ այն
կարօտելոց տանց պատուհաններէն կամ երդիքէն
ներս ձգեն ծրարները և հեռանան. « և այսու
« նմաներ, կ'ըսէ, աքանչելագործ հայրապետին
« Նիկողայոսի »: Ընթերցողք ասկէ ոչ միայն մեր
հայրապետին Ներսէսի նուրբ առաքինութիւնը և
սերը պիտի տեսնեն, այլ և գուշակեն թէ որչափ
ուրիշ բարձր և ազնիւ առաքինական գործեր
ըրած է այն անձն, որք իր ընտրհայ մէջ ծած-

հուած՝ միայն իրեն, և իրմէ աւելի Աստուծոյ յայտնիք են:

Ասլրուստի կոչմանէ ասոնք են յեսուին դաս մարդկան, և մեծ գթութեան կարօտ. իսկ ըստ քաղաքական վիճակաց՝ սովորաբար յեսուին կ'ըլլան ի բարոյականի՝ ծառայական և զինուորական դասակարգք. ուրեմն ասոնք ալ առաջնին կարգի խնամոց կարօտ են: Շնորհալւոյ վիճակն և բնակած տեղն՝ Հռոմկլայ բերդն՝ կը պահանջէին և ծառաներ և զինուորներ. և պէտք չէ տարակուսիլ որ ժամանակաւ կանխեալն քան զՍ. Պատրիկիոս, Սալեզացին և Ֆենելոն, անոնց պէս իր աունը լաւ կարպաւորած ըլլայ, և ծառաներն ալ կրթած՝ իր սքանչելի վարքով և բանիւք: Անոնցմէ աւելի ունէր իր բերդապահ զինուորները, որոց կերպովմբ լինքն էր ազատ տէր և իշխան. վասն զի Հռոմկլայ ուրիշ իշխողի կամ Թագաւորի մը իշխանութեան տակ չէրևիր: Գալով զինուորաց, որչափ ալ ասոնք կանոնաւոր են իրենց զօրապետին և գնաւորին հրամանաց տակ, այն բանը մէջ ալ որ իրենց ազատութեան Թողուած է՝ շատ հեղ շատ ազատ և համարձակ կ'ըլլան. անոր համար Շնորհալի Ընդհանրականին մէջ մասնաւոր խրատ մ'ալ ասոնց գրած է: Իր քարոզաձեւ բերդին պահապանքն ալ անոնց եղբայրքն էին. և որչափ ալ քիչ ու իրենց պաշտպանելու տեղն սահմանաւոր, այնքան ալ խրոխտ և ժիր կըընային ըլլալ. և երբ իրենց տէրն՝ հայրապետն՝ այնպիսի աշնուախոհ բաներ կը շարադրէր արձակ և ոտանաւոր, կարճ և գունեղ Հայ երեսաստղք ալ անոր կարճ սահմանաց վրայ հակէին, նեաւելոց կապարձն միշտ ուսերուն վրայ, հասուածիք ալեղն ի ձեռին, նիզակներն ասդիս անդին ցըցուած պատուարաց վրայ, աշտարակաց նեղ պատուհաններէն լայն լայն նայելով իրենց

պէս անհանգարտ Եփրատայ սեբ ու սպիտակ հո-
սանաց վրայ, և անոր երկու եղերքներէն դուրս
մէկ մը յարևելս՝ իրենց բնիկ հայրենեաց և յիշա-
տակաց երկիրներուն վրայ, մէկ մը յարևմուտս՝
իրենց պանդխտութեան և թշնամեաց երկիրնե-
րուն վրայ, տեսակ տեսակ մտածութեամբք և
ղրուցօք. և երբ ամառնային ծօթագին գիշերնե-
րը՝ հայրապետին ջերմով բռնուած կը տագնապէր
իր պարկեշտ խղճմտկին վրայ, այն եռանդուն և
հսկայաձև հասակներն ալ՝ զգայուն սրտի ջերմե-
րով բռնուած՝ անշուշտ երբեմն ալիքներէն և դաշ-
տերէն անդին՝ միայն իրենց յաղթող սրտակցաց
և սիրակցաց խօսքեր կը թռցընէին. կամ ուրիշ
զինուորական համարձակութեամբ ձայներով և
երգերով կը վերաւորէին այն օգը՝ որ զՇնորհալին
ալ կը շրջապատէր: Ծանր էին ասոր մաքուր ա-
կընջաց և հոգւոյն՝ այսպիսի խառնախօսիկ ձայնք
և եղանակք. մանաւանդ գիշեր ատեն յառանձ-
նութեան հնչուած ամեն մարդկային ձայն՝ իր
ստեղծող և միայն վկայ Աստուծոյ նուիրեալ հա-
մարէր. քունէն արթընցող կամ արթընցընող
եղանակն՝ պէտք էր որ ամենէն առաջ յիշէ ըզ-
կենսատուն և շնորհողն կենաց: Այսպիսի մտա-
ծութեամբ, կ'ըսեն, շարադրեց Շնորհալին այն
աքանչելի սաղմոսախառն գիշերային և առաւօտու
երգերը՝ Յիւսոփ՝ի գիշերի, և Զարնիւ, քոյ քմ.
զոր Հռոմկլայի պահապանաց բերնէն յափշտա-
կելով Հայաստանեայցս եկեղեցին՝ մինչև հիմայ
իրեն առաջին երգ ըրած է գիշերային ժամասա-
ցութեան, և անով կը սկսի օրը նուիրել Աստու-
ծոյ. այսպէս զարմանալի փոխանակութեամբ ան-
լռելի մնաց Հռոմկլայի պահապանաց երգն, մինչ-
դեռ 120 տարի յետ մահուան Հեղինակին՝ (1292)
Եգիպտացի սպասաւոր այն հայացեալ սրբազան
բերդն ալ նուաճելով պատանձեցուցին:

Այսքան ընդարձակ ընկերութեամբ և հոգով Շնորհալին ամենէն բարձրագոյն վիճակները մինչև՝ ի ցածագոյնս կը նայէր. Տկայոց, վհուոտաց և ծառայից հետ՝ որ և է հասարակ և ամիկ մարդկան վրայ ալ ցաւակցելով, որք սովորաբար աւելի նուաստեալ՝ ի կրթութենէ՝ վարքով ալ խօսքով ալ ափեղափեղ կ'ըլլան. փափագեր՝ որ ինչպէս ամենուն համար ազօթքներ շարադրեց՝ կարելի ըլլար որ խօսակցութեան նիւթ կամ կերպեր ալ հնարէր. և իրեն հովուեալ քրիստոնեայք՝ անուամբ ալ իրօք ալ այնպէս ըլլան, Քրիստոսի հոգւոյն համեմատ վարուելով յամենայնի. « Ան« պիսի էին կամք Սրբոյն, կ'ըսէ Պատմիչ մը [1], զի « Թէ հնար իցէ՝ ոչ ոք խօսեցի խօսս աշխարհա« կան՝ բայ՝ ի գրոց, ոչ՝ ի վինաբբուս, ոչ յայլ « ուրախութիւնս ». և այս բանիս համար ալ հնարեց մեր երբեմն յիշեալ Պաճան կամ Հանէ-ընկերը. որ փոխանակ առասպել խօսիլ և պատմութեանց՝ զբօսական ընկերութեանց ժամանակը բռնեն, և օրինակ ըլլան յեսապայից ալ այնպիսի գիւտերով խափանել չափազանց զուարճաները լեզուի և ականջաց հրապոյրքը: « Զի յամե« նայնի հանճարեղ էր Ներսէս, կ'ասէ Կղեմէս վե« րոյիշեալ Պատմիչն. արար և Աւտակս խորհրդա« բարս՝ ի գրոց, և Հանելուկս. զի փոխանակ ա« ռասպելեաց զայն առացեն՝ ի վինաբբուս և՝ ի « հարսանիս »:

Ընկերութեան հետ սրատեսութիւնն ալ ունէր Ներսէս՝ ամեն կողմ և ամեն պէտք նկատելու, և խրատքանչիւր անձին յարմար և պատշաճը տալու կամ հասկընելու. միանգամայն և անխոնջ և անդադար աշխատանք, ինչպես կը յիշէ և Լամբրոնացին.

[1] Կիրակոս:

« Ի զբաղանաց երբէք չպարտեր ,
Այլ ուշ միոյն ևեթ ունէր ,
Խոկայր յիմաստս և ոչ յապէր ».

բոլոր ջանից վախճանն ալ ուղղելով 'ի ճշմարիտ վախճանն , յերկնանկութիւն մարդկան , 'ի հաճոյս Աստուծոյ . « Քանզի ըստ աստուածուսոյց գի- « տութեանն որ 'ի նմա՝ գիտէր , թէ ոչինչ է սիրե- « լի Աստուծոյ՝ որպէս զոգւոց մարդկան փրկու- « թիւն . յաղագս որոյ և Տէրն մեր և Աստուած՝ « զանձն 'ի մահ ետ . (գեղեցիկ խորհրդածէ Պատ- « միչ վարուցն և կ'իմացընէ) . վասն այնորիկ միշտ « զմերձաւորս իրատեր աստուածիմաստ բանիւք , « և ջհեռաւորսն՝ աստուածաշնորհ ձեռացն գծա- « գրութեամբ օգտեցուցանէր հոգևոր խրատու . « քանզի ուր զշնորհալից նամակս նորա ընթեռ- « նուին՝ որպէս յաստուածահրաշ գիմաց նորա « պատկառէին : Եւ յամենայն ժամ առանց ձանձ- « րանալոյ յօժարութեամբ և աստուածային սի- « րով տայր հարցանողացն զպատասխանիսն բա- « նիւ և գրով [1] . զժուարահաստ և զտարակու- « սական իրան հեշտալիս և քաղցրագոյնս մեկնէր , « և մուծանէր յիմանալի ոգիս և 'ի միտս խնդրո- « ղացն , ըստ 'ի վերուստ առատապարգև տուե- « ցեալ նմա շնորհին : Եւ ուրախ առնէր զամենե- « սեան առ հաստարակ ըստ իւրաքանչիւր պիտոյից՝ « 'ի հոգեձնեալ և 'ի միաբուռլս շնորհաց աղբե-

1 Լամբրոնացին ալ կ'ըսէ.

« Հարցմանց յոգունց պատասխաններ
Զտարակուսանսըն լուծանէր » :

Արդէն տեսանք զանազան բանասիրական հարցմանց տուած պատասխանները և մեկնութիւնները :

« ըէն : Զմեղուցեալն խրատեր միշտ և յանդիման-
« ներ , և քաղցրագոյն և ողջ բանիւ որսայր 'ի
« կեանս . և զաւրբս և զառաքինին յորդորեր
« առաւելուլ 'ի գործս բարիս » :

Մեծ և տաք սրտի գործ էր այսպէս հեռաւոր և մերձաւոր կարօտեալները և տարակուսեալները միխիթարել, խրատել և կանգնել. այլ մեծագոյն և ջերմագոյն էս սրտի գործ էր՝ բաւականները լիացընել, լեցուններն առատացընել, կորոյները զօրացընել, միով բանիւ ըստ աւետարանական առակին՝ ունեցողին շնորհքը կրկնապատկել և աճեցընել. և այսպէս կ'ընէր Շնորհալին՝ իր աննախանձ և բարեսէր դիտողութեամբը.
« Թէ իմանայր ուրեք թէ իցէ ոք յերիցանց կամ
« 'ի սարկաւագաց՝ որ ունիցի շնորհս և սէր 'ի
« հոգևոր գործառնութիւնն, վաղվաղակի առա-
« քէր և 'ի ձեռն գրոյ առ ինքն կոչէր , և էս ա-
« ռաւել յորդորէր 'ի նոյն. և ուսուցանէր և
« խրատէր յարաժամ : Եւ յոյժ սիրելի էր նմա
« այր՝ որ ունէր նախանձ և ողջախոհութիւն 'ի
« բարիս և շնորհս աստուածայինս. զորս թէպէտ
« և հոգևորքն ձեռնացուցանէր՝ այլ և մարմնա-
« կանօք ոչ թողոյր անփարթամ : Եւ որպէս լը-
« ծակցեալ Աստուծոյ՝ զպատուական շնորհօք 'ի
« նմանէ՝ և ինքն պատուէր , սիրէր և յարդէր ան-
« նախանձ մտօք, որպէս հայր բարի գթած և որ-
« դեաէր » : Պատմչին գեղեցիկ յանդգնութիւն ընծայէ՝ ներբաս ալ արժանաւոր արձնութեամբ և չանքով կատարեց. աստուածայինն լծակցութիւն. այսինքն է արարչական և նախախնամել տեսչութիւն և ձեռնտուութիւն մը ամենայն գործի և վիճակի մարդկան, բարոյ և չարի, մեծի և փոքու, ըստ իւրաքանչիւր նպատակութեանց կամ պատաւելութեանց : Այս Շնորհալւոյ հետ զուգեալ հրաշափառ Լծակցին ահեղութիւնը վա-

բագութեըս համար՝ ուրիշ հրաշալի անուամբ մը ըսենք, Յիսուսի լծակցութիւն. զմարդացեալ Բանն նկատելով, որ երբեք Աստուած՝ զօրութիւն աստաւ, և երբեք մարդ՝ կարեկից եղաւ մարդու. ըստ այսմ և իրեն նմանութեան չանացող հովիւք և հայրապետք, ուր որ աստուածային զօրութիւն չէին կըրնար բանեցընել, քրիստոսեան և մարդկային ցաւակցութեամբ կ'օգնէին ընկերաց. ընդ որս և մեզ Ներսէս. որոյ գթութեան և կրեկցութեան՝ շատ և մեծ գործոց նշաններ կուտան մնացեալ իր մեկ քանի գրուածքն ալ, զորս արժան է հօս յիշատակել:

## ԻԴ.

*Միխրտրատականք Հիւսանդաց, Սգաւորաց, Տարակուսելոց. — Ուրուկք եղեսիոյ. — Իշխանն արեւելեան. — Յովսեփ Նոր վկայ:*

Մարդուս մարմնաւոր կենաց տատապանաց մէջ՝ յայտ է որ յետ աղքատութեան, զոր վերը յիշեցինք, և անկէց աւելի կսկծալիքն՝ են հիւանդութիւնք, և վերջին դիպուածն՝ մահ. այս երկու առթից նկատմամբ ալ մեկմեկ միխիթարական յիշատակ ունիմք ի Ներսէսէ: Առաջին առիթն էր հիւանդութեանց մէջ ամենէն խորչելին, մանաւանդ ի հին ժամանակս, բորոտութիւնն. զոր և քրիստոնէապէս անգամ երբեմն հալածէին իրենց բնակութեան սահմաններէն. ինչպէս մեր ազգին պատմութեան մէջ ալ յիշուի մանաւորապէս Մեծին Ներսիսի օրերը. « քանզի

« Բորոտք հալածեալ լինէին, կ'ըսէ Խորենացին
« (գ. ե.), եւ պիղծ համարեալ յօրինաց. և
« զՈւրուկա փախստեայս առնէին, զի մի՛ ի նոցա-
« նէ յայլս փոխեսցի ախտն. որոց դադարք՝ անա-
« պատք և ամայիք, և ծածկոյթ՝ վէմք և մացառք.
« ոչ յուժէք գտանել միմեանս թշուա-
« ռութեանցն ». որոց համար սուրբն Ներսէս շի-
նել տուաւ հիւանդանոցներ՝ գեղերէ հեռու և
ապահով տեղեր, ուր Ո՛չիանոց կամ Օչիանոց ը-
սուեցան, և երբեմն յանցաւորները կը խաբէին
այն տեղ ծառայելու: Աւրդ իրմէ ուղի գար վերջ
իրեն բազմապատիկ նմանակեցին՝ մեր Շնորհալւոյն
աւենն ալ՝ մերձաւոր և երբեմն ողբացեալ Եգե-
սիոյ կողմերը կային այսպիսի ուրուկք կամ բո-
րոտք, որոց մարմնոյ ցաւէն աւելի կսկիծ կու-
սային՝ մարմնով առողջքն և մօտք սակաւ բնակիչք
տեղւոյն. ըսելով, Թէ Աստուած զձեզ երեսէ Թո-
ղեր է. և իրենք ալ կը խորշէին, և հեռանոսաց
պէս կը զզուէին և հեռացընել ուզէին զանոնք: Տա-
ռապեալքն և տրամեալք անապատ և հիւանդա-
նոցէ ապահովագոյն և աւելի բժշկական տեղ մը
գտան, և միակ յարմար տեղ.— Շնորհալւոյ սիրտը:
Ցաւերնին ցաւագին բանիւք բացատրեցին գրով,
և խաւրեցին այս Միջագետաց և Հայոց աստուա-
ծապարգև այցելուին. յայտնեցին իրենց լսածը
և տարակոյսը, և կը սպասէին անոր արդարախօս
բերնէն կամ գրչէն լսել Աստուծոյ վճիռը: Զկըր-
ցաւ բարեսիրտ հայրապետն մեր առանց արտա-
սուաց կարդալ և պատասխանել անոնց խնդիռ-
Թեան վրայ. և փութացաւ Թէ ոչ զմարմիննին՝
այլ սրտերնին բժշկել և սրբել. մեկէն սկսելով
գրել Թէ այդ ամեն ցաւերն՝ պարզապէս « է յան-
« քնընելի դատաստանացն Աստուծոյ. այն՝ որ
« չափով և կշռով բաժանէ իւրաքանչիւրումն
« զօգտակարն, Թէպէտ և մարդիկ ոչ իմանան,

« զառողջութիւն և զխոստաժէտութիւն... որ.
« պէս և ձերդ ակարութիւն և անբուժելի ցաւք
« մարմնոյ՝ ոչ այլ ուստեք է՝ քան թէ 'ի հրամանէ
« կամացն Աստուծոյ: Իսկ այնոքիկ՝ որք խոովե-
« ցուցանեն և զգուեն զձեզ անյուսութեան բա-
« նիւք՝... անտեղեակ են իրաւանց Բարձրելոյն,
« և արժանաւորս պատուհասի մեղանչեն. Թէ-
« պէտ և ոչ իմանան որ ըստ բարեկամացն Յո-
« բայ՝ շարժէ 'ի վերայ ձեր սատանայ զայնպիսիսն,
« զի ոչ միայն մարմնով՝ այլ և մտօք ևս տանջեսցէ
« զձեզ». և այլն: Ահա յարմար գեղեցիկ օրինակը
գանելով՝ մեկ կողմէն իրենց ցաւոց և համբերու-
թեան զՅովբ կ'ընծայէ, միւս կողմէն զկրենք մե-
ղադրողներն ալ կը նմանեցընէ զնա մեղադրող
անխոհեմ բարեկամներուն. փոխանակ որ պարտք
էր « ամենայն մարդոյ որ առողջ են մարմնով՝ ձե-
« ռընտու լինել ակարացն, և ոչ հակառակ նո-
« ցին ». այլ այն տգիտաց ըրած մեղադրութիւնն
և պաղութիւնն ոչ այնքան իրենց կը դպչէր՝ որ-
չափ Աստուծոյ օրինաց և սիրոյ. որով և Աստուած
անոնց ըրածին չհաւնելով՝ կը պաշտպանէ իրեն
հիւանդ և ակար արարածները. ինչպէս որ ատոնց
օգնողներուն և դարմանողաց ալ վարձք և թոշու-
թիւն մեղաց կը շնորհէ: Դուք ալ, կ'ըսէ, եթէ
սիրով համբերէք ձեր ցաւոց՝ մարխիրատաց պէս
վարձք կ'առնուք. միայն հաւատք ունեցէք յԱս-
տուած, և մի շփոթիք ձեր հիւանդութեան վրայ.
Պօղոս առաքեալ իր քրտան թաշկինակը ղրկե-
լով հիւանդները կը բժշկէր, սակայն ինքն իր ակա-
րութիւնը չէր կրնար փարատել: Իսկ եթէ ըսեն,
Թէ ինչու Աստուած այսպիսի ցաւեր կու տայ
մարդկան. յիշեն մեր նախահայրն, որ հեշտու-
թեան ցանկալով՝ ցաւոց և մահուան հատաւ. իսկ
նորն Ադամ՝ Քրիստոս՝ նեղութիւն և վիշտ կրնալ-
ուվ՝ երկինից երջանկութեան ճամբան բացաւ.

« և ընթացողացն զհետ Քրիստոսի այսպիսի ճա-
« նապարհաւ, ուր լինին օթևանք ի յերեկոյա-
« նալ կենցաղոյս. — ոչ ի յարկս համապատիւ
« ծառայից, այլ ուր Տէրն է ամենեցուն ». և այլն:
Ամեն քրիստոնէի ալ հարկ է որ « անձուկ ճանա-
« պարհաւն և նեղ դրամբն մտանեն յերկինս ».
այս ճամբան և դուռն են՝ կամ մաքուր կուսու-
թիւն, կամ ճգնուելիւնք. և որովհետև մարդիկ
չեն ընտրեր այս բաներս, Աստուած իր կողմանէ
կը խաւրէ անոնց աղքատութիւն կամ հիւանդու-
թիւն. որպէս զի մարմնով նեղուելով հոգին զօ-
րանայ և ապրի. վասն զի շատ հեղ առողջութիւնն
և յաջողութիւնն են պատճառք մեղաց և կորըս-
տեան: Ուրեմն ով որ յօժարութեամբ և համբե-
րութեամբ ընդունի իր տառապանքը՝ Աստուած
վարձու արժանի կ'ընէ զինա. իսկ ով որ արտնջայ՝
թէ մարմնոյ նեղութիւն կը կրէ, թէ հոգւոյն
վարձքը կորուսանէ: Ընդ հակառակն մարմնով
յաջողածք՝ շատ հեղ միայն ներկայ կեանքը կը յի-
շեն, Աստուած ալ զանոնք կը թողու իրենց ուզա-
ծին, որ եթէ անդին անվարձք պիտի մնան, այս
աշխարհիս մէջ բան մը վայելեն: Աստուծոյ մէկ
կամքն ալ այս է, որ առողջք կարենան օգնել հի-
ւանդաց. անով իրենք ալ կարեկից սիրտ կ'ունե-
նան, զգաստութեամբ կը վարուին, և ողորմածաց
երանութեան և վարձուց արժանի կ'ըլլան. որուն
արժանի ըլլալ մաղթէ Շնորհալին. « ամենեցուն...
« ողք ողորմելի ունին զկենցաղական զայս կեանս,
« և ողք ողորմութեամբն որ առ նոսա՝ գնեն զար-
« քայութիւնն երկնից ». և այսպէս կնքէ ըզ-
թուղթը:

Երկրորդ առիթն էր մարդկային վիճակի վեր-
ջինն, դէպք կամ հարկ մահուան, որոյ վասն ա-
ւետարդ է մեզ հօս խորհրդածելն. այլ ոչքան դը-
ժար է կանոնաւորել և հանգարտեցընել ծնողն

« մը միտք և սիրա՝ « Վան որդւոյ Իւրոյ տարա-
« ժամ մեռելոյ »: Ծնողք մը, իշխանազուն մը
« արևելեան », որ է ըսել՝ ի Մեծ Հայոց, իր նո-
րահաս խարտեաշ պատանին կորուսեր էր, և ոչ
կամէր կամ ոչ կարէր մխիթարել. Թուի Թէ լինք-
նին գրեց առ մեծագուժ Հայրապետն մեր, կամ
՝ի ձեռն ծանօթիկ խմացուց՝ իր երկրաւոր անդար-
ման կորուսատը: Շնորհալին՝ի հարկէ մխիթարա-
կան բան մը պիտի գրէր, (և ո՞ գիտէ որքաններ
գրած է.) և գրեց 116 տող այբբենիւ սկզբնաւո-
րեալ ուղղաբեան գեղեցիկ չափաբան Թուղթ մը,
որուն շէնքն և յանգաց փոփոխութիւնն ալ կ'ա-
ւելցնէ խմաստից ազնուութիւնը. որք սովորական
ըսուած և լսուածներ բաներն ալ անսովոր զօրու-
Թեամբ և հասատատութեամբ կ'ազդեն սրտի, և
մէկէն կը վերացընեն միտքը վեմ՝ և քաղցր սկզբ-
նաւորութեամբ բանին.

« Անտես է յոյն աստուածային...
Բայց որք բանան զաչըս սըրտին՝
Անկնք հաւատով՝ի նա հային.
Գանձեն զանխիւթ գանձ՝ի հոգին
Եւ ոչ ցանկան նիւթականին.
Դիտեն զաշխարհըն զայն վերին,
Ուր ոչ է սուգ ւոչ արտմութիւն:
Եւ գու Թէ զմեզ մեղաց մըթին՝
Մաքրես յոգւոյդ աչաց բըբին,
Զմանուկ տըղայդ քո զբաղձալին՝
Անշուշտ ոչ ողբաս կակըծագին ».

վան զի պիտի տեսնես որ երանելեաց մէջ՝ ընդ հրեշտակաց և ընդ սրբոց « ի գիրկըս Հօրն է գը-
գուեցին ». ապա իրաւամբք կ'աւելցընէ

« Խընդա մեծաւ այսու յուսով,
Սթափեա 'ի սպոյդ ըսփոփելով։
Ծանիր զբնութիւնըս մեր մարմնով
Մահկանացու՝ անգարձ վըճռով ».

և այս ցաւագին վճռոյն ցաւագին հարուածնեբն օրինակ կը բերէ, սկսեալ Աբելէ և յիսահակայ, և եօթն զաւակէ չարաչար տանջանքով աջքին առջև զրկուած մայրն Շամունէ. ապա յիշէ և զԲրխատոս

.... « Զկեանքըն տապանով
Ընդարգիան մահ մեռանելով »,

որով և հասարակաց յոյս տուաւ անմահական կենաց, որով պէտք է խնդան արդարք, մեղաւորք և անյոյսք միայն լան. իսկ քո

« Սուրբ արդային՝ ոչ լալոց ձայն՝
Այլ երգ խընդման վայելչական։
Վան որոյ զգոյն ըզախտական
Սեաւ ըզգեսուիդ՝ 'ի յանձնէդ հան.
Տրտմական կիրքն առցեն վախճան,
Դառն արտասուք ձեր և կական։..
Ցոյց զսկամայդ՝ կամայական,
Տալ սահմանուլն յօժարական։
Խիւծեալ մարմնոյն որ 'ի տապան՝
Ծանիր զհոգին յերկնից խորան։...
Եթէ յոյս յոյս՝ ունիս հանձար՝
Լինիս հոգւով դու անմոլար.
Սըրտիդ կըրակն որ կայ 'ի վառ՝
Փոխի 'ի ցօղ զըւարթարար։..
Կենդանին եւ կենարար՝
Այն որ ձայնիւ կոչեաց զՂազար,

Ա՛ռ քեզ գոչէ առաւուածաբար,
Լուծցէ զառագ քո եւ զաչխար։
Թագաւորըն կամարար
Ո՛ր զՄարեմանան ուրախ արար,
Ուրախութիւն քեզ անվըճար
Պարգեւեսցէ առաւուածաբար։...
Կառաց մահուն մարմնառատար
Վարշամակին այն մահարար՝
Ո՛ր քո յուսոյն անյուսարար
Եւ հաւատոյդ ծածկոյթ արար,
Առաւեա նոցին և գանիւ հար,
Զի փախիցեն ծառայաբար »։

Ահա վերջին պարբերութեան մէջ յիշեալ կառաւն մարմնառատ, վարշամակն մահարար, որք երկրաւոր յուսոյ են անյուսարար, այլ հաւատոյ ծածկոյթ կամ քօղ մը, թէ բանաստեղծութեան, թէ արուեստական փափկութեան և թէ քրիստոնէական քաջութեան միացեալ յաղթարշաւ մ՚են, զոր կանգնէ Շնորհալին մանկակաւ գերեզմանին վրայ, և քիչ մ՚ալ քաջալերը տալով լռէ. թէ և անշուշտ ինքն ալ քանի մ՚արուեստաց կաթլով կնքելով թուղթը. և ոչ անպատճառ յիշէ զօրինակ մեր և զԱռաւուածամարդն Քրիստոս՝ յոյս, որ

« Արուեստաւելովքն մարդկաբար...
Զմարեմանան ուրախ արար »։

Ամեն ծաղիկ Եդեմս հաւասար ծաղիկ, այլ ոչ ամենքն ալ հաւասարապէս կը խամրին. ոմանք ինչուան յաշուն և ի ձմեռն դիմանան, ոմանք ի նոյն ի գարնան ծնանին և մեռանին, կամ ի բնէ դիւրաթառամ և շուտաթափ ըլլալով, կամ բնութեամբ մը մահանալով. և մեծ մաս մ՚ալ այն

վառվռուն վարդերէն և վայրի շուշաններէն՝ որով-
սիրելեաց և սրբոց սեղեակք զարդարին, մինչ հա-
ւատարապէս կանգնին և փայլփայլին « այսօր,
վաղիւն 'ի հնոց արկանին », անպիտան խոտոց
պէս, ըստ առաւելածայնի խորհրդածութեան
Ջրիատոսի. և մարդ աւելի սոսկ վրայ կը ցաւի,
քան անոնց՝ որք կամ երկար ատեն իրենց բնոյն
և տրնկին վրայ կենալով, կամ զարդարանաց պաշ-
տօնը կատարելով վերջապէս իբրև ծերացեալ
և չորացեալ 'ի բաց ձգուին: Այսպէս է և դեռա-
բոլոր ոսկեծալուկ պատանեաց մահն՝ մեր առջև.
այսպէս էր Աբեղեան իշխանին ողբացեալն և Շը-
նորհալւոյ մխիթարեանն: Այլ ո՞րքան աւելի կսկը-
ծալի է վիճակ կրողին, և գժուարին՝ պաշտօն
մխիթարողին, եթէ այսպիսի մահու որան կամ
զոհելին, պատանի մը երիտասարդ մը, իր կարճ
հորիզոնին վրայ այն ինչ բարձրացեալարևը՝ ինքնին
նշմարէ շուա շուա ցածնալ, քիչ առենէ ախոր-
ժակ կարմրութեամբ մը մանելու և այլ չերևելու
համար: Ո՞րքան կարևոր է 'ի մանկութենէ ան-
մահութեան խմաւոյով անանիլ, և աշխարհիս կեր-
պարանաց վրայ աչքը նոր բանալու և բերելու
առեն՝ գարձընել ատեպ և յԱնտես յոյսն այն առ-
տուածային, որ պէտք է ըլլայ ամենայն հաւա-
տացելոյ առաջ ուղեցոյց յանտոյտ և անշաւիղ
ծովու աշխարհիս: Իսկ ինչ ըսենք այն նորահասակ
երիտասարդին՝ որ ոչ առողջութեան պակասութե-
ունի և ոչ մարմնաւոր ընչից կարօտութիւն. սիրան
արթուն և եռանդուն, սիրելիք՝ և առյդ սիրելիք
ոչ սակաւ. և թէ ուզէ՝ յուսալի է մարդկօրէն կե-
նաց ղբօսանք և օրինաւոր հանգիստ մ'ալ վայե-
լել. և սակայն ինքն ալ իրեն ամենէն մեծ, ամե-
նէն մօտ, ամենէն բուռն առարկայն կը տեսնէ ըզ-
մահ. և մահ՝ ոչ դիպուածական կամ յանկարծ,
ոչ 'ի կակուղ անկողնի և 'ի կակղագոյն բարձս և

բաղուկս ծնօղաց և հարազատաց. և ոչ խակ 'ի դաշտ զինուց և փառաց. այլ մահ ոխերիմ, մահ աստեղութեան, մահ տանջանաց՝ որք թերևս յերկար և դժնդակ ալ պիտի ըլլան: Զայսպիսի նուաստական երեխայրի մարդկութեան՝ ո՛վ միսիթարե և ինչպես: — Աստանկ անակնկալ դիպուածք ալ պատահեցաւ Շնորհալւոյ՝ իր կենաց վերջին տարինեւրուն:

Մեծ Հայոց վերջին մայրաքաղաքին՝ Դուինայ քով Նորշէն գեղին մէջ խառն բնակէին Հայք և Պարսիկք, երբեմն սիրոտք կողմանց, որ այս առեններս ալ մէկ մը Վրաց ձեռքը կ'անցնէր, մէկ մ'այլ այլազգեաց, ինչպես և հիմայ: Էպու Պէքր անուամբ պարսիկ տղայ մ'ալ իր հասակակից Հայոց հետ պզտիկուց խաղով և ընկերութիւ վարժելով՝ անոնց զգուշաւոր բարքը և կրօնքն ալ սիրեր. մանաւանդ երբ ծնողքն զինքն իրեն կրօնակցաց դպրոցը խաբելով՝ տեսաւ հօն տպականերէ բարուց գործեր, բոլորովին զզուելով՝ կը փախչէր, ժամանակը քրիստոնէից հետ կ'անցընէր, անոնց եկեղեցիները կ'երթար, կը տեսնէր հանդէսները, կը լսէր աղօթքնին և երգերնին: Վերջապէս սկրտուելաւ ալ, և քիչ քիչ սկսաւ համարձակիլ ծնողացն ալ իմացընել, որոնք որչափ ալ ծնողական գթով բոլորովին չընդդիմացան ալ, հայրն սակայն կը նեղէր զորդին, շատ հեղ ալ կը ծեծէր. և օր մը յայտնապէս տեսնելով զինա որ եկեղեցւոյ մը դիմաց խաչն երկրպագութիւն կ'ընէր, դանակը քաշեց, և պիտի սպաննէր զորդին եթէ մայրն լեղապատառ վազ չհասնէր. միայն չարաչար ծեծով մը ազատեցաւ այս անգամ ալ պատանին, որ սկրտութեամբ անունը փոխեր և Յովսէփ կոչուեր էր, այլազգիք ալ Եուսուֆ կ'անուանէին: Մէկ երկու այնպիսի ծեծ ալ՝ առանց սըրոյ՝ կըընային զինքը մեռցընել: Անձրկած մայրն՝

արշափ ալ չէր հաւաներ որդւոյն ըրածին՝ երկանը պէս անգութ չէր. ծածուկ աղաչեց եկեղեցւոյ երիցուն որ ձար մը գտնէ զաւակին ապրեցընելու. ուրիշներն ալ խրատ կու տային Յովսեփայ՝ որ գոնէ հօրն առլև ծածկէ իր լուսաւոր կրօնքը և յայտնապէս չդաւանի քրիստոնէութիւնը: Ան ժամ մը այսպէս ըրաւ պատանին. այլ խղճէ տանջուելով՝ աւելի քրիստոսասիրաց խրատու լսեց, և Թողլով ծնողաց տունը՝ նոր Վահանայ Գողթնացոյ մը նման՝ գնաց ուխտաւորի պէս այն աեղուան Հայոց աւեն երևելի վանքերը պտըտեցաւ, սկսեալ՝ի Թեղենեաց Սիւնեաց երկրին. անկից անցաւ այն գաւրուն հռչակաւոր զուգակ մենաստանաց, Հաղբատ և Սանահին. ասոնց մօտ է Մակարայ Վանք մ'ալ, ուր՝ տեղւոյն բնութեանն յարմար՝ աւելի անզբաղ և ներանձնացեալ կեանք սիրողք կ'ապաստանէին. հօս գտաւրեցաւ Յովսէփ ժամանակ մը, ձգնաւորական խաւրաշնաղեստութեամբ և վարքով, սովրեցաւ հոգևոր գրքեր և աղօթքներ հայկական լեզուաւ: Յետոյ միտքը դնելով որ իր երկրին մէջ գուցէ պայթակղութիւն տուած ըլլայ՝ աաեն մը իր հաւատքը ծածկելովը, կ'ուզէր այս խիղճը սրբել. այլ անըստոյգ ապագային ալ մտածելով՝ հարկաւոր սեպեց նախ հոգին աւելի զօրացընել՝ արժանաւորաց աղօթիւք և խրատուք, սրբոց բարեխօսութեամբ և Քրիստոսի անօրէնութեանց և չարչարանաց յիշատակօք: Ելաւ նորէն պանդխտաբար պտըտեցաւ անուանի ուխտատեղիները, ամենէն անուանի տեղը՝ Երուսաղէմ ուղղեց ճամբան: Բայց այս ճամբուն վրայ և այն առաջին և վերջի ուխտատեղեաց միջոց՝ ժամանակին և մեր աղքին անմոռանալի ուխտատեղի մ'ալ կար, ուր իբր կղզիատատ քարանձաւի մը ծայր մեր արծաթատատ աղաւնին իր բոյնը դրած էր, ընդ մէջ երինից և երկրի.

անկարելի էր զանց ընել. դիմեց Յովսէփ՝ ի մեծա-
ԼԱ Գիւրիա Շնորհալւոյն, յատաստանարանն հատա-
րակաց, ուր նոր պրծուցեր հատուցեր էին և մեր
քաջարծուի Թորոսի ձագուկ Ռուբէնը (325):

Կըրնայ դուշակուիլ թէ ի՛նչ տաքութեամբ
և պնդութեամբ փարեցաւ Եերսես զՅովսէփաւ.
ի՛նչպէս քաջալերեց, մխիթարեց զօրացուց և
զուարթացուց այն եռանդուն և տագնապեալ
հոգին. և վերջապէս կնիք իր խօսից զայս դրաւ,
որ եթէ իբրև յեռին փորձ իր հաւատոց հաստա-
տութեան՝ վկայական մահու ասպարէզ մ՚ալ բա-
ցուի իրեն, Աստուած յերկինից իրեն զօրացուցիչ
և ընդունող է, և ես ալ յերկրի ըսաւ « Կարգե-
« ցից զքիշատակս քո ընդ առաջին մարտիրո-
« սին »: — Այսպիսի աւետեօք և առհաւատ-
չեայ անմահութեամբ՝ թաւալ գնաց Յովսէփ, ա-
ւելի տոգորուելու Անմահին մահուան Թատերայ
մէջ. երկու տարուց չափ չըշեցաւ կեցաւ յերու-
սաղէմ և անոր ուխտատեղիքը. ապա կատարեալ
զօրութեամբ հոգւոյ գարձաւ՝ ի Հայս. և ձամ-
բուն վրայ հանդիպած ուխտերն ալ անայցելու
չթողուլ հասաւ իր հայրենիքը, ի Դուին, որ այ-
լազգեաց իշխանութեան տակ էր, ինչպէս յիշե-
ցինք: Իր անգութ հայրն մեռեր էր. մայրն և եղ-
բայրը գտաւ, խմացուց իրենց՝ որ այնուհետև
վիաքը գրած է հօն համարձակ պաշտել զքրիստո-
նէութիւնը, ինչ ալ որ ըլլայ, և զիրենք ալ՚ի նոյն
յորդորեց: Անոնք չհաւանեցան, բայց իրենց ա-
րիւնը ապրեցընելու համար՝ նորէն խրատ տուին
որ հեռանայ. մեծ էր մօրը տագնապն, բայց դար-
ձեալ միխիթարուելուն մ՚էր հեռաւոր պատակ
մ՚ալ ունենալը: Սակայն Յովսէփայ առաքելու-
թիւնն անփոխոխելի էր. կենսատէր ազգականքն
վախնալով որ քրիստոնէի մը իրենց մէջ բնակիլն
իրենց ալ վնասու և մահուան պատճառ ըլլայ,

կերպով մը խնայուցին Դուննայ ամիրային, որ ա-
նուամբ կոչուէր Սատրի-Ձիհան, Աչխարհի տէր,
այլ իրօք կորուսիչ կենաց եղաւ մեր երիտասար-
դին: Կանչեց զնա բնակարանը՝ որ հարուստ Հայու
մը տունն էր. Յովսէփայ սուր աչքն տեսան հօն
քրիստոնէութեան գերագոյն զարդը, խաչն մը
նշան. մեկէն խռնարհեցաւ երկրպագութեամբ,
և ապա բարև տուաւ ամիրային. որ բարկանալով
այսպիսի յետակարգութեան՝ սկսաւ հայհոյել մեր
սուրբ նշանը. իսկ վկայն հեղութեամբ կ'ըսէր.
« Մի զայդոսիկ բանս, ով իշխան, խօսիցիս՝ ի վնաս
« անձին քումմ. քանզի ծագելոց է նա յաւուրն
« կատարածի՝ առ՝ ի ցնծութիւն լուսաւորելոցս
« հաւատովքն Յիսուսի և՝ ի խաւար դատապար-
« տութեան՝ որոց սմօթ համարին զմեծ սիրոյն
« Աստուծոյ նշանակ »: Այս խօսքիս փոխարէն
եղաւ ծեծ և բանտ. ուսկից հանուելով և երկրորդ
անգամ փորձուելով՝ խոստմամբք և սպառնալեօք,
և նոյնպէս անվախ գտուելով՝ ալ աւելի ծեծուե-
ցաւ ծառի մը կապուելով: Իսկ երրորդ անգա-
մուն այնքան զայրացաւ Սատրիձիհանն՝ մինչև
սուրը քաշելով կ'ուզէր ինքնին սպաննել զնա.
բայց ծանօթք վկային կաշառքով բռնեցին ձեռքը.
և շատ աղաչեցին Յովսէփայ՝ որ իբրև յարմար
աւելիւ հեռանայ այն տեղէն: Հեռացաւ նա քիչ
մ'ատեն. բայց ամէն մը յետ դարձաւ, « որպէս
« ծարաւի եղջերու, կ'ըսէ ներբողիչն, ՚ի կենդանի
« փութալով ապբիւր՝ յորմէ միանգամ և երկիցս
« լցեալ ևս զպատաքուծն ծարաւոյ ». և նորէն
Դուննայ մզկիթին քովէն անցնելու ատեն՝ դէպ
յարևելք աղօթեց համարձակ, և գնաց ամիրային
ապարանից դրան քով կանգնեցաւ:

Հարցուց ամիրան թէ ինչո՞ւ եկեր էր, ինչ կ'ու-
զէ: — Եկեր եմ խնդրելու, պատասխանեց, որ
իմ աղատութեանս համար գեղացւոց վրայ ձգած

տուրքը վերցընես, և զիս խղճէս ազատես, որ համարձակ կարենամ կրօնքս գաւանիլ: Առջինէն աւելի սաստիկ զայրացած ամիրային՝ դուրս ելաւ և աւելի չարաչար ծեծել տուաւ, մինչև կիսամահ մարած ձեռաց վկայն. զոր վերցընել, բանտել և շղթայել տուաւ. ապա շատ օրեր, և շատ և պժգալի տանջանօք տանջել. երբեմն իր խարազան զգեստը վիզն անցընելով՝ ոլորել և քաշկըռտել. երբեմն քիթը ծակելով և ուղտու բերանակապ անցընելով քաշ բերել քաղքին մէջ. երբեմն կակծացուցէ նիւթեր՝ աղ և բորակ և մանանեխ՝ ականջէն թափելով: Իրեք ամիս այսպէս տանջելէն ետև՝ թուրքաց մեծ կոմիսակալ իշխանն եկաւ՝ի Դուին, և լսելով եղածը՝ ուզեց անձամբ տեսնել և գտնել: Գրատան մը վրայ բեռցընելով բերին կոշկոճեալ վկայն. որ մարմնով կիսամեռ՝ հոգւով իբրև անմահ՝ տուաւ պատասխան գտողին ամեն բանից և ջանից. թէ և սա հեզութեամբ կ'ուզէր որսալ զվերկայն, խոստանալով և իշխանութիւն և կալուածք պելերու: Եւ երբ զամենն ալարկամարհեց վկայն, ամիրապետն կամ սուլտանն նեղանալով ըսաւ. Այսչափ մարդիկ, զոր և իշխանք և աղքք ինծի կը հնազանդին, միայն զքեզ պիտի չկարենամ հնազանդեցընել: Յովսէփ ալ պատասխանեց. Հապա ես որ այնչափ հաւատամք ունիմ քրիստոնէութեան սուտգութեան, և աչօքս տեսայ Երուսաղէմ Քրիստոսի անօրէնութեանց տեղիքը, և անկէ առաջ և ետև անոր վկայող մարգարէից և նահատակաց գերեզմանները, զայս ամեն թողլով՝ քեզի և կրօնիդ հաւանիմ: — Իմացաւ իշխանն որ անյաղթելի էր գիմացը եղած նահատակն. մահուան վճիռ տուաւ հեռացաւ: Տանելու ատեն գահիճքն վերջին հարուածը չտուած՝ շատ հարուածներ ալ կուտային. իսկ իր եղբայրն վերջին փորձով և սիրով Յովսէփայ ոտքը պըղըծելով կ'ապաչէր որ ապ-

բեցընէ զինքը. յայտ է թէ վատ խօսքով մը. այլ արիասիրտ նահատակին՝ մերժեց, և հեռացուր ինձմէ, կ'ըսէր, « և մի խոչ ընդ ոտն եղանիցես քարո « ւոյ առաջարկութեանս »: Այն միջոցին դահճապետին՝ կուշտէն զարնելով ինչուան փորը հասուցած սուրը. մինչդեռ ուրիշներն ալ ուրիշ կերպով կը զարնէին. և յետին անգթութեամբ ոչ միայն գլուխն ալ բաժնեցին մարմնէն, այլ և զմորթն՝ ի մարմնոյն: Անքրիստոսասէր բայց եղբայրասէր հարազատն նորէն վրայ հասնելով, հաւատացեալ մարմինը թաղեց անհաւատօրէն աւազախառն հողոյն տակ, հօն ուր որ նահատակուեր էր, քաղքէն քիչ մը դուրս. և Թողուց հեռացաւ: Նոյն գիշեր սաստիկ որոտմունք եղան ամպոց, և լուսոյ փայլակք այն կողմերը. յորմէ շփոթած այլազգիք՝ գացին իրենց մեծ կարդացողին հարցընելու, նա ալ երկդիմի պատասխան մը տուաւ, թէ այն վկային համար է. զոր ոմանք՝ ի պատիւ՝ ոմանք՝ ի պատիժ մեկնեցին: Թերևս յետ Ս. Դաւթի Դունեցոյ՝ որ սոյնպէս յօտար կրօնից գքրիստոնէութիւն ընդուներ էր, Դուին այսպէս նահատակութիւն չէր տեսած. անոր համար կ'ըսէ Պատմիչն. « Ի վաղնջուց երաշտացեալ երկիրն Ա յրարատոյ՝ ի ցօղոյ նախագունիցն մարտիրոսաց՝ իւրով անագանահոս ցօղաւորեալ արեամբ՝ զովացուցեալ վերստին, յորմէ և ինքն ընձիւղեցաւ ուղիղ պաղաշատ, կարմրագունի նմանեալ խնձորոյ՝ ըստ վկայական արեանն ներկուածոյ. Թէպէտ և ի փուչս բռնեալ անատառախիտ ամբարչացն արմատոց, ոչինչ նուազ գովեստիւ արժանաւորի քաջաբերութիւն անդստանին Ա յրարատոյ ». ուր ատոր նման շատեր ալ յայլակրօնութենէ քրիստոնէացեալ և նահատակեալ են, կ'ըսէ, որպէս Թէ փոխուելով « ի փշոյ խաղողէ և ի տատասկէ Թուզ, Թէպէտ և յանդգնու

« Թիւն է ընդդիմաբանել սերունեանն հրամանի,
« այլ զի վան ընդդիմացող կամակորացն զայն
« հրամայէ՝ անաւատ է վճիռն »: — Սարգիս ա-
նուամբ մէկ մը (այսպէս կոչուէր և այն ձգնաւոր
անձն՝ որ նախ ընդունեցաւ զՅովսէփ ի վանքն
Թեղենեաց) վերուց վկային մարմինը, և դէպ ի
Գեղամայ լեռները հանելով հին Գառնի քաղաքին
հիւսիսակողմը և Աղբի վանից մօտ բարձրադիտակ
և հին Հայոց – Թառ վանքը տարաւ հանգուց պա-
տուով. ուր իր նահատակութեան պատմութիւնը
գաղափարողն՝ կ'ազազակէ, գրուածքին եզերքը
գծելով. « Ո՛վ սուրբդ Յովսէփ, մեծ մենաստանիս
« Հայոց – Թառայ՝ յորում նշխարք ոսկերաց քո
« եդեալ կայ, հաստատութիւն հայցեա ի Քրիս-
« տոսէ »: Իսկ օրինակածն է « Ներբողական գո-
« վեստի բան », զոր երանելի երիտասարդին նա-
հատակութենէն քիչ վերջը շարադրած է վայել-
չապէս Դաւիթ քահանայ մը՝ ի խնդրոյ Մխիթար
անուամբ մէկու մը. որ և՝ ի վերջ ներբողին սրտա-
ռուչ պաղատանօք կը խնդրէ վկային. « Ո՛վ ամե-
« նապանծալի պարկեշտագեղդ Յովսէփ, մերձ կա-
« ցեալդ հաստատակացն կենագործի Տեառն մերոյ »,
բարեխօսէ « վասն սրբոյ եկեղեցւոյ զոր սիրեցեր,
« և յորմէ ծնար զանախտաբարն ծնունդ », որ-
պէս զի նորէն ընդունի իր հովուապետը. վասն
աշխարհին՝ որ խաղաղութիւն գտնէ յայլասեռից
և յարկածից բնութեան. և իրեն նմանող կրօնա-
ւորաց տայ զօրութիւն « ի դիմամարտութիւն չա-
« րասիրին »: Ապա ձայնակցելով իր բարեխօսին
հետ՝ գոչէ առ Քրիստոս. « Գթա ի վերայ հօտի
« քո՝ մանուելոյ ի ձեռս ամբարշտաց, և գարձո
« զգերութիւն ազգի մերոյ, որպէս երբեմն վիա-
« յէլին: Բարձ զլուծ ծառայութեան ի պա-
« րանոցէ մերմէ՝ ըստ որում արարեր, և գու
« ինքնին Թագաւորեա ի վերայ մեր՝ որով իւիք և

« ախորժեացեալ : Գտադարձեցո զամպրոսին խռովա-
« կան, և ամաչեցո զնաւավարսն ի սկզբանէ. զչ-
« էար արբանեակն չարասիրին ընդ կրունկն գարձո,
« և սպառազինեա ամրակուռ զինու ղզօրականս
« քո, վատնել ղբանակս նոր Սմաղեկայ և ջա-
« նանու... : Ման զի երկարեաց ողբովք պանդըխ-
« տանալս մեր ի վրանս Կեդարու. զոր ոչ ի քէն
« վարկանիմք, Տէր բարեաբեր, այլ զի գառնացու-
« ցաք զբարեգործդ... Ուրախ արա զինեալ բա-
« նին՝ զոր արբուցեր ի սուրբ խորանէ քումմէ.
« յորմէ ապաքինեալ ի յոգնակի փորձուածեան-
« ցըն՝ ոճնեացուք զոն սիրելեաց քոց վկայիցն
« երանելեաց. յորոց մի է և այսր աւուր կոչնա-
« ձերս Յովսէփ » :

Կատարեցաւ նահատակս ի 16 դեկտ. 1170 տարւոյ (« ի ՈԺԹ Թուին Հայոց, ի մարտից ԺԳ. »), քիչ տարի վերջ (?) ի Թէոդորոսէ աբեղայէ Սեբաստացւոյ՝ որդւոյ Գոհարինեայ, և իբր 15 տարի ստոր և եղբարցը նահատակութենէն : Իրմէ առաջ կամ վերջը մօտ տեղիներ՝ ի Մեծ Հայս տապալեն հալածակեալ նահատակութիւն մը ջընջելով՝ Յովսէփ կոչեցաւ Նոր Վկայ : Իր ամենէն մեծ երկրաւոր քաջալերիչն և յուսադիր՝ հայրապետան Հայոց, անտարակոյս ատուգեց ինչ որ գուշակեր էր, և ըստ խոստմանն նշանակեց անոր անունն ալ ի գաւս վկայից ծանօթից իր եկեղեցւոյն. և Թերևս այս Այրարատեան երաշտացեալ անդստանէն անակընկալ երախայրին՝ տատատակաբեր Թուղն, Նոր Վկայն Յովսէփ՝ եղաւ յեռինն և կնքեց զչարս նահատակաց Քրիստոսի, զոր Ճչգրիտ գար մ'առաջ սկսաւ (1070) մեծ վկայասերն Գրիգոր, աՃեցուց կրսերն՝ Գրիգորիս, և աւարտեց գտատկարգելով ի Տօնամակին՝ ի բոլորել գարուն (1170) Թուն և հարազատ նոցուն Ներսէս, ոչ միայն վկայասէր, այլ և վկայից յորդոր և քաջալեր. և

թեւիս աւելի քան զեզբայրն՝ վաստակաւոր այս դավելի երկասիրութեան մէջ. որոյ համար վկայէ Լամբրոնացին,

« Տօնից սրբոց՝ որ կատարի՝
Նոր դերուածոյ նեբրոզանի [1] »:

1 Եթէ մեր վկայաբեր հայրապետք հին և հեռաւոր Ս. Վկայից յիշատակօք մեր Հայոց եկեղեցին կը սիրէին զարդարել, շատ բնական էր որ նոր վկաներն ալ յօժարութեամբ ընդունէին, և ինչպես մտան զՍ. Յովսէփ ընդունեցաւ արիւնն և սրբասէր հովիւն մեր Ներսէս, հաւանիմ թէ ինքն նախ ընդունեցաւ ի յիշատակս օրըստօրեայ Սրբոց՝ իր հեռաւոր հովուակիցն ալ, որ գրեթէ Յովսեփայ նահատակութեան օրերը (29 դեկտ. 1170) նահատակեցաւ տարօրինակ կերպով մը ի Լոնտոն մայրաքաղաքի Անգղիացւոց, անոնց նախագահ եպիսկոպոսն ըլլալով, Ս. Թոմաս Պեքէթ Կանտուբերբեցի: Այս բանս աւելի հաւանական կ'երեւի՝ երբ ուզենք անոր հակառակ պատճառ և ժամանակ մը գտնել այս զարմանալի Սրբոյն յիշատակին մեր Յայսմաւուրց մէջ մնալուն. մանաւանդ երբ նկատուի՝ որ հին և ընտիր Յայսմաւուրց ոմանց մէջ յուլիսի 8 կամ 9ին օրը՝ միայն ասոր յիշատակն կայ, և ոչ ուրիշ Սրբոյ կամ Վկայի, որ աւելի նշանական բան մ'է: Յայտնի ալ է որ Թոմասու հայրն Թիլպեր Նորմանդացին՝ երիտասարդութեան առեն յարևելս եկեր էր իբրև խաչակիր, և գուցե Անտիոքայ քով, մօտ ի սահմանս Հայաստանի մերոց կռուելու առեն էր որ գերի ընկաւ Հալապայ և Դամասկոսի սուլտանաց բանակին, և անոնց մէկ ամիրային. որոյ ձեռքէն փախչելու հնարք գտաւ, հետը կամ իր ետևէն ձգելով սիրոյ գերի՝ նոյն ամիրային դուստրը, որ անվախ գնաց ի Լոնտոն, մկրտուեցաւ, պսակուեցաւ ընդ Թիլպերայ, և ընծայեց այսպիսի արևելահառն պատուասուն օրհնեալ պտուղ մը. յիշեալ Ս. Թովմասը: Թիլպերի փախստեան և ազատութեան առեն՝ նորբէն Անտիոքայ սահմաններէն անցնելն և դիպուածն, մեր պատանի Շնորհալւոյն ալ ծանօթ ըլլալ՝ շատ օտար բան չէ. և կըրնամք անտարակոյս համարիլ որ լսեր և գիտեր Շնորհալի՝ Թոմասու արքունի քարտուղար և յետոյ (1162) արքեպիսկոպոս ըլլալը. և հաւանիլ՝ որ լսելով իր եռքի օրերը (1175) թէ Ադրբանդր Գ Պապն դասեց զԹովմաս ի թիւս Սրբոց յԱրևմուտս, ինքն ալ գնոյն աւանդեց իր Արևելեան եկեղեցւոյն, որոյ և մայրենի խնամի ալ էր այս անգղիական Դուռնայ նոր Վկային:

# Իե.

*Հաւատոյ խնդիրք — Աբեւորդիք.— Թուղթ առ Յակոբ Ասորի, վասն Անապականեւորեան տարեվոյն Քրիստոսի։*

Այս ամեն տեսակ հոգեկան և մարմնական գըթութեան գործերէն զատ՝ զոր տեսանք ի Տնօրհալին, ի գարման աղքատութեան, հիւանդութեանց, տգիտութեան, արամութեան և մահուան, վերագոյն հոգ մ'ալ կար, յարմարագոյն իր պաշտամանը, որ է բոլոր եկեղեցւոյն հաւատոց ուղղութեան վերատեսչութիւնն. և եթէ ինքն այնքան փոյթ ունէր այնպիսի բարեաց ալ՝ որ հասարակաց կամ շատոնց ընելու գործեր են, մըքան ևս առաւել այն բանին՝ որ սեփական է հայրապետի մը. ապա պէտք չէ տարակուսիլ, թէ նա որ իր աչաց օգնական կ'առնուր գբազմութիւն աչաց՝ տեսնելու ծածուկ և ամբէնոտ աղքատները, արմնագոյն և արագոյն աչօք ալ կը դիտէր՝ հոգեւոց աղքատութիւնը կամ հիւանդութիւնն ի քրիստոնէական կեանս. և ամենևին չէր դանդաղեր ի գել և ի գարման պատշաճ և հնարաւոր։

« Եթէ ազանդ ուրեք շարժէր՝
Մեծ գօրութեամբըն խափանէր.
Համաշխարհի նամակ յղէր,
Ցիւրաքանչիւր գործըս խրատէր ».

վկայէ Լամբրոնացին։ Իրմէ առաջ ալ երկուց վը կայասէրաց արմնութիւնն և իր իսկ գործակցութ-

թիւնն՝ մեր եկեղեցւոյն ներքին խաղաղութիւնը և միաբանութիւնը բաւականապէս ապահովեր էին. և միայն Յունաց և Լատինաց պատճառաւ երբեմն տակին կ'ըլլար վիճաբանութեանց, հակառակութեանց կամ կցորդութեանց: Եկեղեցեաց մէջ առեն առեն մոլորութիւնք սպրդած են, բայց ոչ ամեն եկեղեցիք ալ հնարեր են մոլորութիւնս. մեր եկեղեցին ալ այսպէս աւելի հեռուղ քան հնարող եղած է: Միայն հին ազանդ մը՝ քրիստոնէութենէ ալ դուրս և աւելի հին՝ այլ և խառնուած անոր հետ, առեն առեն աւելի կամ պակաս յայտնի երեւած է 'ի Հայս կամ 'ի սահմանս Հայոց. ինչպէս և Շնորհալւոյ առեն ալ յայտնուեցաւ, և իր մատրութիւնն ու գրաւոր ջանքը գրաւեց՝ զայն խլելու և ուղղելու:

Արնորդեաց ազանդն էր այս, կամ խառնարան մ'ազատելի ազանդոց, յորում անորոշակի խբրև 'ի զանազան վտակաց թափուած ժանտ ջուրք՝ միանան 'ի մի ժողով ժահահոտ: Ս. Սահակայ և Մեսրովպայ առեն յիշեալ Բուբուրիպոնէն ազմաթաթաւք (զի այսպէս թարգմանի), քիչ մը վերջը Մծղնեայ, յետոյ Պայլիկեան, ապա Թոնդրակեցի, և հիմայ Արնորդի, գրեթէ ամենքն ալ խառն և նման այլանդակ վարդապետութիւն կամ սովորութիւններ ունէին. կրնանք ալ ըսել, թէ որոնք որ 'ի աստուածութենէ հաւատոց և 'ի սրբութենէ վարուց դուրս կը ցատքէին՝ վերջը վերջը 'ի նոյն այլանդակութիւն կ'երթային միանային: Թողուի առջի անուանքն յիշուածներուը, մեր պատմութեան ժամանակ անուանեալը յիշենք, որ թէ և անուանքն յետին՝ սկզբանքն հնագոյն է քան զայլսն, և ամենուն ալ մայր կըրնայ կարծուիլ:

Եաս, եթէ չըսենք ընդհանուր հերձանոտաց պէս՝ մեր նախնիք Հայկազունք ալ՝ զարմ կը պաշտէին, քիչ կամ շատ տարբերութեամբ, և աւելի նման

նուիրեամբ Պարսից և Մարաց. ոչ սակաւ տեղեկութիւն անուանք կան ՚ի Հայս արև կամ արեգական բառով ձևացած. և ինչուան հիմայ Արև անունը յատկաբար կրողք պակաս չեն, (ինչպէս տեսանք և զեղբայրն Գոհարինեանց). նոյնպէս կենաց նըշանակութիւն տալ արևուն, երդնուլ յարև Թագաւորի, արևը սիրել, մկուն արևուն մեռնիլ սիրով, կարճ արև, կանաչ արև, և այլն, զորս յուածք՝ հաստատակ եղած են ազգերնուս մէջ, թեև աւելի քան ուրիշ ազգաց: Զարմանք չէ ուրեմն որ այն պաշտօնն կամ պատիւն որ ամենէն հին և արմատացեալն էր ՚ի Հայս՝ ամենէն խոր ալ թափանցեալ և յերկարեալ ունար, և մատամբ դեռ ունայ այլ, նաև յետ այնքան քարոզութեան և ջանից Լուսաւորչի, Մեսրովպայ և անոնց հոգեկից անձանց: Սակայն այս այլ ասոյգ է՝ որ աւելի Հայաստանի եղերքները կամ սահմանները՝ քան ՚ի բնամէջն երևցած է Արևորդեաց ազանդն, յաշխարհն Միջագետք Հայոց ըսուած, Եգեսիոյ և Սամոսատայ կողմերը: Առաջին այս անուամբ զանոնք յիշողն՝ մեր պատմութեան պարագային սկիզբները բռնող և մեր Պահլաւունի հայրապետաց նահապետ՝ Գրիգոր Մագիստրոսն է, որ սոյն կողմերս զանոնք բնակած կ՚ըսէ, և հին Պարսից մոգերուն վարդապետութեամբ « գեղեաւք՝ Արե« գանիւապաշտք, զոր Արևորդիսն անուանեն... « ինքեանք՝ քրիստոնեայս զինքեանս յայտնապէս « կոչեն. բայց եթէ որպիսի մոլորութեամբ և ան« առակութեամբ վարին՝ գիտեմք զի ոչ ես ան« տեղեակ »: Ինքն Մագիստրոս թէ զինքով և թէ դրչով ընդդիմացաւ Թոնդրակեանց, զոմանս հաւանեցուց, զայլս հալածեց իր սահմաններէն. թէ և որոշ չըսեր թէ այս երկու ազանդքն ալ նոյն ըլլան, այլ դրուածոց միաքն զնոյն ցուցընէ: Իրեն և Շնորհալւոյ միջոց գրող վարդապետ մը Գաբրիէ

Ալաւկայ որդին, զոր յիշեցինք ուրիշ տեղ (161). աներկբայաբար կը նոյնացընէ զՊայլիկեանս և զԱրևորդիս (զոր Արուխ–որդիս կ'անուանէ): Շը-նորհալիէն՝ երկու դար եաև՝ Մխիթար կաթողիկոս կը յիշէ զԱրևորդիս 'ի Մանազկերտ. ուր Թոնդրակեցւոց գլխաւոր բոյնն էր 'ի ժ դարու, ըսել է որ երկուքն ալ նոյնք կամ նոյնանմանք էին: Ամենէն հին յիշող և կշտամբողն Յովհան Իմաստասէր կաթողիկոս ալ ('ի սկիզբն Ը դարու), Պայլիկեանց հետ յիշէ զԱրեգնապաշտս. և այսպէս ամենուն տեսութիւնն ալ միաբանի մեր առաջ ըսածին, թէ նոյն այլանդակ և անառակ սկզբանց խառնուրդ էին այդ զանազան անուամբ յիշեալ աղանդաւորքն:

Արդ Շնորհալւոյ հայրապետութեան առեն՝ Սամոսատայ կողմը գտուող Արևորդեաց մեկ-ման՝ որ «ազգաւ և լեզուաւ 'ի տոհմէ Հայոց «էն», ինչպէս կ'ըսէ ինքն, փափագ ցուցին մանեալու իրենց ազգի սուրբ եկեղեցին. պատգամաւոր խնդրեցին առ հայրապետն, որ արդէն լսեր և հարցուցեր էր անոնց աղանդոյն վրայօք, հիմայ ալ ասոնց հարցընելով տեղեկացաւ. և տեսնելով որ կը հրաժարին իրենց այլանդակութենէն նզովիւք և երդմամբ, յանձն առաւ ընդունելու զիրենք յեկեղեցի, պատշաճը պատուիրելով և սովրեցընելով: Իրենց ընկերաց բազմութիւնն ալ ըզնոյն խնդրեցին Սամոսատոյ առաջնորդէն, որ էր Թորոս քորեպիսկոպոս. իսկ սա քաղքին աշխարհական գլխաւորին հետ՝ որ կոչուէր Գազան, գրեց առ հայրապետն և հրահանգ ուղեց: Շնորհալին գրով պատասխանելով՝ նախ նմանեցընէ զԱրևորդիս՝ նոյն աւենի Յունաց մէջ Պողոմեկեան[1] աղան-

1 Այսպէս կ'անուանէին Բուլղարաց լեզուով, որ կը նըշանակէ Աւետաբեր—ողբերգ, զի այսպէս կ'ըսեին աւետարանիչ մէջ. այլ Պայլիկեանց և Մանիքեցւոց կարծիք-

գաւօրաց, որք չկրաւի նման ալաեղի սովորու-
թիւններ ալ ունէին, և որոց համար շատ ժողով-
ներ եղած է քիչ մ'առաջ 'ի Կոստանդինուպոլիս
(յամն 1143. 1144. 1147, և այլն.) և մեծաւած
էին 'ի պատրիարքացն Յունաց կանոնական գրովք.
երկուքին սկիզբն ալ հեթանոսական ժամանակ-
ներէ առաջ եկած կ'ըսէ. և բաղդաւոր սեպելու
իր ժամանակը՝ որ Լուսաւորչէն փախչող խաւա-
րասիրաց որդիքն՝ հիմայ կ'ուզեն 'ի լոյս գալ. ուս-
տի պէտք է ընդունիլ, կարևոր զգուշութեամբ.
վասն զի և շատք սոյպ կը համարին անանց գործը:
Իսկ եթէ ոմանք « գործեալ անդրէն 'ի փախածն
« իւրեանց գառնան, մեզ և ոչ մի ինչ է վնաս յաշ-
« խատանան. 'ի բաց ընկենուլ՝ արդար գտաւա-
« րին է »: Թղթոյն հետ իր աշխերանեերէն քանի
մը հոգի խաւրեց 'ի Սամոսատա, որ քաղքին բո-
լոր եկեղեցւոյ ուխտին հետ առաջնորդութեամբ
քորեպիսկոպոսին՝ կանչեն զԱրևորդիս 'ի դուռն
մայր եկեղեցւոյն, և հարցընեն թէ ձշմարիտ
կ'ուզէն Թողուլ իրենց ապտնդը. և թէ այսպէս՝
հրաժարին 'ի սատանայէ, յարևմուտս գառնա-
լով և երեք անգամ Թքնելով 'ի դէմս սատանայի:
Յետ զայս ընելու՝ լաւ իմացընեն իրենց ապտնդոյն
ծուռութիւնը և գարշութիւնը. Թէ՝ արևն լուսա-
տու է երկրիս՝ Աստուծմէ դրուած, ինչպէս ու-
րիշ ստեղք ալ. Թէ՝ բարեաւ ծառն՝ զոր պա-
տուէին՝ դէպ յարև գառնալուն համար, ուրիշ
ծառերէ առաւելութիւն մը չունի. և Թէ՝ սուտ է
Թէ Քրիստոսի խաչն բարեաւ ծառի փայտէն էր.
այնպէս ալ ըլլար՝ ծառն պատուելի չէր. այլ հին
հեթանոսութենէ առաջ եկած է այն պաշտօնն:
Ապա յարևելս գարձընելով զանոնք՝ հարցընեն,

ներն և անառակ սովորութիւններն ունէին. ատոնց գըլ-
խաւորն վասիլ յայտնեցաւ այս ԺԲ դարուս սկիզբներն:

թէ հաւատաւն յամենասուրբ Երրորդութիւնն, 'ի Մարդեղութիւն Քրիստոսի և 'ի անօրինութիւնս, և այլն. և զայս դաւանութիւն ընդունելով՝ մոցընեն յեկեղեցի. անկնունք տղայքը մկրտեն, մեծերը նախ խրատեն խոստովանեցընեն և ապա մկրտեն, իսկ արդէն մկրտեալները՝ միայն խոստովանեցընեն. ապա միւռոնով օծելով ճակատնին՝ խառնեն հաւատացելոց հետ, սովրեցընելով քրիստոնէական պարտքերը. և խրատելով որ չգայթակղին զնիկ քրիստոնէից և քահանայից իսկ պակասութիւններէն. վասն զի ոչ անոնց գործն՝ այլ Քրիստոսի բանքն են մեզի կանոն. և « 'ի լսան և « լընական հայեացին, և յայնցանէ առցեն իւ« րեանց օրինակ բարեաց »: Մանաւորապէս ըզգուշացընել զկանայս 'ի կախարդութենէ և 'ի դեղատուութենէ: Յետ այլ խրատուց խորհուրդ կու տայ հայրապետն որ անոնց մանչերէն ընդունակներն՝ առնուն 'ի կրթութիւն և յուսումն սուրբ գրոց, ինչպէս որ ինքն ալ ուղէր էր իրեն եկողներէն, և նոքա ալ յանձն առեր էին. որպէս զի քահանայութեան ալ արժանանան. « որպէս « և յորդւոց Քրմացն՝ Ս. Գրիգոր ուսոյց և ձեռ« նագրեաց քահանայս և եպիսկոպոսունս »: Յետ ամենայնի կը պատուիրէ ամենայն ջանիւ՝ յիշել չտալ անոնց Արևորդի անունը, այլ քրիստոնեայ միայն անուանել: Քահանայից ալ խրատ կու տայ զգաստութեամբ վարուիլ և չգայթակղեցընել զանոնք՝ եկեղեցական սուրբ կամ նուէրք պահանջելով, այլ իրենց աշխատութեան փոխարէն՝ աստուածային վարձուց յուսալ:

Պատմութիւնն աւելի բան մը չի զրուցեր աստնց համար. հաւանիմք որ շատերն սրտանց դարձան և միաբան մնացին ընդ քրիստոնեայս, բայց Արևորդեաց ազանդն մնաց անկէ հետև ալ. ինչպէս տեսանք վերը, որ 'ի կէս ԺԴ դարուն ալ մեր կաթո-

զնկոսաց մեկն չիշէ զանոնք. գար մը եաև ալ չիշեն այլք՝ այս կողմերս. որոց մեկն բարւոյ ծառոյն հետ կը չիշէ նաև զբամբակին և զշուշանն, զոր յարև գառնալնուն համար՝ պատուէին Արևորդիքն: Անոնցմէ վերջին ալ ծալկերգու քերդող մը [1] կ'ըսէ ուրիշ բուսոց համար.

« Սինձ, երիցուկն ու եղերդակն կու ըսպասեն
Արեւորդուն.
Նոցա երասին ուրիշ է, կու շրջին զօրն հետ
արեւուն »:

Կարծուի թէ դեռ հիմայ ալ թէ բուն Հայաստանի քանի մ'անկիւն, թէ Մէյագետաց կողմ գըտուին Արևորդիք, և ատոնցմէ ըլլան հօս Շէմսի կոչուած ազանգաւորքն:

Մեր աղգին և եկեղեցւոյն մերձաւորք և դրացիք տեսնելով իրենցմէ տարբեր ծէս մը, բնականապէս կը դիտէին հետաքննուԹեամբ վարդապետուԹիւնն ալ. յորում՝ կամ մեկ կողմէն կամ մեկալէն շատ հեղ հասկընալու և բացատրելու պակասուԹիւն ըլլալով՝ չեղածն եղած կարծուելը, եղածն՝ աւելի կամ պակաս. և այս բանիս համար ոմանք բարեսիրուԹէ ոմանք ալ ոչ նոյնպէս կը խօսէին և կը գրէին ընդ Հայոց և ընդդէմ Հայոց. ինչպէս երկու ոգւով շարժածներն ալ չիշեցինք տեղ տեղ մեր պատմուԹեանը կարգին: Ասոնք՝ որ աւելի մերձաւորք կարծուին դասանուԹեամբ, նաև յետ դաւթակղական բանակռուԹեանն զոր խափանեց Գրիգորիս, շատ ծանր և այլանդակ մեղսուԹեան կարծեք մ'ունեցան մերայոց վրայ, որպէս Թէ Յուլիանեայ Ալիկառնացւոյ ազանդէն ունենան. այն որ Քրիստոսի անօրէնուԹիւնները և

1 Դաւիթ Սալաձորեցի՛ ի կարնոյ:

մահը՝ ոչ կատարելապէս մարմնով ըստ ամենայն մարդկան՝ կ'ըսէր, այլ առաջօք իմն այնպէս երևեցած, և բնապէս անչարչար մնացած: Թերևս է դարէն 'ի վեր այսպիսի կարծիք մը մտած էր, գուցէ ոմանց անզգոյշ և անորոշ գրուածքէ, ո՞րոց դէմ գեղեցիկ և խիստ ասիրուածքով գրելով հերքեր է Յովհաննէս Իմաստասէր կաթողիկոսն, Ընդդէմ Երևութականաց անուանեալ ճառիւ: Յետ այնքան դարուց՝ մեր Շնորհալւոյ հետ պատրիարքութեան աթոռ ելլող Միխայէլն Ասորի՝ այսպիսի կասկած մը յայտնեց առ կաթողիկոս մեր, թղթով և նուիրակութեամբ Յովհաննու եպիսկոպոսի մը. որուն գրով կարճ պատասխան մը առաւ Շնորհալի, նզովելով զՅուլիանոս և զհետևողն, « այլ և զանիրաւ զրպարտողն զմեզ: « Բայց մեք խոստովանիմք զԿրիստոս... խաչեցաւ « և մեռաւ մահկանացու բնութեամբ, առաւել « պէս և ոչ առաջօք ». մնացածն ալ Թողլով որ բերնուց իմացընէ իր նուիրակին:

Ահա կարծեաց կամ կասկածի գլխաւոր առիթն՝ ոչ այնքան Կրիստոսի մահուան վրայ Թուխ, որքան իր մարմնոյն և կրից ապականելի կամ անապական ըսուելու խնդրոյն վրայ. որովհետև մերոնք յաճախ անապական կոչելով զմարմինն՝ տարակոյս ձգեր էին գրացեաց՝ Թէ այդ բառով նաև անչարչար կամ անտկար իմանան զնա, կամ որ և է անմեղ և անախտ մարմնական կրքէ և կարեաց ալ ազատ: Ահա բանիս վրայօք դեռ Գրիգորիսի կաթողիկոսութեան առեն Յակոբ անուամբ գիտնական Ասորի վարդապետ մը Մելիտինէ քաղքէն, որ Թուխ Թէ էր Սալիբայ որդի անուանեալ հռչակաւոր մաշենագիրն, որ եպիսկոպոսացեալ Դիոնեսիոս կոչեցաւ [1], գրեր և հարցուցեր էր առ

1 Սա է որ Մարաշու եպիսկոպոս եղած առեն գերի բռնուեցաւ 'ի Սահիանակ: Տես յերես 306: Շատ բան

մերան, Թէ ինչպէս կ'իմանան, մանաւանդ Քրիս-
տոսի աննպաստութեն նկատմամբ: Այն առեն ասոր
ալ պատասխան գրած է Շնորհալին, նախ գովե-
լով Աստուի վարդապետին հմտութիւնը, զոր իմա-
ցաւ իրեն գրուածներէն թարգմանել տալով, « խո-
« հական մակացու իմաստասէն մերասեռ » Սա-
պիանոս անուամբ մէկու մը, որ և Յակովբայ
Թուղթը բերեր էր. յետոյ քիչ մ'ալ կը մեղադրէ
զինա՝ արժանապէս, Թէ չէր վայելեր այդպիսի բա-
նի վրայ խնդիր ընել և գրել. և եթէ հիմայ ինքն
ալ պիտի պատասխանէ՝ միայն ասոր համար է՝ որ
չկարծուի Թէ կ'արհամարհէ զինքը, կամ Թէ չի
գիտեր ըսելիքը. և քիչ մը Ս. Հարց խօսքերով,
քիչ մ'ալ իր մտածութեամբք կը պատասխանէ,
Թէ ինչպէս անտպական կ'իմանայ զԿրիստոս. և
Թէ ոչ այնքան ակամայ և նուաստ կարեաց տակ
ընկնելն՝ Կրիստոսի կատարեալ մարդկութեան
սեպելու է, որքան կամաւ սիրելն ակամայից ալ.
որով հետևցընէ Թէ Յակոբայ քննածը (աննպա-
տութիւնը) պէտք չէ ընդունիլ Կրիստոսի վրայ
իբրև հասարակ մարդկան կրածը, այլ իբրև սի-
րաբար սպառուած, որպէս Թէ կրակով մը հա-
լուած և ցնդած: « Մերս Հայաստանեայց եկե-
« ղեցի, կ'ըսէ 'ի վերջաբանին, 'ի սկզբան հաւա-
« տալոյ քրիստոնէութեան մինչև ցայժմ՝ յայս
« դաւանութեանս վերայ հաստատեալ է, խոստո-
« վանել զմարմին Տեառն անապական՝ 'ի ծննդե-
« նէն մինչև ցյարութեանս. ոչ 'ի կամաւոր չար-
« չարանաց և 'ի մահուանէ, այլ 'ի պարտաւելն և
« յակամայ կրից »: Աստուածաբանիչ Թողուլ
աւելին այսպիսի խնդրոց վրայ, եթէ հարկ իցէ
իսկիլ, մենք աւելի կը սիրեմք Շնորհալւոյ խոր-

գրած էր սա Հայոց ծիսից դէմ, նաև մեր ազգին ծագման վրայ. այս կարևոր գրուածս հիմայ անկայտ է: — Առաք. Մատենադար. Սրբևել. ֆ. 164. 170. 182, և այլն:

շումը և խղճումը, թէ և չափազանց ալ երևի ո-
մանց յաստուածաբանից. և ա՛լ աւելի սիրելիք իր
փափուկ պարկեշտութիւնը, երբ յետ Քրիստոսի
վայ խօսելու՝ երբև կնիք կարծեացն կ'աւելցընէ,
ամեն տեսակ փափուկ զգայնութեամբ. « Հա-
« ճելի էր իմոց մտաց ընտրութեան, եթէ հա-
« մարձակէի ասել, ոչ միայն զայն մարմին՝ զոր
« միացաւ ընդ Բանին, այլ և զԿուսին սրբոյ՝ յետ
« անճառելի միութեան՝ արտաքոյ դնել այսոցիկ
« կրից, որպէս և բոլորիցն ախտաւոր շարժմանց,
« որք ըստ հոգւոյ և մտաց. զի ուր Աստուած բը-
« նակի տիրապէս՝ ոչ ծառայէ բնութեանս, որ-
« պէս և ոչ մորենին և ոչ հնոցն [1] »: Այնքան ա-
խորժիւ կ'ընթեռնուէք Շնորհալւոյ այս վերջին
տողերը, որքան որ քիչ բանիւ կ'իմացընեն իր մեծ
պատկառանքն և սէրն առ Կոյան այն, որ յետ
Աստուծոյ՝ առաջին սուրբ և ամենարժեայ էու-
թիւն է: Նոյն ախորժիւ կը յիշեմք և իր գրածն
առ Յոյնս, թէ « Այնքան պատուի՛ մէնջ (Հա-
« յոցս) արժանաւորն պատուոյ յերկնաւորաց և
« յերկրաւորաց, Մայրն Աստուծոյ Մարիամ,
« մինչ զի զբանս նորա (զՄեծացուսցէն) ոչ՛ի լոկ
« աւուրան... երգեմք, այլ՛ի կիւրակէս միայն և
« ՛ի ծնունս տերունականս [2] »:

1 Այսոր նման կ'ըսէ և՛ի Մեկնութեան Մատթէի, Ա. 25. « Պարտ է հաւատալ, թէ յորմէ հետէ եղև Կոյան
« բնակարան Հոգւոյն և Բանին, բառնալ՛ի նմանէ բոլոր
« կրից մարդկայնոց... Ոչ միայն թէ յախտաբիծ ցանկու-
« թեանց, այլ և բովանդակ հարկաւոր կարեաց՝ հաւա-
« տարիմ է արտաքոյ լինել նմա յայնմհետէ »:

2 Այսպէս սահմանուած էր՛ի նախնեաց մերոց. այլ յետ Շնորհալւոյ՝ ջերմեռանդութեան յաճախութիւնը վերադասելով քան զպատիւ սեփական՝ ամենօրեայ ժամատութեան կարգը մնած է Մեծացուսցէն ալ հանդերձ իր չարականովը, յետոյ նաև Հանդստեան ժամուն մէջ ալ մուծուած է:

# ԻԶ.

## Խնդիր Միաբանութեան Եկեղեցեաց Յունաց և Հայոց. — Մանուկ կայսր — Թէոդիանէ — Ս. Կիւրեղ Կարմելիտական։

Մեծապոյն կրօնական խնդրոց, վիճմանց և գրուածոց Ն. Շնորհալւոյ, որ կըրնայ նաև բոլոր մեր եկեղեցական պատմութեան մէջ ամենէն նշանաւոր դիպաց մէկն կոչուիլ, Յունաց եկեղեցւոյն հետ Միաբանութեան խնդիրն էր, որ իր կաթոլիկոսութենէն քիչ մ՚առաջ սկսաւ, բոլոր անոր միջոցը բռնեց, և անկէ քանի մը տարի վերջը կիսկատար աւարտեցաւ, իր հոգեկից աշակերտաց և յաջորդաց ձեռօք։ Շատ պատգամաւորութիւնք և թղթակցութիւնք եղան այս 10 կամ 12 տարիներուս՝ ընդ մէջ Յունաց և Հայոց, քիչ մ՚ալ և Ասորւոց, զոր իւրաքանչիւր ազգաց մտաբերնագիրք պէտպէտ աւանդած են. մերինք համառօտիւ յիշելով զպատմութիւնն՝ թուղթերն ու դաւանութիւնները ամբողջ կը բերեն. Յոյնք՝ եղած վիճաբանութիւնը գրեր և հատուցեր են մեզի։ Ասորիք աւելի համառօտ կը յիշեն, և գործոյն սկիզբը քան վախճանը՝ զոր ազէկ չեն իմացեր. վասն զի իրենք, ինչպէս իրենց Միխայէլ պատրիարքն կ՚ըսէ, աւելի կարուկ և յամառ պատասխան մը տալով, եա քաշուեցան. խնդիրն մնաց Յունաց և Հայոց մէջ։ Մերոց ախոյեանն յայտ է

որ Շնորհալին էր. Յունացն՝ գլխաւորապէս Թէոդրիանէ ըսուած հմուտ իմաստասէր մը, որ շարադրած է վիճաբանութիւնը. բայց ինչպէս որ առվորութիւն է՝ այսպիսի գրուածքներ նոյն խօսած առեններին նշանակել յետոյ ձեւացընել, այսպէս ըրած է և ինքն. չըսեմք Թէ խարդախած և փոփոխած, այլ գէթ տեղ տեղ այնպէս յարմարցուցած՝ որ ինքն միշտ յաղթող երևի: Այդպիսի գրուած կամ հակառակ կողմէն ալ պէտք էր գըրուած մ'ունենալ, կամ երկու կողմէն առորագրութիւն և վաւերացումն՝ անառարակոյս ըլլալու համար [1]: Ի վերայ այսր ամենայնի՝ կարգաւոր և խոհեմական և չափաւոր ոգւով գրուած մ'է Թէոդրիանեայ գրուածն:

Բայց Յունաց աւելի գլխաւոր ախոյեանն այս խնդրոյս մէջ՝ կըրնայ ըսուիլ ինքնին անունց կայարն, և արդէն մեզի ծանօթացեալն, որ այս պատմական դիպուածիս մէջ՝ կիւռ Մանուէլ կոչմամբ յիշուի 'ի մերայոցս, և շատ գովութեամբ. մինչև 'ի Յայսմաւուրս ալ անցեր է անունն, վասն այսպիսի չանից միաբանութեանն հաւատոց, և կրօնաւորակերպ մեռնելուն համար, յետ իբրև 40ա-

1 Մեր Հայոց կողմանէ մեզացած է միայն հաւաքում մը՝ Միաբանութեան միջոց երկու կողմանէ գրուած Թղթերուն, հանդերձ յառաջաբան պատմութեամբ իրաց պատճառին, և միջանկեալ պատմութեամբք Թղթոց և վիճաբանութեանց միջոց անցած ժամանակին, Ներսիսի մահուան, Գրիգոր Տղայոյ յաջորդութեան, և գործը առաջ տանելուն, Հռոմկլայի ժողովոյն և միահաւան ատորագրութեան եպիսկոպոսաց, և ապա մահուան Մանուէլի կայսեր. և կոչի գիրքն Պոգճա խնդրոյ Միաբանութեան, և այլն. որոյ հեղինակն ալ է Ներսէս Լամբրոնացի, առենախօս ժողովոյն Հռոմկլայի, այլ չի յիշեր իր առենախօսութիւնը: Սակայն Թուի Թէ իրմէ զատ ուրիշ գրօղք ալ եղած են այս գործոյս վերայօք, որոյ համար կ'ըսէ Վարդան Պատմիչ. « Մնաց գործն անկատար, որպէս ցուցա- « նեն ընդօրինակ ձեռնագիրք »:

մեայ երկար Թագաւորութեանն: Յիրաւի, ինչպէս մեր պատմութեան պարագային, այսպէս և ժամանակին նշանաւոր անձանց մէկն է Մանուէլ Ա. Կոմնենեան կայսրն. քաջութեամբ՝ առենին ամենէն կարիճ պատերազմողաց կարգը բռնելու արժանի է. աշխարհակալութեամբ, կառավարութեամբ, կրթութեամբ, և հմտութեամբ ալ, շատերէն վեր. և բոլորով մէկտեղ՝ բարեմտան և բարեբաղդ Թագաւոր մը կըրնայ ըսուիլ. մանաւանդ եթէ քօղ մը ձգուի իր երիտասարդութեան պէսպէս խակութեանց, որով իրեն հօրեղբօրորդւոյ Անդրոնիկոսի ալ չար օրինակ եղած է. այլ անաքօղելի կը մնան Ի Խաչակրաց դէմ ըրած նենգաւոր վարմունքն, որով այնքան բիւրաւորաց մեռան և կոտորած հասաւ [1], և այնքան եռանդեամբ, պատրաստութեամբ և բեռնարդոսի մ'օրհնութեամբ սկսեալ գործն՝ վատութեամբ վերջացաւ:

Գուցէ ինքնին Մանուէլ ալ խղճելով այս բանիս՝ յետոյ սրտանց օգնութիւն կը խոստանար և խըն-դրէր Գ Խաչակրութիւն մը, որ 'ի գործ չդրուեցաւ: Լատինացւոց հետ երկու անգամ խնամութիւն ընելով ինք զինքը պարտաւորեց այնուհետև անոնց հետ բարեկամութեամբ վարուելու. բերմամբ ալ կրօնասէր ըլլալով և նախանձայոյզ, միանգամայն և Ս. Յուստինիանոսի նման կայսերաց հետևող՝ եկեղեցական խնդրոց խառնուելու և առաջնորդելու խակ, թէ իր եկեղեցւոյն և թէ օտարոց խնդրոց մէջ մտաւ. նախ Լատինաց հետ միա-

1 Այս բանից վերայ ոչ միայն Լատինացիք զչարած են, այլ մեր ժամանակակից ժամանակագիրն Սամուէլ՝ գուցե աւելի սրտմտութեամբ և չափազանց գրութեամբ, անարժան կոչէ զՄանուէլ՝ Քրիստոսի անուանակցութեան, բայց եթէ ինչպէս դերաքրիստոս կոչի Ղեռնն. « Այնպէս « և սորայս՝ տարօրոշ և հեռի ամենևին 'ի գործս և 'ի « կրօնս Եմմանուէլին՝ Մանիլ անուանի »:

բանութիւն ընել ջանաց, յանձն առնելով Հռով-
մայ առաջարկութիւնները, յուսալով արևմտեան
ինքնակալութիւնն ալ իր ձեռքը ձգելու. և երբ
այս չյաջողեցաւ՝ անոնց հետ միաբանութեան
գործն ալ անկատար մնաց, թէ և ինքն ողջամիտ
էր ի գաւանութեանն: Շատ հեղ ժողովքներ
գումարել տուաւ ի Կ. Պօլիս՝ իր ազգին խնդրոյ
համար, և եպիսկոպոսաց հաւասար և աւելի ջանք
ու հմտութիւն ցուցընէր. երբեմն ալ չափազանց
հեղինակութիւն և բանութիւն՝ իր կամաց և կար-
ծեաց հնազանդեցընելու: Այս մեծ սրտով կայսրն
(զոր միշտ չկրցաւ սանձել և ուղղել) մեր ազգին
քաղաքական գործոց արդէն խառնուած էր, և
20 տարի թէ անձամբ թէ ի ձեռն դքսից և զօ-
րավարաց՝ Թորոսի դէմ կռուած, և պինդ ձերով
ջարդուածը սիրով և դաշտքը դադրեցուցած.
բոլորովին նուաճել չկարենալով՝ գոհ կ'ըլլար որ
իբրև պայազատական տանուտեարը իրմէ կա-
խուին ունենան Անտիոքայ Լատինք և Կիւլիկիոյ
Հայ իշխանք. իր փառասիրութեան մեծ հարուած
մ'էր տանց անկախութիւնն: Մինչ դեռ իր հօրն
տեսն՝ արևմտեան Հայք՝ թէ կրօնական և թէ
քաղաքական տեսութեամբ կերպովմը կայսերու-
թեան հպատակք էին, կաթողիկոսական աթոռն
դեռ անոնց իշխած տեղերը ըլլալով, Ռուբենի
յաջորդք ալ՝ կամ կայսերաց կուսակալք և Սե-
բաստոյ համարուէին կամ ապստամբք, և ոչ օրի-
նաւոր տեարք երկրին, իսկ հիմայ կաթողիկոսա-
կան աթոռն՝ իրենց ձեռքէն խլուած երկիրներու
մէջ էր, Հայք ազատաբար իրենց հայրապետը կը
դնէին, Պարոնայք Հայոց՝ կամ ինքնագլուխ կամ
անուամբ չափ ինկայսրը գլխաւոր կը ճանչնային,
և անոր ոսկի կնքուին իրենց պայազատութիւնը
ապահովեր էին: Արդ զատնք բոլորովին չջատա-
յընելու՝ ձեռքէ չփախցընելու շատ յարմար հնարք

և առնէ գաւառ Մանուէլ՝ Հայոց հետ կրօնական միաբանութեան ընելը, և Լատինաց հետ եկեղեցական միութեան յաջողցընելը. մանաւանդ որ հօն հարկ էր Հռովմայ գերագոյն գահուն խոնարհիլ, հօս յոյս կար Հայոց աթոռը խոնարհեցընել Նոր Հռովմայ աթոռոյն: — Մեր Պահլաւունի հայրապետաց համբաւն շատոնց հասեր էր Մանուէլի, և հաւանօրէն անձամբ ալ տեսնուեր էր հետերնին, թէ և՛ի հարևանցի: Իսկ երբ իր փեսային՝ դուքսն Աղէքս՝ երկար տեսնուելով ընդ Ներսեսի՛ի Մամեսիա, անոր գաւանութիւնն ալ առաջ գրով և բերաւ առ Մանուէլ, ասոր իշխանասիրական և աստուածաբանական եռանդն արթընցաւ՝ այնպիսի խոհական անձանց հետ գործ տեսնելու, և Հայոց ու Յունաց գարշական վէճն ու աստելութիւնը դադրեցընելու՝ միաբանութեամբ հաւատոց և ծիսից: Այսպէս սկզբնաւորեցաւ այնուհանդերձ Միաբանութեան գործն և գրուածքն. զոր հարկաւորութիւնք հիմայ յիշել՛ի կարգի պատմութեան և գործոց մեր Շնորհալւոյն, ըստ կարի հատուածելով, որովհետև արդէն տպագրութեամբ հրատարակուած են՛ի մերայոց՝ Թղթակցութիւնքն, իսկ վիճաբանութիւնքն ալ՝ յարեմտեայց, և հատաքմամբ՝ ի Պատմութեան Հայոց. յորոց գուբս մնայ մաս մը, որ գեռ շատ տարի է՝ նոր յայտնեցաւ և հրատարակեցաւ՝ Մայ բազմահմուտ կարեւնալի ձեռօք: Այս գրուածներէն կը նշանակեմք անոնց համար որք կը փափագին աղբիւրներու երթալ և մանր քննել, եթէ արդարև օգուտ մը փնտռեն և ոչ վայրապար հետաքրքրութիւն, և աւելի վայրապար վէճ. որովք շատ հեղ կը տեսնենք որ աստուածաբանութիւն կարծուածն խածուածաբանութիւն մը կ'ըլլայ. զուարճութեան տեղ ձանձրութիւն, օգտի տեղ վնաս, սիրոյ տեղ կռիւ:

Արդ ինչպէս յառաջն յիշեցինք, երբ գուբան Աւէքա յետ Շնորհալի բերնէն լսելու՝ փափագեցաւ գրչէն ալ հաստատապէս ունենալ, ինչպէս որ ինքն ալ գրով հարցմունքներ առեր էր, Ներսէս գրեց ՚ի Մամեստիա, 1165 տարւոյ վերջերը, և յանձնեց անոր այն Թաւանուէթիը, զոր յետագայ կաթողիկոսաց ոմանք ալ երբոր իրենցմէ դաւանութիւն խնդրուեր՝ գաղափարելով կը խաբէին առ հայրապետս, և գեռ գտուին ՚ի գիւանս Հռոմայ ալ. և որոյ սկիզբն է, « Բանիւք գուզ« նաքեայ իմն խօսելով ՚ի լսելիս խոհեմագունիդ « և ատտուածասիրի անձին՝ յաղագս մերոյ հա« ւատոյ և կարգաց եկեղեցւոյ », և այլն: Եւ յիրաւի նախ հաւատոյ գաւանութիւն մը կը գրէ՝ ինչ որ հաստատակօրէն կ՚ընդունուէր ՚ի Հայս. յետոյ Հայոց քանի մը մանաւոր ծիսից և սովորութեանց վրայ կը խօսի թէ ինչ մտքով կատարեն. զոր օրինակ Միւռոնին համար՝ զոր Յոյնք և այլք ձիթենւոյ իւղով կ՚օրհնեն, իսկ Հայք շուշմայի կամ կնջըթի իւղով, քանի Հայաստանի մէջ ձիթենի չգտնելով, և այս նիւթոյս վրայ խարուսիւն չընելով: — Պատկերաց պաշտամանն կամ պատուոյ համար՝ կը պատասխանէ, թէ միայն Յունաց հետ ատելութեան պատճառաւ՝ ոմանք ՚ի Հայոց չեն ընդունիր, այլ այնպիսիքն ալ ընդունելի չեն Հայոց եկեղեցւոյ: — Խաչերը բևեռելու վրայօք՝ կը պատասխանէ. թէ միակուռ խաչերը ոչ երբեք կը բևեռեն Հայք, այլ երկու կտոր շինուածներն՝ իրարու միացընելու համար. իսկ եթէ մէկն միակտուրն ալ բևեռէ՝ ոչխարական գործ մ՚է: — Խաչեցարի ինդրոյնհամար կ՚ըսէ, որ եթէ Հայք ալ Յունաց պէս ՚ի գէմս Երրորդութիե ըսէին՝ ՚ի հարկէ պէշ կ՚ըլլար, այլ իրենք ՚ի գէմս Քրիստոսի միայն կ՚ըսեն: — Մեծ պահոց չաբաթ և կիրակի օր ձուկ և ձէթ կամ նաև կիթ ուտելու վրայօք՝ կը պատաս-

խանէ. թէ Հայոց եկեղեցին և ընդհանրապէս Հայք՝ չեն ընդունիր ուսեալը, և շատ ալ ջորակերութիւ կ'անցընեն. հիմայ միայն իշխանք և զինուորք են որ կ'ուսանին՝ ինքնակամ և ոչ հրամանաւ. և եթէ երբեք հայրապետք ալ Թոյլ տուած են՝ այն ալ Յունաց և Փռանկաց սովորութեան հետևողաց համար եղած է: — Բաժակին մեծ խնդրոյն վերայօք ալ, « Բազում էին մեզ բանք ասել », կ'ըսէ, այլ վասն համառօսելոյ՝ միայն կը յիշէ որ մեր ազգն 'ի Լուսաւորչէ այսպէս ուսանդուած կը համարի, և աւետարանին մէջ ալ որոշակի ջուր չի յիշուիր: Աւելի երկար կը գրէ այս խնդրոյս վերայ իր Ա Թղթին մէջ առ կայսրն, և ինչպէս թէ խոնրով թէ անխմոր պատարագելն օրինաւոր համարուած է, կ'ըսէ, այսպէս ալ « Թէ ջրով որ կատա-
« րէ և եթէ առանց ջրոյ, ոչ և ընդ միոյ 'ի սոցանէ՝
« կամ փառս ընդունիցի յԱստուծոյ և կամ տան-
« ջանս այլ որք սուրբ արարիւ և ուղիղ հաւատով
« մատուցանեն՝ փառաւորին 'ի նմանէ », և այլն: — Ալէքսի հարցմանց մէջ այս ալ կայ, թէ ինչու Հայք ամեն տարի խաչերնին նորէն կ'օրհնեն կամ կը մկրտեն. — Ծիծաղելի հարցումն, կ'ըսէ Շնորհալին. մէկ անգամ օրհնուածն միշտ օրհնած է. խակ գինով և ջրով լուանալն և օրհնութենէ ալօթքն՝ հին Յունաց ծէսերէ առեր են մերնախնիք, և գեռ յունարէն գրուածքն գտուին 'ի Հայս: — Յետոյ Յունաց մեծ հակառակութեան և առասպելաբանութեան նիւթ եղած Առաջաւորաց պահոց վերայ կը խօսի, հերքելով այն իրենց յիշեալ Սարգսի և շանն առասպելը՝ որ « անգոյ է առաւել քան զեղջերուա-
« քաղն անուանեալ ». և կ'իմացընէ բուն պատճառը, 'ի Լուսաւորչէն հաստատուելու նախ քան զամենայն պահս, երբ քարոզեց Հայոց զքրիստոնէութիւն, և պատուիրեց որ քանի մ'օր ապաշխարութեամբ պահեն, և յետոյ սովորութիւն ե-

զաւ Նիւնուէացւոց ըրած պահոց յիշատակին միա-
ցընել զայն. որուն վերջը Ս. Սարգիս զօրավար
վկային ատեն գրուած ըլլալով՝ Ս. Սարգսի պահք
ալ կ'ըսուի:

Այս առաջին գրուածն է Միսաքանութեան
խնդրոյ մէջ ճեացեալն. որովհետև Աղէքսի տուած
գրուածն չկայ. և այս աւելի յորդոր և առիթ ե-
ղած է խնդիրն առաջ տանելու. վասն զի երբ Ա-
ղէքս դարձաւ՝ ի Կ. Պօլիս և ներկայացուց կայսեր
և պատրիարքին՝ Ներսիսի գաւանութիւնը և ծի-
սից բացատրութիւնը, շատ զարմացան, իրենց
կարծածէն աւելի մօտ գտնելով զՀայս, միանգա-
մայն և անոնց ծիսից վրայ օտարոտի կարծիքնին
շրջակելով: Այլ աւելի զարմանալի եղաւ իրենց՝
Շնորհալւոյ խոհական և հանդարտ գրուածն, որոյ
համեմատ աքանչելի վարքն և բարքն ալ լսեցին
իմացան Աղէքսէ, և հաւատացին որ այնպիսի անձ
մը միայն կրնայ զՅոյնս համոզել, և իրենց կան-
խակալ կարծիքը և հնացեալ աւելութիւնը լու-
ծանել: Ուստի և կայսրն Մանուէլ պատուով գիր
գրեց առ Գրիգորիս կաթողիկոս, դեռ ողջ կար-
ծելով զինա, (յամենայն սեպտեմբերի, 1166) [1], և
խնդրեց որ այսպիսի կարևոր գործ մը վճարելու
համար չի զլանայ խաբել՝ ի Կ. Պօլիս իր իմաս-
տուն եղբայրը՝ Ներսէսը: Հրովարտակը յանձ-
նեց Սմբատ Արուխ անուամբ պատուաւոր պա-
լատականի մը, որ յանուանէն կ'իմացուի մեզի
ազգակից ըլլալ: Սա երբ հասաւ՝ ի Հռոմկլայ և
վախճանած գտաւ զԳրիգորիս՝ առ նոյն ինքն հա-

1 Մանուէլի թղթոյն թուականն է ԺԵ Ընդիկտիոն, որ
կ'ըլլայ 1167. այլ անհաւատալի է որ 15 ամիս վերջ ալ
Գրիգորիսի մահն անգիտանայ. անոր համար սխալ կար-
ծեմք թիւը, և ԺԴ համարիմք ուղիղը (1166). կամ թէ այս
թուականիս գրուած էր թուղթն, այլ ուշանալով յաջորդ
տարին ղրկուեցաւ, և միայն թուականն փոխեցաւ:

բազատան Ներսէս մատոյց կայսերական հրաւէրքը, միանգամայն և դեսպանօրէն իմացուց կայսեր մեծ փափագը այս խնդրոյս կատարման, և զՆերսէս տեսանելոյն իր պալատան մէջ: Սակայն այս բանիս ասկէ եւս աւրգելք էր նոյն իսկ Ներսիսի կաթողիկոսանալն. և հարկ էր որ կամ սա նուիրակ խաւրէ առ կայսր, և կամ նա առ ինքն. և այս յետինս եղաւ:

Նոյն առեն Մանուէլ Աստուց կաթողիկոսին ալ Թուղթ գրեր և դեսպան խաւրեր էր Քրիստափոր անուամբ մէկը, որ նախ՝ի Հռոմկլայ եկաւ, և անկէց գնաց առ Մխիթար. առ որ Շնորհալին ալ հարկ սեպեց Թուղթ մը գրել, որպէս զի հասարակաց ըլլայ միաբանութիւնն և գիտանան իրարու ընելիքը: Այս Շնորհալւոյ առ Մխիթար գրած Թուղթն մեր քով չի գտուիր, ինքն Մխիթար հանուօրիւ խմաստը կ'ըսէ. և դուրս կը Թողու կարևոր բան մ'ալ՝ որու ինքն շատ հակառակ էր. այս ինքն երկու բնութեանց խնդիրը. Թէ և նոյն մատեանին վրայ յամառեալ է և Բար-Հեբրէոս (Աբուլֆարաճ) Ասորի պատմիչն, այլ Ներսիսի Թղթոյն մէկ հատուածը կամ ամբողջը մէջ կը բերէ ասորերէն, այսպէս. « Յունաց կայսրն 10 խնդիր առաջար-
« կեց մեզ. հինգն Հաւատոց վրայօք, որ են երկու միացեալ բնութիւն՝ի Քրիստոս ըսել, երկու կամ և երկու Ներգործութիւնս. երից ժողովոյ հետ ընդունիլ և զ՝Դ, ե, զ և է. ՝ի Ս.
« Աստուածէն վերցընել Որ խաչեցարը: Իսկ Ծի-
« սական հինգ խնդիրքն են, Ծննդեան տօնը կա-
« տարել ուրիշ ազգաց հետ. Ս. խորհուրդը խմո-
« րով և ջրով կատարել. Մեռոնը ձիթով պատ-
« րաստել. Ժամասացութիւնը եկեղեցւոյ մէջ ը-
« նել, և Պատարագն յայնկի (բաց դռներով) կա-
« տարել: Ի սէր խաղաղութեան դիւրին է մեզի ձի-
« սական խնդրոց մէջ յարմարիլ անոնց հետ, և ե-

« կու բնութիւն ըսել ըստ աստուածաբանից. այլ
« անկարելի է որ խաչեցարը վերցընել կամ սուրբ
« անձինքները նզովել: Ի վերայ այսր ամենայնի՝
« ինչ որ դու ընես մենք ալ այնպէս ընենք »: Մի-
խայէլ պատասխանեց որ իրեն եկեղեցւոյն համար
միայն իրեք նոր խնդիր կար. այսինքն Քրիստոսի
երկու բնութեանց, Քալկեդոնի ժողովոյն և Խա-
ղեցարին, զորոնք ինքն անփոփոխ պիտի պահէր.
իսկ դու, կ'ըսէր, ի հարկէ քու խնամատութեանդ
համեմատ կը շարժիս, բայց յուսամ որ փոփո-
խութիւն չես ըներ: Ակն ածելի բան մ'ալ ուզե-
լով ընել Միխայէլ՝ իր աչերտներէն մէկը՝ (Թէո-
դորոս Բար-Վէհեբուն) որ ըստ իր վկայութեան
շատ հմուտ էր փիլիսոփայական խնդրոց՝ ղրկեց
Շնորհալւոյ, որ օգնական ըլլայ Հայոց՝ երբ վիճե-
լու ըլլան ընդ Յոյնս. և պարծելով ալ կ'ըսէ Մի-
խայէլ, թէ իր նուիրակին զարմանալի հանճար ցու-
ցեր է և պապանձեցուցեր է զնուիրակ աստուա-
ծաբանն Յունաց (!): Սակայն իր իսկ յետոյ ըսելն,
թէ « զպատասխանին տեառն Ներսէսի՝ զոր գը-
« րեաց (առ կայսրն) մեք ոչ խնացաք », և Ներ-
սիսի հոհական պղուշաւոր և արդար բառքն՝ ցու-
ցընեն, որ ոչ Միխայէլի գրածն և ոչ իր նուիրա-
կին խօսածն արժանաւոր բաներ էին. և շատ հե-
ռու էր երկու կաթողիկոսաց հոգին և տեսու-
թիւնն: Մինչ մեր և հետևողքն կը ցաւէին իր մա-
հուամբը Միաբանութեան գործոյն անկատար
մնալուն համար, Միխայէլ անպատկառ կ'ըսէ,
« հաւատամք եթէ փառաւորեալն ի մեզ անտե-
« սութիւն Աստուծոյ՝ խափանեաց զքան զթագա-
« ւորին... և կաթողիկոսն Ներսէս փոխեցաւ
« յատեանս. և մնաց հինն մեր անատանելի »,
և այլն: Սակայն մենք ալ հաւատամք Միխայէլի
հօս ուրիշ մէկ խօսքին վրան Ներսիսի, թէ « կա-
« րելի էր յատուածաշունչ գիրս, և պարկեշտ

« և ջանացող այր, ուղիղ կանոնաւ գրոց. և նա
« վճարեաց զիւրն »· այլ ոչ որպէս կարծէր և կա-
մէր Միխայէլ:

Շնորհալին յանձնեց կայսեր նուիրակին՝ անոր բերած թղթին պատասխանը, որ կ'ըսուի Ա Թուղթ Ներսէսի, առ կայսրն Հռոմոց. և կը սկսի, « Ջրհա-
« տոտապատակեալ ինքնակալ ծիրանածին և օգտա-
« տափառ սուրբ Թագաւորի », և Ալէքսի ձեռ-
քով գրածէն աւելի երկար Դաւանանք մ'ալ: Ի թղթին կը յիշէ եղբօրը մահը և նոյն չաբթուն մէջ նաև Աստուծոյ պատրիարքին մահը, և նոր ընտրուածին (Միխայէլի) փափաքն 'ի միաբանու-
թիւն. կ'իմացընէ ևս որ լսեր էր, « Թէ սուրբ և
« առաջին ամենայն եպիսկոպոսապետաց՝ հայրա-
« պետն Հռոմայ և փոխանորդն Պետրոսի առա-
« քելոյ՝ յիւրոց անուն իմաստնոց առաքեաց իւ-
« րեանց առաջի սուրբ Թագաւորութեան ձերոյ՝ վա-
« ղուն միաբանութեան հաստատոյ »· որով Շնոր-
հալեցի ալ յարմար առիթ կ'երևէր այսքան գըլ-
խաւոր եկեղեցեաց՝ Լատինաց, Յունաց, Հայոց և Աստուծոյ միաբանութիւնն: Իր կողմանէ կշռե-
լով գործոյն ծանրութիւնը՝ խնայուց մեր աղգին եպիսկոպոսաց ամէն կողմ, աղօթք ալ ապաստըրե-
լով, ինչպէս որ կ'իմացընէ. « Եւ մեք առ աղգի մե-
« ծոյ եկեղեցիս՝ որ յԱրևելս և 'ի Մեծն Հայք, և
« 'ի միայնատանս որ 'ի սուրբ Լերինս, գրե-
« ցաք », և այլն: Կ'ապաչէ կայսեր որ Յոյնք ալ աղօթք ընեն այս բանիս համար, « ընդ ամենայն
« եկեղեցիս՝ որ ընդ Թագաւորութեանդ ձերով »:
Բայց մէկտեղ գալու համար՝ աւելի դիւրին կը տեսնէր Յունաց և կայսեր նաև գալը՝ քան Հայոց առ նոսա երթալը. և անոյշ խօսքերով կ'ըսէ, որ այս բանիս նուաստութիւն մը չկարծեն Յոյնք, այլ մանաւանդ պատիւ, իբրև գօրաւորք՝ ակարաց օգ-
նելով. և ըսած այսմ պէսք է որ սկսով և վերջանայ

վարուքին, և ոչ մեծամտութեամբ. և առանց ուշացուրութեան երկու կողմէն՝ իբրև հաւասարք խօսին, որպէս զի համարձակ ալ ըլլան, և հոգևոր սիրոյ գործն յաջողի: Երկու ազգաց մէջ 600 տարուան հնացեալ աներկուութիւնն՝ « կարօտ է բազում հոգևոր բժշկական իւղոց օծմանց, այսինքն՝ սիրոյ, գթութեանց և ողորմութեանց »:

Մանուհէլ կայսր գոհացաւ Շնորհալւոյ յօժարութենէն վրայ, և արդարացընելով անոր բացծնելը, մանաւանդ որ իրեն ալ դժար էր իր մայրաքաղաքը գտուիլը, որովհետև անդադար պատերազմայ կը պատրաստուէր, և հիմայ թէ Դանուբի վրայ, թէ Եգիպտացւոց դէմ գործ ունէր, պատշաճ համարեցաւ քանի մը հմուտ աստուածբաններ ղրկել առ կաթողիկոս մեր, որ վճռապետութեամբ խնդիրը լուծեն պարզեն և իրեն իմացընեն. և յարմար գտաւ այս բանիս վերոյիշեալ Թէոդիանոս անուամբ գիտնականը՝ զոր հռոմէական բառիւ Տայֆոս կամ Տագիոպոս, և յունական նաև Էպէոն Թագաւորութեանն, կոչէ. առաջինն պալատական կամ քաղաքական պատուոյ անուն է, ինչպէս տեսանք ի Գրիգոր Մագիստրոս. երկրորդն ալ կը նշանակէ արքունի ապատաւոր կամ հետևող [1]: Թէոդիանէ՝ իր գրածներէն կ'երևի արդարև հմուտ Ս. Հարց վարդապետութեան, բանիբուն և խոհական: Իրեն ընկեր տուաւ կայսրն Փիլիպպուպօլեայ [2] Հայոց վանահայրը՝ Յովհաննէս Ոսկեմանը, որ թէ գիտութեամբը և թէ մեծայոց ազգակից ըլլալովն՝ օգտակար պիտի ըլլար:

1. Այս բառս լատիներէն փոխուած է Ligium, յորմէ փոխառկերէն ալ Lige, և անկէ ի հայ՝ մեր կիւրիկեղի թագաւորաց առեն Լիճ ծոցի կոչելով. միայն թէ հօսթոզեթոյն հայերէն թարգմանութեան մէջ յունական բառին հայցական հոլովը Լիճպիոն իբրև ուղղական դրուած է. զի բուն բառն է Լիճպիս, λίχνος.

2 Փիլիպպէ քաղաք ի Թուրքիա: — Ոսկեմանն կոչուի Հայոց՝ յունարէն բնագրին մէջ Ատրձոնոս Ἀτρώνος.

Աստուծոյ յանձնեց իր առաջին Թուղթն առ Եբրայեցիս. և պատուիրեց որ լաւ քննեն անոր գրածներուն և բացծներուն միտքը, անոր երկրորդ անգամ Սմբատայ ձեռքով գրածին մէջ ալ տարակուսական կամ պարզելի բաներ գտնելով: Մանաւանդ թէ բուն իսկ Շնորհալւոյ գրածին պարզութիւնն ալ ինքը կը վարանեցընէր. որովհետեւ ինչուան այն աստեն Հայոց գաւանութիւնը՝ մանաւանդ Քրիստոսի բնութեանց վրայօք՝ շատ անկատար կը համարէր, և հիմայ կը տեսնէր որ թէ ոչ բոլոր բացատրութեամբ բանից՝ այլ մօտ նոյն կ'երեւի. և դեռ ոմանք հօն 'ի Կ. Պոլիս, և նոյն իսկ ազգաւ և լեզուաւ Հայ, այլ ծխիւ հռոմայեցւոյ և մանաւանդ ատելութեամբ յոռացեալ՝ կը բամբասէին զՀայս, և եւտիքական կ'երեւցընէին. կեղծաւորութիւն կարծէր՝ թէ ոչ Շնորհալւոյ հաւատքը, գոնէ ուրիշ չատերունը:

Ականի զրախօսաց մէկն էր Տարսոնացի Պօղոս քահանայ մը, « որ գնացեալ էր անդ, հռոմ- « մայեալ և բամբասէր զազգս մեր... յորժամ « հանդերձեալ էին միաբանել Հայք և Յոյնք ». ատոր վրայ բնապէս զայրացեալ ազգայինք՝ սկըսան զինքը բամբասել, և Սամուէլ անուամբ մէկն ալ անոր ընկերին գրելով՝ նախատանօք Պօղոս Սամոսատացի անուաներ էր. ուսկից ալ աւելի զկծեալ նա՝ բողոքեց կայսեր, որպէս թէ պաշտպանէ զինքն իբրև հաւատարիմ Յունաց եկեղեցւոյ, և հակառակորդները լռեցընէ: Ահա բաներս 'ի հարկէ արդեօք կ'ըլլային Շնորհալւոյ հոգւոյն և գըրչին. անոր համար կերպով մ'իմացուց Պօղոսի ալ, որ ինք զինքն արդարացընել ուզելով՝ հակառակորդաց չարախօսութիւնը պատճառ կը բերէր այնպիսի համբաւոյ: Շնորհալի ալ ասկէ զինքը բռնելով՝ գրով խրատեց, որ եթէ ինքն այնպիսի բամբասանք չէ ըրած իր ազգին վրայ՝ ապա իր

հայրենի ծէսն ալ չթողու, որոյ բանաւոր պատ-
ճառ մ՚ալ չկայ, մանաւանդ որ հիմայ արդէն յու-
նաց հետ միաբանութեան խնդիր կայ, պէտք էր
սպասել Ժողովոյն վճռոց, և ոչ թողլով իրեն-
ցը՝ անցնիլ օտարաց կողմը. նոյնպէս Սամուէլի
գրածին վրայօք բողոքելն ալ առ կայսրն՝ շատ վե-
նասակար էր Հայոց դատին, վասն զի անով կար-
ծուէր թէ այն տաքգլուխ երիտասարդին գրածն՝
ծերունեաց և գիանոց կամք է, « և այնու՝ խա-
« բէութիւն՝ զոր ՚ի մէնջ բան և իր՝ կարծեցեն »:

Ահա այս բաներուս համար կարևոր էր կայսեր
սուրգութեամբ քննութիւն ընել տալն. և այն-
պէս ըրին իր նուիրակքն երբ հասան առ Շնոր-
հալին ՚ի Հռոմկլայ, ուր Միխայէլ պատրիարքի
գիանական աշակերտն Թէոդորոս ալ եկեր էր,
հանգերձ Բեանոյ Յովհաննէս Աւորի եպիսկոպո-
սով. ՚ի հարկէ քանի մ՚ալ Հայոց եպիսկոպոսք
կային ընդ կաթողիկոսին, թէ և ՚ի կարգի վճռա-
բանութեանն չիշուին միայն Գրիգոր՝ եղբօրորդի
նորին (Տղային), Սահակ եպիսկոպոս, որ Թուխ կա-
թողիկոսի Դրան եպիսկոպոսն, և Վարդան վար-
գապետ մը, և Սեբաստոս մը՝ որ Թուխ Թարգ-
մանն և նուիրակ: Հաւանական է որ բաս նախա-
պրեալ Թղթոյ Շնորհալւոյն՝ այլ և այլ կողմերէ
եպիսկոպոսք ալ եկած էին. բայց որովհետև անոր
Թղթոյն և կայսեր պատասխանւոյն միջոց երկու
տարի մ՚անցած կ՚երևի, Թուխ թէ մեր եպիսկո-
պոսք ալ տեղերնին դարձեր էին, և քիչեր կային
Թէոդիանեայ եկած տեղն: Արդ տասնց գիմաց
սկսաւ քննութիւնն հաւատոց Հայոց, բանից
Շնորհալւոյն և վիճաբանութիւնն, որ և երկար
օրեր տևեց, Թերևս և ամիսներ. գլխաւորն միշտ
Երկու բնութեանց խնդիրն էր. որոյ վրայ այնքան
գարձուածներով խօսուած է հօն, բան երկար
պիտի Թէոդիանեայ, զոր մեր պատմիչ Միա-

քանութեանն (որ է ինքն Ներսէս Լամբրոնացին) համառօտ քանի մը տողով. « Ի բազում ժամա-
« նակս դեպերէին առ աստուածաշունչ գիրս, եր
« ինչ՝ յոր մի օրինակաւ նայէին, և եր ինչ՝ զոր ի-
« րաքանչիւր ոք այլով օրինակաւ թարգմանէր. և
« մանաւանդ զԹուղթս սրբոյն Կիւրղի որ առ Սե-
« կունդոս, զԱն և զԲն, որ յայտ առնէ՝ ի բանս
« իւր, թէ ոչպէս հարքն ասացին Մի է բնութիւն
« Բանին մարմնացելոյ: Առ այս ոչ կամէր ինա-
« տասերն տեղի տալ՝ ասելոյ անճառ միաւորու-
« թեամբն մի բնութիւն, այլ զերկուց բնութեանցն
« յատկութիւն անշփոթ պահեալ. իսկ հայրա-
« պետն տուրբ՝ երկոքունքն սպառազիներ ընդ ա-
« ռաջին սրբոյն. ընդդէմ Նեստորականացն միա-
« ւորեալով, և առ Եւտիքեանոսս՝ պյատկութիւնն
« Ձմարտեալով »: Այս համառօտ վկայութիւն մեր պատմչին անհարդահս կ'ինացընէ Հայոց խոստո-վանութիւնը, որ թէ և երկու բնութիւն որոշ և անշփոթ կ'ըմանան, և առանց անոր ալ չեն կըր-նար ըմանալ Քրիստոսի անօրէնութիւնները, սա-կայն վան՝ ի մի անձն Քրիստոսի երկուքն ալ միա-նալոյ, և վասն սասակի ընդդիմութեան Նեստորի, Մոպսուեստացւոյն ու Դիոդորի Տարսոնացւոյ, որոց ամենէն առջի հերքողք և հակառակք՝ երե-նից նահանգն եղած էին, նաև նախ քան զՍ. Ժողովն Եփեսոսի, հնուց՝ ի վեր միաւորութեան մասք աւելի մի բնութիւն կ'ըսէին քան երկուք. և սորա մեկնութիւնը շատ պայծառ և գեղեցիկ և զօրա-ւոր խօսքերով բացատրեր էր քաջ Իսահատակը Հայրապետն մեր Յ. Օձնեցի, որ երբեմն՝ ի յետ-նոյ ոմանց լատագով միաբնակաց կարծեալ՝ նո-րեցս անտարակոյս հոչակեցաւ ողջմտութեամբն, թէ իր պանծալի գրուածոց յայտնութեամբը, և թէ այն գրուածին հին օրինակի մը ներքև առտրա-պլեալ հատատատութեամբք Պանլատունի կաթողի-

կոսաց մերոց, սկսեալ՚ի մեծ Վկայասիրէն. զոր և յիշեց հիմայ Թէոդիանեայ՝ այս ժողովոյս մէջ՝ իր Թոռն Շնորհալի[1]. որոյ վրայ զարմանալով ինքն Յոյն ստուածաբանն ալ՝ խնդրեց և բոլոր Ճառը օրինակել և թարգմանել առաւ, և մեծ համարմունք ստացաւ մեր եկեղեցւոյ դաւանութեանը վրայ: Եթէ այս պատուական գրուածն աւելի առաջ ուրիշ հայրապետաց ալ ծանօթանար՝ շատ աւելի օգտակար պիտի ըլլար մեր եկեղեցւոյն, նոյնպէս եթէ իրմէ առաջ ալ նոյն մտքով գրուածներն յայտնուէին. որով շատ մ՚աւելորդ և անպիտան նաև մոլար և սխմամր գրուածք խափանէին. և յետագայք ալ իրենցմէ առաջիններուն այսպիսի գրուածքը իբրև հին մարդկան ուրեմն և գիտուն՝ չէին համարեր, և հասկընալով կամ չհասկընալով չէին պաշտպաններ: Ապա զարմանք չէ որ մեր ազգին մէջ ալ հին և նոր սահեն մոլար կարծիք և գրուածք եղած ըլլան, և աւելի՝ անկատար և անհամաձայնակ բացատրութիւնք: Սակայն աւելի մեծ զարմանք կ՚ըլլար՝ եթէ Թէոդիանեայ գրուածն ալ բոլորովին աներկբայ ըլլար. վասն զի այնպէս մը կ՚երևցընէ թէ Շնորհալի ոչ միայն յայտնահարեալ ըլլայ, այլ և իրմէ հասկընայ այն կարևոր խնդրոյն պարզ իմաստը. մինչդեռ շատ տարիներով առաջ թէ Բան Հաւատոյ

1 Այսպէս էր տառագրութիւնն. « Այս է գիրք ուղ-
« դափառութեան հօր մերոյ Ս. Յովհաննու Կաթողիկոսի
« Հայոց և իմաստասիրի Օձնեցւոյ: Եւ ես Գրիգորիս
« նուաստս՝ նորին հաւատոյ որդի և աշակերտ՝ ձայնակից
« եմ այսմ խոստովանութեան և աւանդման. և որք այլա-
« պէս դաւանեն քան զայսոսիկ, և նորաձևս առնեն »...
(նզովեալ են): — Գրիգոր Տղայ յիշելով զայս կ՚աւելցընէ. « Եւ մերն այլ առիթ նախնիք՝ զնորայն (Յով. իմաս-
« տասիրի) ընկալան խոստովանութիւն. և ձեռնադրեցին
« անխախտելի մնալ գիրս, Գրիգոր Վկայասէր, և բար-
« սեղ Հետևող նորին, և միւս Գրիգորիս և Կերաես՝ մերս
« հարք. և է յարկեղս գրոց մերոց ընկալեալ՚ի նոցանէ »:

քերթուածին մէջ, թէ ուրիշ գրուածոց, և թէ դեռ քանի մը տարի առաջ գրած Ընդհանրական-ին դաւանութեան մէջ, և նոյն իսկ առ Միխայէլ պատրիարք Աղուանից գրած Թղթին, և մեր ուրիշ տեղ յիշեալ աղօթքի կամ դաւանութեան (253) մէջ ալ՝ յայտնապէս զրուցած է Շնորհալին՝ ինչ որ հիմայ Թէոդիանէ կը պարծի ըսել տալու: Սակայն մենք ալ աւելի համարձակ խօսելով կրնանք ըսել, թէ իրաւի Օձնեցին՝ չորս ու կէս դար իրմէ առաջ, Լամբրոնացին և Գր. Տղայ չորս ու կէս տարի իրմէ վերջը՝ աւելի ալ որոշ կ'ըսեն երկու բնութիւն, և այսօր նորուս համբակք Հայոց ևս աւելի որոշ. բայց ոչ թէ անով Շնորհալին նուազ ճանչցեր է. այլ իր գերազանց խոհեմութիւնն էր՝ որ ազգայնոց վիճակին և ոգին դիտելով՝ չուզեց առանց զուրիչներն ալ լաւ պատրաստելու՝ այն քայլն ընել յայտնապէս՝ որուն համբոյ բացաւ և հեռևցուց իր յաջորդը և իր Թուղը: Երբեմն գաղտուկ մէջ չհաստացածն՝ տարուան մէջ կը հաստատնայ. քիչ ժամանակ մ'ալ կանխեն՝ կրնայ մեծ գործ մ'աւերել, և ըստ Իմաստնոյն կայ « ժամանակ լռելոյ և ժամանակ խօսելոյ ». Շնորհալին գիտեր զժամանակին և ընելիքն ըստ ժամանակին. գիտեր ևս որ խօսելէ և լռելէ զատ՝ երրորդ միջոց մ'ալ կայ. և այս միջոցով կրնար փարատել թէ կայսերականաց կասկածը և թէ իր ամեն ժամանակի և մեր նոր խիստ և ձիշդ սահմանաբանից և քննաբանից, եթէ այնքան յայտնի ըսածները բաւական չեսեն. և այն միջոցն էր՝ գրելն. գրել ոչ միայն յայտնապէս, ինչպէս առաջ և յետոյ ըրաւ, այլ և գաղտ թուղթ մը գրել կայսեր, զոր ժամանակին ալ գաղտուկ պահեց և ծածկեց. այլ գրած ըլլալն յայտնեցաւ նորերս՝ Թէոդիանեայ երկրորդ գրուածովը:

Վասն զի երբ վիճաբանութիւնքն վերջացան,

Շնորհալի ՚ի Թուղթ մը գրեց առ կայսրն, խնայելով գոհութեամբ որ երկու կողմին ալ հաճոյ և օգտակար եղաւ իրենց խօսակցութիւնն. Հայք համոզուեցան որ Յոյնք երկաբնակք՝ նեստորականն չեն եղեր. Յոյնք ալ՝ թէ Հայք հեռի են Եւտիքեայ վարդապետութենէն. և դարձեալ (երրորդ անգամ) երկարօրէն կը գրէ այս խնդրոյս վրայ միայն, ալ աւելի բացատրելով իրենց և այլոց ըսածը, թէ ինչ կերպով Մի և երկու բնութիւն ալ ըսելն՝ կըրնայ թէ ուղիղ խնացուիլ և թէ ծուռ: Այս Թուղթս գրեց Շնորհալի ՚ի սկիզբն հոկտեմբերի, 1170 տարւոյ. անոր հետ գալոց Թուղթ մ՚ալ տուաւ Թէորիանէայ՝ որ նոյնպէս զգուշութեամբ կայսեր տայ և միայն նա գիտնայ. յորում՝ այսչափ խնացուեցաւ յետոյ որ գրած էր թէ ինքն ամենևին տարակոյս կամ ընդդիմութիւն չունի անոր ուղածին և նուիրակին ըսածներուն. այլ պէտք է դեռ քիչ մ՚ալ խոհեմութեամբ և չափաւորութեամբ շարժին և խօսին, որ ինչուան այն տեն անվարժ լսելիք եպիսկոպոսաց և ժողովրդեան յորս դեռ յունական տեսլութիւնն ալ կը հնչէր, չի խրտին և բոլորովին պարապ չելնէ իրենց աշխատանքն. ինչպէս որ յիրաւի ձգտեցին իր զգուշութիւնը՝ Հռոմկլայի մեծ ժողովին տեն (1179) և վերջը Հաղբատեցւոց և նմանեաց ըրածն և գրածն: Ապրդ երբոր բերաւ Թէորիանէ և հրատարակեցաւ Շնորհալւոյ յայտնի Թուղթն, Յունաց եկեղեցականք և հետաքննիչք՝ թէ զայն կարդալով և թէ իրենց աստուածաբանին գրածները, և մանաւանդ ասոր տուած գովեստները մեր Շնորհալւոյ գիտութեան և վարուց վրայ, « զհեզահայեցութիւն հոգւոյն և զպարկեշտու-
« թիւն անձինն, և զձգնաւորական կրօնն՝ զոր
« եսեան... և թէ որպէս ՚ի հարցմունսն խոնարհ-
« համիտ, և ՚ի պատասխանին հանդարտ, խա-

« պաղեստինեան խնդրող և ջախջախ օրէնսն հաս-
« տատող », շատ աքանչացան և չկրնացան թէ
իրեն վրայ և թէ մեր ազգին. « Եւ այնուհետեւ էր
« տեսանել, կ'ըսէ պատմիչն, մեծ համարձակու-
« թիւն մերոյ սեռիս՝ ի թագաւորական քաղա-
« քին եկեղեցիսն և առ ամենեսեան՝ արդարա-
« ցեալս ի հարց և ի վտրձ »: Թողում յիշել ո-
րչ մեծամեծ գովութիւնները, և՝ երկրորդ Գրի-
գոր Աստուածաբան մը յայտնեալ ի Հայաստան՝
ըսելնին. և մանաւանդ կայսեր ուրախութիւնն՝
որ « զուարճանայր և բերկրէր յանձն, մեծ հա-
« մարելով զաստուածային եկեղեցւոյ խաղաղու-
« թիւն, քան զբոլոր Հռոմայեցւոց տիեզերակա-
« լութեանն յաղթութիւն ». և իրաւամբք ինքն
կըլնար շատ աւելի ուրախանալ, որովհետեւ Ներ-
սիսի միտքն և ոգին ամենէն աւելի ձանչցեր էր՝
անոր առանձնակի գրութենէն. զոր ուրիշներն՝
չգիտնալով, իրենցմէ ամենէն նրբաւեսք կամ
նրբախոյզք ալ դեռ միւս յայտնի գրած թղթովը
բոլորովին դոհ չըլլալով, կըրնային իբրև վճռական
գրուածի մ'ալ սպասել: Եւ ահա զայս առաջար-
կեց Կոստանդինուպոլսի պատրիարքին ժողովը,
կայսեր ալ աղաչելով որ իր թղթոյն հետ խաւրէ
զայն առ հայրապետն Հայոց, նոյն Թէոդիանոս
ձեռքով: Եւ էին ժողովքին խնդրուածքն ի Հա-
յոց՝ ինն բան. ա. Նզովել մոլար մասք մի բնու-
թիւն ըսողները, ինչպես Եւտիքէս, Դիոսկորոս,
և այլն: բ. Քրիստոսի երկու բնութիւն, ներգոր-
ծութիւն և կամք ըսել, աստուածային և մարդ-
կային, ոչ հակառակ միմեանց: գ. Խաչեցարը վեր-
ցընել ի Սուրբ Աստուածէն: դ. Յունաց և Լա-
տինաց հետ ուներ Քրիստոսի ծնունդը, Մկրտու-
թիւն, Քառասնօրեայ Պաշտամունքը, Աւետումը, և
այլն: ե. Միւռոնը ձիթով ընել: զ. Պատարագը
հացով և ջրով կատարել: է. Պատարագի և ժամ-

ասացուԹեանց առեն ժողովուրդը եկեղեցիէն դուրս չԹողուլ։ ը. Ընդունիլ Դ, ե, զ, է, Տիեզերական ժողովները։ — Թ. ԿաԹողիկոսին հաստատուԹիւնը կայսրէն ընդունիլ։ Յունաց Պատրիարքն ինքնին՝ որ Միքայէլ կոչուէր՝ այս բաներուս համար առանձին ԹուղԹ մը գրեց առ Հայրապետն մեր. նոյնպէս և կայսրն երկրորդ անգամ, յամենայն դեպս. 1172, ըսել է որ Թէոդիանեայ բերածէն ամբողջ երկու տարի ետև, Թերևս այլ և այլ գբաղմամբք ուշանալով. և նորէն անոր և ՈւԹմանի ձեռքով խաւրեց 'ի Հռոմկլայ. անկէ զատ Շնորհալւոյ առանձնակ ԹղԹոյն ալ առանձնակ պատասխան ալ գրելով. սակայն չկարցաւ անոր պէս գաղտնիքը պահել, այլ գոնէ յայտնեց դեսպանացը, և այլոց խորհրդականաց։

Ի սկիզբն յաջորդ տարւոյն, որ էր վերջին տարի կենաց Ներսէսի, (1173) 'ի 20 փետրուարի հասան պատգամաւորքն 'ի կաԹողիկոսարան Հայոց, ուր արդէն ժողովեալ էին Հայոց մեծաւոր եպիսկոպոսունք Կիւլնկիոյ, Տարսոն լերանց և Միջագետաց, և մատուցին կայսերական ԹուղԹերը. Շնորհալին իր սովորական շնորհօք և մարդասիրուԹեամբ ընդունեցաւ զանոնք, բայց երբ իրիկունը Թէոդիանէ իր Միքայէլ Թարգմանին ձեռօք կայսեր առանձնական ԹուղԹն ալ խաւրեց, Շնորհալի իմանալով նա իր գաղտնի գրածներն ալ ծանուցեր է ՈւԹմանայ, ոչ սակաւ տրտնաձեցաւ. Թէ և Թէոդիանէ չանաց անմեղադրել, իբր Թէ ՈւԹմանն ալ վհատեցնելու եկած ըլլալով, պէտք էր որ տեղեակ ըլլայ իր մտացը։ Ա՛ր աւելի եղաւ Շնորհալւոյ տագնապն՝ երբ տեսաւ որ անոնց անզգուշուԹենէն իր եպիսկոպոսներն ալ կասկածեր են գաղտ ԹղԹակցուԹեանը վրայ և գժտուԹ. անոր համար երբ նորէն վհատուԹիւնն բացուեցաւ՝ ինքն գարձեալ Թողուց մի

բնութեան վրայօք խօսիլ, Թէորիանէ ալ աւելի սաստիկ ընդդիմաբանեց. իսկ պարզամիան Ութմանն՝ բոլորովին քօղը պատռելով, ես գաղանիք ծանկել չեմ դիտեր, ըսաւ, և սկսաւ ասիպել զկաթողիկոսը որ իր խոստմունքը կատարէ, կամ թէ չէ՝ յայտնի խօսքը յետ առնու: Երբ զայս լսեցին եպիսկոպոսունք, մեծ շփոթութիւն և շշնկոց ծագեցաւ մէջերնին. բայց դեռ հլուք ժողովական հրահանգաց՝ երբ նախագահ հայրապետեան ձեռօք նշան մը տուաւ՝ լռեցին, և ինքն այն օր բաւական է ըսելով արձրկեց գումարումը: Բայց ծանր եղաւ իր սրտին տագնապն այն ծերութեան և տկարութեան հասակին. ինն օր մարդ չընդունեցաւ քովը. մինչև պատգամաւորքն ալ սկսան մեկզմէկ մեղադրել կամ անմեղադրել. Թէորիանէ կ'ըսէր, թէ ես Թուղթը գալոուկ տուի կայսեր, նա ալ այնպէս պահեց. բայց տեսնելով որ յայտնի Թուղթը կարդացողք չեն հաւատար կաթողիկոսին գրածին՝ հարկ սեպեր է մեկալն ալ ցուցընել. Ութման ալ կ'ըսէր, թէ որ ինձի տուած ըլլար Թուղթը՝ ես չէի Թողուր որ գուրս ելնէ. բայց հիմայ ամենուն ալ յայտնի է, և Թերևս հարիւր օրինակէ աւելի սփռուած է ապիս անդին: Վերջապէս Շնորհալին խաւրեց զԳրիգոր Տղայ և քանի մ'ուրիշ երևելի անձինք՝ պատգամաւորները մեղադրելու, և ապացրեց որ ալ այն խնդրոյն վրայ չխօսուի, այլ ուրիշ բանի անցնին:

Երկրորդ օրը նորէն կանչեց՝ի ժողով. նախ խնդիր եղաւ վան Բաժակին. Թէորիանէ կ'ըսէր, թէ նոյն իսկ Ս. Յակովբայ Տեառն–եղբօր ընծայուած Պատարագամատուցին մէջ ալ կը յիշուի խառնուածն ջրոյն. Շնորհալին ալ, թէ այդ գործդ Ս. Յակոբայ՝ յիշուած չէ Ասաքելական կանոնաց մէջ. իսկ Թէորիանէ պատասխանեց, թէ Ջ աիեղերական ժողովն ընդունած էր զայն՝ իբրև վա-

ւերական, և իր Լր կանոնումն ալ պատուիրէր Հայոց՝ զնոյն արարողութիւն։ Շնորհալի ալ կըսկ- ՝նէր թէ Հայք դեռ այն ժողովն ընդունած չըլլալ իրենց համար առանձնական վարդապետի վկայութիւն մ՚էր ըսածն։ Այլ տեսնելով որ Թէոբիանէ այս բանիս դժարեցաւ, Գոնէ պատարագին կատարման անհրաժեշտ հարկաւ չի պահանջուիր այդ՝ ըսելով, առ այժմ Թողուց զայն ալ։ — Յետոյ խմորեալ հացով պատարագելն առաջարկեցաւ, ինչպէս որ Ս. Գրիգոր Նիւսացին ալ կը գրէ, ըսաւ Թէոբիանէ. իսկ Շնորհալի պատասխանեց, Թէ հայերէն Թարգմանութեան մէջ չէր կարդացեր այդ բանը։ — Երբ ասնկց օրերուն խնդիրն առաջարկեցաւ, Շնորհալին՝ Ադոր վրայօք առջի անգամ բաւական խօսուած է, ըսելով, դադրեցուց։ Եւ երբ անկէ ետև Միւռոնի նիւթոյն խընդիրն առաջ բերին՝ Շնորհալին ուզեց կերպով մ՚ի մայրնել որ Յունաց պահանջմունքն հաւասար արժէք չունին, հաւասոյ և ծխից խնդիրք խառնուած են. և առանց նոր պատասխան տալու՝ ուզեց որ Յունաց բոլոր պահանջածն կամ պայմանքն միանգամայն կարդացուին։ Երբ կարդացին վերոյիչեալ ինն գլուխները, հարցուց պատգամաւորաց, Թէ մեր միաբանութեան համար անհրաժեշտ հաւրկ է այդ ամենն ալ ընդունիլ, Թէ կընդունանք զամանս ումանս պակաս ընել։ — Թէոբիանէ՝ կարեւի է Թէ, ըսաւ, այսպիսի կարևոր գործ մը խափանելուս համար՝ յանձն առնուն կայսրն և պատրիարքին ժողովն՝ բացառութիւն մ՚ընել։ Հարցուց Շնորհալին. Որո՞նք կընդունանք ՚ի բաց Թողուլ։ — Թէոբիանէ. Դու պէտք է ըսես, Թէ ո՞րն ձեզի աւելի ծանր պայման կ՚երևի։ — Շնորհալին. Աւելորդ է իմ ըսելս, վասն զի կընդունայ ընդալ որ ժողովն ուրիշ կերպ դասի։ — Թէոբիանէ. Եթէ Դու որ գլուխ ես, չես կընդուներ ըսել կամ

չես գիտեր, եա որ և ոչ ոտք եմ մեր եկեղեցւոյ ժողովոյն՝ ինչպէս կըրնամ գիտնալ: Սակայն կարծեմ որ յանձն կ'առնու մեր եկեղեցին ձեզի թողուլ ձեր կաթոլիկասին ազատ և անկախ ընտրութիւնը, և անխմոր հացով պատարագելը, եթէ մեկալ պայմաններն յանձն առնուք: — Շնորհալին. Ուրեմն այս բանս քննելու և որոշելու համար՝ հիմայ քովս գումարեալ ժողովականք բաւական չեն. պէտք է որ բոլոր իմ իշխանութեանս ներքև եղող եպիսկոպոսաց հրաւէր խաբեմ և ազգային ժողով գումարեմ. վասն զի « գլխոյն « անհնար է առանց անդամոյն՝ գործոյ իրիք կա« տարումն առնել ». և հարկ է որ արևելեան եպիսկոպոսունք ալ գան. և միաբան քննելով՝ ապա կըրնամ լմնցընել կայսեր և ձեր ժողովոյն՝ թէ ո՞ր պայմաններըը կըրնանք յանձն առնուլ և ո՞րն ոչ. որպէս զի միաբանութիւնն և սէրն գոհութեամբ հաստատուին: Թէոդիանէ հարցուց. Ե՞րբ կըրնաս գումարել ժողովդ: — Շնորհալի. Չեմ կըրնար որոշակի ըսել, վասն զի չեմ գիտեր Հանապարհաց հեռաւորութիւնը. միայն Աղուանից կաթոլիկոսին համար գիտեմ որ երեք ամսական ճամբու հեռաւորութիւն կայ մեր մէջ, և անհրաժեշտ հարկ է որ նա ալ գայ, վասն զի սերտ կապակցութիւն ունին մեր երկու եկեղեցիքն, և առանց իրարու խորհրդակցութեան չի կատարուիր այսպիսի գործ: — Թէոդիանէ. Կըրնա՞ս հիմայ ալ տալ մեզի առ կայսր տանելու թուղթ մը: — Շնորհալի. Այո, կը պատրաստեմ և կու տամ:

Այսպէս արձակեց հայրապետն այն օր ալ ժողովը, և երկրորդ օրը խաբեց առ Թէոդիանէ՝ կայսեր տանելի թուղթը, նորէն ապահովցընելով որ թէպէտ և ինչուան այն աստեն Հայոց մի քննութիւն ըսելն ալ ուղիղ մտօք էր, այլ Յունաց գայթակղութիւնը վերցընելու համար՝ իրենց հա-

մաձայնին: Հետևեալ օրն ալ, որ էր շաբաթ և վերջընթեր օր ժողովոյն, ուշ առեն առանձին կանչեց զԹէոփիանէ, և խրատեց որ զգուշութեամբ խօսի եպիսկոպոսաց հետ, որք դեռ ահաձ էին Շնորհալւոյ առանձնակ թղթակցութեանն համար, և գիտնայ որ առանց եպիսկոպոսաց հաւանութեան գործն չի յաջողիր. պէտք է անոնց սիրան ամրքէ: Ուստի երբ երկրորդ օրն (որ թուի Դ կիւրակէն մեծ պահոց, մարտի 11) վերջին անգամ գումարեցան ժողովականք, Թէոփիանէ յորդորակ մը խօսեցաւ անոյշ կերպով, մերժեց և սուտ հանեց իրենց ականջը հասած զրպարտութիւնները, որպէս թէ Յոյնք Հայոց կաթողիկոսը հերետիկոս կոչած ըլլան, կամ թէ սա գրած ըլլայ կայսեր՝ որ ինքն կ'ընդունի Դ ժողովը, թէ ուրիշներն ընդունին և թէ ոչ. և թէ կաթողիկոսին գրածն առ կայսր ուրիշ բան չէր՝ բայց եթէ խոստումնք ժողով գումարելու միաբանութեան յաջողութեան համար, և այն ժողովքով հաստատելու ինչ որ պէտք է ընել: « Առանց խորհրդակցու-
« թեան նոցա, կը գրէր Շնորհալի իր Ի յայտնի
« թղթին մէջ, անմարթ է զկատարեալն տալ պա-
« տասխանի հարցմանց ձերոց. զի մի փոխանակ
« միաբանութեան՝ զանազան պատճառս ստացուք
« բաժանմանց, և շարժուն և փոփոխական երե-
« ւեսյին բանք մեր: Յաղագս այսորիկ ոչ պատ-
« շաձ համարեցաք միայն մերս մերձակը ցիւք գրել
« զպատասխանին մեծի խորհրդոյս. մինչև առա-
« քեսցուք 'ի Մեծն Հայս և յամենայն կողմանս »,
և այլն: Շնորհալին ալ քանի մը խրատական խօսք աւելցուց, յիշեցնելով որ սատանայն բանակռւթենէն առաջ կու գան աւելութիւնն և անմիաբանութիւնն, զորս խոստացեր էր առ կայսրն իր կողմանէ խափանելու, և պիտի չկանայ խոստմունքը կատարել: Յետոյ հրաժարական ողջունեբը և օրհնութիւնը տալով՝ արձակեց ժողովը:

Թէոբիանոս ատուգելով որ Հայոց ժողովոյն համար չորս հինգ ամիս ժամանակ պէտք է, աւելորդ համարեց հօն ուշանալ, այլ դառնալ առ կայսրն. միայն Ասորւոց ալ պատգամաւորութիւնը կատարել կու մնար. անոր համար գնաց ՚ի Քեսուն՝ այն տեղւոյ Յովհաննէս եպիսկոպոսին: Ասորւոց ախոյեան Թէոդորոս Բար–Վեհեբուն գիանականն կը յորդորէր զպատգամաւորն՝ երթալ իրենց ազնուանի Պարսամայ վանքը, առ պատրիարքն, և հօն վիճաբանել. բայց Թէոբիանոս վախնալով այն կողմերու մօտ այլազգեաց իշխանութենէն՝ կայսեր թուղթը խնդրեց առ Միխայէլ, և ինքն հօն ՚ի Քեսուն վիճեցաւ ընդ Թէոդորի, զոր իր պատրիարքն՝ ինչպէս վերը տեսանք, յալթող կը համարի, և Շնորհալւոյ ալ պիտանի եղած՝ իր զարմանալի փիլիսոփայութեամբը, ուսկից Թուի Թէ արամադատութեան մասն կը պակսէր [1]. ապա ա-

1 Թէ իր վարդապետին և Թէ յետագայ Ասորի հեղինակաց վկայութիւնն կը հաստատե, որ Վեհեբուն հմուտ անձ էր, նաև իր լեզուէն զատ հայերէն, արաբերէն և յունարէն լաւ գիտէր. բայց իր պատրիարքին հաւատարիմ չմնաց. անկէ քանի մը բանագրեալ եպիսկոպոսաց յորդորմամբ պատրիարք եղաւ (1179) հակառակ Միխայէլի: Ա օգնութեամբ այլազգի իշխանաց բռնեց և բանտեց (1180) զԹէոդոր. այլ նա հնարք գտաւ փախչելու և երթալու ՚ի Հռոմկլայ. ուր և կ՚ըսուի Թէ հաւանութեամբ Բ Լեւոնի և Գրիգոր Տղայ կաթողիկոսի՝ նստաւ իբրև առանձին պատրիարք, Հայոց իշխանութեան տակ գըտնուող Ասորւոց: Այս բանս գուշակել տայ որ Հռոմկլայի ժողովոյն պատճառաւ՝ մեր կաթողիկոսին և Միխայէլի մէջ ցրտութիւն կար. իսկ Թէոդոր հաւանօրէն իր կարծիքը փոխեր էր, անոր համար ընդունելութիւն գտաւ ՚ի Հայոց, ինչուան ՚ի Հռոմկլայ նստելու 12 տարի պատրիարքական պատուով, յորում և մեռաւ յամի 1192, տարի մը յառաջ քան զԳրիգոր Տղայ: Իրմէ վերջ ալ ուրիշ ինքնագլուխ պատրիարքներ նստած են ՚ի Կիւլիկիա՝ այն տեղի Ասորւոց հովուապետ, մեր Ա Հեթմոյ թագաւորութեան առեն:

ւելորդ էր Թէոբիանու հօս ալ ուշանալն: Երբ կայսեր Թղթոյն պատասխանն ընդունեցաւ՝ ի Մխայէլէ՝ ձամբայ ընկաւ, գարձաւ առ Մանուէլ, մատուցանելով Շնորհալւոյն երկորդ Թուղթն ալ, ինչպէս նաև ատոր գրածն առ պատրիարքն Կ. Պօլսի Միքայէլ. յորս կը յայտնէ իր մեծ փափագն ու ջանքը՝ միաբանութիւնը յաջողցընելու, ազգային ժողով մը գումարելով. կը յիշէ կարօտանօք երէկոյ նախնեաց երջանիկ օրերը, յորս այսպիսի բաժանումն եկեղեցեաց չկար, և Հայք սիրով կը յաճախէին Յունաց գիտնական անձանց քով. որոց հետևողներ ալ աւետր էր ինքնին Շնորհալին իր մանկութեան օրերը, ՚ի վանորայս Սեաւ Լերին, ուր երկու ազգին կրթեալ միանձունք և վարդապետք երբեմն սիրով հակաճառէին, և այն առենէն իր շնորհակիր սիրտն ալ կը բաղձար կատարեալ խաղաղութեան և միաբանութեան. որոյ հիմայ երբև միջնորդ մը համարելով զպատրիարքն Կոստանդինուպօլսի՝ խոնարհական գովութեամբ կը յորդորէ չանալ ՚ի նոյն, և աղօթել վասն յաջողութեան:

Թէ այս Թղթին և թէ ուրիշ Թղթոց մէջ հատատար կը փայլէ մեր հայրապետին շնորհքն խոհեմութեան, խոնարհամտութեան, քաղցրութեան, արդարասիրութեան, միանգամայն և պաշտպանելու իր ազգն ու եկեղեցին՝ առանց ուրիշն գպչելու կամ յայտնի պակասութիւն մը ցանգովելու. ասոնց հետ մէկտեղ վսեմական արժանապատուութիւն մ'ալ: Իսկ Յունաց թէ կայսեր և թէ պատրիարքին Թղթոց մէջ բաւական չափաւորութեան մը հետ՝ սիրական և իշխանական ոգի մ'ալ չի ծածկըւիր. և չկան այն գեղեցիկ և պիտանի խմաստքն՝ որով զարդարէ Ներսէս իր Թուղթերը:

Գալով մեր եկեղեցւոյ Հօր և վարդապետին

աստուածաբանական գիտութեան և արժէքին, էինք կըրնար պահանջել արձուական միտք մը անկէ՝ որ աղաւնոյ թեւով կ'օգապարէ երէ և սուր և մօտ արձուեաց բոյներու. ոչ էր Գրիգոր Աստուածաբան մը ըստ սրատեսութեան, այլ կոչեցաւ նոյնպէս՝ համառութեամբ բանից Ս. Հարց և հանգարտ ու յատակ տեսութեամբը. եթէ յուշնարէն լեզուն լաւ գիտնար և բնագիրները քննէր, և դեռ հայերէն չթարգմանուած գործերն ալ, աւելի բարձր և հաստատ ալ պիտի թռչէր. կամ նաև եթէ իր պաշտամանն և աղգին վիճակին նկատմունքը չունենար, (ինչպէս որ վերը դրածներնէս երևցաւ), միով բանիւ՝ Թէորիանեայ պէս ազատ և անարգել անձ մ'ըլլար, սա եաքինս ալ չէր կըրնար այնչափ ճոխացընել իր արամախօսութիւնները Շնորհալւոյ առջև: Երկուց բնութեանց խնդիրն ինչպէս խմանալը և ինչպէս բացատրելը՝ բաւական կը յայտնեն իր գրուածքն, և կըրնան որ և է զգօն միտք հանգչեցընել[1]:

Եթէ արդարոց հոգւոց վիճակին և երանական տեսութեան վրայօք ալ խնդիրներ յուզուած ըլլար այն առեն 'ի Յունաց կամ 'ի Լատինաց, անշուշտ աւելի բացայայտ կը վարդապետէր Շնորհալին, եթէ և ոչ որչափ կը պահանջէին նոյն աստուածաբանք: Ուստի ալ եթէ Շնորհալի և շատ հին Ս. Հարք՝ արդարոց այժմեան հատուցումն իբրև նուազ լիուն ցուցընեն՝ իրենց քանի մը ըսուա-

1 Գրիգոր Տղայ և Լամբրոնացին աւելի յայտնի և համարձակ կը խօսին այս խնդրոյս վրայ, սակայն Շնորհալւոյ չափ պարահայեաց տեսութիւն և փափկութիւն չունենալով չկարցան շահիլ Հիւսիսային վարդապետները. առ սոսա գրած թղթովը կ'երևի Գրիգոր Տղայ՝ քաջ հըմուտ, ճարտասան և արի, այլ դեռ որքան տարբեր իր հօրեղբօր քաղցր, հեզ, ամբիծ և շնորհալի գրչէն: Առ Յոյնս գրած թուղթերն ալ կը յայտնեն թէ որքան գերազանց է եղեր հօրեղբայրն քան զեղոքն:

ծոց մէջ, գուցէ նորերէն ումանք ալ՝ հիմիու և ապա-
գայ (յետ յարուԹեան մարմնոց) հատուցմանց
ղանազանուԹիւնը՝ նուազեցընեն, գրեԹէ սոսկ
յարուցեալ և միայեալ մարմնոց վայելքն ու
փառքն աւելցընելով երանեալ հոգւոց վրայ:

Այս եաքի յիշատակիս պէտք է յարել Շնոր-
հալւոյ մէկ կարծիքն կամ ըսածն ալ նկատմամբ
նորոգեալ և յարուցեալ մարմնոց՝ ի հանգերձեալ
կեանս, Թէ

« Եւ ոչ բնուԹիւն այլ է արուին,
Ու ոչ ձանաչի Թէ սա է կին ».

զոր և սոգատանօք յիշէ՝ Հայոց վրայ գրուած և
բարգած մոլորուԹեանց հետ՝ առ ՄխիԹար կա-
Թողիկոս ուղղած ցուցակին. որուն պատասխանէ
մերոց ժողովական ԹուղԹն, Թէ այդ առանձնա-
կան կարծիք մ՚է ըսողին, որ սուրբ և արժանա-
ւոր անձ մ՚է, այլ ոչ Թէ այնու ընդունելի է բո-
լոր եկեղեցւոյն ալ. զի շատ սուրբ հարք և գիտուն
աստուածաբանք ալ ոչ միայն զայդ՝ այլ և աւելի
օտար կարծիքներ ունեցեր են: Յորոց մենք ալ կը
խրատուինք և համոզուինք՝ որ աւելի շատ են գիտ-
նական սխալուածքն՝ քան Եբրայեցի նման հնարհա-
լիք, որ Թերևս Մելխիսեդեկ Աստրն Յակոբայ ըրած
ինդրոյն պէս՝ ասոր վրայ ալ մտադրել և վիճելն
աւելորդ համարի, յիշելով մանաւանդ Ֆրիգիոսի
ըսածն ալ առ Սագուիեցիս, (Մոփ. ԺԲ, 25) Թէ,
« Յորժամ ի մեռելոց յարիցեն՝ ոչ արք կանայս
« առնեն, և ոչ կանայք արանց լինին. այլ իբրև
« զՀրեշտակս երկնի՝ որ յերկինս են ». զոր և այս-
պէս Թարգմանէ ինքն յետ վերադրեալ առակից.

« Այլ հրեշտակաց նման բներին,
Ըստ կանխասաց բանից քոյին ».

և կանխաւ ալ յիշէ որ սր և է մարմնոց կամ անդամոց պակասութիւնք և ահասութիւնք պիտի անհետանան, և

« Հաւատար յերեանամին
Ի ջուխ յառնեն նախաստեղծին »։

Այսպէս իմանալու է Հոգւոյն Սրբոյ բղխման համար, ալ որոյ վրայ այն ատեն մանաւոր խնդիր չէղաւ. և Շնորհալի իր Թղթոց մէջ չըսածը՝ շարականացը՝ մէջ աւելի պարզ կը վարդապետէ [1]. ինչ որ 80 տարի վերջը՝ հարցուելով 'ի գահէն Հռովմայ գրեցին Կոստանդին կաթողիկոս և Վանական վարդապետ՝ կըրնար գրել Ներսէս ալ Թէ հարցուէր յԵգինէոսէ Գ, կամ յԱղէքսանդրէ Գ։

Պէտք է խոստովանիմք որ մերնախնեաց առանձնութիւնն յեկեղեցեաց Լատինաց և Յունաց, և անոնց լեզուաց անգիտութիւնն՝ որով սահպուէին միայն իրենց ազգային հեղինակները և գտուած թարգմանութիւնները կարդալ ու կարդալ, չէ ընդարձակած իրենց խնամատարական տեսութիւնները. 'ի վերայ այսր ամենայնի Շնորհալւոյ և Հոգեկցաց միաքն չէր կըրնար էական մոլորութեան մը հետևիլ, մինչ իրենց եկեղեցին ալ յայտնապէս ընդունած չէ. այլ աւելի կըրնային սխալիլ անձանց ընտրութեան մէջ, այսինքն մոլարին և անմոլարին. զոր օրինակ Դիոսկորոսի մը կամ Պարսամայ, և այլն, որոց համբաւն մեծ էր յարևելս, և գործերնին ոչ ապացուցեալ մերայոց և նմանեաց. որք և շատ կը վախնան սուրբի անուամբ երկար ատեն ընդունած մը՝ դատափետել, կամ անուրբ սեպուածն իբրև սուրբ ընդունիլ. և առանց քաջ

1 « Բղխումն Հոր անքննաբար,
Առող յՈրդւոյ անձառաբար »։

գաւողութեան և գիտութեան՝ երկուքն ալ քընն-
նեն, մանաւանդ երբ հակառակութեան և յաղ-
թասիրութեան ոգի մտնէ: Սկսեալ Նեստորի օրե-
րէն՝ մինչև երկու դար և աւելի ևս, այնքան
խաւար և ընդդիմակ լուրք և գրքոյկք ՚ի Յունաց և
Ասորւոց մուծան ՚ի Հայս, որ շատ առաքինի և
բանասէր անձինք ալ շփոթած և սխալած են ընտ-
րութեան մէջ, ինչուան երբեմն երկու հակառակ-
ներն ալ հաւասար ընդունած կամ մերժած [1]:

Շնորհալին հաւատարիմ իր խոստման և մա-
նաւանդ սրտին և հոգւոյն փափագանաց՝ անդան-
դաղ չըվաթերական թուղթ գրեց ամենայն գլխա-
ւոր եպիսկոպոսաց և վարդապետաց Հայոց յա-
րևելս և ամեն կողմ, խնդրելով համառօտիւ
Մանուէլ կայսեր երկու երեք անգամ առ ինքն
գրածները և ջանքն ՚ի միաբանութիւն երկուց ե-
կեղեցեաց, և իր պատասխանելը՝ թէ առանց հա-
ւանութեան բոլոր ազգային եպիսկոպոսաց այդ
գործն չի կատարուիր. արդ զայս գիտնալով՝ երբ
իրմէ երկրորդ թուղթ մ՚ալ ընդունին կոչման,
անդանդաղ և անպատճառ գան որոշուած տեղը,
իբրև Աստուծոյ կոչուած. և մինչև այն առեն
անգադար ալօթեն Աստուծոյ, « զի ՚ի ժողովելն
« ՚ի միասին՝ տացէ մեզ խնաստս, զայն ինչ խոր-
« հել, խօսել և առնել՝ որ նորին իսկ Հոգւոյն սըր-
« բոյ են կամք և հաճոյք, առ ՚ի չինութիւն և
« հաստատութիւն կաթոլիկէ և առաքելական

1 Կարևոր համարեցանք այս խօսքերս ըսել, որպէս զի նախ՝ մենք ալ չկարծունինք որ և է մեր նախնեաց կուրօրէն ջատագովք. և երկրորդ զգուշացընենք զընթերցողս՝ եթէ երբեք մեր գոված և ընդունած անձանց գրուած մ՚ալ գտնեն այդպիսի սխալ ընտրութեամբ. որ (եթէ օտար ձեռքէ խառնուած չէ, կամ հնդինակն յետոյ միտքը փո-խած չէ,) մարդկօրէն սպիտութեան և սղալանաց գործ համարելու է, նոյն իսկ գրուածին ոգիէն ալ դատելով զգրողը:

« ուղղափառ եկեղեցւոյ »: Ուրիշ կարևոր գիտե-
լիքներն ալ յանձներ էր Թղթատարը ուխտաւոր
կրօնաւորաց, որք Մեծ Հայոց վանաց և ուխտից
այցելութեան կ'երթային, բերնով ծանուցանելու
իւրաքանչիւրոց: Մինչև երկրորդ հրաւէրը ըղե-
կած կամ մինչև անոնց գալը՝ երկնային հրաւէրն
հասաւ Շնորհալւոյ. և իր այնքան մեծ և ամենա-
մեծ իմաստութեամբ, սիրով և չանքով սկսած
գործը՝ յառաջ տարին իր յաջորդ եղբօրորդին
Գրիգոր Տղայ, և անուանակից ու հոգեկից Ներ-
սես Լամբրոնացի, միաբանութեամբ Սահմանոսկ
Աղուանից կաթողիկոսի և 30էն աւելի եպիսկո-
պոսաց և բազմաթիւ վարդապետաց, վանահարց
և կրօնաւորաց, 'ի Հռոմկլայ, յամին 1179, յետ
զաւակին. յետ քանի մ'անգամ Թղթակցութեան
ընդ կայսեր և պատրիարքին՝ որք հաւաներ ընկեր
էին իրենց առջի խնդրած լինն պայմաններըը պակ-
սեցընել, և պարզ հաւատոյ խնդրոց միաբանու-
թիւն ուզել: Միաբան յանձն առին և ստորագրե-
ցին մեր ժողովականք. այլ չկարցան շուտով
Թուղթը հասցընել առ կայսր, վասն արգելման
Համբաներու յայլազգեաց. և զայն չընդունած՝
վախճանեցան Մանուէլ կայսրն ալ, Միքայէլ
պատրիարքն ալ, զորս մերայինք շատ գովութեամբ
և ցաւով յիշեն, և միաբանութեան գործն իրենց
կողմէն իրաւամբք աւարտած համարին: Այլ փո-
փոխութիւնք անձանց և դիպաց և կիրք ատեն և
անոնի՝ նորէն արթընալով՝ գարձեալ հին կասկած
կարծիք և խորշմունքը նորոգեցին. որով յետ ոչ
շատ ժամանակի՝ նորանոր միաբանութեան առաջ
արգելութիւնք եղան, այլ անկատար մնացին. մա-
նաւանդ որ այս Յունաց հետ Հռոմկլայի միաբա-
նութենէն 20 տարի ետև՝ Հռոմայ մայր եկեղե-
ցւոյն հետ աւելի հաստատ և երկարատև միաբա-
նութիւն ըրին Հայք, չանիւք խորապիտոն Լեւոնի՝

եղբօրորդւոյ քաջին Թորոսի, և ձեռնտուութիւբ Գրիգորի Ապիրատայ՝ միւս եղբօրորդւոյ Շնորհալւոյն, և ալ առաջին հարկն չկար Յունաց հետ առանձին կապակցութեան, թէպետև Յոյնք անկէ ետև ալ Ա. Հեթմոյ Թագաւորութեան առեն այս բանիս նոր փորձեր ըրած են *:

* Մանուէլ կայսեր ջանքն շատ աւելի ողջամիտ և անկեղծ էին քան զՄիքայէլ պատրիարքին: Կայսրն զԹէոդորիանէ՝ի Հայս խաւրած առեն՝ (1170) ուրիշ գիտնական և աւելի արժանաւոր անձ մ՝ալ խաւրեր էր՝ի Հռոմ առ Պապն Աղեքսանդր Գ: Այս անձս՝ էր Ս. Կիւրեղ. որոյ համար կ՝ըսուի թէ քիչ մը վերջը մեծ յարաբերութիւն մ՝ունեցած է մեր եկեղեցւոյն հետ. այլ շատ անծանօթ և նորալուր իմն կ՝երևի աւանդութիւնն: Կիւրեղ՝ ազգաւ Յոյն էր և՝ի Կ. Պոլիս ննած, ցեղով ազնուական, և ալ աւելի ավելիւ վարուք և հարուստ գիտութեամբ. որով՝ արժան համարեց կայսրն իր դեսպանաց կարգը դնել՝ի Դուռն Ս. Պապին: Երբ դարձաւ անկէց՝ի Կ. Պոլիս, ոչ այնքան Մանուէլի հաճոյ պատասխանով, (որ փափագէր կերպով մը միացընել կայսերական տէրութիւնը յարևելս և յարևմուտս), թուի թէ՝ի Պապէն պատգամաւորութիւն մ՝ալ ուներ առ պատրիարքն, անոր և Հռոմայեկեղեցւոյն գլխաւոր խորոց խնդրոյն վրայօք, որ է Ս. Հոգւոյ բղխման խնդիրն. Միքայէլ ոչ միայն չհաւանեցաւ, այլ և սկսաւ մեղադրել զԿիւրեղ: Այն առեն Կիւրեղ ազդում մ՝եղաւ՝ կ՝ըսեն, որ երթայ՝ի կարմեղոս լեռը հանդչի. ուր ոչ շատ տարի առաջ նորոգուեր էր կրօնաւորական կարգ մը՝ Լատինաց ձեռքով. և երկրորդ կարգահայրն էր Պրոգարտ՝ որ ընդունեցաւ զՍուրբ պանդուխտը՝ի կրօն կարմեղեանց: Քիչ առենէն նոր տեսիլք կամ ազդեցութիւն մ՝եղաւ առ Կիւրեղ՝ի Ս. Բարսղէ Հայրապետէն, որ կը պատուիրէր անոր՝ երթալ՝ի Հայաստան, «և արծարծել զշնորհն քրիստոսեան»: Կիւրեղ՝ եւսեբիոս անուամբ ընկեր մ՝առած հետը՝ 10 տարի կը պտըտի՝ի Հայս, քարոզութեամբ և հրաշագործութեամբ. այլ ուր և ինչպես ըլլալն չի յիշուիր, հապա թէ Հայք հաւանութեամբ լեցին. և իրենց իշխանապետն, (որ պէտք է ըլլայ Ռուբէն Բ, որդի Ստեփանեայ,) միաբանութեամբ եպիսկոպոսաց, (անշուշտ և անոնց գլխոյն՝ Գրիգորի Տըղայոյ) թուղթ մեծարանաց գրեցին առ Լուսիոս Գ. Պապ: Այսչափ կ՝աւանդեն օտար պատմիչք. և թէ անկէ ետև Ս. Կիւրեղ գարձաւ իր տեղը, ուր և յամին 1197 յաջոր-

դեց Պրոգարտայ, և վախճանեցաւ յամի 1203. թէ և ո-
մանք 20 տարի ալ կ'ուշացընեն իր մահը (1224). որոյ յի-
շատակն, այսինքն տօն Սրբոյն՝ կատարուի 'ի 6 մարտի:

Ոչ մեր և ոչ օտար ժամանակակիցաց գրուածոց մէջ յի-
շատակ չկայ այս բաներուս. սակայն կայ մեր քով Թուղթ
մը Լուսիոս Պապի՝ գրուած յերեք դեկտեմբերի 1184 տա-
րւոյ, որ յարմարապէս կըրնայ ըլլալ պատասխանի Հայոց
Թղթոյն, զոր և Ս. Ներսէս Լամբրոնացի թարգմաներ է
'ի լատինէ, ինչպէս նաև կլեմէսի Գի գրածներն՝ առ նոյն
Գրիգոր Տղայ և առ Լևոն՝ եղբայր և յաջորդ Ռուբինի:
Պատուական աւանդք կրօնականք և պատմականք, միան-
գամայն և պարծանք մը մեր դպրութեան, որովհետև ին-
չուան հիմայ այս Թղթոց լատին բնագիրն յայտնուած
կամ հրատարակուած չէ Վատիկանու դիւանաց մէջ ան-
գամ: Այլ մեր պատմութեան պարագայէն չուզելով հե-
ռանալ՝ բաւական համարինք այսչափս. որովհետև Կիւրղի
տանուտեայ քարոզութիւնն ալ՝ եթէ ատոյգ ալ ըլլայ,
յայտնապէս Շնորհալւոյ մահուանէն ետև եղած կ'ըլլայ.
սակայն անոր կաթողիկոսութեն ատեն ալ (յամի 1168-9)
առաջին անգամ մը եկած կ'ըսուի Կիւրեղ՝ Հայոց սահ-
մանները, Իկոնիոյ Սուլտանին ալ քարոզելով զՔրիս-
տոս, որ և իր մօրը քրիստոնեայ ըլլալուն համար՝ ընդու-
նեցաւ կամ թոյլ տուաւ կ'ըսեն, քրիստոնէութիւնը իր
երկրին մէջ. և Թուղթ մ'ալ կը գտնուի վերոյիշեալ Ա-
ղէքսանդր Պապի կողմանէ առ Սուլտանն: Այս առթիւ
կըրնար Կիւրեղ՝ թէ ոչ մինչև 'ի Հռոմկլայ՝ գոնէ Իսաւ-
րիոյ և Կիւլիկիոյ սահմանները եկած և զՀայս ճանչցած
ըլլալ:

# ԻԷ.

*Բարեզարդութիւնք Պաշտաւանց Եկեղեցւոյ. — Ժամասացութեան երգք. — Շարականք. — Պատարագի երգք. — Մաւրուռւազուռնք. — Գանձք. — Մաշտոց. — կարգք Ձեռնադրութեան. — Սպասք Եկեղեցւոց. — Շնորհալւոյ օրինած միւռոն նոր գտուած:*

Ցուշաց եկեղեցւոյ հետ միաբանութեան խընդիրն՝ Շնորհալւոյ բոլոր կաթողիկոսութէ միջոցը բռնած էր, ինչպէս որ տեսանք, սակայն Թէոդիա- նէի երկու անգամ գալէն առաջ երկերկու տարի պարապ միջոց ալ մնաց, զոր անխոնջ հայրապետն մեր լցած է, ոչ միայն գիրութէ գործերովև գրուած- ներով զոր յառաջ յիշեցինք, այլ գրուածովք և կարգադրութեամբք եկեղեցական պաշտամանց. ոյք թէ և վայելչապէս սահմանուած էին իրմէ ա- ռաջ 800 տարուան միջոց, այլ տեղ տեղ կարգերն այլայլած կամ փոփոխած էին կամ թողուած, տեղ տեղ ալ աւելի կամ պակաս. արդ այս ամեն բանի՝ կարգ, լուսն և միաձևութիւն տալ, և միով բանիւ իր ընդհանուր ալ օծել՝ ջանաց մեր Ներսէս. « Նորոգէր զառաջին տուրբ հայրն հաստատեալ « կարգս եկեղեցւոյ, և զարդարէր զեկեղեցիս « Հայաստանեայց անթերի լսմամբ ». կ'ըսէ պատ- միչն: Մանաւանդ ժամասացութեան կամ Հա- տարակաց աղօթից պէտք էր հաստատութիւն. որոց արտաղութիւնք աւելի զանազանութիւն

կրած էին, տեղական առաջնորդաց և վանահարց կամօք և ստորութեամբք. և որպէս զի ինքն ալ այսպիսի մեծ և ամեն տեղ ծանուցեալ և ծանօթ իրաց՝ ինքնին փոփոխութիւն մ'ընել չերևնայ, որով և դժարութիւն չկրէ ընդունելի ընելու, հարցուց քննեց տեղեկացաւ՝ թէ ոմն 'ի Մեծ Հայս աւելի հաւատարմութեամբ կը պահուին հին կարգադրութիւնք հայրապետաց մերոց. և մարդ ղրկեց ու գրով բերել տուաւ այն տեղերու ժամանացութեանց կարգերը: Այսպիսի տեղիք էին Մաքենոցաց և Թեղենեաց վանորայքն. առաջինն՝ Հայոց հնագոյն և ամենէն նշանաւոր վանաց մէկն էր, Սեւանայ Ծովուն հարաւային եզերքը, է–ժ դարուց միջոց շատ պայծառացեալ, և իր միաբանից հագած գաւին մօրթէն՝ այդ Մաքենեաց անունն առած, ըստ աւանդութեան. այլ անոնց գիտնական և որբական վարուց համար յոյժ հռչակուած յԸ դարու, յորում երկու կամ երեք Սողոմոն վանահարք, որոց մէկն և կաթողիկոսացաւ, տեղւոյն զարդք և Հայոց պատգամաւորք էին: Արաբացւոց և յետոյ Թուրքաց կամ Պարսից բռնակալութեան ատեն շատ նեղութիւն և աւեր կրեց տեղին, այլ միշտ նորոգուելով ինչուան մեր պատմութեան ատեն և դեռ հաքն ալ՝ բաւական շէն էր և բարեկարգ. և մինչև հիմայ լուռ վկայ երբեմն անլռելի սաղմոսերգութեանց և հառաչանաց, 'ի մէջ աւերակաց և շինից կը բարձրացնայ հազարամեայ և աւելի հնութեամբ անսիւն գմբեթաւոնակ եկեղեցին: Իսկ Թեղենիք՝ Նիպ գաւառին մէջ էր, Երևանայ մօտերը, որ և աւելի անցուդարձի տեղ ըլլալով՝ աւելի ալ ոտնակոխ, ամայի և անծանօթ եղեր է. բայց ժ'ի դարն թերեւս իր ամենէն պայծառ ատենն էր, յորում և Շնորհալի ուղեց անոր կարգերը: Արդ այս երկու վանքերուն և ուրիշ տեղեաց արտօղութիւններըք

բաղդատեալով, « և ամենայնիւ ամենայն կամօք չա-
« ճեալ և հաւանեալ, զպահական եղից և զսխալն
« ուղղեաց. և կարգեաց ամենայն Հայաստանեայց
« եկեղեցւոյ՝ անջնջելի և հաստատուն աւանդ, ա-
« ռաջնորդութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ յաջողէ
« զամենայն բարի՝ յամենայնի ». կ'ըսէ խորագիրն
կարգադրութեանց եկեղեցւոյ և արարողութեան
ժամատեղաց, Տեառն Ներսէսի Հայոց կաթողի-
կոսի. որոյ շարադրութիւնն մասն մի Մաքենոցաց
և Թեղենեաց միաբանից գրածն է, մասն մի Ս.
Ներսիսի և մասն մի յեռանոց, ինչպէս Գրիգորի
Խլաթեցւոյ՝ ի սկիզբն ԺԵ դարու, յորմէ տեղե-
կութիւն ինդրեց այս բանիս՝ Յակոբ Ղրիմեցի բա-
նասէր վարդապետն, և նա գրեց, նախ իր գիտցա-
ծը իր կողմերու սովորութեամբ հանգերձ, ըսե-
լով. « Այս է Արևելեան տան սահմանն ժամա-
« կարգութեան Վերինս կողմանն. իսկ վներքին
« կողմանն՝ գտանես Ներսիսի Հայրապետին՝ ի
« գիրս Տօնեցին »:

Խլաթեցոյն ըսածն ալ վկայութիւն մ'է հաւա-
նութեան թէ Շնորհալին է հեղինակ վերջին կար-
գաւորութեան մեր ամենայն եկեղեցական պաշ-
տամանց, որոց համար նախ հաստատեր էր այն
Տօնից գիրքն կամ Տօնացոյցն, որ է յատկապէս
այն՝ զոր իմանամք սովորաբար. իսկ Վարագայ հօր
Աստմայ գրածն՝ (31) չէմք կըրնար ըսել որոշակի
այս էր թէ այլ ինչ նման Տօնականի: Որչափ ալ
ԺԹ և ԺԹ դարուց մէջ Կիւլիկիոյ Թագաւորու-
թեան ատեն և անկէ եաքը նորոգութիւնք եղած
են ՚ի Տօնացուցն, շատ քիչ են համեմատու-
թեամբ անփոփոխ մնացեալ կարգադրութեանց
կամ նորոգման և վերահաստատութեան կար-
գաց ՚ի Շնորհալւոյ, որով մեկ մեծ երախտապի-
տութեան պարտքով մ'ալ պէտք է ճանչնամք զին-
քըն իբրև բարեգործ բանալի մը մեր եկեղեցւոյ:

ժամասացութեան, կամ պարզ ևս ըսելով՝ ժամագրոց մէջ Շնորհալին նոր մասեր կամ ալօթքներ չաւելցուց, այլ միայն նոր Երգեր մուծց, այն ալ հին և խափանուած երգերու տեղ. վասն զի հին դարերուն ժամասացութիւնն աւելի շատ սաղմոսներ և երգեր ունէր: Այդ իր նոր դրածներն կամ իր շարադրածներն են. նախ Յիշեցողութ և Զարնիփն, որոց վրայ խօսեցանք. ապա, յառաջ քան զայլ երգս՝ երկու այբուբենական կարճ տողիւք և երկար խմաստիւք չքնաղ երգերն՝ Աստուած լուսոյ և Աչխարհ ամենայն. որոց մէկն հիմայ կիւրակէ և տէրունական ծոներու կ'ըսուի, մէկ այլն սրբոց ծոներու. սակայն զղջական մաղթանք ըլլալով ապաշխարութեան աւուրց կը վայլէր քան Սրբոց ծոնից. և թուի թէ ասոր համար ուրիշ երգ մը պէտք էր, ինչպէս որ գտուի նմանաձև քան մ'ալ յանուն մեր հեղինակին, այլ ոճով կը տարբերի: — Առաւօտեան ժամուն իբրև վերջաբան դրաւ Շնորհալին, կիրակի օրերու՝ 'ի պատիւ Յարութեան Քրիստոսի՝ Նորապերճեալ գեղեցիկ և զուարթալար երգը, որով իբրև յաղթական նուագաւ՝ հնչէ հաւատացեալն իր առաւօտու խօսակցութիւնն ընդ Աստուծոյ. իսկ լուր օրերու համար՝ Աբրլեան երգը, շաբթուն իւրաքանչիւր օրերուն և ստեղծագործութեանց յիշատակօք. ասոնց տեղ առնի ստեղծները՝ Ղեղէի կամ փաղ կ'երգուի եղեր, որ հաւանօրէն ծանր և դժար եղանակաւ ըլլալնուն և քիչերու միայն կարելի երգել՝ խափանուեր են, և կամ ժամերգութեան վերջերն ըլլալով՝ ժողովուրդն չէ ուզեր ուշանալ այն ծանր աւանդներն ալ լսելու. և ասոր համար Շնորհալին պնացք և յորդոր եղանակաւ յորմարցուցեր է այս երգերը: Արևագալի ժամուն մէջ՝ քանի մ'արձակ երգեր աւելցուցեր է, որ հիմայ հասարակօրէն Մեծ պահոց մէջ կ'երգուին: — Ճաշու ժա-

մուն՝ ծանօթ է Օրհնեմ ըստեղ երգն, Խաւարեցաւ և Զարմացեալ։ յետինքս ալ հասարակօրէն Մեծ պահոց մէջ կ'ըսուին հիմայ. և երեքն միասին՝ այրուբենից վրայ են՝ նոյնքան զոյգ տող։ — Երեկոյեան ժամուն նոր բան աւելցուցած չէ Եկեսէս, այլ Խաղալականին՝ երկու երգ, Նայեաց ոչխարն՝ իր անուան տառերով ինչպէս և Նորատեղ ծեալն, և ի էն հայցեմ, որք՝ ի Մեծ պահս երգուին. Ամբիծքէն վերջն ալ Մեծ պահոց մէջ երգուած չարականի տուներն՝ ըստ խորհրդոյ իւրաքանչիւր աւուրց շաբաթու՝ իրեն կարգաւորուելիւն Թուին։ — Հանդատեան ժամուն՝ որ իրմէ վերջը կարգաւորած Թուի՝ հիմայ յարուած է իր սքանչելի Հաւատով խոստովանիմ աղօթքը։

Ժամասացութեան մէկ գլխաւոր և կենդանաբար մասն երգերն ըլլալն՝ մեր մէջ Շարականս ըսուած՝ յայտնի է, և արդէն՝ ի սկզբան յիշեցինք մեր հայրապետին մեծ արդիւնքն և Ճարտարութիւնը յայտ մասին. հօս կ'ուզեմք յանուանէ ալ յիշել իր յօրինածները, որչափ որ յայտնի են կամ կարծուին. և են 1. 2. երկու Աւագ տոնից սրբոց շարականքն մեծ մասամբ, այսինքն Պետրոսի և Պօղոսի, Յովհաննու և Յակովբոյ, 3. Առաքելոց շարականին մասն. 4. Եօթանասնիցն՝ Իմաստութիւն երկնային. 5. Թէոդոսի շարականին մասն. 6. Ս. Անդոնի՝ մասն. 7. Քառասունն Մանկանց՝ մասն. 8. Մեծ պահոց կիւրակէից կանոնքն. 9. Ննջեցեաց. 10–12. Աւագ երկուշաբթի, երեքշաբթի, Չորեքշաբթի կանոնք. 13. Աւագ ուրբաթու Այսօր՝ ի կապարճին. 14. Յարութեան երկու Ճաշու շարական. 15. ըստ սմանց և Օրհնութիւն վառ ձայնի Յարութեան, որպէս թէ Սահիանոս Սիւնեցի քերդողն մեկալ եօթն ձայնից երգած ըլլայ, և այս միացած, որ հաւանական չերեւիր, մանաւանդ որ ամենուն ալ համանման է. ուստի չափա-

զանց է ոմանց կարծելն թէ ուր կանոններն ալ Շնորհալւոյն շարադրած ըլլայ: — 16. Հոգեգալստեան Բ օրուան կանոն, թերևս հետևեալ օրերուն կարգն ալ[1]. 17. Վարդավառի Բ և Գ օրերուն կանոնքն. 18. 19. Նոյնպէս և Վերափոխման Բ և Գ աւուրց. 20. Մարգարէից շարականն Ով ընդ հողէն. 21. Յովհ. Մկրտչին, Ով ապաշխարող. 22. Հրեշտակապետաց. 23. Ս. Յակովբայ. 24. Մանկանց Բեթղեհէմի, գոնէ մեսամբ. 25. Վարդանանց Նուրհրաց. 26. Պետրոսեանց՝ ըստ մասին. 27. Ննջեցելոց այբուբենական շարականն Ախոյեան անեղ, որ գրեթէ այնքան յաճախ կ'երգըցուի յեկեղեցիս Հայոց՝ որքան ննջեցեալք յուղարկաւորին. և ասոնման ըստ ձևոյն, 28. 29. Զարչարանաց շարականքն Այսօր անձառ և Նորոգող փիղիբոյ. ոյք և Տեառն մերոյ անօրինութեանց ամենեն սրտառուչ և սիրալի գիպաց՝ վայելուչ և սրտաշարժ յիշատակք և սիրուիանք են. մանաւանդ այս եաքինին

1. Սովորաբար Հոգեգալստեան աւուրց կանոնք կ'ընծայուին Անանիայ Շիրակացւոյ. սակայն Բ աւուր կարգն՝ նոյն ևնման՝ ունագլուխ տառերովին յայտնի կը քարոզէ իր հեղինակը՝ ներսես. հետևեալ աւուրց ալ գոնէ ոմանց՝ ինքն ըլլալ հեղինակ յարմարի՝ Տօնացուցից ըսածովը, վասն «Տեառն Ներսէսի Կլայեցւոյ... (որոյ) է և երգ շա-
« րականացն զոր կարգեաց ուր օր ասոնել Գալստեան Ս.
« Հոգւոյն՝ ամենայն քրիստոնէից, շարականիւք և ըն-
« թերցմամբ աւուրբ գրոց: Սահմանեաց Սուրբն Ներսէս
« զի՝ Համբարձմանէն մինչև՝ ի Պենդակոստն պահեացեն.
« և թէ ծանր թիւն զբովանդակն պահել՝ զերեքշաբթին
« և զուրբաթին պահեացեն, որ է երեք օր ըստ աւուրբ երբորդութեան»: Այս եաքին խօսքերս կ'իմացընեն մեզի Շնորհալւոյ կարգադրութիւն մ'ալ՝ վասն Եղիսէոն ըսուածի պահոց: Իսկ առաջին խրատն կ'իմացընէ՝ որ ինչպէս Հոգեգալստեան՝ այսպէս Վարդավառի և Վերափոխման տօներն եռօրեայ և բազմօրեայ սահմանեց, թէ և հաւանօրէն հին աւուն ալ այսպէս եղած էր ոմանց մեծ տօնից, այլ յետոյ խափանուեր էր, և ինքն նորէն սահմանեց, և նոր երգած շարականքն անխափան պահել տուաւ:

մէջ մեր հեղինակին իր մաքուր, փափուկ և սա-
տուածարեալ սիրան այնպէս հալեցուցեր է՝ որ
ամեն մտադիր կրկնողաց սրտին հետ ալ խառնուե-
լով՝ վերադառնայ առ ողբերգն սիրոյ և սուրբ ցա-
ւոց: Այս ամենածանօթ և յաճախ երգեալ շա-
րականն՝ քանի՛ անգամ մեր հեղինակին սրտէն
կրկնուած է՝ չգիտեմ, այլ յայտ է որ երբէք ան-
գամ գրչէն թափուած է. նախ՝ Բան հաւատոյ
քերդուածին մէջ, երկրորդ տարի մ'ետև (1152)
իր Յիսուս որդի պերատոյն քերդուածին, և եր-
րորդ՝ այբուբենի վրայ անատեղով և քիչ փոփո-
խութեամբ վերածեալ՝ ի շարական, և Աւագ ուր-
բաթու մեծահանդէս ժամակարգութեան մէջ տե-
ղաւորած, զոր յետագայք կրկնեն և՝ ի ծնա խա-
չի՝ փոխանակ ննջեցելոց շարականի՝ ի գիշերային
ժամուն:

Պատարագի կարգաւորութիւնն և ալօթքն,
որքան և որոշ չգիտեմք իրմէ ինչ չափ նորագուիլն,
սակայն չեմք ալ տարակուսիր որ իրմէ նոր հաս-
տատութիւն առած են անշուշտ այն տաճա-
ծային խորհրդոյն մէջ խառնուած սրբերգութիւնք,
սերովբէից արժանաւորք: Պատմիչ վարուցն վը-
կայէ հաստատապէս, թէ « Հոգևոր երգովք և
« քաղցրանուագ եղանակօք վայելչացուցանէր ըզ-
« սուրբ պատարագին խորհրդական երգն. որ-
« պէս զի Թանձրագոյն միտք առօդացն զսուրբ
« խորհուրդն՝ նայելով յայնպիսի պայծառագոյն
« ազատաւորութիւն և տարտափելի խորհրդա-
« ծութիւնն՝ կակղացեալ անօսրացին զգալի տե-
« սութեամբն, և յիմանալին դիտաւորութիւնն
« հասեալ օգտեսցին »: Եւ Կիրակոս Պատմիչ.
« Արար սա զԲարոզ սուրբ պատարագին՝ քաղցր
« եղանակաւ, և տունս շարականաց նմին խորհըր-
« դաբար [1] »: Յայտնի է որ Տաղէոս մեծ մասն այս

1 Պատարագի տունք շարականացն Թումն Յայս յաւե

սուրբ խորհրդոյս սահեն նուագելու համար չինած է, ինչպէս որ հիմայ ալ երգուին զանազան միջոց. Իրենն են Հաւանօրէն և Սրբասացութիւնքն. գուցէ և Քրիսթոս ՚ի մէջ մեր յայտնեցաւ: Նոյնպէս ճաշակման սահեն երգուելու կարճ շարականքն ըսած իւրաքանչիւր աւուրց շաբաթոյ, « Լոյս ճշմա- « րիտ », և այլն. « Հաց կենաց », և այլն. որք Սուրբ հինգշաբթի օրուան շարականաց աղբերէն ծագած կ՚երևին, որով նոյն օրուան կանոնն ալ Իրեն կըընայ ընծայուիլ:

Թէ պատարագի մէջ ժամասացութեան այլ և այլ միջոց երգուած՝ կարճ այլ աւելի խաղուն և արուեստաւոր երգերն՝ որ Մանրոմոնք կ՚ըսուին, թէ և յառաջ քան զՆերսէս սկզբնաւորեալ են, ինչպէս նշանակած եմք, և որպէս ինքնին խրատէ նուիրելոյն ՚ի քահանայութիւն՝ որ յառաջ քան զձեռնադրիլն եկեղեցական գրոց ուղիղ ընթերցման հետ սովրիլ « և զՄանրոմոնս ձայնաւո- « րացն պաշտել յեկեղեցիս ». այլ ոմանք առանց խորութեան զինքն համարին գլխաւոր հեղինակ այսպիսի երգոց ալ. բաւական հին օրինակի մը գաղափարուն կ՚ըսէ « Կատարեցի զՀոգիաբուխ « երգս Տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի... « ՚ի զարդ և ՚ի պայծառութիւն սուրբ եկեղե- « ցեաց »:

Այս մանրիկ և բազմախազ երգերուն փոխան՝ տեսակ մը երկարատուն և յորդորագնաց երգ ալ կայ, Քարոզ կամ Գանձ ըսուած, որուն առաջին ծանօթ օրինակ տուած է Գրիգոր Նարեկացի, Հոգեգալստեան, Խաչի և եկեղեցւոյ վրայ երգած- Ներովը. իսկ երկրորդ և քաջ հետևող բազմաձնորհ և բազմալոյսակ հայրապետաս մեր, նոյնպէս

Նոտբրանաց. Որ ֆերմատին. Խնդրա յոյժ պոռաւոր լուսոյ. իսկ Քարոզքն՝ սարկաւագաց երգածներն:

երեք գանձ հասուցած է մեզ, ի վարդավառն, ի Վերափոխումն Ս. Կուսին և Օրհնութիւն Միւռոնին. երկու հեղինակք ալ իրենց անուան առերով ակզբնաւորած են երգոց անագլուխքը. յորմէ սովորութիւն եղած է և յետագայ գանձասաց երգողաց ալ նոյնպէս ընել, ԺԲ–ԺԵ դարուց միջոց. յորս կըրնամք ըսել թէ շատերն միայն իրենց անուան գրակապութեամբ յայտնած են, այլ շարադրութեամբ և իմաստիւք՝ ոսկեայ և անհամեմատ: Ցետին գանձն Ներսիսի՝ որ է Միւռոնին, « Նոր օրհնութիւն ընդ հայցուածոց « մաղթանաց մատուցանեմք », և այլն, հաւանութիւն կ'ընծայէ թէ Միւռոն–օրհնէից բովանդակ կանոնն ալ ինքն նորէն կարգաւորեր և ճոխացուցեր է, հաւաստի ուրիշ եկեղեցական հանդիսից և ծոնից. այսպէս բարեզարդելով այն կաթողիկոսաց սեփական արարողութիւնն ալ՝ փոխանակ մեղադրանացն յօտարաց՝ ձիրեններոյ իւղով ջըլլալուն համար [1]:

Այս գործս և յիշատակս կ'առաջնորդէ մեզ անցնելու ի տեսութիւն Մաղթոյն կամ Օրհնութեան գրոց, որուն պատշաճի Միւռոն–օրհնէքն. յորում թէ ոչ յայտնապէս այդ կանոնդ՝ ուրիշ կանոն մը կայ իրեն ընծայուած այսինքն է Խաղողի օրհնութիւն յաւուր Վերափոխման ծոնին, յորում սովորութիւն է բարեպաշտ աղգայնոց մերոց՝ նախ ճաշակել տարւոյն նոր խաղողը՝ յետ օրհնութեան. և միանգամայն ցուցընել մեր հայրապետաին գործական սէրն ալ առ Մայրն Աստուածոյ և մարդկան, որուն մեծագոյն ծոնն ալ ոչ միայն կրկին շարականօք և գանձիւ զարդարեց, այլ ինքն թուի իննօրեայ հաստատող ծոնին ալ. և անոր վրայ ա-

1 Մեր այժմեան Միւռոն-օրհնեաց կանոնին մէջ լատինէ թարգմանեալ աղօթք ալ կան, այլ թուի յետ Շնորհալւոյ մտած:

ւելլուց յիշեալ օրհնութիւն այնպիսի պաղպ, որ անմահից և մահացուաց զուարթացուցիչ և սիրելի ըստեղծաւ յարտաքնոյն. և՝ ի հաւատացելոց Ճանաչի նիւթ ահաւոր և աքանչելի խորհրդոյ պատարագին: Արժանի էր որ Քրիստոսի արեան փոխան եղողին՝ կանխաւ օրհնուէր իր ամբողջ ոդիուզացմէջ՝ ի պաւիւ և յօրինակ կուսական ծոցոյն՝ որ ընծայեաց և անոյշ զՔրիստոս. կամ ինչպէս կ'ըսէ հեղինակն՝ ի Խաղողօրհնէան, « Ուսաի տուաւ մեզ « պտուղ կենաց և անմահութեան՝ Յիսուս Քրիս« տոս ». և վասն խաղողոյն, « Որոյ արիւն ար« ժանաւոր եղև մեծագունի ընծայից օրհնու« թեան, նիւթ փրկական արեան Միածնի Որ« դւոյ քո լինելով, որով գնեալ ազատեցաք՝ ի « ծառայութենէ մեղաց և մահու ». և այլն: Յիշէ և ուրիշ պաւիւ մը խաղողաբեր ծնկոյն, Քրիստոսի նմանութեան, « զի զքեզ անուանե« ցեր որթ, և զառ՝ ի քեզ կապակցեալն հաւա« տով և սիրով՝ ուռ, և զՀայր քո՝ տածող և մը« շակ », և այլն. և ոչ միայն զնուիրեալ խաղողն կ'օրհնէր՝ այլ և անոր ծառը և տնկոյները և վայլողները, և բովանդակ այգին՝ որ զորթը բուսոյց:

Առիթ զատ Մաշտոցին մէջ՝ յուղարկաւորութեան կամ Մեռելաթաղի կանոնաց մէջ յայտնի են Շնորհալւոյ Հանգստեան չարականաց գործածութիւնք. քիչ տեղ իր ուրիշ չարականք կամ երգք: Բայց ամենէն գլխաւոր յիշատակ այն օրհնաբեր պաշտամանց՝ Ջեռնադրութեանց, և մանաւանդ Եպիսկոպոսի Յեռանդրութեան կարգերն են, զոր և յիշեցինք Հռոմայ Նուիրակութեան պատմութեան մէջ (184). և հօս այսչափս աւելցընենք, որ ինչպէս մեր եկեղեցւոյ արարողութեանց և օրհնութեանց սկիզբն եղած է՝ ի Ս. Լուսաւորչէն՝ առնելով՝ ի Յունաց, յայտնապէս և ձեռնադրութեան կարգք, որով վարեին մեր եպիսկոպոսա-

պետքն մինչև ՚ի գիւտ հայերէն գրոց. այն ատեն
զանոնք Թարգմանելով ՚ի մեր լեզուս, հանդերձ
ուրիշ նոր կարգերով և օրհնութեամբք՝ ձեւացու-
ան կարևոր և Թանկ գիրքն՝ որ Օրհնութիւնք կ՚ը-
սուէր ըստ պատշաճին, և սովորաբար Պաղտոց
կ՚ըսուի, կամ յանուն Ս. Մեսրովպայ՝ որ այնպես
ալ կոչուեր, կամ Թէ ինքն ալ գիրքն ալ այսպես
կոչեցան հին հայկական աւանդութեամբ, յորում
տալա բառն սրբազան նշանակութիւն մը պիտի
ունենայ, Թերևս համանիշ տպիի բառին, որ նշա-
նակէ օրհնեալ ջրոց ցանիչ գործին կամ ձիուղը:
Սովորաբար կարծուի որ Ս. Մեսրովպ ըլլալով
իբրև գլխաւոր հաւաքող կամ կարգադրող օրհ-
նութիւնաբեր գրոց՝ իր անունը տրուած է այն
գրոց. սակայն այս բանիս հիմնական վկայութիւն
մը չըլլալէն զատ, հակառակ վկայութիւնք ալ կան,
որ Ս. Սահակ և իր քարտուղարն Մովսէս, Յով-
հան Մանդակունի, և այլք՝ աւելի աշխատած են
այդ գրոց հաւաքման: Ինչպէս որ ըլլայ, մեր խնդ-
րոյն համար այս ալ վկայուի՝ որ Լուսաւորչի ատե-
նէն սկսեալ կարգերը Թարգմանելու ատեն, կամ
քիչ մ՚ալ առաջ՝ Ս. Սահակ Քահանայի ձեռնա-
գրութեան կարգը նոր շարադրեց, իր հայրապե-
տութեան 21ի տարին: Մեր ձեռքը հասած Շնորհա-
լոյ գարէն առաջ գրուած հին երկաթագիր մաշ-
ուած մը մէջ Քահանայի և առջի կարգերուն ձեռ-
նագրութեան ձևն և ոճքն համառօտ բաներ
են. և շատ յարմար էր որ ընդարձակութենին հին
Պաչլաւունեաց նոր պայազատ հայրապետաց ձե-
ռօք, մանաւանդ երբ Լատինաց եկեղեցւոյն և Ս.
Քահանայապետին Թուրը՝ տեսան անոնց բարե-
կարգ հանդիսանելը, Ս. Սահակայ, կամ անկէ ե-
տև ուրիշներու գրած համառօտ կարգերն ըստ
մտածին փոխուեցան հիմայ. այլ Թէ մըչափ ուրիշ-
ներն ալ՝ որոշ չեմք կըրնար ըսել, մանաւանդ որ

նորութիւն աւելի Եպիսկոպոսի ձեռնադրութեան մէջ է, իսկ այս կանոնս մեր յիշեալ երկաթագիր մաշտոցին մէջ չկայ, որով չունիմք մեր բնիկ հին ձևը. իսկ հիմայ սովորական եղածն է խառնուրդ հայկականի, յունականի և լատին արարողութեանց. այս եաքինէս բառ առ բառ թարգմանուած աղօթքներ և ձևեր կան, որք Շնորհալիէն ալ եաև ընդունուած են. և բոլորն միանգամայն լատինէն աւելի ընդարձակ և ձոխազարդ եղեր է, ինչպէս և ուրիշ ձեռնադրութեան կարգք: Կան ամբողջ լատինական մաշտոց և ձեռնադրութեան կարգքն ալ բառ առ բառ թարգմանուած 'ի ԺԴ դարու, սակայն ոչ հասարակաց գործածութեան համար, այլ 'ի ծանօթութիւն, կամ թերևս օտարազգեաց անձանց համար, ինչպէս Պալենց անուանեալ Ներսէս եպիսկոպոսն, որ և յիշեալ գրոց թարգմանիչ թուի: Շնորհալւոյ ինքնիրեն կամ իր եղբօր հաւանութեամբ ըրած գլխաւոր նորութիւնն էր՝ ձեռնադրութեանց մէջ միւռոնիւ օծումն ալ մացընել, ինչպէս տեսը յիշեցինք (184). և թուի թէ դեռ չէր տարածուած նոր սովորութիւնն, կամ չէր լսուած 'ի Լատինաց, անոր համար յետ իբր 10 տարւոյ մահուան Շնորհալւոյ՝ Լուսիոս Գ. Պապ՝ լատին մաշտոցի օրինակ մը խնդրելով՝ առ յաջորդ նորա՝ Գրիգոր Տղայ՝ մանաւորապէս կը խրատէ, « Օծէք... և զձեռնադրեալ « քահանայիցն զձեռան, և զեպիսկոպոսացն՝ « գլուխս, որով զօրանան յիւրաքանչիւր պաշտօնս »: Այս գրոց առաքումը կը յիշէ նաև Կլեմէս Գ՝ առ նոյն Գրիգոր Տղայ (1187), և յանուանէ՝ Միւռոն օրհնելու լատինարէն կանոնն ալ:

Այսքան տեսակ եկեղեցական ներքին և էական բարեկարգութեանց հետ՝ նիւթական վայելչութիւն և զարդերն ալ չէր մոռնար մեծսիրտ և մեծախելք Շնորհալին. թէ և այն մեծութեանցն

համեմատ չունէր ընչից մեծութիւն և Պ. Գեսա-
դարձի գանձերը, այլ ունեցածն ալ յետ աղքա-
տաց և կարօտելոց՝ կու տար եկեղեցեաց շինու-
թեան և զարդարանաց համար, « զորս պայծառս
« և առոյգս յարդարէր, զգեստս մաքուրս և
« վայելուչս եկեղեցականացն կազմէր », կ'ըսէ
պատմիչն. և դարձեալ, « զարդարէր զեկեղե-
« ցիսն ոսկեղէն և արծաթեղէն անօթիւք, և պայ-
« ծառագոյն ոսկենկար զգեստիւք, բաշխման սուրբ
« մարմնոց և արեանն Տեառն, և յորդորէր զա-
« մենեսեան՝ խմանալի և զգալի պայծառութեամբ
« սպասաւորել կենարար և երկրպագելի սուրբ
« խորհրդոյն »: Ինչպէս բարեկարգ հոգւոյ և բա-
րեկազմ մարմնոյ նեղգաշնակութիւնն՝ մարդուս
կատարելութիւն կ'աւելցընէն, այսպէս և եկե-
ղեցւոյ մը խմանալի և զգալի բարեպաշտութեանց
նեղգաշնակութիւնն՝ կ'ազնուացընէ հաւատացե-
լոյն միաքը, կը բարձրացընէ զհոգին: Այս զար-
դուց և սպասուց մէջ՝ յիշուին Շնորհալւոյ շինեալ
տուած մեծ Պահարան կամ Նշխարանոց մը Սըր-
բոց, բովանդակ ոսկւով և արծաթով, զոր յետոյ
իր եղբօրորդին Գրիգոր Ապիրատ ալ գոհարեղէ-
նօք աւելի զարդարեց. և իր հագած մէկ Նախորա
կամ շուրջառն, զոր և յունական բառով օփո-
վլապս կոչէ[1] Սմբատ Պատմիչ. և նշանակէ ծիրանի
գոյնագոյն, « որ շատ ոսկւով կարած էր. որ զէտ
« ձուլածոյն կանգներ ». այսինքն՝ այնքան քովէ
քով ոսկի զարդերով խառնած էր՝ որ իբրև միակը-
տուր ոսկիէ թափծու՝ կանգուն կենար, եթէ զե-
տին դրուէր: Այս երկու Թանկ սպասներն ալ՝
ուրիշ անոնց նման շատերու հետ՝ իբրև 40 տարի
վերջը քակել տուաւ Յովհաննէս Ե կաթողիկոս,

1 Մեր Օրինակաց մէջ սխալ գրուած է, « Փակեաց զգ-
« Օփինոփոխ գվլապ նախորան », կամ Օփինոփոխ վլապ:

ուրիշ չէնքերու պիտոյից գործածելու համար. գէթ երանի՛ թէ բարերարութեան տեղիք ըլլային չէնքերն, և ոչ իրեն և իր հիւրոց համար գործածուած. ինչպէս կըրնայ կարծուիլ Սմբատ Գունդստապլին պատմածէն. որ թէ և գովէ զՅովհաննէս, անձամբ անպաճոյճ ըլլալուն համար, այլ միանգամայն կ՚իմացընէ թէ « և սեղանով արքայա-
« կերպ... շինասէր էր, և տան յարդարիչ, և պի-
« տոյից պատրաստիչ՝ յոյժ գովելի ». և չի ծածկեր իր կրակոտ աչաց արտասուքն ալ՝ այնպիսի յիշատակաց և զարմանաց արժանի զարդուց քակտուելուն. « տեսաք և չջահիեցաք ձեռօք ՚ի
« քակելն, և լացաք ընդ այն վայելչութիւնն անզարդ
« մնալն »: Գուցէ Յովհաննու տաճն դեռ շատ յիշատակներ գտուելով Ս. Հայրապետին՝ անոնցմով կարենային մխիթարուիլ Սմբատայ պէս ըզգացողք. իսկ երբ ժամանակն զանոնք ալ ծախեցկամ ծածկեց՝ դոյզն ինացուած անգամ յիշատակի այնպիսի աննման անձին՝ մեծ գանձ գրուելու էր:

Ախտիսի բան մը յայտնուեցաւ մեր օրերս. շինչ մը միւռոնի՝ օրհնեալ Ներսիսի տուրք աջովը, գուցէ և իր նոր կարդադրութեամբ օրհնութեան կանոնին և իր նոր երդեալ գանձին, զոր աւարտէ ըսելով. « Եւ ՚ի ծագման քո մեծի՝ իբր զիւ-
« զեալ[1] պատրոյգ վառեսցես ընդ նոսին և զմեզ
« անշէջ քո լուսով »: Իր կնիքն գրուծած էր այս չըշխս վրայ, որպէս կ՚ընէր անշուշտ նուիրակաց աւանդելուն առեն, կամ բարեպաշտ խնդրուղաց՝ իբրև նշխար մի տուրք. և գուցէ միակ մնացեալ իր օրհնածներէն պահուէր յաթոռն Հռոմկլայի և 120 տարի յետ իր մահուանն. իսկ երբ այն աթոռն և բերդն քայքայեցան յԵգիպտացւոց,

1 կամ զուզեալ, զուզեալ:

ըստ դիպաց՝ հօն գտուելով այն ատենուան Բ. Հէթում Թագաւորի քերդ մէկն, իր օծանելեաց մէ աւելի սիրով և յարդով ազատեց փախուց այս տուրբ իւղը, և հասուց իր եղբօր. որոյ ալքայական ցեղին մէջ ժառանգութիւն մնալով, անկէ ետև ալ իրենց ցեղին մնացորդաց, ասոնցմէ Մելքոն իշխան մը՝ զոր և Ս. Գէորգի և ուրիշ սրբոց նշխարներ՝ յանձնեց Թարբեւրդի եպիսկոպոսին Միքայէլի, ինչպէս կ'երևի ծն գարուն սկիզբները (յամին 1414). նա ալ դրաւ Ղուլէոս վանաց եկեղեցւոյն մէջ՝ մեծ հանդիսիւ, քանի մը եպիսկոպոսաց գործակցութեամբ, և վանքն կոչեցաւ Ս. Գէորգ. բայց ոչ յետ շատ ժամանակի՝ երբ Կոստանդնուպոլիս առնուեցաւ 'ի Թուրքաց և եկեղեցիք 'ի մզկիթ փոխուեին, մեր վանականք ալ վախնալով որ գուցէ իրենց վանքն ալ այլազգեաց աղօթատեղի ըլլայ՝ հողով ծածկեցին Ս. Գէորգի տապանը, ուր գրուեր էր այս շիշս ալ, հանդերձ ուրիշ նշխարօք, և մոգապաշտեայ յիշատակարանաւ [1]. զոր՝ յամի 1839 փորելով գտան միաբանք Ղուլէոս վանաց, և որպէս յոտսամբ՝ պահեն պատուով:

Յետ յիշելոս Շնորհալւոյ այսքան եկեղեցական բարեկարգութիւն և բարեզարդութիւններըն, որ քին և արտաքին, որովք և այնքան պատուելի և պատկառելի ըրաւ իր աթոռը և ժողովուրդը, աւելորդ է ըսելն՝ այլ հարկ է հաւատալն՝ թէ Հայոց ամանեայց եկեղեցին ոչքան պատկառելի էր մերձաւորաց և հեռաւորաց և որոց մեր հայրապետան ծանուցուած էր. այնպիսի հոլովաւ երկա-

1 Ազգային լրագիրք, ինչպէս Նոյեան աղաւնի, թիւ 48, (1853) հրատարակած են այս յիշատակարանը. բայց թուականներն անկատար ըլլալով տարակուսական է Մելքոնի և Միքայէլի ժամանակն, մեզի հաւանական երևցածը վերը նշանակեցինք:

Ներկ էր և իր հօտն, և այն դժբաղդ ժամանակն ալ քարեբաղդ էր այսպիսի երկնաբաղդիկ այցելու մ՚ունենալով. « Վասն որոյ, կ՚ըսէ իրաւամբ՝ Պատ. « միչն, ընդհանուր եկեղեցիք Հայաստանեայց ՚ի « ժամանակս սուրբ Հայրապետին Ներսիսի՝ լու. « սաւորեալք ՚ի շնորհաց նորա, և ուրախացեալք « ՚ի վերայ աստուածայնագոյն հովուապետու. « թեան նորա՝ ընդ ամենայն տեղիս, գոհանային « զՏեառնէ, որ այնպիսի Լուսաւորիչ ՚ի զարմէ « սրբոյն Գրիգորի պարգեւեաց նոցա ՚ի յետին ժա. « մանակիս. և ուրախ էին ամենեքեան ՚ի Տէր »: Գեղեցիկ խորհրդածէ և հեռաւորաց համար՝ Լամբրոնացին, թէ չէին կրնար անծանօթ մնալ այսպիսի լուսաւոր անձի մը.

« Լոյս՝ ՚ի ծածուկ ոչ պարփակի,
Բարձր ընդ հանուրըս տեսանի:
Զոր առանձին ինչ նա խօսի՝
Ընդ տիեզերս երկրի սփռի »:

Այն որ հեռաւորաց զարմանք, մերձաւորաց վայելք էր, հարկ էր և է՝ որ աւելի ներսանց զինքը ճանչցողներուն ըլլայ և զմայլումն. զի եթէ այնքան զարմանալի և պայծառ են ճառագայթք լուսաւորչին՝ ծրքան և պայծառագոյն ինքն լուսանիւթ էակին՝ յորմէ սփռին նոքա. եթէ այնքան գեղեցիկ են արտադրութիւնք Ներսիսի՝ ծրքան գեղեցկագոյն արտադրիչ միտքն. և եթէ այնպէս շնորհազարդ իր ամեն խօսքն և գրուածն, ծրքան շնորհալի այն հոգին՝ որ այնպէս առատութեամբ ընդունեցաւ Ս. Հոգւոյն ձիրքերը, և անանցմով գրեթէ ծածկեց իր հոդեղէն զանգուածը, կամ թէ զայն ալ թափանցիկ լուսաթաղանթ միջատահման տարր մը դարձուց. այնպէս որ իր դէմքը տեսողք՝ մեկէն կ՚իմանային թէ սուրբ և առաքինի

հոգւոյ մը տաճար կամ հայելացոյց է տեսածնին։ Իսկ իր գրուածքը և խօսքը քննողք՝ վկայեին թէ տուր հելլենակն՝ անմարմնապէս կ'ապրի. « Ուր « զնուրհալից նամակս նորա ընթեռնուին՝ որպէս « յաստուածահրաշ դիմաց նորա պատկառեին », կ'ըսէ պատմիչն։ Ժամ է մեզի ալ որ այս զարմանալի աստուածարուեստ անձին նեղքին չէնքն և գաղտնիքը քննենք, իմանանք Ներսիսի շնորհաց սեփական ագուցքն, որով կ'ընդունէր զայն յիսկական աղբերէ աստուածուխեանն, լցուէր, զեղյը և միշտ անպակաս առաւելյը։ Այլ նըքան հնար է արդեօք նուազելոցն 'ի շնորհաց՝ քննել և հասկնալ զնորհաւորս։

## ԻԸ.

*Նկարագիրք կրթութիւնք Ներսիսի և զեղուազից առաքինութիւնք. — Գաղտնիք Շնորհաց։*

Մեր շնորհազարդ արեգակնանման Երկրորդ Լուսաւորիչն Ներսէս՝ այսուհետև հասակաւ խոնարհեալ 'ի մայր մանելու վրայ է. փութամբ իր հաղաղական լուսովը զուարճանալ, և թէ կարելի է՝ քննել յայտնել իր այնքան պայծառութեան կնքեալ աղբիւրը։ Բոլոր կեանքը յօգուտ եկեղեցւոյ և ընկերաց ծախսուն բանիւ և գրով և պատկէս աշխատանօք, ազգաց և եկեղեցեաց միութեան այնքան յօժարութեամբ ջանացողն, քաջ գիտէր որ իրեն ամենէն առաջին և վերջին ջանից և ուղղութեան առարկայն՝ ինքնին իր անձն է. 'ի

վեր քան զամենայն և զբնաւ աշխարհս՝ Արարիչն յիւրաքանչիւր մարդոյ՝ իր կատարելութիւնը կը պահանջէ, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. այս հինենական սկզբունքը Ներսէս իբրև ընդ կաթին ծծեց և մինչև ցվախճան անով մնաւ: Ինչ որ Տօրոսի սեպացեալ Սեաւ գագաթունքն՝ իբրև մեծատարր և բարձրաբերձ որոգան մը՝ 'ի տղայութենէ ընդունելով զՆերսէս, և իբրև ընդ մէջ օդոց քան թէ 'ի վերայ երկրի որթելով զնա՝ ազդեցին որբազան և անզբաղ միայնութեանց մէջ. ինչ որ ալեւորեալ և զարդարեալ ծերութեամբ Մեծ Վկայասիրի ծոց մը, և նորաբոյս մրրազարդ փոքր Վկայասիրին հարազատի ձեռնտուութիւնն՝ տպաւորեցին ա նոր, և ինչ որ ճգնասուն հալոց և գիտնական վարդապետաց խրատք և օրինակք աւելցուցին Ներսիսի Թարմ հասակին, ոչ միայն անկինկ մնացին և աճեցան հասակին հետ, այլ երբ ինքն իրեն տէր եղաւ՝ աւելի քան զօտար վարպետս և դաստիարակս, անդուլ և անքուն ինքն իր անձին կրթիչ դարձաւ, և անաչառ կրթիչ և քննիչ մը. և ոլքան առաքինանօք կը բարձրանար մինչև 'ի ծայր քահանայապետութեան Հայաստանեայց՝ այնքան հրաշակոլութիւնը կ'աւելցնէր իր վրայ. և ինչպէս 'ի քահանայանալն՝ ամ աւելի սկսաւ զինքը ճնշել, որ առաջ առաքինանին պատշաճ՝ առաջ սպասաւոր մ'ըլլայ ամենասուրբ Սեղանոյն, նա և 'ի կաթողիկոսանալն՝ ոչ միայն չթուլացուց իր առաքինական ճգնութիւնները, այլ

« Եւ եւս առաս այժըմ ճրդնի,
Ի վարըս սուրբ միշտ նըկըրտի »,

վկայէ իր ամենէն հոգեկիր զարմացողն և նմանողն: Այնպէս ինն երևէր՝ թէ այն մեծ հայրապետն՝ հաւասար իր Հայ եկեղեցւոյ մանկանց՝ մանուկ

Ներսէս մ'ալ ուրիշ կրթելու, և մինչև ցմահ կըրթելու. և յիրաւի ալառուգութեամբ աշխուժից և մաքրութեամբ մանկափայլ ճնաց մինչև 'ի վախճան. և որ հօրանատամեայ դեռ իր կենդանագոյն տարիները կ'երթէր, ընտրանի շարականները շարէր և կշռաբան թուղթերը կը գրէր, նոյն ըզգաստ մտօք և կորովի սրտիւ դեռ իր ներքին մարդը զարդարել չէր թուլանար. իբրև Թէոֆաղէն և դիւրաշարժ կառք մը յարդարելով զմարմինը՝ հոգւոյն բարի ընթացից յորդոր՝ քան թէ արգելք: Մինչև վերջին կենաց օրերուն համար վկայէ լուսատես Ամբրոնացին.

« Սուրբըն Ճրգամբքըն յառաջեալ,
Ի խիստ վարուց միշտ աշխատեալ.
Մարմնոյն ներհակ պահօք զինեալ,
Ժիր ընթերցմամբ ըզնոյն կատեալ »:

Ապա զայնպիսի անձը՝ որ գրեթէ սրբութեամբ ծնաւ, անաւ և մեծցաւ, իրեն բնակարան ընտրեց աստուածային խնամատուութիւնն, և լցուց իր բազմապատիկ շնորհօք: Սրբութիւն վարուց եղաւ յատակ Ներսիսի շնորհալւոյ տաճարին, սուր և վարժ միտքն՝ բարձրագմբեթ ձեղուն մը, առաքինի խոնարհութիւնն՝ պարիսպք կցորդիչք յատակին և գմբէթին, և քաղցրութիւն բարուցն և բանաւոր բերք հանձարոյն՝ զարդք և դրուագք ներքին և արտաքին. առաքինութիւնք և գիտութիւնք իրարու խառնած իբր շուշանավարդ պսակ իր ոսկեծիրանի բազմախաչեան նախորսէն և կրկնամածեալ քօղէն աւետի՝ մեծապայծառ զարդարեին զինքը: Երկանիկ նկատուելք իր տղայական սիրոց մաքրութեանը՝ սքանչանալով կըրնային ըսել. « Չլինչ լինիցի մանուկս այս ». և Վկայասերքն երկոքին, Բարսեղք և Սահականոսք վարժա-

պետքն և իմաստակալք՝ դիտել և դնել՛ի սրտի իւ-
րեանց՝ այնպիսի մանկան ըսած խօսքերը, որ մի-
այն տարիքով ցըցուց մանկութիւն և ոչ մտօք.
վասն զի ուր սրբութիւն և իմաստութիւն միա-
նան՝ հօն հասակն չի զանազանիր. սուրբ սիրտն
զիմաստութիւն միայն սիրէ. և իմաստութիւն
որ « յանձն չարտարուեսա ոչ մտանէ », դադարէ
՛ի բարիարուեսա սիրտն և բարձրացընէ մինչև
յաստուածային տեսութիւնս. որպէս ինքնին
հրամեց և երանեց Աչմարիտ և իսկական Իմաս-
տութիւնն և Սրբութիւնն. « Երանի՛ այնոցիկ որ
« սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տես-
« ցեն »: Եւ ինքն Ներսէս խորհրդածելով այս ե-
րանութեան վրայ՝ հիացմամբ կ՛ըսէր. « Երանու-
« թիւնս այս գերազանց է քան զհասուն մտաց.
« որպէս որք հայելով՛ի բարձրագոյն վիմէ՝ որ կե-
« զերս ծովու՝ ՛ի խորս նայիցին անդընդոց, և յան-
« տեսութենէ յատակի խորոցն ընուն երկիւղիւ:..
« Զի ոչ զգիտեն ինչ յալագս Աստուծոյ՝ երանէ
« Տէրն, այլ որ յինքեանս ընդունին զԱստուած՝
« երանելիք, մաքուրք սրտիւք... Որովք ուսա-
« նիմք, թէ որ յամենայն ախտից զսիրան մաքրի-
« ցէ՝ յիւրոյ հոգւոյն գեղեցկութիւն տեսանէ զաս-
« տուածային կերպարանն ». որքան աւելի մաք-
րէ՝ այնքան աւելի քան զաւելի կը տեսնէ աս-
տուածային գեղեցկութիւնները: Որպէս հաւա-
տամք թէ կ՛ընէր և կը տեսնէր Ներսէս. և այն-
պէս գերազանցելով քան զերկայնաշար նախորդս
իւր՝ Լուսաւորչի որդւոց և Թոռանց կը հասնէր,
կը դասակցէր անոնց՝ Սրբութեան պաշտամունք
տարեկանաւ հոչակաւելով յեկեղեցիս Հայոց.
որոյ մաքրութեան և սրբութեան համբաւն և
փայլակն՝ կենդանութեանն առեն իսկ կը լսուէր և
տեսնուէր ամեն աննախանձ ձանչցողաց. ինչպէս
տեսանք Թէոդիանեայ ըսածը, որ սուրբ ձանչցաւ

ընկրաէս, և այնպէս քարոզեց 'ի դրան կայսեր Մանուէլի: Իսկ իր մերձաւորքն գրեթէ միակ միսն Թարանք զինքը ժամանակի հարկաւ կորուանելն՝ սրբոյ կարգաւ տօնելու յոյսն ունէին:

Սուրբ սրտին աչքն՝ եթէ Աստուծոյ գեղեցկութիւնը կը դիտէ, յայտ է որ իր ձարակն ալ՝ անոր վայելքն է, Աստուծոյ սէրն է. և որքան մաքուր է սիրոյ ամանն՝ այնքան ազնիւ և պարզ է մէջը լցուած նիւթն, սէրն: Շատ է մեզի ճանչնալ ներսիսի սրտին մաքրութիւնը. ուրիշ վկայութիւն պէտք չէ իր մեծ և անոյշ աստուածսիրութեանը, եթէ և իր գեղեցիկ գրուածքը, ըլլամեանդն երգերն՝ արտաքին վկայ մը չունենայինք մեր ամենօրեայ ժամասացութեանց մէջ, և իրեն հոգիաբուղխ հառաչանօքը մենք ալ չկըրկնէինք, աւելի յարմար սեպելով մեզի յետին տողնիկը.

« Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ձըմլեա
Սիրտ իմ քաւեղէն ».

կամ աստուածային սիրոյ և ցաւոց զուգահիւսակ Նորոգող սիեզերաց երգոյն վերջին տունը.

« Սիրտ իմ առ քեզ աղաղակէ,
Բան, որ ընդ Հօր 'ի սկզբանէ », և այլն.

կամ Հաւատով խոստովանիմին՝ ոսկեհաշար տուները, Զարթիքը, բոլոր Յիսուս որդին, և այլն: Շատ բան կ'արժէր զրուցել այս ամեն բանէ վեր բանին համար, Ընդհալոյ մը աստուածսիրութեան, եթէ նախ ինքն իսկ ուզած չըլլար՝ այս ամենէն առաջ և սաստիկ կիրքն ալ՝ չափաւորել դրսուանց, և ծածկել իր ծածուկ ողորմութիւնները՝ աւելի՝ ներքին զգացմունքն և վայելմունքը.

և եթէ երկրորդ՝ նրեն արժանաւոր և մերձաւոր անձանց աւելի չվայլէր այս բանս հռչակել. յորոց ամենէն յառաջադէմն և շատ անգամ յիշեալ և յիշելի Լամբրոնացին կ'ըսէ.

« Ներսէս յաղօթս առ Տէր կանխէր,
Դէմ յանդիման ընդ նա խօսէր.
Մըտօք զփրկչէն շնորհս որոնէր,
Եւ արտասուօք գոհաբանէր.
Տրոցըն տուր կըշիռ չափէր,
Զանձն աղերսիւ փոխանակէր.
Որ ընկալեալ եղեւ 'ի սէր,
Եւ հատուցաւ զոր ինչ խնդրէր:...
Ներսէս հրեշտակ էր երկրաւոր,
Գոլով մարմին ոչ նիւթաւոր.
Որ 'ի վերջին գարս եւ 'ի կոր'
Ուրեք չըկայ արժանաւոր.
Մխայն գըտաւ նա Ճըգնաւոր,
Շնորհօք պայծառ եւ փառաւոր.
Բայց արդ յերկինս է գասաւոր,
Նըմա չինաց նմանաւոր »:

Ինչպէս բիւրեղ ական կամ թէ վանակնի մէջ դրուած գոհարակապ ոսկի զարդ մը, այնպէս էր սատուածային աչն Ներսիսի սուրբ սրտին մէջ. և ինչպէս այնպիսի գանձակալ մաքուր ամանն ալ կը ծածկեն արտաքին խոշոր ամանի մը մէջ՝ որ անկողոպտուս և ապահով պահուի, այսպէս, եթէ կարմրուկ սիրոյ պահարան՝ ապխատակ սրբութիւնն է, սրբութեան ալ պահապան խոշորագեղ խնամոհոգինն է. առանց որոյ՝ և ոչ մի լաւութիւն կըրնայ նայ լաւութիւն ըսուիլ, որպէս և ոչ հոգեկէն աչն՝ ալ ինչ, ըստ Քրիստոսի առածին. և որպէս աւելի բարձրանայ գունդ մը կամ թռչուն մը՝ որքան որ ցածէն ուժով առնու սլացքը, այնպէս կը

բարձրանայ սէրն ՚ի սուրբ սրտէ՝ որքան սա խո-
նարհութեամբ խոյացեալ ըլլայ: Ճատ նուրբ և
ազնիւ բան է խոնարհութեան առաքինութիւնն,
անծանօթ յաշխարհէ և գժուար իմանալի. այլ
բարեբաղդաբար այնքան վկայութիւն ունիմք յա-
ռաքինեաց և այնպիսի օրինակ՝ որ Թանձրագոյն
մտքեր ալ կըրնայ համոզել. բաւական է թէ հա-
ւատայ յաւետարանն Քրիստոսի, և յիշէ որ սա
ինքն Տէր մեր ամեն բանէ առաջ իր բերնով իրմէ
օրինակ առնուլ զհեզութիւն և զխոնարհութիւն
հրամմեց. և ամեն երանութենէ առաջ հոգւով
Աղքատութիւնը դրաւ, որ է խոնարհութիւնն
ըստ հոգւոյ մեկնիչաց: Աստուածային տեսչու-
թեան կամ նախախնամութեան նիւթն՝ Սէրն է,
եթէ կըրնայ այսպէս ըսուիլ, այլ բաշխող գոր-
ծին՝ խոնարհութիւն մ՚է. սա է այն գերահրաշ
անդուն, ուսկից կըզցաւ Աստուած իջնել յեր-
կիր, և մարդ յանդիմնդոց յերկինս ելնել: Իսկ ա-
մենայն չնորհաց ընդունարան և պահարան ըլլա-
լուն՝ գերագոյն օրինակ ունիմք աղջիկ մը, կոյս
մը, որ ամեն առեղծեալ սրտէ աւելի սուրբ էր.
միակ կատարեալ սուրբ՝ ի ծնունդս մարդկան, որ
ամեն բանաւորէ աւելի կրցաւ սիրել իր առեղծիչը,
և ամենէն աւելի ալ ունէր սիրոյ և սրբութեան
պատեան խոնարհութիւնը. մինչև ինքնին աս-
տուածարեալ յափշտակութեամբ հոգւոյ պո-
չեց, թէ Տէր «Հայեցաւ ՚ի խոնարհութիւն ա-
«ղախնոյ իւրոյ». վասն որոյ «Ցայսմ հետէ ե-
«րանելոցն ինձ ամենայն ազգք»: Կոյսն կուսա-
նալ Մարիամ՝ երկրաւոր լեզուաւ զինքն անուա-
նեց Խոնարհ. իսկ հրեշտակապետն աստուածա-
ւաք՝ երկնաւոր լեզուաւ թարգմանեց և վկայեց՝
Լի չնորհօք. ուրեմն խոնարհութիւնն է աղբիւր
չնորհաց. կոյսն անչափ խոնարհութեամբ մ՚ընդ-
արձակեցաւ, որով և անչափելի չնորհաց Տէրը

իսկապէս ընդունեցաւ ՚ի սուրբ Ծոյին: Խոնարհութիւն, սէր և սրբութիւն՝ ճրագ, պատրոյգ և բոց՝ աշտանակեալ սրտի. երրորդութիւն մի հոգւոյ յերկուս:

Ահաւասիկ գաղանիք կամ մեկնութիւն գալատնեաց Շնորհալւոյն Ներսիսի: Կըրնայ ըսուիլ թէ նա ամենայն առաքինութեամբք զարդարեալ էր՝ իբրև մեկմեկ ճերմակ փետրովք վայելուչ թեւոց վրայ. այլ ամեն մեկ ճերմակ փետրոց քով մեկմեկ ալ մանուշակագոյն ուներ. զԽոնարհութիւն. որով հաւասար բարձրանար և ցածնար, բացուէր և գոցուէր, ծագէր և ծածկէր: Ամեն յիշատակողք վարուց կամ գործոց Շնորհալւոյ յիշեն իր այս սքանչելի ձիրքը, այլ յայտ կամ կիսայայտ կամ լռելեայն. վասն զի խոնարհութիւնն՝ օրպէս նրբագոյն և սրբագոյն յատնողն՝ այնպէս ալ նուրբ աչք կը պահանջէ ՚ի տեսողն. և զի խոնարհութիւնն ինքն իրմով ծածկի՝ որպէս ոստրակն ինքն իրեն թևերով, այլ Հեղութիւնն հարկաւ յայտնուի և չի կըրնար ծածուկ մնալ, այսու անուամբ սովորաբար կը յիշուի խոնարհոց առաքինութիւնն: Հեզութիւն և խոնարհութիւն, երկու հարազատ և երկուորեակ գաւեակք են երկնաւոր առաքինութեան. և Քրիստոս ինքնին անբաժան կ՚ըսէ. « Հեզ եմ և խոնարհ սրտիւ ». այլ ըստ մերս տեսութեան՝ մեկմեկով յայտնուին և գուշակուին. իբրև թևի մը կամ ծաղկի մը մէջի երեան և դրսի երեան. Խոնարհութիւնն ՚ի միջի՝ ՚ի սրտին, հեզութիւնն արտաքուստ ՚ի դէմն նկարի. որպէս պարկեշտ ամօթխածութիւն կուսական երեսաց, որքան ծածկուիլ ուզէ՝ այնքան գեղեցիկ երևի: Որքան երկնաւոր աչխարհի մօտ ըլլայ անձն՝ այնքան խոնարհ և հեզ կ՚ըլլայ. որքան անկէ հեռու երկրաւոր և շնչաւոր ըլլայ՝ այնքան հպարտ և բարկ կ՚ըլլայ.

որքան մեկին յաղթել և նուաճել կ'ուզէ, այնքան հեռի է՛ի հեզութենէ և՛ի յաղթութենէ. վասն զի և աէրն՝ հեզոց համար ըսաւ և երանեց, թէ «ժա-
«ռանգեսցեն զերկիր»: Այս բանիս օրինակ՝ գու-
ցէ ամեն մարդ տեսած ըլլայ, բարկացողն մը և հեզոյ մը հանդիպելով. մեկէն կը ճանչնայ բար-
կութեան անբանականութիւնը, հեզութեան գե-
րազանցութիւնը. մեկուն գազանութիւնը, միւ-
սոյն հրեշտակութիւնը: Ո՛հ. որքան աւելի պըժ-
գալի կ'երեւի այն՝ եկեղեցականի մը վրայ. և որ-
քան աւելի յարմար այս՝ այնպիսի վիճակի, որոյ՝
քան ամենուն՝ մեծագոյն պարտքն է Քրիստոսի
նմանողութիւնն, և յայտնապէս օրինակեալ և
օրինադրեալ նմանողութիւնն. «Ուսարուք ինձ-
«նէն», և այլն. որոյ համար շատ գարերով ա-
ռաջ վկայեց Մարգարէն, թէ Նա տավրեցուց ըսա-
ծը, այլ ոչ աղաղակեց և ոչ վիճեց, և ոչ ոք լսեաւ
՛ի հրապարակս զբարբառ նորա. Նա՝ երբ չախ-
չախ եղեգանց վրայ քալել հարկ էր, քալեց և
չկոտրեց զեղեգը. Նա՝ առկայծեալ պատրոյգնե-
րու քովէն անցաւ, չնչելով հեզաբար, և չմարեց:
Ենիոսկ և Կիւրոսկ, Աղեքսանդրեանց և Կեսա-
րեանց բռնաբար աշխարհակալութիւնք և տիրա-
պետութիւնք անհետացան. Մովսէսի, Դաւթի,
Անտոնեանց և Փրանկիսկեանց հեզաբար հոգեկա-
լութիւնք կան և մնան. գերագոյն և աստուածա-
մերձագոյն անձինք էին յիշեալքդ, որպէս և Աբ-
րահամ և նմանիքն, ասկայն և ամենահեզ անձինք.
զի նոյն իսկ իրենց սիրան ուժովցնող զօրութիւնն՝
այն կակուղ այլ աննկուն հեզութիւնն էր:...

Եթէ երկայնեցաւ խօսքերնիս, Շնորհալւոյ ա-
փականագոյն շնորհքը բացատրելու համար էր,
որ և իրեն խնարհութեան պատմուճանին ար-
ագքին երեան է. որ բովանդակ գործոց, խօսից,
գրուածոց, ընթացից և դիմացը վրայ կը յայտ-

նուէրը և փայլէր, և զոր ոչ ոք կրնար չտեսնել և չվկայել. զոր առաւել քան զամենայն չնորհս պայծառ տեսնելով և աչք խմաստասէրին Յունաց՝ կը սոխակը քարոզել՝ ի կայսերական պալատին, ասնոր հոգւոյ հեղհեղուկութիւնը և զպարկեշտութիւն անձինն, և պիտանարհամիպ և հանդարտ հարցմունքն և պատասխանին: Արժանապէս ալ Մովսէսի նմանցընելով կ'ըսէ Լամբրոնացին.

« Ներսէս՝ հոգի չեզ ըսատցաւ,
Որ Մովսէսի հանգոյն ցուցաւ.
Ընդդէմ ներհակ ուժեք չարեաւ,
Այլ սուրբ սիրով յինքն ընկալաւ »:

Պատմութիւնը գրող հեղինակն այնքան արժանաւոր անձէն պատկառելով և վախնալով վրիպը գրելու, միայն կը համարձակի « Վատահացեալ՝ ի « նորին ապաւինագոյն հեղութիւնն ». զոր և ուրիշ տեղ մը անբաւ հեղութիւն կ'անուանէ: Ժամանակաւ մերձաւոր և ծանօթ պատմչաց գլխաւորն՝ Կիրակոս, ամենէն առաջ զայս յիշէ՝ ի բարան. « Էր ինքն հեղաշնայնիւ, և պարկեշտ, արժանա« ւոր այրն Աստուծոյ ». և անոր կիսակատար գրուածոյն (Մատթէի Մենուելեան) չարունակող հեղինակն (Եզնկացին)՝ իբր յատկապոյն մակագրութեամբ կ'ըսէ. « Երանելի հեղահոգի պատ« րիարքն Հայոց՝ Տէր Ներսէս ». Նոյնպէս և Յայամաւուրց հեղինակք իբրև սեփական բարքկնիքն չեն գնա հեղ, խոնարհամիտ, և միով բանիւ՝ « Լցեալ « աստուածային չնորհօք »:

Պարզապոյն և խորագոյն տեսութեամբ կը բացատրէ վարուց պատմիչն՝ այս կարևոր և ազանչելի չնորհքը. « Էր՝ ի նմա և այլ ինչ առաքինու« թեան կիրք, որ առաւել գերագոյն է այլոց բա« րեաց մասանց, զոր կարի յոյժ գժուարին յերկ-

« ըածնաց ոք աստցական ջանիւ կատուլանայ ըստ-
« անձնել. պամֆոգովէնի հեղինակն ասեմ, զոր
« ունէր հանգոյն մեծի նախամարգարէին Մովսէ-
« սի. որ ոչ մանաւանդաբար ըստ ժամոյ ուրեք,
« այլ զամենայն աւուրս կենաց իւրոց՝ ոչ ուժեք
« բարկացաւ: Եւ եթէ լինէր ի պատճառէ իմե-
« ծիք քան և կամ գործ յումեքէ՝ արժանի բար-
« կութեան, նա ոչ սրանէր կամ յուցանէր ինչ. այլ
« հեզև քաղցրագոյն բանիւ ասէր. Լաւ, եթէ ոչ լիս
« խնայէի՝ բարկանայի քեզ: Եւ այս էր նորա բա-
« րեաց սովորութիւնք միշտ, որ ի վեր է քան զմար-
« ծոյ բնութիւն »: Զգաստ հեղինակ բանիս շատ
լաւ կ'անդրադարձընէ այս առաքինութեանց մեծու-
թիւնը և գժուարութիւնը. զոր հարկ է մեծ ջանիւ
և ուժով ստանալ, և չկարծել անաշխատ տուրք մը.
այլ որպէս ցանկութիւն՝ նոյն և ցասումն, երկու
արմուղ զուարակաց պէս հաստատուած են ի
բնութեան, զոր շատ կրթութեամբ նուաճելու է, որ
կարենան լծավարել մեր բանական անդաստանին
մէջ. ապա թէ մէկն կամ մէկալն խեղդ և ծուռ,
յայտնի է թէ ինչպիսի վնասներ կ'ըլլան: Ինքն իսկ
հեզահոգին մեր « գիտէր զինչ կրէր ի մարդն ».
և կը վկայէ աւետարանի մեկնութեան մէջ, թէ
ամենևին անբարկանալի ըլլալ՝ բնութենէ գուրս
ըլլալ ըսել է, որով է անկարելի. այլ երանելի հե-
զութիւնն է « որ առաքինութեամբ սանձահարէ
« զսխտա, հակառակօքն զհակառական բժշկէ.
« ըստ այսոցիկ և հեզութեամբն՝ զտարապարտ
« բարկութիւնն:.. Մնոյ հեզութեան՝ խոնարհ-
« հութիւնն է, և արմատ բարկութեան՝ ամբար-
« տաւանութիւն:.. Բայց մի ոք զբարկութիւնն
« յամենայնի չար համարի, և զհեզութիւնն բա-
« րի, զի ի ժամանակի՝ բարի են երկոքեան. Մով-
« սէս՝ հեզ վկայի, բայց այնքան բարկացաւ ի վե-
« րայ հարեաց ժողովրդեանն՝ մինչ զի զտաճատական

« խորհակեաց »: Նոյն դարձեալ և յընդհանրական Թղթին առ Եպիսկոպոսս խրատէ, ոչ յամենայն դէպս հեզութեան պատճառաւ նեղով ընկալ, այլ և սաստել և յանդիմանել, օրինակ բերելով զնոյն իսկ Տէրն մեր, որ խարազանաւ վաճառեաց տաճարին մէջ տուրհաս ընողները. սակայն դարձեալ կ'աւելցնէ հեզահոգին, թէ Յիսուսի խարազանն ալ « չուանեայ (էր) և ոչ՝ի կարծրնիւթ « ծոց », որ նշանակէ թէ սաստելու առեն ալ քաղցրութիւն պէտք է ունենալ: Անտարակոյս ինքն ալ այնպէս կ'ընէր, երբ իր բարձր ատենէն պարտքերն կը սահիկին խրատելու, յանդիմանելու և սաստելու. այլ առանց վերծովելու իր հեզութիւնը բարկութեան կրքով, կամ դառնացընելու իր աքանչելի քաղցրութիւնը՝ որ և է անառակինի չարժմամբ և բերմամբ: Վասն զի ինչպէս ինքն ալ իմաստասիրեալ մէկ Թղթին մէջ, Քրիստոսի նմանութեան ճանապարհին հետքն՝ « առաջինն « է Խոնարհութիւնն, և որ նորին են մասունք՝ « Հեզութիւնն և Քաղցրութիւնն »: Զքնաղ երբեմակը, որպէս մայր մ'անդրանկածին երկուսրեակ դաստրօք յաջմէ և յահեկէ: Անշուշտ Ներսէս ալ մեր դարուս մօտ հռչակեալ Ս. Փրանկ. Սալեզացւոյ առակ եղած քաղցրութիւնն և զբաարթափիւնութիւնն ունէր. սակայն այս նոր քաղցրածորան Սուրբս՝ ինքնին իրեն համար վկայէ՝ որ քիչ առնուան մէջ առացած չէ այգպիսի շնորհք մը. 23 տարի աշխատած է ցասմնական կիրքը սանձելու և ինքն ինքեան տիրանալու. քիչ շատ այսպէս պէտք է դաստիարակեն առաքինի և հեզ անձեր. իմանալ թէ յիրաւի մեծ և գժար՝ ոյրով և մեծայարդի առաքինութիւն մ'է Խոնարհութիւնն. և շատ թանկ շնորհք մ'է եղեր մեր հայրապետին անփոխան ձիրք երևցած ամենագովելի հեղութիւնն:

Բնական է և զարմանալի չէ որ այսպիսի հեզահոգի և առաքինի անձինք՝ ոչ միայն սիրելի ըլլան, այլ և մեկէն խօսակցողաց և կենակցողաց սիրտը գրաւեն, և կարծր սրտեր ալ կակղեն և բանան. այլ զարմանալի և շատ ալ զարմանալի է այնպիսի քաղցրութեանց՝ անձաշակ, անզգայ և հակառակ սրտեր ալ գտնելն. Սալեզացւոյ մը և Շնորհալւոյ մը ներհակ կամ առեցող՝ միայն սատանայ կըրնար ըլլալ, ինչպէս կ'ըսուի առակօրէն. այլ սատանայի կրից կըրնայ դժբաղդաբար հաղորդիլ և մարդկային բնութիւնն, թէ ոչնոյն չար դիտամբ: Եւ միթէ ինքնին իսկ քաղցրութեան աղբեր դէմ չի կռուիր որ և է մարդ՝ երբ Աստուծոյ կամաց, իր խղճին, քրիստոնէական պարտուց դէմ կ'ուզէ գործել. և Յուդա՝ Սիրոյն աշակերտ՝ չդաւէց զԱերն մարմնացեալ: Սիրոյ ներգործութենէն դժար է մեկնել աստղութեան ներգործութիւնը. սակայն ստոյգ է որ երբեմն ամենասիրելի և ամենաբարի և բարերար անձինք ալ զիրենք սատակ աստղներ ալ ունեցեր են. որոնց աստղութիւնն բոլորովին անբանական և բնաբոյս ըմն հակակրութիւն կըրնայ ըսուիլ. այսպիսի զանազան դէպք պատմուին մեր յիշեալ Սալեզացւոյ նկատմամբ: Շնորհալին ալ ունեցեր է իրեն աստղիներ, որոց համար աղօթէ՝ ի Յիսուս Որդին, թէ

« Ողորմեա և ստողին.
Եւ թըշնամեացն իմոյ անձին՝
Թողցես պանծանա առ իս պարտին », և.

և Հաւատով խոստովանիմին վերջընթեր տան մէջ յիշեն ալ զաստղիսն՝ գուշակել ասլ այն գտնուածն կիրք և ցաւն առաքինեաց, որք երբեմն իրենց ամեն ջանքն և սէրն ալ անօգուտ կամ անբաւական կը տեսնեն՝ հակառակորդաց սիրտը շահելու և ուղղելու:

Յիշեցինք Տարսոնացի Պօղոս քահանայ մը (420) որ առեղծուածով կը բամբասէր իր ազգը և հայրապետը. որ երբ իրատես չնա հեռուէն, ինք զինքն ուզեց արդարացընել ուրանալով ըրածը. հեղահոգին Ներսէս ալ դէմ չկեցաւ ըսածին, այլ իբր հաւատալով՝ ուրիշ անհոգեմ գործերէ ալ զգուշացուց: Այլ գտուեցաւ ուրիշ անգամ մ՚ալ, Թուի թէ վանահայր եկեղեցական մը, որ համարձակեցաւ գրել առ հայրապետն մեր « բանս « զկնծանաց յանդուգն լսեցուեալ »: Չարկաւ ընչեր են ոչխահոգ այն անարժանին գիրն ալ առնուն ալ. բայց Ս. Ներսէսի գրած պատասխանն ներէն կ՚իմացուի՝ որ ափեղցփեղ և ծանր ծանր նախատինք գրած էր վրան, և զինքն իբրև կեղծաւորութեան առեցող Հմայրատաւէր ցուցընելով՝ կ՚ուզէր կռուել իսկ կաթողիկոսին հետ, և յետ գարձընել պատարագի սեղանի ծածկոց մը՝ զոր Շնորհալին ընծայեր էր այն անձին քնական տեղւոյն Աստուածածնի խորանին: Ասոնց դէմ Շնորհալին աքանչելի հանդարտութեամբ յանձն կ՚առնու իր մեղադրելի և անարժան ըլլալն Աստուծոյ առջև. այլ կ՚իմացընէ անոր ալ ամբարտաւանութեամբ գործել և գրելը, և կերպով մը գարձեալ կ՚ողորմի կրկնելով, Թէ « Յիրաւի ասէի « Թէ անպիտանաս զոր կրես ». և վերջապէս իրեն համացը Թողով նորէն գալը կամ չգալը, (որովհետև անհանձար մեծաբանութեամբ այս բանս ալ գրեր էր նա,) խնդրէ Շնորհալին, որ « ուր կայ « ցես՝ յիշեացես յաղօթս, եթէ ախորժես. ոչ « լեր »: Անզգաման այսքան սիրով ալ չկակղելով՝ յանդգնեցաւ նորէն գրել և աւելի նախատանօք. այն տեն Սուրբն ալ առանց իր հանդարտութիւնը Թողուլու՝ աւելի ծանր խրատով յանդիմանեց անոր հպարտութիւնը և բարկութիւնը, որ հին և նոր օրինաց պատուիրանը ոչքն տակ ձգե-

լով՝ առեղծուածեամբ կը գաղէր և կը գաղտապար-
տէր իր երբեմն սիրելիները. և բոլորովին առա-
ծեամբ կ'ըսէր, թէ հայրապետան գինքն իր հակա-
ռակորդաց ձեռքը մատնած ըլլայ, մինչ սա և ան-
գամ մը մտածած չէր այնպիսի բան. 'ի վերայ այսը
ամենայնի կաթողիկոսն սիրով կ'ընդունի այս ըզ-
պարտաւթիւններն ալ՝ որ կըրնան իրեն օգտակար
ըլլալ Աստուծոյ դիմաց՝ համբերութեամբը: Գրեր
ալ էր անզգայն որ յարևմուտս պիտի փախչի կա-
թողիկոսին ձեռքէն, մինչ սա ոչ զոք հալածէր.
անոր համար կը պատասխանէ. Եթէ իմ պատ-
ճառաւս է փախուստդ՝ և ճամբան քեզի փոր-
ձանք մը հանդիպի՝ ես ըլլամ պարտական. իսկ
եթէ դու ինքնահալած կ'ըլլաս՝ դուն ես և պատ-
ճառ: Ո՞վ կարծեր թէ այսքանս բաւական չըլլայ
լուեցընելու այն յիրաւի անզգայեալը. որովհետև
յանդգնեցաւ դարձեալ դէմ գրել, և ալ աւելի
հայհոյանօք, ինչուան Պիղատոսի և Տրայիանոսի
նմանցընելով զներսէս, մանաւանդ ծառայ կոչե-
լով և կաշառակեր, « և թէ այժմու աթոռդ՝ զոր
« ունիս՝ ոչ միայն Աստուծոյ չէ, այլ և ոչ Մահ-
« մէտի. և թէ կայրդ՝ կուրաց ոչ առաջնորդե... և
« թէ յեօթանասուն և երկու լեզուս՝ չկայ ոք՝
« ոչ արևապաշտ ոչ կռապաշտ քան զՀայոց ազգս՝
« ամենայն չարեօք լի. և թէ գլուխ այս ամենայն
« մեղաց և պատճառ դուս ես, վկայութեամբ երկնի
« և երկրի և Աստուծոյ և հրեշտակաց և մարդկան»:
և այլն:— Այսպիսի բանից դէմ Սուրբն ինչ կայծակ-
ներ թափէ: Յիրաւի, կ'ըսէ, շատ մեղաւոր և ախ-
տաւոր եմ. և թէ կ'ուզես՝ եկ, և ես ինքնին խոս-
տովանիմ քեզ, որպէս զի ոչ կարծիքով՝ այլ ան-
րատպէս գտանես. այլ ինչպէս որ չունեցած բա-
րեաց համար՝ թէ և ամեն լեզուս զիս գովէ՝ ես հովն
ձայն համարիմ, այսպէս ալ թէ որ մէկն զիս նախա-
տէ՝ չունեցած խղճի համար. իսկ թէ մէկն ճըշ-

մարիա ունեցած յանցանքս նախատէ, « ոչ վասն
« ասելոյն՝ այլ վասն ունելոյն վշտանամ »: Բայց
որպէս զի նորանոր գրութեամբ ես հոգոց վրայ
հոգ չաւելցընեմ, և դու ալ չձանձրանաս, երբ
այսպէս զիս անարժան, կոյր և խանգարիչ կը
ճանչնաս, ժողվէ ազգին գլխաւորները և ընտ-
րեցէք նոր և կարող հայրապետ մը, և ես ձեռ-
նագիր կու տամ հրաժարելու և չհակառակելու,
և քեզի ալ շնորհակալ կ'ըլլամ. « Եւ ես երեսաց
« յանքոյթ ինչ տեղւոջ՝ ոտից լուսթեամբ զբե-
« րանս հոգոյ, և զաչս՝ արտասուաց, ի նշխա-
« րեալ կենաց իմոց աւուրս, եթէ գթասցի Տէր »:
Այլ յետ այսպիսի արտասուաչ խօսքի ալ՝ անհրա-
ժեշտ արդարութիւնն կը սպասէ երանելւոյն մատ-
նելը այս դատակնքաւ աւարտելու. « Բայց քոյդ
« երթի բանք պահեսցի մինչ ի յարդար դատաս-
« դութեանն օր. զի որ ի սմա անիրաւ առ իս ի
« քէն դատումն՝ դատեսցի յուղիղ դատաւորէն »:
Եթէ արդարև բնական յիմար ըլլար այդ հակա-
ռակողն՝ հայրապետան իրեք անգամ չէր պատաս-
խաներ իրեն, այլ զի կրնաք յիմարեր էր՝ կը յու-
սար որ կիրքն գոգրելով՝ զգաստանայ. գժբաղ-
դաբար շատ թանձր և յամառ է եղեր կիրքն, և
ուր վերջանալն յայտնի չէ. սակայն յօժարիմ
կարծել երէ այնքան գժոխական կարծրութիւնն
չկարցաւ խափան յայլեալ Շնորհալւոյ կակղու-
թեան, և փափագիմ որ անոր համար ըլլայ Ամէն
բրոնացւոյն ըսածն.

« Որ ըզնամակ իւր ընթերցաւ՝
Իբր ի գիմաց պատկառեցաւ.
Աչս ոտն եկեալ խոնարհեցաւ,
Եւ նա ի ծոց իւր ընկալաւ »:

Քանինեը արդեօք անկեր են Նեսթոի խոնարհ ո-

ակց, և նա փութալով կանգներ և 'ի տաքուկ ծոցն ընդուներ է՝ իբրև հայր սիրալիր՝ զանառակ որդիս: Աւաղ անոնց՝ որ կամ յօժարութիւն կամ ժամանակ չունեցան դիմելու առ ողորմութեան և սիրոյ և խնամատարութեան աղբիւրացեալ հայրապետն:

Այսպէս եղան և երեք քահանայք. մին աշխարհիկ՝ Կարապետ անուն, երկուքն Վանականք՝ Յուսիկ և Գէորգ, որք իրենց պակասութեանց և չարախօսութեանց համար խրատեցան և յանդիմանեցան 'ի Ս. հայրապետէն. այլ անզգալք դարձան, և վերոյիշեալ անզգային նման՝ Թողուցին իրենց տեղը, ինքնահալած գնացին յՈւռհա, և սկսան ուրիշներուն հետ բամբասել զՇնորհալին ալ, սիմոնական և կաշառառու կոչելով. գուցէ իրենք ալ բարձրագոյն աստիճանաց փափագ ունէին, և իրենց անարժանութեանն համար մեծ ժուռելով՝ այս զրպարտութիւնը հնարեցին. և որպէս զի Ուռհայի օտարազգի քրիստոնէից հաճոյ երևան՝ յայտնապէս Թողուցին Հայոց ծէսը և ընդունեցան Յունաց կամ Լատինացը. յառաջ քան Մանուէլի և Ներսիսի միաբանութիւնը՝ անոր միաբանութենէն զատուելով, և իրենց հետ 400 տուն միաբանելով յՈւռհա: Շնորհալին որ տեսեակ էր անոնց անարժան վարուց և խաբէութեան՝ գրով խնացուց Ուռհայի քաղաքապետին՝ Ձեմարտութիւնը. նա ալ իբրև խաբեբաներ հալածեց զանոնք քաղքէն. բայց անոնք Նուբէտաինի ահաւոր պաշտպանութեանը դիմելով՝ կըրցան նորէն դառնալ յՈւռհա, իրենց կամապաշտութեամբ յաղթանակելու: Միխայէլ կաթողիկոսն Ասորոց՝ որ և է դիտաւորութեամբ՝ ուզեց հաշտեցընել զանոնք իրենց հայրապետին հետ, և իր կոզմանէ նուիրակ մ'ալ դնելով հետերնին խաբեց առնալ այլոյն միջոցին Ս. Ներսէս վախճանած էր. չկար

ցան արժանանալ իր օրհնութեանը: Յուսիկ եա-
քը քաշուեցաւ յԱնտիոք, և իր մոլի նախանձը
աւելի յառաջ տանելով՝ նորէն մկրտեցաւ ՚ի Յու-
նաց, և եղաւ հօն արգելական ճգնաւոր մը, այլ լե-
զուն անարգել պահելով՝ սկսաւ Անտիոքացիներն
ալ երկբայեցընել Հայոց դաւանութեան և ձեռ-
նադրութեան վրայօք. և հարկ եղաւ որ Շնորհա-
լոյ անուանակիր և հոդեկիրն Ն. Լամբրոնացի՝ իր
պապան հոգւով հեզութեամբ և խոհեմութեամբ
երկար թուղթ մը գրէ անոր, հերքելով զսպար-
տութիւնները և պաշտպանելով զՀայս:

Որչափ սիգագալի և գարշելի էր այսպիսի ան-
ձանց չարախօսութիւնն և աւելութիւնն՝ մանա-
ւանդ այնքան հեզահոգի և արբանեակաւոր անձին
դէմ, այնքան և աւոր համար պանծալի է վան
կաւտարեալ նմանող ըլլալու ամենաճշմարիտ վար-
գապետին և առաքեցողին մերոյ Քրիստոսի: Այո,
արժանի էր Ներսէս, որ իր նախօրինակին և
վրկչին ամեն երանութեանց ակրող և գործով կա-
տարող եղաւ, ըլլայ և հալածեալ վան արդա-
րութեան, և նախատեալ և բամբասեալ. ինչպէս
որ շատ աւելի առաջ փափագանօք ինն և հաւատ-
քով կը սպասէր և կը գրէր գեղեցկապէս. « Ծա-
« ղիկ արքայութեանն պտղոյ՝ նեղութիւնն է. եթէ
« կամիմք զպատուն կրել, նախ զծաղիկն հաւա-
« քեսցուք. հալածեալք եղիցուք աստ, զի հաստա-
« նիցեմք վերին կոչմանն: Բայց մի ոք զերանու-
« թիւնս՝ որք վասն հաւատոցն հալածին՝ միայն
« ասիցէ. զի Թէպէտ և կատարեալն նոցա է՝ ա-
« կայն և ՚ի մասին երանութեան են՝ որք վասն հո-
« գւոյ բանի խրատու՝ ըստ օրինաց, որպէս Յով-
« հաննէս, և կամ՝ վասն այլ ինչ արդար գործոց
« զպարսին և գոհութեամբ առնին, երանելի
« լինին:... Չի քան զչարչարանսն՝ և զժնդակ
« տագնապն բամբասանքն. զի բազումք յառա-

« քինեաց՝ նեղուԹեանց տանին, բայց 'ի նախա-
« տինս՝ անհամբեր գտանին »: Որքան գԺուարին՝
այնքան և բարձրագոյն և ծայր առաքինուԹեան,
և կատարելագոյն սրբոց գործ. անոնց՝ որք իբրև
զՆերսէս առաջին երանուԹեանց ալարգիւնքն ու-
նէին, և իր ըսածին պէս հաւատարմուԹեամբ կա-
տարէին Քրիստոսի ցուցածները, « իբրև զարս
« ոսկեզէն տողեալ զպատուական. զի յորժամ
« խոնարհ ոք իցէ՝ նա և 'ի սուգ է վասն մեղաց. և
« որ Սգաւոր է՝ նաև հեզ է. և հեզն՝ արդար և
« ողորմած է, և արդարն և սուրբն՝ խաղաղարար.
« և խաղաղարարն՝ 'ի հալածանս ոչ հակառակի.
« և համբերողն 'ի հալածանն ոչ խռովի՝ յորժամ
« լսէ բամբասանաց »:

Այսպէս զարմանալի լինի բնուԹիւն է Ներսիսի
նմանեաց. իրենք ուրիշներու հետ վարուելու ա-
տեն՝ Յակովբայ սիրտն և ձայնն ունենալը բաւա-
կան չեն համարիր, ձեռուընին Եսաւայ ձեռք կար-
ծելով բամբակէ ձեռնոցներով կ'ուզեն պատչել. իսկ
ուրիշներէ եկած խիստ և կարծր խօսից և գործոց
նետերու դէմ՝ իբրև բոլորովին փափկուԹիւննին
կորուսած՝ ժայռի պէս անխոց և անայլայլակ կու-
նան: Շնորհալւոյ հանդիպած դէպքերն, և այն
փափուկ և անյիշաչար խօսքերը վկայ ունենալով
հաւատարակաց վկայուԹեան վրայ, բնաւ տարա-
կոյս չի մնար գերազանց փաղչուելնին վրայ, որ իր
սեփական շնորհաց մէկն էր, և իբրև կնիք և օծուածն
մնացեալ ամեն գրուածոց մէջ ալ ծաւալած է. ո-
րոյ եթէ հաւատանք են այն ժպիրն զրպարտողաց
գրածին դէմ գրածներն, որքան և առ սիրելի
բարեկամն սիրալիր գրուածքն. յորոց իմանամք՝
որ այն աստուածախոհ միաքն՝ որ իբրև մուա-
ցեալ զերկիր՝ միշտ յերկինս Թևատարէր, երբոր
ընկերասիրուԹեան հրաւէր կալ՝ իբրև փայլակն
յերկինէ իջեալ՝ անոնց կը մօտենար, և իբրու Թէ

միշտ անապատուց մէջ ապրած ըլլար՝ այնքան մար-
գամօտի ընտանութեամբ և գորովաբանութեամբ
գրեր, ինչպէս տեսանք զԹուղթան և զքերդածս
առ Ապիրատն, առ Մխիթար Հերացի, առ վար-
դապետան Վարդան և Սահմանոս. որոց նման և
աւելի սիրական են երեք Թուղթք ալ առ Գէորգ
վարդապետ ոմն (Թուխ Հայքաառեցին), որք որ-
չափ կարճ ըստ չափու, այնչափ ալ իբրև գոհար
ակունք Թանկ են սիրով և անուշութեամբ: Տես,
ինչ փափկութեամբ և գորովով կը գրէ առ բա-
րեկամն. « Զինչ այն ինչ որ ընդմիջէ ոգւոյ և մը-
« տաց, ըստ որում իմ և քո հաղորդութիւն գթոյ
« ոգեպէս: Որում բաղձամ տեսութեան՝ իբրև
« ի մեռելութենէ յարուցեալոյ սիրելւոյ, եթէ ըստ
« դիպող ժամու լցցի՝ ըստ գրեցեալս ի քէն խոստ-
« մանն »: Ուրիշ նամակաւ մ'ալ կ'խոցընէ անոր
ծածկաբանութեամբ՝ որ սիրան վիրաւորած է ո-
մանց նետաբանութեամբ, և խնդրէ միխիթարու-
թիւն բարեկամին Թղթովը, « ոչ երկայն բանիւ,
« այլ սղագունիւք ըստ այսր չափոյ ». որ է իրեն
Թուղթն իբրև տան տող: Արդարև ջերմ և սիրտ
բարեկամ. որ բարեկամին տող մը գիրն ալ կը հա-
մարի բաւական դեղ սրտի, « ի բուժումն անցե-
« լումն և ի դադարումն ներկային »:

Յորմէ գուշակուի ալ Թէ իր գրածներն որքան
ախորժ և անոյշ, պաշտելի և պահելի էին սիրե-
լեաց և բարեկամաց և հանգիպողաց. որք ուր ալ
որ իր Թուղթերը կարդային, կ'ըսեն պատմիչք,
իբրև աստուածային պատգամ կ'ընդունէին պատ-
կառանօք և սիրով: Ինքն եթէ իր սրտին բուն
բերմանը ուզէր հեռևիլ՝ միայն ընդ Աստուծոյ կը
խօսէր, անոր համար և անպատճառ բան մը չէր
գրեր, այլ կամ՝ ի հարկէ պաշտամանն, և կամ
՝ի սիրոյ և՝ի խնդրոյ փափագողաց. և այն առեն
« առանց ձանձրանալոյ յօժարութեամբ և աս-

« առաջ այնի սիրով տայր հարցողացն պատաս-
« խանին՝ բանիւ և գրով. զԺողովրդահաւաս և
« զաղաքսանական իրն՝ հեշտալիս և քաղցրա-
« գոյնս մեկնէր, և մոռնանէր յիմանալի ոգիս և՛ ի
« միաս ինդրողացն... և ուրախ առնէր զամենե-
« սեան առ հասարակ ըստ իւրաքանչիւր պիտոյից,
« և՛ հոգեծնեալ և՛ ի մշտաբուղխ շնորհաց աղ-
« բերէն »:

Եթէ բնութեամբ ալ դիւրազգած, գոլովական և քաղցրաբարոյ էր Շնորհալին, իր հեզութիւնն և քաղցրութիւնն չէր բնական բերումն՝ այլ առաքինացեալ և առաքինի. և ինչպէս աքանչելի չափաւորութեամբ կըրցաւ սանձել զցասմնականը, և յանդիմանութեան առեն ալ՝ ծանր և անարգ բան մը չըսել, կշռամբել այլոց բարկանալ, և իր հանդարտախայր դէմքը չխռովել գԺգմնելով և կնճռելով, այսպէս ալ քաղցրութիւնը՝ չփոխեց երբեք՛ և զգայախառն խանդաղատանաւ և՛ ի գորով թոյլ: Գործ մը՝ որ թերևս աւելի բարձր ու բարակ է և քան զմովսիսանական հեզութիւնը. այնքան հաւատար բռնած էր կրից և զգացմանց կշեռքը՝ մինչև իրից խմաստասիրական և գլխաւոր ըստաձ առաքինութեանց ճշդիւթ օրինակ մը կըլնար ընծայուիլ: Եւ ինչպէս գԺարելու և բարկանալու առթից մէջ՝ Լ՛յս կ՛անուանէր յանդիմանելն ան-ձը, այսպէս և՛ ի փաղաքշելն և գորովելն առնեա՝ նոյնպէս միայն Լ՛յս կ՛անուանէր զգթութեան և սիրելին: Ա՛յսպիսի գեղեցիկ բանի մը (լուսոյ) կոչումամբ, և ալ աւելի գեղեցիկ մտածութեամբ և անակնկալ հոգւովը՝ նմանելով երկնաւոր Հօրը, ըստ համարձակութեան տալոյ Քրիստոսի, « զի « զարեգակն իւր ծագէ՛ ի վերայ չարաց և բա-« րեաց »: Ա՛ստուած Լ՛յս է, ըստ աստուածաբան Աւետարանչին, և հայր Լ՛ուսոյ, և ինքն Քրիստոս Լ՛յս՛ ի լուսոյ. լոյս՝ և իրենց էական և մշտնջենա-

ւոր Բղխուին. լոյս են և ամենայն արտաքին բղխումունք և կամքն Աստուծոյ. — ապա ուրեմն շատ աստուածամերձ և աստուածունակ անձն է եղեր այն, որ է ըսել և շատ հոգելոյս, որ զամենայն ոք լոյս կ'անուաներ, թէ և գիտեր զտարբերուԹիւն բարուցն: Իսրագէտ պատմիչն լաւ կ'անդրադարձընէ այս իրաւի աննման զգուշուԹիւնը. « Ունէր « և այլ հրաշալի շնորհ առաքինուԹեան. զի յորմէ « հետէ 'ի զգայուԹիւն եհաս՝ ոչ ուներ 'ի մանկանց զանկատար ձայնեաց զանուն, զոր ամեն « նայն ազգ մարդկան սովորաբար ունին. և ոչ ուներ « մեք մականուն ասաց ». այսինքն ոչ ազայոց նըւազական և աղուական բառերով և մանկիկներով, և ոչ մեծաց՝ ըստ բարուց և գործոց նոցա՝ անուններ և նմանուԹիւններ յարմարցուց. Թէ և չէր կըրնար չգալ այնպիսի անվնաս և բնական լիմն բերմունք, սակայն և այն բարակ ճամբուն մէջ ալ կըրցաւ զինքը բռնել, այնքան մեծ արիուԹեամբ, առաքինուԹեամբ և շնորհքով՝ զանաց և ախրացաւ սրտին ամենայն չարժմանց:

Այս անձնուրացաբար անձին ախրանալն, և իբրև իրմէ դուրս՝ զինքը շարժել և ուղղելն՝ որպէս կառավար մը զկառս և զերիվարս, և բարեխառնուԹեան կամ արդարուԹեան կշիռն անվրէպ բռնելն, Ներսիսի գերագոյն շնորհքն է. որով և աննման անձ մը, սուրբ մը, վեհ մը պէտք է ճանչցուի: Ի զանազան մասունս և գործս առաքինուԹեանց և սրբուԹեան՝ շատ աքանչելի օրինակներ տուած են շատք, այլ յայսպիսիս և այսչափ՝ կարծեմք խիստ քիչ տեսնուած են. շատք ջանացեր և սահմաններ են իրենց բնուԹեան և սրտի անկարգ կրքերը. Ներսէս և սակաւ նմանիքն՝ կարգաւոր կրքերն անգամ սահմաններ են. ինչուան երկնային սիրոյ ԹևերՀն անգամ ամփոփեր են մարդկան աչքէ, իրենց խոր և մեծ սրտին մէջ եռացը-

նելով այն հրային խղճերը՝ զոր շատ ուրիք ան-
զուսպ և անարգել Թողած են զեղուլ, պէտպէս
փղձկալի և զգալի ջերմեռանդական արտադրու-
Թեամբք և հառաչանօք: Ա՛յո, զանունք ալ կը շար-
ժէր առաուածային սիրոյ բռնուԹիւնն, այլ ա-
սոնք Թէ շարժուէին՝ի սիրոյն և Թէ շարժէին զայն-
պիսի ահաւոր և մեծ սէր՝ աւելի շիտակ բարձրա-
նալու համար էր իր երկնաւոր Ճամբուն:

Նոյն անձն սիրական և արդարակշիռ ոգին էր
որ հանդերձ ամենայն խոնարհուԹեամբ և հեզու-
Թեամբը՝ կը փայլեցընէր՝ի Ներսէս իր աստիճա-
նին համապատշաճ վեհմուԹիւն և արժանապա-
տուԹիւն. և որչափ ալ յատենաբանուԹեանն
յաւուր ձեռնադրուԹեանն՝ի կաԹողիկոսուԹիւն,
և իր Թէ Ընդհանրական Թէ առանձնական Թըղ-
Թոց մէջ ինքզինքը կը չանայ նուաստացընել խո-
նարհուԹեամբ և մեղադրուԹեամբ, ոչ երբեք կը
նուազեցընէ իր հայրապետական գահուն փառքը,
և մանաւանդ աԹոռակալը: Նոյն իսկ Թէոդիանէի
ազատագիր նկարագրուԹեան մէջ՝ յորում կեր-
պով մը յաղԹաբան կ՚ուզէ երևիլ սա, և յիշէ Հայ
էպիսկոպոսաց գժարիլը՝ կաԹողիկոսին առանձնա-
գիր ԹղԹոց համար, կը ցոլայ դարձեալ սաղ ար-
ժանապատիւ վեհմուԹիւնն, երբ մէկ ձեռաց նչա-
նով մը չփոԹեալները կը հանդարտեցընէ և ժողո-
վը կ՚արձկէ, ցուներց աւելորդ կամ առենէ դուրս
պահանջմունքները կը լռեցընէ, և սրբազան աջոյն
օրհնուԹեան տակ զամենքը կը խոնարհեցընէ:

Ահա այսպիսի և սոսկ նման լաւուԹեամբք և
սրբուԹեամբք զարդարուած և տոգորուած կա-
Թողիկոսն մեր Ներսէս Դ՝ ընդունեցաւ այն հրա-
շափառ Շնորհաւ կոչումը, որով պատճառը կը
փնտռէինք մեր պատմուԹեան սկիզբը, և զոր հի-
մայ վերջացընել հարկաւորինք, ցաւելով որ չկար-
ցանք ոչ աւելի յիշատակներ գտնել իր վարուց և
գործոց, և ոչ արժանապէս բացատրել գոռածնիս:

# ԻԹ.

## Մահ Շնորհալւոյ. — Գնորհազան. — Հաւքառա-

Ներսիսի Շնորհալւոյ կեանքն կընայ ըսուիլ միօրինակ շարք մը պատուական գործոց, միանգամայն և անընդհատ աշխատութեանց. իր խանձարուրքն ու գերեզմանն ալ իբրև անպակաս միայնութեան գործարանաց մէջ դրուած. և ինքն անխոնջ արուեստաւոր եկեղեցւոյ և գպրութեանց, պաշտօնեայ Աստուծոյ և գաստիարակ ազգի Հայոց, օգնական և բարերար մարդկութեան. որոց ամենուն ալ շատ գեղեցիկ վաստակներ ընծայեց, և ամենէն գեղեցիկ ու թանկ վարք մը, լի և զեղուն բարեօք, հաճոյ երկնից և երկրի. որոց երկուքին համար ալ վաղուց հասուն և սիրուն էր: Այսպիսի անձանց համար՝ որք սովորականէ շատ վեր կեանք մը կ'անցընեն, եթէ պակաս բան մը կայ՝ կրնանք ըսել, կենաց շրջանին ալ անսովոր չըլլալն, այլ ամեն ազամորդւոց նման վախճան ունենալն է: Հարկ է մեզի արտերնուս փուփագը կամ պահանջմունքը խոնարհեցընել ամենահնամառ տեսչութեան վճռոյն, որ է աեր կենաց և մահու. և իր յաւիտենական գեղեցկութեան ճառագայթները՝ այսպիսի ընտիր հոգւոց վրայ փայլակի մը պէս ցոլացընելով՝ ի զմայլումն և ի վայելս աշխարհի՝ գարձեալ կ'ամփոփէ իր աննուազ լուսոյն վառարանին մէջ: Դեռ բաղդաւոր պէտք է համարինք զմեզ և մեր ազգը՝ որուն համար 71 տարի երկարեցաւ կեանք մը, որ այնպիսի անձին մար-

ինոյն փափկութեան, աչխատանաց, ձգանց, հո-
գոց, տքնութեանց և հիւանդութեանց համար՝
կըրնար բնապէս աւելի կարճ ալ ըլլալ. կամ իր
անդադար սովորութեամբ ժուժկալութիւնն, աշ-
խատութիւնն և հեզութիւնն էր՝ որ այնքան դի-
մացուց զայն, կամ մանաւանդ շնորհք մ'ալ էր:

Յիշեցինք իր երբեմն հիւանդանալը և տկարու-
թիւնը, և ալեւորութիւնն՝ իր եղբօրը կենդանու-
թեանն առենէն, զոր և ինքն Ներսէս իր զանա-
զան գրուածոց մէջ յիշէ. նոյնպէս և իր Թուման
Լամբրոնացւոյ վկայութիւնն կ'իմացընէ որ զատ՝ի
պարբերական ջերմէն՝ ունէր տկարութիւն մը,
գուցէ այն ալ ոտքէն պատճառեալ, որ հասակին
ծերութեամբ աւելի զօրացաւ, և շատ տարիներ
կամաւ աչխատած և յոգնած մարմինը՝ աւելի յոգ-
նեցուց և տառապեցուց. իսկ

« Նա գոհութեամբ զայս ընկալեալ,
Զոր պատուական իւր համարեալ,
Փրկչին հալոյդ վշտաք եղեալ »:

Տկարութիւնք, աչխատանք, հոգք և վիշտք՝ սո-
վորական և անսովոր կերպով ալ շատցան և ծան-
րացան պատուական կենաց վերջի տարին. Թուխ
Թէ և եռքի ձմեռն եղաւ այն սաստիկ ձմեռն՝ յո-
րում այն տաք կողմերն անգամ շատ կանգուն
ձիւնն դիզացաւ. իսկ անոր վերջերը և՝ի սկիզբն
գարնան 1173 տարւոյ եղաւ Փէորիանեայ երկրորդ
գալուստն, վիճաբանութիւնն, գաղտ նամակա-
գրութեան յայտնութիւն՝ որոյ համար ինն օր հի-
անդացաւ փափկասիրտ հեղինակն. յետ այնր
հանգիպեցան Յուսիկեանց դէպքն և Թերևս միւս
ժպիրհ անձին կծու գրուածքն. հետուէն ալ
Մլեհի անօրէնութիւնք, և Թերևս անոր չարաձը-
ձիկ խորամանկութեամբ՝ եղբօրորդւոյն Ռուբէն

մանկան մահն ի Հռոմկլայ. աշխատութիւնք պատրաստութեան ազգային ընդհանուր ժողովոյ՝ Յուշոց միաբանութեան խնդրոյն համար, և գուցէ անոր համար ոմանց եպիսկոպոսաց և վանահարց տարաձայնութեան կասկած: Ահա ամեն բաներն, կամ ոմանք ասոնցմէ՝ արդէն մաշած մարմնոյն կազմուածքը աւելի ցնցեցին. յառաջ քան զայլս զգայ ինքն Շնորհալին, որ ալ ժամանակ է կատարեալ շնորհաց ծովը թափուելու. և իր ծածուկ փափագը՝ ընդ Աստաքեայն՝ ելանելոյ ի մարմնոյն և մտանելոյ առ Աստուած՝ չկարցաւ ծածկել. սիրան չսպասելով ալ օրհասին՝ արդէն իբրև մարմնոյ և աշխարհի բեռը թօթափած՝ կը ձիտար, և կ'ուրախանար քիչ առենէն հասնելու այն կեանին՝ որոյ համար քիչ մարդ իրեն պէս կանուխ սկսեր էր հոգալ և բաղձալ:

« Հոգին սիրոյ հուրըն վառեալ,
Շուրջանակի արտափայլեալ.
Որոյ մարմին ոչ հանդուրժեալ,
Յանորակէն նիւթըն կիզեալ »:

Ի վերայ այսր ամենայնի գրեթէ ինչուան վերջի օրերն ալ իր սովորական ճգնութիւնը, աքնութիւնը և աշխատանքը չդադրեցուց, թողլով որ բնութիւնն ինքնին պահանջէ իր հարկը:

Հասաւ ամառն, իրեն համար գժնդակ եղանակն. հասաւ իր սովորական այցելու առենդն ալ, զոր ամենայն հարտարութեամբ և գիտութեամբ ալ չկարցան բժշկել իր աստեղագէտ և բնագէտ բարեկամ բժշկապետն Մխիթար կամ նմանիք. գործարանաց մշտաշարժ ժիրաժիր անիւներն երկար առեն գայթ ի գայթ և անգործ չկեցան, այլ աշխատելէ գադրելնուն և խափան գադրելնուն մէջ՝ քիչ օր անցաւ. ջերմին ատատկութիւնն

որ ներսէն կը մաշէր զմեքենային՝ դրսէն դեռ աշխոյժ և փայլմունք մը կու տար, որ հոգւոյն եռանդեան փայլմանը հետ խառնուելով՝ կը խաբէր զաչառուս, և դեռ փափագելի յոյսեր կու տար. մինչ օրհան արդէն՝ ի դուռն հասեր էր, և շուտով վճարեց իր գործը:

Շնորհալի իր վերջին աւանդները և փափագները աւետին յայտներ էր. որոց մէջ կ'լսուի թէ և իւրեն յաջորդ իր մեծ եղբօր որդին Գրիգոր Տղայն ցուցեր էր. որ իր վերջին ժամերուն հօն չգտաւեցաւ, այլ Գրիգոր Ապիրատն, հաւանօրէն և Լամբրոնացին և այլ շատ եկեղեցականք, և բոլոր Հռոմկլայի պահապանք և ազատաւորք հայրապետանոցին. որոց ամենեցուն իր հրաժարականը և օրհնութիւնը տալէն ետև, հեռաւորներն ալ յիշեց, և բոլոր ազգն ու աշխարհն ալ օրհնեց[1]: Յետոյ հանգարտ դիմօք և խղճիւ խոստովանելով՝ որ միշտ չանացեր էր Աստուծոյ կամաց հաճոյն կատարել, որով և յուսար անոր խոստացեալ բարիքն ընդունիլ, արժանի իր կենացն և կոչման՝ շնորհօք աւանդեց իր Սահղծոլին՝ բազմապատկեալ քանքարով աղնուացեալ հոգին. յետ եօթն տարի և երեք ամիս և կէս Հայոց հայրապետութեան, ի սկիզբն նախընթաց ութօրեկից ամսի Վերափոխման Տիրամօրն, յուլի օգոստոսի [2], հինգշաբթի օր

1 «Նաեւ զաշխարհս յայնժամ օրհնեալ
Աւգս նահապետըս մեծարեալ.
Զխաղաղութիւն վերջին տըւեալ
Որդւոցն, յորոց վերասլացեալ»:

2 Լամբրոնացին իր ոտանաւոր ներբողին մէջ և ուրիշ ոմանք օգոստոսի 3ին կ'ըսեն զմահ Շնորհալւոյ. տարր վարքը գրողն, Միաբանութեան թղթոց պատճառն, Հեթում պատմիչ յ' 13 օգոստ. Միխայէլ տարի և հին Յայսմաւուրք՝ յ' 8 օգոստ. և այս է տոյգն. վասն զի ամենքն ալ կը միաբանին հինգշաբթի օր ըսելով մահը, և միայն օգոստոսի ութին կը հանդիպի հինգշաբթին՝ այն տարին, 1173:

մը, յամին 1173, իբրև 71 տարի երկրիս վրայ պանդխտեալով, գրեթէ հաւասար իր աթոռակից եղբօրը [1]:

Որ ասիձան մեծ կսկիծ ունեցան իր ականատես և ձեռնասուն և իրաճանաչ մերձաւորքն, կամ ինչ ձայն գուժի հնչեց այնպիսի անձէ զըրկմանն համար, կըրնանք գուշակել անոր արձագանգէն՝ որ հնչեց յաբքունիս Կոստանդինուպոլսի՝ երբ հասաւ հոն համբաւն, և ախրեցուց զամենքն՝ որ պարզ սրտիւ փափագէին Հայոց եկեղեցւոյն միաբանութեան. և ոչ է մակամտածութիւն մը Մանուէլ կայսեր հառաչանօք ըսելն, թէ « Մեծ « զգայարան և արիւն բարձաւ այսօր յեկեղե« ցւոյ Աստուծոյ. զրկեցան Հայաստանեայք յեր« կրորդ Լուսաւորչէն իւրեանց: Ո՛վ երանելի « հայրապետ, զինքդ զնմին փափագ անկատար « թողեալ՝ ժամանեցեր առ Քրիստոս. սակայն « մեք զարժանի յիշատակի անուն քո ընդ առա« ջին արբոյն գասակարգեմք, ուսեալմբեալով ու« րախութեամբ 'ի Քրիստոս: Եւ պատուէր հրա« մանի եւս 'ի Թագաւորական քաղաքին եկեղե« ցիան՝ յիշատակել զնա ընդ առաջին սուրբսն ու« նախմբութեամբ »:

Ոչ յեանեցան և հարապատ որդիք անհամեմատ հօրն՝ պատշաճ պատիւն և պաշտօն ընծայելու, թէ իր հոգւոյն և թէ պատմագրին գեղեցիկ աղաւթութեամբ կոչած՝ հոգիացեալ Մարհոյն: Գրիգոր Ապիրատ՝ որ հօրեղբօրը վախճանելէն անմիջա-

1 Գրիգորիս ծնած էր հաւանօրէն յամի 1095, և մեռաւ 'ի 1166, յուլիս կամ օգոստոս ամսուն. այս ամառնային ամսոյս մէջ վախճանեցան Շնորհալին ալ, Մեծ Վկայաբերն ալ, Ս. Բեռնարդոս ալ, ինչպէս և միւս երկոքին Ս. Ներսէսք ալ՝ Պարթևն և Լամբրոնացին, յուլիս ամսոյ մէջ. Գրիգոր Տղայ և Բարսեղ ալ ըստ ոմանց այս ամսոյս մէջ վախճանած են: Իբր թէ ամենքն ալ երկրիս նեղացուցիչ ոտիէն զզուած՝ երկնից հովանոցը տեղափոխեցին:

ակս եաքը՝ ներկայ գտուողներէն Տեղապահ ա-
նուանեցաւ, և յոմանց նաև կաթողիկոս, առաջին
պաշտօնը կատարել տուաւ, որ էր այն պարկեշտ
եղիարաց զմռսեն և զարդարելն. շուտով հասաւ
և Գրիգոր Տղայ, ձամբուն վրայ նախ աշխարհօ-
րէն ընդունելով յաջորդութեան տպահովութիւ-
նը, միաձորդութեամբ իր փեսային՝ [1] Մլեհի՝ առ
Նուրէտանին [2], կամ յաջորդ նորա, որ ինքնին ձամ-
բու վրայ գանուելով ողջունեց զԳրիգոր իբրև կա-
թողիկոս Հայոց, հիանալով անոր ահեղապեղ կեր-
պարանաց, հասակին և վարման վրայ: Արդ սա
կատարեց յուղարկաւորութեան հանդէսը՝ բազ-
մութեամբ եպիսկոպոսաց, վարդապետաց, վա-
նականաց և անթիւ ժողովրդեան, և պատուաւոր
տեղ մը հանգուց, ինչուան որ աւելի պատուա-
ւոր դիրք մը պատրաստէ: Ձսա և զինքն յիշելով
Լամբրոնացին՝ իբրև ընդ հանգուցեալն խօսելով՝
այսպէս նկարագրէ Թաղման պաշտօնը.

« Գլուխս [3] յաթոռըն քո նըման,
Որդիս՝ Ժառանգ հօրըդ փոխան,
Առեալ զանդամքըս միաբան՝
Կայ առաջի քո ողբական.
Եւ բեմականքըս պաշտաման
Կարգեալք՝ ի կարգ և յաստիճան՝
Հանդիսանամք յօր քո նընջման.

1 Գրիգոր Վկայասիրին և Թոռնկայ խնամութեանը
պէս՝ Գրիգոր Տղայ և Մլեհի խնամութեան կապն ալ
ծանօթ չէ. կըրնայ կարծուիլ թէ Գրիգոր Տղայ ալ առաջ
ամուսնացեալ ըլլայ և դուստրը տուած Մլեհի. թէ ոչ՝ սա
քեռայր է Գրիգորի Տղայոյ:

2 Ոմանք մեր պատմութեան մէջ ծանօթ եղած Նու-
բէտանին մահը՝ կանխած կ'ըսեն քան զՍ. Ներսիսի, նոյն
տարուըն մայիս ամսոյն մէջ, բայց աւելի հաւանութեամբ
այլք՝ յաջորդ տարին, 1174:

3 Հայոց եկեղեցւոյ գլուխն, որ եղաւ Գրիգոր Տղայ:

Տօն կատարեմք ուրախութեան,
Պատուեմք ըզսուրբ այս դամբարան,
Փառաւորեալ երկնանըման:
Ասեղքըս քեզ կարգեալ չըլլան՝
Զայս բորբոքեալ ջահըս որ շողան,
Ամէն 'ի ձեռս առեալ բուրման՝
Քեզ խնկարկեն ամենեքեան.
Առեալ ակուամբ զերգս օրհնութեան՝
Նոր յեղանակ փոխեն հնչման
Տեառըն մերոյ սրբոյ դարման,
Տաճար աթոռ և օթարան,
Եկեղեցւոյ մեծ զգայարան,
Երեսք արթուն աննիրհական.
Ձըրագ դըպրին դու գործարան,
Ճոռոմ լեզու եւ ճարտասան.
Սըփռեալ շընորհք ընդհանրական,
Որով օրհնի միշտ յաւիտեան »:

Այս խօսքերէն գուշակուի՝ որ Գրիգոր Տղայ պըտի ողբերգական պարահանդիսին՝ առթին պատշաճ դամբանական ճառ մ'ալ արտասանած է, և չատերն ալ պատուած պիտի ըլլան իրենց նոր Լուսաւորչին յիշատակը՝ պետպէս նեղբողքնք և գովասացութեամբ. յորոց միայն Լամբրոնացւոյ քերդողական գովեստն կամ պատմութիւնն մեզի հասեր է. ասկէ՝ և Միսաքանութեան Թլթոյ Պատճառէն և ուրիշ աղբիւրներէ առնըլով՝ յետ 67 կամ 77 տարու մահուան Շնորհալւոյ՝ վարդապետ մը (որ անունը ծածկած է) 'ի խնդրոյ Յովհաննէս վարդապետի մը, Ա. Հեթմոյ Թագաւորութեան առեն վայելուչ ոճով համառօտ պատմութիւն մը յօրիներ է վարուց Երանելւոյն, սկսանելով Գրիգոր Մագիստրոսի յիշատակէն. և սա

է մեր շատ հեղ յիշած Պատմիչն [1]: Յաջորդն Ներսէս Երջնորհալոյ՝ իր աւագ եղբօր որդին Գրիգոր Տղայ, որ և յատկապէս Պահլաւունի մականուանի, զոր ժամանակակիցք և հեռաւորք շատ գովեն՝ թէ գիտութեանն և թէ վեհափայլ կերպարուն համալ. և որոյ ճնացեալ գրուածքն ալ վկայեն իր կորովի բնութեան և խօսուածքին, ինչպէս յամենայնի իշխանակերպ և ձոխ էր, այսպէս և աւելի ինն մեծութեամբ և սիրով ուզեց մեծարել իր աքանչելի հօրեղբարց յիշատակը, որոց երկուքին ալ հաւատարմ ձեռնադրութեամբ քահանայ և եպիսկոպոս օծուած էր. անոնց հետ՝ մեծ պապուն՝ Գրիգորի Վկայասիրի՝ յիշատակն ալ միացուց. բերել տալով մարմինը՝ ի Ծովք գղեկէն, և երեքին ալ հանդիսապէս տեղաւորելով՝ ի հիման նորագիծ յատակի, և վրան կանգնելով մեծապայծառ եկեղեցիմը՝ ի Հռոմկլայ, յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին. Ս. Ներսէսի դամբանին վրայ ալ շարեց այն ատեղանման ջահերը՝ զոր յիշեց Համբրոնացին:

Յետ առման և աւերման Հռոմկլայի յԵգիպատացւոց (1292), կամ թէ և յառաջագոյն իսկ՝ առանձին եկեղեցի մ՚ալ շինուեցաւ այն քարանձաւին գագաթը՝ ուր ոօթահար սատրակի նման քաղցրիկ մնչմամբ 22 տարի կը գանգատէր Ներսէսին, և անոր ներքև ամփոփեցան իր մաքուր մարմնոյն նշխարքն. թէպէտ և եկեղեցին՝ այլակրօնից բռնութեամբ անչքացաւ և ամայացաւ, այլ մինչև ցարդ մաքրասնակ գերեզմանին խորհուրդ մեծ ուխտատեղի պատուի յազգայնոց և յայլազգեաց, նաև ի մահմետականաց. և այնքան հռչակեալ է Սուրբն այն կողմերը՝ ուր զգալապէս ինն իր շնորհաց ձառագայթները սփռեր էր, մինչև այլակրօնք անգամ յանուն նորա կ՚երդնուն:

1 Տպագրեցաւ ի կարգի Սոփերաց, Հատ. ԺԴ, 1854:

Այլ համբաւ և հռչակ Շնորհալւոյն՝ հրաշալեր տաճարէն աւելի շուտ կանգնեցաւ և աւելի անաղարտ մնաց. և գուցէ Գրիգոր Լուսաւորչէն եւս չէ եղած մէկն մեր ազգին մէջ՝ որ այնպէս սրբութեան համբաւով պատուի՝ դեռ կենդանութեանն իսկ ատեն, և այն ինչ վախճանած, և յետոյ՝ գարուց 'ի գար: Լսեցինք ժամանակակցաց՝ Մանուէլի և Միխայէլի՝ զարմացքն և վկայութիւնքը, Լամբրոնացւոյ և Գրիգորեանց գովեստն և սուգը. անոնցմէ սկսեալ ամեն յետագայ ժամանակագիրք և պատմիչք՝ պէսպէս բառերով և խօսքերով՝ այլ նման խմաստներով՝ մեծարեն զնա, քան զայլ ամենայն հայրապետս՝ հեռաւորս և մերձաւորս ժամանակաւ. և կան ժամանակագրութիւնք կամ տարեգրութիւնք համառօտք՝ յորս միայն Շնորհալւոյ վախճանն յիշուի՝ իբրև մեծանշան դէպք մը: Կաթողիկոսաց Գաւազանագիրք ալ՝ երբ ասոր կարգն գայ՝ չեն կրնար առանց գովական և սրբական մակդրի մը անցնիլ. և հասարակօրէն միաբան կոչեն զսա՝ Ի Լուսաւորիչ, Տիեզերալոյս, կամ փիլիսիրական վարդապետ. և ըստ վարուցն սրբութեան՝ Համահրեշտակ: Դեռ իր կենդանութեան ատեն գրող յիշատակագիր մը կ'անուանէ զնա Սուրբ, ամբիծ և մեծ արհիեպիսկոպոս, հոգեպոր և խոստոսնէր: Իրեն ականատես և երբեմն կենակից՝ և անոր մահուանէն քիչ վերջը իր ժամանակագրութիւնը կնքողն Սամուէլ Անեցի՝ կը նշանակէ իր մեկենասին՝ Գրիգորիսի մահը ըսելով, « Վախճանի Տէր Գրիգորիս, և յայլորդէ Տէր Ներսէս « սէս »: իսկ ասոր համար կ'ըսէ « Փոխի մահուամբ « 'ի կարգս հրեշտակաց Սուրբն Ներսէս »: — Միաբանութեան Պատմիչն. « Երանելի հայրս 'ի նուա« զեալս ժամանակի՝ յորժամ ձմեռն մեղայ սի« րէր 'ի վերայ աշխարհիս, և մեգ թշուառու« թեան պաշարէր զմեզ՝ սրոյ և գերութեան ե-

« բևեցաւ Քահանայապետութեամբ և
« լուսակրօն վարուք, և փարատեաց յաշխարհէ
« զմրրիկ մեղացն, և վերստին կանաչացոյց զմեզ՝ ի
« ձմեռնային մեռելութենէն՝ յաճումն հոգևոր չափու
« հասակի կատարմանն Քրիստոսի »: — Հիւսի-
սային Վարդապետաքն և եպիսկոպոսունք քանի մը
տարի վերջը առ Գրիգոր Տղայ գրած Թղթերնուն
մէջ կ'ըսեն ինդրոյ մը համար. « Զայս համառօ-
« տիւ յայտնեալ է Սրբոյ Նախնւոյն ձերոյ
« Տեառն Ներսէսի »: — Կիրակոս Պատմիչ որ աւելի
արևելեան Հայոց պատմութիւնը կը գրէր՝ իբրև
դար մը յետ Սրբոյն, միայն ատոր վրայ կը դառ-
նայ յարևմուտս քիչ մը յերկար խօսելու, և կ'ը-
սէ. « Այս Ներսէս առաւելեալ էր իմաստու-
« թեամբ քան զյոլովս ի ժամանակի անդ, ոչ
« միայն քան զՀայոց վարդապետս՝ այլ քան ըզ-
« Յունաց և զԱսորւոց. այնքան՝ մինչ զի համբաւ
« իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն
« ազգս. և իմաստասէր ումն Կոստանդնուպոլսոյ՝
« անուն Թէոդիանէ... եգիտ զնա անփորձ ամե-
« նայնիւ, այլ և առլցեալ Հոգւով սրբով... ասէր.
« Որպէս լուսաք՝ այնպէս և տեսաք. զի նոր ումն
« Գրիգոր Աստուածաբան յարուցեալ է. և զար-
« մացուցանէր զամենեսեան վասն նորա:... Եւ
« այսպէս բարիւք կարգաւորութեամբ փոխեցաւ
« առ Քրիստոս՝ յոյն ամենեցուն, ցանկալի և ե-
« րանելի մահուամբ »: — Յովհաննէս Երզնկացի՝
որ շարունակեց Շնորհալւոյ Մատթէի մեկնու-
թիւնը, հանդերձ այլովք կ'ըսէ. « Գերապատիւ և
« գերահռչակ հայրն մեր ըստ հոգւոյ և երկրորդ
« լուսաւորիչն սուրբ եկեղեցւոյ, ի զարմէ և ի
« շնորհէ սրբոյն Գրիգորի փայլեալ, կորովամիտ
« և համեղաբան կաթողիկոսն Հայոց », և այլն: —
Մխիթար Այրիվանեցի ժամանակագիրն. « Տէր
« Ներսէս կաթողիկոս՝ փայլեալ յաշխարհի ա-

« մենայն առաքինութեամբք և գիտութեամբ »։ — Ասոնց ժամանակակից խոհական յիշատակագիր մ՚ալ (յամի 1285) մեր Հայաստանեայց եկեղեցւոյ առաուածատարգև այցելուները կը յիշէ, Լուսաւորիչ, Մեծն Ս. Սահակ, և ասկէ ետև՝ « ի « վախճան ժամանակաց, և ՚ի վերջինս գարու, « յանբարի և ՚ի նուազեալ ժամանակիս՝ եբր ՚ի « գրուհս ձմերայնոյ ՚ի ընացեալ ձուռ կամ ոչ « կայզ ինչ զարմանալի՝ փայլեաց և երևեցաւ ՚ի « զարմէ և ՚ի ցեղէ ընտրութեե մեծի Լուսաւորչին, « համեմատ առաջնոյն՝ երկրորդ գերամաքուրն « Ներսէս, որ զհայրենին յաջորդեաց գահ և ա- « թոռ հայրապետութեան ՚ի Կլայն Հռոմական, « և զամենայն նորոգեաց ըստ նախնի հարցն բա- « րեզարգութեան՝ զառ ՚ի զանազան թշուառու- « թեանցն աղաւաղեալ եկեղեցւոյս կարգս »։ — Ուրիշ ժամանակակից գաւազանագիր մ՚ալ. « Տէր « Ներսէս. սիեղերական վարդապետ, որ և բա- « զում երգս յօրինեաց ՚ի Հայս, և այլ բազում « ուղղութիւնս յեկեղեցիս Աստուծոյ [1]։ — Ասոնց « մերձաւոր Սմբատ Պատմիչ († 1276). « ի Թուին « ՈԻԲ, Սուրբ Լուսաւորիչն տէր Ներսէս Կլայե- « ցին՝ փոխեցաւ առ Քրիստոս »։ — Յայտնութիւնք ալ պէսպէս աստուածով կը բացատրեն Ներսիսի գերազանցութիւնը, յորոց մէկն զամենն ամփո- փելով Ճշմարտաբանէ. « Ոչ ոք յառաջնոց հայրապե- « պացն գիտաց նման նմա, և ոչ յետ նորա մինչև ՚ի ժամա- « նակս մեր »։ — Գուցէ աւելի մեծ և խոր խնամատով և նմանութեամբ՝ վարուց Պատմիչն՝ անոր բազմա- պատիկ ընութեց ձիրքը գեղեցկապէս նմանցընէ կենդանաշարժ ծովու մը, որոյ ալիքն անկարօտ

[1] ԻՊ գարու Քարոզագիր վարդապետ մ՚ալ Մեծն կ՚ա- նուանէ զՆերսէս Շնորհալին, որ սովորաբար Ս. Սահա- կայ հօր համար կ՚ըսուի։

ուրիշ սահմանի՝ իր ընդարձակութեան մէջ կը
ծըփծըփան. « Լցեալ անթերի լըմնութ ընորհաց
« Հոգւոյն սրբոյ, եբրև զծով համաատարած ինքն
« առ ինքեան ծփայր միշտ »: Կըրնամք աւելցը-
նել, թէ հիմայ ծովին ինքնին վերացեալ խաւնեալ
յանծայրածաւալ ովկեան աստուածութեան՝ յա-
ւիտենական սիրոյ շնչմամբ և շարժմամբ խաղայ և
խնդայ անվախճան և անխռով ծփանօք: Կըրնայ
թերևս և ինքն Յաւիտենականն ալ ըսել անոր ը-
սածը՝ փոխաբերութեամբ.

« Ծովէ՛ն ի միջի իմ ծածանի
Քաղցրիկ աւետքըն ծիծաղի »:

Ահա հոգեշարժ զարմանալի ծովուս լոկ ցայ-
տուկքն են՝ ինչ որ ի վկայութենէ պատմչաց և
ի գրութենէ Շնորհալւոյ՝ հասած են մեզ յիշա-
տակք, որով կրնանայինք գինքը ճանչնալ և ճանչցը-
նել: — Դժգէն և սակաւ մնացուածք այնքան մեծի
ծովու: Սակայն և այն սակաւ յիշատակաց և գը-
րուածոց մէջ՝ ոլքան շնորհք և ոլքան զանազան
շնորհք, երկին երկին փայլմունք հանճարոյ, թռչնք
մտաց և սրտի և ազնուութիւն արտադրութեան:
Ահաքան զանազան և ահաքան գեղեցիկ գրուածք
վասն աքանչանալով քաջ հայագէտ Փռանկ վարդա-
պետ մը՝ մեզմէ դար և կէս յառաջ, յետ գովելոյ
զբանաստեղծութիւն և զքերդողութիւն նորա, կը
գոչէ. « Բայց կայ տեսակ մը հմտութեան՝ յորում
« յաջողած չըլլայ այս հռչակաւոր Հայրապետս [1] »:
Ի խորին խորհրդոց աստուածաբանութեան՝ մին-
չև ի հանելուկս ռամկականս՝ գրած է և երգած,
և ամենքն ալ իրենց տեսակին մէջ՝ հեղինակին չը-

1 Mais en quel genre d'érudition ce celèbre Patriarche n'a-t-il pas réussi! Վ. ԻՒԼՖՐՈՒ:

նարհքն ունին, ամենքն ալ Հարտարի գործ. ամենքն ալ օծեալ սեփական անուշահոտ կակուղ օծմամբ: Ըստ այսմ և իր մարմնական հանգամանքն. իբրև չափով և կշռով ամեն չարժուածքն, ժպիտն, մատանց չարժագրուելիւնն, խօսից կերպն, ձայնն ներդաշնակ, երգն քաղցրեղանակ, հայուածքն արտաբաց և հանդուցիչ, և ըստնչն իակ Թարգման հոգւոյն հեզուելեան, որպէս սիւգնագիւլի՝ի հանդարտուելեան գարնանային աւուր: Ըստ այսմ և իր հոգեկան բազմապատիկ առաքինուելիւնքն, իր սեփական ընորհքն՝ յամենայնի հարթ հաւասար չափաւորուելիւն մը, Թէ և սովորական չափերէն վեր, նմանողուելիւն մը միշտ ինքն իրեն, և անվերջ դով խաղաղուելիւն մը ըստ Հոգւոյն Աստուծոյ. յորմէ՝ իբրև փայլատակեալ Ճառագայթ մը՝ կատարելով յերկրի իր անապատ և անապարտելի շրջանը՝ սլացաւ դարձաւ յարփիսակիզբն վառարանն աստուածուելեան. յորում վայելէ զփոխարքէն այնքան արդեանցն և արժանեաց:

# Ա.

## Վերջաբան։

Ալան լռացան եօթն երկար և ծանր դարեր մեր ազգին համար՝ յետ Ներսիսի Շնորհալւոյ երջանիկ փոխման և մեր ապերջանիկ զրկման. իր մեծ իմաստութեամբ և մեծագոյն սիրով հաստատած չէնքը՝ դիւրաւ բարձրացուցին իր առաջին յաջորդքն, օգնականութեամբ քաղաքական ազգային աերութեան մ'ալ, որ անմիջապէս Սրբոյն յերկրէ հրաժարելէն եաև՝ հաստատուն վարչութիւն մը ձեւանալով՝ ամբողջ 200 տարի տեւեց, սկսեալ՝ի Ռուբինէ որդւոյ Սահմանեայ մինչև՝ի Լևոն Վերջին (1175–1375), Թագաւորական փառաք ալ պերճացեալ. այն միջոցին թէ նեղքին ազգային միութիւնն և թէ եկեղեցական միութիւնն ընդ միաբան կաթոլիկէ եկեղեցւոյ՝ աւելի ընդարձակ աւելի սերտ աւելի բանաւոր էր. յետագայ հինգ դարք աւելի քան զաւելին այլափոխեցին զազգ մեր, ինքնակացութեան հետքը ջնջելով՝ի քաղաքական աշխարհէ. որով և կրօնական վարչութեան մէջ ալ ոչ սակաւ տատանումն, վարանումն և բռնաբարութիւն կրեց. և հիմայ որ շնորհիւ աւելի ազատապարգև քաղաքավարութեան, կրթութեան և գիտութեանց՝ ազգք և ժողովուրդք իրենց սահմանը և վիճակը ստուգելու և ճշդելու բերում մ'ունին, իրև յանծանօթ զօրութենէ և հարկէ դրդեալ. — հիմայ և ազգս Հայոց՝ որ Ցուսոյ և արևմտեայց մերձաւորութեամբ՝ միշտ

արևելից պարագլուխ մը հանդիսացեր էր, ինք ինքը կը փնտռէ կարևոր առիթմամբ. ոչ ևս Թոռոսեանց և Լևոնեանց մեքենախառն արուեստիւք, այլ միայն մտաց և սրտի խաղաղական և աւելի հզօր համոզիչ և յանկուցիչ հնարիւք. — հիմայ՝ որ իր ապագային աւելի յստակ, մաքուր, վայելուչ և ապահով ճամբայ մը յարդարելու պարտք կ'ի մանայ, և կը լսէ խնդիր մը իր դեռածին և դեռ անծին սերունդներէն, ամենէն կարևոր հարկ և հնարք կը ճանչնայ՝ բարոյական և կրօնական զգացմանց յարաբերութիւնը ներդաշնակել ուսումնական և քաղաքական կենաց և վիճակին. հպատակելով այս եաքինին (քաղաքականին) անուաշխնիկ յեղափոխութեանց պայմանին, և անկէց իրեն նըշանակուած կայանին 'ի սիւնս երկրի, (ուր 'ի մէջ մեծամեծ և փոքր աշխարհակալ պետութեանց քնակի և գաղթէ) կ'ուզէ անաղարտ պահել կրօնից արտօնութիւնները, զոր ոչ աշխարհաւեր կրնան քանդել և ոչ աշխարհաշէնք փոխանակել: Ոչ միայն իրրև կրօնասէր, այլ և ծնասէր, հայրենասէր, բնասէր, ինքնասէր ազգ մը՝ կ'ուզէ և պէտք է ուզէ և Հայն՝ իր մեծագոյն, սրբագոյն, սեփականագոյն իրը, ոգին և ոգևորիչը՝ իր Եկեղեցին, ունենալ և պահել. Եկեղեցի մը, ոչ անջատ և ինքնեակ՝ ըստ միութեան՝ յընդհանուր եկեղեցւոյ, այլ ձյմարիտ կաթողիկէ և առաքելական հաւատովք մի և նոյն, և միանգամայն ինքնագոյն իսկագոյն սեփականութեամբ ազգային ծիսից և սովորութեաց, զոր գրեթէ 16 դարէ 'ի Գրիգորէ Լուսաւորչէ և այսր՝ արմատացուցեր, խորացուցեր, իւրացուցեր են 'ի նմա. և զոր ամեն մեծոգի և մեծասիրտ քահանայապետք վեհագոյն եկեղեցւոյ և ընդհանրական հովուապետք՝ սկսեալ 'ի Ս. Սեղբեստրոսէ մինչև 'ի մեր դարս, պատուած են՝ ըստ սկզբնական հրահանգաց և կարգի եկեղեցեաց. և երբ և կամ ուսկից և

որ կողմանէ որ աւելի պահանջ կամ աւելի նա-
հանջ եղեր է՝ ոչ միայն օգուտ չէ եղած, այլ և
վնաս: Հաւատք են հինն, այլ սէրն է չէնքն և շի-
նիչ, զօրիչ և հաստատիչ, և խմաստութիւնն՝ ճար-
տարապետ: Շնորհալւոյ խմաստութիւնն և սէրն
էր՝ որովք (իր ըսածին պէս) երկար ժամանակաւ
սովորութիւն և բնութիւն դարձած ատելութիւ-
նը՝ կըրցաւ լուծել, և շատ ազգաց հետ կռուող և
նուաճող Կոմնենեան կայսրը նուաճեց [1]. և երկուց
ոխերիմ ազգաց սրտերը մօտեցուց միացուց. և
այն սիրուին գրեց առ Մանուէլ՝ միաբանութեան
փափագանացը վըայօք՝ այս անմոռանալի խօսքը.
« Մեր յօժարութիւն ընթացից առ այսոսիկ՝
« այնքան, մինչ զի ոչ կենդանութեամբ միայն...
« այլ և 'ի գերեզմանէ՝ թէ էր հնար յառնել և
« գալ՝ ըստ Ղազարու », և այլն:

Հաւատամ, որ անձն Շնորհալի և՞ հրաշալի, որ
եթէ այդ հնարն յիրաւի կարելի և կատարելի ըլ-
լար, և գու այսօր ալ քոյ շնորհօքդ Հայոց հայրա-
պետ ըլլայիր, ազգիդ մէջ այսքան պառակտումն և
վարատումն չէր ըլլար, և շատ այլախոհ սիրտք կամ
միտք՝ միախոհ և միահաւան կ'ըլլային քեզմով. խոկ
եթէ վեհագոյն ևս աւծռոյ գահակալուխ ըլլայիր՝
ազգաց և լեզուաց միութեան կենդրոն կ'ըլլայիր,
և ընդ համակենդրոնն Քրիստոսի յօդէիր. գօրծով
կատարելով և ըսածդ, թէ « Ոչ մարդկային ախ-
« աիւ անօգուտ բանակռուութեամբ և անոտի
« յաղթասիրութեամբ, յորմէ ոչ ինչ օգտեցաւ
« եկեղեցի՝ այսքան երկար ժամանակաւ, այլ
« Հոգւոյն Աստուծոյ խորհրդակցութեամբ՝ խո-
« սեցին ամենեքեան վասն չինութե Հոգւոցն [2] »:

1 « Որ և զձեր թագաւորութիւնդ նուաճեաց 'ի հաւա-
« նութիւն, աստուածիմաստ գիտութեամբն, յոր առ մեզ
« ուղղափառութեանս ». գրեր Գրիգոր Տղայ առ Մա-
նուէլ կայսր:

1 Թուղթ առ Միքայէլ պատրիարք Կոստանդնուպոլսի:

Այլ ես չեմ համարձակիր՝ ոչ աստուածային տեսչութեան գաղտնեաց քննիչ կամ խորհրդակից ըլլալ, և ոչ քու Սրբութիւնդ աչխատեցընել՝ յերկնաւոր երանութենէդ նորէն իջնելու յերկիրս աղցաւոր, ուր՝ և զքո և զիմ տէրն զՔրիստոս ինքն ալ՝ չեմ հրաւիրեր նորէն տնօրինելու: Այլ զիաբելն և զկարևոր՝ ինդբեմ քեզմէ և քո միջնորդութեամբդ. այս է, բանալ զաղբերս ընորհաց երկնից, որովք դու այնքան լցեալ և թաթաւեալ էիր և ես, հեղուլ զեղուլ քո երկրաւոր ազդայնոցդ վրայ. կամ մանաւանդ՝ բանալ մեր սրտերն առ աղբիւրն ընորհաց. և ընուլ զամեն հասակ և վիճակ՝ որոց պարտքերը գրեցիր և ցուցիր Ընդհանրական Թղթովդ, իբրենց յարմարագոյն ընորհօք. և անոր՝ որոյ միայն չգրեցիր, այլ զինքդ օրինակ ցուցիր, (քու աշխուժդ յաջորդող հայրապետի) առաւելապես տալ 'ի կրկին հոգւոյդ՝ խմաստութեան և սիրոյ, սիրոյ և խմաստութեան, յորս բոլ վանդակին և այլ ամենայն պէսպէս լաւութիւնք և ընորհք. որովք կանգնի արժանաւոր Գլուխ մը Հայաստանեայց բարոյական մարմնոյն, և ծաւալէ յանդամն ոգի կենդանարար, ոգի միաւորական, ոգի արդիւնական: — Դու որ յետ 800 տարուան լուսաւորութեանն Հայոց 'ի Գրիգորէ (302) արդարև երկրորդ Լուսաւորիչ ընծայեցար ազգիդ (ծննդեամբ 'ի 1102), հիմայ ալ յետ 700 տարւոյ մահուանդ՝ ընծայուէ յայտնուէ նորոգող՝ ձեր երկուքիդ և ձեր արեանաւուացդ վաստակոց և արդեանց, որք այնքան սիրելի և կարևոր են մեզի, որքան սիրելի և հարկաւոր են հոգիք մեր ձեզի:

Հմպա և մեք, մվ սիրելի ազգակիցք Ներսիսի, որք 44 դարէ 'ի վեր հին նահապետի մը անուն կրեմք, և աւելի տոյգ հոգւոյ որդիք եմք այնպիսի հայրապետաց՝ որք 'ի միջի հայրապետաց ամենայն ազգաց և աշխուժ՝ միայն կ'անուանին Լուսա-

ուրիւ և Շնորհալի. մեք՝ որ այնքան պնդութեամբ կը պահենք անոնց անունը, սանդը և սէրը, ի դէպ Ը դարագարձի երկնակենցաղութեան այդպիսի աննման Հայրապետի, որ (կըրնար ըսուիլ Առաջին՝ յիւր ժամանակի, և ընդ առաջինս յամենայն ժամանակի,) նորոգենք և զօրացընենք այն սէրն ու երախտիքը՝ որով պարտական ենք և պիտի ըլլան մեր յետին Թոռունքն ալ: Եթէ այս ինչ կամ այն ձիրք կամ շնորհք մը ունող անձանց՝ այնպէս չքեղ տարեդարձի և դարադարձի յիշատակք կը կատարուին ապէպ յաղագս, և փոքրիկ հին յիշատակն ալ՝ նորանոր կրկնութեամբ կը մեծացըննեն, ո՞րքան աւելի արժան է մեզ՝ թէ ոչ անկարելի շքեղութեամբ՝ գոնէ կարելի երախտեաց և սիրոյ եռանդեամբ հռչակել յիշատակ մը՝ որ միշտ մեծ է, և Անձ մը՝ զոր հարք մեր գերասկի կնքով կնքեցին Շնորհալի, և երկինք վաւերացուցին: Յիշենք և տօնենք ուրեմն այն աննման անձը, զոր թէ հնար էր՝ ամեն բարեհամանձ ազգ պիտի փափաքեր գնել և իրեն սեփականել: — Ան՝ որ ի մանկութենէ իրրև խոհական, և ջախտաս այր երևեցաւ, և ի ծերութեան՝ որպէս մանուկ հեզ և անմեղ. Ան որ երբեք հեշտութեամբ չծիծաղեցաւ և ոչ վայրապար խօսք մ՚ըսաւ, և միշտ զուարթադէմ էր և քաղցրազրոյց. Ան որ երբեք ըստ քմաց և կամաց բան մը չգրեց, և միշտ յօժար և յորդոր էր գրելու՝ ըստ կամաց և պիտոյից այլոց. Ան որ միշտ յանապատս և ի քարանձաւս բնակէր, և իրրև յապարանս բնակող մարդավար էր և մարդասէր. որ ընտրեր զմիայնութիւն ընդ Աստուծոյ, և փութայր ի ժողով՝ յօգուտ ընկերութեան մարդկան. — Որ յիսուն տարի Հայաստանեայց եկեղեցւոյ պատգամ, վարիչ ամոլ, լուսատու և վարդապետ եղաւ, և յետոպայից ալ բացաւ Թողուց լուսաւոր ճամբայ.

յիսուն տարի՝ ինչպէս իր եկեղեցւոյն այնպէս և ազգին դպրութեան դասագլուխ եղաւ, և յետնոց մինչև ՚ի մեզ և մինչև խոպառ՝ օրինակ հայկաբանութեան յարձակ և ՚ի չափական գրուած: Այն ինքն որ մեր գեղեցիկ ժամերգութեանց և պաշտամանց՝ գրեթէ ամբողջ երգարդ մասին հեղինակ և աւանդող է, և տեսակ տեսակ բանաւոր արուեստից մէջ՝ առաջին կամ ընդ առաջինս եղած է յազգային գրականութեան: Այն որ ՚ի վեր քան զամենայն ճարտարս մեր եղաւ և կոչեցաւ Երգեցողն, և աւելի քան յերկրաւորացս՝ անշուշտ այնպէս ճանաչուի արդ յերկնաւորաց. վասն զի իր մաքուր սիրոյն աւելի վսեմական և զմայլական քնար մ՚ալ ուներ. քնար կուսական, որով ընդ բիւրաւոր զարմանալի քնարահարացն զորս տեսաւ և լսեց Յայտնութեան Տեսողն՝ շուրջ զաթոռով երկնային Սիոնի, որք « երգէին զերգս... և ոչ ոք կարէ գիտել զերգս նոցա ». այլ և գեռ հիմայ ալ որպէս հաւ զուարթուն փափուկ վանկերով և անոյշնուագներով՝ կ՚արթընցընէ մեր հոգեսէրները, ՚ի մէջ գիշերի յարուցեալ առ Աստուած թընդացընել արտերնին: Նա ինքն է որ ՚ի գարնան ժամանակի կենաց մեր նորահաս հարս ու փեսայից սիրահայած սրտերը՝ իր « Սիոնի որդիք, զարթիք » երգովը՝ կ՚ուղարկէ յուրախութենէ յուրախութի՛ն. և Նա ինքն յաշնայնի ժամանակաց՝ աւելն հասակէ հնձեալ հասակաց վրայ՝ իր Հանգստեան շարականները հնչեցընելով՝ զիջանի ցաւագնի նմանի իմն

« Ետես կանանչն իւղաբերից
Եւ ոչխարսով արտասուալից ».

և մերթ հեզիկ մնչելով մայլէ.

« Ողորմեա քո սահմծուածոյս,
Յուսով ՚ի քեզ նընչեցեալս ».

մերթ համարձակի արդարութեան սոսկալի սուրն ալ դադրեցընել, ազդելով.

« Արդարութեամբ մի դատեցեր,
Այլ գթութեամբ քո քաւեցեր »:

Ո՛վ քնքոյշ քնար որորանաց, սրբիչ սրակատա-նաց և հսկող հովանի գերեզմանաց Հայոց:

Ընծայենք արժանաւոր պսակ մը մեր ամենար-ժեայ Հայրապետին, աւելի քան զոսկեղէնն և զականակապ. ընծայենք նմա ընորհակալ և ընոր-հափայլ սրտեր: Նմանութիւնն է ճշմարիտ յարգ և սէր որդւոց առ ծնօղս:... Այլ ո՞ համարձակի նմանիլ աննմանն Ներսէսի: — Յուսամ թէ խրա-քանչիւր անձն ջանալով իր չափուն և վիճակին յարմարագոյն ընորհքը ստանալ, կըրնանք ամենքս միաբան և միաձայն յիրար բոլորեալ ազգովին՝ ըլլալ երբեք 'ի զանազան ծաղկանց համախուռն պսակ մի ընորհազարդ. և նուիրել քեզի՝ նախօրի-նակիդ մերոյ, ով հրաշազարդ և անուշակ հայր մեր ՇՆՈՐՀԱԼԻ:

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՊԱՐԱԳԱՅԻ Ն. ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

---

| ԱՄՍ | |
|---|---|
| 1058 | ✠ Գրիգոր. Մագիստրոս և Պետրոս Գետադարձ: |
| —— | Խաչիկ Բ. կաթողիկոս կոչի՛ւ Կ. Պօլիս. |
| 1061 | — առաքի՛ւ Տարընաց կամ՛ւ Թաւբլուր: |
| 1064 | ✠ Խաչիկ Բ: |
| 1065 | Գրիգոր (Բ) վկայասէր կաթող. նստի՛ւ Ծամնդաւ: |
| 1066 | — Երեմայ՛ւ Կոստանդինուպօլիս: |
| 1067 | — Նստի՛ւ Կարմիր վանս կամ Յա- բեգի: |
| 1069–70 | — Շրջի յոսխաս: |
| —— | Գէորգ Լօռեցի սեղապահ կարգի: |
| 1070 | Սկիզբն յօրինուածոյ Տճնամակաց: |
| —— | Փիլարետ սկսանի բռնակալել: |
| 1071 | Ռոմանոս կայսր ըմբռնի Յաղթ-Ասլա- լանայ՛ւ Մանազկերտ: |
| օգոս. 26 | |
| 1072 | Խաչատուր գունքս Անահուքայ միա- բանի ընդ Ռոմանոսի կայսեր: |
| —— | Գէորգ կաթողիկոս ընկերեկիկ լինի: |
| —— | Գր. Վկայասէր՛ւ Մուտառասու վ: |
| 1073 | Օշին նախահայր Չեթմեանց գայ՛ւ Գանձակայ՛ւ Կիւրիկիա: |

| ԱՄՓ | |
|---|---|
| 1073 | Գր. Վկայասէր երթայ առ Թոռնիկ։ |
| 1074 | Սկիզբն սուլտանութեան Իկոնիոնի։ |
| —— | Սարգիս կարգի կաթողիկոս ՚ի Հռոմ։ |
| —— | Բարսեղ Ձեռնադրի եպիսկոպոս Անոյ։ |
| —— | Գրիգոր Վկայասէր ՚ի Կոստանդինուպոլիս և ՚ի Հռոմ։ |
| 1075 | Գրիգոր Վկայասէր յԵգիպտոս։ |
| 1076 | Գրիգոր քեռորդի Վկայասիրի եպիսկոպոս կարգի յԵգիպտոս։ |
| —— | Թարգմանութիւն Մեկն. Գործոց Առաքելոց ՚ի Կոստանդինուպոլիս։ |
| 1077 | ✠ Սարգիս կաթողիկոս։ |
| —— | Թէոդ. Ալախոսիկ յաջորդէ Սարգսի։ |
| 1078 | Թարգմանութիւնք Ճառից Ս. Եփրեմի, և Վկայաբանութեանց։ |
| 1079–80 | ✠ Գագիկ Բագրատունի, և Պայազատքն Արծրունեաց Թիւրք։ |
| 1080 | Թուղթ Գրիգորի Ի Պապն առ Գրիգոր Վկայասէր։ |
| —— | Ռուբէն Ա. Սկիզբն աէրութեան Հայոց ՚ի Կիւլիկիա։ |
| 1081 | ✠ Գագկիկ Թագաւոր Կարուց։ |
| —— | Բարսեղ կաթողիկոս անուանի յԱնի։ |
| 1085 | Պօղոս Վարագեցի կաթող. ՚ի Մարաշ։ |
| 1090 | Բարսեղ գնայ առ Մելիքշահ։ |
| —— | — Մերժէ զԹէոդորոս կաթող.։ |
| 1091 | Ծնունդ Ս. Բեռնարդոսի։ |
| 1092 | Բարսեղ դառնայ յԱնի։ |
| —— | Գրիգոր Վկայասէր ՚ի Մելիտինէ. Թարգմանէ զՎկայաբ. Եւթոքսեանցն |
| 1094–5 | Ծնունդ Գրիգորիսի (գ)։ |
| 1095 | ✠ Վասակ եղբայր Գր. Վկայասիրի։ |
| —— | Թորոս Հեթմեան կուսակալ Եգեսիոյ։ |

| ԱՄՓ | |
|---|---|
| 1097 | Խաչակիրք Լատինք յԱսորիս և՛ ի Կիւ- լիկիա։ |
| —— | Տանգրի սիրէ Աստանայ և Տարսոնի։ |
| —— | Կոստ. Ռուբինեան օգնէ Խաչակրաց։ |
| 1098 | Պալատին սիրէ Եդեսիոյ։ |
| 1099 | Խաչակիրք առնուն զԱնտիոք։ |
| յուլ. 11 | —— առնուն զԵրուսաղէմ։ |
| օգոս. 12 | Էմիրէն ուրացեալ Հայ պարսի՛ ի Կո- փրեոսէ յԱկաղան։ |
| —— | Թորոս Ա. յաջորդէ Կոստանդնի։ |
| 1100 | Գրիգոր Վկայասէր յԱրեգի Վանս։ |
| 1101–2 | Թարգմանութիւն Վարուց Ոսկիբե- րանի։ |
| 1102 | Ծնունդ Շնորհալւոյ։ |
| 1103–4 | Բարսեղ կաթողիկոս նստի՛ ի Շուղր։ |
| 1105 | ✠ Գր. Վկայասէր։ Յաջորդէ Բարսեղ։ |
| 1106–10 | Ստեփանոս կարմիրվանեցի հռչակի։ |
| 1111 | ✠ Գող Վասիլ։ |
| —— | Վրէժք Թորոսի Ա.՛ ի Մանտալեանց։ |
| 1113 | ✠ Բարսեղ։ — Գրիգորիս յաջորդէ։ |
| 1114 | Ժողով Սեաւ Լերին։ |
| —— | ✠ Գէորգ Մեղրիկ՛ ի Դրազարկ։ |
| 29 նոյեմ. | Ժաժ Կիւլիկիոյ և Սեաւ Լերանց։ |
| 1116 | Սարկաւագ Վարդապետնորոգէ զսո- մար Հայոց։ |
| —— | Թորոս Ա. արդելու զՏղայ Վասիլն։ |
| 1118–9 | Շնորհալի ձեռնադրի քահանայ։ |
| 1120 | Ծն. Մանուէլ կայսր։ |
| 1121 | Շնորհալի գրէ զՎիպասանութիւնն։ |
| 1123 | Հայք կորովիք զերծուցանեն զՊալատին Թագաւոր Երուսաղէմի՛ ի Խար- բերդէ։ |
| 1124 | Աւետիք Ճարտար քարտաշիկ յառնան Տիւրոսի։ |

| ԱՄՍ | |
|---|---|
| 1125 | Ամուռ կաթողիկոսին գնի ՚ի Ծովք։ |
| 1127 | ✠ Կիրակոս Թարգմանիչ։ |
| 1128 | ՀաստատուԹիւն կարգի Տաճարականն Ասպետաց։ |
| 1129 | ✠ Սարկաւագ Վարդ. ՚ի Հաղբատ։ |
| —— | ✠ Թորոս Ա։ — Պայազատէ Լևոն Ա։ |
| ? | Շնորհալի ձեռնադրի եպիսկոպոս։ |
| 1132 | Ճոպլին Բ. դատայր Լևոնի պայազատէ յԵգեսիա։ |
| 1134 | ՎիճաբանուԹիք Հայոց և Ասորւոց։ |
| —— | Վահրամ հօրեղբայր Շնորհալւոյ Վզուռկ յԵգիպտոս։ |
| 1136 | Մահմուտ. Տէնիշմ. այրէ զԿարմիր վ։ |
| ? | ԹուղԹ Շնորհալւոյ առ Ասիւծ ՚ի Թլկուրան։ |
| 1137 | ՅիշատակագրուԹիՒ Շնորհալւոյ յԱրու պլիս։ |
| —— | ԳերուԹիւն Ա. Լևոնի ՚ի Յովհաննէ Կոմնեն. կայսերէ։ |
| 1138–9 | Ժողով Անտիոքայ, յորում և Գրիգորիս։ |
| 1139 | Գագիկ–Գրիգորիս Ձեռնադրի կաթողիկոս Աղուանից։ |
| 11 յուն. | |
| 30 սեպ. | Ժամ և կործանումն Գանձակայ։ |
| 1139–40 | Ժողով Երուսաղէմի, ուր և Գրիգորիս։ |
| 1140 | Ասումն և այրումն Գեանոյ։ |
| 1141 | Շնորհալի սրբագրէ զԹարգմանուԹիՒ Ճառից Սրճեցոյն, և զՀրաշափառն Ոսկիբերանի։ |
| —— | Գրիգորիս յԵգիպտոս։ |
| 1142 | Յովհաննէս կայսր ՚ի Թլպաշար։ |
| 1143 | —— ✠։ — Մանուէլ յաջորդէ։ |
| 1143–5 | Թորոս Բ. զերծեալ, սիրէ Վահկայ և Ամուռատայ։ |

| ԱՄՓ | |
|---|---|
| 1144 | Առաւմն Եդեսիոյ ՚ի Զանգեայ։ |
| 1145 | Նուիրակք Հայոց ՚ի Վիտերպոյ, առ Եւգենիոս Գ։ |
| 1145–6 | Ողբք Եդեսիոյ։ |
| 1146 | Երկրորդ առաւմն Եդեսիոյ ՚ի Նուրէտտինայ։ |
| —— | ✠ Սիր Պաղտին։ — Գամբռնական ողբք Բարսղի արքեպիսկոպոսի։ |
| 1146–7 | Ս. Բեռնարդ քարոզէ խաչակրութիւն։ |
| 1147 | Զօր Ֆ. խաչակրաց։ |
| 1148 | Անյաջող եղք խաչակրաց ՚ի Պաղեստին։ |
| 1149 | Շնորհալւոյ Յիշատակարանք Առաքաց Սողոմոնի։ |
| —— | Գր. Յեսուանց Իմաստասէր, գրէ ընդ Գիրս Վայից։ |
| յուն. 27 | ✠ Բեմունտ Բրինձ Անտիոքայ մարտընչելով ընդ Նուրէտտին։ |
| սեպտեմբ. | Մատուռ սուրբ Աստուածածնի։ |
| —— | Թորոս Ֆ. Հարիանէ զԹուրքս։ |
| 1149–50 | Վասիլ եղբայր Շնորհալւոյ ըմբռնի ՚ի խորասանայ։ |
| 1150 | Գերութիւն և ✠ ձոպնի Ֆ։ |
| 1151 | Հաստատութիւն կաթողիկոսական աթոռոյն ՚ի Հռոմկլայ։ |
| —— | Շնորհալի գրէ զԲան Հաւատոյ։ |
| —— | Թորոս գերի վարէ զԹոռոս դուքս։ |
| 1152 | —— Հարիանէ զԱնդրոնիկոս· գերէ զՕշին Լամբրոնացի։ |
| —— | Շնորհալի գրէ զՅիսուս–Ողին։ |
| ? | —— Հաւատով Խոստովանիմին։ |
| 1153 | ✠ Ս. Բեռնարդ։ |
| —— | Ծնունդ Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ։ |
| 1153–4 | Հիւանդութիւն Շնորհալւոյ։ |

| ԱՄՓ | |
|---|---|
| 1154–5 | Շն. Թուղթ առ Գրիգոր Ապիրատ: |
| 1153–5 | Մասուա յարձակի յերկիր Թորոսի և հալածի: |
| 1154 | Ընդառաջ իշխան Անտիոքայ նեղէ զՔ- Թորոս: |
| —— | Գալայի Հայ վզրուկ յԵգիպտոս: |
| 1155 | Ընդառաջ հաշտեալ ընդ Թորոսի առ- պատակէ 'ի Կիպրոս: |
| —— | Թորոս արշաւէ 'ի սահմանս Հալպայ: |
| 1156 | Նահատակութիւն Գոհարինեանց: |
| —— | Սարգիս աւարտէ զընդարձակ Մեկն. Կաթողիկէսյց: |
| 1156–7 | Աշխատանք Ստեփանէի: |
| 1157 | Պաշարումն Քեսնոյ 'ի Ստեփանեայ: |
| —— | Թորոս դարձուցանէ զԲերդուս առ Սուլտանն: |
| —— | Թարգմանութիւն վկայաբ. Տարագո- սեանց: |
| 1157–8 | Գժտութիւն Ստեփանէի և բանտումն: |
| 1158 | Շն. Թարգմանէ զվկայ. Ս. Սարգսի: |
| —— | Մանուէլ կայսր 'ի Կիւլիկիա: |
| 1159 | —— Հաշտ ընդ Թորոսի: |
| 1160 | Ընդառաջ ըմբռնեալ բանտի 'ի Հալէպ: |
| 1161 | Թորոս և Թագաւորն Երուսաղէմի զդէմ ունին Նուրէտտինայ: |
| 1162 | ✠ Թագաւորն Երուսաղ. Պաղտին գ: |
| —— | ✠ Բարսեղ արքեպիս. Մարաշայ: |
| 1163 | ✠ Ստեփանէ: |
| 1163–4 | Բեն. Դուտելացի յերկիր Թորոսի: |
| 1164 | Թորոս նիզակակցեալ Փռանկաց հար- կանէ զՆուրէտտին: |
| 1165 | Հակառակութիւն Թորոսի և Օշնի. Շնորհալի հաշտարար: |
| —— | Շն. ի Լամբրոն և 'ի Մամեստիա: |

| ԱՄՔ | |
|---|---|
| 1165 | Շն. Գրէ զԴաւանութիւնն ՚ի Խնդրոյ Ալէքսի: |
| —— | Թուղթ Մանուէլի կայսեր: |
| 1166 | Շնորհալի ձեռնադրի կաթողիկոս: |
| —— | ✠ Գրիգորիս, քՀայապետեալ ամս 53: |
| 1167 | Թորոս երկրորդ անգամ վանէ զԱնդրոնիկոս: |
| —— | —— գերի վարէ զԿոստ. Կալամանն: |
| —— | Ա. Թուղթ Շնորհալւոյ առ Մանուէլ: |
| 1168 | Ինքնագլուխ տիրեալ Կիւլիկիոյ ✠ Թորոս: |
| —— | Ն. Լամբրոնացի ձեռնադրի քահանայ: |
| 1169 | Մլեհ բռնապետէ: |
| —— | Շահանդուխտ գնայ յԵղէմ յուխտ: |
| 1170 | Ա. Թուղթ Մանուէլի առ Շնորհալի: |
| —— | Թէորիանէ և ՅՀ. Ուռհայեցի ՚ի Հռոմկլայ: |
| հոկտեմ. | Բ Թուղթ Շնորհալւոյ առ Մանուէլ: |
| —— | Ծն. Ս. Դոմինիկոս կարգահայր Քարոզչաց: |
| դեկ. 16 | Յովսէփ Նոր Վկայ նահատակի: |
| դեկ. 29 | ✠ Ն. Թովմաս Պէքէդ արքեպիսկոպոս Կանտորբերացի: |
| 1172 | Բ Թուղթ Մանուէլի առ Շնորհալի: |
| 1172–3 | Սկիզբն չինուԹԵ Ս. Ղազար կղզւոյ (Մխիթարեանց) Վենետկոյ: |
| 1173 | Երկրորդ գալուստ Թէորիանեայ և Ուռհայեցւոյ: |
| փետ. | |
| մարտ. | Շն. արձակէ զնոսա և գրէ երկրորդ անդամ առ Մանուէլ: |
| —— | — Հրաւէր ազգային ժողովոյ գրէ առ Եպիսկոպոսունս. |
| օգոս. 8 | ✠ Շնորհալի, յ՚800ռ ամի ✠ Մեծին Ներսէսի: |

| ԱՄՓ | |
|---|---|
| 1173 | Գրիգոր Տղայ յաջորդէ յաթոռն։ |
| 1175 | Սպանանի Մլէհ։ Յաջորդէ Ռուբէն գ։ |
| —— | Ն. Լամբրոնացի ձեռնադրի Եպս։ |
| 1176 | Խաւարումն արեգական զոր դիտեն |
| ապր. 11 | Ն. Լամբրոնացի և Մխ. Սնեցի։ |
| 1177 | Թուղթ Մանուէլի առ Գր. Տղայ։ |
| —— | Ն. Լամբրոնացի հրաւարակէ զՊա- |
| | տարագամէկնիչն։ |
| 1179 | Ժողով Հռոմկլայ. Աւեհաբանուեցի |
| ապր. | Ներսիսի Լամբրոնացւոյ։ |
| 1180 | ✠ Մանուէլ կայսր։ |
| 1182 | Ծն. Ս. Փրանկիսկոս Ասիզացի կաթ- |
| | ղահայր Կրսերաց։ |
| 1184 | Մխիթար Գոշ գրէ զԴատաստանա- |
| | գիրս. — Մխիթար Հերացի զՔեր- |
| | մանց Մխիթարութիւն. |
| 1187 | ✠ Ռուբէն գ։ Պայազատ Լևոն բ։ |
| 1193 | ✠ Գրիգոր Տղայ։ — Յաջորդէ Գր. ե։ |
| 1195 | Արգելանի մանուկ կաթողիկոսն, և Քա- |
| | րավէժ ✠։ Յաջորդէ Գրիգոր զ, |
| | Ապիրատ։ |
| 1190 | ✠ Փրեդ. ս. կայսր յերկրին Լևոնի։ |
| 1198 յլ. 17 | ✠ Ներսէս Լամբրոնացի։ |
| 1199 | Թագ. կապէ Լևոն բ.'ի 6 յանուարի։ |
| 1200 | ✠ Մխայէլ պատրիարք Ասորւոց։ |

# ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

## ԵՒ ԻՆՉ ԻՆՉ ԻՐԱՑ


Աբաս Կաթիկեան 104• 161•
Աբգար 9• 137• 187•
Աբգէմեհ Կիւրոպալատ 107•
Աբեւսահէ Արծ• 37• 133•
Աբեռն կաթողիկոս Ատոր• 41•
Աբրահամ Կարուց եպիսկոպոս 363•
Աբրահամ Ղռամատիկ 268•
Աբրահամ Նահապետ• 8• 9•
Աբգարոն 183• 215•
Աղբիանուպօլիս 197•
Աղգականութեան աստիճանք 266–8•
Ամբաբէկք 127•
Ամբանաս (Ս•) 142•
Ամբանաս Ատրպ արքեպիսկոպոս 288•
Ամենական քաղաք 6• 137•
Ամէնք
Ամբակում և տոհմն 8• 18• 19•
Ամբաս Աքսուխ 316• 320–1• 413•
— Կիֆարտ 296•
Ամբաս կամ Ամիասան Տէնիշմէնտ 224–5•

Ալիզա մայր Կոստանդնի. 342.
Ալիծա մայր Ս. Բեռնարդոսի 476.
Ալիս գետ 225.
Ալիսալան սուլտ. 103.
Աղեքսանդր Մեծն 9.
Աղեքսանդրիա 137. 167. 169. 201.
—— Փոքր (Իսկէնտէրուն) 297.
Աղթամարայ կաթողիկոսք. 53–57. 172. 330. 354.
Աղձնիք 107. 137.
Աղուանք 17.
Աղուանից կաթողիկոսք 15. 42. 159–62. 368. 439.
Աղուան–Հայ Թագաւորք 57. 103. 105.
Ամայք գաւառ 140.
Ամաւրիկ պատրիարքք Անտիոք. 153.
Ամբրոսիանոս (Ս.) 175.
Ամուսոյ քերդ 288.
Այրարատ աշխարհ 11. 12. 20.
— գաւառ 394.
Այրի վանք 395.
Անակ 10. 11.
Անակլետ 152.
Անանիա Եգիպտոսի եպիսկոպոս 165.
— Մոկացի կաթողիկոս 20. 57.
— Նարեկացի 146.
— Շիրակացի 2. 63. 89. 443.
— Սանահնեցի 152–55.
Անաստասայ եկեղ. ի Հռոմ 178.
Անաւարզա 100. 149. 295. 302. 368.
Անդրոնիկոս Անգեղոս 256.
— Եփորպէն 298–9. 211.
— Կոմնէն. 256. 290–1. 320–22.
Անթաւպ 96. 226. 349.
Անի 23–39. 41. 94. 103. 105. 124–9. 205.
Անեցիք 104.
Անոյ եպիսկոպոսք 13–15. 125.

Անուշաւան 2.
Անախտաւրոս 29.
Անտիոք և Անտիոքացիք 25. 38. 40. 96. 99. 148.
150–5. 186. 201. 296–302. 312. 474.
— այ Ժողով 152–4.
— այ Հայ եպիսկոպոս 368.
Անտոնեանք 463.
Աշոտ ԺԲ. Բագրատունի 2.
— Մսակեր 2.
— Ողորմած 2. 24.
— Պահլ. իշխանաց իշխան 13.
Ապելար 177.
Ապիրատ Պահլ. 13.
— Պահլ. միւս. 14.
— Հայր Շնորհալ. 44, և այլն.
— տ. Գրիգոր Ջ.
Ապղարիկ Արծր. 282.
Ապուլ-Սուար 95.
Ապուլ-Ֆարաձ 416.
Ապուզամր Պահլ. 13.
— միւս 14.
Ապուսայիտ բժիշկ 120.
Ապպաս Վզբուկ 167.
Ապօղոս 119.
Աջապահք 22.
Առաքելոց վ. Մշոյ 107.
Առաքել Սիւնեցի 366.
Առիւծ բերդ 288.
— իշխան 140.
Ախա Փոքր 24.
Ակաղոն 169.
Ակռուռայ բերդ 290.
Ասորիք 25. 27. 41. 136–146. 404. 407, և այլն.
Ասրւոց աշխարհ 99.
Աստահապետի Պահլաւ 9. 10.

Ասպետք 301–3. 308.
Ասպուրակէս 18.
Աստեմանի 139.
Աստուածածնունդ 244. 407. 463.
Աստուածատուր տպագրիչ 247.
Աստղիա 299.
Աստանա 298. 315.
Աւետ Լէհմինկլահ 168.
Աւտվմ Արծր. 37. 153.
— Վարագեցի 31. 443.
Աւտմադիրք 31.
Արա 2.
Արաբացիք 346.
Արաբիա 8. 25. 89. 103.
Արգինա 124.
Արեգակնապաշտք 401.
Արեգի Վանք 42. 49.
Արև. տ. Արեւորդիք.
Արև Գոհարինեան 225. 400.
Արևելեան Լուսան ոմն 384–8.
— Հայք 443.
— Վկայք 82.
Արևորդիք, Արուսիորդիք 399–404.
Արիստակէս Լաստիվ. 17. 130.
— Մեկնիչ 119.
Արիստոտէլ 61.
Արծն 39. 103.
Արծրունիք 24. 54. 55. 103. 106.
Արմնի 96.
Արշակ Մեծն 9.
— Փաղ 9.
Արշակունիք 8. 75.
Արշարունիք, Արշաւրունիք 11. 19.

Արշաւիր Կամսար. 11.
— Պարթեւ 9.
Արտազ 45. 57.
Արտակ 12.
Արտաշէս Պարթեւ 9.
Արտաշիր Սասան 9. 11.
Արտամէտ 176.
Արցախ 104. 161.
Արքակաղնի վ. 90. 312. 368.
Աւետիք մեքենագէտ 99.
Աւետման տօն 277.
Աւինիոն 184.
Աւսիդ 140.
Ափրոդիտէ 238.
Ափրոս (Ս.) 175.
Աքսուխ, տ. Ալէքս.
Աքքեա 158. 174.
Աֆտալ, տ. Էլ-Մէլիք.
Բաբելոն 182.
Բաբգէն կաթողիկոս 19.
Բագրատունիք 13. 20. 24. 26. 89. 103. 126. 347.
Բահլ 2.
Բան Հաւատոյ Շնորհալւոյ 74. 223. 228. 232–3.
Բաստուա 250.
Բար-Հեբրէոս, տ. Ապուլ-Ֆարաճ.
Բարձրբերդ 290.
Բարսեղ Անոյ Եպիսկոպոս 13.
— կաթողիկոս 39. 41–57. 94. 125. 494.
— Ս. Հայրապետ 372. 459.
— վարդապետ 226.
— Փեանոյ եպիսկոպոս 193–5.
Բար-Վէհեբոն 417–55.
Բեդրպուրկ 247.
Բեհ 77.
Բեհեանի 223. 307.

Բենիամին Դուտեւլայ 314.
Բեռնարդ (Ս.) 174–9 196–8. 276. 279–81. 484.
— Բիզացի, տ. Եւգեն. գ.
— Երուսաղեմի պատրիարք 152.
Բերդուս 307. 309.
Բզնունիք 19.
Բիզա 176.
Բոլբորիտոնք 399.
Բուզանդ 88.
Բուլղարք 401.
Բջնի 24. 57.
Գաբաւայ
Գաբուլացւոց եպիսկոպոս 173. 185. 194.
Գաբրիէլ Հրեշտ. 273.
Գագայ գաշտ 270.
Գագիկ Արծր. Թագաւոր 54. 106.
— Բագրատ. Բ. 23. 24. 28. 37. 77. 133. 148.
— Կաթողիկոս Աղուանից 161–2. 340.
— Կարուց Թագաւոր 28–9. 37. 39.
Գազան իշխան 401.
Գահիրէ 164. 168.
Գաղղիացիք. տ. Փռանկք.
Գանձակ 130–1. 162.
Գանձասարայ կաթողիկոսք 15.
Գառնի 395.
Գառնուկ Տիմոթէոս 250.
Գասպա 226.
Գարա–Ալան 98.
Գարա–Բուղա 103.
Գեղամայ լ. 395.
Գերմանացիք 197–8.
Գերմանիկէ. տ. Մարաշ
Գէորգ (Ս.) 434–5.
— այ վանք (Գուլէ) 435.
— Ս. Կաթողիկոս 55.

Գէորգ Ե. կաթողիկոս 20
— Անեցի 122. 126.
— Գագկայ կաթողիկոսի հայր 161.
— Թառնեցի 90.
— Լօռեցի 39. 40.
— Հաղբատայ առաջնորդ 132. 270. 278. 476.
— Մեղրիկ 2. 62.
— Պահլաւունի 13.
— Վանական 473.
— Վարդապետ 193
Գիւտ 19. 261–2.
Գոհարինէ, Գոհարինեանք 224–5. 396.
Գոնրադ կայսր 197.
Գորգ 300.
Գուգարք 104.
Գուլիելմ Երուսաղէմի պատր. 153.
— Տիւրացի 156.
Գուրգէն, ս. Կորիկէ
Գազիկ Ա. յրիվանեցի 90.
Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոս է. 22. 183.
— Անեցի 125.
— Անոյ եպիսկոպոս 13.
— Ապիրատ կթ. 2. 22. 79. 199. 234–7 453.
— Աստուածաբան 36. 142. 233. 264. 434.
— Արշարունի 31.
— Գանձակեցի 31.
— Երեց, Պատմիչ 98. 189.
— Թոքաքերի որդի 131. 161–2.
— Լուսաւորիչ 3. 11. 17–9. 45. 143. 277. 334.
— Խլաթեցի 443.
— Համզէ 12. 23.
— Հաւիճոյ վանահայր 126.
— Մագիստրոս 12–4. 23–9. 63. 70. 73. 75. 90. 147. 400. 486.

Գրիգոր Մագիստրոս Միւս 29.
— Մարաշացի 217. 220.
— Նարեկացի 82. 129. 146. 448.
— Նիւսացի 263–5.
— Պահլաւունի 13.
— Պապ Ա. 177.
— — Բ. 34. 173.
— Սիւննեցւոյ արքեպիսկոպոս 34.
— Վահրամ 29.
— Վկայասէր Ք. կթ. 14. 26-44. 75. 173. 230. 487
— Տղայ (Գ. կթ.) 14. 35. 123. 139. 200. 230. 234. 258. 285. 367. 370. 421. 432. 438. 452. 485-7.
— Փարաւիժ (Ե կթղ.) 13. 235.
— քեռորդի Վկայասիրի 33. 152–7. 169.
— — Շնորհալւոյ 167.
Գրիգորիս Թոռն Լուսաւորչի 14. 17. 53. 159.
— եղբայր Շնորհալ. 14. 43. 487–8, և այլն. 151, և այլն 328–40, և այլն.
Գալայի Իսն–Ղալաա 168.
Գամասկոս 99.
Գայգան գեա 203.
Գանիէլ Երաժիշտ 90.
Գասոյ 169–70.
Գաստաուական Քրիստոսի 187–8.
Գաւիթ Անաւկայ որդի 131. 161. 400.
— Աղթամարայ կաթողիկոս 55–7. 91.
— Անյաղթ 2. 260–5.
— Գոհարինեան 224.
— Դունեցի 394.
— Մածնաբերդի Թագաւոր 161.
— Մարգարէ 92. 233.
— Սալաձորեցի 404.
— Վրաց Թագաւոր 95.
— քահանայ 395.
Դէոսկորոս 35. 426.

Դէսակորոս Սանահնեցի 132·
Դիոդոր Տարսոնացի· 422·
Դիոնեսիոս Ատոր եպիսկոպոս 306· 405· տ· Յա-
կոբ Սալիբ·
Դիոնեսիոս Արիսպագացի· 272·
Դոսկանիա 179·
Դուին 106· 347· 389–97·
Դուքիա քաղաք· 314·
Դպրեվանք 124·
Դրազարկ վ· 139· 523· 368·
Դրախան 145·
Եաղուպ Մհլիք 294·
Եարոսլաւ 320·
Եգիպտոս 39· 162–8·
Եգիպտացիք (Մհմլուքք) 454·
Եզեկիէլ 128·
Եդեսիա 40· 120· 137· 185–7 196· 203· 382· 473·
Եդեսիոյ Ողբք 74· 83· 198–215·
Եղսիաա 177·
Եղիսէ Արծրունեաց եպիսկոպոս 55·
— Կաթողիկոս 20·
Եմեսիա 190·
Եմրան· տ· Ջեմրան·
Ենրիկ Դ կայսր 34·
Եպիսկոպոսք 342· 353· 365–71·
Եսայի Նչեցի 172·
Երաժշտութիւն Հայոց 85–91·
Երասխաձոր 11·
Երգեցողք (Շնորհալի) 85–93· 231· 497·
Երեւան 442·
Երևութականք 405·
Երզնկա 224–5·
Երկայնաբազուկք 105·
Երկինք, քերդուած 254–7·
Երուսաղէմ 38· 42· 126· 169–70· 188· 196· 200· 390·

Երուսաղէմի Աթոռ 16։
Եւագր 275։
Եպենիոս գ։ 174–183։ 194։ 436։
Եվլիդէս 25։
Եսեբիոս 121։
Եստիքէս 426։
Եփրատ 36։ 203։ 226։
Եփրատացիք 98։
Եփրեմ (Ս։) 233։ 249։
— վարդապետ 119։
Զահիրատ 165–6։
Զամանաոս 29։
Զանկի 190–92։
Զառիկ 168։
Զաւէն 18։
Զաքարեանք 105։
Զաքարէ Սպասալար 106։
Զեբեդեանք 16։
Զեմրան 8։ 9։
Զենովբ Ասորի եպիսկոպոս։ 142։ 366։
Զեւկինա 320։
Զիճ՝ գիրք 127։
Զօրավար։ տ։ Շահան։ 48։
Էլհաչէն 164։
Էլ–Մէլիք–էլ–Ադիլ 169։
Էմաեէտաին, տ։ Զանկի
Էմիրենոյ 169։
Էպիւլհասէմ։ տ։ Շահնշահ վզրուկ
Էպու–Պէքր։ տ։ Յովսէփ Նոր Վկայ։
Էջմիածնի կաթողիկոսք 22։
Ընթերցուածոյ Մեկնութիւն 31։ 162։
Թադէոս Առաքեալ։ 45։ 202։
— Վեբէոս 16։
Թադէի Վանք 57։ 119։ 137։
Թաթարք 106։

Թաշյաս վանահայր 177.
Թաւար Թադուհի 106.
Թայիկ Թադուհի 14.
Թարգմանիչք 2. 27. 30. 36. 51. 63. 82. 88. 125.
Թաւբլոս 39.
Թեբէ քաղաք Եգիպտոսի 165.
Թեղենաց վ. 390. 395. 442.
Թէոդորոս Ալաիոսիկ 41–2. 90.
— Բար-Վահեբոն. ս.
— Գոհարբինեան 225. 396.
— Կաթողիկոս Ա. 20.
— Մոպսուեստացի 422.
— Վառաս 300.
— Քռիթենաւոր 345.
Թէոփիանէ 409–433. 460. 481. 489.
Թիլն Համալնոյ 289. 294.
Թլրքմէնք 49. 315.
— Եւրիւկք 313. 318.
Թլկուրան 140.
Թլաշար 220–223.
Թոգարմա 314.
Թոնդրակեցիք 25. 145–6. 399. 400.
Թոռնիկ 14. 29. 40. 107.
Թովմա դուքս Ցոյն 289. 300.
— Մեծոփեցի 268.
— Պայլ 323–5
— Պէքէդ 397.
Թորոս Ա. 101. 148. 286. 325.
— Բ. 101. 149. 229. 286–324. 411.
— Եգեսիոյ քաղաքապետ 188. 312.
— քորեպիսկոպոս Սամոսատոյ 401.
Թորոսի երկիր 101.
Թուղքաստան 8. 10.
Թուրք Սկիւթք. 23. 24. 77. 103. 105.
— Փոքր Ասիոյ 38. 96. 99. 101. 148. 185. 198.

Փիլիպէ 397.
Փիալէ 327.
Փոալէն. տ. Ձոալէն.
Քդնատիոս վարդապետ 51. 113.
Քկոնիոն 99. 181. 216. 326. 440.
Քննովկենատիոս Բ. 152. 158. 172. 178.
Քահակ Ասորի 269.
Քաւբիա 100. 322.
Քարայէլ կաթողիկոս 19.
Քաւալիա 34. 440.
Քանէ 106.
Լամբրոն. Լամբրոնացիք 282. 285. 290. 317. 326. 368.
Լաւինք 34. 99. 136. 144. 180. 451.
Լեւոն Ա. Ռուբին. 97. 101. 148. 189. 206. 306.
— Բ. 38. 312. 327. 432.
— Գ. 77.
Լեւոնի Երկիր 101.
Լը-Գիէն 139.
Լոնտրա 250. 397.
Լուդովիկ Ա. Սուրբ Լիւսան 173.
— Ի Թագաւոր Փռանկաց 182. 196.
Լուսաւորիչ. տ. Գրիգոր.
Լուսիս Պատ Բ 33. 176.
—— Գ. 440. 452.
Խաչակիրք Ա. 24. 33. 57. 99. 188. 196.
— Բ. 185. 196–8. 214–5. 294. 410.
Խաչատուր Անեցի 125.
— Կարոյց Եպիսկոպոս 363.
— Տարօնեցի 90. 132.
Խաչէն 105.
Խաչի Նկրըտոյ 74. 91.
Խաչի վանք (Վարագ.) 56.
Խաչիկ կաթող. Ա. 21. 124.
—— Բ. 21. 39. 44.
Խարբերդ 38. 96. 455.

Խեգենիկ Ա, Բ, Գ· 107·
Խլաթ 106·
Խլիճ Աբսլան 127· 296–308·
Խոսրով Թագաւոր Ա· 10·
—— Բ· 2·
—— Գ· 18·
—— Փէրվիզ 88·
Խոսրովական եղանակ 88·
Խոսրովիկ Հռեաոր 2·
Խորասան Թուղրքք 220·
Ծաղկազարդ Երկրորդ (տօն) 277·
Ծամընդաւ 29· 39·
Ծամիդէս, տ· Գոհարինեանք·
Ծովք դղեակ 43–46· 95–7· 102· 189· 227· 310· 487·
Կաթողիկեայց ՄեկնուԹիւն 115–5·
Կաթողիկոսական աԹոռ 29· 38· 94· 97·
Կաթողիկոսի–Քաղ բերդ 162·
Կամախ 224·
Կամար 11·
Կամարականք 11· 12·
Կամրջաձոր վ· 89· 124·
Կապան բերդ 105·
Կապադովկիա 157·
Կասխան 299·
Կաստաղօն վ· 368·
Կաւա Թագուհի 105·
Կարապետ Աղուան 161·
— եբեց 473·
Կարենեան Պահլաւք 10·
Կարէն կամ Կարն Պահլաւ 9·
Կարին 39· 106· 131·
Կարկառ 101· 221·
Կարճիկ Աղուան 161·
Կարմիր· վ· 42· 49· 56· 95· 98· 356·
Կեավուր տապ Լ· 48·

Կեղեսաին Բ. 178.
Կեչառուք 24.
Կեսարիա 37. 99.
— Սուրբոց (Կեսուր) 508.
Կէօլճիւ լիճք 96.
Կիպրոս 288. 297. 320.
Կիսաեբսեան միանձունք 176.
Կիրակոս Թարգման 32. 33.
— — միւս 35.
— Պատմիչ 89. 154. 157. 161. 447. 466. 489.
Կիւլիկիա 14. 100. 150. 286. 322, և այլն.
Կիւրեղ Աղեքս. 169. 422.
— Կարմեղական 439. 440.
Կիւրոս գաւառ 319.
Կլայ Հռոմէական, 490. ա. Հռոմկլայ.
Կլայեցի կոչումն Ներսիսի 251.
Կլեմենդ, ա. Էմիրենոյ.
Կղեմէս Պապ Գ. 452.
—— Ջ. 184.
Կոմիտաս կաթողիկոս 72. 89.
Կոշմ կամ Կոմէ 9.
Կոռնկոս 314.
Կոստանդիա Անահոքացի 149. 312.
Կոստանդիանոս կայսր 157.
Կոստանդին կաթողիկոս Ա. Բ. 22.
— Կալաման 313. 522.
— Որբելեան. Ա. 38.
— Յերապօլեայ եպիսկոպոս 269.
— Տուկաս կայսր 133.
Կոստանդինուպօլիս 39. 137. 455.
Կովկաս 174.
Կորկաս, ա. Գորգ.
Կորիկէ Թագաւորք Գ, Դ, Ե, 104.
Կոփրեաոս 36. 312.
Կրակ բերդ 325.

Հալէպ 99· 190· 237· 302·
Հալպրծին վ· 134–6·
Հաղբատ
Հաղբատացիք } 42· 57· 134· 172· 262–4· 390· 425·
Համա 192·
Հայագիր (Տօնամակ) 30
Հայաստան· Հայք 10· 24, և այլն, և այլն·
Հայկազունք 75·
Հայկ 2· 77·
Հայկայ Երջան 134·
Հայհոռոմք 224·
Հայոց-Թառ վ· 28· 395·
Հայոց վանք 'ի Հռոմ 177–9·
— 'ի Ճենովա 188·
Հայք Մեծ 90· 104·
— Ներքին 443·
— Վերին 445·
— Փոքր 10· 21· 24· 37· 100· 104·
Հանելուկք Շնորհալւոյ 80–1·
Հաշիշք 99·
Հառիճոյ վ· 126·
Հասան Խաչենեցի 105·
— Մագխարոս 13·
— Պահլաւունի 13·
— — միւս 13·
Հարանց վարք 33·
Հաւատով Խոստովանիմ աղօթք 248–253·
Հաֆէտ Լէհին 163·
Հեթում Թագաւոր Ա· 432· 486·
— — Բ· 183· 454·
— Պատմիչ 483·
— Ամբռնացի Ա· 282·
— — Բ· 282· 292· 326·
Հեթմեանք 101· 221·
Հեղի (Յակոբ) 120·

Հերակլէս 182.
Հիւսիսային Վարդապետք 489.
Հիւրընկալ առաքեալք 301,
Հնգկաց լեզուս 71.
Համեղինա 176.
Համերսս 61.
Հոնի 41.
Հռոմագիր (Տօնամակ) 30.
Հռոմոսի վ. 124.
Հոխմահեանք 82.
Հռոմկլայ 43. 226–32. 278. 347. 376–7. 454. 487.
Հռոմկլայի ժողով 409.
Հռոմ 34. 200.
Հռոմայ Պահանոյապետք 171.
Հռոմայեցիք 10. և այլն.
Հրեշտակք 272–7.
Ձագայարոյց 2.
Ձեռնադրութեան կարգ 184–5. 450.
Ձորոփեայ Թագուորք 103–4.
— վանք 131–2.
Ղազար Ձարեանան (Պատմիչ) 2
Ղազարոս վ. 'ի Մուշ 89.
— 'ի Վենեաիկ 247. 250. 308.
Ղեբէոս 16.
Ղեւոնդ Երէց 89.
Ղուկաս Ա.եռաքանիչ 120.
Ղփտիք 169.
Ղօնիա, տ. Իկոնիոն.
Ճենովա 188.
Ճոսլին (Ժոսլէն) Ա. 97. 187.
— Բ. 96–7. 150. 155. 186–93. 201. 216–22. 289.
— Գ. 227–9.
Ճոսլինի Երկիր 189.
Ճորճուանէլ Մամիկոնեան 14. 107.

Ճուլամերկ 55·
Մագիստրոս, ս. Գրիգոր Մագիստրոս·
Մածնաբերդ 104· 161·
Մակար քահանայ 35·
Մակարայ վ· 390·
Մահմետ 211·
Մահմուտ Սուլտան Տէնիշմէնտ 98·
Մամբրէ Վերծանող 2·
Մամեստիա 100· 109· 289–300· 314· 316· 322· 368·
Մամիկոնեանք 11·
Մայ կարմինալ 412·
Մանազկերտ 106· 401·
Մանազկերտեայք 8·
Մանիակայ Կլայ 191·
Մանկեցիք 401·
Մանուէլ կայսր 61· 101· 189· 197· 216· 256· 289–304· 310· 320· 409–14· 434–9· 484·
Մանտալեանք 148·
Մաշկեւոր 2·
Մաշտոց (Մեսրովպ) 2· 146· 449·
— Կաթողիկոս 20·
— Գիրք 33· 146· 449·
Մասուտ Սուլտան 98· 216–224· 292–6·
Մատաղ 140–4·
Մատթան 120·
Մատթէոս Ասհատարանիչ 120·
— — Մեկնութիւն 116–120·
— Ուրհայեցի 28· 33· 90· 133· 303· 366·
— Վարդապետ 62·
Մարաշ 36· 40· 42· 96–7· 216–20· 306· 313· 405·
Մարդպետական Եպիսկոպոս 55· 57· 368·
Մարեմանք 387·
Մարզպան գետ 226·
Մարիամ, ս. Աստուածածին·
Մարիամ դշխոյ Կարուց 28·

Մարիամ կին Ման. կայսեր 312.
— Մագիստրոսի դուռտար 107.
— քոյր Շնորհալւոյ 167. 176.
Մարկոս Ասեատր. 16.
Մարմաշէն վ. 124.
Մարախլոտ գիրք 30.
Մաքենոց վ. 30. 442.
Մարութա 82.
Մարտիկա քաղաք 247.
— դուռտար Գաբրիէլի իշխանի 312.
Մեղոն իշխան 454.
Մեթոտիոս 183.
Մելխիսեդեկ 312.
Մելաէ կաթողիկոս 19.
Մելիտինէ 270. 312. 405.
Մելքի 120.
Մեծքար վ. 327.
Մեսրովպ (Ս.) 2. 18. 86, ս. Մաշտոց.
Մերզպան, ս. Մարզպան պետ.
Մեքքէ 211.
Միաբանութիւն Հայոց և Յունաց 408–432.
Միխայէլ Ասորի 271. 368. 405. 408–418. 473.
Միջագետք 24. 99. 190.
— Հայոց 400.
Միւռոն 449.
Մկրտչի Հրեշտակ 275.
— Խաղերդու եպիսկոպոս 455.
— Պատր. Կ. Պոլսի 427–439.
— Պրանաս 298.
Մհէ 14. 288. 305. 311–3. 318. 327. 485.
Մլէ վ. 368.
Մխիթար Այրիվանեցի 51. 261. 489.
— Անեցի 126–8.
— Ապարանեցի 171.
— Գոշ 49. 131. 259. 571.

Մխիթար Կաթողիկոս 183· 185· 401· 435·
— Հերացի 63· 79· 128· 257–260· 482·
— Ինդրոզ բանի 395·
Մծղնեայք 399·
Մոլդէկ 231·
Մովսէս Խորենն 2· 8· 54· 72· 75· 86· 121·
— Կաթողիկոս Ա· 19·
— Պատրաստեա Ս· Սահակայ 451·
Մուշ 107·
Մուշեղ Հայր Թոռնիկայ 107·
Մուշեղ Ֆալչակորով 2·
Մսխա ս· Մամեսախա·
Մօսլ 55· 192·
Յակովբ Ալփեան 16·
— Եղբայր Տեառն 241·
— այ Ժամատեառ 36·
— Չեբեգեան 16·
— Կաթող· Ա· 360–1·
— — Բ· 22·
— Հայր Ս· Յովսեփայ 120·
— Ղրիմեցի 268· 443·
— Մծբնայ 344·
— Սալիբայ որդի 306· 405· 435·
— Սանահնեցի 133·
— Սրձեցի 269·
— Սքանչելի 131·
Յակովբիկք 167·
Յաճախապատում գիրք 344·
Յայտնութիւնք 32·
Յաչախչատ 18·
Յեսուանց անապատ վ· 217· 368·
Յիսուս–Որդի գիրք 58· 74· 83· 237–247·
Յոյնք (Բիւզանդացիք) 21· 25· 33· 49· 98· 138·
148–50· 180· 409· և այլն·
Յոյնք (Հելլէնք) 25·

Յովք 141·
Յովհաննէս Անկիւրացի 247·
— Աւետարանիչ 16·
— Բար–Անդրէաս 138–9·
— Բժիշկ 63·
— Երզնկացի 118· 260· 466· 489·
— Իմաստասէր 2· 63· 344–7· 401· 405· 422–4·
— Մանդակունի 19· 344· 451·
— Կոմնենոս կայսր 98· 101· 149·
— Մեծաբարոյ կթ· (ի) 2· 22· 453·
— Ոսկիբերան· տ· Ոսկիբերան·
— Պատմիչ, կաթողիկոս (զ) 20·
— Սմբատ· տ· Սմբատ Գ·
— Վարդապետ, ինդրող բանի 486·
— Վարժապետ Ն· Լամբրոն· 285·
— Քահանայ Նուիրակ 35·
— Քեռնոյ Եպիսկոպոս Ասորի 421· 432·
Յովսէփ Աստուածահայր 120·
— Անեցի 125·
— Կաթողիկոս 18·
— Նոր Վկայ 106· 389–396·
Յուդա Յակովբեան 16·
— Մատնիչ 469·
Յուլիանոս Սղիկառն· 404·
Յուսիկ Կաթող 18·
— — միւս 338·
— Վանական 473· 481·
Յուստինիանոս կայսր 366· 410·
Նաթանայէլեանք 101· 290·
Նասր 167·
Նարեկ վ· 89·
— գիրք 247·
Նեստոր 422·
Նեստորք (Թուրքք) 106·

Ներբողեան Գիրք 32· 112· 269·
Ներսէս Ա, Մեծն 14· 17· 18· 46· 106· 185· 215·
333· 372· 438·
Ներսէս Գ, Շինողն 2·
— Լամբրոն· 3· 13· 14· 53· 67· 127· 259·
281–5· 368· 474· 483–4·
— Շնորհալի, տ·'ի Գլուխա բանից·
— Պալենց 452·
Ներսիսեանք 7·
Նէճմէտտին 310·
Նիգ 442·
Նիկիա 197·
Նիկողայոս· Հայրապետ 575·
Նշան (Ս·) վ· 39· 225·
Նոկենտիոս· տ· Իննովկենտ· 6·
Նորշէն վ· 389·
Նուարդ (Nivarde) 176·
Նուբէտտին 192–3· 215–224· 287· 302–311–319· 475·
Նահակ կաթող· 18·
— միւս 18·
Նահան Զօրավար 14· 48· 220· 234· 282·
Նահանդուխտ 282–284·
Նահի-Արմէն 106·
Նահնջահ Սանեցի 107·
— Վզտուկ 169·
Նամունէ 386·
Նապուհ Ս· 11·
Նարեկանք 90–91·
Նարապշահ 14·
Նշնորհալի կոչումն 3· 46· 457· 497·
Նշնորհաց տէր Ներսէս 3·
Նուղր վ· 43· 95· 227·
Նուչանիկ 30·
Նպղեան 140·
Ոթմանս գղ· 19·

Ոթոն Ֆրիզինկէն 173· 180–2· 197·
Ոձիէ 127·
Ոնորիոս Բ· 172·
Ոսկան վարդպ· 247· 367·
Ոսկիբերան Յ· 33· 69· 114· 268·
—— Վարուց Թարգմանութիւն 36·
Ոսպնակեր (Յովհաննէս) 2·
Ուգոն եպիսկոպոս 191·
Ուլման Յովհ· 419–428·
Ունկարք 320·
Ուռհա· տ· Եդեսիա·
Ուտի աշխարհ 104· 111·
Ուրբաթաձէզ 144·
Ուրուկք 381·
Զամչեան Հ· Միք· 61·
Զորտուանէլ, տ· Ճորտուանէլ
Պալտին Թագաւոր Երուսաղեմի Ա· 36· 188·
— Բ· 312·
— Գ· 299–311·
— Եդեսիոյ իշխան 188·
— Ռեմունդի եղբայր 189–196· 222·
— Փեանոյ իշխան 97·
Պահլ· տ· Բահլ·
Պահլաւունիք 8–16· 75·
—— Երկրորդ 22–29· 57· 101· 315· 422–3·
Պաղեատին 33· 39· 127· 162· 197·
Պաղտատ 103·
Պամփիւլիա 100· 299·
Պայլիկեանք 399·
Պայծառաձոր (Clairvaux) 176–179·
Պապեռոն 290·
Պասրա 190·
Պարթեւք 8· 10· 29·
Պարսամայ վ· 270· 432·
Պարսկաստան 42·

Պարսք Սասանեանք 89.
— Սկլաւուկք 389.
Պաւիերա 173.
Պեհեանի. տ. Բեհեանի.
Պեմունդ գ. 297. 312–3.
Պենեւենդ 35.
Պետրոս Առաքեալ 16. 152–54.
— — Եկեղեցւոյ տօն 180.
— Գեղադարձ 2. 21. 23. 37. 39. 41. 90. 132. 160. 347. 366.
— Խոնթկայ որդի 131.
— Ճգնաւոր 194.
— Պիւլսիւլ 57.
— Քերդող 63.
Պերդրան 327.
Պերոզամատ 10.
Պէտ իւլ–Ճէմալ 169.
Պէրպուտ 88.
Պիղատոս 471.
Պղատոն 25. 61.
Պոլոմելոսք 401.
Պոռոմէոս (Կարլոս) 376.
Պուրքարտ 252.
Պտղոմայիս 158. տ. Աքքէա
Պրոգարտ 439.
Պօղոս Առաքեալ 16. 67. 177.
— — վանք Հայոց 'ի Հռոմ 177.
— Վարագացի 42.
— Տարսոնացի 420. 470.
— Տարօնացի 107.
Ջրհորի վ. (Citeaux) 176.
Ռայմոնտ Սէն–Ժիլ 170.
Ռափան 223. 289.
Ռաւիկոս կամ Ռաւինոս, տ. Գոհարինեանք.
Ռաւուլֆ 152–3.

Ռեմունդ, Աչտիզքայ Բրինձ 97· 189· 201· 222·
— տէ Բոսիոյ 301·
— Տրիպօլեայ կոմս 313·
Ռենալդոսի վ· 177·
Ռընալտ կոմս 297–301· 310·
Ռիթա 312·
Ռշտունիք 57·
Ռոձեր Թագաւոր Սիկիլեոյ 452·
Ռոմանոս Երգեցող 85·
— Կայսր 49·
Ռուբէն Ա· 38· 101·
— Բ· որդի Թորոսի Բ· 324–5· 391·
— Գ· 312· 327· 439·
— որդի Մլեհի 327·
Ռուբինեանք 22· 38· 77· 101· 104· 287·
Սալահէտտին 126· 168· 200· 310· 320·
Սալեզացի ս· Փրանկիսկոս·
Սալնոյ–ձոր 176·
Սալուեան Ջուրք 177·
Սահակ Ս· Պարթև 2· 7· 11· 15· 18· 19· 25· 30·
86· 88· 143· 377· 344· 451· 488·
— Կարնոյ եպիսկոպոս 161–2·
— այլ եպիսկոպոս 421·
Սահակադուխտ 89·
Սամուէլ Անեցի 85· 121–4· 135· 155· 157· 488·
— Ա· կաթողիկոս 19·
— Կամրջաձորեցի 31· 89·
Սամուսատ 221· 401·
Սայիտ 165·
Սանահին 134· 262· 390·
Սառլատուն 176·
Սասանեանք 103·
Սասունք 14· 27· 38–40· 107·
Սատրի–ձիհան 392·
Սարգիս (Ս·) 63· 116· 269·–72· 414·

Սարգիս Անոյ Եպիսկոպոս 14.
— Գանձակեցի 162.
— Երաժիշտ 88.
— Կաթող. ա. 21.
— — բ. 21. 41.
— Կունդ 114.
— Ձգնաւոր վարդ. 131.
— — միւս 395.
— Մեկնիչ 51. 113–4.
— Բանի խնդրող 395.
Սարկաւագ վարդապետ 2. 63. 134–5. 349.
Սարմատացիք 175.
Սեաւ Լերինք և վ. 33. 36. 48. 67–8. 90. 96. 188. 262. 266. 285. 306. 329. 418. 433.
Սեբաստիա 37. 55. 99. 107. 224–5. 309.
Սեդա 13.
Սելևկիա 149.
Սելևկոս 187.
Սեղբեստրոս 157.
Սենեքերիմ Վասպուրական. 37. 55. 106.
Սենեքերիմեանք 104.
Սեպուհ վ. 17.
Սեւան վ. 372.
Սեւանայ Ծով 442.
Սէլահէտտին. տ. Սալահէտտին.
Սէլիքեան տոհմ Պարսիկ 106.
Սէլճուկք 103. 135.
Սէն-Ժիլ, տ. Ռայմոնտ.
Սիբիլլայք 183.
Սիդոն 99.
Սիկիլիա 289. 299.
Սիմանական թերդ 288.
Սիմէոն Ապարանեցի 8.
Սիոնի Ժողով 155–8.
Սիս 326.

Սիւնեաց Եպիսկոպոսք 55· 368·
Սիւնիք 103· 105·
Սիւննագա 34·
Սկեւռայ վ· 282–5· 368·
Սկիւթոս, տ· Դայլան·
Սկիւթք· տ· Թուրքք և Սէլճուկք·
Սմբատ Այրուքաչ 2·
— Արուխ 415·
— Թագ· գ· (Յովհաննէս) 126· 160·
— տ· Ներսէս Լամբրոն·
— Շահնշահ 2· 24·
— Պապեւոնի տէր 312·
— Պատմիչ 289· 319· 453· 488·
Սողոմոն Իմաստ· 64· 233· 239·
— Մաքենոցաց Հայր 30· 442·
Սուրբ Լեառն· տ· Սեաւ Լերինք·
Սուրէն (Գրիգ· Լուսաւորիչ) տ·
— Պահլաւ 9· 10·
Սուրմակ 19·
Սոյ Երաժիշտք 90·
—— Ժողով 183·
—— Կաթողիկոսք 15· 230·
Ստեփանէ 288· 305–12· 318·
Ստեփանոս Աղուանից կաթ· 160·
— Ասողնիկ 89· 124·
— Երաժիշտ 88· 92·
— Եպիսկոպոս եղ· Աբասայ Թգ· 161·
— Իմաստասէր 123·
— Կաթողիկոս գ· 20·
— Կարմիրվանեցի 49–52· 62· 345·
— Մոկացի 82·
— Սիւնեաց Փերթող 34· 65· 82· 89· 92· 272· 445·
— Վարդապետ 421·
— Տիրացու 265·

Սահմանոս Քահանայ 'ի Հռոմ 179.
Սօս (Անուշաւան) 2.
Վահան Գայլ 2.
— Գողթնացի 390.
— Կաթողիկոս 56.
— Մամիկոնեան 19.
Վահեւունիք 17.
Վահկա 149. 288. 304.
Վահրամ դուքս 98.
— Պահլաւունի 12. 23.
— — Միւս 13.
— — Միւս ևս 14.
— Բաբուն 77. 523.
— Շնորհալւոյ հօրեղբայրը 165–167.
— Գրիգոր Վկայասէր, տ.
Վաղարշակ 9.
Վանայ եկեղեցի 42.
— Թագաւորք 104.
— Ծով 106. 372.
Վանանդ 19. 103. 365.
Վասակ Պահլ, Ակիրատայ որդի 13.
— Գր. Մագիստրոսի հայր 13. 25. 46.
— —— որդի 26.
— Հասանայ Թոռն 13.
— Շնորհալւոյ հօրեղբայրը 163–4.
Վասիլ Գող 42. 46–7. 51. 97. 101. 189. 217. 307.
— Եղբայր Շնորհալւոյ 14. 48. 220–1. 234.
— Կայսր 339.
— Տղայ 97. 217.
Վասպուրական 54. 106.
Վարագայ վ. 31. 42. 56.
Վարդ Մամիկոնեան 19.
Վարդան Անեցի 128–130.
— Աւետեցի (Պատմիչ) 43. 126. 193. 370.
— Կարմիր (Մեծն Մամիկ.) 2. 19.

Վարդան Հաղբատացի 132. 262–3.
— Ճգնող ի Հռոմ 179.
— Վարդապետ 421.
Վեհաձան 10.
Վենետիկ 247.
Վիգէն Մամիկոնեան 107.
Վիզերպոյ 174. 179.
Վիլլոդ 242.
Վիսսարիոնեան Շնորհալւոյ 75–77.
Վիրք 95. 160. 175. 270. 365.
Վկայասէր Մեծ. տ. Գրիգոր Վկայ.
—— Փոքր, տ. Գրիգորիս.
Վոլկա 174.
Վոսփոր 197.
Վրթանէս (Ս.) 17.
Տաթեւ վ. 89.
Տալնեա դուստր Մլեհի 327.
Տաղաչափութիւն հայկական 70–74.
Տաճարական Աստեաք 305. 318. 326.
Տաճկի-քար բերդ 299.
Տանդէ 242.
Տաչիր 104.
Տարագոսեանք (Ս.) 269.
Տարէգիրք (Ճաշոց) 31.
Տարընտա 39.
Տարսոն 40. 100. 174. 285. 298. 368.
Տարօն 24. 27. 38. 40. 107. 137.
Տաւուշ 104. 161.
Տաւրոս լ. 29. 48. 181.
Տէնիշմէնտք 98–9. 224–5. 293.
Տիգրիս 203.
Տիժոն 175.
Տիւրոս 99. 153. 326.
Տլուք 96–7. 151. 189. 310.
Տնկիկ. տ. Գոհարինեանք.

Տոլք 2.
Տուկիոս (Տնկիկ) ս. Գոհարբինեանք.
Տուրուբերան 106.
Տպագրութիւն հայկական 247.
Տրայիանոս 471.
Տրդատ Թագաւոր 2. 10. 17. 157.
— Կաթողիկոս. Ա. 19.
Տրիպօլիս 99. 174. 308. 310.
Տփղիս 131.
Տօնական գիրք 31.
Տօնականի Ձագ 31.
Տօնամակ գիրք 30–36. 43. 112. 396.
Տօնանամակ 31.
Տօնապատճառ 31
Տօնացոյց 31.
Տօնացուցակ 31.
Փառներսեհ 18.
Փատրուն 95.
Փարսման աւան 139.
— գետ 226.
Փիլարետ կամ Փիլարտոս 21. 40. 41. 55.
Փիլիպպինէ 320–21.
Փիլիպպուպօլիս 419.
Փիլիսոփայ (Երաժիշտ) 91.
Փոտ 139.
Փուլկ Թագաւոր Երուսաղեմի 156. 319.
Փռքը Ասիա 99. 104.
— Հայք. ս. Հայք.
Փռանկք 35. 157. 196–8. 215. 312. և այլն.
Փռիւգիա 35. 100. 322.
Փրանկիսկոս (Ս.) Ասիզ. 463.
—— Սալեզացի 376. 468–9.
Փրեսբիկ Ս. կայսր 182.
Քաղկեդոնի ժողով 138.
Քարահատոյ որդի, ս. Յակոբ Սանահն.

Քարաչխճոս վ. 114.
Քեսուն 42. 49. 97–8. 223.
Քիեւ 320.
Քիլիս 319.
Քուրմք 403.
Քրիստափոր գեսպան 416.
Օշին Լամբրոնեցի ս. 282. 290–2. 314–7.
—— բ. 282–3. 312.
Օտպելեանք 105.
Ֆաթիմեանք 168.
Ֆենելոն 139. 376.
Ֆիանարայ կոմս 308.
Ֆոնդէն գեօղ Տիժոնի 175.
Ֆուլք. տ. Փուլկ.
Ֆրիզինկէն 173.

# ՈՒՂՂԱԳՐԵԼԻՔ

Խ

| | | |
|---|---|---|
| 122 | երկասիրութենամբ | երկասիրութեամբ |
| 125 | քահեալ | քակեալ |
| 136 | Պահրաւունի | Պահլաւունի |
| 153 | կաթողիկան | կաթողիկոսն |
| 216 | Մոտաշ | Մարտաշ |
| 226 | կարաւային | հարաւային |
| 346 | Ջանլրու | Ջանալրու |
| 347 | իբև | իբրև |
| 354 | սկան | սկսան |